

# ԶԱՐՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Միջազգային գիտաժողովի գեկուցումներ

(Երևան, 2014 թ., հունիսի 11-12)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2014

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

---

## DJAHUKIAN READINGS

International symposium reports  
(*Yerevan, 2014, June 11-12*)

## ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ

Доклады международного симпозиума  
(*Ереван, 2014 г., 11-12 июня*)

ՀՏԴ 801:06

ԳՄԴ 81

Զ 229

Տպագրվում է

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի

ինստիտուտի գիտական խորհրդի  
որոշմամբ

### **Խմբագրական խորհրդո՞՝**

բ.գ.թ. Վ.Լ. Կատվայյան (նախագահ),  
բ.գ.դ., պրոֆ. Վ.Գ. Յամբարձումյան,  
բ.գ.դ., պրոֆ. Գ.Կ. Խաչատրյան,  
բ.գ.դ., պրոֆ. Լ.Շ. Յովիաննիսյան,  
բ.գ.դ., պրոֆ. Լ.Ս. Յովենիյան,  
բ.գ.դ., պրոֆ. Ա.Ե. Սարգսյան,  
բ.գ.դ. Ռ.Մ. Թղիմախյան,  
բ.գ.թ. Ա.Ս. Գալստյան,  
բ.գ.թ. Ն.Գ. Յովիաննիսյան,  
բ.գ.թ. Ժ.Ա. Միքայելյան,  
բ.գ.թ. Ն.Ժ. Սարգսյան:

### **ԶԱՐՈՒԿՅԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Զ 229 Միջազգային գիտաժողովի գեկուցումներ (Երևան, 2014 թ.,  
հունիսի 11-12).- Եր.: Ասուլիկ, 2014.-264 էջ:

ՀՏԴ 801:06

ԳՄԴ 81

ISBN 978-9939-50-270-0

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, 2014

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Ասիլբեկյան Շուշան, Սարգսյան Մերի -</b> Հայերենի բառապաշտի ձևային նկարագրման և համապատասխան էլեկտրոնային շունչմարմին ստեղծման սկզբունքներն ու խնդիրները .....	6
<b>Ավագիմյան Արինե - Արժույթ և դասանշային կապակցելիություն</b> հասկացությունների առնչություններն ու տարբերությունները.....	12
<b>Բառեասյան Զեմմա - Բառակազմական իրողություններ հայերենի բարբառներում.....</b>	19
<b>Դիլքարյան Նարինե - Հայկական բնականունները.....</b>	25
<b>Դոխտյան Ռուզաննա - Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի որոշ բայերի ապանութականությունը արդի հայերենում.....</b>	34
<b>Զարարյան Հովհաննես - Շրջադաս ստորադասական կառույցները հայերենում.....</b>	43
<b>Թերզյան Պերճ - Արևմտահայերենը եզրակացներում.....</b>	51
<b>Խաչատրյան Ամայա - Ըվերերենի արտասանական դժվարությունները հայերենի համեմատությամբ.....</b>	55
<b>Խաչատրյան Հասմիկ - Փողոց և արահետ հասկացությունների բարբառային բնութագիրը և նրանց բարիմաստային զարգացումները հայերենի բարբառներում.....</b>	61
<b>Խաչատրյան Վալենտին - Նորահայտ բառեր 13-րդ դարի ձեռագրերի բառարաններում.....</b>	69
<b>Կատվայան Վիկտոր - Հինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում .....</b>	77
<b>Հովհաննիսյան Լավլենտի - Դիտարկումներ Աստվածաշնչի որոշ հաստվածների վերաբերյալ .....</b>	84
<b>Հովհաննիսյան Նազիկ - Բառաքաննական դիտարկումներ.....</b>	90
<b>Մանուչարյան Սկինուան - Կապանի տարածաշրջանի խոսվածքների հնչյունական որոշ դիտարկումներ.....</b>	98
<b>Մեսրոպյան Հայկանուշ - Ծաղկազարդի բարբառային անվանումները.....</b>	105
<b>Միքայելյան Ժաննա - Բայի երկրորդական վերլուծական բաղադրյալ ժամանակները հայերենի՝ արևմտյան խմբակցության մի քանի բարբառներում .....</b>	113
<b>Մխիթարյան Գայանե - Ցոց և պարուց երգերը հին հայոց մեջ.....</b>	120
<b>Մկրտչյան Գարիկ - Միջին հայերենում և Մշո բարբառում գործառող հոգնակերտ մասնիկները.....</b>	125
<b>Սոհամմադ Մալեք Սոհամմադի - Միջին հայերենի իրանական բառաշերտի մասին.....</b>	133
<b>Սուրայյան Անահիտ - Կապային կառույց + գոյական կաղապարով բառակապակցությունների կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունները արևելահայերենում և արևմտահայերենում...<b></b></b>	139

<b>Ներսիսյան Վարսիկ- Պատկերավորման և արտահայտչական միջոցները հայկական ժողովրդական հանելուկներում.....</b>	147
<b>Պաղիկյան Սիլվա - Հոգեհաց հասկացության և նրա բառային դրսուրման պատմությունից.....</b>	153
<b>Պողոսյան Նորայր - Պատմական համանության դրսուրումը հայերենում .....</b>	159
<b>Սարգսյան Արմեն- Ժողովրդական դարձվածքը որպես զավեշտի առաջացմանը նպաստող միջոց հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարձախտություններում.....</b>	167
<b>Սարգսյան Արտեմ, Տիոյան Սուսաննա - Արդի հայերենի տերմինաբանության զարգացման միտումները.....</b>	175
<b>Սաքայան Դորա- Խննդրառության մի քանի հարցեր.....</b>	179
<b>Միմոնյան Նեկտար - Հայերենի՝ արմատական տարրերակներով կազմված կրկնավոր բայերը.....</b>	187
<b>Միրունյան Տիգրան - Լատինաբանությունները Միփթար Սեբաստացու թարգմանած աստվածաբանական երկերում.....</b>	192

## **ՀԱՂՈՐԾՈՒՄՆԵՐ**

<b>Բարսեղյան Ամայա - Նախադասությունների կապակցման ոչ կանոնական դրսուրումները ԶԼՄ-ների լեզվում.....</b>	200
<b>Գալստյան Աշոտ - Գրիգոր Գուրզարյանի էսեների լեզուն .....</b>	206
<b>Գրիգորյան Սուսաննա - Ծիսակարգային հիմնական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում.....</b>	213
<b>Խաչատրյան Լալիկ- Տեքստի լեզվաբանության հարցեր.....</b>	221
<b>Խաչատրյան Օֆելյա-Վարդան պատմիչի անձի և նրա «Պատմութիւն թարարաց»-ի մասին.....</b>	228
<b>Հակոբյան Աննա - Թարգմանաբանությունը որպես առանձին գիտակարգ.....</b>	234
<b>Ղամոյան Լուսինե - Ոչ գրական տարրեր Երևանի խոսակցական լեզվում.....</b>	241
<b>Ղուկասյան Սեւակ - Աստվածաշնչի «Երեմիայի մարգարեութիւն» գրքի աշխարհաբար և գրաբար հարցումների հաղորդակցական տիպերը.....</b>	246
<b>Սահակյան Ռուզաննա - Նորակազմությունները Ե. Հասան-Զալայյանցի «Պատմութիւն համառօս Աղուանից երկրի» աշխատությունում.....</b>	250
<b>Համբարձումյան Վազգեն - Գ. Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանի» մասին.....</b>	257

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՁԵՎԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԵՎ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ  
ՄԿՋԲՈՒՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ<sup>1</sup>**

Քսաներորդ դարի լեզվաբանության կարևորագույն նվաճումներից մեկը լեզվի ձևային նկարագրության ուղղության առաջացումն է: Հետազյում գիտության և համակարգչային տեխնիկայի հարատև զարգացումն ու ինֆորմացիայի քանակի շեշտակի աճը խթան հանդիսացան ձևային նկարագրության առաջընթացի համար:

Ձևային նկարագրությունը մարեմատիկական համակարգ է ոչ այնքան մաթեմատիկական սիմվոլների կիրառմամբ, որքան նկարագրության ձգըրտությամբ ու անհակասականությամբ՝ կազմված ձգքրիտ սահմանված ելակետային օբյեկտներից, վերջիններիս միջև եղած հարաբերությունների ձգքրիտ ձևակերպումներից, տվյալ օբյեկտներից այլ օբյեկտներ ստանալու կանոններից:

Ձևային ուսումնասիրությունը լեզվի լրիվ կամ մասնակի ձևայնացված տեսությունն է, այն է՝ ձեի և բովանդակության փոխհարաբերության ուսումնասիրությունը ձևային մեթոդներով:

«Հայերենի բառապաշտարի ձևային նկարագրում և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» նախագիծը հայերենի ձևային նկարագրման համալիր ծրագրի հերթական փուլն է: Տվյալ դեպքում բառապաշտարի ձևային նկարագրությունը և համապատասխան շտեմարանի կազմումն ունեն կոնկրետ նպատակ, ինչպես՝ բառապաշտարի կառուցվածքային համակարգի բացահայտումը, համակարգչային ծրագրերին ծառայելը և այլն:

Բառապաշտարի ձևային նկարագրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ինչպես կանոնավոր կազմությունների, այնպես էլ բոլոր տարրերակային ձևերի, շեղումների ու անկանոնությունների ամբողջական պատկերը՝ հաճախականության տվյալներով և դրանց ավտոմատ վերլուծության ու սերման հնարավորություններով:

Աշխատանքը նախատեսում ենք իրականացնել երկու փուլով՝ 1. ածանցավոր կազմությունների ձևային նկարագրում և համապատասխան շտեմարանի կազմում, 2. բաղադրյալ կազմությունների ձևային նկարագրում և համապատասխան շտեմարանի կազմում: Կարծում ենք՝ նման բաժանումը շահեկան կլինի արդյունավետ և ամրողական ուսումնասիրության համար, ուս-

<sup>1</sup> This work was made possible by research grant from the Armenian National Science and Educational Fund (ANSEF) based in New York, USA.

Աշխատանքը իրականացվում է ԱՄՆ-ում՝ Նյու Յորքում, հիմնադրված Հայկական ազգային գիտական և լրտական ֆոնդի (ՀԱԳԿՖ) տրամադրած հետազոտական դրամաշնորհի միջոցներով:

տի առաջմ աշխատում ենք միայն ածանցավոր կազմությունների ձևային նկարագրության և համապատասխան շտեմարանի կազման ուղղությամբ երկրորդ հատվածի իրականացումը թողնելով շատ մոտ ապագայում առաջինի հաջող ավարտից հետո անելուն:

Սույն աշխատանքը ընթանում է երկու փուլով:

Տվյալների շտեմարանի ու ծրագրաշարի ստեղծման փուլ: Հիմնվելով նախապատրաստական փուլի՝ բովանդակային վերլուծության արդյունքների վրա՝ հետագության այս փուլում

1.ստեղծվել է շտեմարանի կառուցվածքը/ կաղապարը, վեր են հանվել վերջինիս ստեղծման մերօդաբանական սկզբունքները,

2.մուտքագրվել են տվյալները՝ ստեղծելով տվյալների շտեմարան, վերհանելով տվյալների շտեմարանի օգտագործման հիմնական սկզբունքները և հնարավորությունները,

3.ստեղծվել է ծրագրաշար (անգլ.՝ software), որը հնարավորություն կտա սահմանված կարգով օգտագործել շտեմարանը՝ որպնման համակարգով գրտնել անհրաժեշտ տվյալներ, իրականացնել տվյալների համեմատություններ, դիտումներ, նկատառումներ, բեռնումներ և այլն:

Հայերենի բառապաշարի ձևային նկարագրման շտեմարանը /բազան/ բաղկացած է երեք առաջնային /բառեր, արմատներ, բառակազմություն/ և մեկ երկրորդական /ածանցներ/ աղյուսակներից:

Ածանցներ աղյուսակը իրենից ներկայացնում է ոչ միայն շտեմարանի բառերում առնվազն մեկ անգամ հանդիպող ածանցների ցանկ, այլև իր մեջ ներառում է այդ ածանցների մասին մանրամասն տեղեկություն պարունակող չորս դաշտ /նախածանց է այն, վերջածանց, ներածանց, միջածանց, թե բայական ածանց, նույն ածանցը քանի ձևով է հանդես գալիս /ածանցի տարրերակային ձևերը/, ածանցը կարող է հնչյունափոխության ենթարկվել, թե ոչ, նաև տվյալ ածանցի հնչյունափոխված տարրերակը/: Ածանցներ աղյուսակի ածանց դաշտը կապված է բառակազմություն աղյուսակի ածանց դաշտի հետ և կառավարում է վերջինում մուտքագրվող թույլատրելի տվյալների ցանկը:

Բառեր աղյուսակը բաղկացած է երկու հիմնական դաշտից՝ բառ և նշում անվանումներով: Նշում դաշտը կարող է ինչպես չյացվել, այնպես էլ իր մեջ ներառել տեքստային տիպի տեղեկություն համապատասխան բառի մասին: Բառ դաշտը կապում է բառեր աղյուսակը արմատներ և բառակազմություն աղյուսակներից յուրաքանչյուրի հետ: Այն նաև կրկնվող արժեքներ թույլ չտվող դաշտը է բառեր աղյուսակում:

Արմատներ աղյուսակը բարկացած է չորս հիմնական դաշտից: Առաջինը տեքստային տիպի բառ դաշտն է, որն ինչպես նշվեց, կապում է արմատներ աղյուսակը բառեր աղյուսակին: Ի տարրերություն բառեր աղյուսակի՝ արմատներ աղյուսակում բառ դաշտը կրկնվող արժեքներ թույլ տվող դաշտ է, ընդ որում, միևնույն բառն այստեղ կրկնվում է ճիշտ այնքան անգամ, որքան այն արմատ ունի: Հաջորդ դաշտը այս աղյուսակում արմատ դաշտն է, որը կրկին տեքստային տիպի է: Այս դաշտի որևէ տողում հնարավոր է մուտքա-

գրում անել միայն այն դեպքում, եթե դատարկ չէ այդ տողին համապատասխանող բառ դաշտը, որի արմատներն են մուտքագրվում են արմատ դաշտում: Արմատները շտեմարան են մուտքագրվում այն ձևով, որով նրանք հանդես են գալիս կոնկրետ բառում, իսկ դրանց հնյունափոխված լինել կամ չլինելը մուտքագրվում է արմատներ աղյուսակի երրորդ դաշտում, որը բույսն տիպի է: Արմատներ աղյուսակի չորրորդ դաշտը թվային տիպի է, որտեղ կարելի է մուտքագրել միայն բնական թվեր: Այս դաշտում մուտքագրված թվերը ցույց են տալիս, թե ովայլ բառի արմատներն ու ածանցները բառակազմության ընթացքում ինչ հերթականությամբ են կցվել իրար: Այս դաշտը նույնպես կրկնվող արժեքներ բույլ տվող դաշտ է:

Վերջին աղյուսակը շտեմարանում բառակազմություն աղյուսակն է, որը բաղկացած է երեք հիմնական դաշտերից: Այդ դաշտերից երկուսը տեքստային տիպի են, իսկ վերջինը՝ թվային, համապատասխանաբար բառ, ածանց և բառակազմական քայլերի հաջորդականություն անվանումներով: Բառակազմություն աղյուսակը կապված է ն' բառեր աղյուսակի հետ իր բառ դաշտով, և ածանցներ աղյուսակի հետ իր ածանց դաշտով: Ինչպես արմատներ աղյուսակի դեպքում այստեղ նույնպես բառ և բառակազմական քայլերի հաջորդականություն դաշտերում կարող են լինել կրկնություններ:

Շտեմարանում տվյալների մուտքագրումը հնարավորինս հեշտ և արագ կազմակերպելու նպատակով ստեղծվել է կաղապար, որը հնարավորություն է տալիս շրջանցել չորս աղյուսակների հետ աշխատելու անհրաժեշտությունը: Կաղապարում ներդրված սահմանափակումների շնորհիվ ստեղծված է մուտքագրման հավանական սխաներից խուսափելու միջավայր:

Հայերենի բառապաշտի ձևային նկարագրման շտեմարանը տվյալները մուտքագրելու փուլից հետո բույլ կտա որոնման համակարգով գտնել անհրաժեշտ տվյալներ, իրականացնել տվյալների համեմատություններ, դիտումներ, նկատառումներ և այլն: Վերոնշյալ որոնումներն ու հարցումները կազմակերպելու համար նախատեսվում է ստեղծել կաղապար, որը բառապաշտի ձևային նկարագրման շտեմարանի օգտագործողներին հնարավորություն կտա ստանալ իրենց հետաքրքրող տվյալը:

Շտեմարանում կազմակերպվող հարցումները հնարավորություն կրստեղծեն ստանալ տարբերակային ձևերի, շեղումների և անկանոնությունների ամբողջական պատկերը: Շտեմարանում հնարավոր կինի կատարել հետևյալ հարցումները.

1.որոնել x ածանցավոր բառի բառակազմական քայլերի հաջորդականությունը /տեսնել x բառի բառակազմական միավորների կցման մեխանիզմը/

2.որոնել x ածանցավոր բառի բառակազմական հիմքը.

3.որոնել x ածանցավոր բառի արմատ/ներ/ը.

4.որոնել x ածանցավոր բառի ածանց/ներ/ը.

5.որոնել բառակազմական x քայլով կազմված բառերը.

6.որոնել x ածանցով բառերը.

7.որոնել x արմատով բառերը / x բառափունջը/.

8.որոնել x տիպի ածանց /նախածանց, վերջածանց, ներածանց, միջածանց, բայական ածանց/ ունեցող բառերը.

9.որոնել հնչյունափոխված հիմքով բառերը.

10.որոնել հնչյունափոխված ածանց ունեցող բառերը.

11.որոնել մաքրոր հիմք ունեցող բառերը.

12.որոնել x քանակի ածանց ունեցող բառերը.

13.որոնել x քանակի արմատ ունեցող բառերը.

14.որոնել x քանակի արմատ և x քանակի ածանց ունեցող բառերը:  
Հաջորդ փուլը բառապաշարի ձևային նկարագրման փուլն է: Հետազոտության այս փուլում կատարվում է լեզվաբանական ուսումնասիրություն լեզվի ձևային նկարագրության ժամանակակից մեթոդներով:

Բառապաշարի ձևային նկարագրությունը կատարելու համար կազմվել է բառային միավորների հատկանիշները արտահայտող աղյուսակ, ապա ներկայացվել է բառապաշարը՝ քերականական բնութագրերով, ընդ որում, բառապաշարի ներկայացման ծավալը պայմանավորված է առաջադրված ինորի շրջանակով: Ներկա փուլում հայերենի բառապաշարի ձևային նկարագրության հիմնական նպատակը համակարգչային ծրագրերին ծառայելն է, որի համար պարտադիր է հայերենի քերականության լինակատար ձևային նկարագրության ստեղծումը և դրա համապատասխանեցումը համացանցային զանազան ծրագրերի:

Հայերենի կառուցվածքի ձևային նկարագրության հիմնական սկզբունքը հայերենի հիմնարույն ձևային նկարագրությունն է, որը հնարավորություն կտա հայերենի կառուցվածքը ներկայացնել համակարգչային տարբեր ծրագրերի տերմիննային համակարգերով և դրանց միջավայրում:

Բառակազմական նկարագրությունը կատարվում է հետևյալ հաջորդական քայլերով.

1.բառի ձևային ներակայացում, /ձևութային կազմ (հիմնական և երկրորդական ձևությներ՝ արմատ, ածանց, հոդակապ, ներույթ, աճական և այլն)/

2.բառամթերքի բառակազմական վերլուծություն՝ հաջորդական քայլերի նշմամբ.

3.երկակի պատճառաբանվածության դեպքերի ներկայացում և պարզաբանում.

4.հիմքերի առանձնացում /սերող, բաղադրող/.

5.հիմքի բառակազմական վերլուծություն.

6.ածանցի առանձնացում.

7.ածանցի բնութագրում:

Այս ուղղությամբ կատարվել է հետևյալը.

1.շտեմարան են մուտքագրվել ժամանակակից հայերենի ածանցավոր կազմությունները.

2.շտեմարանում ներկայացվել են ժամանակակից հայերենի բոլոր՝ կենսունակ և ոչ կենսունակ ածանցները.

3.առանձին ներկայացվել են իրենց կազմում ա հնչյունն ունեցող և շունեցող ածանցները.

4.տրվել են ներկայացված ածանցների կազմում հերթագայությունների և քերականական ձևույթների արտաքին-ձևական համընկնումները /անեն/աց-եց և աց անցյալ կատարյալի հիմք/.

5.ամեն մի ածանցի համար նշվել է դրանց դասակարգումն ըստ դիրքի /նախածանց, վերջածանց, ներածանց, միջածանց, բայական ածանց/.

6.նշվել է յուրաքանչյուր ածանցի կազմում հնարավոր հնչյունափոխությունը.

7.տրվել են յուրաքանչյուր ածանցի հնչյունափոխված տարրերակները :

Բացի վերոնշյալից՝ հընթաց կատարվում է նաև հետևյալ աշխատանքը, որը, սակայն, դեռևս ավարտված չէ. այն ամբողջությամբ կավարտվի հետազոտության համար նախատեսված երկրորդ ժամանակահատվածում.

1.շտեմարանում յուրաքանչյուր բառահոդվածի բառակազմական վերլուծություն.

2.մաքուր հիմքի առանձնացում.

3.յուրաքանչյուր հիմքի վերլուծություն.

4.բառակազմական միավորների քայլերի կցման հաջորդականություն

5.երկալի պատճառաբանվածություն ունեցող միավորների առանձնացում.

6.երկալի պատճառաբանվածություն ունեցող միավորների քայլերի կցման հնարավոր հաջորդականության նշում.

7.հիմքի և ածանցի կազմում հնչյունափոխության դեպքերի արձանագրում և ներկայացում.

8.հիմքի և ածանցի կազմում հերթագայության դեպքերի արձանագրում և ներկայացում.

9.հարկ եղած դեպքում հավելյալ տեղեկություն բառակազմական հիմքի, արմատի, ածանցի, դրանց հնչյունափոխության, բառակազմական վերլուծության սկզբունքի վերաբերյալ:

Զեային նկարագրության խնդիրների վերաբերյալ հարկ է նշել, որ ամեն մի բնական լեզու բարդ և ոչ միատարր կառուցվածք ունի և ձևայնացման համար այնքան էլ հարմար օրիեկտ չէ: Բառապաշտի ձևային նկարագրության համար մեծ դժվարություն են ներկայացնում բառակազմական տարրեր միավորների արտաքին-ձևական համընկնումները, բառակազմական հիմքի երկալի պատճառաբանվածությունը, բառերի համանունությունը, երկալի հընյունափոխությունը, բայական միջածանցները, որոնց դեպքում դժվար է միանշանակ նշել բառի բառակազմական միավորների կցման հաջորդականությունը, որոշ բարդ ածանցավոր բառերի բառակազմական միավորների կցման հաջորդականությունը /ակնարկաշարք, ապրանքաբեռնիշ, անսանսգիրացում և այլն/, քանի որ դրանց դեպքում գործ ունենք առանձին-առանձին տրոհելի բաղադրյալ հիմք+բաղադրյալ հիմք կառույցի հետ, ինչպես նաև լեզվաբանական գրականության մեջ եղած հակասական սկզբունքներն ու բա-

ոապաշարի վերլուծության համաժամանակյա և տարաժամանակյա մոտեցումների երբեմն ոչ հստակ սահմանազատումը:

Այս դժվարությունները հաղթահարելու համար մշակել ենք որոշակի սկզբունքներ: Քանի որ ժամանակակից հայերենի բառապաշարի ձևային նկարագրությունն ունի կոնկրետ նպատակ՝ բառապաշարի կատուցվածքային համակարգի բացահայտումը և համակարգչային ծրագրերին ծառայելը, ուստի ձևայնացման սկզբունքները մշակել ենք ըստ այդ նպատակի: Բառապաշարի ձևային նկարագրությունը կատարվում է միայն համաժամանակյա մոտեցմամբ, նկարագրության օբյեկտը ստանդարտ գրական նորմավորված լեզուն է՝ առանց հնացած, բարբառային, ժարգոնային ձևերի: Բառակազմական տարբեր միավորների արտաքին-ձևական համընկնումների, բառակազմական հիմքի երկակի պատճառաբանվածության, ինչպես նաև բառակազմական հիմքի, արմատի, ածանցի, դրանց հնչյունափոխության, բառակազմական վերլուծության սկզբունքի վերաբերյալ, բացի հիմնական-առանցքային տեղեկությունից, տրվում է նաև հավելյալ տեղեկություն՝ տվյալ միավորն ավելի ամբողջական և հստակ ներկայացնելու համար:

Asilbekyan Shushan, Sargsyan Meri -The Principles and Issues of the Creation of Formal Description of Armenian Language Vocabulary and Creation of the Corresponding Electronic Database.-One of the most important conquests of linguistics of the 20<sup>th</sup> century is the formal description of languages. The following report represents the principles and issues of the creation of formal description of derivative forms and creating of the corresponding electronic database and software. It was intended to create the construct/framework database revealing the methodology principles of database creation, to entry the data creating database and revealing the main principles and possibilities of the database using, to create software which will give the opportunity to use the data base in line with predefined operation conditions allowing finding needed data through search function, to realize data comparison, observation, make comments and download items.

Асильбекян Шушан, Саргсян Мери – Принципы и проблемы создания формального описания словаря армянского языка и создания соответствующей электронной базы данных.- Одно из самых важных приобретений лингвистики 20-ого века – формальное описание языков. Данная статья представляет принципы и проблемы создания формального описания производных форм и создания соответствующей электронной базы данных и программного обеспечения. Было предусмотрено создать базу данных конструкций/структур, раскрывающую принципы методологии создания базы данных, регистрировать данные для создания базы и раскрытия главных принципов и возможностей использования базы данных, создать программное обеспечение, которое даст возможность использовать базу данных в соответствии с определенным операционным разрешением условий, находящих необходимые данные через функцию поиска, осуществить сравнение данных, наблюдение, сделать комментарии и загрузить пункты.

**Ավագիմյան Արինե (Հայաստան,  
Վանաձորի պետական համալսարան)**

**ԱՌՈՒՅԹԵՎ ԴԱՍԱՇԱՅԻՆ ԿԱՊԱԿՑԵԼԻՌԹՅՈՒՆ  
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՋՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացված են արժույթին և դասանշությանը վերաբերող հիմնահարցերը, քննվել են նրանց տարրերություններն և ընդհանրությունները, կատարվել է մշակվող հիմնախնդրին վերաբերող մասնագիտական գրականության տեսամեթոդաբանական վերլուծություն, որի հիմքում ընկած են հայերենի բայերի՝<sup>1</sup> Գ. Զահուկյանի առանձնացրած դասանշային կարգերի տասնվեց կաղապարները:

Բայերի կապակցելիության հնարավորությունների լիարժեք դրսությունը ենթադրում է երեք կարգի դասակարգում՝ դասանշային, արժութային և ընտրութային, որոնք փոխկապակցված լեզվական իրողություններ են: Բայերի դասանշությունը բայերի դասակարգումն է՝ ըստ ենթակայի դասային խմբերի հետ կապակցվելու կամ չկապակցվելու, որի ժամանակ հաշվի չի առնվում նրանց կապակցելիությունը եղանակից և հարաբերիչ բառերի ու բառախմբերի հետ, որովհետև դրանք բայերի գործառական սահմանափակություններ գործեն չեն առաջացնում:<sup>2</sup>

Դասանշային կապակցելիության քննության նպատակն է լեզվի լիարժեք ուսումնասիրումը և տիրապետումը, քանի որ միայն բարիմաստի ընկալումը բավարար չէ ճիշտ խոսք կառուցելու համար: Հայերենը հարուստ է հոմանիշային շարքերով, որոնց բաղադրիչները տարրերվում են դասանշային կապակցելիությամբ, օրինակ՝ **ուտել-խժուլ-լափել-ըմբռշխնել** և այլն:

Հայ լեզվաբանության մեջ բայերի դասանշային դասակարգմանն առաջին անգամ անդրադարձել է Գ. Զահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ<sup>3</sup>: Գոյականները քննելիս Գ. Զահուկյանը տարրերում է իմաստային չորս դաս՝ վերացական, անձնանիշ, իրանիշ և ժամանականիշ անուններ: Նկատի ունենալով, որ ժամանականիշ անունների դասը վերջիվերջո պատկանում է վերացական անունների դասին՝ թողնում է երեք դաս՝ անձնանիշ, իրանիշ, վերացական<sup>4</sup>: Այնուհետև բայերի դասանշային խմբերն ուսումնասիրելիս, պահպանելով հանդերձ գոյականների դասերի քանակը, իմաստաբանական-իմացական հիմունքով առանձնացնում է մի նոր չորրորդ խումբ՝ կենդանիների («Չնչավորների») դաս<sup>4</sup>: Սրանք դիտելով որպես բայական իմաստային խմբերի տարրերակիշ հատկա-

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 461-462:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 461-466:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 307:

<sup>4</sup> Տե՛ս Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 464:

նիշներ՝ առանձնացնում է բայերի դասանշային տասնվեց կարգ (տիպ, խումբ) (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Դաս ային հատ կանի շներ	Բայերի դասանշային կարգեր (տիպեր)															
	1. (Sabcd)V (ընդհանրա կան) տիպ	2. (Sabc)V տիպ	3. (Sabd)V տիպ	4. (Sacd)V տիպ	5. (Sbcd)V տիպ	6. (Sab)V տիպ	7. (Sac)V տիպ	8. (Sad)V տիպ	9. (Sbc)V տիպ	10. (Sbd)V տիպ	11. (Scd)V տիպ	12. (Sa)V տիպ	13. (Sb)V տիպ	14. (Sc)V տիպ	15. (Sd)V տիպ	16. - V լինածորով ուղարկած առաջնային տիպ
Անձն անշու թյուն(a )	+	+	+	+	-	+	+	+	-	-	-	+	-	-	-	-
Կենտ անան շուրջո ւն(b)	+	+	+	-	+	+	-	-	+	+	-	-	+	-	-	-
Իրանց ությու ն(c)	+	+	-	+	+	-	+	-	+	-	+	-	-	+	-	-
Վերա ցակա նությո ւն(d)	+	-	+	+	+	-	-	+	-	+	+	-	-	-	+	-

Աղյուսակ 2.

Կարգեր	Զուգորդման տիպեր	Օրինակներ
1.	(Sabcd)V	մարդ, կենդանին, իրը, խոսքը մնում են
2.	(Sabc)V	մարդ, կենդանին, իրը լողում են
3.	(Sabd)V	մարդ, կենդանին, խոսքը հուզում են
4.	(Sacd)V	մարդը, իրը, խոսքը էլեկտրականացնում են
5.	(Sbcd)V	կենդանին, իրը, խոսքը անձնավորվում են
6.	(Sab)V	մարդ, կենդանին ծնվում են
7.	(Sac)V	մարդ, իրը ծխում են (ծխով լցնում են)
8.	(Sad)V	մարդ, խոսքը քաջալերում են
9.	(Sbc)V	կենդանին, իրը կրվում են
10.	(Sbd)V	կենդանին, խոսքը թռչում են
11.	(Scd)V	իրը, խոսքը հնանում են
12.	(Sa)V	մարդը մտածում է
13.	(Sb)V	կենդանին սատկում է

14.	(Sc)V	իյր մաշվում է
15.	(Sd)V	խոսքը հնչում է
16.	-V	-յուսանում է

Այդուսակի առնչությամբ գիտնականը նշում է.

1. Իմաստային բոլոր կարգերը լեզվական առումով հավասարարժեք չեն. կան խիստ բազմանդամ խմբեր (միայն մարդկանց, միայն իրերին վերաբերող, մարդկանց և կենդանիներին վերաբերող բայախմբեր):

2. Բազմադաս<sup>5</sup> (մեկից ավելի դասերին վերաբերող) բայերի մեջ դասանշային տարրեր իմաստների գուգակցումը տեղի է ունենում մեծ մասամբ փոխաբերական ձանապարհով. առանձնապես հաճախակի է անձերին և կենդանիներին վերաբերող բայերի գործածությունը իրերի նկատմամբ՝ շնորհիվ սրանց անձնավորման և շնչավորման:

3. Լեզուների տարբերությունների մի զգայի մասն կ կապված է բայերի դասանշային կապակցելիության տարբերությունների հետ:

4. Թեև վերցվել են դասային չորս կարգերից մեկական բառեր. բայց կան այս կամ այն դասին պատկանող բառերի ենթակարգերի հետ բայերի կապակցելիության տարբերություններ: Այսպես կենդանիների տարբեր տեսակների անվանումների հետ կապակցվում են ձայնանիշ՝ տարբեր բայեր՝ կովր բառաւում է, ոչիարը մարում է, թռունը ծլվում է և այլն<sup>6</sup>:

Հիմք ընդունելով գոյականների իմաստային չորս դասերը՝ Գ. Զահուկյանը ժամանակակից հայերենի բայերը ևս բաժանում է չորս դասանշային խմբերի՝ ըստ հետևյալ հատկանիշների՝ անձնանշություն, կենդանանշություն, իրանշություն և վերացականություն: Գիտնականի կողմից դասակարգված բայախմբերը ձևախմասային, գործառական և այլ տեսանկյուններից միատարր չեն: Օրինակ՝ կենդանանիշ գոյական-ենթակա պահանջող բայերը (բառաւել, որունդունապ, ոռնապ, մնաստապ և այլն) անձնանիշ գոյական-ենթակա պահանջող բայերի համեմատությամբ փոքր թիվ են կազմում, բազմադաս բայերը սովորաբար ավելի հաճախ են գործառվում և այլն:

Գ. Զահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ նշում է. «....բայական յուրաքանչյուր կարգի (տիպի) համար թերենք համապատասխան օրինակներ ապագային թողնելով բայերի դասանշային հանգամանալից դասակարգումը<sup>7</sup>», որը կատարել ենք «Ժամանակակից հայերենի բայի և գոյականի փոխապակցելիությունը՝ ըստ նրանց դասային խմբերի» ատենախոսության մեջ<sup>8</sup> և բայի կապակցելիական հնարավորություններին, փոխհարաբերությանը, տարբեր արտահայտութ-

<sup>5</sup> Տերմինը Գ. Զահուկյանին է, թեև այդուսակում գործածում է նաև ընդհանրական տերմինը (տե՛ս Կ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 464-465.)

<sup>6</sup> Տե՛ս Կ.Զահուկյան, էջ 464:

<sup>7</sup> Տե՛ս Կ.Զահուկյան, նշվ. աշխ., էջ 464:

<sup>8</sup> Տե՛ս Ա.Ավագիմյան, Ժամանակակից հայերենի բայի և գոյականի փոխապակցելիությունը՝ ըստ երանց դասային խմբերի /թեկնածուական ատենախոսություն/, Ե., 2009:

յուններին, մեթոդաբանությանը վերաբերող հրատարակված յոթ<sup>9</sup> հոդվածներով:

Քննելով դիմավոր բայ-ստորովյալների և ուղղական հոլովով արտահայտված գոյական-ենթակաների կապակցելիությունը՝ առնչվել ենք բայի արժույթ հասկացությանը, քանի որ դրանք փոխկապակցված լեզվական իրողություններ են:

Լեզվաբանության մեջ արժույթի գաղափարը մտցրել է Ս. Կացնելսոնը, իսկ Լ. Տենիերն այն բերել է արևմտաեվրոպական լեզվաբանություն՝ վերագրելով բայ խոսքի մասին<sup>10</sup>: Գիտնականը գտնում է, որ արժույթը բայի կառավարման հնարավորությունն է որոշակի քանակի (0-3) գործորդների (ակտանտների) հետ<sup>11</sup>: Լ. Տենիերը նախադասության կառուցվածքը բնորոշում է՝ ըստ բաղադրիչների միջև կախվածության հարաբերությունների ամբողջության: Կախվածությունը շարահյուսական դրույթ է, որն ուսումնասիրվել է ուսու<sup>12</sup> և արտասահմանյան լեզվաբաններ Շ. Բալլիի<sup>13</sup>, Ժ. Դամուրեսի, Է. Պիշոնի, Ս. Մեշեի<sup>14</sup> կողմից: Լ. Տենիերը կախվածության գաղափարից ստեղծեց շարահյուսության առաջատար սկզբունքը: Մինչև վերջ չբացահայտելով կախվածության գաղափարը՝ նա փաստորեն ենում էր այն բանից, որ քերականական կապն արտահայտում է առարկաների և հասկացությունների միջև եղած հարաբերությունը: Հատ Լ. Տենիերի՝ բարձրագույն մակարդակի մեկ տարրին կարող են հարաբերվել ցածրագույն մակարդակի բազմաթիվ տարրեր<sup>15</sup>: Լ. Տենիերի մշակած շարահյուսությունն ուսմունք է ոչ թե նախա-

<sup>9</sup> Տե՛ս **Գ. Խաչատրյան, Ա. Ավագիմյան**, Անձնանշությամբ օժտված չեզոք սեղի բայեր, «Գիտական նյութերի ժողովածու», Վանաձոր, 2004, էջ 77-85: **Ա. Ավագիմյան**, Իրանշությամբ օժտված չեզոք սեղի բայեր, «Լեզու և լեզվաբանություն», Ե., 2005, թիվ 1, էջ 50-58: **Ա. Ավագիմյան**, Խոսքի մասերի կապակցելիությունը, «Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու» (Ավելացված ՎՊՄՀ-ի ՀՀ ԳԱԱ ակադ. Գ. Զահենկանի անվ. հայոց լեզվի ամբիոնի հիմնադրման 35-ամյակին), Երևան-Վանաձոր, 2005, էջ 23-29: **Ա. Ավագիմյան**, Բազմադասությամբ օժտված չեզոք սեղի բայեր, «Միջիար Գոյ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2006, թիվ 2 (10), էջ 12-16: **Ա. Ավագիմյան**, Միապիմի բայերը արդի հայերենում, «Միջիար Գոյ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2010, թիվ 1, (25), էջ 51-55: **Ա. Ավագիմյան**, Ժամանակակից հայերենի բայ-ստորովյալի կապակցելիության հնարավորությունները կենսանանշությամբ օժտված գոյական-ենթակայի դասային խմբերի հետ, «Միջիար Գոյ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2010, թիվ 3 (27), էջ 41-44: **Ա. Ավագիմյան**, Բայի արժույթի դասավանդումը բուհում ակտիվ մեթոդների միջոցով, «Միջիար Գոյ» գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2010, թիվ 4 (28), էջ 187-191:

<sup>10</sup> <http://dic.academic.ru/dic.nsf/tuwiki/313556>

<sup>11</sup> Տե՛ս **Լ. Տենիեր**, *Основы структурного синтаксиса*, 1988, стр. 15.

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ. Սահմանական սահմանական առաջականությունը բայի արժույթի դասավանդումը բուհում ակտիվ մեթոդների միջոցով, *Неглазгоўская лексико-синтаксическая сочетаемость. Словарь-справочник*, София, 1974.

<sup>13</sup> Տե՛ս **III. Балли**, *Общая лингвистика и вопросы французского языка*, издательство иностранной литературы, Москва, 1955, стр.114-121.

<sup>14</sup> Տե՛ս **Л.Тенієр**, указ. соч. , стр. 11.

<sup>15</sup> Տե՛ս **Л.Тенієр**, там же.

դասության մասին՝ որպես ամբողջության, այլ զուտ նախադասության ներսում եղած կառուցվածքների մասին<sup>16</sup>:

Քերականական արժույթի գաղափարը մեզանում սկսել է արձարձվել անցյալ դարի 70-ականների կեսերից, եթե Գ. Զահոռկյանի<sup>17</sup> և Է. Արայանի<sup>18</sup> կողմից գիտական շրջանառության մեջ մտավ արժույթի՝ որպես քերականական իրողության սեղմ, բայց ամբողջական բնութագիրը՝ արդի հայերենի բայերը դասակարգելով՝ ըստ վերջիններիս արժութային առանձնահատկությունների:

Է. Արայանը տարբերակում է լեզվական և խոսքային արժույթներ հասկացությունները՝ վերջիններիս վերագրելով նաև բայերի պարագաառությունը<sup>19</sup>:

Տեսագայում արժույթի մասին դիտարկումներ կատարեցին Հ. Հարությունյանը<sup>20</sup>, Ռ. Իշխանյանը<sup>21</sup>, Ս. Գյուլբուրդայյանը<sup>22</sup>, Գ. Խաչատրյանը<sup>23</sup>, Գ. Բաղդասարյանը<sup>24</sup> և այլք:

Հ. Հարությունյանն ընդլայնում է արժույթի շրջանակները՝ այն բնորոշ համարելով ոչ միայն բայերին, այլև մյուս կառավարող խոսքի մասերին՝ դիտելով որպես ընդհանրապես կառավարող գերադաս բառի կարողություն, ունակություն, որով պայմանավորվում է կառավարվող ստորադաս բառերի քանակը, ըստ որի՝ կառավարող բառը կարող է լինել միարժույթ, երկարժույթ, եռարժույթ և այլն<sup>25</sup>:

Այսպիսով՝ արժույթը վերագրում է ոչ միայն բայերին, այլ նաև ածականներին, մակրաներին, բայանուններին:

Ռ. Իշխանյանն արժույթը է համարում դիմավոր բայի ենթակաառությունը, խնդրաառությունը, պարագաառությունը, վերադրաառությունը և միաժամանակ, այդպիսիք ունենալու քանակական ծավալը<sup>26</sup>:

Ս. Գյուլբուրդայյանն իր «Ժամանակակից հայերենի շարահյուսություն» դասագրքի մեջ<sup>27</sup>, քննել է միայն բայի ենթակաառությունը, խնդրաառությունը և պարագաառությունը: Վերջինիս հետևել է նաև Գ. Բաղդասարյանն իր «Արդի հայերենի բայասեղի և բայակազմության հարցեր» աշխատության մեջ:

<sup>16</sup> Տե՛ս Լ. Տենիեր, սկզբ. սունդունակ և առաջարկ արժույթի մասին, Երևան, 1988:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Զահոռկյան, նշվ. աշխ., էջ 466-488:

<sup>18</sup> Տե՛ս Յ. Առաքելյան, Պонятие элементарной синтаксической структуры, Ереван, 1964.

<sup>19</sup> Տե՛ս Յ. Առաքելյան, սկզբ. սունդունակ և առաջարկ արժույթի մասին, Երևան, 1988:

<sup>20</sup> Տե՛ս Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 49-50:

<sup>21</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Ե., 1986, էջ 267-269:

<sup>22</sup> Տե՛ս Ս. Գյուլբուրդայյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Ե., 1988, էջ 23-26:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, Գրապարի վերլուծական բայերի արժույթը, Ե., 2000

<sup>24</sup> Տե՛ս Գ. Բաղդասարյան, Արդի հայերենի բայասեղի և բայակազմության հարցեր, Ստեփանակեր, 2005, էջ 8-10:

<sup>25</sup> Տե՛ս Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 50:

<sup>26</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 267-268:

<sup>27</sup> Տե՛ս Ս. Գյուլբուրդայյան, նշվ. աշխ., էջ 23:

Գ. Խաչատրյանը, քննելով գրաբարի վերուժական բայերի արժույթը, տարբերակել է ենթակաառություն, ստորոգառություն, կոչականառություն<sup>28</sup>, խնդրառություն և պարագաառություն տեսակները<sup>29</sup>. «....արժույթի ուսումնասիրությունն իր մեջ ներառում է ոչ միայն դիմավոր բայի կապակցելիության հնարավորություններին, այլև նրա հետ նախադասություն կազմող շարահյուսական միավորների արտահայտության պլանին, դասային պատկանելությանը և դրանց կապակցման եղանակներին վերաբերող հարցերի համակարգը»<sup>30</sup>:

Բայի արժույթը դրսուրվում է շարահյուսական ոչ բոլոր կապակցությունների մեջ, այլ միայն նրանցում, որտեղ բայը կատարում է համազոր կամ գերադաս միավորի գործառույթը: Ընդ որում՝ արժույթի արտահայտություն են դիտվում բայի նկատմամբ միայն համազոր կամ ստորադաս դիրք զբաղեցրած այն միավորները, որոնք խոսքային բոլոր իրավիճակներում պարտադիր կերպով ենթադրվում և պահանջվում են այդ բայերի կողմից՝ կախված վերջիններին քերականական և/կամ բարիմաստի առանձնահասկություններից<sup>31</sup>:

Բայերի դասանշային կապակցելիությունը լեզվաբանության մեջ քննըվում է բառի ուղիղ իմաստով կիրառություններում, քանի որ փոխաբերական իմաստի շնորհիվ մեծանում են բառի կապակցելիական հնարավորությունները, սակայն փոխաբերական իմաստը ոչ բոլոր դեպքերում է կիրառելի, որովհետև բառերը փոխաբերության տեսանկյունից անզամ ունեն որոշակի սահմանափակություններ՝ կախված և իրենց ստուգաբանական հիմքից, և կապակցվող առարկայի իմաստային յուրահասկությունից, և՝ մի շաբթ այլ հանգամանքներից:

Բառերի կապակցման հարցում կարևորվում է դրանց դասային պատկանելությունը, այսինքն՝ այն, թե ներքին իմաստային ինչ հնարավորություններ ունեն այդ բառերը: Այսպես՝ անձ անվանող գոյական-ենթակաների հետ խոսքի մեջ կարող են կապակցվել անձի հատկանիշ նշող բայերը, օրինակ՝ սամոներել, խորել, ծիծաղել, կարդաց և այլն:

Հատկանշական է հետևյալը. այն բայերը, որոնց նշած գործողությունները գոյական-ենթակայի կողմից գիտակցաբար են կատարվում, կապակցվում են անձնանշությամբ օժտված գոյական-ենթակաների հետ, օրինակ՝ հաշվել, հասկանալ, մոտածել և այլն:

Արժույթը բայի կապակցելիական բոլոր հնարավորությունների արտահայտությունն է (ենթակաառություն, ստորոգառություն, կոչականառություն, պարագաառություն, խնդրառություն), մինչդեռ դասանշությունը բայի ենթակաառական արժույթի հետ առնչվող, սակայն նրանից տարբեր քերականական իրողությունն է: Բայի ենթակաառական կապակցելիությունը արժութային դրսուրում է, իսկ դասանշայինը՝ ոչ: Վերջինս ուղղակիորեն կապվում է բայի

<sup>28</sup> Տերմինը Գ. Խաչատրյանին է (տե՛ս Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 26):

<sup>29</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 91-95, 127-132, 223-225, 253-254:

<sup>30</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 5:

<sup>31</sup> Տե՛ս Գ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 278:

ոչ թե քերականական, այլ իմաստային յուրահաստկության հետ: Այս դեպքում խաչաձևկում են բայի բարիմաստը և գոյական-ենթակայի նշած դասային իմաստը, քանի որ բայի բարիմաստով է պայմանավորված գոյականի այս կամ այն դասային խմբի հետ կապակցվելը կամ չկապակցվելը, օրինակ՝ անկութանակ և կուրթականանազ բայերն ի զորու են կապակցվելու իրանիշ թանձրացական գոյական-ենթակաների հետ: Այս հանգամանքը պայմանավորված է իմաստային հակադրությամբ: Նմանատիպ բայերը հայտնվում են հակադրի իմաստային դաշտերում, օրինակ՝ առարկայանազ բայն ի զորու է կապակցվելու իրանիշ վերացական գոյական-ենթակաների հետ՝ իր բարիմաստով հակադրվելով վերացականությանը:

Արժույթը բայի կապակցելիական հնարավորությունն է, որն իրականացվում է տվյալ խոսքային իրավիճակում, ինչպես Ուսուցիչը դասը բացատրում է աշակերտոներին. մինչդեռ դասանշուրջունը դրսնորվում է տարբեր խոսքային իրադրությունների մեջ: Վերը նշված բացատրել բայը եռարձույթ է, սակայն իրը անձի հատկանիշ նշող բար դասանշուրջյան տեսանկյունից մենադաս է. կապակցվում է միայն անձնանիշ գոյական-ենթակաների հետ:

Avagimyan Arine - The Similarities and Differences of the Notions of Valency and Semiotic Combinability.-The article analyses the problems of valency and semiotic combinability in Modern Armenian. We have studied linguistic literature and scientific approaches in both Armenian and foreign linguistic literature referring to the subject in question. The approaches of E.Aghayan, Sh.Bally, G.Baghdasaryan, S.Gyulbudaghyan, L.Teniere, R.Ishkhanyan, G.Khachatryan, H.Haroutyunyan, G.Jahukyan and others have been introduced concerning valency and semiotic combinability of verbs categories as well as observed their similarities and differences. The author has also carried out theoretical methodological analysis of professional literature concerning this problem. The 16 models of semiotic categories of Armenian verbs distinguished by G. Jahukyan form the theoretical methodological basis of this analysis.

Авагимян Аринэ - Различия и сходства понятий *валентность и сочетаемость семиотических классов*.- В статье представлен анализ вопросов, связанных с валентностью и сочетаемостью классов в современном армянском языке, проанализированы лингвистическая литература и научные подходы по теме исследования как отечественных, так и зарубежных ученых. Представлены научные подходы Э. Агаяна, Ш. Баллы, Г. Багдасаряна, С. Гюльбадагяна, Л. Теньера, Р. Ишханяна, Г. Хачатряна, А. Арутюняна, Г. Джакуяна и других по вопросам валентности и семиотических классов. В статье автор дифференцирует категории валентности и семиотических классов глаголов, указывает различия и сходства между ними. Осуществлен теоретико-методологический анализ специальной литературы по данной проблематике. В основе теоретической методологии лежат выделенные Г. Джакуяном шестнадцать моделей семиотических классов армянских глаголов.

ԲԱՌԱՎԱՋՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂԻԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՆԵՐՈՒՄ

Հայերենի բարբառների ուսումնասիրության արդի փուլում արդեն հրապարակի վրա են բարբառների նկարագրությանը նվիրված բազմաթիվ մենագրություններ, հետազոտություններ, բարբառագիտական ապագա ատլասի կազմման համար հասուլ ծրագրի օգնությամբ հավաքչական աշխատանքներով կուտակված հարուստ նյութեր: Նկատելիորեն մեծանում է հետաքրքրությունը բառապաշտիքի թեմատիկ-իմաստային խմբերի հանդեպ: Ինչպես հայտնի է, ապագա բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում<sup>1</sup> հայերենի բարբառների բառապաշտիքի տարածքային տարրերություններին որոշակի տեղ է հատկացված, ինչը լուրջ համեմատություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Բառակազմական խնդիրներն այդ ծրագրում հարցման առարկա չեն դարձել, սակայն բառանվանողական նյութերի գրանցումներում կարելի է գտնել արժեքավոր տեղեկություններ նաև բառակազմության վերաբերյալ: Այդ մասնին եթե հավելենք նաև բարբառագիտական մենագրություններում, ազգագրական-բանահյուսական ուսումնասիրություններում, հայ ժողովրդական հերթարժներում առկա նյութերը, կարելի է ասել, որ հայերենի բարբառների բառակազմական իրողություններն ուսումնասիրելու համար ունենք հուսալի շտեմարան:

Հայերենը հնդկորպական պատկանում է այն լեզուների թվին, որոնք ունեն զարգացած բառաբարդություն: Այդ մասին նշանավոր հայագետն Ա. Սեյյեն կարծիք է հայտնում, որ «Բառաբարդման հայերեն տիպերը բազում տեսակետից շարունակում են հնդկորպական տիպերը այնքան հավատարմորեն, որքան թույլ է տվել իզվի ընթանուր կառուցվածքը»<sup>2</sup>: Բառաբարդություններն առաջանում են հիմնականում շարահյուսական կապակցություններից բառերի՝ երկարատև միասին գործածվելու, պարբերաբար կրկնվելու հետևանքով նպաստելով սերտ ու միասնական իմաստ արտահայտելուն և մեկ բառային միավորի վերածվելուն<sup>3</sup>: Ներկայացնենք հայերենի թե՛ արեւելյան և թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում բառակազմական մեծ հաճախականություն դրսևորող անվանական ու բայական հարադրական բարդություններին առնչվող որոշ իրողություններ: Բարդության այդ տեսակը հիմնականում կայուն բառակազմակցություն է, որի բաղադրիչները միակցված չեն, շատ դեպքերում առանձին շեշտ ունեն և հարաբերականորեն պահում են իրենց բառային իմաստը: Իսկ բաղադրիչների փոխհարաբերության

1 Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

2 Տե՛ս Ա. Սեյյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 85:

3 Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 138:

շարակայուսական դրվագքը պահպանվում և զիտակցվում է: Անորոշությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությանը, և բարբառներում կան բառակազմական ձևեր ու միջոցներ բառն առավել ձանաչելի, բարիմասախն ընկալելի դարձնելու, իմաստային նրբերանգներ արտահայտելու համար ստեղծելով պատկերավոր լեզվամտածողության հիմանալի նմուշներ: Քանի որ լեզուն առաջին հերթին լեզվամտածողություն է, զարմանալի չէ, որ տարբեր ժողովուրդների բառամթերքում հաճախ հանդես են զայխս բառակազմական նույնադիա կաղապարներ՝ հաճախ համընկնելով նաև իմաստային դաշտում:

Անվանական հարադրությունները հայերենի բարբառներում գործառական մեծ հաճախականություն են ցուցաբերում: Ասենք, հարադրվում են բառային հոմանիշներ՝ առարկան կամ երևույթն առավել ընկալելի դարձնելու նպատակով, ինչպես՝ **կար-կարզրզան**, **տէխ-սրբար**, **քար-քրոս**, **բուկ-բօրան** և այլն: Մշտ բարբառով բերված նմանատիա հարադրությունների համար սովորական է նաև **ու շաղկապով բառաբաղդրություն կազմելը տէխուրբար, քօլուրուս, քարուրոս, բուկուրօրան**: Այս իրողությունը համատարած է բարբառների գերակշիռ մասում: Անորոշ դերանվան իմաստով հայերենի գրեթե բոլոր բարբառներում լայնորեն գործառում է **մարթ** բառը, իսկ **մարթ-մաշար** հարադրությունը համարձեք է **ոչ ոք** Ժիտական դերանվանը: Շատ դեպքերում բարիմասախն առավել ընկալելի դարձնելու, որոշակի նրբիմաստ հավելելու նպատակով հարադրության կազմում հայերեն բառաձևի հետ կիրառելի են նույնիմաստ փոխադարձ բառեր, ասենք, Կարն բարբառում՝ **սէր - սավդա, իսուկ-իսորատա** և հայաբանության արժեք ունեցող նմանատիա այլ ձևեր: Իրանական լեզուներից փոխադարձ ֆրանգան **ֆրլան** բառով, ասենք, Կարն բարբառի խոսվածքներում անորոշ դերանվան արժեք են ձեռք բերել **ֆրլան-ֆրլստան, ֆրլան-ֆրլանքաս** հարադրությունները՝ **ինչ-ոք, ինչ-ինչ, ուն** իմաստներով:

Հայերենի բարբառներում համատարած գործառույթ է դրսերում հարադրավոր բարդությամբ երևույթն առավել ամբողջական ու համակողմանի ներկայացնելու իրողությունը՝ իմքում ունենալով նույնիմաստ բառադրիչներ: Ասենք՝ խստաշունչ ձմեռվա մասին խոսելիս գործածական է **ձյուն** և **ձմեռ** բաղադրիչներով հարադրված բարդությունը բարբառներից յուրաքանչյուրի համար օրինաչափ հնչյունափոխությամբ: Այսպես՝ **ձմօն-ձրմէռ** (Քեսար), **ձոն-ձ ըմբնօց** (Մոոշ), **ձին-ձրմէռ** (Լոռի), **ձյու-ծրմտնը** (Ղարաբաղ): Կամ, ասենք, **ամառ-ձմեռ** հարադրությամբ՝ ամբողջ տարին, իսկ **զիշեր-ցերեկ** հարադրությամբ՝ ամբողջ օրը ժամանականից բառակապակցությունների իմաստն է արտահայտվում, ինչպես, ասենք՝ **Իդա ձիժ զ իշեր-ցերեկ հ օրի զ իլա** (Մշտ բարբ.): **Քըշէր-ցերեկ մի հանգի կորու ա ցավից** (Երևանի Նորք գ. խոսվածք):

Տարոն-Տուրութերանի ազգագրական գոտու՝ Մշտ բարբառով գրառված հերիաքներում գուգահեռաբար գործառում են **ժամ - ժամանագ, ժում-ժա-**

**մանագ** բաղադրությունները, ինչպես՝ *Ընցավ ժում-ժամանագ* մը, թակավօր հիվքնդապէ<sup>4</sup>:

Ժողովրդական հեքիաթներում և դրանց՝ հայ գրողների կողմից մշակված տարբերակներում հաճախաբեալ է **ժուկօվ-ժամանակով** հարադրությունը: Նկատելի է, որ այն հանդիպում է հատկապես հեքիաթի սկզբում՝ ժամանակային անորոշություն հաղորդելով պատումին և վկայակոչելով անհիշելի ժամանակներ: **ժուկօվ-ժամանակով** մի թարավօր ա հէլ: Հ.Աճառյանն այդ հարադրության առաջին՝ **ժուկ** բաղադրիչի ծագումն անհայտ է համարում (ՀԱԲ, հ. 2, էջ 222): Որոշ վերապահումով կարելի է ենթադրել, որ **ժուկը** **ժամանակ** բարի կրծատված և հնյունափոխված ձևն է, որը **ժամանակ** իմաստով նաև ինքնուրույն գործառույթ է դրսուրում Իրանի հայախոս գավառների (Փերիա, Բուրգար) խոսվածքներում՝ **ժուգ** ձևով, ասենք՝ **երազու ժուգը չի**: Հնարավոր է նաև, որ այն իրանական լեզուների բարբառային որևէ տարբերակից է սերում<sup>5</sup>: **ժուկօվ-ժամանակով, հուր-հրէդէն, հուրնիկ-հրդէդէն** և նմանատիպ բազում այլ հարադրությունների առատությունը հրաշապատում հեքիաթներում ժողովրդական բանարվեստի այդ ժանրին հատուկ հանդիսավորության մթնոլորտ ստեղծելուն նպաստող ոճական արժեք ունի, հավանաբար:

Ինչպես հայտնի է, պատմական շփումների ընթացքում օտար բառերի փոխառությունը իմաստային և կիրառական նրբերանգներով է պայմանավորված: Շատ դեպքերում փոխառյալ բառն ունի այլ իմաստ, քան ունեցել է փոխառու լեզվում: Ասենք, թուրքերնից փոխառյալ **ալայ** բառը՝ **ալբրի, բազմություն** իմաստով, հայ բարբառներից շատերում (Վան, Զամշեն, Սվերիա, Նոր Նախիջևան) գործառում է **բոլորը, ամենը, ամենը** նշանակությամբ որոշյալ դերանունների արժեքով, իսկ **ալայ-մալայ** հարադրությանը բնորոշ է **հազիկ** (լավագույն դեպքում, շատ-շատ) իմաստը, ինչպես՝ **Ալայ-մալայ հարուր տարի ապրիս**<sup>6</sup>:

Հարադրավորներից կազմված մի շարք ձևեր արագախոսության հետևանքով կարող են անձանաչելիորեն փոխված լինել, ինչպես, ասենք, Քեսարի բարբառում առկա՝ **վըրձըվիկի** (որձ ու էջ) բարդությունը, նույնը կարելի է ասել **լաճկախճիկ** (լաճ ու աղջիկ) անվանական հարադրության մասին՝ Վանա բարբառում գործառող: Այդ բարբառում առկա **նետպանեղ** (նետ ու աղեղ) բառաձևը հանդիպում է նաև Մշո բարբառով գրառված հեքիաթներում:

Գործառական մեծ հաճախականությամբ են հանդես գալիս հատկապես զուգարրական բայերը, որոնց բաղադրիչները սովորաբար կազմվում են հոմանիշ, մերձիմասս բայերի կապակցությամբ՝ արտահայտելով «միմյանց զուգորդվող» գործողությունների միասնություն՝ իրեն միասնական պրոցես ժամանակային նույն պլանում իրացվող՝<sup>7</sup> Հայերենի բոլոր բարբառներին

<sup>4</sup> Տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 13, Ե., 1985, էջ 48:

<sup>5</sup> Տե՛ս Զ. Բառեալայան, Ժամանականիշ բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 8:

<sup>6</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Ե., 1987, էջ 17:

<sup>7</sup> Տե՛ս Հ. Ղազարյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 76:

հասուլ է երկու դերբայով անշաղկապ հարադրություն կազմելը, ինչպես Քեսարի բարբառում՝ **ուրթի-ուզի, ուտիլ-խումիլ, հեղոօծ- կէպօծ** և այլն:

Հարադիր բայերի բաղադրիչներից մեկը բայ է, իսկ մյուսը կարող է լինել գոյական, ածական, դերանուն, մակրայ: Լայնորեն գործառում են թե արևելյան և թե՝ արևմտյան խմբակցության բարբառներում: Բերենք օրինակ՝ համեմատելով, ասենք, Մշու և Ղարաբաղի բարբառները: Այսպես լսել հասկացության դիմաց Մշու բարբառում գործառում է **անզազ էնէլ** հարադրությունը, թեև լսել իմաստով առկա է նաև **հիմանալ** բառը: Ի դեպ, իմաստագործառական այլ բաշխում ունի **հիմնալ** բառը՝ **արթնանալ** իմաստով (Ճիծ քընուց էր, ի իմծավ): Ղարաբաղի բարբառում նույնպես առկա է **անզում օնէլ** հարադրությունը: Բերենք օրինակ Արցախի բանահյուսությանը նվիրված ժողովածուից: **Մէծէն խօսքէն վլր անզում օնիս, վէճնըդ քարէն նի չի կյալ**<sup>8</sup>:

Տարածական մեծ շատավղով գործառող (շատ հաճախ՝ անփոխարինելի բառիմաստով) **յօլա գրնալ** հարադրության առաջին բաղադրիչը բուրքերենից փոխառյալ **յօլ** (ճամփա) բառն է, իսկ բայը բարբառներից յուրաքանչյուրում համապատասխանում է տվյալ բարբառի հնչյունական օրինաչություններին **յօլա էրտալ** (Մշու, Կարնու բարբառներ), **յօլա էթալ** (Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներ), **յօլա քինալ** (Ղարաբաղի բարբ.), **յօլա նոյ** (Ազուլիսի բարբ.) և այլն: Այդ հարադրության արտահայտած իմաստն ուղղակի կորչում է այլ բառով փոխարինելիս: Ուստի և հայարանության արժեք ունի ամենատարբեր բարբառներում: Կամ, ասենք, Մշու բարբառում **ապսապէլ** բառը կարող է կիրառվել երեւմն՝ իբրև բարձր ռճի բառ, սակայն սովորաբար գործածում է **թամրի էնէլ** հարադրությունը: Նույնը կարելի է ասել նաև հայարանության արժեք ունեցող **օսար էնէլ** հարադրության մասին, որին հասուլ է վերջին պատվերը տալ կամ կոտակել իմաստը:

Պատկերավոր լեզվամտածողության արդյունք է Մշու բարբառում առկա **հօկու հօկին հ էնաս** հարադրությունը՝ շատ տանջովել նրբիմաստով:

Ինչպես արդեն նշել ենք, քարտեզագրման ներքակա հաստկանիշների համար բարբառագիտական ապագա ատլասի նյութերի հավաքման ծրագրում բառակազմական խնդիրների մասին հարցում պարունակող կետեր չկան, սակայն կան, ասենք, քերականական հատկանիշներին նվիրված կետեր, որոնց միջոցով կարելի է տեղեկություններ քաղել մեզ հետաքրքրող հարցի մասին: Դիցուք՝ Ծրագրի 622 կետի միջոցով, որը հարցում է կատարում տվյալ խոսվածքում պարզ բայի դիմաց հարադիր բայի առկայության մասին (պարել-պար զալ, երդվել-երդում ուտել և այլն), կարելի է տեղեկություններ քաղել հայերենի բարբառներում շատ գործածական բայական հարադրությունների մասին<sup>9</sup>: Զայ նշանավոր լեզվաբան Հովհ. Մուրադյանը, ում անմիջական դեկավարությամբ է ձեռնարկվել որոշակի հարցարանով հայ բարբառների գրանցման աշխատատար գործը, առաջինն էր, որ քարտեզագրման

<sup>8</sup> Տե՛ս Նշիարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 201:

<sup>9</sup> Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977, էջ 108:

մի հետաքրքիր փորձ կատարեց՝ **նայել** հասկացության դիմաց հայերենի գրաղեցրած ողջ տարածքում առկա բառանվանումները խմբափորելով և քարտեզի վրա տեղադրելով: Ծագումնաբանորեն դրանք դասդասելով և ներկայացնելով ըստ տարածական շառավիդի մեծության՝ լեզվաբանը համոզիչ փաստարկներով ապացուցում է, որ հին հայերենից ժամանգված **հայիլ** և **նայիլ** ձևերի կողքին գերակշռում են բնիկ հայերեն **աչ**(ք) արմատից սերող բառանվանումները (աչքելաշելիշելիշի): Իսկ երկրորդ տեղում **միտ** արմատական ձևից սերող բայական հարադրություններով ներկայացող խոսմբն է՝ բարբառներից յուրաքանչյուրի համար օրինաչափ հնչյունափոխական պատկերով՝ **մըտիկ տալ** (Տավուշի, Լոռու խոսվածքներ), **մըդիկ անկլ** (Երևանի, Աշտարակի, Վայոց ձորի խոսվածքներ), **մըդիկ անիլ** (Մեղրի), **մըտէգ տալ** (Բրանի Սումումբար), **մըտօգ տօլ** և **մըտակ նարիլ** (Ազգուհու) և այլն: Այդ իրուրիցունը հիմք է տվել ուսումնասիրողին եզրակացնելու, որ «Մեծ Հայքի տարածքում **նայել** հասկացության դիմաց այսօր հանդես եկող բառանվանումները ժամանակագրորեն պատմական գոյացություններ են, որոնք ինչ-ինչ ներկայական ու արտակարգական գործոնների ազդեցությամբ աստիճանաբար գործածությունից դուրս են մղել հին ձևերը գրավելով նրանց տեղը»<sup>10</sup>:

Բայական հարադրության երկրորդ բաղադրիչից բայի շնորհիվ հայաբանության արժեք ունեն փոխառյալ բառերով կազմված բազմապիսի հարադրություններ, որոնք առատորեն վկայված են հայերենի բարբառների գրանցումներում: Բերենք օրինակներ մեր կողմից գրառված Քեսարի բարբառով՝ թունավորել - **զիկիրասիշշ ըննիլ**, շփոթվել- **շաշմիշ ինիլ**, հանդիպել- **ոսասի իզալ**, հայտնել- **իւկրո՞ր դալ** և այլն:

Բարբառներում բայական հարադրություններին կարող է վերագրվել լրացուիչ իմաստային-գործառական բաշխում: Ասենք, Արարատյան բարբառի տարրեր խոսվածքներում **երնցըցնել** պատճառական բային հատուկ է **ակամա վիժել** իմաստը, իսկ հարադրի բայը **երնցուսի անկլ**, նշանակում է **կամովինի հղիությունն ընդհատել**<sup>11</sup>: Իսկասենք, Շիրակի Ազատան գյուղի խոսվածքում նոյն իմաստով **անծուծի էնկլ** հարադրությունն է գործածական: Հարադրական բարդությունները հայերենի բարբառներում շարունակում են մնալ կենսունակ:

Barnasyan Jemma - Several Word-formative Realities in Armenian Dialects.-As in the Armenian language in general, among the word-formative means affixation and stem-composition were constantly used in Armenian dialects as well. Armenian language belongs to the number of Indo-European languages that have advanced stem-composition with two and more language notional units (basic types, words, verb frames).

Stem-compositions in the Armenian language are basically originated in three ways: syntactic combinations, word-formative patterns that exist in the language and word naturalization. The appearance of stem-compositions from syntactic combinations

<sup>10</sup> Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2,Ե.,1985, էջ 84:

<sup>11</sup> Տե՛ս Ո.Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե.,1989, էջ 89:

occurs as a result of long-term joint usage and recurrent word repetition that gives the expression more close and consistent meaning and helps in the formation into a single lexical unit.

Барнасян Джемма - Некоторые словообразовательные факты в армянских диалектах.-Как в армянском языке вообще, в армянских диалектах из словообразовательных средств употребляются аффиксация и словосложение. Армянский принадлежит к числу тех индоевропейских языков, которые имеют развитое словосложение с сопоставлением двух и более языковых (основные виды, слова, основы глагола) значимых единиц.

Словосложения в армянском образуются в основном тремя путями: синтаксических сочетаний, словообразовательных шаблонов, имеющихся в языке и словозамествований. Возникновение словосложений из синтаксических сочетаний происходит вследствие длительного употребления вместе и периодического повторения слов, что способствует выражению более тесного и единого смысла и превращению в одну лексическую единицу.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՒՆԵՐԸ

Տեղանվանագիտության մեջ բնականունների քննությունն առավել քան կարևոր է և հրատապ, որովհետև բնակավայրերի անվանակոչման սկզբ-բունքները, դրանց տարածված կաղապարները բացահայտում են լեզուների և նրանց կրող հանրույթների աշխարհներման և մտածողության ընդ-հանրություններն ու տարրերությունները տարրեր ժամանակներում և աշխարհագրական տարածքներում: Բացի այդ՝ տեղանունների բառագանձի հաստացման և տեղաշարժերի հիմնական ուղղությունը նոր բնականունների առաջացումն է, կամ նախկինում եղածների փոխարինումը նոր անվանումներով: Արդեն առկա բնականունները տարբեր արտակեզվական և լեզվական պատճառներով կարող են դրւում մոլիք գործուն բառապաշարից, դառնալ յուրօհինակ հնաբառեր: Նման երևույթ լեռնանունների և ջրանունների դեպքում գրեթե չի կատարվում: Ֆիզիկաաշխարհագրական միավորների անունները հաստատության մեծ ներուժ ունեն, ուստի մի անգամ ստեղծվելով՝ նրանք շարունակում են իրենց գոյությունը հազարամյակներ շարունակ: Իսկ բնականունները պարբերաբար թարմացվում են, որովհետև մարդն ընդլայնում է իր գոյության կենսական տարածքները, դրանք անվանելու անհրաժեշտությունը մշտական է, համենայն դեպք այնքան ժամանակ, որքան սահմանված է մարդկության համար: Անշուշտ բնականունների և մնացյալ տեղանունների միջև անխախտ պարիսապներ չկան, նրանք փոխներթափանցման մեջ են: Հովհ. Կարագյոյանն իր «Մեպագիր տեղանուններ» աշխատության մեջ բերում է բազմաթիվ օրինակներ հնարավոր տարրեր անցումների՝ ցեղանունից քաղաքանուն, գորոդինակ՝ Հոռի, Շարի, Վեդի, Երկրանունից քաղաքանուն՝ Քջնի, Գառնի, Գորիս, Զերմուկ, Սիսիան, դիցանուններից քաղաքանուն՝ Հաղոց, Մաղարք, Մղարք և այլն: Այս առումով ուշագրավ է Գորիս անվան կապը Ծուսաս Ա.-ի (735-713 թթ.) Ծովինարի ժայռափոր արձանագրության մեջ թվարկված 19 երկրներից 4-րդ շարքի 2-րդ տեղում հիշատակված Գուրիս անվան հետ. ուրարտենում ո-ի փոխարեն ու սեպագիրը հաճախ է կիրառվում, ուստի երել է Գորիս, իսկ իա-ի անցումով՝ Գորի ձեր, որի հոգնակի ուղղականը կլինի՝ Գորիք, հայցականը՝ Գորիս: Սիսիան-ը բխեցվում է Արգիշտի Բ թագավորի Խորխոսյան արձանագրության մեջ առկա Ծիծիանի երկրանունից, Զերմուկ-ը կապում է Ծուսաս Ա.-ի նույն Ծովինարի արձանագրության մեջ թվարկված 6-րդ շարքի 2-րդ երկրի անվան հետ՝ Երիա-Եռիս, որտեղից եռ արմատն է երևում, ժամանակի ընթացքում փոխարինված ջերմ արմատով<sup>1</sup>:

<sup>1</sup> Տ՛ և Յովհաննես Կարագյոյան, Մեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 135-152:

Բնականուն եզրույթը միավորում է մարդկային բնակության ցանկացած վայրի անվանումները՝ գյուղ, շեն, ավան, քաղաք, մարզ կամ վարչատարածքյին այլ միավորի անվանում: Երկրանունները կամ պետությունների անվանումները որպես կանոն առանձնանում են բուն բնականուններից, որովհետև դրանք հիմնականում ծագում են ժողովրդանուններից (Երևնիկի), որոնց գումարվում է հավաքականակերտ կամ հոգնակերտ որևէ ածանց: Երկրանունները, ինչպես և լեռնանուններն ու ջրանունները կայունացել են: Աշխարհի ազգային-պետական քարտեզն արդեն գծված է, սահմանված, և հնարավոր փոփոխությունների հավանականությունը չնշին է: Նոր ազգերի ստեղծման ժամանակը կարծես անդարձ անցել է, իսկ ստեղծվող նոր պետական միավորումները սովորաբար ստանում են արդեն շրջանառության մեջ գտնվող հին անուններ, ինչպես եղակ, օրինակ, Հարավալավիայի տրիման դեպքում, երբ այս համադաշնության կախյալ միավորները պարզապես անշատվեցին՝ դառնալով ինքնանկախ պետություններ՝ Սերբիա, Բունիա, Չեռնոգորիա, Խորվաթիա, Մակեդոնիա: Այս երկրանուններն արդեն մի քանի դար վկայված էին: Այսպիսով, տեղանունների համակարգում նորակազմություններ և նորաբանություններ կարող են առաջանալ միայն բնականունների և, իհարկե, մանրատեղանունների դեպքում:

Բնակավայրերի անվանադրման սկզբունքները բազմազան են. բուն բնականունների քննությունն առնչվում է լեզվի բառապաշարի տարրեր շերտերի հետ: Ըստ որում, բնականվան բաղադրիչ դառնալու ընթացքում սովորական բառն անցնում է իմաստափոխության յուրօրինակ ճանապարհ՝ վերածվելով տեղանվանական ավանդույթի բաղադրիչի: Ա. Սուլեկրանսկայան, անդրադարնալով տեղանվանական ավանդույթը հասկացությանը գրում է. «Բնակավայրերի անունները գրեթե երբեք անմիջաբար չեն կազմվում հասարակ անուններից..., նրանց և ելակետային հասարակ անունների միջև երկարատև տեղանվանական ավանդույթըն է: Այս ավանդույթի համաձայն, բնական ճանապարհով տեղանվանական համակարգերի կայացման ընթացքում հասարակ անվան և բնակավայրի անվանման միջև կամ ֆիզիկա-աշխարհագրական միավորի անունն է, որի մերձակայքում ձևավորվել է ավանը, կամ մանունք, հայրանունն այն մարդու, որն ամենասերտն է կապված այդ օրիեկտի հետ (տերը, հիմնադիր առաջին բնակիչը)»<sup>2</sup>: Այս հիմնավորմամբ տեղանվանագիտության մեջ ընդունված է տարբերակել 2 տիպի բնականուններ՝ 1. բնական-աշխարհագրական բնույթի՝ գեղքեն կամ երկրածին և 2. պատմա-մշակութային բնույթի՝ անտրոպոգեն կամ մարդածին բնականուններ: Յուրաքանչյուր ժողովուրդ պատմության ընթացքում ձևավորում է բնականունների անվանակոչման իր ավանդույթները, որոնք սերտորեն առնըշվում են տվյալ ժողովրդի աշխարհընկալման հետ, անվանակոչումն ազգային ինքնության դրսարրումներից մեկն է: Այս տեսանկյունից, մեր համոզմամբ, պետք է տարբերակում կատարել նաև խոշոր և փոքր բնականունների պարա-

<sup>2</sup> А.Суперанская, Что такое топонимика? Из истории географических названий, М., 2011, № 65:

գայում, պայմանականորեն ասած՝ քաղաքանունների և գյուղանունների միջև հստակ սահմանագիծ է անցնում: Փոքր բնակվայրերի անվանակոչման դեպքում որոշիչ գործոն է տեղանքն իր աշխարհագրական բնութագրիններով, այսինքն՝ գյուղանունները երկրածին են, փոքր բնակվայրերի անվանումներում աստվածների կամ արքաների և իշխանների գործոնն այդքան վճռորոշ չէ: Փոքր բնականուններն անվանակոչվում են հիմնականում ըստ իրենց աշխարհագրական տեղադրության և վերջինիս շրջակա բուսական և կենդանական աշխարհի բնութագծերի՝ **Աղնջաձոր, Գետափ, Եղեգիս, Քարագլուխ, Մեծամոր, Խնածախ, Գլաձոր, Ազարակաձոր** և այլն: Այս տեսանկյունից **Կիրովականի** անվանափոխությունը **Վանաձորի** հաջող տարրերակ չէր. **Ճոր** բաղադրիչով հայերենում կամ հազարավոր գյուղանուններ, ուստի որպես բաղաքանուն **Վանաձոր-ը** կարծես համակարգից դուրս է, թեև մեր հետինդրստրիալ իրականության մեջ շատ գյուղական բնակվայրեր խոշորանալով վերածվում են քաղաքների, ուստի անունների նման միախառնումը հնարավոր է դառնում, այս սկզբունքով **Եղեգնաձոր-ը** ևս քաղաքանուն է, և արդեն ունենք **Եղեցնաձոր** և **Վանաձոր** համարանությունների շարքը:

Կախված տվյալ ազգի գրադեցրած աշխարհագրական տարածքից՝ նրա բնականունների մեջ որպես տեղանվանակազմից կգերիշնեն լեռնային կամ ջրային տեղանքին բնորոշ միավորների անվանումները՝ լեռ, սար, քար, ձոր, այր, հովիտ կամ ջուր, ծով, խորշ, ծոց, ափ: Հայկական բնականուններում, հատկապես գյուղական, լեռնային տարածքը բնութագրող բառարմատներն ամենահաճախառեալ են՝ **Ծիլքար, Քարակերտ, Քարանիստ, Ալքար, Լեռնապար, Լեռնակերտ, Սարիցուղ, Սարակապ, Սարանիստ** և այլն:

Նման կադապարով տեղանունները սփռված են Հայաստանի ողջ տարածքում: Այս առումով հետաքրքիր է Հ. Կարազյոյանի կողմից **Կումայրի/Գյումրի** և **Մեղրի** բնականունների ստուգաբանությունը, որը կապվում է *այր* բառի հետ. «**Կումայրի** (հմմտ. **Բզրայրի**՝ զիւղ Տուրուբերանի Ասպակունիք գավառում)»\* **Կումերի** (այ-է անցումով)»\* **Կումիրի** (միջնադարյան ե-ի անցումով)»\* **Կումիրի** (ենթարեալ վերջնական ձև, հմմտ. \***Մեղայրի**\***Մեղերի**\***Մեղիրի**»\*<sup>3</sup>

Հայերենում առատ են նաև **ջուր** իմաստային դաշտի բառերից կազմված բնականուններ՝ **Թթուջոր, Աշաջոր, Ջրաձոր, Ջրաբերդ, Ջրառատ:**

Վայրի կամ ընտանի կենդանանուններից բաղադրված բնականունները ևս կազմվում են, բայց, որպես կանոն, միայն փոքր գյուղական շենքերի համար՝ **Աղավնաձոր, Աղավնատուն, Արծվաշեն, Արջուտ, Երնջատափ, Եղնիկ, Խոզնավար, Խաշթառակ, Լորուտ, Սարալիկ**: Ընդգծենք, որ ներկա ժամանակներում կենդանանուններից բնականուններ այլևս չեն կազմվում, միայն մանրատեղանուններ:

Պատմա-մշակութային բնույթի են այն բնականունները, որոնք կապված են տվյալ բնակավայրի տերերի կամ բնակիչների անունների և նրանց վարած

<sup>3</sup> Յովհաննես Կարագեղեան, նշվ. աշխ., էջ 84:

գործունեության հետ: Դրանք կարող են ծագել. ա) անձնանուններից, տոհմանուններից կամ ժողովրդանուններից, բ) դիցանուններից կամ կրոնա-պաշտամունքային բառապաշտիքի այլ հասկացությունների անվանումներից, գ) մարդու տնտեսական, մշակութային և սոցիալական գործունեությունը բնութագրող իմաստային դաշտերի բառային միավորներից: Որպես կանոն՝ խոշոր բնակավայրերի՝ բերդերի և քաղաքների անվանումները մարդածին են, որովհետև նրանց հիմնադրման գործընթացը սերտորեն առնչվում է անձերի հետ, անձնակենտրոն է, հետևապես դրանց անուններն ուղղակի արտահայտում են հիմնադիր այրերի նպատակները, կրոնական դավանանքը, որովհետև կրոնն իրքի աշխարհում մարդու անվտանգ գոյության կովան վճռորոշ է անզամ 21-րդ դարում և իր ուղղակի արտահայտությունն է գտնում անվանադրման ընթացքում, ինչպես անձերի, այնպես էլ բնակավայրերի: Այսպես՝ Արևմտյան Եվրոպայի շատ քաղաքներ կրում են տարրեր սրբերի և սրբուհիների անուններ, հատկապես կաթոլիկ երկրներում, և զարդարական շարժման հետևանքով քաղաքների անվանադրման այս սկզբունքը լայնորեն տարածվեց Աֆրիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի պետություններում՝ *Սան Պաուլո, Սանտամարա, Սեն Ժեումե, Սեն Գուտիեր, Սեն Վալերի, Սանտա Մարիա, Սանտո Պուլինգ, Սան Մարին, Սեն Ֆենի, Սենտ Լուիս* և այլն:

Վաղնջական ժամանակներում, երբ հնդեվրոպական ցեղերը սփռվում էին Եվրոպայի և Ասիայի տարածքներում, մշակվել էր քաղաքանուններ կերտելու հասուկ ավանդույթ, որի վերաբերյալ պատմաբան Մարինա Սկրիժինսկայան ուշագրավ հետագործություններ է կատարել, ըստ այդմ՝ հունական համայնքները Ք.ա. 8-7 դարերից սկսած նոր բնակավայր հիմնելուց առաջ դիմում էին Դելֆինի Ապոլոն աստծոն նրա հավանություն-օրինությունը ստանալու համար: Հին հնդեվրոպացիների պատկերացմամբ բնակավայր ստեղծելու համար աստվածների բարեհաճուրյունը պարտադիր պայման էր, նման երևույթ առկա էր ոչ միայն հին հույների, այլև ուրարտացիների մոտ, որոնց արքաների արձանագրություններում վկայված է, որ քաղաքի հիմնադրումից առաջ արքաները դիմել են բիայնական դիցարանի աստվածներին, հասլապես Խալդ աստծոն, որոնց գորությամբ հաջողվել է ոչ միայն ռազմական հաղթանակներ տանել, այլև բնակավայրեր ստեղծել: Հին հույների հիշյալ ավանդույթով աստուծոն գուշակին դիմում էր նոր բնակավայր գաղթողների համայնքի առաջնորդը: Տաճարի քուրմը, որը քաջագիտակ էր այն ժամանակի բնակելի տարածքների աշխարհագրական, կլիմայական, տնտեսական և քաղաքական պայմանների մասին, երշանիկ լյանք և ապագա էր կանխագուշակում տվյալ բնակավայրը հիմնադրուների և նրանց հետոազա սերունդների համար: Այս ավանդույթի համաձայն՝ քազմաթիվ քաղաքներ ստանում էին *Օքիա պոլիս* անունը, որը քարգմանաբար նշանակում է Երջանիկ քաղաք: Ժամանակի ընթացքում պոլիս քաղաքներին ընկնում էր, տեղանունը դառնում էր միաբա-

դադրիչ մնում էր *Օլիխա/Օլվիա* հատվածը՝ Երջանիկ<sup>4</sup>: Այս խորհրդանշական ավանդույթով է Հ.Կարազյանը փորձում է ստուգաբանել Երևան քաղաքանունը՝ գրելով. «Դժվար չէ նկատել, որ Երերոն>Երեւան քաղաքը եւս հիմնադրուել է հնեւոպական յիշեալ սովորոյթի համաձայն եւ այդպէս էլ ստացել է իր անունը Երերոն («երջանիկ քաղաք»): Հստ Հ.Կարազյանի, Երերունի> Երեվան անցումը կարող է օրինաշափ լինել միայն այն դեպքում, եթք ընդունենք Երերոնն>Երևան տարբերակը, որովհետև հայերենում **ու-ն ա** չի դարնում, այլ միայն **ո-ա** անցումն ունենք: Այս կարծիքին էր ժամանակին նաև Գ. Ղափանցյանը, որը նշում էր, որ սեպազրերում «ո» հնյունն արտահայտող վանկազիր չկա, այն փոխարինվում էր «ու» սեպախմբով կամ այդ հնյունը պարունակող որևէ այլ վանկազրով, ուստի Արգիշտի Ա-ի հիմնադրած բերդաքաղաքի անվանումը պէտք է կարդալ Երերոն: Եր-ը «երջանիկ» բառի արմատն է, որը վկայված է «երանի, երանելի» բառերում նաև, իսկ բնոր հնդեվրոպական բառ է, որը նշանակել է «խրճիթ», նաև «շենք, տուն, քաղաք», Բոն տեղանվանակազմիչով հայտնի են բազմաթիվ հունական բնակավայրեր, օրինակ՝ *Աւգուստորոն, Հուլիորոն, Կասիրոն, Կենարոն*. **Բ>վ** հնյունական անցումը հայերենում հայտնի երևույթ է: Մեր քաղաքամայր Երևանի անվան այս մեկնարանությունն անշուշտ խանդավառող է, բայց նշենք, որ Երևան-Երերունի տեղանունն ունի նաև այլ բացատրություններ. Գ.Ղափանցյանը և Ս.Նիկոլսկին Երեւան անվանումը բխեցնում էին Երիախնի Երկրանունից, որը, ըստ Ղափանցյանի, ծագում էր Երիա-Երիա ցեղանունից<sup>5</sup>, իսկ ուրարտագետ Ս. Խորակելյանի կարծիքով այն նշանակում էր «**հաղթանակ**», **irbu** արմատը ուրարտերենում նշանակել է «հափշտակել, գողանալ» նաև «**զրավել, նվաճել, հաղթել**»<sup>6</sup>: Վ. Խաչատրյանը Երեւան բնականունը ստուգաբանում է հայերենի հնդեվրոպական էրև արմատի միջոցով, որն առկա է Երևի՝ «**երևնալ**» բայց մեջ, որին ավելացել է ան ածանցը, ուստի Երեւան նշանակում է «**երեւցող տեղում գտնվող բնակավայր**»<sup>7</sup>: Եթե եւնենք գուտ հայկական իրականության փաստերից, ապա անվանադրման վերոհիշյալ սկզբունքը մեզանում ամրակայված չի եղի: Մենք չունենք սրբերի դասին պատկանող անզամ ամենապաշտելի անձերի անուններից ծագած քաղաքանուններ՝ Վարդան Մամիկոնյան, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Գրիգոր Նարեկացի: Այս և նման հոգևոր գործիչների անունները տեղանվանակազմից են դարձել միայն փոքր բնակավայրերի և հատկապես մանրատեղանունների կազմության դեպքում՝ պողոտաներ, փողոցներ, հրապարակներ, պուրակներ և այլն: Եվս մեկ բնութագրիշ առանձնահատկություն. կանացի անունները հայկական տեղանուն-

<sup>4</sup> Տե՛ս **М.В. Скрижинская**, *О происхождении названий города Ольвия*, “Вестник древней истории”, 1981, №3, էջ 146:

<sup>5</sup> **Гр. Капанцян**, *Историко-лингвистическое значение топонимики Древней Армении*, Еր., 1940, էջ 7-8:

<sup>6</sup> Տե՛ս **Ս. Խորակելյան**, *Երերունի-քերդ քաղաքի պատմություններ*, Ե., 1971, էջ 11-13:

<sup>7</sup> Հմտած. **Վ. Խաչատրյան**, *Հայկական տեղանունները սեպազիր աղյութներում. Տեղագրական և ստուգաբանական քննություն*, Ե., 2012, էջ 116-117:

Ներում որպես բաղադրող հիմք գրեթե չեն հանդիպում, մենք ունեցել ենք ազդեցիկ բազուիիներ, բանահյուսական, պատմական կին հերոսներ, քրիստոնեական նահատակներ, բայց նրանց անունները բնակավայրերի հիմքում չեն դրվել: Կարող ենք ամրագրել, որ մեր անվանադրման բանաձևն այրակենտրոն է և բավական աշխարհիկ: Գնահատելով աստծոն և կանանց՝ մեր անվանադրությունը անմահացնում են տղամարդկանց և աշխարհիկ հերոսներին ու գործիչներին: Աստծունը աստծուն տալով, իսկ մարդկանցը՝ այրերին: Այսպիսով, խոր անցյալում անվանադրման գործընթացը ոչ միայն ձանաշելի և տարբերակիչ նշան ստեղծելու նպատակ էր հետապնդում, այլև ծիսական երևույթ էր, որը պետք է կանխորոշեր և ապահովեր անվանվող միավորի հավերժությունը և բարերախտ ապագան:

Ժամանակի ընթացքում հնդեվրոպական աշխարհընկալման առաջնահերթությունները փոխվել են, և հայոց մեջ ամրագրվել է բնակավայրը հիմնադրող արքայի կամ ավատափրոց անունից տեղ գոյց տվող բաղադրիչներով բնականուններ ստեղծելու ավանդույթը: Աստվածներն իրենց տեղն արագ զիջում են հզոր և սեփականատեր մահկանացուներին: Այսպես՝ Տիգրան ՄԵծի կողմից ՄԵծ Հայրում շուրջ մեկ տասնյակ **Տիգրանակերտ**-ներ են հիմնվել, թագավորների և իշխանների անուններն ամրագրվել են նաև հետագա դարերում՝ **Արշակավան**, **Վաղարշապատ**, **Գագկաշեն**, **Բակորակերտ** և այլ բնականուններում: Ավելի ուշ թագավորական և նախարարական գործոնի անհետացմանը գուզընթաց՝ բնակավայրերի անվանադրումը սկսում է կատարվել քաղաքական, ապա մշակութային հերոսների անունների հիման վրա: Քաղաքական-ուազմական նշանավոր գործիչների անունները հատկապես խորհրդային ժամանակներում էին տեղանվանահիմք դառնում՝ **Հենինական**, **Պիրովական**, **Ազիզեկով**, **Ստեփանավան**, **Դարիջանյան**, **Սուսայեցան**, **Բայրամյան**, **Շահինյան**, **Կայինին**, **Ղուկասյան**, **Ենոքավան**, **Սուրենավան** և այլն: Ամբողջատիրությունից ազատականության անցումը տեղանվանաստեղծման մեջ նշանավորվեց մշակութային գործիչների անունների վերաբերմամբ, բնակավայրերը սկսեցին անվանվել խոշոր գրողների, բանաստեղծների անուններով, երբեմն տեղանվանակերտ բաղադրիչով, երբեմն առանց որևէ բաղադրիչի, մաքուր հիմքով՝ **Զարենցավան**, **Ստեփանակերտ**, **Արովան**, **Թումանյան**.

Հայկական բնականունները ըստ կազմության լինում են պարզ, ածանցափոր, բարդ բաղադրյալ-բարակապակցական: Պարզ-արմատական բնականունները փոքր թիվ են կազմում, և հիմնականում պարզ են գյուղանունները, ընդ որում բնականուն դառնում են հիմնականում բնակավայր նշանակող հասարակ անունները, ինչպես՝ **քաղաք**, **ավան**, **շեն**, **ցուղ**, **բերդ**, **աշտարակ**, **ազարակ**. Սա անվանադրման ամենապարզունակ հնագույն ձևն է, որը վեկայված է բոլոր ժողովուրդների մոտ, ներկայումս անվանադրման այս եղանակն այլևս չի գործում, կարող է հանդիպել միայն մանրատեղանունների կազմության ժամանակ, երբ կամուրջը կոչվում է հենց **Կամուրջ**, արտը՝ **Արտ**: Բերենք Հայաստանում առկա պարզ արմատական բնականունների օրինակ-

**ներ՝ Բերդ, Գավառ, Ավան, Ազարակ:** Ավելի հաճախ այս արմատական անվանումներին ավելանում էին ածանցներ՝ ստեղծելով նոր բնականուններ՝ **Ավանիկ, Ավանս, Ավանց, Գյուղիկ, Գյուղիս, Բերդակ, Գավառակ:** Հայերենի բնականուններին առավել բնորոշ է ածանցավոր կառուցվածքը:

Որքան էլ բազմազան լինեն ածանցները բնականունների կազմում, այդուհանդերձ հայկական բնականունները բառակազմական տեսանկյունից հիմնականում հոդակապով բարդություններ են, ընդ որում բարդության առաջին բաղադրիչը բնակավայրի որակական հատկանիշներն արտահայտող մասն է կամ այն անհատի անունը, ի պատիվ որի անվանակոչվել է քաղաքը կամ գյուղը, իսկ երկրորդը բնակավայր նշանակող կամ ֆիզիկական աշխարհի իմաստային դաշտի միավորներ են, այսինքն՝ բնականվան ցուցիչը բարդության երկրորդ հաստատուն բաղադրիչն է՝ Իջևան=իջ/ի+ավան, Արծվաշեն=արծիվ/ա+շեն, Բերդաշեն=բերդ/ա+շեն, Դևլզաշեն=պէլմզա/ա+շեն, Նորաշեն=նոր/ա+շեն, Հարթազուղ=հարթ+զուղ, Բազմաբերդ=բազում/ա+բերդ, Մերձավան=մերձ+ավան և այլն:

Բաղադրյալ բառակապակցական բնականունները հույժ սակավադեպ են հայերենում, որպես կանոն այդպիսի կառուցյներ կազմվում են, երբ կան նույն անունը կրող մի քանի բնակավայրեր, որոնք տարբերակվում են ներքին, արտաքին, մեծ, փոքր և նման հականշային ածականների միջոցով՝ **Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն:** Կրոնական բովանդակությամբ և նախադասության արմեք ունեցող եզակի բընականուն է **Էջմիածին** քաղաքանունը, որտեղ ունենք ենթակայի և ստորոգյալի միավորում՝ **Եջ** (գրաբարյան **իշանել** բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալի եզակի թիվ երրորդ դեմքի բայաձել)+**միածին = իշավ միածինը:**

Եթե փորձենք վիճակագրական տվյալների հիման վրա ընդհանրացնել հայկական բնականունների կազմության հիմնական սկզբունքը, ապա պետք է նշել, որը առավել հնագույն շրջանից եկած բնականուններում, ամրագրվել են ժողովրդանուններ կամ ցեղանուններ՝ **Լոռի, Շաքի, Վեղի, Արարատ:**

Բնապաշտության ժամանակաշրջանում տարածում են գոնում աստվածություններ դարձած երկնային մարմինների անուններից կազմված բնականունները: Այդ տեսանկյունից քննելով հայկական բնականունները՝ նշենք, որ հայերի մեջ ամենաամուրն արեգակի և օրի պաշտօմունքն ու սրբացումն են եղել: Այս երկու հասկացույթների տարբեր անվանումներից բազմաթիվ պարզ, ածանցավոր և բարդ բնականուններ են կազմվել, որոնց զգալի մասը պահպանվել է և հասել 21-րդ դար: Օրինակ՝ **Արեգ, Արեգի, Արև, Արևիք, Արևիս, Արևիկի, Արևշատ, Արևանիստ, Արփի, Ծովակ, Ծովազուղ, Ծովինար, Զրարիի, Զրաբեր, Զրածոր, Աղբյուր, Աղբյուրակ** և այլն:

Բնականունների կազմության դեպքում վճռական գործոն է նաև տեղաբնակների ազգությունը, այսպես՝ Հայաստանի այն գյուղերը, որտեղ բնակվել են հավատքի համար արտաքսված ոռւսները՝ մոլոկաններ, հնադավաններ, ռուսական տեղանվանակազմիչներ և արմատներ ունեն՝ **Ֆիոլետով,** **Լերմոնտով,** **Մեղովիկա,** **Լովոսեցյոն,** **Կրիվոյ մոստ,** **Պրիվոնյե:** և այլն:

Գունանունները հայկական բնականուններում բավական հազվադեպ են հանդիպում, դրանց առաջացումը երկու հիմք ունի. առաջին մակարդակում գունանունը նշան-բնութագրիչ է, այսինքն՝ տեղանքին հատուկ որակական ածական է՝ կապույտ լճի կամ ծովակի ափին հիմնադրվող բնակավայրը կոչվում է **Կապույտ, Կապույտը, Կապուտակ**, կամ հրաբխային ծագման ապար-ների, հանքարքերի հարևանությամբ ստեղծվող բնակավայրը կոչվում էր՝ **Կարմիր, Կարմիրը, Կարմիրշեն, Կարմիրադրյուր**. իսկ կրաքարային տարածների բնակավայրերը՝ **Սպիտակ, Սպիտակադրյուր, Սպիտակաշեն, Սպիտակաջուր, Սպիտակաթերդ, սևահողով կամ սև տուֆով հարուստ բնակատեղիները՝ Սևահող, Սևաթերդ, Սևակն**: Երկրորդ հիմքը գույների դիցաբանական և փոխաբերական ընկալման հետ է կապված, հայտնի է, որ չարի և բարու, կյանքի և մահվան հակադրությունը բազմաթիվ ազգերի հավա-տայիններում կապվում է **սև, սպիտակ և կարմիր** գույների հակադրության հետ: Աստվածներին, սրբությունները, կյանքը և մահը մարդի ընկալում և պատկերում է որոշակի գույների միջոցով: Ուստի բնակավայրերի անվա-նումները ևս, անկախ իրենց տեղանքի գունային հատկանիշներից, կազմվում էին **սև, սպիտակ, կարմիր, կապույտ, շեկ, կանաչ** բառարմատներից՝ յուրաքանչյուր դեպքում ունենալով ուղղակի կամ խորհրդանշական իմաստը: Այս առումով իմաստային ամենամեծ թերևնականությունն ունեն վերոնշյալ վեց գույները, որոնք հայոց բնականուններում ևս ամրակայված են՝ անցյալում ավելի մեծ հաճախականությամբ, ներկայումս՝ սակավ: Գունանունների առ-կայությունը վկայված է դեռևս հնդեվրոպական տեղանուններում, այս տե-սանլյունից ուշագրավ է Ա. Պետրոսյանի տեսակետը. նա փորձում է առանձ-նացնել *h-*\*<sup>arg</sup> «սպիտակ» արմատից կազմված տեղանունները և առա-պեկական տարբեր կերպարների անվանումները՝ դրանցից բխեցնելով **Արամ/ Արիմ, Արմ, Արածանի** անունները<sup>8</sup>:

Հավարտ նշենք, որ արդի անվանադրումն ունի գուտ գործնական նպա-տակ՝ ստեղծել համընդիմանուր հասկանալի և տարածության ու ժամանակի մեջ կողմնարոշող նշաններ, ուստի բնականունների կազմության կազմապար-ները կրատառվում են և զրկվում զգայական-իմացաբանական խոր բովանդա-կությունից՝ աստվածայինից դասնալով մարդկային:

Dilbaryan Narine -The Structure of Armenian Oikonyms. - In toponymy, it is accepted to classify the names of settlements according to the nature of the main topoformants: a) the names of settlements derived from words denoting natural geographic features (geo-genic oikonyms) and b) from words denoting cultural-historical events (anthropogenic oikonyms). To the oikonyms of natural geographic character belong the names of settlements derived from the names of water sources, landscape features, natural environment, flora and fauna. Such topoformants reflect the physiographic features of the most populated locality, for example *Karakert, Saranist, Lanjakap, Getashen, Tsova-Urjus, Urjus, Urvachashen* հանունները<sup>8</sup>:

<sup>8</sup> Տե՛ս **Ա. Պետրոսյան**, *Արամի առասպեկը հնդեվրոպական առասպեկտանության համա-տերսում և հայոց ազգածագման խնդիրը*, Ե., 1997, էջ 120-122:

*gyugh, Aghbyurak, Arjrut* etc. To the oikonyms of cultural and historical character belong the names associated with proper names (name, surname or nickname) of residents and owners of the villages, as well as their family members, and those associated with the social composition of the population, religious-cult vocabulary, household and social life of a man, for example *Artashat, Haykashen, Charentsavan, Baghramyan, Vaznadzor, Buzhakan, Nor kyank, Haghtanak*. The purpose of this report is to describe the semantic and word formational structure of Armenian oikonyms.

Дилбарян Нарине - Армянские ойконимы. - Цель этого доклада – охарактеризовать семантическую и словообразовательную структуру армянских ойконимов. В топонимике принято названия населенных пунктов (ойконимы) классифицировать по характеру основного топоформанта: а) названия населённых пунктов, образованные от слов, обозначающих естественно-географические объекты (геогенные ойконимы) и б) от слов, обозначающих культурно-исторические явления (антропогенные ойконимы). К ойконимам естественно-географического характера относятся названия населённых пунктов, образованные от названий водных источников, обозначений особенностей ландшафта, природных условий, животного и растительного мира; такие топоформанты отражают физико-географические особенности самого населённого пункта. К ойконимам культурно-исторического характера относят названия, связанные с личными именами (имя, фамилия или прозвище) жителей и владельцев селений, а также членов их семей, с социальным составом населения, с религиозно-культурной лексикой, с хозяйственной и социальной жизнью человека.

ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՆԹԱԴԱՇՏԻ ՈՐՈՇ  
ԲԱՑԵՐԻ ԱՊԱՆՅՈՒԹԱԿԱՆԱՅՈՒՄ ԱՐԻ ՀԱՅԵՐՆՈՒՄ

Խոսքային գործունեությունը մարդկային մտածողության դրսորման ձևերից մեկն է և, ինչպես յուրաքանչյուր գործունեություն, ունի իր կոնկրետ նպատակադրումը՝ հաղորդակցական գործառույթի իրականացում:

Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտը մտնում է գործողության իմաստային դաշտի մեջ՝ ապահովելով մարդկային գործունեության կարևորագույն գործառույթները՝ հաղորդումն ու հաղորդակցումը, որոնք հիմնականում իրականացվում են ասացական, մտածական, զգացական բառահիմաստային խմբերի (այսուհետև՝ ԲԻԽ) բայերի միջոցով։ Արդի հայերենում խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի որոշ բայեր, կորցնելով իրենց նյութականությունը<sup>1</sup>, վերածվում են եղանակավորող բառերի՝ համալրելով համանուների ձևափառացային խումբը, օր։ Ուստի ասեմ (ասացական) ձեզ՝ բարեկամների՝ ս, Որ այսու և ետ բացառված հաշվենք Հիվանդությունը երիկամների... (ՊԱ,հ.1,118), Ես ինքու եմ ահա ինձ նշանակում Լուսավորության նախարար՝ ասեմ (եղանակավորող), Թե՞ կատարածու լուսավորության... (ՊԱ,հ.1,85)։ Խոսքիմաստային վերոնշյալ անցումը կատարվում է այդ բայերի բազմիմաստության, փոխարեական իմաստավորման, արտալեզվական այլ վերահիմաստավորումների շնորհիվ։

Եղանակախրանիշ<sup>2</sup> բառերի են վերածվում խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի ասացական ԲԻԽ-ի որոշ բայեր՝ ասել, արտահայտել, խնդրել, խոսուովանել, կատակել, կրկնել, կոչել, նշել, պարզել ևն, օր։ Ծանոթանան՝ Շատ լավ։ Բայց ես անուն չունեմ։ Թե՞ ուզում ես, խնդրեմ, «Հում սապիենս» կոչիր (ՊԱ,հ.1,262), մտածական ԲԻԽ-ի որոշ բայեր՝ զիտենալ, ենթադրել, ընդունել, իմանալ, կարծել, հասկանալ, եղշել, մտածել, նշանակել ևն, օր։ Ու սարսափն է կարծես խոսում Կորուստների, ահերի (ՊԱ,հ.1, 57), զգացական ԲԻԽ-ի որոշ բայեր՝ ափսոսալ, երևակայել, զարմանալ, զգալ, հավատալ, պատկերացնել, ցանկանալ, ցավել, ուզենալ ևն, օր։ Ասում եմ ձեզ (մի զարմացեք)<sup>3</sup>, որ իրոք Ամենամեծ միամիտին աշխարհում Մարդիկ Աստված կամ Արարիշ են կոչել (ՊԱ,հ.1,143)։

Մեր հոդվածի նպատակն է խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում առանձնացնել և դասավարգել այդ բայերը՝ բացահայտելով լեզվական երևույթի առաջացման պատճառները։

<sup>1</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարակառություն, հ. II, Ե., 1964, էջ 440։

<sup>2</sup> Եղանակավորող բառերի մեջ առանձնացնում ենք վերոնշյալ ենթադաշտի որոշ բայերից գյուղած մի բառաշերտ՝ պայմանականորեն անվանելով եղանակավորանիշներ։

<sup>3</sup> Հարկ է նկատել, որ գեղարվեստական գրականության մեջ, որից բաղել ենք օրինակները, եղանակավորող բառերի կետադրության միօրինակություն չկա։

Ըստ Ս. Աբրահամյանի՝ եղանակավորող բառերը այս կամ այն երանգն են հաղորդում նախադասության մտքին, խոսդի վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության, առարկայի նկատմամբ. դա նշանակում է, որ վերոնշյալ բառերը, չունենալով նյութական իմաստ և, դրանով հանդերձ, հակադրվելով նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերին, այնուամենայնիվ առաջացել և առաջանում են նյութական իմաստ ունեցող բառերից, այսինքն, լինելով ինքնուրույն խոսքի մաս, նրանք սահմանազատված չեն մյուս խոսքի մասերից և հարստանում ու համարվում են նրանց հաշվին<sup>4</sup>. Եվ քանի որ բառերի կառուցվածքային և իմաստային հատկանիշները դրսորդում են միայն նրանց գործառության ժամանակ, իսկ լեզվական միավորների գործառույթների ներք հասկացվում է լեզվական միավորի՝ խոսքում վերատադրվելու նպատակն ու նշանակությունը, հետևաբար խոսքային գործունեության իմաստային ենթադաշտի որոշ բայերի վերածումը եղանակավորանիշների կատարվում է բառերի գործառական (իմաստային, ձեաբանական, շարահյուսական, ոճական) տարբեր հիմքերի վրա՝ ապահովելով լեզվական համակարգի միավորների միջև առկա կենդանի փոխազդեցությունն ու փոխներգործությունը:

Վ. Վինօգրադովը նշում է, որ բառն իրենից ներկայացնում է բառային և քերականական նշանակությունների կառուցվածքային ներքին միասնություն: Բարի բառային նշանակության սահմանումը իր մեջ արդեն իսկ ներառում է ցուցում դեպի բառի քերականական բնութագիրը: Բարի նշանակությունն ու քերականական ձևը մերժ բախվում են, մերժ միաձուվլումը: Նկատի ունենալով բառերի բազմիմաստության հանգամանքը՝ եղանակավորանիշների առաջացումը, կարծում ենք, այդպիսի «բախման» հետևանք է, որն էլ պայմանավորում է խոսքիմասային անցումը:

Հարց է ծագում, թե ինչու ընթացային բառերից միայն որոշներն են ունակ վերածվելու եղանակավորանիշների: Ս. Բառլերը նկատում է, որ այդ հարցի պատասխանը պետք է որոնել այդ բայերի իմաստաբանության մեջ՝ ընթացային բառերը դիտարկելով կրնկրես և վերացական գործընթացների տեսանկյունից՝ զիսավոր նախապայման համարելով նրանց նշանակության մեջ առկա վերացական բնույթը<sup>5</sup>:

Վերոնշյալ բայերի խոսքիմասային անցումը կատարվում է իմաստային այն հիմքի վրա, որ նրանց իմաստային կառուցվածքում առկա են եղել եղանակավորության, կերպայնության որոշակի երանգներ, որոնց դիպվածային գործածությունն է, հետազայում կրկնվելով, խթանել է այդ երանգների զարգացումն ու գերակշռությունը: Եվ քանի որ եղանակավորող բառերը արտահայտում են խոսդի մտածական, դատողական վերաբերմունքը այս կամ այն հա-

<sup>4</sup>Տե՛ս Ս.Աբրահամյան, Զթերվող խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 503-505:

<sup>5</sup> В. Виноградов, Русский язык. Грамматическое учение о слове, М., Выс. школа, 1972, էջ 18:

<sup>6</sup> А. Я. Баудер, Части речи - структурно-семантические классы слов в современном русском языке, Таллин, Валгус, 1982, էջ 125-126:

դորդման, իրողության, երևույթի կամ առարկայի նկատմամբ, հետևաբար իմաստային այս մերձակցությունն է նպաստել է խորիմասային յուրօրինակ «սահմանախատմանը»:

Հաղորդվող նյութի վերաբերյալ խոսողի վերաբերմունքից ենելով՝ **եղանակավորանիշ** բառերն ու բառակապակցությունները<sup>7</sup>, ըստ **իմաստային երանգների**, պայմանականորեն դասակարգել ենք հետևյալ տեսակների<sup>8</sup>:

ա. **Եղանակավորանիշներ**<sup>9</sup>, որոնք արտահայտում են **հաղորդվող նյութի** վերաբերյալ արժանահավատությունն կամ **հավաստիություն**, օր.՝ Թեև հետո, **զիտեմ**, վստահ եմ, ելի ենք նույն բարոյականությամբ ապրելու ու հպարտանալու... (ՊԶ, ՑԴԱ, 41), Բայց ահա բոլորովին այլ բան է բանաստեղծական պրոզայիզմը, որ, **համոզված եմ**, պոեզիան սնող մի շատ կենարար երակ է (ՎԴ, ԲՍԲ, 21).

բ. **Եղանակավորանիշներ**, որոնք արտահայտում են **խոսողի երկրայությունը** կամ **թերահավատությունը**, օր.՝ ...եթե սա բաղցը երազ չէ, այլ իրականություն, ապա երսի իրակնուք ունեմ ասելու, ի՞նչ **իմանաս**, գուց իսկապես իրավունք ունեմ ասելու այն ամենը, ինչ մտածում եմ (ՊԶ, 19), Արվեստի ոչ մի գործ, **ասել կուգե՞ արդյոք**, չի կարող չունենալ այդ «փնչը» (ՊԱ, հ.3, 169).

գ. **Եղանակավորանիշներ**, որոնք ներկայացնում են **խոսողի վերաբերմունքի հաղորդման տարրեր ձևերը**, ինչպես նաև **մտքի պատկերավոր արտահայտման եղանակները**, օր.՝ Այդ նշանակում է՝ **կարճ** ու **կոպիտ** ասած՝ նկատել ձի ըստ եռթյան և ոչ թե ձիու սև կամ աշխես, եզ կամ որձ լինելով (ՊԱ, հ.3, 190), Նրանք Պ. Սևակին ոչ միայն հանդիմանում, այլև մեղադրում են... **մերմ ասած** բազմափության մեջ (ՊԱ, հ.3, 243).

դ. **Եղանակավորանիշներ**, որոնք արտահայտում են **խոսողի գնահատականը**, օր.՝ Մեծ դժվարությամբ նրանցից պոկեցին Կոյային և քշեցին գործարար բակ, ուր նա, **կարելի էր ասել**, դեմք էր (ԳԱ, ԾՓ, 46), Երազիս մեջ թեզ խողացի հազար անգամ, Հազար անգամ թեզ ներեցի, Եվ զարմացա, **ավելորդ է ասելն անզամ**, թե ես ինչպես համբերեցի երազիս մեջ (ՀԱ, ՔՊ, 307).

ե. **Եղանակավորանիշներ**, որոնք արտահայտում են **հաղորդման առյուրը**. այս տեսակի մեջ են մտնում **որեւէ անձի կամ անձանց կողմից վկայված, հաղորդված տեղեկություններ**, **հայտարարություններ**, **կարծիքներ** ևն, օր.՝ Մերն է, իսկապես, նրա մեկ այլ «ես»-ը, **հոռմեացիների ասած** «ալտեր էգո»-ն (ՊԱ, հ.3, 283), Սուլիխաթյանի դասագրքից զիտեի Զարենցի մասին, որ «հայքականության» ողնաշարն է՝ **Խսահակյանի խոսքով ասած** (ՊԱ, հ.3, 249).

<sup>7</sup> Կարծիք կա, որ եղանակավորող բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները կարելի է միավորել մեկ դասի մեջ՝ ենելով ասույթի շրջանակում նրանց ունեցած գործառույթի ընդհանրությունից և դիրքային առանձնահատկություններից: Տե՛ս սահմանագիրը <http://russkiy.yazik.ru/>:

<sup>8</sup> Տե՛ս սահմանագիրը <http://rusoved.ru>, <http://ru.wikipedia.org>, <http://www.gramma.ru> ևն:

<sup>9</sup> Եղանակավորանիշ բառերից չենք տարանջատել եղանակավորանիշ բառակապակցություններն ու նախադասությունները՝ իմաստային հարուստ երանգապնակը չխարպելու նկատառումով:

գ. Եղանակավորանիշներ, որոնք գործածվում են խոսակցի ուշադրությունը յունք զբավելու կամ ուշադրության արժանանալու համար. սրանք ստորաբաժանում ենք երկու ենթատեսակի՝ 1. Եղանակավորանիշներ, որոնք արտահայտում են դիմում խոսակցին՝ խոսրի առարկայի նկատմամբ ուշադրություն հրավիրելու, եետաքրքրություն առաջացնելու, ասածը շեշտելու, ընդգծելու, կրկնելու կամ որևէ բան հիշեցնելու միջոցով, օր.՝ Այս դատապարտելի վիճակին ենք հասել, կրկնում ենք. որովհետև օտար բառերի գործածությունը դարձել է մի տեսակ կիրք լինելու, զարգացածության, իների նշան... (ՊԱ.հ.3,24), Իսկ Զոնին սոսկական կերպար չէ, այլև մի տեսակ «քանալի», որովհետև, ընդգծումով ասած, Բենք նոյն Զոնին է՝ արդէն հասակ առած... (ՊԱ.հ.3,181), «Քարդու» (նաև, **հիշո՞ւմ ես**, «Քամու») ձանապարհն է ձիշուր, հիշիր մեկընդմիշտ (ՊԱ.հ.6,431), 2. Եղանակավորանիշներ, որոնք գործածվում են շփման քաղաքավարական վարքականոններում, ինչպես՝ **ներեցեք, համեցեք, ինդրեմ** ևն, օր.՝ Կամենու՞մ եք զնանք զրուսանքի, - խնդրեմ, ինչու՞ չէ<sup>10</sup>, **Ներեցեք** ք, ես այդ բոյլ չեմ տս ոչ ոքի<sup>11</sup>.

է. Եղանակավորանիշներ, որոնք կապակցված խորպում արտահայտում են **հաղորդվող մտքերի կապը, հաջորդականությունը**, օր.՝ Արխստուտելր... գիտական այնպիսի խորությամբ է հետազոտել մտքի ձևերը, որ... Կանտը իր հիացմունքն է արտահայտել հետևյալ խոսքերով. «Արխստուտելի ժամանակներից սկսած՝ երկու հազար տարվա ընթացքում տրամաբանությունը ոչ մի առաջընթաց բայլ չի կատարել և ըստ ամենայնի վերջնականապես ավարտուն գիտություն է»: Մարք ձևերն ուսումնասիրող գիտությունը, **ասել** է, Արխստուտելն անվանեց «տրամաբանություն»... (ԳԲ, ԻԵ, 5), ... **ինչպես նշեցի**, վերոհիշյալ օրինակը Դոստուսկին ինքն է հնարել, հավանաբար իրականության մեջ զգունելով հարմար... (ՎԴ, 9).

ը. Եղանակավորանիշներ, որոնցով դրսուրվում են դատողությունների բացահայտման, պարզաբանման, մեկնաբանման **եղանակները**, օր.՝ Պատմաբաններն ու հնէաբանները կարող են զուրի հանել մի քնի հազար տարվա վաղեմություն ունեցող պատմական երևոյթներից ու անցքերից, իսկ 70 տարի առաջվա պատմական փաստը, **պարզվում** է, անհնա՞ր է «վերծանել» (ՊՕ, 25), Բայց ակամա դերասանից (**հասկանու՞մ ես, ակամա**)... ո՞վ է դժբախտ առավել (ՊԱ.Ը, 290).

թ. Եղանակավորանիշներ, որոնք արտահայտում են **կարծիք, տեսակետ**, օր.՝ Մինչդեռ, **կարծում ենք**, ոչ թէ ինքը հարցն է բարդ ու խճճված, ո՞չ պարզապես հարցի լուծումն է արհեստականորեն դժվարացած (ՊՕ, 29), Եթե այլ լինելու կյանքը, այլ լիներ աշխարհը..., **հավատացած եմ**, Վարուժանը բնության մի հզոր Պան պիտի դառնար... (ՎԴ, 78).

<sup>10</sup> Եղնիկ. բառ (ըղձական ապառնու 1 դեմքը, որ արտահայտում է համաձայնություն)՝ համաձայն եւ, պատրաստ եւ: Տե՛ս **ՃՀՀԲ**, էջ 535:

<sup>11</sup> ԱՀԲԲ-ում նշված է՝ իրմ. եղ. ա) Սեկին դիմելու քաղաքավարական ձև, բ) մեկի ասածը հերքելու կամ ժխտելու քաղաքավարական եղանակ: Տե՛ս **ԱՀԲԲ**, էջ 1064: Բայց արձանագրված չէ իրեն եղանակավորող բառ՝ ՈՒ:

**Ժ.** Եղանակավորանիշներ, որոնք արտահայտում են զգացմունքներ, ներքին ապրումներ ու տպավորություններ՝ հոգարտահայտչական տարրեր նրբերանգներով, օր՝ Թեև, ինչ մեղքս թաքցնեմ, ինչ մտայնությունը և զգուշավորությունը այնքան ամուր են նստած ամեն մեկիս մեջ, որ ես նույնիսկ չհամարձակվեցի Սախարովի հողվածի վերջին տողերը ևս մեջ բերել(ՊԶ,49), **Յավում եմ,** միլորդ, բայց շատ հնարավոր է, որ այդպես լինի(ՎՇ,Ք,355):

Ինչ վերաբերում է **ձեաբանական** հիմքին, ապա պեսոք է նշել, որ **եղանակավորանիշ** բառերի մի զգալի մասը կազմավորվել է բայերի հարացուցային (խոնարհված) ձևերից<sup>12</sup> և **եղանակավորանիշ** բառերի են վերածվել հատկապես այն բայերը, որոնք սպառել են իրենց հարաբերակցական ակտիվ կապը հարացուցի մուտքային ձևերի հետ, այսինքն՝ բռնել են «**մեկուսացման**» ուղին: Այնուամենայնիվ, իբրև **եղանակավորանիշներ** գործածվելով, դրանք դեռևս հարաբերակցվում են հարացուցային հետևյալ ձևերին՝

**ա. սահմանական եղանակի ներկա դիմաթվային բոլոր ժամանակաձևերին,** օր՝ Եվ, երեակայո՞ւմ եք, -հանկարծ, ամենաստվորական զյուղացու աչքերից ... ինձ է նայում նա(ԵԶ,հ.4,8).

**բ. սահմանական եղանակի անցյալ ժամանակաձևերին,** օր՝ Գեղջավագը շհամբերեց. «Մրբազան, ասաց, դուրս է զայխս, որ մենք՝ նարեկցիներս, ձեռք ենք բարձրացրել աստծո գառի վրա»(ՍՍ,ԳՆ,283), Հիմա կասեք՝ «Լա՞վ, հասկացա՞նք, թէ լավ մաք որ է եղել այդքան...»(ԳԷ,ԵԺ,հ.1,194).

**գ. հրամայական եղանակի ժամանակաձևերին,** օր՝ Ի՞նչ վիշտ է քեզ պատել, իմ թանկազին, խոսի՞ր, թերևս դարմանել կարողանամ(ՍԶ,հ.2,451), Ես քեզ, **իիշի՞ր,** զգուշացրել եմ, զորավա՞ր(ՍԶ,հ.2,604):

Որոշակի հետաքրքրություն է առաջացնում **իմացի՞ր-իմա՝<sup>13</sup>** և **տե՛ս՝**<sup>14</sup> հրամայական ձևերի՝ **իբրև եղանակավորանիշներ** գործածվելու հանգամանքը: Որպես բայաձեւեր՝ դրանք հիմնականում, ինչպես հայտնի է, գործածվում են առավելապես գիտական ոճում տողատակում՝ իբրև **հղման ձևեր**, բայց գործածվում են նաև իբրև **եղանակավորանիշներ** տեքստում՝ եղանակավորանիշներին հատուկ կետադրությամբ, օր՝ Բանաստեղծը՝ չնայած իր բարձրացրած կոչերին, չնայած բանաստեղծի կոչման իր հասկացողությանը (տես «Նեմեսիս»), այնուամենայնիվ, ցավոք, համոզված է դրանում(ՊՍ,հ.6,326), ... նա հասկանում է, որ «Արևմուտքի» (**իմա՝** Եվրոպայի) մեջ ընձյուղած ծաղիկները «պիտի ազագեն» Արևելքի (**իմա՝** Հայաստանի) խորշակից(ՊՍ,հ.6,305):

<sup>12</sup> Տե՛ս **Ս. Արքահամյան**, նշվ. աշխ., Ե., 1965, էջ 512:

<sup>13</sup> Բնակ, զբ. հրամ. Եղ. Բնանալ-ի: Գործածվում է առավել գիտական և հրապարակախոսական ոճերում՝ իմացի՞ր, այն է, այսինքն նշ.: Տե՛ս **ԱՀԲԲ**, էջ 486:

<sup>14</sup> Տես<sup>2</sup>, 1. իմ. Տեսնել-ի: Նայի՞ր: 2. Բառարաններում հրում արտահայտող բառ: 3. Զգուշացնելու արտահայտություն՝ ուշադիր եղիք, զգույշ եղիք: Իսկ Տեսա՞ր, Տեսա՞ր (հարցական նշանվ՝ ՈՒ) գործածվում է որպես եղանակավորող բառ՝ համոզվեցի՞ր, ես չէի՞ ասում նշ.: Տե՛ս **ԱՀԲԲ**, էջ 1434, 1436:

**դ. ըղձական եղանակի ժամանակաձևերին, օր՝՝** Եթե նրան աստվածացը եւ են, պաշտել ու երկրպագել, ինչու նույնը չեն կարող անել, **ասենք**, Սմբատ Զարեհավանցուն(ՄՄ,350).

**ե. ենթադրական և հարկադրական եղանակի ժամանակաձևերին** (որոնք սակավագործածական են), օր՝՝ Եվ ողջ շարքը պիտի կարդաս հենց այդ «Հայտնության» հուշարարությամբ, առանց որի բնավ է չես հասկանա (կամ «միայն խելք» **կհամարես**) հաջորդող հայտնությունները... (ՊՄ,հ.6,416), Ես կարծում եմ, որ մենք պետք է մեր հարգանքի տուրքը մատուցենք զոհիվածների հիշատակին ... (պետք է հիշել բոլորին անոն առ անոն) (Ո՞Դ).

**գ. դերբայական ձևերին, օր՝՝** Ա. Կապուտիկյանը կտրել է, **իր ասելով**, իր ճանապարհի կեսը(ՊՄ,հ.6,399), **Անկեղծ ասած՝** Նրանց, իրոք, չնախանձել չի կարելի ... (ՊՄ,հ.1,593), ...իսկ Արևմուտքում, ուր, **այսպես կոչված**, «սերսուալ հեղափոխություննը» փորձում էր արխիվ նետել սիրային լիրիկան, սկսել են ... բարձր լիրիկայի պահանջ զգալ... (ՎՇ,10):

**Հարացուցյան ձևերի պահպանումը** վկայումն է այն փաստի, որ վերածեավորման գործընթացը թե իմաստային և թե կառուցվածքային առումներով դեռևս չի ավարտվել. դա կենդանի լեզվական գործընթացի հետևանք է, որն ընթանում է լեզվի համաժամանակյա փոլում<sup>15</sup>:

Վերոնշյալ բայերը, գործածվելով իրքն եղանակավորանիշներ, թեև մասմբ պահպանում են **հարացուցյան** որոշ ձևեր և վկայում են անցման փաստի մասին, այնուամենայնիվ կայունացման հստակ միտում ունեն:

Խորիմասային հիշյալ անցումը կատարվում է **շարակայուսական** այն հիմքի վրա, որ որոշ բայեր, պարբերաբար գործածվելով շարակայուսական որոշակի դիրքերում, կայունանալով ձեռք են բերում «**կապակցական**» բոլորովին այլ հատկանիշներ: Այդպիսի հատկանիշների թվին կարելի է դասել, օր՝՝

**ա) երկկազմ նախադասությունների գերազանցումը**<sup>16</sup> (ինչպես, օր., **ես կարծում եմ -կարծում եմ, մենք ենթադրում ենք -ենթադրում ենք** ևն), օր՝՝ Գրիգոր, նորից եմ զգուշացնում, **զգույշ ենիք**, բոլոր մեծերի ճանապարհին մեծ հոչշնարուներ են ընկած, ...ընկար, բարձրանալ չկա այլս, նախքան թոհշքն ընկնելը մահ է, **իմացիր**(ՄՄ,176): Այս նախադասության մեջ զեղչված է **դու ենթական՝ դու զգույշ ենիք, դու իմացիր**.

**բ) բայական բառակապակցության կախյալ բաղադրիչի կամ բաղադրիչների գեղչումը** (ինչպես, օր., **ինձ թվում է -թվում է, մեզ ներկայանում է - ներկայանում է ևն** ), օր՝՝ «Նրանք կշարունակեն լինել աքսորյալ,- ավելացնում է Զարյանը,- որովհետև, **թվում է**, թե մարդ պետք է լինի աքսորյալ, որպեսզի պատկանի ամբողջ աշխարհին»(ԼՇ,ԳԹ,3): Կամ՝ Հիմա ցանկանում ենք, **ներիր մեզ հանդինելու համար**, հարցնել թե՝ պատշաճ է արդյոք նման խայտառակ ոփավածի համար ներկայանալ միաբանություն(ՄՄ,256) **օրինակում** զեղչվել է **դու ենթական և կարող են հեշտությամբ զեղչվել մեզ և հանդինելու**

<sup>15</sup> Տե՛ս **Ա. Я. Բայլեր**, նշվ. աշխ., Տ., 1982, էջ 128:

<sup>16</sup> Տե՛ս ն. տ., էջ 126:

**համար** բաղադրիչները, կարծում ենք՝ այս ճանապարհով է առաջացել **ներփականակավորանիշը**, օր.՝ Բայց եթք նույն հոգնած երակներիս մեջ Զարթնել է հանկարծ արարիչ մի դոդ, Շնչացել եմ. – **Ներփիք**, արարող(ՎԴ.հ.2,7).

**գ) Երկկազմ նախադասության և՝ գերադաս անդամը, և՝ նրանից կախյալ բաղադրիչը**, օր.՝ **Միայն խնդրում եմ**, հոգեկան ծանր ձգնաժամին, եթք թեզ կլրծի աստծո դատաստանին ոչ վայելուց, ոչ մաքուր ներկայանալու երկյուղը, մի՛ վախենա, մի՛ նզովիր քո բախտը(ՍՍ,354): Այս օրինակում զեղչված են **ես գերադաս անդամը և՝ նրանից կախյալ թեզ բաղադրիչը**:

Ակադեմիական շարադրության մեջ նշվում է, որ նախադասության մեջ երեմն գործածվում են այնպիսի բառեր, որոնք թեև թերականորեն կապված չեն տվյալ նախադասության հետ, այսինքն՝ նախադասության անդամ չեն, բայց որոշ երանգ ու գունավորում են հաղորդում նախադասությանը կամ նրա որևէ անդամի<sup>17</sup>: Մեր համոզմամբ՝ նրանք կառուցվածքային տարրի արժեք, այնուամենայնիվ, ունեն, ուղղակի՝ **ապանութական տարրի**: Բացի դրանից՝ նախադասության հնչաշղթայում նրանք իրենց որոշակի «կարգավիճակն» ունեն. բանավոր խոսքում արտասանական դադարով, գրավոր խոսքում կետադրությամբ տրոհվում են նախադասության մյուս անդամներից՝ դրսուրելով յուրօրինակ հնչերանզային առանձնահատկություններ: Որոշակի դեր է կատարում նաև եղանակավորանիշ բառերի **շարադասությունը**՝ այս կամ այն կերպ եղանակավորելով կամ ողջ նախադասությունը, կամ կը նախադասության որևէ անդամի՝ դրանով իսկ պայմանավորելով համապատասխան կետադրություն: Կարևոր է նաև **հնչերանզիք** դերը, որովհետև եղանակավորանիշները այս կամ այն իմաստով եղանակավորում են հաղորդումը՝ կապակցվելով նախադասության համապատասխան անդամների հետ հնչերանզիք միջոցով:

Այսպիսով, **ընթացային բառերի** վերածումը **եղանակավորանիշների** տեղի է ունենում այդ բայերի շարադրուսական գործածության որոշակի պայմաններում, որոնց նպաստում են **նախադասության անդամների գեղչումը, շարադրուսական կապերի վերաձեսավորումը, շարադասության և հնչերանզիքովի խոփոխությունները**:

Բացի դրանից՝ նշվածները դրսուրում են նաև **ոճական** բազմապիսի առանձնահատկություններ՝ **կրկնակիորեն ոճավորելով** խոսքը: Այդպիսի արժեքը ունեն հատկապես՝

**ա. հրաման արտահայտող եղանակավորանիշները**, օր.՝ Մեր ծերությունը Կարող է հանկարծ մեջ հարցնել մի օր. Եվ մենք ինչո՞ւ չկինք հայտնագործող, ասա (ՊՍ.հ.2,390).

**բ. կրկնակի հրաման արտահայտող եղանակավորանիշները**, օր.՝ Բայց ասա, ասա, լյանքում ինչ զագաթ կհասնի սիրո անհաս բարձունքին(ԳԷ, 293).

<sup>17</sup> Տե՛ս **Ս.Արքահամյան և այլք. Ժամանակակից հայոց լեզու**, հ. 3, Շարադրություն, Ե., 1976, էջ 292:

գ. հարցում արտահայտող եղանակավորանիշները, օր.՝ Հիշո՞ւմ եք, Նաբեկացին իր մատյանի զլուխներից մեկի սկզբում ասում է, որ այդ զլուխը պիտի հանգերով զրվի, որպեսզի առավել ազդեցիկ լինի(ՎԴ,22).

դ. Ժխում արտահայտող եղանակավորանիշները, օր.՝ Զգիտեմ՝ ինչպէս և ո ո՞վ հորինեց Հարության ոսկե առասպելը մեծ(ՎԲ,Հ,59).

ե. Միջնորյան եղանակավորանիշի և դրական, և ժխտական ձևերի միաժամանակյա գործածությունը, օր.՝ Եվ ի՞նչ խաչազող դեռ պիտի հասնի, որ քեզ կամենա գողանալ մեզնից (Մի ասա «մեզնից», «աշխարհի ց» ասա)(ՊԱ,հ.1,46).

գ. Միևնույն եղանակավորանիշի տարբեր դեմքերի միաժամանակյա գործածությունը, օր.՝ Եվ ոսկրով ծածկվեց մի հսկա երկիր, ուր (Ճիշտ են ասել ու ճիշտ եմ ասում) եղել էր ու կար շնից շատ իշխան, բայց իշխանություն չի եղել երբեք(ՊԱ,հ.1,260-61).

է. համանունների գործածությունը միևնույն խոսքաշարում, որը որոշակի սաստկություն է հաղորդում խոսքին, օր.՝ Կենեմ ու լուս կգնամ հենց օրենքի մոտ, կասեմ (ասացական ԲԻԽ). -Վերցրու ինձ, քո օրեսզրքի կետերից մեկը դարձրու ինձ, կասեմ (եղանակավորանիշ)(ՊԱ,հ.1,293).

ը. հակադրութեարում գործածվող եղանակավորանիշներ, օր.՝ Դու լսո՞ւմ ես. Ծուերն ասես ո՞չ թե երգում, Այլ «Ի՞չ...Ի՞նչ» են ձչում անվերջ Եվ դրանով պատառուում երկնի մովլ(ՊԱ,հ.1,336).

թ. համեմատական այն կառույցները, որոնցում գործածվում են եղանակավորանիշներ, օր.՝ Մեր ներսն ամբողջ ասես լինի համակ խուսուտ, ինչպես կուրծքը նորահարսի(ՊԱ,հ.1,146):

Որոշ դեպքերում եղանակավորանիշների գործածությունը կարելի է նմանեցնել շաղկապների գործառույթին<sup>18</sup>. այսպես՝ բացահայտման նշանակությամբ, օր.՝ ...սիրել նշանակում է «նայել միևնույն ուղղությամբ»: Ուրեմն և եկեք քիչ նայենք իրար (ասել է թե՝ քիչ հիանանք միմյանցով) և շանանք նայել միևնույն ուղղությամբ...(ՊԱ,հ.3,197), ներհակալական նշանակությամբ, օր.՝ Եվ այս՝ լրկ այն պատճառաբանությամբ, որ արվեստն ունի իր սահմանները, իր օրենքները (չփոքես կանոնների հետ)...(ՊԱ,հ.6,415), հավելական նշանակությամբ, օր.՝ Ու այն էլ ասեմ, որ թե նա սիրի Որեւէ մեկին, ապա կմեռնի Այդ սիրո համար...(ՎԴ,հ.2,279) ևս:

Dokhoyan Ruzanna -The Decemantization of Some Verbs in Semantic Subfield of Speech Activity in Modern Armenian.- The semantic subfield of speech activity enters the semantic field of action securing the main function of human activity: the report which is realized mainly by the verbs of the group “say”, “think”, “feel”. In modern Armenian some verbs of that subfield, losing their materialization, are changed into modal words, completing the form-semantic group of homonyms. The transposition of the parts of speech is completed on the functional bases of the words in semantics, morphology, syntax, stylistics.

<sup>18</sup> <http://dic.academic.ru>:

Дохоян Рузанна – Десемантизация некоторых глаголов семантического подполя речевой деятельности в современном армянском языке.- Семантическое подполе речевой деятельности входит в семантическое поле действия, обеспечивая главную функцию человеческой деятельности - сообщение, которое в основном реализуется с помощью глаголов следующих лексико-семантических групп: глаголов говорения, мышления, чувства. В современном армянском языке некоторые глаголы этого подполя, потеряв свою вещественность, превращаются в модальные слова, пополняя ряды омонимов. Транспозиция частей речи осуществляется на функциональных основах семантики, морфологии, синтаксиса, стилистики.

## **ՇՐՋԱԴԱՍ ՄՏՈՒԹԱՍՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Սույն հոդվածն այն մասին է, որ լեզվական գծային միավորների դիրքային 3 բնութագրերին՝ առաջադաս, միջադաս, վերջադաս, պետք է հավելել չորրորդը՝ շրջադաս դիրքը, որը ստորև քննարկվում է շարահյուսական մակարդակում:

Հատ համակցային (հարաբերական) դիրքի (նույն մակարդակի այլ տարրերի համեմատությամբ տվյալ տարրի գրանեցրած տեղի)՝ ընդունված է ստորադաս (երկրորդական) նախադասությունները զյանապորի համեմատ բնութագրել որպես **առաջադաս, միջադաս կամ վերջադաս**: Ահա օրինակներ. **Եթե տեղ հասանք, ամեն ինչ պարզ դարձավ** (առաջադաս): **Քաղաքի բնակչիները, եթե լուրջ բարի եր, ուրախանում էին** (միջադաս): **Բոլորը զիտեին, որ դա ճիշտ է** (վերջադաս):

Նոյն կերպ բնութագրվում են դերբայական դարձվածները բուն նախադասության համեմատ. **Իմ սխալները խոստվանելուց ես չեմ վախենում** (առաջադաս): **Քիչ անց վիրավորը, հավաքեռվ վերջին ուժերը, ուսքի կանգնեց** (միջադաս): **Կցանկանայի զրադակել միայն գեղարվեսով** (վերջադաս):

Տեսականորեն հնարավոր է նաև համակցային չորրորդ շրջադաս դիրքը<sup>1</sup>: Դա նոյն միջադասն է՝ հակառակ տեսանկյունից դիտված: Այսինքն, եթե միջուկային տարրը միջադաս է առմիջուկային որևէ տարրի նկատմամբ, ապա առմիջուկային տարրը դիտվում է իրեն շրջադաս<sup>2</sup>: Գործնականում ևս այս երևոյթը հանդիպում է, սակայն տարրեր դեպքերում բնութագրվում է տարրեր կերպ:

Շրջադաս երկրորդական նախադասության ամենատարածված դեպքը հեղինակի միջադաս խոսք պարունակող ուղղակի մեջբերված խոսքն է:

— Իմ տղաները, — մեջ ընկավ Լուսիկը, — բանակ գնացել, եկել են:

«Դուք, — ասացինք. — Ես երկրի տերն եք քաղաքն էլ ձերը, զյուղն էլ»:

Մրանցում զյանապոր նախադասությունը հեղինակի խոսքն է, որը, սակայն, ընդունված է որպես միջադաս բնութագրել մեջբերված խոսքի, այսինքն՝ երկրորդական նախադասության նկատմամբ: Մինչդեռ մյուս բոլոր դեպքերում երկրորդականի դիրքն է բնութագրվում զյանապորի նկատմամբ որպես առաջադաս, վերջադաս կամ միջադաս: Ուրեմն սկզբունքը պահպանելու, հետևողական լինելու դեպքում պետք է ասել, որ վերջին օրինակներում առկա է շրջադաս մեջբերված խոսք, այսինքն՝ շրջադաս երկրորդական նախադասություն:

<sup>1</sup> Դիրքերի մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Հ. Զաքարյան**, Շարադասական դիրքերը և դրանց արժեքները հայերենում, «Զանուլյանական ընթերցումներ», Ե., 2011, էջ 114 – 125:

<sup>2</sup> Այդպես են, օրինակ, համաձանցները բասահմբի նկատմամբ (**վերգետնյա բնծծովյա**):

Որպես գերադաս բաղադրիչ՝ հեղինակի խոսքը ամբողջ բազմաբարդ նախադասության համեմատ մասամբ միջադաս կարող է լինել նաև անուղղակի մեջքերված խոսքի դեպքում. *Մայրը որդուն ասաց, որ ինքը տնից դուրս է գալիս, ապա ավելացրեց, որ նա թռող հինգ րոպեից ձաշը վերցնի կրակից:*

Համփապում են նաև ստորագական բարդ ստորադասական նախադասություններ, որոնցում առկա է շրջադաս երկրորդական բաղադրիչ նախադասություն: Դրանք համեմատաբար սահմանափակ թվով են: Գլխավորի նկատմամբ շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասության օրինակներ են՝

*Աւեն ինչ, թվում էր, լավ է:*

*Խոսրա, տեսե՞ք, ուր է գնում քաջ որսկանի գյուղի պես: (Հ. Թ.)*

*Բմ ծննդապայրում, արդեն հինգ տարի է, չեմ եղել:*

*Արցախան ճակատի մեր զինվորները, ինն ամսից ավելի է, իրամատներից դուրս չեն գալիս:*

*Այդ տիսմարին, մտածում էի, դա ելքի է:*

*Ընկերներս, կարծում եմ, ինձ մենակ չեն թողնի:*

*Որոշ հավանական մասնակիցներ, միանգամայն հեարավոր է, շուկա մտնելուց հրաժարվեն պատժից վախենալու պատճառով:*

*Երգերիս մեջ, դու զիտ ս, ինձ ոչ չի ճանաչում: (Ե. Զ.)*

*Դու զնում ես չգիտեմ ուր... (Վ. Տ.)*

Այսպիսի նախադասությունները, սակայն, լեզվաբանական գրականության մեջ կամ չեն քննարկվում<sup>3</sup>, կամ համարվում են նախադասություններ, որոնց մեջ առկա է միջանկյալ նախադասություն: Համառոտ անդրադառնանք այս երկրորդ տեսակի կարծիքներին:

Ս. Արքահամյանը շարահյուսության դպրոցական դասագրքում՝ «Միջանկյալ նախադասություն» վերնագրի ներքո, ներդրյալ կառուցների հետ միասին խառը ներկայացրել է նաև շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ, օրինակ՝ «Սակայն պատմական այդ հանգամանքը, կարծում ենք, այնքան էլ կարևոր չէ»<sup>4</sup>: Այսինքն՝ շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասությունները փաստորեն համարված են միջանկյալ կառուցներով պարզ նախադասություններ:

<sup>3</sup> Ս. Ասատրյան, «Ժամանակակից հայոց լեզու (շարահյուսություն)», Ե., 1987: Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986: Ս. Արքահամյան, Ն. Պարնասյան, Հ. Օհանյան, Խ. Քաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե., 1976: Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարագույնան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975: Հ. Պետրոսյան, Հայերենապիտական բառարան, Ե., 1987: Վ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն (դպրոցական դասագիրք), Ե., 1976: Վ. Ավագյան, Հայոց լեզվի շարահյուսություն (դպրոցական դասագիրք), Ե., 1985: Լ. Եղկելյան, Հայոց լեզու, Ե., 2005: Ս. Պապյան, Խ. Քաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ուսումնական ձևուարկ), Ե., 2003: Վ. Քոյսյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» (բուհական ձևուարկ), Ե., 1976: Ս. Արքահամյան, Հայոց լեզու (շարահյուսություն) (բուհական ձևուարկ), Ե., 2004: Ս. Արքահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոյսյան, Հայոց լեզու, Ա. մաս, Շարահյուսություն, Ե., 1975:

<sup>4</sup> Ս. Արքահամյան, Հայոց լեզու (շարահյուսություն) (դպրոցական դասագիրք), Ե., 1998, էջ 257:

Գրեթե նույնն է պատկերը Ֆ. Խլդաբյանի դասագրքում<sup>5</sup>:

Վ. Առաքելյանը հայերենի շարահյուսությանը նվիրված աշխատության երկրորդ հատորում, տարբերակելով ներդրյալ և միջանլյալ նախադասություններ՝ որպես հիմնական նախադասության հետ շարահյուսորեն չկապված միավորներ, իրեն երկրորդներ ներկայացնում է նաև շրջադաս երկրորդականով մի քանի բարդ ստորադասական նախադասություններ: Օրինակ՝ «Նա կընդլայնե, մտածում ի, լուսավորության ասպարեզը: Եվ դա, հույս ունիմ, քեզ կթելադրէ երևակայել»<sup>6</sup>:

Գ. Գարեգինյանը նույնպես տարբերակում է նախադասությանը քերականորեն չկապվող, բայց իմաստով կապված երկու տեսակի միավորներ՝ միջանլյալ և ներդրյալ, որոնցից առաջինին վերագրում է վերաբերմունքային, երկրորդին՝ իրազեկային արժեք: Այնուհետև «Միջանլյալ նախադասություններ» վերնազրի ներքո հիմնականում քննարկում է շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ: Ընդ որում՝ հեղինակը նկատում է, որ «կան որոշակի նշանակությամբ դիմավոր բայեր, որոնք միջադաս դիրքով ընկալվում են որպես սոսկ միջանլյալ, իսկ առաջադաս դիրքով՝ նաև որպես զիսավոր: Այդ բայերից են՝ թվում է, կարծում եմ, վաստակած եմ, համոզված եմ, ասում են, տես(եք), պատահում է, հասկանալի է, տեսնում եք, պարզվում է և այլն»: Այս թվայցալ երկվությունը հիմնավորելու նպատակով հեղինակը, իմաստային ու քերականական կապից բացի, ներմուծում է «ձևական կապ» հասկացությունը՝ առանց սահմանելու դրա տարբերությունը քերականական կապից: Այսպես՝ հեղինակը գրում է, որ միջանլյալ նախադասությունները «ոչ թե քերականական, այլ իմաստային կապի մեջ են գտնվում նշված միավորների [ամբողջ նախադասության կամ նրա մի անդամի] հետ, քանի որ չեն ընկալվում ոչ որպես զիսավոր, ոչ որպես երկրորդական, ոչ ոչ էլ որպես անկախ համարաս նախադասություն: Արտաքնապես, սակայն, մանավանդ երբ նրանք կապվում են շաղկապներով, թվում է, թե քերականական կապ այնուամենայնիվ կա: Այս կապը, սակայն, սոսկ ձևական է»<sup>7</sup>: Ինչպես տեսնում ենք, հակասությունները շատ են, և դրանք հարթահարել չի հաջողվել: Դրա պատճառն այն է, որ ինչը չի տեղափորվել նախօրոք մշակված լեզվաբանական կադապարի (տեսաբյան) մեջ, մի կերպ հարմարեցվել է դրան փոխանակ կադապարը հարմարեցվել լեզվական իրողություններին և դարնար լիարժեք ու անհակասական:

Ս. Սարգսյանը կետադրությանը նվիրված ձեռնարկում նույնպես տարբերակում է ներդրյալ և միջանլյալ նախադասությունները: Երկրորդները, ի տարբերություն առաջինների, «թեև ձևականորեն, սակայն քերականորեն կապվում են այն նախադասությանը, որի կազմում են», դրա նկատմամբ կարող են ունենալ «թե համարականական, թե ստորադասական հարաբերություն»

<sup>5</sup> Ֆ. Խլդաբյան, Հայոց լեզու-7 (դպրոցական դասագիրը), Ե., 2000, էջ 143-144:

<sup>6</sup> Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 2, Ե., 1964, էջ 444-447:

<sup>7</sup> Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու (բարդ նախադասություն), Ե., 1984, էջ 366-367:

(???) և տրոհվում են ստորակետերով կամ բութով<sup>8</sup>: Հետո պարզվում է, որ, ի տարբերություն Գ. Գարեգինյանի, «Ճևական կապ» արտահայտությունը վերաբերում է ոչ թե քերականությանը (արտահայտության դիտվածքին), այլ իմաստին (բովանդակության դիտվածքին). «Քերականական այդ կապը իմաստային առումով հիմնականում ձևական է, սակայն արտահայտության պլանում շատ հստակ է» (??): Հակասություններն ակնհայտ են: Իրքու միջանկյալ նախադասություններ բերված օրինակների մի մասը՝ առաջադաս, մի այլ մասը շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասություններ են: Օրինակ՝ «Ակատի ունեցեք, որ դա արվում է ձեր օգտին»: «Կարծում եմ ապացույցները համոզիչ են»: «Ապացույցները, կարծում եմ, համոզիչ են»<sup>9</sup>:

Գ. Զահուկյանը «Ժամանակակից հայերնի տեսության հիմունքներ» գրքում՝ վերաբերական բառերի ու բառախմբերի շարքում, թվարկել է նաև այնպիսի կառույցներ, որոնք հաճախ հանդես են զայիս որպես շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասության գիշավոր բաղադրիչ ճիշտ է (որ), զարմանալի է (որ), հաճելի է (որ), ցալալի է (որ), ցանկալի է (որ), կարող է պատահել (որ), կասկածելի է (որ), հասկանալի է (որ), կիավատա՞ն (որ), ներեցել ք (որ), չմտածես (թե), չկարծել ք (թե), նշվում է (որ), ասվում է (որ), ասում են (թե), հայտնի է (որ) և այլն: Հեղինակը դրանք համարում է «անդեմ նախադասության արժեք ունեցող միաբան ձևեր, որոնք որ կամ թե շաղկապներով ուղեկցվելու դեպքում ձևականորեն հանդես են զայիս որպես գիշավոր նախադասություններ, առանց դրանց՝ որպես միջանկյալ նախադասություններ»<sup>10</sup>: Ասվածից տրամաբանորեն կարելի է բիւեցնել, որ հիշյալ կառույցները շաղկապով ուղեկցվելիս միջադաս դիրքում նույնականացնելու համար են լինել գիշավոր նախադասություն (թեկուզ ձևականորեն), սակայն հեղինակը այդ դեպքը փաստորեն չի ներկայացրել ու չի քննարկել:

Ս. Աբեղյանը «Մշխարհաբարի շարահյուսություն» աշխատության «Միշխարհյուսություն» վերնագրի ներքո գրում է. «Միջանկյալ ասվում են այն խոսքերը, որոնք մտնում են ուրիշ խոսքի մեջ՝ առանց քերականորեն կապակցվելու նրանց հետ»: Սակայն փակագծերի մեջ առնված ներդրյալ նախադասություններից և վերաբերականի վերածված արտահայտություններից (ո՛վ զիտէ, իո զիտէ ք) բացի՝ իրքու միջանկյալ խոսք է ներկայացնում նաև «գիշավոր խոսքը [գիշավոր նախադասությունը], երբ մտնում է երկրորդականի մեջ, օրինակ՝ Նա վաղը, մըուս օրը, կարելի է, կզա»: Բերում է նաև հետևյալ օրինակները. Տիգրանը, ասում են, դեռ չի վերադարձել իր ճանապարհորդությունից: Այն ժամանակ, չե՞ս ի հիշում, նա արդեն մեռել էր<sup>11</sup>: Ինչպես տեսնում ենք, շրջադաս երկրորդականով բարդ ստորադասական նախադասության գաղափարին ամենից ավելի մոտեցել է Ս. Աբեղյանը՝ թեև ինքն իրեն հակասելով (գիշավոր ու երկրորդական նախադասությունները, բնականաբար, չեն կարող քերակա-

<sup>8</sup> Ա. Սարգսյան, Ժամանակակից հայերենի կետադրությունը, Ե., 2012, էջ 79-80:

<sup>9</sup> Կոյն տերություն:

<sup>10</sup> Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974, էջ 379-387:

<sup>11</sup> Ս. Աբեղյան, Երկեր, հ. Զ, Ե., 1974, էջ 500-501:

նորեն միմյանց կապակցված չինել, այսինքն՝ նշված նախադասություններում իրականում չկա «միջանկյալ խոսք»: Ս. Աբեղյանը փաստորեն արձանագրել է, որ զիավառ նախադասությունը կարող է միջադասվել երկրորդականին, սակայն փոխանակ այդ երևույթին համապատասխան բնորոշում և առանձին անուն տալով՝ խցկել է «միջանկյալ խոսք» հասկացության մեջ:

Փաստորեն շարահյուսական շրջադասության երևույթը մինչ այժմ կա՝ մ շրջանցվել՝ չի դիտարկվել, կա՝ մ մեկնաբանվել է որպես այլ երևույթ<sup>12</sup>:

Այժմ փորձենք ցուց տալ վերոհիշյալ կառույցների սկզբունքային տարբերությունը միջանկյալ (ներդրյալ) կառույցներից:

Միջանկյալ կառույցը, համաձայն ընդունված սահմանման, նախադասության անդամների հետ քերականորեն չկապված բառ, կապակցություն կամ նախադասություն է, որ արտահայտում է լրացուցիչ տեղեկությ կամ ասույթի նկատմամբ վերաբերմունք (Քո ասածը, **ինձ խոսք**, օրենք է ինձ համար: Պապը լուր ծխում է, տասոր ցած է դրել շրուդերն ու, չգիտես ինչու, ծնկներին է խիսու: Ակզրում հոսահատված էինք, բայց շրուտով մենք, արի ու տես որ, զործը զլուխ բերեցինք):

Ի տարբերություն սրանց՝ վերոհիշյալ նախադասություններից յուրաքանչյուրում ընդգծված մասը միջանկյալ կառույց չի կարող համարվել հետևյալ պատճառներով:

Ա. Ընդգծված մասը քերականորեն կապվում է նախադասության մնացած մասի հետ, այդ պատճառով մեծ մասամբ կարելի է ավելացնել այդ կապը բարային միջոցով արտահայտող շաղկապ: Ավելին, արդարիսի նախադասությունները հաճախ հենց շաղկապով ել հանդիպում են.

*Մենք բոլորս, տեսն մ եք, որ ձեզ հետ այլս չենք ուզում աշխատել: Իս ընկերները, չգիտեմ, թե ովքեր են: Այդ իննդիրը, ինձ համար միևնույնն է, թե ինչ լուծում կտանա: Բոլ այդ մարդը, վստահ ես, որ մեզ հետ անկեղծ է խոտում: Այսօրվա հանրահավաքում, ինձ թվում է, որ շատ ժողովուրդ չի լինի: Այս կեղուարիծը, չէ՞ ս համոզվում, որ անհնար է օճառով վերացնել: Փողկապդ էլ, վիզդ միշտ լվա, որ հազնելիս չուլուովի: Անձրնը տանում է մտքերս, չգիտեմ, թե ուր:*

Բ. Հանդիպում են նաև այնպիսի օրինակներ, որոնցում զանազան պատճառներով շաղկապ հնարավոր չէ ավելացնել առանց շարադասական որոշ փոփոխության:

*Հեսչի ո լր, ինձ ասա,՝ թռչում ես այդպես արագ: (Գ. Դ.) Ի՞նչ կա, չգիտեմ, իս առջև պահիած... (Հ. Թ.) Ո՞վ է, տեսեք թ, տանջվում մքնում... (Հ. Թ.)*

Անշաղկապ օրինակներում քերականական կապը շատ ավելի ակնհայտ է դասոնում, եթե ընդգծված մասը դարձնում ենք առաջադաս, ինչպես

<sup>12</sup> Հայտնի է, որ մասնագետները գիտական, առավել ևս ուսումնամեթոդական հետազոտություններ կատարելիս ստվրաբար խոսափում են բնագրերում հանդիպող այն օրինակներից, որոնք հակասում են իրենց որդեգրած տեսությանը հայեցակարգին: Այդ պատճառով տեսադաշտից դրւում են մեռում հատկապես այն երևույթները, որոնք համեմատաբար փոքր տարածում ունեն և ուսումնական տեսակետից հրատապ խնդիրներ չեն առաջացնում:

նաև ավելացնում շաղկապ. **Թվում էր**, (թէ) ամեն ինչ լավ է: **Տեսե՛ք**, (թէ) խոսր ուր է գնում քաջ որսկանի զույլի պէս: **Արդեն հինգ տարի է**, (ինչ) իմ ծննդ դավայրում չեմ եղել: **Ինն ամսից ավելի է**, (որ) արցախյան ճակատի մէր զինվորները խրամատներից դուրս չեն զալիս: **Կարծում եմ**, (որ) ընկերներս ինձ մենակ չեն թողնի: **Մնածում էի**, (որ) այդ տիսմարին դա էլ քիչ է: **Մի-անգամայն հնարավոր է**, (որ) որոշ հավանական մասնակիցներ շուկա մտնելուց հրաժարվեն պատժից վախենալու պատճառով: **Դու գիտե՞ս**, (որ) երգերիս մեջ ինձ ոչ ոք չի ճանաչում: **Զգիտեմ**, (թէ) դու ուր ես գնում... **Ինձ ասա**, (թէ) դեպի ուր ես թոշում այդպէս արագ: **Զգիտեմ**, (թէ) ինչ կա իմ առջև պահված... **Տեսե՛ք**, (թէ) ով է տանջվում մքնում...

Գ. Ընդգծված մասը մնացածի համեմատ արտահայտում է ոչ թէ լրացուցիչ տեղեկույթ կամ վերաբերմունք, այլ քերականորեն (հաճախ էլ՝ հադրդակցական առումով) նախադասության զլիավոր միտքը<sup>13</sup>:

Դ. Միջանկյալ համարվող մասը որոշ դեպքերում հնարավոր չէ նախադասությունից հանել, քանի որ մնացած մասը քերականորեն անավարտ և կամ իմաստով թերի է մնում: Օրինակ. *Որոշ հրավիրյալներ, միանգամայն հնարավոր է*, հրաժարվեն ճաշկերույթին մասնակցելուց: *Իմ ծննդավայրում, արդեն հինգ տարի է*, չեմ եղել: Դա նշանակում է, որ ընդգծվածը նախադասության անկապտելի մասն է, մասնավորապէս զլիավոր բաղադրիչը:

Ե. Շրջադաս երկրորդականը և զլիավոր նախադասությունը ենթարկվում են ժամանակների համաձայնության կանոններին:

*Մենք փաթաթվել էինք վերարկուների մեջ, բայց քամին, թվում էր, ուզում է մեզ թոցնել*: Այս բարդ նախադասության համադաս բաղադրիչների ստորոգյալները անկատար անցյալով են (փաթաթվել էինք, թվում էր): Դրանցից երկրորդին ստորադաս նախադասության ստորոգյալը, ըստ ժամանակների համաձայնության կանոնի, ներկա ժամանակով է (ուզում է):

Մինչդու համանուն կամ արտաքսատ նմանատիփ վերաբերականները քարացած ժամանակաձևեր են և չեն ենթարկվում ժամանակների համաձայնության կանոններին: *Մենք փաթաթվել էինք վերարկուների մեջ, բայց քամին, թվում է, ուզում էր մեզ թոցնել*: Այստեղ երկրորդ համադաս նախադասության ստորոգյալն է ուզում էր, իսկ թվում է արտահայտությունը վերաբերական է, որ կարող է փոխարինվել ասես, կարծես հոմանիշներով: Նախորդ օրինակում նման փոխարինում հնարավոր չէ:

Այսպիսով հիմնավորվում է մեր առաջադրած այն տեսակետը, որ վերոհիշյալ կառույցները երկրորդական նախադասությանը միշտապաված զլիավոր նախադասություններ են, այսինքն՝ գործ ունենք շրջադաս երկրորդականվ բարդ ստորադասական նախադասությունների հետ:

<sup>13</sup> Ընդհանրապէս հաղորդակցական առումով զլիավոր տեղեկույթը կարող է արտահայտվել մեր երկրորդական (ստորադաս) նախադասությամբ (Նա ասաց, որ հիմնարկում կրծատումներ են լինելու), մերթ զլիավորով (Սարգիսը, որ իմ դպրոցական ընկերն է, այսօր նշանակվել է բնապահպանության նախարար):

Այս հիմնավորումից հետո հարց է ծագում,թե ինչո՞ւ նշված կառույցները համարվում են ոչ թե գերադաս, այլ միջանկյալ (ներդրյալ) միավորներ: Որպես պատճառ կարելի է նշել հետևյալ հանգամանքները:

1. Կանխակալ այն կարծիքը, թե ստորադաս միավորը չի կարող իր մեջ առնել գերադաս միավորը: Դա մղում է տեսաբաններին անտեսելու, շրջանցելու այդ կարծիքին հակասող փաստերը կամ դրանց զարտուիլի մեկնաբանություններ տալու:

2. Շրջադաս երկրորդականով բարդ նախադասության գլխավոր բաղադրիչի միջադաս դիրքը և մանավանդ շաղկապի գեղջումը նրան արտաքուստ շատ են նմանեցնում միջանկյալ կառույցի:

3. Նշված կառույցներն առավելապես բնորոշ են անկաշկանդ բանավոր խոսքին և քիչ են բափանցում գրավոր խոսք:

4. Նշված կառույցների մի մասը հակում ունի վերածվելու կամ արդեն վերածվել է համանուն բաղադրյալ վերաբերականի (ով զիսի, չզիտեմ ինչու, ինքո ասս, ի՞նչ անեմ, ի՞ն զիտէ՞ն, ասացեք ինդրեմ, թվում է, որքան է տարօրինակ է, ինչպես երևում է, ինչպես ասում են և այլն):

5. Դեպքերի սակավության հետևանքով տեսաբանները չեն նկարագրել շրջադասության դեպքը, իսկ գոյություն ունեցող տեսության սահմաններում հարկ է լինում նշված կառույցները որևէ կերպ դասել այլ երևույթների շարքին:

6. Հաստատված կարծրաաիպեր (հատկապես ոուական քերականությունից եկող) չեն նպաստում նորովի մոտեցմանն ու տեսության վերանայմանը:

Միայն համակարգային մոտեցումն է թույլ տալիս հայտնաբերելու տեսության մեջ բաց մնացած վանդակը և դա լրացնելու համապատասխան նյութով:

Ի դեպք, գլխավոր նախադասությանը շրջադասվում են հիմնականում ենթակա, ուղիղ խնդիր և հանգման խնդիր երկրորդականները:

Հարկ է նկատել, որ շրջադաս երկրորդականով բարդ նախադասությունները առաջ են բերում նաև կետադրության խնդիրներ: Հատկապես շաղկապի գեղջումը գործող կանոնների շրջանակում արտահայտել չի հաջողվում: Ուստի կա մ պետք է այս դեպքում հրաժարվել շաղկապի գեղջումը բութով արտահայտելու պահանջից, կա մ ենթականն սահմանել, որ շաղկապի գեղջման դեպքում գլխավոր նախադասությունը երկրորդականից կարող է նաև տրոհվել մի կողմից ստորակետով, մյուս կողմից բութով: *Ընկերներս, կարծում եմ ինձ մենակ չեն թողնի:*

Շրջադասությունը շատ ավելի սակավաթիվ դրսւորումներով բնորոշ է նաև դերբայական դարձվածին:

*Միայնակ ես սիրում եմ նստել երերուն լույսերում: (Վ. S.) Այդ երկրի համար Մարզարք Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չուներ ընծատանելու: (Ա. F.)*

Այս օրինակներում ընդգծված են բուն նախադասությունները, որոնք միջադասված են դերբայական դարձվածին: Ահա այդ նույն դերբայական դարձվածները վերջադաս դիրքում:

**Ես սիրում եմ Միայնակ նստել երերուն լույսերում:** Մարգարը Թորոսիկից և ծիրանի կորիզներից բացի ուրիշ ոչինչ չուներ ընծա տանելու այդ երկրի համար:

Շրջադաս դերքայական դարձվածով նախադասությունների օրինակ-ներ և վերուծություններ չկան հայերենապիտական տեսական գրականության մեջ: Մինչդեռ սա առանձին ուսումնասիրության ու հանգամանալից մեկնաբանության կարու երևույթ է:

Zakaryan Hovhannes - Peripositive Subordinate Constructions in the Armenian Language.- In Armenian there are such complex sentences, in which the subordinate clause occupies not only prepositive, interpositive and postpositive position in relation to the main clause, but it can also happen in peripositive position: **Ըսկերներս**, կարծում եմ, (որ) **ինձ մենակ չեն բողնի:** **Իմ ծննդավայրում**, արդեն հինգ տարի է, (ինչ) **չեմ եղել.**

The latter cases, however, either haven't been discussed till nowadays in linguistic literature or have been considered as simple sentences with parenthetical clause. It means that the principal clause, being in an interpositive position in comparison to the subordinate clause, has been considered to be such a syntactic unit that remains outside the limits of the grammatical structure of the sentence.

In Armenian, there are also peripositive participial phrases: **Միայնակ ես սիրում եմ նստել երերուն լույսերում:**

Закарян Оганес - Перипозитивные подчинительные конструкции в армянском языке.- В армянском языке существуют сложноподчиненные предложения, придаточное предложение которых по отношению к главному предложению занимает не только препозитивное, интерпозитивное или постпозитивное, но и перипозитивное положение: **Ըսկերներս**, կարծում եմ, (որ) **ինձ մենակ չեն բողնի:** **Իմ ծննդավայրում**, արդեն հինգ տարի է, (որ) **չեմ եղել.**

Последние, однако, в лингвистической литературе до сих пор либо не обсуждались, либо считались простыми предложениями, содержащими вводное предложение. Т. е. главное предложение, из-за своего интерпозитивного положения по отношению к придаточному, считалось синтаксической единицей, находящейся вне пределов грамматической конструкции предложения.

В армянском языке существуют также перипозитивные причастные обороты: **Միայնակ ես սիրում եմ նստել երերուն լույսերում:**

## **ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԻՆ ԵԳԻԴՏԱՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷԶ**

Եզիպտոսի մէջ կը գործեն երկու հայկական ազգային վարժարաններ՝ որոնցմէ առաջինը՝ Գահիրէի մէջ (Գալուստեան-Նուպարեան), իսկ երկրորդը՝ Աղեքսանդրիա (Պօղոսեան):

Եզիպտահայ ժամանակակից կրթական համակարգին սկիզբ կարելի է նկատել 1828 թուականը, երբ Գահիրէի մէջ հիմնուած է Եղիազարեան դպրատունը: Այդ դպրատան աշակերտները 1854-ին փոխադրուած են Խորէնեան (ի յիշատակ պատմահայր Սովուս Խորէնացիի) նորակառոյց վարժարանը:

Վարժարանը այդ անունով գործած է մինչև 1897 թուականը, երբ օրուան ազգային իշխանութիւնը որոշած է զայն վերակոչել Գալուստեան ի յիշատակ անոր բարերար Կարապէտ Աղա Գալուստի: Ժամանակագրական կարգիվ յաջորդ վարժարանն է Աղեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային վարժարանը, որ սկսած է գործել Արամեան անունով, հաւանաբար 1840-ական թուականներու կեսերուն, եւ 1888-ին տեղափոխուած է իր ներկայ վայրը ու նախ վերակոչուած է Պօղոս Պէյեան եւ ապա Պօղոսեան Վարժարան, ի յիշատակ վարժարանի բարերար Պօղոս Պէյ Ենուսութեանի: Երրորդ վարժարանն է Նուպարեան Ազգային վարժարանը, որ հիմնուած է 1924-ին, Գահիրէի Տելիուսիս արուարձանին մէջ բարերարութեամբ Պօղոս Նուպար Փաշայի: 2012-2013 տարեշրջանէն սկսեալ Գահիրէի երկու ազգային վարժարաններուն միացումով ստեղծուած է Գալուստեան-Նուպարեան վարժարանը, որ կը գործէ Տելիուսիս նախկին Նուպարեան Վարժարանի դպրոցաշենքերուն մէջ:

Վերյիշեալ վարժարաններուն կողըին Եզիպտոսի մէջ գործած են բազմաթիւ այլ հայկական անհատական եւ միարանական (Մխիթարեան Հայրեր, Հայ Կաթողիկէ Քոյրեր) վարժարաններ, որոնք տարիներու ընթացքին փակուած են: Ասոնցմէ ցարդ կը մնայ միայն Հելիոպոլսյ մէջ գործող Անարաս Յոդութեան Հայ Քոյրերու վարժարանը, որուն աշակերտութեան մէջ հայեր գրեթէ գոյութիւն չունին եւ ուր հայկական որեւէ նիւթ չի դասաւանդուիր:

Վերոնշեալ ազգային վարժարանները իրենց երկարամեայ գյուրթեան ընթացքին ունեցած են աշակերտութեան թիւի, վայրի եւ ծրագիրներու փոփոխութիւններ: Վարժարաններուն մէջ հետաւոր անցեալին հայերէն լեզուի, կրօնի եւ ազգային պատմութեան կողըին, այլ նիւթեր եւս դասաւանդուած են հայերէնով (Աշխարհագրութիւն, թուարանութիւն, երկրաշափութիւն, իրագիտութիւն եւ այլն): Ասոնցմէ զատ, տարբեր շրջաններու, դասաւանդուած են արաբերէն, թրքերէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուները:

Այս վարժարանները սկզբնական շրջաններուն գործած են անկախ եւ ինքնուրոյն կրթական ծրագիրներով: հետազային անոնք իրենց աշակերտութիւնը պատրաստած են նախ ֆրանսական եւ ապա անգլիական վկայականներու, անշուշտ միշտ դասաւանդելով հայկական նիւթեր: Անցեալ դարու

60-ական թուականներէն սկսեալ այս վարժարանները սկսած են հետզիետէ համարրուիլ Եզիպտոսի կրթական նախարարութեան համակարգին հետ, որպէս անզիլական թէքումով վարժարաններ, որոնք նոյնանման կրթական կարգավիճակ ունեցող այլ վարժարաններու ընդգրկած պետական ծրագրին կողքին, կը դասաւանդէն շաբաթական 5-7 պահ հայկական նիւթէր՝ հայերէն լեզու, կրօն և ազգային պատմութիւն:

Մինչեւ 1981 թուականը եզիպտահայ ազգային վարժարանները կը համարուէին նաեւ համայնքային վարժարաններ և ըստ իրենց ներքին կանոնագիրներուն, արձանագրութեան դիմող իւրաքանչիւր աշակերտ պարտէր ըլլալ ծագումով հայ և հայ համայնքի զաւակ, այսինքն՝ մկրտուած հայ եկեղեցոյ մէջ: Իսկ վարժարաններս հայերէն լեզուն կը դասաւանդուէր որպէս պաշտամունքային լեզու, այսինքն՝ հայ եկեղեցոյ մէջ կատարուող խորհուրդներու և ծիսակատարութիւններու ընթացքին գործածուող լեզու: 1981-ին հրապարակուած կրթական նոր օրէնքով, բացարձակապէս կ'արգիլուէր վարժարան դիմող աշակերտներուն միջեւ որեւէ բնոյթի զատողութիւնը ընել կամ խտրութիւն դնել: Այս դրութեան տառացի որդէքորումը հիմնովին պիտի աղաւաղէր մէր վարժարաններուն հայկական դիմագիծը: Եզիպտահայ համայնքի խնդրանքով կրթական նախարարութիւնը համաձայն գտնուեցաւ, որ եզիպտահայ վարժարանները անզիլական թէքումով վարժարան ըլլալու կողքին, նկատուին նաեւ հայերէն լեզուի վարժարան, ուր դիմող աշակերտներու ծնողներէն գոնէ մէկը պարտի հայերէն զիտնալ, որպէսզի կարենայ հետեւիլ իր զաւակին հայերէնի դասերուն:

Հայկական վարժարաններու աշակերտութեան թիւը, բարդատած զադութին թիւին, շատ նօսր է: Այս երեւոյթին պատճառներէն առաջինը այն է, որ եզիպտահայ զադութին մէջ մէճ է երեցներու թիւը, որպէս հետեւանք երիտասարդներու արտազարթին: Նաեւ վերջին երկու տասնամեակներուն բազմաթիւ ծնողներ իրենց զաւակները սկսած են օտար (ամերիկեան, անզիլական, գանատական, ֆրանսական) վարժարան դրկել: Նկատողի է որ օտար վկայականներու պատրաստող վարժարաններու կրթական ծրագրիները յարաբերաբ աւելի թէթեւ են եւ, ըստ ծնողներուն, մշակուած են անզիր սորվելէ աւելի աշակերտին ըմբռնելու, մտածելու և վերլուծելու ունակութիւնները զարգացնելու նպատակով: Հայ աշակերտութեան օտար վարժարան յաճախելու պատճառներուն կարգին, կ'արժէ յիշել նաեւ եզիպտական պետական համալսարաններ մտնելու համար, մասնաւորաբար փնտուած մասնազիտութիւններու պարագային (բժշկութիւն, դեղագործութիւն, ճարտարագիտութիւն, տնտեսագիտութիւն) պահանջուած բարձր նիշերը:

Ինչ կը վերաբերի հայկական վարժարան յաճախող աշակերտութեան, նկատողի է ցաւալի այն իրողութիւնը, թէ մանկամատուրէն մինչեւ երկրորդական, 15 տարի շարունակ հայկական վարժարան յաճախողները վերջաւորութեան ատակ չեն անսխալ հայերէն խօսելու կամ մէկ քանի հայերէն նախադասութիւն անսխալ գրելու: Նոր սերունդին ձնշող մեծամասնութեան

խօսակցական լեզուն եթէ արաբերէն չէ, առնուազն արաբախառն հայերէն մըն է, որ տիրող լեզուամտածողութիւնը արաբական է:

Այս ցաւալի իրողուրեան պատճառները բազմաթիւ են:

Առաջին հերթին կուգայ աշակերտին, անոր ընտանիքին եւ երեխն նոյնիսկ տնօրէններուն հայերէն նիւթերու հանդէայ շահագրգուածութեան պակասը: Համալսարան մուտքի համար բարձր նիշեր ձևոք բերելու խօս արշակին մեջ հայերէնը կը մղուի «աղքատ ազգական»ի դիրքին: Ասոր վրայ եթէ աւելցնենք հայերէն նիւթերու յատկացուած դասապահերու ժամանակացուցային պարտադիր սահմանափակումը, ի յայտ կու զայ թէ հայ աշակերտը հայկական վարժարանին մեջ բաւարար ժամանակ չ'ունենար իր մայրենին տարրական չափով ձանչնալու:

Նոյնպէս, գոյուրիին ունի ուսուցիչի տագնաապ: Արդարեւ, երկար ժամանակի ի վեր հանգստեան տարիքը թեւակրիստ հայերէն լեզուի բազմաթիւ ուսուցիչներէ տակաւին կը խնդրուի, որ իրենց առաքելութիւնը շարունակեն ի չգոյէ զիրենք փոխարինող նոր եւ երիտասարդ տարրերու:

Գալով դասագիրքերուն, հայերէն լեզուի պարագային կը գործածուին Լիբանանի եւ Սուրբոյ մեջ Համազգայինի եւ ՀՔԸՄ-ի հրատարակած դասագիրքերը: Սուր պահանջ գոյուրիին ունի կրօնի գիրքերու: Վերջին տարիներուն Ս. Էջմիածնայ կողմէ հրատարակուած Հայոց Եկեղեցւոյ Պատմութեան շարքը գնահատելի իրագործում մըն է: Սակայն, հոս կը ծագի լեզուի հարցը, քանի որ այդ հրատարակութիւնը միայն արեւելահայերէնով է եւ արեւմտահայերէն տարրերակ չունի: Պարագան գրեթէ նոյնն է հայոց պատմութեան գիրքերուն համար, որոնց մեջ հայոց պատմութեան հանգրուանները հարկ է առարկայական կերպով ներկայացնել մինչեւ 21-րդ դարու վկիզը:

Ծանօթ իրողութիւնն է որ արեւմտահայերէնը տագնաապի մեջ է: Կը բաւէ միայն վիճակագրութիւնն մը կազմել գիտնալու, թէ արեւմտահայերէնի ժառանգորդ 40 տարեկաննեն վար սփիտքահայերու քանի՞ տոկոսը կրնայ Ճիշտ հայերէն գրել կամ քանի՞ տոկոսին համար հայերէնը օրական ընթերցանութեան նիւթ է: Նման վիճակագրութեան մը արդինքը լաւագրյան ցուցանիշը պիտի հանդիսանայ այն ահազանգայի վիճակին, որուն մեջ կը գտնուի արեւմտահայերէնը, որ իրերու ներկայ վիճակով, դժբաղդաբար հաստատ քայլերով կ'ընթանայ դէափ անէացում:

Այս կացութիւնը կ'ենթադրէ համապատասխան համազգային պատասխանատու կեցուածք:

Թերեւս ամենէն նպատակայարմաքը պիտի ըլլար, Ճիզերու համընդհանուր լարումով, ստեղծել այս հարցին հետ առնչութիւն ունեցող Հայրենիքի եւ Սփիտքի բոլոր կառոյցներէն կազմուած միացեալ մարմին մը:

Հայրենիքի պարագային նկատի ունինք Ս. Էջմիածինը, Գիտութեան եւ Կրթութեան Նախարարութիւնը, Երեւանի Պետական Համալսարանը, Գիտութիւններու Ակադեմիայի Լեզուի հնստիտուտը, Սփիտքի Նախարարութիւնը և նման այլ կառոյցներ: Բոկ Սփիտքի մեջ նկատի ունինք Մեծի Տանն Կիլիկիյ Կաթողիկոսութիւնը, Բարեգործականը, Համազգայինը, Հայկագեան Համալ-

սարանը, Կիլպէնկեան Հիմնարկը եւ յարանուանական այլ կառոյցներ, որոնք հայկական ուսումնական հաստատութիւններ կը պահեն:

Այս մարմնին նպատակը պիտի ըլլայ.

ա) հիմնել արեւմտահայերէն դասաւանդող մասնագէտ ուսուցիչ պատրաստելու բարձրագոյն հիմնարկ մը (նախընտրաբար Հայաստանի մէջ), որ հետզիեսէ զարգանալով վերածուի արեւմտահայերէնի մասնագէտ քատրերու կելլրոնի մը, որ թէ՝ մարդուժ պատրաստ եւ թէ գրականութիւն մշակէ (դասպիրու եւ պարբերաթերթ)։

բ) մշակել արեւմտահայերէնի, կրօնի եւ հայոց պատմութեան դասագիրքերու (արեւմտահայերէն) ընդհանուր ծրագիր մը, իր ստորաբաժանումներով (ըստ Սփիտքի աշխարհագրական շրջաններուն)։

գ) մշակել արեւմտահայերէն մանկական գրականութեան ընդհանուր ծրագիր մը (գիրքեր եւ մանկական պարբերաթերթ)։

դ) պատրաստել հայկական նիւթերու վերաբերեալ խտասալիկներ։

Հարցը համապարփակ համազգային ծրագրի մը կազմութիւնն է, որուն մշակումն յետոյ, ամէն կազմակերպութիւն կամ նոյնիսկ անհատ կրնայ այդ հիման վրայ, բոլորին գիտակցութեամբ, ընտրել իր կարելիութիւններուն եւ նախասիրութիւններուն համապատասխան յարմար ծրագիրը եւ իրազործել զայն։

Terzian Berdj - Western Armenian Language at Armenian Schools in Egypt.-The students' population at Armenian schools in Egypt, compared with the number of Armenian people living in the community, is very sparse. The reason is not only the migration, but also the lack of prospects for getting higher education in the Armenian language. The instruction of the Armenian language at schools has no satisfying results as there is no interest in it. There is a great shortage of Armenian language teachers and textbooks. In order to keep the Armenian language in the Diaspora, a united authority must be created which will be required to develop a comprehensive national programme and implement it consistently.

Терзян Перч -Западноармянский язык в армянских школах Египта.-Количество учащихся армянских школ Египта очень мало по сравнению с количеством армян общин. Причина не только в эмиграции, но и в отсутствии перспективы получения высшего образования на армянском языке. Обучение армянскому языку в школах не дает достаточного результата, так как нет заинтересованности. Не хватает учителей и учебников. Для сохранения армянского языка в Диаспоре необходимо создание комплексного органа, который должен разработать единую общенациональную программу и последовательно ее реализовывать.

## ՃՎԵԴԵՐԵՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅԱՄԲ

Գոյություն ունի այն թյուր կարծիքը, որ հայերը՝ շնորհիվ մայրենի լեզվի հարուստ հնչութային համակարգի հեջողությամբ են ստվրում օտար լեզուներ: Նշենք, որ օտար լեզուների ուսուցման վրա ազդում են մարդու ընդհանուր զարգացածությունը, այլ լեզուների իմացությունը և առավել ևս՝ նպատակադրումը: Հայտնի է նաև, որ օտար լեզվի ուսուցումը անհամեմատ հեշտ է դեռահաս տարիքում, հատկապես երեխաների շրջանում, մինչդեռ հասուն տարիքում այն ավելի շատ է պայմանավորված մայրենիի ազդեցությամբ, որը կամա թե ակամա ներխուժում է մտածողության մեջ և խոշնդրություն օտար լեզվի ուսուցման գործնքացը:


Օտար լեզվի ուսուցման դժվարությունը սկսվում է հենց առաջին փուլում՝ արտասանական մակարդակում: Օտար անսովոր հնչունները (իմա՝ հնչույթները) սկսվում են փոխարինվել մայրենի լեզվի համանման հնչուններով: Պետք է ընդունել, որ բացարձակ նմանության հասնելը գրեթե անհնար է, և այդ հարցում պետք է տարբերել հանդուրժելի և ոչ հանդուրժելի նմանություն: Վերջինիս թվին են վերաբերում այն դեպքերը, երբ խոչընդությունը է խոսքի (բառի) հասկանալիությունը: Հանդուրժելի տարանմանությունները այն հնյուննական առանձնահատկություններն են, որոնք ընդիանուր են տվյալ լեզուն կրողների համար, և որոնք, փաստորեն չխախտելով հաղորդակցումը, կազմում են օտար ակցենտը, այսինքն՝ տվյալ լեզվի արտասանական նորմերի շեղումները:

Հնյուննական-հնչույթային ուսուցման հիմքում այն առանձնահատկություններն են, որոնք ի հայտ են զայխ լեզվի ուսուցման առաջին փուլում:

Դժվարությունների վերլուծության գործնքացում առաջնորդվել ենք ոչ միայն մեր դասավանդման փորձով, այլև մայրենի և օտար լեզվի հնչութահնչունային զուգադրական համեմատությամբ: Ընդ որում հաշվի են առնվում դժվարությունների որակային տարբերությունները, այլ կերպ ասած, նայած թե տվյալ անհամապատասխանությունը որքանով է ազդում ընկալման վրա:

Այդ դժվարությունները կարելի է բաժանել երեք կարգի՝ նայած թե որ ենթահամակարգում են դրանք հանդիպում՝ 1. ձայնավորական, 2. բաղաձայնական և 3. վերհատությային:

**1. Ձայնավորական ենթահամակարգ:** Համեմատելով հայերենի ձայնավորական համակարգը շվեդերենի հետ նկատում ենք, որ հայերենը պատկանում է դասական 5+1 տիպին, որում ներկայացված են արտասանական հիմնական ձայնավորները՝ ա-օ-ու-ի-է-լ: Այդ տիպը սովորաբար պատկերվում է եռանկյան ձևով:




զՃ. 1. Հայերենի ձայնավոր հնչույթները:

Այստեղ անսովոր է միայն ը-ի ներկայությունը, քանի որ լեզուներում այն սովորաբար չի համարվում ինքնուրույն հնչույթ, բայց հայերենում այն դարձել է այլպիսին:

Շվեյցարիանում հիմնական ձայնավորները՝ թվով 9-ը, ունեն իրենց կարծություն և գործություն տարբերակները, որոնց հավելվում է նաև որպակյաին երանզը: Այսպիսով, շվեյցարիանի ձայնավորներն են ի: Ե: Ե: Ո: Օ: Օ: Ա: Ս: Ծ Օ: Յ: Օ:

Այդ ձայնավիրների դիրքը արտասանական տարածքում կարելի է ներկայացնել հետևյալ գծագրով (զժ. 2):



գծ. 2. Շվեդերենի ձայնավոր հնչությները՝ բատ Ու. Էնգստրանդի:

Ետին շարքի ձայնավորները պակելի պարզ են՝ երկար ու կարճ ս:ս, երկար ու կարճ օ:օ, երկար ու կարճ ա:ա: Դժվարություն է ներկայացնում առաջին շարքը, որտեղ բացի երկարություն / կարճությունից տարբերակվում է շրթնայնացում/ոչ շրթնայնացումը և բաց ու փակ արտաքերությունը (տե՛ս գծ. 2):

Առավել դժվարություն են ներկայացնում յ: Այսավորները, որոնք փաստորեն ի: ի շրթնայնացված ձևերն են և հաճախ փոխարինվում են պարզ ի: ով: Ոչ պակաս դժվար են ու և Թ այսավորները, որոնք բաց է-ի շրթնայնացված համարժեքներն են, ե-ի համարժեքը՝ թ-ն և թիս ավելի ետին թ-ն:

Բերենք օրինակներ՝ ապացուցելու, որ դրանք ինքնուրույն հնչույթներ են շվեյցարականություն: Այսպէս՝

i: i	sil [si:l] «մաղ»	sill [sil:] «հարինգ»
y:y	nys [ny:s] «լողություն»	nyss [nys:] «վերջերս»
e:e	hel [he:l] «ամրող»	hetta [het:a] «շոգ»
ő:œ	nõt [nõ:t] «ընկույզ»	nõtt [nõ:t:] «մաշված»
ɛ: ε	häl [he:l] «կրունկ»	häll [hel:] «սարի հարթավայր»
a: a	mat [ma:t] «ուտելիք»	matt [mat:] «հոգնած»
ɔ: ɔ	kål [kɔ:l] «կաղամբ»	koll [kɔ:l:] «ստուգում»
u:u	bus [bu:s] «երես տալր»	buss [bus] «ավտոբուս»

Այսպիսով՝ տևողությունը հանդես է զայխս որպես իմաստատարբերակիչ հատկանիշ, որի պահպանումը շատ կարևոր է սովորողների համար հենց առաջին փուլում: Իսկ երանգային տարբերությունները կարելի է համարել ոչ էական, երկրորդային:

**2. Բաղադայնական ենթահամակարգ:** Համեմատելով շվեդերենի բաղաձայնական համակարգը հայերենի հետ, կարելի է նկատել, որ շվեդերենում բացակայում են ձայնեղ շփականները և կիսաշփականները (կամ հպաշփականները՝ δ, γ, ձ, ջ, ջ): Սակայն շվեդերենին հատուկ են քմայնացած էջ և կոչտ սյ հնչույթները, ընդ որում երկրորդը [h]-ն գտնվում է շ-ի և խ-ի միջև ընկած արտասանական գրտում: Նման հնչյուն չկա այլ լեզուներում: Հայերը և այլ օտարներ ավելի հաճախ փոխարինում են այն խ-ով կամ շ-ով:

Բաղաձայններին նույնպես հատուկ է երկարության հատկանիշը: Գրությամբ երկարությունը նշվում է մեծ մասամբ կրկնակի տառերով: Օրինակ՝ hoppa «թռչել», hiss «վերելակ», hitta «հանդիպել», vägg «պատ», fulla «լցնել», tunna «տակառ»:

Սակայն բաղաձայնների տևողությունը կրում է ավելի ցայտուն վերհատույթային արտահայտում: Այն դրսնորվում է վանկում, իսկ վանկի կառուցվածքը պայմանավորված է այն կազմող ձայնավոր+բաղաձայն միասնությունով: Գործում է վանկի տևողության որոշակի օրինաչափություն՝ երկար ձայնավոր + կարճ բաղաձայն, կարճ ձայնավոր + երկար բաղաձայն (կամ բաղաձայնների խումբ):

Գործում է այսպես կոչված փոխհատուցման օրինաչափություն: Օրինակները կարելի է տեսնել վերում բերված հակադրություններում:

Գոյություն ունի մի առանձնահատկություն ևս, որ աչքի է ընկնում, եթե համեմատվում են հայերենի և շվեդերենի համանման հնչույթները, մասնավորպես հպական ptk-ն: Շվեդերենում այդ հնչույթները շնչեղացված են շեշտված ձայնավորից առաջ, այսինքն՝ արտասանվում են ինչպես հայերենի փ, թ, թ, թ հնչյունները, մինչդեռ մյուս դիրքերում, հատկապես շփական s-ից հետո արտասանվում են առանց շնչեղացման: Օրինակ՝ Stockholm [stokh'ɔ:lm], spis «էլեկտրական վառարան», stor «մեծ», stad «քաղաք», skur «կարճատև անձրև», հնչում են որպես հայերենի պ, տ, կ-ը: Կամ՝ apotek բառում p, t, k = պ, տ, կ-ին: Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ, շվեդերենում շնչեղացումը տարբերակիչ հատկանիշ չէ, այլ դիրքային տարբերակ, մինչդեռ հայե-

թենում այն տարբերակից հատկանիշ է, այսինքն՝ նրանով կարող են տարբերակները լրացնել: Օր.՝ *տուր - թուր, կերի - քերի, պուտ - փուտ*:

Ծնէդ հպականները կարող են հանդես գալ նաև *ս-ից հետո*. օր. սթափվել, սփյուռք, սրանչելի, այսինքն՝ հնյունապատճենավորում:

Ծնէդացման շհամապատասխանումը շվեդերենում և հայերենում դյժվարություն է առաջացնում այն առումով, թե որ դեպքերում պետք է արտասանվի շնչեղը կամ ոչ շնչեղը: Այստեղ ուղեցույց կարող է լինել այն կանոնը, որ շեշտված ձայնավորից առաջ օգտագործվում է շնչեղը, իսկ մյուս դեպքերում՝ ոչ շնչեղը: Համապատասխանորեն հարց է ծագում, թե ինչպես տառադարձել շվեդերեն տեղանունները և անունները՝ *փ, թ, ք-ով* թե *այ, ու, կ-ով*: Թվում է, որ *Մթորհոլմ* տառադարձույթը չի համապատասխանում իրական արտասանությանը, կամ Stiv – Սթիվ, spis – սփիս և այլն:

Բաղաձայնական մակարդակում առաջանում է մի դժվարություն ևս, որը կապված է որոշ կապակցությունների արտասանության հետ: Այսպես *-ոց* երկրադայնը արտասանվում է ռնգային *ռ-ով*, որը տառադարձվում է *դ-ով*: Շատերը արտասանում են սովորական *ռ-ով* և *ց-ով*, որը սիսալ է, կամ մի երկար *ռ-ով*, օր. [rennar] «փոռ», որը նույնպես անհանդուրժելի է:


Մյուս կապակցությունները [-rd] [-rl] [rs] [rt] [rn] առանձնանում են *r-ի* յուրատեսակ արտասանությամբ, որն ազդում է նաև մյուս բաղաձայնի վրա: Դա ռետրոֆլեքս *r-ն* է, եթե լեզվի ծայրը հեռանում է ատամնաշարից վերև և ետ:

**3. Վերհատույթային մակարդակ:** Խոսքի վերհատույթային միավորների տարրալուծման և շվեդերենի խոսքի ոիթմական կառուցվածքի հիմքում ընկած են վանկի տևողությունը և բառային շեշտը:

Հայերենի շեշտը ընդունված է համարել, և ինչպես ցույց են տվել մասնավոր ուսումնասիրությունները կրում է ուժգնային (դինամիկ) բնույթ և ընկնում է բարի վերջի վրա (քիչ բացառությամբ):

Ծնեդերենում գոյություն ունի 2 տիպի շեշտ՝ *акут* կամ *accent1*, որն առավել դինամիկ բնույթ ունի և *grav* կամ *accent2*, որը ավելի մեղեղային բնույթի է: Երկու դեպքում էլ շեշտը անվերապահորեն կապված է վանկի տևողության հետ, այսինքն՝ շեշտված վանկը միշտ տևողությամբ ավելի երկար է մյուս վանկերի համեմատությամբ: Ակուտ *accent-ը* արտասանվում է ուժեղ և ունի կտրուկ կիծող ելեմ: Հայերենի համեմատությամբ այն ավելի ուժեղ է և ցայտուն: Գրավ (accent2) շեշտը հանդիպում է 2 և ավելի վանկ ունեցող բառերում և բնութագրվում է մեղեդու նախ իշնող (առաջին վանկում) և ապա կտրուկ բարձրացումով երկրորդ վանկում: Տոնի բարձրացումը, ինչպես նշում են հնյունաբառները, մի տերցիա է, այսինքն՝ 3 երաժշտական միավորով բարձրանում է: Գծագրորեն 2 շեշտերը կարելի ներկայացնել հետևյալ կերպ՝





ՈՒթմական կառուցվածքի հիմնական օրինաչափությունը՝ նախադասություն կազմող միավորների-շեշտված ու անշեշտված վանկերի հաջորդականությունն է: Դժվար է պատկերացնել մի լեզու, որտեղ նախադասության բոլոր անդամները հավասարապես շեշտվում են: Հարցն այն է, թե որ բառերը պիտի շեշտվեն: Անհա այս տեսանկյունից համեմատելով շվեդերենի և հայերենի շեշտադրության օրինաչափությունը՝ նկատելի են նմանություններ և տարրերություններ: Քերականական տեսակետից շվեդերենի նախադասության մեջ չեն շեշտվում օժանդակ բայերը, նախյիրները, հոդերը, անձնական և ստացական դերանունները, կապերը: Շվեդերենին հասուլ է նաև մի առանձնահատկություն, որը խորը է հայերենին: Բազմաթիվ բայեր ունեն համադրական կառուցվածք իմաստային բայ + մասնիկ (ետյիր), որը ճշգրտում, երանգավորում և երբեմն հակադրում է բայի հիմնական իմաստին: Դրանց շեշտադրությունը կրում է շատ դեպքերում իմաստատրքերակիշ դեր: Օր. *hälsta* թա, որում շեշտվում է զյանավոր բայը, նշանակում է «քարենել», իսկ եթք շեշտվում է թա ետյիրը, ապա նշանակում է «այցելել», *packa* ‘սր’ ‘իրերը բացել դատարկել», *packa* ‘որ’ «ձամպրուկը հավաքել», *slå* ‘սր’ «քացել բառարանը, գիրը», *slå* ‘կացել, ծածկել», *slå sig* ‘ոճ «նստել»:

Այսպիսով, նախադասության ոչ բոլոր անդամներն են շեշտվում թե՝ շվեդերենում, թե՝ հայերենում: Այդ հանգամանքը ստեղծում է նախադրյալներ ութմական կաղապարը պահպանելու համար: Շվեդերենում այդ կաղապարը պահպանվում է շնորհիվ շեշտված վանկերի համաշափ բաշխվածությամբ: Զայերենում որիմի կաղապարը ենթարկվում է բառային շեշտի վերջնավանկայնությամբ և բարի երկարությամբ: Բոլոր դեպքերում նախադասության շեշտա-մեղեղային կառուցվածքը ավելի միապատճ է շվեդերենի համեմատությամբ: Վերջինում շեշտը, կամ զյանավորապես ֆրազային շեշտը ավելի ընդգծված է և կտրուկ: Նախադասության հնչերանգը շնորհիվ 2 տիպի շեշտերի ավելի երաժշտական է և արտահայտիչ:

Ի վերջո պետք է նշել, որ վերը հիշված երեք մակարդակներից ամենակարևորը վերահասուլյթայինն է:

Amalia Khatchatrian – Phonetic Difficulties of Swedish for Armenians. – The rich vocalic system of the Swedish language which includes 17 vowels is contrasted to 6 Armenian vowels which represent the classical vowel triangle. The contrast of long and short phonemes, as well as rounded/unrounded front vowels cause difficulties in learning Swedish. The prosodic peculiarities of Swedish – acute and grave accents,

phonetic structure of syllables, are intonation most specific features and most important for oral communication, at the same time most difficult to master.

Хачатрян Амалия – Фонетические трудности шведского языка для армян. – Богатая система гласных фонем шведского языка, включающая 17 гласных противопоставляется 6 гласным армянского, которые обычно представлены в виде классического треугольника. Противопоставление долгих и кратких гласных и согласных, а также огубленных и неогубленных гласных переднего ряда вызывают трудности при изучении шведского языка. Просодические особенности шведского наличие двух видов ударения (акут и гравис), фонетическая структура слова, интонация особенно важны для устной коммуникации и труднее всего поддаются усвоению.

**ՓՈՂՈՑԵՎ ԱՐԱՀԵՏՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌՈՅԵՒ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՐԻՄԱՍԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՈՒՄՈՒՄ**

Գրական հայերենում որպես «ոտքով բացած նեղ ճանապարհ» գործածվում են **արահետ, շավիղ, կածան** բառերը:

Բնիկ հայկական ծագում ունեցող **արահետ** և ասորական փոխառութություն համարվող **շավիղ** բառաձևերը հայերենի բարբառներում մեզ չեն հանդիպել: Միայն Հ. Աճայանն է Մուշի բարբարի համար արձանագրում **շավիղ** բառի **շավիղ** զավարական բառաձևը (ՀԱԲ, հ. 2, 1973, էջ 487)<sup>2</sup>:

«Նեղ անցք, նեղ ճանապարհ, արահետ» իմաստով հայերենի բարբառներում գործածական է **կածան** հնդելվոպական ծագումով բնիկ հայերեն բառը, որ հնիս. \*gʷāg- «զնալ, գալ» արմատից է սերում<sup>3</sup>:

**Կածան** բառանունը՝ որպես նեղ ճանապարհ, **կըծան** հնյունական տարբերակով գործածական է Տավուշի մարզի որոշ խոսվածքներում, Կրգենում: Հ. Աճայանը բառը փաստում է նաև Ղարաբաղի (**կածան, կածան**, **կածան**), Գորիսի (**կեծան**) խոսվածքներում: **Կածան**-ը բառարաններում ներկայացված է մի բանի իմաստով. «1. Նեղ անցք, կիրճ լեռների կամ անտառների մեջ, 2. ձյունի մեջ բացված արահետ, 3. փիլք, բուրգերի գլխին ածիլված նեղ շերտ, որ ճակատից մինչև ծոծրակն է զնում, 4. Ղարաբաղում, Ղարաբաղում, Թավրիզում, Շամախիում կածանը «համառօտեալ է» նաև ծա՞նի «քուրք» միայն իբրև ծածկալեզու» (ՀԱԲ, նույն տեղում):

Հ. Աճայանը «Հայերեն զաւառական բառարան»-ում **կածան** բառանվան դիմաց Ղազախում, Ղարաբաղում «կիրճ» իմաստն է արձանագրում, ինչպես նաև «աղվեսի շատ նեղ ճամփա», իսկ Ղարաբաղում՝ «փախցնովի ապրանքների բեռնակրի հետք»<sup>4</sup>:

Որպես «ձյան վրա բացված արահետ» հայերենի բարբառներում առկա է **թառ** բառանունը: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում նաև բերված է **թառ** բառի ընդհանուր իմաստը, որն է՝ «հավերի թառը», այնուհետև նշված են թառի այլ իմաստները՝ «1. Ար., Ղր., Կր., Սայլի թափքի վերին երկու հորիզոնական ձողերից յուրաքանչյուրը, ինչպես նաև ամբողջ թափքը, 2. Երզնկա. Այսուատանը մեծ թախտի նման հարմարանք ծառաների համար, 3. Ղր. (Ղազախ) Սայլի առջևի եռանկյունաձև մասը, որի տակ կախված է շարժական սնարքը (մորուքը), 4. Արարատյան. Զառիվեր, վերելք, դիք, 5. Կր. Չյան վրա

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԱԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական առաջնորդության շնորհիվ՝ N SCS <<13-6B382>> գիտական թեմայի շղանակներում:

<sup>2</sup> Հ. Աճայան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե. 1977, էջ 506:

<sup>3</sup> Գ. Զահոնյան, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 2010, էջ 374:

<sup>4</sup> Հ. Աճայան, Հայերեն զաւառական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Թիֆլիս, 1913, էջ 540:

բացված արահետ, որ երթեմն երթևեկության հետևանքով շատ է պնդացած լինում. օր.՝ Հանգստացած ձիերը բառը գտած... ճամբան են կտրում (Զավախեցի), 6. Դր. (Զնզ.) Ժայռափոր կառույց (Օղտ նան էշը... քընում են, քընում, հըսնում մի մէծ թառի, նի մըտնում մէշը»<sup>5</sup>:

Բարբառների բառային հնարանությունները ներկայացնելիս Գ. Զահուլյանը փաստել է **թառ** բառանուն՝ որպես «ձյան արահետ, ոտնահետքերով առաջացած ձյան ճամփա». բառն առկա է Ալաշկերտի խոսվածքում: Ըստ գիտնականի՝ այն «հ.-ե. **ter** -«անցնել, հաղթահարել, անցկացնել, փրկել» արմատից առաջացած բառանուն է»<sup>6</sup>:

**Թառ** բառի ծագման մեկ այլ վարկած է առաջարկում բարբառագետ Ալ. Խաչատրյանը: Նրա կարծիքով՝ **թառ** բառը՝ «թոշունների հանգրվանելու ձող» խմասողվ, թառամել բառի հետ կապելու խմաստարանորեն չի արդարացվում: Իհարկե, նա վկայակրոշում է նաև Գ. Զահուլյանի ստուգաբանությունը, սակայն կարծում է, որ բառարանագիրները չեն նշում **թառ**-ի՝ որպես «ձյան վրայի ճանապարհի, բարձրադիր (գետնից բարձր) լինելը», որը, ըստ նրա, շատ կարևոր է և ընկած է բառի առաջացման հիմքում: Բերում է նաև **թառ**՝ «զարդիթափ, բարձունք» խմասող բառը, որը Հ. Աճայանը համարում է պրոկ. Փոխառություն tar, tarak «զազաթ, ծայր» բառից, և համարում, որ խմաստային առումով դրանք դարձյալ իրար չեն համապատասխանում: Փաստում է նաև **թառ**՝ «դարակ, թարեք», **թառ**՝ Զահարիմահալի խոսվածքում՝ «բարձրից կախված քաղաք» խմասողվ բառանունները: Ալ. Խաչատրյանը, ներկայացնելով հիշյալ բռլոր բառերը, որոնք բառարաններում մասնակի բացառություններով տեղ են գտել միևնույն բառահոդվածի տակ, այսինքն՝ դիտվել են միևնույն բառի տարրեր դրսուրումներ և ոչ թե համանուններ, կարծում է, որ դրանք ունեն մեկ ընդհանուր բաղադրիչ, որն է՝ «բարձրում գտնվող, վեր բարձրացած»: Այս- տեղից էլ եղբակացնում է, որ դա էլ հենց այն նախնական խմաստն է, որ հիմք է դարձել բռլոր բառերի առաջացման, և այդ բառերի համար կանխադրում է \*ptr նախաձեռ<sup>7</sup>:

Ս. Ամատունու բառարանում ևս արձանագրված է **թառը**, որը Աշտարակում «զարիվեր, բարձր տեղ» խմասողվ է գործածվել. «Ծողովուրդն էլ տերտերների բամակիցը Մուղնու թառովը (զարիվեր) վիրս գնացին: Կրնկեց դեպի Մուղնու թառը»<sup>8</sup>:

Ս. Սուրբիայանի բառարանում **կածան** բառանվան բառագրաբանություն է դիտարկված նաև բարբառային **կոպար** -ը<sup>9</sup>: **Կոպար** բառը առկա է «Նոր հայկացյան բառզբությում»<sup>10</sup> առանց վկայության, գրաբարյան նշանակությունն է «սահման», և այն ծագումնաբանորեն, ըստ ՆՀԲ-ի, կապվում է **կոս** բառի հետ

<sup>5</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե. 2002, էջ 80:

<sup>6</sup> Գ. Զահուլյան, Հայ բարբառագիտության ներածություն (այսուհետև՝ ՀԲՆ), Ե., 1972, էջ 305:

<sup>7</sup> Հայերենի բարբառագիտական առջաս, պարակ 3, Ե. 2010, էջ 33:

<sup>8</sup> Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 204:

<sup>9</sup> Ա. Սուրբիայան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե. 1967, էջ 297:

<sup>10</sup> Նոր բառզիրք հայկացեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկի, 1836:

(ՆՀԲ, հ.1, էջ1117): Միջին հայերենում ևս վկայված է այս բառը՝ «որոշված սահման, եզրագիծ» իմաստով: Հայ մատենագրության մեջ փաստված են հետևյալ օրինակները. «Գառնոյ մին կոպարն այս է», «Չորեք անկիւնի քարի նըշան է զկոպարսն» և այլն<sup>11</sup>:

Հ.Աճարյանը վկայակոչում է, որ Ղարաբաղում և Ղարաբիլխայում առկա է կոպար բառանունը՝ **կոպառ, կոպար** հնչաձևերով, որոնք ունեն հետևյալ նշանակությունները՝ «1. ցեխի կամ ձյան վրա բացված նեղ ձամփա, որը շատ գնալ-զարուց ամրացված է լինում, 2. անտարի մեջ նույնպիսի նեղլիկ ձամփա, որը առաջացել է շատ երթևելելուց (ՀԳԲ, էջ 593-594): Առկա է նաև **կոպար անել** դարձվածային արտահայտությունը, որն ունի շատ հաճախել, միշտ մի տեղ գնալ-զար իմաստը: Ձեր տունը կօպար է արել»<sup>12</sup>:

Գ.Զահորյանը կոպար բառի ծագումն անհայտ է համարում, փաստում է նաև նրա բարբառային հնչաձևերը՝ **կոպառ, կուպար, կոփար** և թերում է նրա «սահման» և բարբառային «արահետ, կածան» իմաստները (ՀԱԲ, էջ 420):

Ս.Ամատունին ևս հիշատակել է կոպար բառանվան կուպար հնչատարբերակը, որն առկա է Գանձակում և Բանանցում, ունի «ձյան և ջրալի ցեխի մեջ ոսրով բացված ձանապարհ» իմաստը<sup>13</sup>: Բանանց գյուղի բարբառախոս մի բնակչից մենք զբառել ենք հետևյալ օրինակը. «Ծովի վրա կուպար արավ, վըր բախւեքը շկոլ քընանն»:

**Կածան, արահետ** հասկացության մեկ այլ բառանուն է դիտարկվել Ճըլդան-ն, որը Հ.Աճարյանի բառարանում վկայված է **ճըլդա** դրափոխությամբ (Մաշկերտ). բառի բուն իմաստն է «մեծ պողոտայից բաժանվող նեղ ձանապարհ» (ՀԳԲ, էջ 722):

Ս.Սուրբիայանը ՀԼՀ-ում որպես բարբառային բառ՝ **արահետ** բառանվան բառագուգաբանություն է հիշատակել նաև **թիթիկ-ու**: Հիշյալ բառանունը թերևս կապ ունի **թիթ** բառի հետ, որը, ըստ Ստ. Մալխայանցի և «Միջին հայերենի բառարան»-ի (ՀԲԲ, հ.2, էջ106), արաբական փոխառություն է. tall, հոգն.. tilal, որի նշանակությունն է «բրուր, հողակույտ»: Հ.Աճարյանը համարում է հետին ժամանակի բառ, որ մի քանի անգամ գործածել են Ս.Աստրին, Ս.Անեցին և Ս.Այրիվանեցին. այսպես. «Սա (Շամիրամ) արար զիոդակոյտ բլուրսդ, զոր կոչեն թիթս», «Շամիրամ շինեաց թէեր բլուր ի հողոյ կուտեալ ամրոց, բայց մեք զուար պատճառ թլացացր» (պատմում է, թէ Սասծոյ հրամանով մեհեանները կործանուեցան, կուտքերը գետնի տակ անցան և նրանց վրայ բլուրներ ձևացան») (ՀԱԲ, հ.2, էջ 183):

Մեր կարծիքով՝ **թիթ** բառը հազիվ թէ արաբական փոխառություն լինի, որովհետև դեռևս Ազգային պետականությունը «Հայոց պատմության» մեջ հիշատակ վում է Թիթ անվանումով ավանի մասին. «Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս

<sup>11</sup> Ո.Ղազարյան, Հ.Ավետիսիյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Ե. 1987, էջ 406:

<sup>12</sup> Ստ. Մալխայանեց, Հայերեն բացարական բառարան (պատմետն ՀԲԲ), հ.2, Ե., 1944, էջ 471:

<sup>13</sup> Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան, էջ 358:

անցանկին և քանդիկին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլ յավանի»<sup>14</sup>: Մանավանդ որ ՆՀԲ-ում և Զախշախյանի բարբարանում **թիլ** «ապան, գյուղ» բառը կապվում է տեղական **թիլ** հատուկ անվան հետ:

**Արտուրի**, խոտոր, այսինքն՝ «կարճ ձանապարհ» իմաստով Սեբատիայում Կ.Գարիկյանը փաստել է **գեղվըրա** բառաձևը (Շխտակեն Էկաք, թէ՞ գեղվըրա) (ՀԼԲԲ, հ. Ա, 2001, էջ 236)<sup>15</sup>: Այսօր էլ Կարն բարբարի որոշ խոսվածքներում գուրծունակ է **գեղվըրա** բառանունը՝ «ծուռ, խոտոր, չմտածված» իմաստով, իբրև մարդուն բնորոշող հատկանիշ, օրինակ՝ «Գեղվըրա մարդ է, գեղվըրա կխօսի», այսինքն՝ առանց մտածելու քայլեր անող մարդ է, չմտածված է խոտում:

Հ.Մուրադյանը Կարձևանի բարբարում փաստում է **չարչիմ** «արահետ» իմաստով բարբարային բառանունը<sup>16</sup>:

Բարիմաստային յուրօրինակ նրբերանգներ է դրսնորում **փոտաց ձանպա** բառանունը: Բարբառների գերակշռող հատվածում հիշյալ բառաձևը ունի **արտաքնաց** նշանակությունը, իսկ Գեղարքունիքի Վերին Գետաշեն, Լիճը և այլ գյուղերում այն գործածվում է «կածան, նեղ ձանապարհ» իմաստով:

«Շավիդ, սարի լանջի ձանապարհ» նշանակությամբ Սասունի բարբառում առկա է նաև **բարուար** բառանունը, իսկ «լայն ձանապարհ» իմաստով՝ **դրբը-ը**<sup>17</sup>: «Հայ ժողովրդական հերիաթներում» Մուշում վկայված է **քամանդ** բառանունը՝ «լեռան վրայով արահետ» իմաստով<sup>18</sup>:

Եզնիկ Կողբացու հայտնի վկայությունից երևում է, որ դեռևս 5-րդ դ. սկսած՝ մինենույն իմաստները բարբառային զանազան տարածքներում արտահայտվել են տարբեր բառերով: Սրան հակառակ՝ եղել են նաև մինենույն բառի իմաստային տարբեր գործածություններ:

Սույն հոդվածի շրջանակներում փորձել ենք անդրադառնալ նաև **փողոց, աղաց** բառանակների՝ հայերենի բարբառներում առկա բարիմաստային տարբեր դրսնորումներին:

Բնակավայրի տների երկու շարքի միջև թողնված ազատ տարածությունը կամ ձանապարհը երթևեկության համար **փողոցնի** է: Հ.Աճառյանը **փող** արմատը՝ «նեղ անցք» իմաստով, «Ճոխ ածանցներով աճած» մի արմատ է համարում, որի նախնական «նեղ անցք» նշանակությունից փոխարեւարար առաջացել են «կոկորդ, տան մեջ սրահի առջկի անցք, միջանցք, այգիների միջև նեղ ձամփա, խողովակ, ջրի փողորակ, շեփոր» և այլ իմաստները: Այս նշանակություններից էլ կազմվել է **փողոց-ը**՝ «քուչա»-ն, որի սկզբնական նշանակությունն է եղել «սենյակների առջկի «միջանցքը» կամ երկու շարք կանգնած մարդկանց միջն բաց թողնված տարածությունը», որով շքաղիք անձը

<sup>14</sup> Ազարթանգերոս, Հայոց պատմություն, Ե., 1983, էջ 442-443:

<sup>15</sup> Կ.Գարիկյան, Բարզիկը Սեբաստիայ զաւարակեցուի, Երուսաղեմ, 1952, էջ 136:

<sup>16</sup> Հ.Մուրադյան, Կարձևանի բարբար, Ե., 1960, էջ 227:

<sup>17</sup> Վ.Պետոսյան, Սասունի բարբար, Ե., 1954, էջ 115:

<sup>18</sup> Հայ ժողովրդական հերիաթներ, հ. 8, Ե., 1977, էջ 880:

պիտի անցնի: Կա նաև **փողոց տալ** արտահայտությունը՝ «Ճամփա բանալով երթալ» նշանակությամբ (ՀԱԲ, հ.4, 1979, էջ 512-513):

Ըստ Գ.Զահուլյանի՝ ինը հայերենում չկա «փողոց» նշանակող հատուկ բառ, նա փողոցը անհայտ ծագման բառ է համարում<sup>19</sup>:

Հայերենի բարբառներում ևս առկա է **փողօց** բառանունը, որը, սակայն, ավելի հաճախադեպ կիրառվում է «աղբանոց» իմաստով: Այս բառանունը հիշյալ իմաստով կիրառվել է Վանի, Մուշի, Շատախի, Սասունի, Նոր Բայազետի, Խոյի տարածքի խոսվածքներում **փուրոց, փորոց** հնչածներով, Երգնլայում՝ **փողան** բառակազմական տարբերակով, իսկ Սասունի Մոտլանում՝ **փողանն** նաև առաջնակեզվային անով տարբերակով: **Փող** արմատական բառաձևով հանդէս է գալիս Ղարադադի Ուրգություն, Վինան, Ղասմաշէն, Սարդու, Խանազահ գյուղերում՝ դարձյալ «աղբանոց» իմաստով: **Փողոց** բառանունը բարբառներում գործածական է եղել նաև «արտաքոց» իմաստով, և բառի տարածական շառավիղը նույն սահմաններում է, ինչ **աղբանոցինք**: Այսինքն՝ հիշյալ տարածքներում հիմնականում **աղբանոցն** ու **արտաքոցինք** նույն կերպ են անվանվել: Բերկրիի Արադայի շրջանի Խաչան, Վանի Ոստանի Քարադաշտ գ.-երում **փողոցը և ն' աղբանոց, և' զուզարան** իմաստն է ունեցել:

Մեր ձեռքի տակ եղած նյութերում տարածքային սահմանափակ կիրառություն ունի **փողան** բարբառային տարբերակը՝ որպես «փողոց»: Միայն Վանի բարբառում է գործածվել **փողան** բառաձևը, ինչպես նաև **խաչփողան** բարբառային բառանունը՝ որպես «երկու փողոցների խաչվելու տեղ», այսինքն՝ խաչմերուկ:

Սասունի բարբառում ևս փաստված է **փողան** բառը, սակայն այստեղ սրա գործառույթն այլ է՝ «նեղ սրահ, միջանցք»<sup>20</sup>, որը, ինչպես վերևում նշել ենք, Հ. Աճայանը դիտարկում է որպես հիշյալ բառանվան հնագույն իմաստներից մեկը:

Հարկ ենք համարում ներկայացնել նաև ՀԱԲ-ում վկայված **փողոց** կամ **փողան** բառանունների բարիմաստային զուգաբանությունները. «Ազուլիսում՝ **փուլ** «մի փողոցի հատուկ անունը», Վանում՝ **փողան**, Ալաշկերտում, Մուշում՝ **փողան** «փողոց», Վանում՝ **փուրոց, փողոց**՝ արտաքոց, Սալմաստում՝ **փուրոց, փողոց, փորոց**՝ արբանց, Տփոխում՝ **փողօց** շուկա, Կարինում **փողօց**՝ փողոց, Մուշում՝ **փողագ**, Սոկում՝ **փուլքակ**, Ալաշկերտում՝ **փողրանգ**, Ախալցիսայում՝ **փեղողանգ**, Խոտքուրում, Աերաստիայում՝ **փօրդանը**, Խարբերդում՝ **փօրդէնք**, Ակնում՝ **փօռդագ**» (ՀԱԲ, հ.4, էջ 512-513):

Ըստ Կ.Գարիկյանի բառարանի՝ «**փողոսր** (փողոցը)-ը գիտերու տուներու առջև յատուկ աղբանոց, ուր կը թափեն օրական վառուած աթարի մոխիրը և աղբիս, զոր յետոյ իր բուսահող արտերը կը քաշեն» և բերում է հետևյալ

<sup>19</sup> Գ.Զահուլյան, Հայոց լեզվի պատմություն: Նախազրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀՀՊ ՆԺ), Ե., 1987, էջ 266:

<sup>20</sup> Վ.Պետրոսին, Սասունի բարբառ, Ե., 1954, էջ 164:

առածը «Շունը կուլա, թե փողոսքը վրաս է, փողոսքը կուլա, թե շունը վրաս է», այսինքն՝ գանգատող, զիրար ամրաստանողներ, որ զիրար կարժեն, մեկը մեկն զանգատելու իրաւունք չունի»<sup>21</sup>:

Գ.Զահուլյանը հնագույն հայերենի բարբառային տարբերակները ներկայացնելիս այս ցանկում **փողոց** բառի համանիշ է դիտարկել **գողի** բառանունը (ՀՀՊ ՆԺ, էջ 408):

**Գողի** բառը, ըստ ՆՀԲ-ի, կապվում է **զայռ** «ցեխ» բառի հետ. «Գոկի - Քաղաքամեջ, որպես զայռոտ, այսինքն՝ տղմուտ ռահ՝ վասն բազմութենէ անցաւրաց. հրապարակ, պողոտա, փողոց, շուկա» (ՆՀԲ, հ.1, էջ 582):

**Գողի** բառանունը, ըստ Հ. Աճառյանի, «փողոց, հասարակաց ձամփա» նշանակությունն է ունեցել, որից էլ **գողիիկ-ը՝** «քամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ»: Բառը արձանագրված է Թովմա Արծրունու (9-րդ դ.)՝ **զողի** - փողոց, և Ներսէս Լամբրոնացու (12-րդ դ.)՝ **գողի** - «աղբ, ցեխ» աշխատություններում (ՀԱԲ, հ.1, 1971, էջ 600):

**Գողի** բառաձևը հայերենի բարբառներում «փողոց, ձանապարհ» նշանակությունները չի պահպանել: Ըստ ՀՀԲԲ-ի՝ **գողի** բառը Մուշում ունի «աղբյուս, աղբանց» իմաստը:

Հայերենի բարբառներում **գողի** բառանունն ավելի գործածական է մեկ այլ տարբերակով՝ h->խ հերթազայությամբ՝ **գոշի** բառաձևով: Այսպես՝ Մուշում, Ալաշկերտում **գըռոշի**, Վանում **զըռիկի**, Մոլոսում **զըռոշի**, Սալմաստում **կիրիկի**, Մարադյանում **կիրիկի** հնցյունական զուգաբանություններն են առկա, սակայն ոչ թե «փողոց, այլ վերքի թարախ, շարավ» նշանակությամբ: Նույն՝ «թարախ» իմաստով բառը գործածական է նաև Ազայում, Ոզմում, Նոր Բայազետում, Ապարանում, Շիրակում, իսկ Սալմաստում փաստված է նույնիսկ **կիրիկի** - **թարախ** բաղադրությամբ բառաձևը: ՀՀԲԲ-ում Գ. Արվանձոյանցից բերված է հետևյալ ուշազրակ օրինակը՝ «տու ձիկ արեցիր աղու գըռէիս, էնի արաց անմախութնի ձար, թօն երթա, Աստված ուր իսէտ էնի» (ՀՀԲԲ, հ.Ա, էջ 285):

Ինչպես արդեն արձանագրել ենք, հավանաբար **գողիի** «ցեխ, աղբ» նշանակությունից ենելով էլ հետազայում նույն բառաձևից առաջացել է նրանից միջնորդակրթված փոխաբերացմամբ մեկ այլ բառիմաստ՝ **զըռիկի** «թարախ, վահր»: **Գողի** - «աղբ, ցեխ, փողոց, ինչպես նաև աղբանց ու աղբիս», այնուհետև **զըռէիս**՝ «վերքի թարախ»:

**Փողոց** հասկացության դիմաց որոշ բարբառներում առկա է **202** բառանունը, որը թերևս աղերսներ ունի ոռուսերեն **шоссе** բառի հետ: Բառը փաստված է Եղեգնաձորի Եղեգիս, Տավուշի Վերին Կարմիրաղբյուր, Մարտունու Մադինա, Արարատի շրջանի Արարատ գյուղերում և այլն:

**Փողոց** հասկացության բառագուաքարանություն է դիտարկվել արևելյան փոխառություն համարվող **քայլաշ** բառանունը (Կարձնան, Արարատ և այլն):

<sup>21</sup> Կ.Գարիկիեսն, նշվ. աշխ., էջ 553:

«Ներ փողոց» իմաստով «Հայ ժողովրդական հերթաքններ»-ում փաստված է **սոխափի** բառանունը Լոռիում<sup>22</sup>:

Գ.Զահուլյանը, ներկայացնելով հնագոյն հայերենի բարբառային տարբերակները, **սոխի** բառի հոմանիշը է դիտարկել **աղազ** բառանունը: Նա բառի ծագումն անհայտ է համարում՝ գտնելով, որ այն հազիվ թե կապ ունենա ակադ. alāku(m), alaktu, «ընթացք, ճանապարհ, ուղի» բառերի հետ (ՀԱԲ, էջ 33): Հ.Աճառյանը, վկայակոչելով Ուսկերեանին, **աղազ**՝ «Ճանապարհ իմաստով», մեկ օրինակ է բերում՝ «Արատիցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղազ լինի (այզու պատի համար է ասում, որ քանդվելով ամենի ազատ անցուղարձի ճանապարհ է դառնում): Երկրորդական նշանակությունն է «հընարք, կերպ, միջոց», գործածված են նաև հոլոված ձևերը՝ գործիականը **աղազաւ**՝ պատճառով, հայցական կամ ներգրյական՝ **յաղազքս**՝ «համար, վասն»: Ըստ Աճառյանի՝ բոլոր ձևերի նախնական նշանակություննը «Ճանապարհ» ն է (ՀԱԲ, հ.1, էջ 117):

Հայ բարբառների մեծ մասում (Երևան, Սուրբալու, Ղազախ, Ղարաբաղ, Ղարադադ, Լոռի, Թիֆլիս) **աղազ** բառը հանդես է զայխս **աղազ** բարբառային տարբերակով և ունի «առջև, առաջ» իմաստը: Օր.՝ «Գազանի աղազը կտրեցին: Խոփն ասավ՝ քամակս դուզ, աղաքս կեռ ա, / Գետինը շալակելը շատ ծանր բեռ ա»: 2-րդ իմաստով բարբառներում (Լոռի, Երևան) «նախ, առաջ, նախապես» է նշանակում: Օր.՝ «Աղազվա ժամանակը ու՞ր, իիմի ու՞ր: Աղազ էստեղ քաղաք էր»: Առաջ, առջև իմաստով կան նաև դարձվածային արտահայտություններ. 1. **Աղազ անել**՝ առաջը զցել: 2.Լոռու բարբառում **աղազկտրուկ անել**՝ մեկից առաջ անցնել: 3.**Աղազք կանգնել**՝ դիմարքել: Արարատյան բարբառում առկա է նաև **աղարանալ**՝ առաջանալ բայալեր (ՀԱԲ, հ.Ա, էջ 37):

Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերում եզակի նմուշներ ունենք, որոնցում **աղազ** բառանունը անադարտորեն պահպանել է իր նախնական «Ճանապարհ» իմաստը, օր.՝ Հավարիկում՝ **երդրք**, Կրգենում՝ **երդերք** (Հըրքերմը մասն վյօթ՝ մասն էր զայխս), Կարձևանում՝ **երդարք** (**երդարքնի**՝ ճանապարհին): Ըստ ՀԼԲԲ-ի՝ **աղազ** բառանունը առկա է Արարատյան, Թիֆլիսի, Ղարաբաղի, Կրգենի բարբառներում՝ «առաջ, առջև, նախ, նախապես» նշանակություններով: Մեղրու բարբառի համար արձանագրված է **աղազ** բառի «Ճանապարհ» իմաստը (տե՛ս նույն տեղում):

**Աղազ** բառանունը Տափուշի մարզի որոշ գյուղերի և Հաղպատի խոսվածքներում այսօր էլ գործածական է **կըրճաղազ** ձևով, այսինքն՝ **կարճ աղազ(ք)** որպես «նեղ և կարճ ճանապարհ, արահետ»: ՀԼԲԲ-ում ևս արձանագրված է **կարճաղազ** բառածերք՝ որպես կտրուկ, կարճ ճանապարհ որը, ըստ բառարանի, վկայված է **կարճաղազ** հնչածուվ Արարատյան բարբառում, **կարճաղազ**՝ Ղազախի, **կըրճաղազ**՝ Լոռու և Գանձակի խոսվածքներում (ՀԼԲԲ, հ. Գ, 2004, էջ 62, 194):

<sup>22</sup> Հայ ժողովրդական հերթաքններ, հ. 12, Ե., 1984, էջ 641:

Հարկ ենք համարում իիշատակել նաև Սասունի բարբառում վկայված **աղազ** բառանունը, որը, սակայն, խոսվածքում «ծառի ճյուղերից գործված դրու կամ ցանկապատ» նշանակությամբ է փաստված<sup>23</sup>:

Այսպիսով՝ քննվող նյութի ուսումնասիրությունից գալիս ենք հետևյալ եզրակացության. հայ բարբառներում առկա են «ոտքով բացված նեղ ձանապարհ» իմաստով բառանուններ, որոնք բառակազմական և բարիմաստային հետաքրքիր զուգորդումների արդյունք են: Ուշագրավ է նաև հայ բարբառներում **աղազ**, **փողոց**, **գուեհ** բառանունների բարիմաստային բազմազանությունը. մի կողմից **փողոց-ը** և **աղազ-ը** բարբառներում պահպանել են նախնական «ձանապարհ» իմաստը, մյուս կողմից ունենք **աղազ**, **փողոց** բառանունների բարիմաստային այլ դրասորումների վկայություններ, ինչպես՝ **առաջ**, **առջն**, **նախ**, **աղբանց**, **շուկա**, **արտաքնց** և այլն: **Աղազ** բառանունը որոշ բարբառներում վկայված է նաև բառակազմական յուրօրինակ բառաձևով՝ **կըրճաղաք**՝ որպես «կարճ ձանապարհի» նշանակելի: **Գուեհ** բառի դեպքում բարբառները չեն պահպանել նրա «փողոց» նշանակությունը, այն բարբառներում գործածվել է «թարախ, աղբիս, աղբանց» իմաստով:

Khachatryan Hasmik - Dialectal Characteristics of the Concepts of “Street” and “Path” and Their Semantic Developments in the dialects of Armenian.- This article studies the dialectal forms of the concepts of “path” (narrow road) and “street”. The following variations of the word “path” have been found in the dialects of Armenian - կածան, թառ, կուպար, թիլիկ, կըրճաղաք etc, which are a result of curious formative and semantic associations. The words աղազ, փողոց and գուեհ have manifested semantic variety in the Armenian dialects. On the one hand, փողոց and աղազ have preserved their original meaning of “road, way”, but on the other hand we have other semantic manifestations of those words, such as “before, in front of, firstly, dump, market, lavatory” etc. In case of the word գուեհ, the dialects have not preserved the meaning of “street”; this word is used in the dialects to mean “puss” or “dump”.

Хачатрян Асмик – Характеристика и семантическое развитие понятий «փողոց» и «արշանես» в диалектах армянского языка.- В данной статье исследуются диалектные словоформы понятий «արշանես» (узкая дорога, тропа) и «փողոց» (улица). В армянских диалектах в качестве синонимов понятия «արշանես» отмечены: կածան, թառ, կուպար, թիլիկ, կըրճաղաք и другие формы, которые стали результатом интересных словообразовательных и семантических параллелей.

Лексемы **աղազ**, **փողոց**, **գուեհ** в армянском языке образовали полисемическую группу слов. С одной стороны, **աղազ**, **փողոց** сохранили в диалектах начальное значение – путь, дорога, с другой стороны, имеются свидетельства иных семантических проявлений лексем **աղազ** и **փողոց**, как, например: **առաջ** (вперед), **առջն** (впереди), **նախ** (во-первых), **աղբանց** (мусорная свалка), **շուկա** (базар), **արտաքնց** (туалет) и др.

В случае со словом **գուեհ** диалекты не сохранили его значение «улица», оно употребляется в значении «гной», «мусорная свалка».

<sup>23</sup> Վ.Պետրոսին, Խշվ. աշխ., էջ 101:

ՆՈՐԱՀԱՅԻ ԲԱՌԵՐ 13-ՐԴ ԴԱՐԻ  
ԶԵՂԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

13-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվական հարցերով ժամանակին գրաղվել է Լ. Հովսեփյանը՝ իր ուսումնասիրության մեջ ներառելով միմիայն ձևաբանական, հատկապես հոգնակիակազմության, հոլովման և խոնարհման համակարգերի որոշ իրողություններ<sup>1</sup>: Ուստի սույն աշխատանքը տվյալ դարաշրջանի հիշատակարանների<sup>2</sup> բառապաշտի ուսումնասիրության առաջին փորձն է:

Նախ և առաջ փորձել ենք պարզել, թե 13-րդ դարի հիշատակարանների բառապաշտը որքանով է արտացոլվել Նոր հայկացյան բառարանում<sup>3</sup>, որը բառեր է պարունակում մինչ բառարանի ստեղծումը ավանդված տարրեր գրական աղբյուրներից, այդ թվում՝ ձեռագրերի հիշատակարաններից: Սակայն, ինչպես սույն ուսումնասիրությամբ պարզվեց, 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում գործածված շուրջ 600 բառ և բառատարբերակ ամենատարրեր պատճառներով չեն վկայվել ՆՀԲ-ում: Նշվածներից տասնյակ օրինակներ արձանագրված են 5000 բառերով համալրված Առձեռն բառարանում<sup>4</sup>, սակայն, վերջինիս բնույթով պայմանավորված, աղբյուրները նշված չեն: Քիչ թվով օրինակներ առկա են Ո. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ում<sup>5</sup>՝ նույնպես առանց բնագրային օրինակների, և Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում<sup>6</sup>՝ կամ աղբյուրի նշումով, կամ առանց դրա: ՆՀԲ-ում չվկայվածներից զգալի թվով բառեր արձանագրված են Ս. Մալխասյանի «Հայերէն բացատրական բառարան»-ում<sup>7</sup>, որում նույնպես բնագրային օրինակներ չկան, ապա և Միջին հայերէնի բառարանում<sup>8</sup>, որն ընդգրկում է միջինհայերէնյան շրջանի գրականությամբ ավանդված բառեր, այդպիսով և՝ 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում վկայվածներ, և միշտ շարք օրինակներ առկա են Լ. Հովսեփյանի «Գրաբարի բառարան»-ում<sup>9</sup>:

<sup>1</sup> Լ. Հովսեփյան, ԺԳ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., 1997:

<sup>2</sup> Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ (ԺԳ դար), կազմ. Ս. Մաթևոսյան, Ե., 1984:

<sup>3</sup> Նոր բառզիրք հայկացեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հհ. 1-2, 1836-1837:

<sup>4</sup> Գ. Ճեղական, Առձեռն բառարան հայկացնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865:

<sup>5</sup> Ո. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), Ե., 2000:

<sup>6</sup> Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., հհ. 1-4, 1971-1979:

<sup>7</sup> Ս. Մալխասյան, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., հհ. 1-4, 1944-1945:

<sup>8</sup> Ո. Ղազարյան, Հ. Աճետիսյան, Միջին հայերէնի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

<sup>9</sup> Լ. Հովսեփյան, Գրաբարի բառարան. Նոր հայկացյան բառարանում չվկայված բառեր (այսուհետև՝ ՀԳԲ), Ե., 2010:

13-րդ դարի հիշատակարաններում գործածված շատ բառեր բնագրային օրինակներով բառարաններում հետագա շրջանի գործերից են վկայված, կամ էլ, ինչպես և վերը նշեցինք, արձանագրված են այնպիսի բառարաններում, որոնցում աղբյուրները բացակայում են: Սակայն մեր նպատակն է սույն հոդվածի սահմաններում ներկայացնել միայն այն բառերն ու բառատարբերակները, որոնք հիշատակված տպագիր բառարաններից և ոչ մեկում տեղ չեն գտնել: Այսպիսով, վերոհիշյալ բոլոր բառարաններում չեն վկայվել 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում կիրառված շուրջ **400 բառեր ու բառատարբերակներ**: Նշվածներից որոշ օրինակներ հիշատակարաններում նույնիսկ լայն գործածությամբ են: Շատ բառեր, անշուշտ, կազմվել են հիշատակագրողների կողմից՝ պայմանավորված հիշատակարանների բովանդակային կողմերով: Բոլոր չեն, որ 13-րդ դարի հիշատակարաններում առկա միշտ շարք բառերի միակ վկայությունները բառարաններում այլ դարերի հիշատակարաններից են: Այսպես. Լ. Հովհաննիսյանը ՆՀԲ-ում շվկայված բառերի վերը հիշված բառարանը կազմելիս թեև 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարանները չի օգտագործել սակայն բառաշարքում տեղ են գտել դրանցում առկա բառեր, որոնց հիմնական մասը հաջորդ դարերի հիշատակարաններից է քաղված: Այդպիսիք են՝ *բարիարմատ* (ԺԵ, Բ, 129) (494), *առաքելագումար* (ԺԵ, Գ, 53) (852), *արտաշան* (ԺԴ, 398) (13), *արդիւնաբան* (ԺԴ, 419) (848), *մակիորչորժեալ* (ԺԴ, 6) (823) և այլն: Նույնը միշտ շարք դեպքերում հաստատվում է նաև ՄՀԲ-ի վկայություններով: Պետք է հավելել նաև, որ Ա. Մարգարյանի «Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV- XVդդ. հիշատակարաններում» հոդվածի<sup>10</sup> բառացանկում կան տասնյակից ավելի օրինակներ<sup>11</sup>, որոնք գործածվել են նաև 13-րդ դարի հիշատակարաններում:

Ստորև բերվում են այն բոլոր բառերը, որոնք վերը նշված բառարաններից և ոչ մեկում չեն ամրագրվել:

Հիշատակարանների մեծ մասն սկսվում է հիշատակագրողների կողմից Աստծու և աստվածայինի փառարանությամբ, որը, անկասկած, նոր բառեր կերտելու հիմք է հանդիսացել: Աստծու, Աստվածաշնչի, աստվածային լրուսի և իմաստնության փառաբանությանը, աստվածային ծագմանը և շնորհներին վերաբերող բառերը հիշատակարաններում ամենաստվար շերտն են կազմում: Այդպիսի օրինակները հիմնականում վկայված են Ավետարանի, ապա նաև վերջինիս մեկնությունների կամ առհասարակ հոգևոր գործերի հիշատակարաններում, որոնցում զրիշները բազում գունագեղ որոշչիներով են արտահայտել իրենց վերաբերմունքը: Վերը հիշատակված բառարաններում չեն վկայվել հետևյալ բառերը. «Յանկ ելալ աւարտեցան ... **զարոնագեղ**, .... **յաւեսուպոյս**,... Աւետարան» (772)<sup>12</sup>, «Փառք փառաւորեալ,... **համակերտող**, ... և **բիւրածածան**» լուսոյ Սուրբ Երրորդութեան» (863), «յորժամ

<sup>10</sup> **Ա. Մարգարյան.** Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV- XVդդ. հիշատակարաններում .- Պատմաբանասիրական հանրես, 1-2, 1993, էջ 35-42:

<sup>11</sup> Այդ բառերով համարված է ՀԳԲ-ն:

<sup>12</sup> Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

վայելեք ի բաղցրաձաշակ, ... **աստուածառոյց** վտակաց աստուածային աւետարանական բանիցս» (396), (538) // «**աստուածոռող** վտակաց... աւետարանական բանիցս»<sup>13</sup> (852), «**տեառնասուր** մանուկս իմ Աթարակ» (311), «**լուսայարմար** հաւաքումն սուրբ Աւետարանիս» (381), «**լիալապտեր** ջահիցդ շիշեալ հորս և ունայխս Բարսեղ» (649), «**երկնամուս** նորատուր մանկուն Նորոյ Սիրովին» (499), «**երկնամելու**, ... բանիցս ի վորու մատենիս եղե զանացող գծել մեղապարտ գրիչս Թեօֆիլէ սուտանուն կրօնաւոր» (941), «Գրեցաւ սուրբ տառս նորակերտ տաճարին, որ յանուն **աստուածասուրք** Հոգոյն կանգնեցաւ ի գալոն Տիրոց» (591), «**աղտափարատ** լուսովս հըրձրեալ» (640), «Ախտահալած և **կորաքաց** և յարուցիչ գոլ մեռելոց» (653), «**Վերնահանդէս** լոյսն իմաստութեան **առատակազմն** յարինէ ի լուսատրեալս **պէսսէխորակն**» (604), «... որ է **համակարոյս** եւ ծաղիկ լուսերանգ, **բազմախարի** և յարափիթիթ, ծառ անծայրանայի...» (ըստ ՆՀԲ-ի՝ *իսարի* «մի տեսակ բոյս է, որի արմատից պատրաստում են կարմիր սնգոյր. հաւաժիպակ» - ՆՀԲ, հ.2, էջ 344-345, սակայն տրված օրինակում *իսարի* (պսոու) բառի միջին հայերենին հատուկ այշա հնչյունափիտթյամբ առաջացած տարբերակն է) (733) և այլն:

*Աստուած և տէր, իոս/թ/ և բան բաղադրիչները բառերում համարժեք գործածություն ունեն: Հաճախակի գործածված աստուածախոս բարի փոխարիեն (հատկապես աստուածախոս տառ, աստուածախոս Աւետարան կապակցություններում) հիշատակարաններից մեկում առկա է տեառնարան բառը. «Եւ արդ, շնորհիւն Աստուծոյ սկսաւ և ողորմութեամբ նորին կատարեցաւ... տիեզերախաս վարդապետութիւնս **տեառնարանին** Աստուծոյ» (654), նույնքան հաճախ հանդիպող աստուածապատում բառի փոխարեն՝ **տիրապատում**. «...կատարեցի զ **աստուածամաղթան** եւ **տիրապատում** տառս մարզարէից եւ զ **որիստոսայախ** տնաւրէնութեան բացայայտութիւն, ... որ է... **շնաղատիսիս** մարգարիտ» (572):*

Գրիշները ոչ միայն Աստուծուն են դիմում ձեռագիրն ընդօրինակելու գործում իրենց գորավիզ լինելու, զանազան մեղքերից ազատելու և այլ խնդրանքներով, այլև երեսն ապավինում են նաև Աստուծու ծառաներին՝ սուրբ մարդկանց՝ վերջիններից նույնպես գորակցություն հայցելով կամ դիմելով Աստուծու առաջ բարեխոս լինելու խնդրանքով: Հետևաբար նույնաբնույթ որոշչիներով են բնութագրվում նաև վերջիններս. «քարեխաւս ունելով ... եւ **լուսահոչակն** զՅնիան..., զի և սոքա յես Աստուծոյ երկրորդաբար յոյս են մեզ է բարեխաւս մեզ...» (752), «**սրբազարդից** արանց առաջնորդի» (43):

Հաճախ բազմազան որոշչիներով բնութագրվում և մեծարվում են այն հիզեռոր և աշխարհիկ գործիչները, որոնք որոշակի ներդրում են ունեցել տվյալ ձեռագիրն ընդօրինակելու գործում կամ որևէ առնչություն են ունեցել տվյալ ձեռագրին: Շատ դեպքերում գրիշները ավանդ են հղում ընթերցողներին՝ ի-

<sup>13</sup> Ըստ ՆՀԲ-ի՝ «**առոյց** (որ զի և **առող, առուց**). իբր առողեալ, որոցեալ, առաձեալ կամ ուռածացեալ՝ որպէս գրոյս» (ՆՀԲ, հ. 1, էջ 333) և «**ոռող, առոյց, ուռացեալ, որոցմամբ գուարձացեալ, ծաղկեալ**» (ՆՀԲ, հ. 2, էջ 517), ՀՈԲ-ը **առոյց** գլխաբարի տակ նշում է. «Գրուած է նաև **առող, ոռող** և **առուց**» (ՀՈԲ, հ. 1, էջ 268):

բենց աղոթքներում հիշելու տվյալ մարդկանց.« զմեծ հայր **բարեգարդասիոյ** Կեռանի յիշեցէք յաղաւս» (418), «Ծնորիին Աստուծոյ աւարտագծեցաւ ... Մարենուեան Աւետարանս, ... հրամանաւ բարիամատ և **բազցրամիս** պատրոնին» (494), «տեսանելով զորդիս որդոց աստուածաւը և **բազցրաշառավեռին** իւր պատրոն Վաղտամզին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ աւրինելոյ յախտեանս» (494), «ստացա զգծուածք Լուծմանցու..., զոր թելադրութեամբ **տրամիմասս** վարդապետին մերո Դաւթա արարեալ է» (406), «կատարեցաւ տառ մատենիս ի սուրբ եւ ի հոչակաւոր վանքս Գետկա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ..., այլ եւ առ ոտս սուրբ եւ **վսեմապայծառ** վարդապետիս Յովլասարիս»<sup>14</sup> (436), «**փառազրւարժ** քահանայր,... Գրիգորն և Առաքեալն» (368), «**յորնալոյս** վարդապետի ասացեալ Սկեւուցոյ» (549), «**զարիերօանիկ** վարդապետն... զԳրիգորիս՝ զստացաւ սուրբ մատենիս...» (781), «յիշել յարժանախումը ձեր սուրբ հանդէս զպատրոն Խայտերն՝ զստացաւ սորա» (121), «ընդ որս եւ դուք ցաւակից գոլով, **սրբերամ** դասր, յաղաւս յիշատակել զստրնեայս զայն» (418) և այլն:

Հաճախ հիշատակվում են այն սրբավայրերը, որտեղ ընդօրինակվել են ձեռագրերը: Այսպիսով վանքերն ու եկեղեցիները նույնպես բնութագրվում են վերամրարձ որոշչիներով. «և կանզնեաց **զարանչաարժան** եկեղեցին ի մայրաքաղաքին Մամուեսայա...» (որտեղ և հետազայում զրչագրել է Վասիլի) (788), «ստացան զսա զանձ հոգելոր մատենիս...յիշատակ հոգոյ, և վայելք մարմնոյ, ի պէս **մաքրաբնակ** անապատին և ցանկալի մենանոց/ին» (678):

Ինչպէս և նկատվում է, Աստծո, աստվածայինի, սրբացված անձանց, հոգելոր գործիչների, ձեռագրի ստեղծմանը նպաստած մարդկանց և զրչության օջախներ հանդիսացող սրբավայրերի մասին խոսելիս զրիչները, ի հայտ բերելով բարակերտման լայն հնարավորություններ, դրվատանքի ու փառաբանության ամենատարբեր բառային միջոցների են գրական վկայագիր հադորել: Զակառակ այդ ամենի՝ իրենց վերագրել են բացասական հատկանիշներ. նրանց մշտապես հետապնդել է մեղսունակության զիտակցումը՝ մեծ մասամբ պայմանավորված զրչագրական թերացումներով: Վերջինս է հիմք է հանդիսացել ինքնամեղադրանքի և ինքնանսեմացման իմաստավորմամբ բառերի ստեղծման համար: Այսպիսով զրիչները փորձել են արժանանալ Աստծու ողորմությանը և թռղությանը: Այսպէս. «զի յոյժ փափազմամբ զբեցի ինչինչ մեղսակարկամ» ձեռամբ իմով» (643), «ձեռամբ **յոզնապարս** քանքարու և փանաքի զրչի Գրիգոր քահանայի» (639), «Քրիստոս որդի Աստուծոյ, ընկալ զքո սուրբ զԱւետարանս ի **սնապարտէս** Սահակայ իբրեւ զիւրեւէշն այրոյն եւ ողորմեա ինձ» (70), «յոյժ **խաւարածառանց** և պարապնդեալս մեղօր Ներսէս անպիտան զրիչ և ստանուն քահանայ ... » (167), «այլ և կամօր իմովը սպանի

<sup>14</sup> Հաստ տվյալ հիշատակարանի՝ Վարդապետ Յովլասարը աղոթքներով է օգնել Միմիթար Գոշին. « Արդ, ես յորնամենս Մխիթար, առ ոտս տարա կարով եւ յաղաւս սորայ պապանեալ եւ յԱստուած, մոռացում արարի ամենայն մարմնականիս եսս առաւել տկարութեան մարմնոյ, առ յոյժ փափարումն աստուածային մատենիս, եւ յոյժ նեղութեամբ եւ տառապանարգ գծագրեցի իմով ձեռամբ ի վաելյումն անձին իմոյ եւ յիշատակ հոգոյս» (436):

զնայ և **չարագեց** լեզրւաւս խոցուեցի գեղբայրն» (370), «Արդ, ես ... **փցնասիտ** աշակերտս սորին Գեղրգեայ, անարձան քահանայ, **պիտակագործ** անուանեալ Երեմիայ յորջորջեալ» (751), «Բայց զի յարայտեսութիւն **մեղասատար** սեւակիս... շահընկալ զիս ցուցան» (ՀԱԲ՝ **սատար** «գործող, գործաւոր, մշակ», 437), «հասանեալ ի զիծու վերջին **փցնածին** կածնաւ, նմա գոհութիւն յամենայնի իմովս ձայնիւ» (ՄՀԲ՝ **կածին** «գրիչ, ձեռագիր ընդօրինակող») (715):

Առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերաբերում են զրին ու զրցությանը: Այդպիսի բառերի գործածությունը հիշատակարաններում, անշուշտ, անխուսափելի է: Դրանք արտահայտում են զրցազրական աշխատանքները, զրի տարբեր դրսորումները, թերակատար կամ լիակատար լինելը և այլն: Կարելի է ենթադրել, որ շատերը կազմվել են հենց տվյալ պահին՝ հիշատակարան գրելիս: Ենոր չէ, որ այդպիսի բառերի մեծ մասը բառարաններում միմիայն տարբեր դարերի հիշատակարանների նշումով են: Մեծ թիվ են կազմում հատկապես **զիր** և **զիծ** բաղադրիչներու կազմությունները, որոնցում նշվածները համարժեք գործածություն ունեն: Այսպէս. «ԶՍարգիս զրիչս յիշեայ ի Տէր Յիսուս, ո՞վ **խազազիծը**, և Քրիստոս զձեզ յիշէ...» (615), «Ծնորիիւն Ասսուծոյ աւարտազծեցաւ եղեմարուիս... աղբիրս Մաթեոսեան Աւետարանս» (494), «աշխատեալ **ծրաբուեցի** զգիրս զայս...» (ՄՀԲ՝ ծրել «գրել, ընդօրինակել» ԺԴ, 22, որից և բազմապատկ. ծրաբուել) (370), «ի Գրիգորէ Նիւսեա **արտաշարեար**» (605), «**զսակաւազիր** յիշատակարանս զրեցի» (815), «... Յառատազիրն տացի շնորհաց» (406), «**վերագծող** այսմ տառիս» (824), «...յոյժ տագնապէ զմեզ, վասն որոյ առաւել **ցեցրդուեցի**...» (ցեցող բառից կապված թանաքն օգտագործելու ձևի հետ) (868), «Որը հանդիսիր **տիխմարտանց** զրոյս...» (729), «**Փցկութեան** զրիս մի մեղադրէ» (834), խոշոր **Ճարոտանց** (ՄՀԲ՝ ճարոտել «գրելիս ձեռքը դողալ, ծուռումուր գրել, խօրգել») (868) և այլն:

Զիր և **զիծ** վերջնաբաղադրիչները բառերում ունեն և՝ գոյականի, և՝ բայարմատի արժեք: ՀԳԲ-ի՝ այլ դարերի հիշատակարաններից բերված **փցնազիր** և **խոշորազիծ** բառերում գրյականական իմաստով են, մինչդեռ 13-րդ դարի հիշատակարաններում առկա են նաև բայական իմաստով օրինակներ, ասել է թէ՝ զործ ունենք լիովին տարբեր բառերի հետ: Հմմտ. «Լցար զտենչումն մեր, թէն փցնազիր էր զիրս» (ՀԳԲ՝ **փցնազիր** «անպիտան, պակասաւոր զիր», Հիշատ., ԺԴ, 413) - «Եւ ես **փցնազիրս** Հանիսուկ, ... զործ ի ձեռն առեալ գրեցի զա» (421), «Աստանաւր հանկ ելեալ կատարեցաւ **խոշորազիծ** զիրս» (ՀԳԲ՝ ԺԵ, Բ, 13) - «Եւ զրեցաւ սա ձեռամբ Կարապետի մեղապարտի եւ **խոշորազիծ** զրչի» (60), «ԶԿարապետ աստուածահածոյ քահանայ յիշեսչիր ի Քրիստոս, և զտառապեալ **խոշորազիծս** Բասիլ» (103):

Որոշ բառեր վերաբերում են ձեռք բերելու, ուղղելու և առհասարակ ձեռագրաստեղծման և պահպանման դժվարություններին. «յոյժ բաղձանաւր եւ **յոզնաշատ** մեծաւ աշխատութեամբ ստացայ զա ի լուսաւորութիւն...» (814), «յոյժ քրտնաջան եւ **մեծախոնց** տաժանմամբ ուղղեցի ըստ կարի տաժանմամբ...», «Ուղղողիս **մեծախոնց** տաժանմամբ եւ ստացող

հողոյս Յոհաննէս Եպիսկոպոս...» (641), «քազում աշխատութեամբ եւ **յոգնատարծան** երկաւք... ետու զրել զսուրք Աւետարանս...» (13):

Հիշատակագիրները հաճախ նկարագրում են իրենց ապրած ծանր ժամանակները՝ գործածելով բնորոշ բառեր. «մեծահաւատ լեալ իբրեւ զԱբրահամ յայսմ **խոռվայել** ժամանակի ետ զրել զսա յուրախութին սրտի իւրո», «Գրեալ եղեւ ի դառն և ի **խոռճապուտ** և ի կականման ժամանակի...» (234), «Յայսմ **ամպրոպամած** և ի **վրորվուտ** ժամանակի... » (40):

Բառարաններում չարձանագրված բառերը, ինչպես և նկատելի է, հիմնականում կազմված են բառաբարդմամբ: Վերը բերված այդպիսի օրինակներին պետք է ավելացնել նաև հետևյալները. **մատնատառան** մաղթանը (773), **արքունապատի** զահոյը (678), իբրև զամպ կարկոսածին (702), **թիւնածիզ** լինիմ (թոյն//թիւն բարից) (նույնում կա նաև քարածիզ, 738), **հեշտակարծ** ախտ (751), **յաւեսայելզ** բաղձանք (756), երկիր բուսաբողոք (797), **արքայամուտ** դուռն (797), արբուցանել զօրեսին **անկիւնատիեզերս** (815), **երջանկաջող** մանկունք (837), **տիեզերք/բարողոք** հովիս (861), հոգոց **աստուածատենչաց** (875), հեշտասէր եւ **խակամետք** մեզս (ՆՀԲ՝ խակ՝ նաև՝ «անմարդի, անընդել, դժնեայ») (875), բարձրագույնս և **խառնարգահոյս** (812), անմարմին և **տարրամած** եղութիւնը (625), **մեզսաբարձ** զառն (594), **մշտակրտ** զարութիւն (406), բուռն հարեալ զմշտնձենաժառանգն (614), **աւետարանագոյիս** Սրբոյն Ղուկասու (ավետարանի հատված) (673), **հաւատահաստառ** (105), **մտայօդ** իմացումն (259), **շնորհաշարծալիք** (271), **յորդվանալքս** ոսկոյ և արձարոյ (285), տեր **հաշտակամ** (286), **մարմնադէոն** արեան մերձաւորաց (ՆՀԲ՝ աղէտ «գորով, գութ, սրտցաւութիւն», 313), **ղժընդակաթոյնն** սողնոց (351), **յեռանդնահոս** փափազմանէ (499), միաշունչը և **եզակիտրիդը** (եզ «մի», 667), **աւետանամակ** արձանագրութիւն (849), **զտանահաւար** տառից (849), **միասաբազ** շարայարել (ՆՀԲ՝ սարաս «տարազ, կերպ, ձև», 338), ձահոդասաց **պիտառաբան** (338), **հանրախոս** կտակ (29), սադրանք **ստորայսուտիխն** (437), **խստացան** առարինութիւն (336), «զոր կամեցայ յարինել ի **սպիտակահովիս** իիւրիս սեւաւրիլր թեւով» (ՆՀԲ-ում **հովիս** բացասրված է նաև՝ «նմանութեամբ զոր կամ ծոց և ընդունարան», 837), «վասն այսր հարկի՝ եւ **զիսոնախտրանս** ամսոց առընթեր» (867), «**երկայնահաս**, լայնատարած բազկար» (43), «Նախ վասն ծննդեան Տեառն և մկրտութեանն, և սուրբ պատարագին, և **խաչեցարին**, և զելի և մատաղի» (63), «**զորովադատ** պատժել զստացող սորա, և **զիստացահոս** յաղաւոս ձեր մասնաւորել» (ամենայն հավանականությամբ **համաշափահոս**, 515), «**նորայթարգման** զաւակ ի Սիոն...» (627), «Արաւտեսիցր և **կորովարացր** զաշացս կոյլրս ոգուվ Բարսեր և Ստեփանոս» (650) և այլն:

Հիշատակագիրները հմտորեն են օգտվել նաև հայերենի ածանցումից և տարբեր ածանցների միջոցով ևս կազմել բազմաթիվ նոր բառեր: Բառարաններում չեն ամրագրվել բառածանցմամբ կազմված տասնյակ օրինակներ, ինչպիսիք են՝ **նախածանցալոր բառեր՝ համադէոն** (629), **մակարող** (338), **մականորող** (515), **զերահոս** (529), **տարատրոն** (499) և այլն, **վերջածանցալոր**

**բառեր՝ հանդիսաբրկու** (604), **տաղտապումն** (ՆՀԲ՝ տաղտապէմ «տաղտկութիւն և տաղապանս տալով՝ նեղել հարստահարել») (639), **քազագնեայ** (511), **տարաբերուն** (97), **գետնաշխատութիւն** (729), **աշխատողիկ** (808), **իմաստանց** (706), բանը կրկնորդ (778), **յորնահամեան** սեղան (846), **աշխարհափկասղ** մարդկութիւն (849), **բարմնելի** ամսալթ (313) և այլն, **համածանցավոր բառեր՝ համազնեայ** (417), **հոմազնեա** (281), **մակարայող** (689), **անհեղզալի** (777) և այլն, **բարձագմություն** ընդգրաւել (676), **մարքազանել** (104), **յարգունել** (ՆՀԲ՝ յարգուն «ունակ յարգի և արժեից, յարգաւոր», 343), «**դիմքնդիմսեցին** և հաստատեցին ձեռնգբերովն» (327), «ի սպառուած գրոյս յորժամ **բոլորաջահիք**՝ աւգուութեամբ իբենիազն իմաստէս՝ և դուք ի համայնն ընկալչիք ի բառացի Տեառնէն» (605), «**օրկադասիլ** ընդ աջմէ վեսային» (741):

Նշված բառարաններում չեն վկայվել նաև 13-րդ դարի հիշատակարաններում գրքածկված բազում բառատարբերակներ, որոնք բնութագրվում են թե՝ հնյունական և թե՝ բառակազմական տարբերությամբ՝ հիմնականում ներկայացնելով բառապաշարի գրական և խոսակցական-բարբառային կամ գրաբարյան և միջինհայերենյան շերտերը: Այսպես:

1) հնյունափոխված և անհնյունափոխ հիմքերով տարբերակներ. ա) բառակազմության ժամանակ հիմքի ի վերջնահնյունի ուղղակի պահպանմամբ, և հոդակափացից առաջ պահպանմամբ և է /Է/ միաձույլ հոդով տարբերակներ՝ **բարիկայելուց** (604), **բարիարեր** (675), **հողիանորոց** (208, 520), **հողիանուազ** (377), **հողիալից** (418), **հողիածաւալ** (756), **հողիազումար** (756), **հողէտափիդ** (ՆՀԲ, ԱԲ՝ **հողիառափիդ** «Հոգունյն սրբոյ քնար եղած») (43) և այլն,թ) շեշտափոխությամբ հնյունափոխված և մյուս կողմից անհնյունափոխ հիմքերով տարբերակներ **աստուծատուր** (621), **եղբարորդի** (ԱԲ՝ եղբարորդի) (361), **ուշմութիւն** (667), **քուրադրուսոր** (ՀԲԲ՝ քուրադրուսոր) (108), **զոներանկ** (875), **հանգրյնատիս** (762), **սեաւաթիոր** (ՆՀԲ՝ սեաւաթոյր) (837) և այլն.

2) և դ լծորդ բաղաձայններից որևէ մեկով տարբերակներ՝ **արփիանցոյդ** (349), **մառախղապատ** (178), **լամպարափայլ** (837).

3) հոդակափոխ և անհոդակապ տարբերակներ՝ **զիշերիաւ** (ՆՀԲ, ԱԲ՝ զիշերահաս «տե՛ս շիդց, որն է չոջիկ» (164), **բազմիաւար** (355), **բաժիմուտ** (837), **վերնկառոյց** (604), **ձեռնահաս** (370), **վերալուծութիւն** (626), **սակաւզիծ** (ԱԲ՝ սակաւզիծ «սակավ գրված») (793) և այլն.

4) ուղղականի կամ սեռականի հիմքերով տարբերակներ՝ **արինատու** (ՆՀԲ՝ արինատու «առօղ զմասն նոյն արեան») (556), **զարունագեղ** (ՆՀԲ՝ զարնանագեղ) (772), **սեաւնարան** (ՀԲԲ՝ սիրաբան) (654).

5) բայսիհիմքի տարբերությամբ տարբերակներ՝ **շատինայ** (ՆՀԲ՝ շատինայ) (648), **այցառնութիւն** (ԱԲ՝ այցարարութիւն) (536), (571) և այլն:

Կան հնյունական զանազան այլ տարբերակներ ևս, որոնց չենք անդրադառնում, մանավանդ որ շատերը կարող են գրիչների չիմացության, հետագա աղավաղումների, աղճատումների և վրիպակների հետևանք լինել:

Պետք է նկատել, որ մի շաբթ բաղադրյալ բառեր իրենց կազմությամբ աղերսակցվում են բառարանագրված այլ բառերի ներկայանալով կամ իբրև

սկզբնահիմքեր դրանց համար, կամ կ՝ իբրև նրանցից կազմված ձևեր: Այսպէս. **տարատրոն** (ՆՀԲ՝ տարատրոնին) (499) **մեծաշահավաճառ** արուեստ (ՆՀԲ՝ մեծաշահ, ՀԱԲ՝ շահավաճառ) (797), **աստուածահոսակ** (ՆՀԲ՝ աստուածահոսու) (835) և այլն:

Համապատասխան բառարաններում տեղ չգտած բազում բառեր, հարազատ լինելով ժամանակակից հայերենին կամ վկայված լինելով աշխարհաբարյան երկերում, արձանագրվել են արդի հայերենի բառարաններում<sup>15</sup>, **բարձրաբրուր** (557), **եղակելից** (92), **շնորհառաս** (626), **խաւարափարաս** (713), **անդրնդաննան** (827), **դժուարընթեռնելի** (304), **ալեկոծուն** (684), **կորովարանութիւն** (684), **տղամանուկ** (817), **յորդահեղ** (182) և այլն:

Անշուշտ, վերհանված և քննության առնվազ բառապաշարը կարող է իր որոշակի նպաստը բերել պատմական բառագիտությանը և հայ բառարանագրությանը:

Khachatryan Valentin-New Words in the Armenian Colophons of the 13th Century.-In this article we have discussed the words and word combinations of the Armenian Colophons of the 13th century which haven't ever been recorded in any well known dictionary. They are about 400 in number, and only the most important part of them has been introduced. The rest of them are mainly phonetic variants mentioned in the dictionary. The discussed word stock, of course, can contribute to historical lexicology and Armenian lexicography.

Хачатрян Валентин- Новые слова в записях рукописей 13-ого века.- В статье рассмотрены слова и словоформы, упомянутые в записях армянских рукописей 13-ого века, которые не были зафиксированы ни в одном из соответствующих известных словарей. Их количество достигает около 400, из которых представлена только важнейшая часть. Остальные – это главным образом фонетические варианты слов, приведенных в словарях. Выявленная и исследованная лексика, безусловно, может внести свой вклад в историческую лексикологию и лексикографию.

---

<sup>15</sup>Նկատի ունենք հետևյալ բառարանները. **Է.Աղայան**, *Արդի հայերենի բացատրական բառան*, Ե., 1976: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1969 - 1980:

## ՀԻՆՉԱՅԵՐԵՆՑԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱՁԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ<sup>1</sup>

Ամեն մի բարբառ իր գործառության յուրաքանչյուր փուլում ներկայացնում է բազմաշերտ իրողություն, որի մեջ գուգորդվում են ընդհանուր և բարբառային, լեզվի զարգացման տարրեր փուլերի բնորոշ, բնիկ և փոխառյալ, տվյալ բարբառին յուրահատուկ և ազդեցությունների (այլ բարբառների, նաև գրական լեզվի) հետևանք հանդիսացող, դրւու մղվող և սկզբնավորվող լեզվական հատկանիշներ և միավորներ: Ինչպես բարբառը ընդհանրության մեջ, այնպես էլ այս գուգորդումները շարունակական փոփոխության մեջ են, և բարբառը, լինելով հաղորդակցման կենդանի, բնական, չկարգաբերվող միջոց, գունվում է հարափոխի վիճակում: Իրավացի է Գ. Զահոնյանը, երբ գրում է. «Հայերենի ոչ մի բարբառ որևէ կարողացում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայերենի բարբառների հնյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում»<sup>2</sup>: Հետևում է, որ բարբառների հիշյալ հատկանիշները հարկ է դիտարկել նաև ըստ հայերենի զարգացման տարրեր շրջանների, և ինչպես հուշում է Գ. Զահոնյանը, «բարբառներն ուստիմասիրելիս նրանց նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ունենալ բարբառները միանգամից չեն կազմավորվել նրանց տարրեր բաղադրիչները զայիս են տարբեր հնությունից»<sup>3</sup>: Նման դիտարկումը կարևորվում է երկու առումով. ա) հնարավորություն է տալիս պարզաբանել բարբառի զարգացման ընթացքին առնչվող հարցեր, որոշել բարբառային մի շարք հատկանիշների առաջացման ուղղիներն ու աղբյուրները, նաև բարբառի ձևավորման հետ կապված հանգամանքներն ու հաջորդական փուլերը, բ) բարբառում, իբրև կենդանի խոսքում, գործառող իրողությունների պատճառական կապերի, օրինաչափությունների բացահայտումը թույլ է տալիս մեկնարանել լեզվի զարգացման նախորդ փուլերի համաման իրողությունները: Բացի այդ, բարբառների պատմական զարգացման ընթացքի դիտարկումը նշանակում է լեզվի պատմական զարգացման դիտարկում:

Այս առումով, հասկանալի է, նախ և առաջ ուշադրության են արժանի բարբառներում դրսնորվող հինհայերենյան իրողությունները:

Ընդհանրապես, որևէ բարբառի ներկա համակարգում հնարավոր է դիտարկել նման երեք կարգի իրողություններ.

ա) ընդհանուրհայերենյան հատկանիշներ.

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ № SCS 13-6B382 զիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> Գ. Զահոնյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը. - Պատմաբանասիրական հանդես, թիվ 2-3, Ե., 1959, էջ 311:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 315:

թ) հինհայերենյան շրջանից եկող բարբառային հատկանիշներ.

զ) գրաբարյան համակարգի արձագանքներ, որոնք արդի գրական լեզվում չեն արտահայտվում և համարվում են բարբառային հատկանիշներ:

Բնականաբար, ընդհանուրհայերենյան հատկանիշները բարբառագիտական առումով պակաս հետաքրքրություն են ներկայացնում: Ուստի մեր ուշադրության կենտրոնում հինհայերենյան շրջանից եկող այն իրողություններն են, որոնք բայազետի բարբառում դրսնորվում են իբրև բարբառային հատկանիշներ:

Նախ անդրադառնանք հինհայերենյան շրջանի բարբառային հատկանիշներին: Գիտական բարբառագիտության մեջ հինհայերենյան շրջանին բնորոշ բարբառային մի շարք հատկանիշներ հիշատակում է Հ.Աճառյանը<sup>4</sup>, սակայն երևույթը ավելի հանգամանորեն քննում է Գ.Զահոնլյանը: Նա առանձնացնում է 5-րդ դարի բարբառների համար հավանական համարվող հնչյունաքերականական 130 հատկանիշներ<sup>5</sup> և դրանց օգնությամբ կատարելով այդ դարի բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ ստանում է վեց բարբառ իրենց ենթաբարբառներով ու միջնորդաբարբառներով<sup>6</sup>: Ըստ այդ դասակարգման՝ հարավարևելյան միջրաբրանի մեջ էր նաև Կողովիտի (բայազետի) ենթաբարբառը<sup>7</sup>:

5-րդ դարի բարբառային հիմնական գուգաբանությունների՝ Գ. Զահոնլյանի կազմած ցանկից դուրս թռղնելով ընդհանուրհայերենյան բնույթը ունեցող ինչպես նաև բայազետի բարբառում չդրսնորվող հատկանիշները կատարանք բարբառիս այն հատկանիշների ցանկը, որոնք ունեն բավականին հնություն և թերևս զայս են հինհայերենյան շրջանից: Հատկանիշները ներկայացնում ենք բայազետի բարբառի օրինակներով հանդերձ.

1. Բարասկերի ձայնեղ պայարականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, գ, դ, ձ, շ ~ բ', գ', դ', ձ', շ'), ինչպես բ'ան, զ ոռծ, դ'աս, ձ որ, շ ուր.

2. Ն-ին հաջորդող խուլ պայթականների և կիսաշփականների ձայնեղություն (պ, տ, կ, ծ, ձ ~ բ, դ, գ, ձ, շ), ինչպես հ'ընգեր, հ'ընզընել, էրմունգ, թանգ, խունգ, կրունգ, ձենց, ձընջուխ, տընդրդել.

3. Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզվի համեմատությամբ հավելական շնչի առկայություն, ինչպես հ'ափեղա, հ'ակամա, հ'անքան, հ'ունիք, հ'առիք, հ'էռթիս, հ'էրկէն, հ'ինքը, հ'ըղեղ, հ'ուսում.

4. Հ-ի դիմաց ոչ առնմանական հի, ինչպես՝ խաց, խավ, բ'ախ.

5. Բառասկզբի յ-ի անկայունություն, ինչպես՝ օրօշկըտալ (յօրանց), ախտել (յաղթել).

<sup>4</sup> Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.2, Ե., 1951, էջ 135-138:

<sup>5</sup> Տեղինակը ներառել է 5-րդ դարում հնարավոր համարվող, ակնհայտորեն արխաիկ բնույթ ունեցող, ինչպես նաև մատենագրական ու այլ կարգի վկայություններով 5-րդ դարի համար հաստատվող հատկանիշները: Տե՛ս Գ.Զահոնլյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 168-180:

<sup>6</sup> Տե՛ս Գ.Զահոնլյան, Աշվ, աշխ., էջ 183-187:

<sup>7</sup> Տե՛ս նշվ, աշխ., էջ 185:

6. Ա-ի շրթնայնացման երևույթի առկայություն, ինչպես՝ անուն, կատու, ծանդիկ, մանր<sup>8</sup>.

7. Ե-ի երկրաբառային արտասանություն, ինչպես՝ գ'ետ, դ'եղ, խեղեղ, շերեփ.

8. Ո-ի երկրաբառային արտասանություն, ինչպես՝ խընձոր, ք'օրփու, գ'ոլ, խըմոր.

9. Վերջընթեր վանկի ա-ի թուլացում, ինչպես՝ խասկրնալ, խավսար.

10. Ե-ի սղում դ,ո ձայնորդներից առաջ, ինչպես՝ մըխ, կըխտոտ, թիթըլնեկ.

11. որ(է)այ(ը)-ով հավաքական հոգնակի, ինչպես՝ գ'եղրանք, տեղրանք.

12. Քոյր բառի քեռ, քորք, քերց ձեւերի դիմաց քուեր, քուերք, քուերց ձևեր<sup>9</sup>.

Բայազետի բարբառում քուր բառի սեռականն է քրվոր, որից էլ կազմվում են մյուս ձևերը՝ քրվոր, քրվորից, քրվորով, քրվորտանքը, քրվորտանքով/և այլն.

13. Ուկ-ով դերբայ, ինչպես՝ նրստուկ, քընուկ, ք'էրուկ, դ'ըրուկ:

Նկատելի է, որ բարբառային այս հատկանիշները հիմնականում վերաբերում են հնյունական համակարգին, և այդ հանգամանքը ևս մեկ անգամ խոսում է բարբառի հնյունական համակարգի կայունության մասին: Ի դեպ, հնյունական հիշյալ հատկանիշները Գ.Զահոնվյանը դիտարկում է իրքն բարբառային հնարանությունները և դրանց մեծ մասի ակտոնքները տեսնում նախագրային շրջանում<sup>10</sup>: Նկատենք, որ այդ գուգաբանությունների հիմնական մասը (շնչեղ ձայնեղների առկայություն, հ-ի դիմաց ոչ առնմանական իւ, ա-ի շրթնայնացում, ե-ի և ո-ի երկրաբառային արտասանություն, վերջընթեր վանկի ա-ի սղում) այսօր էլ Բայազետի բարբառի ամենաբնութագրական հատկանիշներն են<sup>11</sup>: Այս խմբի սակավաթիվ քերականական գուգաբանու-

<sup>8</sup> Ի դեպ, հնարավոր է նաև ա-ի շրթնայնացածության առումով բարբառում գրաբարյան իրողության արտահայտություն, որը մեզ հուշում է Է.Աղյանի ուշագրավ մի դիտարկումը: Մենք արդեն ցոյց ենք տվել որ շրթնայնացած ա-ն, լինելով ահնութիւնի դիրքային տարբերակ, իր յուրահատուկ արտասանությամբ և գործառական հատկանիշներով Բայազետի բարբառի բնութագրական իրողություններից է (Տե՛ս ս. **Վատովյան**, «Ա» ձայնայորի դրսուրումները Բայազետի բարբառում և «Աճաւայնի օրենքը», Բաներե Երևանի համասարանի, Բանասիրություն, 2012, 137.2, էջ 48-63): Է.Աղյանի կարծիքով՝ հնարավոր է ենթադրել, որ դասական գրաբարի ա-ն «որոշ դեպքերում արտասանվել է որոշ շրթնայնացումով, որ հանգեցրել է նրա փոխանցմանը օ-ի՝ մի շարք բարբառներում: Այդ շրթնայնացումն ավելի զգայի է եղել աւ երկրաբարակ մեջ, որ և պատճառ է դարձել աւ > օ փոփոխության բաղադայնից առաջ Այսպիսով, կարող ենք ընդունել ա-ի թույլ շրթնայնացած տարատեսակը (ա°) գրաբառում, որ, սակայն, հնչութային արժեք չի ունեցել» (Տե՛ս ս. **Է.Աղյան**, Գրաբարի քերականություն, Ե., 1964, էջ 221):

<sup>9</sup> Տե՛ս նաև **Է.Աղյան**, Բարբառային հնագույն տարբերակներ հայերենում.- ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), թիվ 5, Ե., 1958, էջ 73-74:

<sup>10</sup> Տե՛ս ս. **Գ.Զահոնվյան**, նշվ. աշխ., էջ 260-270:

<sup>11</sup> Տեղին է հիշատակել Գ.Զահոնվյանի մեկ այլ դիտարկում ևս. «...բարբառային արդի տարբերությունների զգայի մասը հիմքեր ունի բարբառային ավելի հին տարբերությունների մեջ:

թյուններից բարբառիս համար առավել էական և բնութագրական է ուկ-ով դերբայի վկայությունը:

Բարբառային հնարանությունների մեջ կարևոր տեղ ունեն գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք, կազմություն ունեցող, ինչպես նաև գրաբարում չվկայված հնեկվրպական արմատները<sup>12</sup>: Բայազետի բարբառում գրաբարի համեմատ հնչյունական յուրահատուկ կազմություն ունեցող բառերից են, օրինակ՝ տ(ո)րոփել – տըրըփալ (բաբախել). Գերք – փըրթիկ (փոքր կտոր), բողբոց – բ ըսպուճ. լակել – լրկել. Կոկոն, կոկոս, կոնկոս – կօկօ (գուլի), կօկօլ (անպոչ հավ). Մողեկ – մօօզիկ, թօթափել – թախտըփել և այլն: Գրաբարից տարբեր կազմություններ են ներկայացնում հետևյալ բառերը՝ մեզ – մըքըլկել. Չնշել – շ ընջըխել. զգեստ – զ եստ. ծմակ – ձ ըմա. հանգել – խանք. սպարդել – սրբրուց (մրսելուց գույնը զցել). Թիղմ – տիլ և այլն: Բայազետի բարբարից գրաբարում չվկայված հնեկվրպական արմատներից են՝ բ ըփուկ (փետուր), տնառք (թրիքի տափակեցված շերտ), տըրաքել (ձայթել), կավառ (շրի թմրամեց տանող ուղին փակող հողաշերտ), կըլմըրօստիկ (գուլիկոնծի), կըռտել (կաշին այրվել), լաքօ (լայնաբերան), քըռփըշտուն (անհարթ), քըռնուկ (ծաղկատար), գրողշտել (իրել), փըմփուխ (ուռած և փափուկ), սըլու (սառնամանիք), սըլին (սառուցի բարակ շերտ ջրի վրա), շենքել (լայն քայլով անցնել մի բանի վրայով), լախ (փշացած ձու, ձմերուկ)<sup>13</sup>, լրնգ ու լավլաց (անպետք մարդ)<sup>14</sup>, լավօթել (անարգական խոսքերով անպատվել), լիժ, լըժիկ (ողորկ, սահուն), լըխել (սկսել հալչել)<sup>15</sup>, լօնք (մեծ քայլ)<sup>16</sup>, լըփ (քուռ), մալամըշել (տխուր-տրտում նստել), մառ (շտաշված փայտից մատը մտած շյուլ), կըմուք (քիմք), պըլպըլալ – փայլիկել, տըսկել (թրջել) և այլն<sup>17</sup>:

Բնականաբար, հինհայերենյան բարբառային վիճակը գրաբարի հետ ունեցել է հնչյունաբերականական ու բառապաշարային էական ընդհանրություններ: Դրանց մի մասը նոր շրջանում պահպանվել կամ արտացոլվում է միայն բարբառներում՝ այդպիսով ընկալվելով իբրև բարբառային հատկանիշ: Բայազետի բարբարի գրաբարյան համակարգին առնչվող բարբառային հնչյունաբերականական հատկանիշներից են.

## 1. Գրաբարյան Հ-Է հարաբերության արտացոլում.

Իրողության համեմատական դիտարկումը գրաբարում և Բայազետի բարբառում երեան է բերում շեշտակիր վանկում երկու միավորների բաշխման կանոնական համապատասխանություն, ընդ որում երկու դեպքում էլ հնչյունի գործառույթը հաճախ պայմանավորված է հաջորդ բաղաձայնի որա-

Դրանց թվին են պատկանում հատկապես հնչյունական որոշ կարևոր հատկանիշներ» (**Գ. Զահուլյան**, նշվ. աշխ., էջ 189:)

<sup>12</sup> Տե՛ս նշվ. աշխ., էջ 277-330:

<sup>13</sup> Գ. Զահուլյանը այս բառը վկայում է լակ ձևով (տե՛ս նշվ. աշխ., էջ 294):

<sup>14</sup> Գ. Զահուլյանի աշխատանքում՝ լապազ (տե՛ս նշվ. աշխ., էջ 295):

<sup>15</sup> Գ. Զահուլյանի աշխատանքում՝ լիճ (տե՛ս նշվ. աշխ., էջ 296):

<sup>16</sup> Գ. Զահուլյանի աշխատանքում՝ լոր (տե՛ս նշվ. աշխ., էջ 297):

<sup>17</sup> Օրինակները բերվում են ըստ Գ. Զահուլյանի տվյալների (նշվ. աշխ., էջ 283-330):

կով<sup>18</sup>, ինչպես՝ կէս, աղվէս, դ' էզ, քառտէզ, բ' ըփորէծ, գօմէշ, բ' եռ, ձ' եռ, ասեղ, դ' եղ, թէփ, ծէփ և այլն:

2. Գրաբարյան *յ-հ* հարաբերության արտացոլում.

Բարբարի հինհայերենյան բառաշերտում բառասկզբի գրաբարյան *յ-ի* դիմաց ունեն *հ*, իսկ գրաբարյան *հ-ի* դիմաց՝ *իւ* (օրինակ յոյս – *հ* ուս, հաց - խաց): Այսինքն՝ հին բառաշերտում պահպանված *հ-իւ* հարաբերությունը համապատասխանում է գրաբարյան *յ-հ* հարաբերությանը<sup>19</sup>:

3. Բազմավանկ բառերի սկզբում *է*, ո պարզ ձայնավորների նախական, անհնյունափոխ վհճակի պահպանում, ինչպես՝ երկու (երկու), երեքավալ (երեւալ), օղբղել (ողողել), օսկոռ (ոսկը):

4. Գրաբարյան Ա վերջադրական հոլովման արտացոլում.

Հասովկ տեղանունները բարբառում պահպանել են հինհայերենյան հոլովման հատկանիշներ՝ Հերեվան (ը), Հերեվնա (ն), Հերեվնա, Հերեվնօվ:

5. Ներգոյական հոլովի իմաստի արտահայտում ոչ հոլովական վերջավորությամբ.

Բայազետի բարբառում այս հոլովի իմաստն արտահայտվում է կա՛մ հայցականով, կա՛մ *մեջ* կապով, ինչպես՝ *Տրդէն հ'ամալսարանն ասօրվում, գ'ըրդէրը սումկի մէշն ա դ' ընուս*:

6. Բացառական հոլովի է վերջավորության արտացոլում.

Բարբառում սովորական է *ից* (ուց) վերջավորությամբ բացառականը, սակայն հազվադեպ չէ նաև է-ն, ինչպես՝ *օրէ, տրնէ, մըկալնէ, մօրէ, դ'ըսէ դ'ուս, վոտէն գ'ըլօն, քեզնէ* և այլն:

7. Գրաբարյան *այս, այդ, այն* դերանունների երկար ձևերի *իկ* մասնիկի արտացոլում.

Բարբառում *իկ* մասնիկ կամ նրա կրձատ *ի* ձև հանդիպում է և ցուցական, և՝ անձնական դերանունների համակարգերում, ինչպես՝ *ընձիկ, ընձիկ, քեզիկ, քեզիկ, մեզիկ, մեզիկ, ձ'եզիկ, ձ'եզիկ, էսիկ, էսիկ, էտիկ, էնիկ, էնիկ*<sup>20</sup>:

8. Գրաբարյան *ո՞, ո՞վ* դերանունների ձևերի արտացոլում.

Բարբառում *ո՞, ո՞վ* դերանվանը համապատասխանող ձևն է *վո՞ն* (*Վո՞ն ա զ'ացէ - Ո՞վ է զնացէկ*), իսկ *վիր* սերականը համապատասխանում է *ոյր* ձևին (*Էսի վիր զիրքըն ա - Սա ո մը զիրքն է*):

9. Սեռի արտահայտություն ներգործած և կրավորած վերջավորություններով.

Բայազետի բարբառում նույնպես մի շարք դեպքերում բայի սեռը արտահայտվում է համապատասխան ներգործած և կրավորած վերջավորություններում.

<sup>18</sup> Տե՛ս **Վ.Կատվայյան**, *Մերուսյան է, է զրերի ուղղագրությունը և հնյունական արժեքը*, Ե., 2006:

<sup>19</sup> Տե՛ս **Վ.Կատվայյան**, Հ-Խ հնյունների համապատասխանությունը հայերենի բարբառներում. - *Պատմաբանայիրական հանդես*, թիվ 3, Ե., 2007, էջ 163-172:

<sup>20</sup> Տե՛ս **Վ.Կատվայյան**, *Ցուցակն դերանունների դրսնորման առանձնահատկություններ հայերենի բարբառներում. - Հայկագրան հայագիտական հանդես*, Բեյրութ, 2011, էջ 413-427:

թյուններով, ինչպես՝ անցյալ կատարյալում՝ *բ' էրի, մօղթի* (ներգ. սեռ) – *մըռսս, նըստա* (չեզոք սեռ), հրամայականի եզակիում՝ *գ ըրկա, բ ըռնա* (ներգ. սեռ)–*թըրի, քընի* (չեզոք սեռ), նաև՝ *կօդրէց* (կոտրեց) – *կօդրավ* (կոտրվեց)<sup>21</sup>:

### 10. Հասարակ բայերի առկայություն.

Բարբառում որոշ բայեր մի շաբթ դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել ինչպես ներգործականության, այնպես էլ չեզորության կամ կրավորականության իմաստներ, ինչպես՝ *Էտ կօֆէն քօ ձ նորի ա թափէ,* *հիրան-հիրան ա թափէ*, *թէ՝ էնի յա թափէ* (Այդ սուրճը քո ձեռորով է թափել, իրեն-իրեն է թափել, թէ՝ նա է թափել): Նման բայերից են՝ *բ ըռթէլ, թացուել, ճըլիսէլ, ծըռէլ, կըդրէլ, կըխոսուել, շըռձէլ, ջ առթէլ, վառէլ* և այլն<sup>22</sup>:

### 11. Եզակի հրամայականի գրաբարաձև վերջավորության արտացոլում.

Եթե գրաբարում Ե խնարիման պարզ բայերը ներգործաձև խոնարիման դեպքում բուն հրամայականի եզակի թվով վերջավորվում էին եա՝ մասնիկով, ապա Բայազետի բարբառում նույն այդ դեպքում բայերն ունենում են ա վերջավորություն, ինչպես՝ գրեա՝ գը ըրա, սիրեա՝ սիրա : Կարծում ենք՝ գրաբարյանի հետ ընդհանուր նախնական ձևից ե-ի անկումով է առաջացել ներկայիս բարբառային հրամայականի ձևը:

Բացի հնյունաքերականական հատկանիշները, Բայազետի բարբարի, մասնավորապես՝ բառապաշտի բնութագրական իրողություններ են նաև պահպանված գրաբարյան այն բառերը, որոնք գրական լեզվում չեն գործառում կամ սակավ են գործառում: Նման բառերից են՝ հ առիք (առիք), հ անքան (անազան), հանքընալ (անազանել), անքընակ (աղեղնակ), հ ընթել (անթել՝ թեկի տակ դնել), անխեռ-անխայի (անխեռ՝ խելոք, հանդարտ), հ ատըկել (ատոկել՝ հոգսից ազատվել), զ ըլխըլըրել (զիխվայրել), հ էրկէն (երկայն), զատ (զատ՝ հեռու), զօրել (զօրել ուժը պատել), խափան (խափան ընդհատում), խօլոր զանել (խոլորել), կալուկապ (կալ եւ կապ), կուշտուախն (կշտապինյ), կըռնել (կրանել), խուրուխըրեղեն (խուրն ի հրեղեն), մընձըրել (մանձ-ըել՝ խանձվել), մուխ (մուխ՝ ծուխ), հ խստըկել (խսակել), օղոռթ (ուղոռդ), պաքել (պազանել), փոնք (փոք՝ ծալք, ոլորք) և այլն:

Այսպիսով, բերված փաստերը վկայում են, որ Բայազետի բարբարի մի շաբթ էական հատկանիշներ՝ թե՛ գրաբարից տարբեր և թե՛ գրաբարին համբնկնոր, զայիս են հինհայերենյան շրջանից<sup>23</sup>: Այդ հանգամանքը թույլ է տալիս պնդել, որ Բայազետի բարբարը իր արմատներով ձգվում է մինչև մի

<sup>21</sup> Ավելի հանգամանորեն տե՛ս **Վ.Կատվայան**, Բայի սեռը Բայազետի բարբառում.-*Բանքեր Մատենայաբանի*, Ե., 2012, թիվ 19, էջ 379-387:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>23</sup> Ղարաբարի բարբառում համաման իրողություններ դիտարկել է Լ. Հովհաննիսյանը՝ եզրակացնելով, որ «Պատմական և լեզվական նիսանօրինակ փաստերը հավաստում են, որ Արցախ-Սյունիքում հայերեն սկսել է գործածվել հայ տարբերի կազմավորման ընթացքին գուցահետ»: Այդ տարածքում գործածվել հայերենը բազում դարերի ընթացքում կրկնվու զայիս փոփոխություններ, մեզ է հասել մի վիճակով, որը կոչվում է Ղարաբարի բարբառ» (Տե՛ս և Լ. Հովհաննիսյան, Գրաբարի և Ղարաբարի բարբարի առնչության հարցի շուրջը.-*Պատմաբանակիրական հանդես*, թիվ 1, Ե., 1977, էջ 151):

հնագոյն բարբառային վիճակ, որը որոշակի տարածքում հայերենի դրսնորում էր դեռևս նախագրաբարյան շրջանում: Բայազետի բարբառի և գրաբարի ընդհանրությունները վկայում են ոչ միայն այն մասին, որ բարբառու եղել է գրաբարի համար հիմք դարձած բարբառախմբում կամ մերձավոր հարաբերություններ է ունեցել դրանց հետ, այլ նաև այն մասին, որ գրաբարը խևապես իր հնչյունական կազմությամբ, քերականական համակարգի շատ իրողություններով ներկայացնում է ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն և դրա մշակված, գրական լեզվի մակարդակի հասցված վիճակն է<sup>24</sup>:

Viktor Katvalyan - Old Armenian Realities in the Dialect of Bayazet.- Observations show that a number of significant features in the dialect of Bayazet, that are either differing from Grabar (Old Armenian) or matching with it, derive from Old Armenian period. It follows that the origin of the dialect of Bayazet traces back to an ancient dialectical situation which existed as a speech variant of the Armenian language in a certain area still in pre-grabarian period. These common features of the dialect of Bayazet and Old Armenian verify not only the fact that this dialect was included in or kin to the group of dialects on the basis of which Grabar was developed, but these features also come to certify the fact that Grabar with its phonetic structure and a number of realities in its grammar system really presents the spoken colloquial language of that time and has developed into a literary language level.

Виктор Катвялян - Древнеармянские реалии в диалекте Баязета.- Наблюдения свидетельствуют о том, что ряд значительных признаков в диалекте Баязета, как отличных от грабара, так и совпадающих с ним, проистекают из древнеармянского периода. Следует, что диалект Баязета своими корнями простирается до такого древнего диалектного состояния, которое на определенной территории являлось проявлением армянского языка еще в период предшествующий грабару. Общности в диалекте Баязета и грабаре свидетельствуют не только о том, что указанный диалект был в группе диалектов, ставшей основой грабара, или имел родственные отношения с ними, но и о том, что грабар действительно по своей фонетической структуре, многими реалиями грамматической системы представляет народно-разговорный язык своего времени и является его обработанным, доведенным до уровня литературного языка состоянием.

<sup>24</sup> Բայազետի բարբառի՝ գրաբարին առնչվող իրողությունները որևէ կերպ չեն կարող բացատրվել բարբառին վրա գրաբարի ազդեցությամբ, որովհետև նոյնիսկ մեր օրերում գրական լեզուն որևէ բարբարի վրա համակարգային նման ազդեցություն չունի:

## ԴԱՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՍՎԱԾԱՇԽԵՐ ՈՐՈՇ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աստվածաշնչի բառապաշարը, թարգմանության հետ կապված առանձ-նահատկությունները բառ ամենայնի քննվել են հայ և օտար ուսումնասիրող-ների կողմից, իսկ Գրքի բառապաշարը, կարելի է ասել, ամրողապես արտա-ցոլված է Նոր հայկացան բառարանում (այսուհետև՝ ՆՀԲ):

Աստվածաշունչը, բացի իր հիմնական գործառությունից, կարևորվում է նաև որպես հայ գրական (գրավոր) լեզվի կազմավորման և զարգացման հետազա ընթացքը ուղղորդելու տեսանկյունից: «Աստվածաշունչը հրեական ու հոնինական բնագրերից վերածվեց հայկական բնագրի, որ զարմացրեց աշխարհահռչակ աստվածաշնչագետներին իր թարգմանական արվեստով ու ինքնուրույնությամբ և կոչվեց Դժիոյ համօրէն թարգմանութեանց Սուլր գրոց»<sup>1</sup>:

Սույն հոդվածում որոշ դիտարկումներով կանդրադառնակը Ս.Գրիգի գրաքար և աշխարհաբար մի քանի հատվածների՝ համեմատելով այլ լեզուներով կատարված թարգմանությունների հետ\*:

Հին կտակարանից. *Տիգօք աշաց խաղաց ի վերա իմ* (Յոր, ԺԶ, 10): Արևելահայերեն թարգմանված է. «աչերի տէզով շարժուել [են] ինձ վրա», արևմտահայերեն՝ «սուր աչերով ինձին նայեցա»: Վերջինս համեմատարար միշտ թարգմանություն է. հմմտ. հուն. ακίσιν οφθαλμών (հուն. ακίς «սուր ծայր, ծայր, նետ»)<sup>2</sup>, ոռուս. «острят на меня глаза свои»: Գրաբար թարգմանության մեջ նկատի է առնվել տէզ-ի սուր ծայր ունենալը:

Հ. Աճայինը տեղ աշաց-ը թարգմանում է «չպ նայվածք»<sup>3</sup>: Վերոբերյալ հասպած կարելի է թարգմանել «սուր հայացք նետեց ինձ վրա»:

Թիւրեալն՝ ոչ կարասց՝ զարդարել, եւ պակասեալն՝ ոչ կարասց ի թիւ անկանել (Ժող., Ա, 15): Զարդարել-ը արևելահայերեն թարգմանված է «ուղել», արևմտահայերեն՝ «շտկուի»:

<sup>1</sup> Վ.Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը. Ե., 1984, էջ 13-14:

\* Оғынбілі өнім құндауып, һарашар ақындар түрмөніндеңдік. ә) **Ասոռուածաշոնես** мәситкән әзін ғылыми ақындар анында, ըստ Әзгріхан ရարգմանութեան Խախնеңдегі մінгрек. համեմատութեամբ երրայշ-կան ғылыми ақын рұнақтарын, Վիենнаның 1929 р., թ) **Ասոռուածաշոնես** мәситкән әзін ғылыми ақындар анында. Аргентина мәдениетіндең әңгэр քарғамалыңнанырхин, ғылыми ақындар ақындар түрмөнін, Егембайадібін, 1999 р., ғ) **Ասոռուածաշոնես** գիրք әзін ғылыми ақындар анында. Ерраяшылдың ғылыми ақындар анында. Moscow, 1994, դ) **Библия:** книги священного писания Ветхого и Нового Завета, М., 1994, է) La Bible Ancien et Nouveau Testament, 1991, զ) Septuaginta id est Vetus Testamentum graece iuxta LXX interpreses edidi Alfred Rahlfs, է) The Greek New testament. fourth Revised edition, ն) Biblia Sacra Vulgata, Stuttgart, 1994:

<sup>2</sup> Ст. и Древнегреческо-русский словарь. Составил И.Х. Дворецкий. т. II, М., 1958, стр. 1635.

<sup>3</sup>Տե՛ս Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (պատմելով՝ Արմ.), հ. 4, Ե., 1979:

ՆՀԲ-ն *զարդարել* «ուղղել» իմաստը չի նշում: Գրաբար Աստվածաշնչում ծանոթագրվում է, որ *զարդարել*-ի համապատասխանակը երրայերենում *ուղղել* է: Այլ լեզուներով թարգմանություններում նույնպես այդպես է. ոռու. «*Кри-  
вое не может сделяться прямым*», ֆր. «ce qui est tordu ne peut pas se redresser»:

Թեև ՆՀԲ չունի *զարդարել* «ուղղել» բառը, սակայն, արդ (հ.-ե. art հմմտ. հուն. αρτος «կարգավորություն, արտ-ուսու «ոստքերը ուղիղ») արմատով հայերեն բազմաթիվ և բազմիմասն բառերի առկայությունը հուշում է, որ այն ունեցել է և «ուղիղ» իմաստը: ՆՀԲ-ն ունի *արդակել* «ուղղել» բառը՝ վկայված V դարից: Այդ իմաստն առկա է *արդար* հիմքով մի շաբթ կազմություններում՝ *արդարախոս, արդարագնաց, արդարակ* «ուղիղ», *արդարախոտ*:

Որդի մարդոյ, զոր ինչ զոտանես ի դմա կեր. կեր մանր զմատեանդ զայդ (Եզեկ., Գ. 1): Այս նախադասությունը նախորդում է «Տեսի, եւ ահա ձեռն ձգեալ առ իս, և ի նմա մատեան մի գոյ» (Բ. 9):

Ի՞նչ է նշանակում *մատեան զրոյն*: Արևելահայերեն թարգմանված է «մազաղաթ»: «Մարդո և որդի, ինչ որ դրա մեջ զոնես՝ կեր. մանր-մանր կեր այդ մազաղաթը...», արևմտահայերեն՝ «Որդի մարդոյ, այդ տոմսը կեր...» ՆՀԲ *Մատեան* բառահոդվածում վերոհիշյալ *մատեան զրոյն* թարգմանում է «Գը-  
լուխ գործոց»՝ նկատի առնելով հունարեն բնագրի կեֆալիս թիթլուս համապա-  
տասխանակը: Հունարենում և գրաբարում զլուխ բառը բազմիմասն է՝ ունե-  
նալով նաև «զլսավորը, էականը» իմաստը, բայ ՆՀԲ-ի՝ «զլսակարգութիւն  
գրոց, ճառ, հասուած...»):

Ուրեմն՝ ՆՀԲ-ի «զլուխ գործոց»-ը արդի հայերենի «լավագույն գործ,  
երկ» իմաստը չունի:

Ուշադրություն դարձնենք *մազաղաթ* բառի ՆՀԲ-ի մեկնությանը՝ «նուրբ մաշկ մորթոյ զարանց և ուղից. յիկեալ ի պէտս զրութեան որպէս թուլդ տևական. որ է դիրաւ զալարելլ» (ընդգծումը մերն է Լ.Զ.): Այս բացատրու-  
թյունը հաշվի առնելով՝ Եզեկիելի վերոհիշյալ հատվածի զրաբար *մատեան*, արևելահայերեն *մազաղաթ* պէտք է հասկանալ «քղի, մազաղաթի վրա գրվածք, որը զլանաձև փարարված էր, թղթափարեթ»: Այդ նրբիմաստը ավելի ցայտուն արտահայտված է օտար լեզուներով թարգմանության մեջ. Հմտ.  
ոռու. «съешьте этот свиток», ֆր. Mange ce rouleau (Գ. 1), «... que tenait un livre, en  
forme de ruleau» (Բ. 9):

Ինչ վերաբերում է արևմտահայերեն թարգմանության տուսն բառին, այն հուն. տօմօս-ն է «պատառիկ, ձեռազբի մաս» (փարեթի ձևով):

*Տեսէք ինձ այր մի որ բարտոք երգիցէ եւ ածէք զնա առ իս* (Ա. թագ., ժԶ, 17): Ուշադրության արժանի է *տեսէք* և *երգիցէ* բառերի թարգմանությունը: Արևելահայերեն՝ «Գտէք մի մարդ, որ լաւ է նուազում», արևմտահայերեն՝ «Հիմա ինձի աղեկ քնարահար մը զուեք»: Գրաբարի բառարանները *տեսնելի*

«զտնել» իմաստը չեն նշում: Հուն. Շիճակ բազմիմաստ է, և «տեսնել, նայել»-ից գատ ունի նաև «որոնել, գտնել» իմաստը<sup>4</sup>:

Երգել-ը գրաքարում բազմիմաստ է. ըստ ՆշԲ-ի՝ «նուազել զերզու, եղանակել, յօրինել և ասել զերածշտական բանս, սաղմոսել, երգել թնարաւ...»: Այս բազմիմաստությունը երբեմն երգել-ի ձիշտ թարգմանության հարցում, որոշակի դժվարություններ է ստեղծում. իիշենք Խորենացու «Երգել ձեռամբը»-ը, որը տարբեր մեկնություններ ունի: Վերոհիշյալ օրինակում երգել-ի հուն. համապատասխանական պահանջանք չեն: Վերոհիշյալ օրինակում երգել-ի հուն. համապատասխանական պահանջանք չեն:

Շարժելով շարժեսից երկիր... Իրբեւ զարբեալն եւ սիսալակ, զլորեսիցի եւ և մի՛ կարասց կանգնել (Եսայ., ԻԴ, 20): Արմատական բառարանում սիսալ և սիսալակ-ը առանձին գլխաբարեր են: Վերջինիս համար նշվում է «հարբած» իմաստը՝ վկայակրոշելով Ս.Գրիգոր Վերօնդյալ հատվածը: Գ. Զահոնիյանի բառարանում սիսալ «սիսալ, պակաս» բառահոդվածում սիսալ արմատով բաղադրությունների շարքում առկա է և սիսալակ-ը<sup>5</sup>:

Արրեալ-ը և սիսալակ-ը հոմանիշներ չեն: Սիսալակ նշանակում է «հարբածությունից երերող, օրորվող»: Այդպես էլ թարգմանված աշխարհաբար. «Հարբածի ու երերուողի պէս պիտի զլորուի և պիտի չկարողանայ կանգնել»:

Եթե Արմ-ի մատնանշած մի քանի այլ օրինակների դեպքում սիսալակ-ը կարող է ունենալ «հարբած» իմաստը, ապա մեզ հետաքրքրող վկայության մեջ այդպես չել:

Ի դեպ, ՆշԲ-ն իրավագիրքեն նշում է «գայթու որպէս զարբեալ»: Գրաքարի և հունարենի նշված հատվածները համեմատելով՝ Ա.Մելեն նկատել է շարադասական մի առանձնահատկություն, որով հիմնավորվում է սիսալակ-ի նրբիմաստը: «Եսայի մարզարեի այս հատվածում Յոթանասնիցը և հայերեն թարգմանությունը, թեև Վերջինս կախում ունի առաջինից, տողերի հերթականության և այս հատվածն արտահայտելու ձևի մեջ ներկայացնում են բավականին մեծ տարբերություններ... սակայն արժե նկատել, որ հայերեն բնագրի ձեռագրային համեմատությունը լավ է բացահայտում սիսալակ բարի իմաստը... երկիրը ինչպես հարբած մարդ, դողում է, երերում, տատանվում և փուլ գալիս»<sup>6</sup>:

Սիսալակ-ը պահել է հ.-ե. համապատասխան արմատի (ըստ Արմ-ի սղալ, ըստ Մելենի և Զահոնիյանի \*skhal- \*skhel-) «սայթարել, երերալ, տատանվել», նախնական իմաստը:

Իրբեւ դարձաւ նա ի պարսից եւ ի պարթեաւց (Ա.Մկր., Զ. 56): Պարթեպ-ը որպէս տեղանուն կրկնված է նոյն գրքի մեկ այլ հատվածում. «Եւ զրագա-

<sup>4</sup> Տե՛ս և Ճարուելու, նշվ. բառարանը, հ. I, էջ 460: Արդի հայերենում էլ առևնել ունի նաև «զրունել» իմաստը (Տե՛ս և Է.Աղայան, Արդի հայերենի բացահայտական բառարան, Ե., 1976, էջ 1436):

<sup>5</sup> Տե՛ս և Ճարուելու, նշվ. բառարանը, հ. II, էջ 1794-1795:

<sup>6</sup> Գ. Զահոնիյան, Հայերեն սոսուզաբանական բառարան, Ե., 2010, էջ 682:

<sup>7</sup> Ա.Մելեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 64-65:

տրսն, որ ըստ նմանէ էին, տալ պատանդս եւ գրաւականս եւ զաշխարհն Հնդկաց և Պարթեւաց» (Ը, 8):

«Գիրք Մակարայեցւոց»-ի բննական բնագրի կազմող չ. Ամայանը գըրում է. «Մակարայեցվոց գրքերի հայերեն թարգմանության համար հունարեն Յոթանասնից բնագրից բացի այլ բնօրինակ ենթադրելու հիմք չկա: Այդ բնօրինակից է թարգմանված ամբողջ Աստվածաշունչը... Եթե մի շարք այլ գրքերում հանդիպում են ինչ-որ ավելի հին բնօրինակներ ակնարկող լեզվական փաստեր, գիշակորապես ասորերենի հետքեր, ապա Մակարայեցվոց գրքերն ազատ են նման իրակություններից և ամբողջությամբ թարգմանված են հունարենից»<sup>8</sup>:

Հայ թարգմանիչը «շեղվել է» բնագրից: Հունարենում Պարթեւք տեղանվան համապատասխանակը Միդիա է: «Պերսիօս և Մեծած»: Լատիներեն, ֆրանսերեն Աստվածաշնչում ևս այդպես է «Perside et Media», «... de Perse et de Médie...»:

Մեղիան սովորաբար հայ թարգմանիչները թարգմանում են *Մարք, Մարաստան, Մակարայեցվոց գրքում՝ Պարթեւք*: Եթե հունարեն բնագրի հետ անհամապատասխանությունը երկրի անվան հարցն է, ապա բովանդակային առումով հայերեն թարգմանությունը շեղում չպետք է համարել, որովհետև Մակարայեցվոց գրքի նշված գումաներում կատարվող իրադարձությունների ժամանակ Մարաստանը (Մեդիան) արդեն գոյություն չուներ, բացի դրանից, ինչպես նկատում է Խորենացին. «Աստուածային գիրն զամենայն Արեաց աշխարհն Պարթեւք կոչեն վասն թագաւորութեան ի նոցանէ լինելոյ»<sup>9</sup>:

Ս. Գրքի մեկ այլ գրքում նույնպես հանդիպում ենք *Պարթեւք* բատին, որը թերևս միայն հայերեն Աստվածաշնչում է. «... ածել յորդոց գերութեանն Խսրայելի և ի զաւակէ թագաւորութեանն եւ ի Պարթեաց Մանկունս անարատս» (Դան. Ա. 3): Ծանոթագրվում է, որ երրայական բնագրում չկա «գերութեանն», իսկ պարթեացի փոխարեն իշխանաց է: Այդպես է ոռւսենում. «...чтобы оно из сынов Израилевых, из рода царского и княжеского, привел»: *Պարթեւացը* չկա և հունարեն բնագրում, որից օգտվել են հայ թարգմանիչները: Նշված անհամապատասխանությունը թերևս թարգմանիչների սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտությունն կարելի է համարել, յուրօրինակ հարգանք պարթեների նկատմամբ՝ կապված հայ իրականության մեջ նրանց ունեցած դերի հետ:

Մի՛ պատժեք եւ ոչ պատժիցիք, արձակեցեք և արձակիցիք (Ղուկ. Զ. 37): Արձակել նշանակում է «ներել». Հմմտ. «ներեցեք, եւ ներում պիտի գտնեք Աստծուց», ոռւս. «прощайтте, и прощены будете», ֆր. «pardonnez aux autres et Dieu vous pardonnera»: Հուն. ἀπό-λύω-ν բազմիմաստ է և ունի «ներել» իմաստը<sup>10</sup>:

<sup>8</sup> Գիրք Մակարայեցւոց. Քննական բնագրի. աշխատ.՝ Հ.Ս.Ամայանի, Ե., 1996, էջ 6:

<sup>9</sup> Աշխարհացոյց Սովորի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց (Մատենագիրը Հայոց, հ. Բ, Եղար, Անդիլիսա-Լիբանան, 2003, էջ 2158):

<sup>10</sup> Տե՛ս ո *Ճարութեական պատճեան*, հ. I, էջ 208:

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անունքո (Մտթ. Զ, 10): Հունարեն բնագիր պատեր դման օ ևն տօῖս օ՞րաօօօս հատվածը աշխարհաբար թարգմանված է տարրեր ձևով. «Հայր մեր որ երկնքում ես», «Հայր մեր երկնաւոր» (Անթիլիաս, 1993, Երևան, 2001):

Թարգմանական այս նրբությունները նկատելի են նաև այլ լեզուներով հրատարակված Աստվածաշնչում. Հմմտ. ոռու. «Օ՛՛ հա՛՛ սցոյ ի հեծեսախ», «Օ՛՛ ու հեծեսնի»:

Իհարկէ, երկնավոր ածականի կամ երկնքում գոյականի կիրառությունը ըստ Էության չի փոխում նախադասության իմաստը. Մեր նկատառումը վերաբերում է երկինք գոյականի եզակի<sup>11</sup>, թէ հոգնակի թվով թարգմանելուն:

Նշենք, որ գրաբարում թեև հաճախական է երկինքի հոգնակի ձևը, բայց այն անեզական չէ: Գործածվում է և երկինն-ը: Այդպես է հենց Ս. Գրքի առաջին նախադասությունը. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր» (Ծննդ., Ա., 1): Նկատել ենք, որ միայն պարսկերեն թարգմանության մեջ է հայր մեր, որ յերկինս հատվածի երկին բառը դրված եզակի թվով. «Փեղար ի մա, թէ դար ասմանի»:

Յերկինս գրաբարի երկին բառի հոգնակի ներգոյականի ձևն է, և կարելի է թարգմանել «երկինքներում»: Մեր այս դիտարկում- առաջարկը հիմնավորվում է օտար լեզուներով կատարված թարգմանությունների համեմատությամբ: Ստորև բերվող բոլոր օրինակներում յերկինս դրված է հոգնակի թվով. հմմտ. լատ. «Pater noster, qui es in caelis», ֆր. «Notre Père qui es dans les cieux», ոռու. «հա հեծեսախ», թուրք. «Göklerde olan Babamis»...:

Հավելենք, որ աստվածաբանական գրականության մեջ չի մերժվում երկինքների գոյությունը: Քննադատելով Մարկոնի ուսմունքը՝ ըստ որի կա երեք երկինք, Եզնիկ Կողբացին գրում է. «Ուրտեղո՞ց է նա երրորդ երկինք ասում... հերձվածողները մոլորվեցին, որովհետև ոք տաս երկինք է ասում, ոք՝ յոթ, իսկ Մարկիոնը՝ երեք»: Ուշագրավ է Եզնիկի հետևյալ եզրահանգումը. «Եւ ի Գրոց սրբոց կամին հաստատել զմոլորութիւնն իւրեանց՝ թէ երկինս և երկնից երկինս բազմաբար ասէն Գիրը»<sup>11</sup>:

Հաստ Էության՝ Եզնիկը մերժում է մի քանի երկինքների գոյությունը և յերկինքներ թարգմանելը համարում սխալ: Միավի պատճառը, ըստ Եզնիկի, ասորերենի և երբայերենի հոգնակի կազմության առանձնահատկությունն է: «Ասորի լեզու չմարթի երկին ասելու: Եզնիկը հուշում է, որ ասորերենում և երբայերենում երկինքը անեզական է: Մարկիոնի ուսմունքի քննադատը գրում է (բերում ենք աշխարհաբար թարգմանությունը) «Եթի հարցումներով ոչ ոքի կողմից չեն սանձահարվում, Սուրբ Գրքից դուրս են զրաբանում, իսկ հենց որ նեղն են ընկնում, Գրքին են ապավինում: Բայց «երկինք» և «երկնից երկինք» Ս. Գրքում գտնում ենք այն պատճառով, որ երբայեցիների լեզվով չի կարելի

<sup>11</sup> Եզրնկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց. թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ս. Ա. Աբրահամյանի, Ե., 1994, էջ 212-213:

ասել «Երկին», ինչպես որ ասորերեն լեզվով էլ չի կարելի ասել «ջուր» կամ «Երկին, այլ եզակին հոգնակի ձևով է ասվում» (Էջ 213):

Երրորդ երկնքի գոյությունը վկայում է և Պողոս առաքյալը. «Յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից» (Բ. Կորնթ., ԺԲ, 2): Ուշադրության արժանի է այդ հարցում Եզնիկի մի այլ լեզվաբանական դիտարկում: Խուսափելով Պողոս առաքյալի վկայության անվերապահ քննադատությունից՝ Եզնիկը գրում է. «Չև եւս յայտ է՛ թէ մինչև ցերրորդ երկինս ասիցէ, կամ թէ մինչև ցերրորդ ինչ մասն ի բազում մասանց միոյ երկնից ասիցէ» (212): Այսինքն՝ յերրորդ երկնիցը պետք է հասկանալ «մեկ երկնիք բազմաթիվ մասերից ինչոր երրորդ մասը, որովհետև, հունարեն լեզվով այս խոսքը երկուսին էլ կարող է վերաբերել» (213): Մեզ հայտնի հունարենի բառարանում երկինք բառի «երկնիք մաս» իմաստը արձանագրված չէ:

Նշենք երկինք բառի մի նրբիմաստ ևս. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից» (Մտթ. Գ, 2): Հունարենում նույնպես երկինք բառն է: Նոր կոսակարանի աշխարհաբար թարգմանության մեջ ծանոթագրվում է. «Երկինք բառը երբեմն կը գործածուի նոյնինքն Աստուած ըսելու տեղ, Աստուծոյ անունը բերան առնելէ խուսափելու համար, ինչպես կ'ընէին հրեաներ» (Անթիլիս, 1996, Էջ 864): ՆՀԲ-ն երկինք «աստված» բառիմաստը չի նշում, թեև բառահոդվածում արքայութիւն երկնիցօրինակը կա:

*Ամփոփենք:* Բնակ հակված չենք վիճարկելու «երկնքում ես, թէ՝ «երկինքներում ես» թարգմանության աստվածաբանական հարցը. ուղղակի համեմատել ենք տարրեր լեզուներով կատարված թարգմանությունները:

Հարցի շոշափումը ավելի շատ միտված է հայ նշանավոր մատենագիրներից մեկի՝ Եզնիկ Կողբացու բանավիճային արվեստի, լեզվաբանական հարցերի իմացության իրազեկմանը:

Աստվածածնչին վերաբերող դիտարկումներն էլ համարենք ոչ թէ քննադատական, այլ՝ քննական:

Hovhannisyan Lavrenti - Remarks on Several Fragments of the Bible. - The paper examines several fragments of the Armenian version of the Bible. When comparing these fragments with the translations of the Bible in other languages, some peculiarities were found.

Ованнисян Лаврентий – Замечание относительно некоторых фрагментов Библии.  
– В статье исследуются несколько фрагментов армянской версии Библии. При сравнении эти фрагменты с переводами Библии на других языках были найдены некоторые особенности.

**ԲԱՌԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**  
(ձեռագիր բառարանների նյութի հիման վրա)

Հ.Աճառյանի առանձնացրած մի քանի «նոր բառեր» հոմանիշների՝ XVIIIդ. ավանդված ձեռագիր բառարաններում<sup>1</sup> հանդիպում են նոր բառիմաստներով կամ իմաստային երանցներով:

Բառիմաստային փոփոխություններ զանազաններու խնդիրը հոմանիշների ձեռագիր բառարաններում բավական բարդ է. դժվար է վստահաբար պնդել, որ բառը այլ իմաստ կամ իմաստային երանց է ձեռք բերել, քանի որ բառարանները չունեն բնագրային օրինակներ: Բարիմաստի փոփոխությունը կամ իմաստային այլ երանցը հաստատվում է հետագայում (XVIIIդ. հետո) լույս տեսած բառարանների տվյալներով: Բառարանային պրատումները հընարավորություն են ընձեռնել առանձնացնելու նաև այդ բառերի՝ ժամանակակից հայոց լեզվում ձեռք բերած իմաստը:

Բառերից առաջինը դերասան-ն է՝ վկայված ծաղրաբան. ծաղրածու. հացկատակ. կատակերգու. կատակախու. կատակարան հոմանիշային շարքում (Ձեռ. Զեռ. 566, 250ա. 3110, 93ա. 775, 63ա. 873, 199ա. 6762, 111թ)<sup>2</sup>:

Հ.Աճառյանը բառը ներկայացնում է «փոխանակ, տեղը. 2. սուտ, ներիակ, հակառակ» նշանակությամբ Դեր նախամասնիկի բառահոդվածում՝ նորշելով՝ «....նոր լեզուի մէջ՝ դեր «մէկի արած կամ անելիք բանը» (rôle), որից դերասան (արդէն զիտէ Վարդան Յունանեան, Զեռածութիւն, 1671, էջ 304)....»<sup>3</sup>: Հ.Աճառյանի «արդէն զիտէ....» դիտարկումից հետո, հաշվի առնելով նաև բառարանային տվյալները, փաստորեն կարելի է արձանագրել, որ հայ իրականության մեջ դերասան բառը երկրորդ անգամ հանդիպում է XVIIIդ. ավանդված ձեռագիր բառարաններում:

<sup>1</sup> Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIIIդ. ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ հյուրագրերով՝ «Նշանաբումն նոյնանշան բառից բառ դասառութեանց մերց տառից» (Ձեռ. 566, 234թ-279ա), «Հաւարումն բառից որը նշանակութեամբ նոյն կամ մերձաւոր են. Մատթէոսի վ. Բառագիր հոմանիշ բառից» (Ձեռ. 3110, 75ա-112ա), «Բառը նոյնանշանը՝ ժողովեալը բառ այբուբենից, ի մինիթարեան Մատթէոսի գերեզանիկ վարդապետէ» (Ձեռ. 873, 185ա-220թ և Ձեռ. 775, 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև Ձեռ. 6762-ում գետեղված անյուրագիր բառարանը (101ա-130թ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս և Ձեռ. 566-ինը որոշ տարրերություններով հանդերձ նույնն են: Հոդվածում պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

<sup>2</sup> Հոմանիշային շարքերը ներկայացվում են նշված բոլոր ձեռագրերի բառերի համատեղմամբ: Փակագծերում նշվում են ձեռագրի համարը և էջը:

<sup>3</sup> Հ.Աճառյան. Հայերէն արևատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Ե., 1971, էջ 655: Բառը ան-նախածանցով բաղադրված բառերի շարքում «լասինաբան հայերէնում պայմանականորեն նորակազմություն» է համարում Վ. Համբարձումյանը. տե՛ս Վ. Համբարձումյան, Հատինաբան հայերէնի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010, էջ 236:

Յ.Պոնայի «Ձեռքածութիւն յերկինս» գրքի թարգմանիչ Վ. Հունանյանը «բառարան գրքիս» հատվածում դերասան-ը բացատրում է՝ «...իրակօղ առասպեկի, և ծիծադրունեաց իրաց. որ անձնայլակեցեալ, վիպէ զառս օտարաց, ընտեսարանում, կամ ի բաղաքայնում հրապարակի: Դերասան կոյի ես, ամենայն կատակարու, և խաղարկու»՝ նշելով նաև՝ բառը լատիներեն հեցում է «իիստրիո»<sup>4</sup>:

Այսինքն՝ բատ Յ. Պոնայի դերասան-ը «կատակ, ծաղր անող»-ն է, ասել է՝ կատակերգական դերեր կատարողը, կատակերգություն խաղացողը: Զարկ է հիշեցնել, որ գրաքարում խաղ-ը և կատակ-ը նշանակել են «ծաղր. կատակ. այպն», իսկ կատակ-ը՝ նաև «կատակերգակ. ծաղրածու. հացկատակ»:

Թատերագետ Վ.Թերզիքաշյանի հավաստմամբ՝ «Մինչև 18-րդ դ. վերջը և նոյնիսկ 19-րդ դ. սկիզբը դրամատիկ արվեստը հայ իրականության մեջ դեռևս խստորեն դիմումայի և բյութեղացման չեն ենթարկված, և թատրոնը դեռևս հանդիսանում էր արվեստի մի բնագավառ, ուր երգը, պարը նոյնիսկ կրկեսային արվեստը (յարախաղացությունը, ակրոբատիկան, ատլետիկան) միախառնվում էին», և ուրեմն ընդունելի կարելի է համարել դերասան բարի առկայությունը նշված հոմանիշային շարքում: Մանավանդ եթե նկատի առնվի նաև Վ.Թերզիքաշյանի հիշատակած մեկ այլ փաստ, ըստ որի՝ թեև «Հայ դպրոցական թատրոնի պատմության մեջ» «կոմեդիայի տարրերը» առկա են «դեռևս 17-րդ դարում....», այդուհանդերձ «....կոմեդիան (.... որում հանդես են զալիս «անարի ծովյերը և ընշասերները», որոնք ենթարկվում են ծաղրի ու արհամարհանքի....) որպես ժանր երևան է զալիս 18-րդ դ. վերջերին»<sup>5</sup>:

Դերասան բառն արձանագրել են Ս. Քաջունին<sup>6</sup>, Ռուկեան Կոմիտասը<sup>7</sup>, Ս.Մալիսայանցը «արտիստ» (ՄՀՀ, հ.1, 1944, էջ 507), Ա.Խուդաբաշյանցը նաև "կոմեդիան"՝<sup>10</sup> (այսինքն՝ կատակերգակ՝ Ն.Հ.) բացատրություններով:

Ուստի և ենթելով վերը նշվածից՝ կարելի է, թերևս, ենթադրել, որ հայերենում նախապես դերասան է անվանվել կատակերգուն, կատակերգակը:

<sup>4</sup> Յ.Պոնա, Զերածութիւն յերկինս, Հոռո, 1671, էջ 23: Լատիներեն *histrio*՝ «ակտոր». տե՛ս Ա. Մալիսայանց, Լատինско-ռուսական հայոց առաջնային բառեր, Մ., 1961, ց. 301:

<sup>5</sup> Նոր բառզիրք հայկական լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկի, 1836, էջ 913 և էջ 1060: Ս.Մալիսայանցը խաղարկու-ն «հզվդ» նշումով բացատրում է որպես «խաղացող, ներկայացում տուող»: Ս.Մալիսասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀՀ), հ. 2, 1945, Ե., էջ 233:

<sup>6</sup> Վ.Թերզիքաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, Ե., 1959, էջ 24:

<sup>7</sup> Վ.Թերզիքաշյան, նշվ. աշխ., էջ 13, 172:

<sup>8</sup> Մանուկ Քաջունի, Բառզիրք արուեստից եւ զիտուրեանց եւ գեղեցիկ դպրութեանց (այսուհետև՝ ՔՄ), հ. III (Համառու հայերէն զարդերէն), Վենետիկի, 1893, էջ 55:

<sup>9</sup> Ռուկեան Կոմիտաս, Առաջն բառազիրք հայերէն - զարդերէն (այսուհետև՝ ԱԲՀԳ), Վ. Պոլիս, 1893, էջ 181:

<sup>10</sup> Ա.Խուդաբաշյանց, Բառարան ի հայկական լեզուի ի ոռուաց բարբառ (այսուհետև՝ ԽԲՀԸ), հ. 1, Սոսկուս, 1838, էջ 314-315:

Լեզվաբանները բառին չեն անդրադարձել: Այն պարզապես ընկալվում է որպես «դեր ասող», թեև Լ. Հախվերդյանը գտնում է, որ «Բմաստարանական առումով դերասան (դեր ասող) բառը ճիշտ չի բնորոշում մասնագիտության էությունը, քանի որ դեր անձնավորող ոչ թե դեր է ասում, այլ գործում է, ըստ որում, դերի տեքստն ասելը ևս մտնում է այդ իրողության մեջ»<sup>11</sup>:

Արդի հայերենի բացատրական բառարաններում տրվում է դերասանի՝ «Թատերական ներկայացումներում գործող անձանց դերերի մասնագետ կատարող, պրոֆեսիոնալ դերակատար» բացատրությունը<sup>12</sup> է. Աղյանի կազմաձ բառարանում հետևյալ հավելումով՝ «Արվեստի ստեղծագործությունները հրապարակավ կատարող մարդ, արտիստ»:

Ուրեմն կարելի է արձանագրել դերասանի բառիմաստի ընդլայնում:

Նշված հոմանիշային շարքից ՀԱԲ-ում «նոր բառեր» են դիտվում նաև կատակարան-ը, կատակերգու-ն, կատակախօս-ը (ՀԱԲ, հ.2, էջ 536): Ծաղրաբան-ը նույնպես վկայված չէ գրաբարի տպագիր բառարաններում. Հ. Աճառյանը իբրև «նոր բառ» է նշում միայն ծաղրաբանութիւն-ը (ՀԱԲ, հ. 2, էջ 439):

Ժամանակակից հայերենում Ս.Գալստյանն առանձնացնում է -քան ածանցով երկու կառույց՝ գրյականից և այլ խոսքի մասերի արմատներից կազմված. առաջինը՝ «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (արվեստաբան, ախտաբան, երկրաբան, լեզվաբան և այլն): Նրա հավաստմամբ մյուս տիպի բաղադրություններում -քան արմատի բառային նշանակությունը (որպես բաղադրության երկրորդ եղր գործածվելին) «մժագնվում է», և դրանք ընկալվում են որպես ածանցավոր կազմություններ: Սակայն չի նըշվում, թե -քան բաղադրիչն այս կազմություններում ինչ բառակազմական նշանակություն ունի, բայց և լասքան-ը բացատրվում է «ձայնագետ», կոնճարանը՝ «հարբեցող, հարբեցողության մասնագետ»<sup>13</sup>:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ կատակարան բառում (այլև դաստարկաբան, զավեշտաբան, զվարձաբան և այլն) -քան բաղադրիչի բառակազմական նշանակությունն է «խոսող» (թեև կատակ-ը գրյական է)` «կատակներ անող, կատակել սիրող (անձ), զվարձաբան, զուարձախոս» (ԱՀԲԲ, էջ 699. ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 65): Նույն բացատրությունն ունի նաև ծաղրաբան-ը (ԱՀԲԲ, էջ 629), որը հելվում է ծաղրածու-ին. վերջինս երրորդ-չորրորդ նշանակություններով, «թատր., հնց.» նշումներով մեկնաբանվում է իբրև «3. Հույսիտախաղերի հերոս-կատակերգակը: 4. Շրջիկ ժողովրդական կատակարան» (ԱՀԲԲ, էջ 630), «5. Հին կատակերգությունների՝ շրջիկ ներկայացումների մեջ ծիծաղաշարդ անձ» (ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 630):

<sup>11</sup> Լ. Հախվերդյան, Թատերագիտական բառարան, Ե., 1986, էջ 44:

<sup>12</sup> Ե. Աղյան, Մրդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 291: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 499:

<sup>13</sup>Տէ ՞ Ն. Հովհաննիսյան, Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր.-Պատմաբանասիրական հանդես, 2, 2012, էջ 172:

Հարկ է ներկայացնել նաև XVIIIդ. հետո լուս տեսած բառարանների տվյալները՝ ճշտելու նշված բառերի բարիմաստային զարգացումները: Այսպէս Ա. Խուդաբաշյանը ծաղրաբան-ը բացատրում է իրու ՛Շուտնիկ՛, կատակերգու-ն հելով կատակերգակ-ին՝ արձանագրում նաև ՛կոմեդիան՛ նշանակությունը (ԽԲՀՌ, հ. 1, էջ 535, 567): Ա. Մալխասյանը ծաղրաբան-ը հղում է զուարձարան-զուարձախօս-ին՝ որպես «զուարձալի կերպով խօսող, խօսքերով ծիծառ շարժող, կատակախօս, հանարչի» (ՄՀԲԲ, հ.2, էջ 32, 324), իսկ կատակարան-ը, կատակախօս-ը և կատակերգու-ն՝ բացատրում համապատասխանաբար «կատակներով խօսող, կատակներ անող, զուարձախօս, հանարչի» և «դերասան, որ կատակերգական դեր է կատարում» (ՄՀԲԲ, հ.2, էջ 397): «Միջին հայերենի բառարան»-ում կատակերգու-ն «կատակախօս, ծաղրածու»-ն է<sup>14</sup>, արդի հայերենի բացատրական բառարաններում կատակերգու-ի երկրորդ իմաստն է «Կատակերգական դերեր կատարող դերասան» (ԱՀԲԲ, ն.տ. ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 66):

Արդի հայերենում, ըստ բառարանների տվյալների, վերոհիշյալ բառերի ունեցած իմաստներին զուգորդվել են նորերը, այսինքն՝ պահպանելով հինք դրանք ձեռք են բերել նոր իմաստներ՝<sup>15</sup>:

Հաջորդը եկարան բառն է վկայված տան մասունք՝ ....իսիհանց<sup>16</sup> կամ յոնհակերանց.... հոմանիշային շարքում (Չեռ. Չեռ. 6762, 126թ. 566, 273թ. 775, 76թ. 873, 216ա. 3110-ում չկա): Պարզորոշ է, որ ձեռագիր բառարաններում վկայված եկարան-ը հենց յոնհանց-ն է:

Հ.Աճայանը եկարան-ը համարում է նոր բառ՝ «ստամոքս» նշանակությամբ՝ դարձյալ քաղված 17-րդ դ. հրատարակված Յ. Պոնայի «Ձեռքածութիւն յերկիխն» գրքից (ԶԱԲ, հ. 2, էջ 72):<sup>17</sup> Բառը՝ -արան ածանցով, լատինարան հայերենի նորակազմությունների շարքում արձանագրում է նաև Վ. Համբարձումյանը<sup>18</sup>: XVIIIդ. հետո լուս տեսած բառարաններից միայն ՄՀԲԲ-ն է «հզվի» նշումով տալիս Հ.Աճայանի առանձնացրած «ստամոքս» նշանակությունը՝ նաև բացատրելով «որտեղ կերակուրը եփվում է» (ՄՀԲԲ, հ. 1, էջ 605):

<sup>14</sup> Ո.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), հ.1, Ե., 1987, էջ 386:

<sup>15</sup> Ե.Աղայան, Ընդհանուր և հայկական բառազիտուրուն, Ե., 1984, էջ 101-102:

<sup>16</sup> Խոր բառահորդվածում Հ.Աճայանը փաստում է՝ «Բառունի նաև հետևեալ ձերքը. խոխ.... խախ.... խախ» «կերակուր».... =Բանեան՝ \*xwarr- ձեից. այս բառը հյ. տուել է՝ \*խարհ և \*խորհ, որոնց միջից թ ձայնը ընկնելով՝ խահ և խոհ....» ՀԱԲ, հ. 2, 1973, էջ 387-388: Լ. Հովհաննիսյանի հավաստմամբ՝ յոնհարար- յոնհարար «....բառերը իրանական փոխառություններ են: Հնչյունափոխությունը հայերենում չի կատարվել, ամենայն հավանականությամբ այդ բառաձեւը հայերենին են անցել իրանական տարրեր սկզբնաբրյուրներից». Լ. Հովհաննիսյան, Բառային տարրերակներ Վդարի գրաբառում. Հայոց լեզվի պատմութան հարցեր, պրակ, 3, Ե., 1991, էջ 9-10:

<sup>17</sup> Եկարան-ը իրու «նոր բառ» հիշատակում է նաև Գ. Զահուլյանը. Գ. Զահուլյան, Հայերեն ստուգարանական բառարան, Ե., 2010, էջ 230:

<sup>18</sup> Վ. Համբարձումյան, Լատինարան հայերենի պատմություն..., էջ 225:

Քննվող ձեռագիր բառարաններից բացի բարի գոյությունը՝ «եփելու տեղ. օճախ» խմաստով<sup>19</sup>, հավաստում է նաև Միխթար Աբբան՝ ասես նախապատրաստելով «եփելու տեղ. օճախ» → «խոհանոց» խմաստային անցում-զարգացումը:

Հստ բառարանների՝ եփարան-ը արդի հայերենում չի գործածվում:

Թարմ բառով է սկսում փափուկ. կակուդ. խոնա. գողոր. զուարթ. նոր (Ձեռ. Զեռ. 6762, 108ա. 566, 245ա. 775, 60ա. 873, 194ա. 3110, 88ա) հոմանիշային շարքը:

Ինչպես հավաստում է Ն. Բյուզանդացին, «Թարմ յիշի ի Նոր Հայկագեան. ի բառ Թաժայ եւ դնի լծորդ ընդ չերմն»<sup>20</sup>: Իրապես ՆՀԲ-ն փաստում է՝ «ԹԱԺԱՅ, կամ ԹԱԺԱՅ, կամ ԴԱԺԱՅ ....Բառ ոմկ. թազա, թազէ. այսինքն Նոր, ոչ հնացեալ. (զոր այլը Թարմ կոչեցին, լծ. ընդ չերմն. յն. թէրմօն)» (ՆՀԲ, հ. 1, էջ 791):

ՆՀԲ-ն արձանագրում է թարմ-ը իբրև միջինհայերենյան բառ՝ «թաժա, թազէ, նոր» նշանակություններով՝ նշելով՝ «յիշում են միայն Միխթար Աբբան և Զախօչախյանը» (ՆՀԲ, հ. 2, էջ 161)<sup>21</sup>: ՀԱճառանը թարմ-ը համարում է բնիկ հայերեն բառ համեմատելով նաև «պրս. ճար» «թաց, թարմ», .... յն. տէրոն «քընքուշ, մատղաշ, փափուկ», սարին. տերոն «կակուդ» և մի քանի այլ տարբերակ (ՆՀԲ, ն.ս.):

Ս. Զախօչախյանը բառը բացատրում է՝ «դալար, մատաղ, փափուկ»<sup>22</sup>:

ՍՀԲԲ-ն և արդի հայերենի բացատրական բառարաններն առանձնացնում են թարմ-ի մի քանի նշանակություն, այդ թվում՝ «առոյգ, կայտառ, աշխայժը վրան, չողնած», որ առկա են նաև արևմտահայերենում<sup>23</sup> (ՍՀԲԲ, հ. 2, էջ 87. տէ՛ս ԱՀԲԲ, էջ 423. ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 154): ՍՀԲԲ-ն վկայում է ՆՀԲ-ի առանձնացրած տարբերակները՝ իբրև «թարմ, նոր» (ՍՀԲԲ, հ.1, էջ 243):

Թեև վերոնշյալ բառարաններում արձանագրված «առոյգ, կայտառ, աշխայժը վրան, չողնած» նշանակությունները հուշում են «թարմ լինել»-ը, այդուհանդերձ ձեռագիր բառարաններում առկա զուարթ-ը իբրև «թարմ» արձանագրում են միայն արդի հայերենի բացատրական բառարանները (ԺՀԼԲԲ, հ.2, էջ 51-52. ԱՀԲԲ, էջ 380):

Ասել է՝ արդի հայերենում, ըստ բառարանների տվյալների, կիրառվում է XVIIIդ. ավանդված ձեռագիր բառարաններում «թարմ» նշանակությամբ վըկայված զուարթ-ը:

<sup>19</sup> Մի. Աբբա, Բառզիրք հայկագեան լեզուի (այսուհետև՝ ԲՀԼ), հ. 3, Վենետիկ, 1769, էջ 123:

<sup>20</sup> Նորայր Բիկաներացի, Բառապիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց (այսուհետև՝ ՆԲԲ), Ծննդ, 2000, էջ 222:

<sup>21</sup> Թարմ-ի մասին տէ՛ս նաև Ա. Սուրբվայան. Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 135:

<sup>22</sup> Ս. Զախօչախյան, Բառզիրք ի բարբառ հայ և իսուալիան (այսուհետև՝ ԶԲ), Վենետիկ, 1837, էջ 563:

<sup>23</sup> Յ. Գայաւեան, Բառարան- զանձարան հայերեն լեզուի, Գահիրէ, 1938, էջ 145:

Հոշել բառն առկա է կոչել. ձայնել, կարդալ. իրավիրել. ասել. (Եթէ անուն տալ) անուանել. յորջորջել հոմանիշային շարքում (Ձեռ. Զեռ. 6762, 113ա. 566, 253թ. 775, 64թ. 873, 200թ. 3110, 95ա):

Հ.Աճաղյանը *հոշել-ը* չի առանձնացնում որպես «նոր բառ» (բառը վկայված չէ գրաբարի տպագիր բառարաններում)<sup>24</sup>, «առանձին անզործանական» *հոշ* արմատի համար բացի Անհաղթի, Թրակացու, Ստ. Սյունեցու քերականություններում հանդիպող *հոշական* «կոչական» բառի մի բանի գործածությունից նա նշում է միայն «...*հոշել* «կոչել» Բառ. երեմ. էջ 185, որից նաև ՓԲ» (ՀԱԲ, հ. 3, 1977, էջ 114):

Այնպես որ ինչպես եփարան բառի, այնպես էլ *հոշել-ի* դեպքում կարելի է արձանագրել, որ XVIII դ. ձեռագիր բառարաններից բացի բառի գոյությունը հավաստում են բառարանները<sup>25</sup>:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ *հոշել-ը* «կոչել» նշանակությամբ արդի հայերենում չի գործածվում:

Իմաստուն. զիտուն. գերիմաստ. բարունի. վարդապետ. իմաստասեր. բանասեր. բանիբուն. զրոց աշակերտ. կամ հմուտ զրոց. հանձարեղ. ուշիմ. մըտացի. կորովամիտ<sup>26</sup>. կորովարան. մոտավարժ. նրբամիտ. (ուեւ զիմուտն) ներհուն. բանախօս<sup>27</sup> (Ձեռ. Զեռ. 6762, 109ա. 566, 247ա. 775, 60թ. 873, 195թ. 3110, 95ա)<sup>28</sup> հոմանիշային շարքում առանձնանում է նրբամիտ բառը:

Հ.Աճաղյանը նուրբ արմատով բաղադրված բառերի շարքում այն համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հ. 3, էջ 473): Նրբամիտ-ը «սրամիտ, ուշիմամիտ» նշանակություններով առկա է ԶԲ-ում և ՓԲ-ում (ԶԲ, էջ 1090. ՓԲ, էջ 430): ՄՀԲԲ-ն առանձնացնում է «նուրբ մտածող, նուրբ խելքի տէր, մանր դիտող, խորաթափանց» իմաստները (ՄՀԲԲ, հ. 3, էջ 488): Նոյնն են արձանագրում արդի հայերենի բացատրական բառարանները՝ հավելելով «նրբանկատ, փափկանկատ»-ը (ՄՀԲԲ, էջ 1089. ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 52), իսկ ՀՀՀԲ-ն հոմանիշների շարքում արձանագրում է նաև բացիմաց, խորիմաստ, խորամիտ բառերը (էջ 495):

Զերագիր բառարանների հոմանիշային շարքը, այլև ՀՀԲԲ-ն և արդի հայերենի բացատրական բառարանները հուշում են նրբամիտ-ի «իմաստուն» նըշանակությունը:

Նուրբ արմատով բաղադրված բառերից «իմաստուն» նշանակությունն ունի նաև Գր. Տաթևացու «Գիրը հարցմանց»-ում առկա նրբահայեց-ը «....

<sup>24</sup> Խոսքը վերաբերում է հետևյալ բառարաններին՝ ՆՀԲ. Առձեռն բառարան հայկագնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865. ԲՀՀ. Ն. Քիզանացի, Նոր բառզիրք հայկագնեան լեզուի, հհ. 1-5, Ժնև, 1990. Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հհ. 1-2, Ե., 2000. Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան (այսուհետև՝ ԳՀԲ), Ե., 2006:

<sup>25</sup> Ե.Սեղբեցի. Բազգիրք հայոց (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 189. Գ. Փեշտըմալճեան, Բառզիրք հայկագնեան լեզուի (այսուհետև՝ ՓԲ), հ. 2, Կ. Պոլիս, 1846, էջ 107:

<sup>26</sup> Ձեռ. Զեռ. 6762, 566-ում առկա է կորամիտ տարբերակը:

<sup>27</sup> Ձեռ. 3110-ում առկա է բնախօս տարբերակը:

<sup>28</sup> Ձեռ. 3110-ում նրբամիտ բառը չկա:

այնպէս բթամիտն ոչ իմանայ, զոր իմանայ նրբահայեացն և ուսեալն յաստուծոյ....»<sup>29</sup>:

Միայն Ձեռ. 566 (247ա)-ում՝ խայտառակել<sup>30</sup> առակել ծանակել նշաւակել ծաղր առնել խաղ առնել ամօթել<sup>31</sup> հոմանիշային շարքում է առկա տընազել-ը<sup>32</sup>. այն Հ. Աճառյանը համարում է «նոր բառ» «արար. յժե տա՞շ «ծաղր, կատակ» -ից (ՀԱԲ, հ.4, էջ 415):

Ն.Բյուզանդացին Տնազել-ը հղում է Թղահեմ-ին. վերջինս ըստ բառարանագրի հանդիպում է Թրակացու քերականության մեջ «արիամարհող, այպանող, թլահող, անզոսնող» փաղանունների շարքում (ՍԲԲ, էջ 713, 230): «Գու. բառ կամ նշ.» նշումով տնազել-ն արձանագրում է ՄՀԲԲ-ն՝ բացատրելով «տնազն անել, ծաղրել, բամբասել, պախարակել» (ՄՀԲԲ, հ.4, էջ 424): ՄՀԲ-ն առադրում է «կատակել, այպանել» իմաստները (ՄՀԲ, հ.2, էջ 393), արդի հայերենի բացատրական բառարաններն արդեն այլ իմաստ են արձանագրում՝ «մեկի տնազն անել» ԺՀԼԲԲ-ում «ծաղրել»-ի հավելումով (ՄՀԲԲ, էջ 1449. ԺՀԼԲԲ, հ.4, էջ 513):

Ինչ վերաբերում է տնազել-ի՝ ձեռագիր բառարաններում վկայված «խայտառակել» իմաստին, ապա Միխթար Աբբան տնազ-ը, տնազ ընել-ը հղում է խակիր-ին և ծաղր ընել-ին (ԲԼՀ, էջ 636): Խակիր-ը նույն խայտառակ-ն է (հիմտ. խաղը անել «անպատվել ծանակել, այպանել, խայտառակել»)<sup>33</sup>, որը Հ. Աճառյանի հավաստումով հանդիպում է Երևանի, Նոր Բայազետի, Պոլսի, Վանի («գու. խաղը (Ակն, Ապլ, Պլ. խախիք «խայտառակ») բարբառներում (ՀԱԲ, հ.2, էջ 320)<sup>34</sup>. Ըստ ՀՀԲԲ-ի տնազել-ը կիրառվում է Խարբերդի, դնազիլ-ը Սվեղիայի բարբառում՝ և դարձյալ միայն «տնազ անել, ծաղրել» բացատրությամբ (ՀՀԲԲ, հ.Զ, էջ 205)<sup>35</sup>:

ՀՀՀԲ-ն տնազել-ը հղում է ծաղրել-ին՝ հոմանիշային շարքում նշելով խայտառակել, ծաղրուծանակել, ծաղրուծանակի ենթարկել բայերը (ՀՀՀԲ, էջ 628, 283):

Ձեռագիր բառարաններում տնազել-ի «խայտառակել» իմաստը հաստատվում է նաև ամօթել բայի առլայությամբ. ՄՀԲ-ն այն արձանագրում է իր ու «անպատվել, վիրավորել, խայտառակել» (ՄՀԲ, հ.1, էջ 41)` Կամենեց-Պողոսկ քաղաքի հայկական դաստարանի 16-րդ դ. արձանագրություններից քաղված միակ օրինակով: Այսինքն՝ կարելի է ենթարկել, որ բառն այդ նշանա-

<sup>29</sup> Գր. Տայքեացի «Գիրը հարցմանց»/համարարատ, կազմ.՝ Ս. Գրիգորյան, Գիրը Գ, Ե., 2012, էջ 1028:

<sup>30</sup> Ձեռ. 6762-ում առկա է խայտառակել տարբերակը:

<sup>31</sup> Առևս է միայն Ձեռ. 6762-ում:

<sup>32</sup> Ձեռ. 6762-ում՝ տնազ ունել:

<sup>33</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, Ե., հ. Բ, 2002, էջ 274:

<sup>34</sup> Տե՛ս նաև Հ.Աճառյան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 449:

<sup>35</sup> Հ.Աճառյանը Սվեղիայի բարբառում նշում է տնազել-՝ «այպանել, ծաղրել, բամբասել» նըշանակությամբ. տե՛ս ն.տ.:

կությամբ տվյալ ժամանակաշրջանում գործածվել է լեզվում, սակայն հետապյում իմաստը չի պահպանվել :

Այսիսով, Հ.Աճառյանի առանձնացրած «նոր բառերը» հոմանիշների ձեռագիր բառարաններում ունեն նոր իմաստներ և բառիմաստային նրբերանգներ:

Hovhannisyan Nazik- Lexical Observations (on the material of manuscript dictionaries).- Some "new words", discussed by H.Acharyan, in the XVIII century manuscript dictionaries of synonyms are fixed by new lexical meanings and nuances.

The words դերասան (artist), եփարք (kitchen), քարմ (vivacious), հոշել (to name, to call), նրբամիտ (wise, sage) տնազել (to dishonour) are considered.

Оганесян Назик- Лексические наблюдения (на материале рукописных словарей синонимов XVIII века).- Некоторые "новые слова", рассмотренные Р. Ачаряном, в рукописных словарях синонимов XVIII века, зафиксированы новыми значениями и нюансами значений слов.

Рассмотрены слова դերասան (артист), եփարք (кухня), քարմ (новый, живой, оживлённый), հոշել (называть; давать имя), նրբամիտ (мудрый), տնազել (оскорблять, унижать).

ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾՈՂՋԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ՀՆՅՑՈՒՆԱԿԱՆ  
ՈՐՈՇ ԴԻՏԱՎՐՈՒՄՆԵՐ  
(տարածամանակա քննություն)

Կապանի տարածաշրջանի խոսվածքները, լինելով **ՈՒՍ** և **(ԼԲ)Ս** ձյուների բարբառային միավորներ, քերականական ոչ բոլոր համակարգերում են ընդհանրություն դրսերում, սակայն ունեն հնյունական նույն կազմը և ենթարկվում են հնյունափոխական միևնույն օրենքներին:

Բարբառների հնյունական ենրահամակարգերի և նրանցում առկա մի շարք փոփոխությունների ժամանակագրությունը ստույգ որոշելը հնարավոր չէ հատկապես այն հնյունների համար, որոնք հայերենի պատմական շրջանի սկզբնափուլում գրային ձևներին, ինչպես՝ **ա**, **օ**, **ու** և այլն: Նշված հնյունների գոյությունը այդ ժամանակաշրջանում Սյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորներում բացատրվում է նրանով, որ դրանք նախապես ինքնուրույն հնչույթի արժեք չունեին, այլ «ա, օ, և ձայնավոր հնչույթների դիրքային տարբերակներն էին»<sup>1</sup>, ինչպես՝ կապուտ, պեցուր, ճօրէ և այլն: Տվյալ հնյունի դիրքային տարբերակներն են լորդական շարքերի առաջացմանը, ինչը ձևավորվում է միևնույն ձայնավորի կոշտ ու փափուկ և փակ ու բաց հակադրությամբ՝ **ա-ա-**, **օ-օ-օ**, **է-է-է**, **ը-ը-ը**, **ու-ու**, **ի-ի-ի**<sup>2</sup>, ինչպես՝ կարի, հաղնը, կօղ, մօրէ, հիլիվէր, մէս, կըլօխ, հընգէր, պիլանի, լիւս և այլն: Զայնավորների այս հակադրությունը տեղի է ունենալ շարքի ու բարձրացման աստիճանի փոփոխմամբ:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում **ա**, **օ**, **ու** հնյունները որոշ գործածություններում հնչույթային արժեք են ստացել, օր՝ կալ «կալ»-կապ «զալ», հօլ«խաղալիք»-հօլ«ուլ», կում«կում»-կում «զոմ» և այլն: Նկատելի է, որ հնչույթային արժենուրմանը նպաստել է մի դեպքում Աճառյանի օրենքը, մյուս դեպքում այդ օրենքին նախորդող շրջափուլ՝ ոչ ձայնեղ հնյունների մոտ ձայնավորի թմանացմամբ: Այս հակադրությունները թույլ են տալիս նշել, որ «ձայնավորների թմանացումը ժամանակագրորեն նախորդել է ձայնեղ պայթականների խլացմանը»<sup>3</sup>, իսկ վերոնշյալ օրենքի տարածմամբ հետնալեզվային ձայնավորների առաջնային փակ արտասանությունն ընդհանրական բնույթ է ստանում ոչ միայն այդ հնյունական օրենքի գործառության սահմաններում, այլև **գ**, **ժ** ձայնեղներից, խուլերից և **լ** ձայնորդից հետո:

<sup>1</sup> Հ. Դ. Մուրաշյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982, էջ 56:

<sup>2</sup> Ս. Աղաբեկյան, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնյունաբանություն, Հայերենի բարբառապիտական ատլաս (ուսումնասիրություններ և նյութեր), պ. 3, Ե., 2010, էջ 69:

<sup>3</sup> Հ. Դ. Մուրաշյան, նշվ. աշխ., էջ 92:

Հնչյունական այս օրենքների գործառության պայմաններում էլ առաջացել են մի շարք համապատասխանություններ, ինչպես՝ **ա>է**, որը **ա** ձայնավորի առաջնային փակ արտասանության և դիրքի՝ դեպի քիմքը բարձրանալու հետևանք է: Այս համապատասխանությունը պատմականորեն հաջորդել է **ա>ա** անցմանը, որը բնորոշ է Սյունիք-Արցախ տարածաշրջանին, իսկ անցումային այդ զարգացումը պահպանվում է ինչպես Արցախի, այնպես էլ Սյունիքի բարբառային միավորներում, օր.՝ բան>պան (Գոր., Սիս.), բէն//պէն (Մէր., Կաք., Կարձ.), պէն (Կապ.): Հնչյունական հաջորդական անցումը, իբրև **ա-ի** համակարգային փոփոխություն, ընդհանրապես գործել է խնդրու առարկա տարածքի խոսվածքներում, օր.՝ գարայ>քան թան, լավ>լի ան, բարձ>պէրց, դանակ>տէնակ, լաց>լէց և այլն:

Ոչ ձայնեղների մոտ քմայնացում է տեղի ունեցել **ոյ>ռի և եւ/իւ>ռի** անցումներում, որոնք ձևավորվել են երկրաբանների պարզեցմամբ, ապա՝ քմայնացմամբ՝ **ոյ>ռու>ռի և եւ/իւ>ռու>ռի**, օր.՝ շոյտ>ռիւ տ, թոյլ>ռիւ լ, աղբեւր //աղբիւր>անպիւր ի, հարեւր/հարիւր>հանպիւր, նաև՝ քոյր>քուր, օռոյց>օռուց(ը) //օռուս(կ), լայնութիւն>լէնօթուն և այլն: Նշված գրաբարյան երկրաբանների պարզեցումն առհասարակ ընթացել է կամ շրթնային բաղադրիչի գերակայությամբ, կամ բարձրացման փոփոխությամբ, ինչպես՝ աղիւր>անպիւր //անպիւր //անպիւր լ էր, արիւն>անպիւր ն/անպիւր, ոյժ>ուժ//օժ, ձիւլ>ձօղնը և այլն:

Հավանական է, որ 5-րդ դարում Սյունիքը և Արցախը համարվել են առանձին բարբառային միավորներ, ունեցել են **Կ** երկրաբառառային արտասանություն, որը, սակայն, պարզեցվել է և միտվել բառամիջյան **Ե** և **Է** հընչյունների նույնացմանը: Պարզեցվել է նաև **այ** երկրաբառ՝ դառնալով **ա/ ա** //է, ընդ որում, այս գուգաձևությունը մի կողմից պայմանավորված է ինչպես գրաբարի, այնպես էլ արևմտյան և արևելյան բարբառային խմբակցությունների ներթափացումներով, իսկ մյուս կողմից՝ **ա>ա** հաջորդական անցմամբ, ինչը բարբառային հիշյալ տարածքի առանձնահատկություններից է:

Հնչյունական համակարգերի փոփոխությունները հիմնականում առնչվում են լեզվի ներքին զարգացման օրինաչափություններին և արտաքին փոփոխության երևույթներին: Քմայնացումը այս տարածքի խոսվածքներում այնքան արտահայտված է եղել, որ նպաստել է ձայնավորների առաջընթաց և հետընթաց ներդաշնակությանը: Առնմանության առաջընթաց և հետընթաց լինելն էլ վկայում է, որ «ձայնավորների ներդաշնակությունը հայերենում թյուրբական լեզուների ազդեցությամբ չի ձևավորվել»<sup>4</sup> (դրանցում գործում է միայն առաջնային ներդաշնակություն՝ բառարմատի ձայնավորի առմանությամբ), այլ, ինչպես Աճառյանն է փաստում, նրանցից անկախ<sup>5</sup>, քանի որ հայերենի բարբառներին հասուկ է նաև քերականական ձևույթների ձայնավորի ներգործությունը և արմատականների հարմարեցումը դրանց: Քմա-

<sup>4</sup> **Ժ. Միքայելյան,** Վասպորականի խոսվածքների բմային ձայնավորները: Համաժամանակականի և տարածմանակայա թննություն. Ե., 2009, էջ 108:

<sup>5</sup> **Հ. ԱՃԱՐՅԱՆ,** Քննություն Ազուլիի բարբառի. Ե., 1935, էջ 153-154:

յին ձայնավորների առկայությունը որոշ բառաշերտերում պայմանավորված է և ներքին (Աճառյանի օրենք, ձայնավորների ներդաշնակություն), և արտաքին (փոխառություններ) հնչյունական երևույթներով, իսկ կոշտ ձայնավորների գործածությունը, որը լսողական տեսանկյունից դժվարությունների տեղիք է տալիս, ի հայտ է զալիս բարի շեշտյալ վանկում՝ այս տարածքի խոսվածքներին բնորոշ վերջնարկը սուր շեշտի ներգործությամբ, ինչպես՝ ա/ա ման, լէ ն, սը րտ, նօ նոր և այլն: Նկատելի է, որ այս դիրքում՝

ձայնորդների մոտ, ձայնավորները բացի վերածվելու միտում ունեն, որի արդյունքում էլ ձևավորվել են հետընթաց կոշտ արտաքերությամբ **ա, է, ո,**

**օ** ձայնավորները, որոնք համարել են ծնորդական շարքերը: Կոշտ, բաց արտասանությամբ ձայնավորները ազդում են նաև բաղաձայնների բնույթի վրա, օր՝ **լ** ձայնորդը քայինների մոտ արտաքերվում է փափուկ, իսկ կոշտների մոտ՝ կոշտ, հետևաբար, ինչպես Աճառյանն է վկայում, «9-րդ դարի սկզբներին՝ «Աղվանիք սահմանակից հայոց մեջ»՝ այսինքն՝ Սյունիք-Արցախ տարածքում»<sup>6</sup>, տարբերակել են փափուկ ու կոշտ **լ** իսկ վերջինից էլ զարգացել է **դ-ն:** Նշենք, որ ձայնավոր հնչյունների փոփոխությունները բացատրվում են նաև դիրքային բաշխվածությամբ, որին կարելի է տալ հետևյալ սահմանումը. «Նախկին ձայնեղներից և փափուկ լիցի իշտու ձայնավորները մեծ մասսամբ ձգուել են ավելի փակ, առաջնային, իսկ պարզ և շնչել իշուլերից, ձայնորդներից հետո՝ շեշտյալ դիրքում, ավելի բաց, հետին արտաքերության: Դա Սյունիք-Արցախ տարածքի ձայնավորների դիրքային բաշխվածության հիմնական օրենքն է»<sup>7</sup>: Ըստհանրացնելով կարևորենք այն իրողությունը, որ պատմականորեն հնչյունական այս օրենքը հաջորդել է աճառյանական օրենքին, ուստի այս պետք է սկիզբ առներ դեռևս II-III դր.: Աճառյանի օրենքը, որն այս տարածքի բարբառային միավորներին բնորոշ է և ձևավորվել է մ.թ.ա. I հազարամյակում, բառասկզբում ձայնեղների խլացումը կանգ է առել, որը վկայում են գրական և այլ լեզուներից կատարված փոխառությունները, ինչպես՝ բարակ բարակ, դաշտ դաշտ, դաշտ դաշտ, դուրբա և այլն: Այս օրենքը 6-10-րդ դդ. թուլացել էր, որին ժամանակագրորեն հաջորդել է ձայնեղ հապակաների և պայթաշփականների խլացման սահմանափակումը (10-14-րդ դր.), քանի որ 14-15-րդ դդ.՝ թուրք-աղբբեշանական փոխառությունների շրջանում, լեզվական այդ իրողությունը չէր գործում<sup>8</sup>: Տարածաշրջանի խոսվածքներում բառասկզբի ձայնեղների խլացման կողքին, սակայն, բառամիջում ոնզային հնչյունների մոտ ձայնեղները պահպանվել են, որը ներգործել է նաև նույն դիրքում խուլերի ձայնեղացման երևույթի ձևավորմանը, օր՝ զանգատրեկնազարդում լուսական այն հանգամանքով, որ Աճառյանի սկզբնավոր-

<sup>6</sup> **Մ. Աղարքելյան**, նշվ. աշխ. էջ 147:

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 79-80:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 158:

ման ժամանակարնթացքում ձայնեղները բառի տարբեր դիրքերում հանդես են եկել անփոփոխ, իսկ հնյունական այդ օրենքի ընդհանրականության շրջանում ձայնեղ հնյունները բառամիջում և բառավերջում ենթարկվել են տարբեր տեղաշարժերի՝ դառնալով խոլ կամ շնչեղ խոլ, և մնացել անհընդունափոխ: Աճայանի օրենքը, հետևաբար, որոշ ժամանակահատվածում դադարել է, ապա լեզվի ներքին զարգացմանը գուգահեռ՝ ակտիվացել՝ պայմանավորված հնյունական տարբեր ազդեցություններով:

Ձայնեղ-խոլ հակադրությունը ընթացել է նաև բառամիջում և բառավերջում, սակայն վերջինս «ձայնեղ բաղաձայնների համար թույլ դիրք է՝ ձայնալարերի թրթուման աստիճանական թուլացման ու վերջնական մարման առումով»<sup>9</sup>, ուստի տեղի է ունեցել շնչեղ խացում, մասնավորապես **թ** ձայնորդից հետո, ինչպես՝ կարդալ>կ արթ/իլ, ազի>հ անց ք թու, արց>առ/թշ, բարձ>պէրց, բուրդ>պ ու թթ, կարագ>կարաք: Բացառություն են մի քանի գրական և օտար լեզուներից փոխառություններ, որոնցում ձայնեղը մնում է անփոփոխ, օր՝ դարդ>դ անց և այլն: Այսպիսով, ձայնեղների շնչեղ խացման երևույթը վերոնշյալ դիրքերում պատմական հնյունափոխության վաղնջական է՝ «գուցե մ.թ.ա. VII-V»<sup>10</sup> դր., որը դրսենրվել է ոչ միայն քննության առարկա խոսվածքներում, այլև հայերենի տարբեր բարբառային միավորներում<sup>11</sup>:

Հնյունական մի շաքը երևույթներ առնչվում են վերջնթեր շեշտին և պայմանավորված են դրանով, քանի որ այն պահպանել է հնդեվրոպական հիմք լեզվի տոնիկ շեշտի ուժգնությունը, որն էլ նպաստում է ձայնավորների ոչ միայն բառավակրի, այլև բառամիջի՝ շեշտանախորդ դիրքի սղմանը, ինչպես՝ հավաքել>հըվա քէլ, անկանել>ընգնէլ, ուղղորդ>ո թթ, երեխայ> բա խա և այլն: Ժամանակագրորեն շեշտանախորդ դիրքի ձայնավորի սղումը կամ **թ**-ի վերածվելու հնյունափոխական երևույթը զայս է դեւու XI դարից, իսկ բառավակրի ձայնավորների նմանատիպ անկումը արձանագրվել է XII-XIII դդ.<sup>12</sup>, ընդ որում, գրական արևելահայերենում բառավիկրը **դ** և **թ** հնյունների համար բացառված դիրք է եղել, որը, սակայն, չէր կարող խոչընդոտել, որ դրանք դրսորվեին տարբեր բառաձևերում, օր՝ արա >բա, ուղարկել >դարկել, ողորմի>դօրմի և այլն:

Արդի հայերենի վերջնավանկային շեշտը ևս սերում է նախալեզվի վերջնթեր շեշտից, երբ շեշտի ուժգնության հետևանքով շեշտահաջորդ վանկարարը սղել է, և շեշտը դարձել է վերջնավանկային: Այսպիսով, ինչպես վկայում են տարածաշրջանի բարբառային միավորներում արձանագրված անհընդունափոխ հնագույն բառաձևերը՝ պէ՛(ր)ցնէ թ(<<sup>o</sup>bhr̥ghū-r(o)), թա՛նձուր//թա՛նզըր(<<sup>o</sup>tη ghu-r(o)), փօ՛քուր(<<sup>o</sup>phō-ku-r(o)), վէ՛սկեռ//վը՛սկեռ(<<sup>o</sup>ost-ko-(o))<sup>13</sup>,

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 129:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>11</sup> Հ. Դ. Սուրայյան, նշվ. աշխ., էջ 299:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 89-91:

<sup>13</sup> Մ. Աղարելյան, նշվ. աշխ., էջ 88:

ծօ՛նզուն(<\*g̥' onwi//g̥s̥ nwi<sup>14</sup>), հե՛րու (<\*peruti-), ծո՛լզուն(<\*g̥' hu-), մօ՛կուն (<\*m̥s̥ s̥<sup>15</sup>), սօ՛նզուն(<\*spongos<sup>16</sup>), վերջոնթեր շեշտը գործառվել է մ.թ.ա. III դ. վերջերին<sup>17</sup>, որի ուժեղ ներգործությունն էլ նպաստել է, որ արդեն V դ. վերոնշյալ բառերը, բացառությամբ հերու բառի, դարձել են մեկուկես վանկանի՝ անշեշտ ձայնավորի սղմամբ, որին էլ միջնադարում հաշորդել է վերջնահանգ ն-ի անկումը: Հետազայում այդ ձևերը պահպանվել են ինչպես գրական լեզվում, այնպես էլ գրաբարյան շրջանում ձևավորված բարբառներում:

Հնչունական փոփոխությունները և հնչունական օրենքները ընթացել են անհամաշափ, տարբեր ժամանակահատվածներում, ընդ որում, հնչունափոխական որևէ երևույթ, ընդհանարական բնույթ ունենալով, վերածվել է հնչունական օրենքի: Հայտնի է, որ հնչունական օրենքը գործում է որոշակի ժամանակահատվածում և սահմանափակ տարածքում, որից հետո այն աստիճանաբար թուլացել է՝ մեկ այլ օրենքի գերակայությամբ: Հնչունափոխական երևույթները ևս կարող են ծագել նախագրաբարյան շրջանից՝ առնչվելով հնդեվրոպական հիմք լեզվին: Նախատիպ երևույթ է խուլ հ-ի բառակզզի հավելումը ձայնավորակիզբ մի խումբ բառերում, ինչպես՝ ալեւոր>հիլիվեր(<\*p̥l̥i̥ o-)<sup>18</sup>, արբել>հարփե/իլ(<\*s̥r̥ bh-), երդ>հերթ (<\*perto), ուլ>հօլ(<\*p̥s̥ [u]los), ուր>հօր(<\*k̥ʷ u-) և այլն, որոնցում նախալեզվի \*p և \*s հնչունները վերականգնելիս հայերենում տալիս են հ, իսկ \*k̥ʷ -ն ունեցել է զրո կամ հազարային հնչում: Ժամանակագրորեն այս կարգի բառերին հաշորդել են այն բառերը, որոնց նախաձեռնոր չունեն բարբառային հ-ին համապատասխանող հնչուն և գրաբարում առկա են առանց հավելականի, սակայն խնդրո առարկա բարբառային միավորներում արտացոլվել են հ-ով, ինչպես՝ ազանիլ>հաքել, անդ>հանդ, անծծ>հանէծ, ափ>հափուտ, եռ> հեռ // հըռ, իսկ (ի)>հիսկի //ըսկի, ուղի>հըղէ(ցէ) և այլն: Հնչունական նմանաբնույթ առանձնահատկությունները համարվում են հնդեվրոպական հնաբանություններ, որոնց ազդեցությամբ արդեն գրական լեզվի պատմական շրջանում տեղի է ունեցել հ-ի հավելում, օր.՝ երր>հիր, ընկեր>հընգեր, ընտրել>հընդրել, ուլ>հուլ, ուրազ>հօր պ և այլն: Վերոնշյանների հետ չպետք է շփոթել հ(<j)-ով սկսվող մի շաքք բարբառային բառեր (օր. յաղթել>հախթել, Յակոր>Հակուփ//Ակուփ յօնք> (հ)օնք //ունք, յիսուն>հիսուն//հիծուն//ի ծ ուն//ի ց ուն և այլն), որոնցում յ-հ համապատասխանությանը զուգահեռ առկա է անկում, որը ևս այս տարածքի խոսվածքներին բնորոշ հնչունափոխական երևույթներից է: Հավելվել են նաև ն, ր, դ, պ, կ հնչունները, որոնցից ավելի ընդգրկուն է ն-ի

<sup>14</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ., Ե., 1973, էջ 473:

<sup>15</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ., Ե., 1977, հմասն. էջ 89, 160, 354:

<sup>16</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ., Ե., 1979, էջ 250:

<sup>17</sup> Ս. Աղարեկան, նշվ. աշխ., էջ 93:

<sup>18</sup> Ն. Մ. Միմոնյան, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները. Հայոց լեզվի համամատական բերականության հարցեր, Ե., 1979, էջ 210-224:

հավելումը, այն էլ ոչ թե բառասկզբում, որը հատուկ է, օրինակ, Թիֆլիսի բարքարին, այլ հիմնականում բառամիջում և բառավերջում: Բառամիջում ընթացող հավելական երևոյթները սերում են միջնադարից, ընդ որում հավելական հնյուն ունեցող որոշ բառեր վկայվել են XII դ.<sup>19</sup>, օր՝ ծանր>ծանդըր, կանաչ>կանանչ, համրել>հըմքարել և այլն, որոնցում հավելումը տեղի է ունենում բաղաձայն հընյունի մոտ:

Բառավերջում ն-ի ավելացման երևոյթը մի կողմից առնչվում է գրաբարյան ն վերջնահանգին, մյուս կողմից՝ փոխառություններին: Նկատել են, որ վերջնահանգ ն-ով գրաբարյան բառերը սերում են հնդեվրոպական \*n-ով հիմքերից (-n, -mn, -en, -ən), որոնք արտացոլում են հնդեվրոպական չեզոք, արական և իգական սեռերի հիմքերի հայցականի վերջավորությունը<sup>20</sup>, նաև ուրարտերենի ուղղական հոլովի ու վերջավորությունից<sup>21</sup>, սակայն հավանական է ն-ի հավելումը զարգացել է ոչ միայն նախագրային ժամանակաշրջանում, այլև հետագա դարերում, քանի որ հին հայերենում ավաղված առանց ն-ի բառերը Սյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորներում ունեցել են վերջնահանգ ն, ինչպես՝ ածուխ>անձուկնը, բորբոս>փուփոսնը //փըրփօսնը, թրթուր>թրթօսնը, խորձ>խօրննը//խօռննը և այլն: Այսպիսով, հնյունների հավելումը սկսվել է նախագրաբարյան շրջանից՝ ձգվելով մինչև 12-13-րդ դդ.:

Հետաքրքական է, որ հենց միջնահայերենյան ժամանակաշրջանում՝ մասնավորապես 11-րդ դ.<sup>22</sup>, ակտիվացել է նաև հնյունների անկման երևոյթը, որոնցից ամենատարածվածը թ-ի անկումն է, օր՝ արժան>իժն ն, բարձր>ալցոն թ, դուրս>տոն ս, երբ>հիբ, խարշել>խան շե/ի, ջրաղաց>ձեղաց, ներս>նի և այլն: Հնյունների անկումը, իբրև հնյունափոխական երևոյթ, նկատելի էր դեռևս 5-6-րդ դդ.<sup>23</sup>՝ բառավերջի ձայնավորահաջորդ յ-ի ակմամբ: Հնյունափոխական մի շարք երևոյթներ՝ դրափոխությունը, պարզ հնյունի բարդացումը և բարդի տարրապատճումն ու պարզեցումը, կրկնությունը կամ հնյունի տևական արտասանությունը, պայմանավորված լեզվի զարգացման պատմական ընթացքով, բխում են գրաբարյան և հետզրաբարյան շրջաններից: Արդեն միջնադարում՝ 11-16-րդ դր.<sup>24</sup>, հնյունափոխական այս ձևերը ակտիվ կիրառություն ունեին տարածքիս բարբառային միավորներում, օր՝ դգալ>քըթօլ, ուտն>վէնի/վէն ը/վընի/վը ն ը, մէջք>մէջկ, կոծկել>կօզկել/կօսկել, կոճակել

> կօշկել/կօժկել, պատիճ>պատիճ և այլն:

Հնյունափոխական վերքերյալ երևոյթները և հնյունական հիմնական օրենքները, որոնք հատկանշական են Կապանի տարածաշրջանի խոսվածքներին, բարբառների պատմական-համեմատական հնյունաբանու-

<sup>19</sup> Հ. Գ. Սոլքարյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, էջ 329:

<sup>20</sup> Գ. Բ. Զահորյան, Հին Հայերենի հերովման միասներ և կրա ծագումը, Ե., 1959, էջ 254:

<sup>21</sup> Գ. Բ. Զահորյան, Հայ բարբառապահության ներածություն, Ե., 1972, էջ 267:

<sup>22</sup> Հ. Գ. Սոլքարյան, նշվ. աշխ., էջ 333:

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 330:

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 339:

թյան տեսանկյունից քննելով, ծագել ու սկզբնավորվել են հնդեվրոպական հիմք լեզվից, հետևաբար, Ս. Աղարելյանի վկայությամբ, «Սյունիք-Արցախ տարածքի բարբառների հիմքում ընկած բարբառային միավորը՝ որպես այդպիսին, ձևավորվել է հայերենի նախագրային շրջանում՝ մ.թ.ա. առաջին հազարամյակի կեսերից ոչ ուշ»<sup>25</sup>: Հայերենի պատմական ընթացքին զուգահեռ՝ խնդրո առարկա խոսվածքների քննարկված հնյունական առանձնահատկությունները եկել են վաղնջականությունից հարատելով դարեղար:

Manucharyan Svetlana - Some Phonetic Observations of Dialects in Kapan Region (asynchronous examination).-The dialects of Kapan region are considered to be dialectical units of the branches Um and (LI)S. During the historical study of the sound system, it has been observed that there are such linguistic facts, which are descended from not only writing but also prewriting periods; a similar image is represented by the palatal vowels, the tonic stress of the last syllable which was used at the end of the III century B. C. as well as the Acharyan's Law characteristic to Syunik-Artsakh region, descended from the II to III centuries.

Generally, the phonetic laws and phonemic changes have occurred unproportionally and acted with interruptions.

Манучарян Светлана -Некоторые фонетические наблюдения в говорах Капанского региона (асинхронные наблюдение).- Капанский говор представляет собой ветвь диалектной группировки на -ум и -(ли)с. При обсуждении исторической фонетической системы замечено, что в ней имеются такие языковые реалии, которые возникли ещё в дописьменный период. Подобные примеры представляют нёбные гласные и ударение на предпоследний слог, употребляющиеся с конца III века до нашей эры, а также “закон Ачаряна”, характерный на территориях Сюнико и Арцаха со II-III веков.

Вообще-то фонетические правила и изменения фонем протекали неравномерно и периодически прерывались.

<sup>25</sup> Ս.Աղարելյան, նշվ. աշխ., էջ 160:

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԸ

Ավագ շաբաթվա միաշաբթին նշանավորվում է Հիսուսի՝ Երուսաղեմ կատարած հանդիսավոր մուտքով. «Եւ բազում ժողովուրդը տարածեցին զիանդերձ իրեւանց ի ճանապարհին, եւ այլը հատանեին ոստո ի ծառոց եւ տարածեին ի ճանապարհին: Եւ ժողովուրդն, որ առաջին եւ զկնի երթային, աղաղակին եւ ասէին՝ Արքինութիւն որդույ Դաւթի, արքինեալ որ զայ յանուն Տեառն. արքինութիւն ի բարձունս»<sup>1</sup>: Այս մուտքը Երուսաղեմ հայ ժողովուրդը հիշատակում է ծաղկազարդ կամ ծառզարդար տոններով: Հեթանոս հայերի համար Ծաղկազարդը խորհրդանշել է գարնան զարուստը և բնույթյան զարթոնքը:

Եկեղեցու հայրերը Հիսուսի առջև ովաննաներով հանդերձներ փռելը մեկնում են որպես մեղքերից ազատվելու նշան, ձիթենու և արմավենու ձյուղերը՝ հարզանքի, նաև հարության հալթանակի խորհրդանիշ: Ծաղկազարդի սուրբ պատարազից հետո օրինված ձիթենու կամ ուտենու ոստեր են բաժանում ժողովուրդին:

Տոնի վաղնջականությունը և համաժողովրդականությունը հիմք են հանդիսացել բազմաթիվ բառապաշտարային միավորների ստեղծման: Բուն տոնի անունը հիմնականում կերտվում է կամ ծաղիկ, կամ ծառ առաջնային բաղադրիչներից, որոնց ավելանում է զարդ գոյականը կամ զարդար բայական հիմքը:

1) *Ծաղիկ առաջնային բաղադրիչով կազմություններ*: Ավագ շաբաթ երեկոյան նախատոնակին, բացիւմ է խորանի վարագույրը, որը Արարատյան դաշտի բարբառախոսները, ինչպես և գրական հայերենում է, անվանում են դղնբացէր, և ավանդույթի համաձայն՝ բացողը նվեր է տալիս եկեղեցուն, որը կոչվում է ժամոնց: Եկեղեցու խորանը զարդարվում է ծաղիկներով, որով և պայմանավորված է տոնի ծաղկազարդ անվանումը:

*Ծաղիկ+ա+զարդ* կազմությամբ հնչազուգարանություններ. ծախկազարտ (Սուրմալուի Բլուր), ձաղզազարդ (Սուլավա), ձաղզազարդ (Տիգրանակերտ), զաղզազարդ (Առտիալ), ձաղզեզարդ (Սասունի Արծվիկ), ծրղկազարդ (Հաղբուրի Հին Թաղլար) և այլն: Ինչպես նկատում ենք, ընդհանուր բարբառային օրինաչափություն ներկայացնող հնչյունափոխություններից տարբերվում է Առտիալի հնչազուգարանությունը, որում առնմանության կամ բաղաձայնների հերթազայության հետևանքով բառակզբի ծ խուլ պայթականը վերածվել է զ սուլականի:

<sup>1</sup> **Սատր.** 21. 8–9, **Սարկ.** 11. 1–11, **Դուկ.** 19. 28–40, **Թովի.** 12. 12–19:

<sup>2</sup> Հողմածի բարբառային օրինակները ըստ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Հայերենի բարբառազարդական ասդասի կութերի հավաքման ծրագրի», բարբառազիստական մենագրությունների, ինչպես նաև բարբառախոս վայրերում մեր կողմից կատարված գրառումների:

Համշենի տարածքում զարդ գոյականի փոխարեն գործառվում է խաղերկրորդային բաղադրիչը՝ կազմելով ծաղիկների առատությունը շեշտող ծաղզախաղ հոմանիշը:

Արարկիրի բարբառում և Սասունի Մառնիկի խոսվածքում Քրիստոսի համիսավոր մուտքը Երևանին համապատասխանաբար կոչում են ծաղզազարթի կիրազի և ձաղգէզարտի դօն բառակապակցություններով՝ ընդգծելով կիրակի և տոն լինելու հանգամանքները:

Բարբառախոս մի շարք վայրերում Ծաղկազարդը հիշատակվում է որպես ծաղկի տօն (Մառնեուլի Դամիա) // ծաղզի տօն (Ախալքալաքի Մեծ Սամսար) // ծախկի տօն (Նախիջևանի Շուռուտ): Ղարաբաղի բարբառի Գանձայի խոսվածքում նշված բառակապակցության փոխարեն գործառվում է ծաղկատօն խևական բարբությունը: *Ծաղիկ բաղադրիչի փոխարեն բարբառախոսները երբեմն կիրառում են պարսկերեն ԱՅ համարժեքը՝ թուրքերեն շառ բառի հետ կազմելով ջանգուլում հոմանիշը. ջանգուլում (Եղեգնաձորի Վերնաշեն) // ջանգուլու (Սասունի Արփի) // ջանգիլում (Նախիջևանի Ազնաբերդ) և այլն:* Տվյալ դեպքում ակնհայտ է ծաղկազարդի շփոթությունը Համբարձման տոնի հետ, քանի որ այս տոնի ընթացքում «Զա ն զուլում» երգի ուղեկցությամբ է կատարվում ծաղկի գովելու ծեսը: *Զան զուլում բառարանային միավորի դիմաց Ամատունին գրում է. «Պարսկերեն կյուլ և ձան բառերից. ժողովրդական ծաղկի գովելու երգերի անոն և ծաղկի գովելու գործողություն»*<sup>3</sup>:

Ծաղիկ բաղադրիչով այս հոմանիշների առկայությունը ևս խոսում է տոնի՝ բնության զարթոնքը խորհրդանշող հեթանոսական բովանդակության մնացորդների մասին:

2) **Ծառ առաջնային բաղադրիչով կազմություններ:** Ծառի պաշտամունքը հատուկ է աշխարհի բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում նաև հայերին: Կ. Ավետիսյանն այդ մասին գրում է. «Ծաղկազարդի տոնը, որը գալիս է հեթանոսական շրջանից և մեր ժողովրդի մոտ հայտնի է ծառազարդ անունով, կապված է ծառի պաշտամունքի հետ»<sup>4</sup>: Ալաշկերտի դաշտում կատարվում էր ծառեր օրինելու ծես:

Ծառի պաշտամունքի մնացորդները ձգվում են մինչև մեր օրերը. «Պատանեկան տարիներից հիշողությանս մեջ մնացել են մենավոր ծառերը (Բագրեևանդի գավառ), որոնց մոտ ճամփորդները կանգ էին առնում, կտրում երեխաների կամ իրենց հագուստի մի կտոր, թեկուց մի թել և կապում այդ ծառերին», - հավելում է Կ. Ավետիսյանը<sup>5</sup>:

Ծառի պաշտամունքի հիման վրա է կերտվել ծառազարդար տոնանունը, որն աչքի է ընկնում լայն տարածագործառականությամբ: Բարբառախոս սևերեկցին այդ մասին այսպես է վկայում. «Զառզարտարին ժամ կացինք, օշնըլված ջեղ պէրէծինկ, հավադկօվ դունք տըրէծինկ»:

<sup>3</sup> Ա.Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 706 :

<sup>4</sup> <http://armenianhouse.org/avetisyan/sacred-forests.html>:

<sup>5</sup> <http://armenianhouse.org/avetisyan/sacred-forests.html>:

*Ծառ + զարդար* անհոդակապ կազմությամբ հնչագուգաբանություններից են. ծառզարդար (Մուշ), ծառզանթափ (Գառնի), ծառզառթար (Արարատյան, Բյուրականի Երևանի մայլա), ծառզառթուր (Ուրմիա), ծառզարթար (Նոր Բայազեսի Կարմիր գյուղ), ծառզարթար (Արտաշատ և Մասիս, Իգդիրի Հախվերիս), ծառզարտար (Մուշի Վարդենիս, Վարսի Քյուրագրարա), ծառզարթար (Հայոց ձորի Նոր գեղ), ծառզառտար (Արծավի Կողովիտ, Նախիրի Քասաղ, Մարտունու Մադինա), ծառզառտար (Ապարանի Վարդենիս), ծառզարթար (Ախալքալաքի Օլավերոյ), ձարզարթար (Սեբաստիայի Մանջալիկ), ձառզարտուր// ձառզարտուր (Սվեղիայի Խորբեկ), ձառզարթըր (Տավորիկի Իրցանք), ծառզրթար (Մուկի Կըճավ, Արտամետ), ծառզարթար (Վան), ծառզարտար (Շատախի Արմշատ), ծառզարթար (Ազա), ծրոզարթար (Լոռի), ծրոզարթար (Գորիս, Բոլնիս-Խաչեն), ծրոզէրդար (Մեղրի), ծառզարթար (Վանի Կողպանց, Դիաղին), ծառզարթար (Խոչշաբի Ձենիս, Խոյի Վարակրգի և Բարդիլոյ), ծառզարտար (Մուկս, Շատախ, Վան), ծառզարդըր//ծառզարդըր (Ոզմ), ձառզարտար (Ապարանի Նիգավան), ձարզարտուր (Սվեղիա), ձառզարթար (Կեսարիա) և այլն: Ըստ Վարսի Փալդրիվան գյուղի բարբառախոսների վկայության՝ իրենց տարածքում կա Ծառզարթար անունով վանք:

Նշված օրինակները արտացոլում են հայերենի տարածքային տարրերակների ձայնավորական և բաղաձայնական գրեթե բոլոր հնյունափոխական օրինաչափ իրողությունները: Մի շարք տարածքներում հենքաց վերոնշյալ օրինաչափ հնյունափոխությունների առկա է առնմանական կամ հերթագայական ծզq բաղաձայնական անցումը: Այսպես՝ զառզարթար (Միսխանի Ուզ), զառզարտար (Սասունի Հազար), զարզառտար (Սասուն, Շատախի Գյարմավ), զարզարթար (Հավարիկ), զարզարտուր (Սվեղիայի Խորբեկ), զայզայթար (Համշեն, Ճանիկ, Սամսոն, Օրմոնքոյ), զըրզարթար (Շամխորի Նյոլզեր), զըրզարթար (Նախիջևանի Փառակա և Կաղ), զայզայտի (Հաշըն) և այլն: Վերջին երեք օրինակների ծառ առաջնային բաղարիչում, ծզq բաղաձայնական անցումից բացի, տեղի է ունեցել ա> ը փոխարկում:

Հ ձայնավորի հավելման ենք հանդիպում հատկապես Լեռնային և Դաշտային Ղարաբաղի տարածքում (զըրզարթան), Սյունիքում, Նախիջևանում: Զնայած տարածքային ամբողջականությանը՝ այստեղ գործառվում են իրարից տարբեր, ոչ նույնական հնչափոփոխակներ: Այսպես՝ զըրզարթար (Բերդ), զըրզարթար (Վարդաշեն, ԼՂՀ Ճարտար, Պողոսագոմեր), զըրզարթար (Շամխորի Լորարակ), զըրզարթար (ԼՂՀ Զանյաթաղ) և այլն:

Ծ >q բաղաձայնական անցումով մի շարք տարբերակներում ընթացակցական ը-ի փոխարեն կամ զուգահեռ ի հայտ է զալիս նաև ի ձայնավորը՝ որպես արդյունք առաջին վանկի և ձայնավորի կամ երկրորդ վանկի հավե-

լական թի հնչափոփխակ. զիրզաքաղաքացի (Շուշիի Բերդաձոր), զըրիզաքաղաքացի (ԼՂՀ Վաղուհաս) և այլն:

Վերը բերված բազմաթիվ օրինակներից բացի, մի շարք բարբառային կողյակներում գործածական են այնպիսի գուգարանություններ, որոնք ներառում են արդեն իսկ նշված ձայնավորական և բաղաձայնական օրինաչափ և զարտույլ հնչյունափոխություններ, սակայն և հնչյունաբանական տեսակետից յուրօրինակ տարբերակներ են: Ներկայացնում ենք դրանք հնարավոր որոշակի խմբավորումով:

ա) *Ծառ* հիմնական բաղարիչի վերջնահնչյունի անկում. զըրզաքաղաքարիչի (Գորիսի Խնձորեսկ), զազարտար (Աշտարակի Լեռնարոտ), զազարթար (Խարբերդ), զազարտոր (Քեսար), զազաքաղաքար (Հին Ջուղա), զազաքաղաքար (Մուժումբար), ծրգառթար (Ստեփանավանի Վարդաբուր և Կուրթան), ծրգառթար (Տավուշի Շավարշավան, Սանահին, Հաղբատ) և այլն:

բ) *Ահողակապով* խսկական բարդություն. ծառազարդար (Ջուղա, Նոր Ջուղա), ծառազարդ (Նոր Խախիչևան): Շամախու Սայան բնակավայրի խոսվածքում առկա է ծառազարդի (ծառ + ա + զարդ + ակ) ահողակապով բարդ ածանցավորը:

գ) *Ք հոգնակերտով* կազմություն (< ծառազարդարք), որը, կարծում ենք, ընդգծում է տոնի հավաքականության, եկեղեցու ներսում և եկեղեցու դուրս ծառեր զարդարելու խմաստը. զըրզաքաղաքարք (Դաշքեսանի Չովդար), ծառզաքաղաքարք (Շամախի):

դ) *Իգ փաղաքշական* վերջածանցավոր. զառարտըրիզ (Սասուն), զայցայտըրիզ (Օրդու), ձառզարտըրիզ (Աշտարակի Լեռնարոտ):

ե) Հնչյունների հավելում. Ղարադարի Ղասմաշենում և Քեյվանում առկա է հնչյունաբանորեն չպատճառաբանված վ/ շրթնային բաղաձայնի հավելում (զըրզաքաղաքարք):

«Քիւրակն» հանդեսը վկայում է Աղանայի թրքախոս հայերին բնորոշ զարզաքաղաքարք հնչատարբերակը, որում տեղի է ունեցել երկրորդ վանկի թագանորդի անկում և դ ձայնեղ պայթականի հնչյունափոխություն կրկնակ թթշնչել խուզերի<sup>6</sup>: 2013թ. Աղանայի թրքախոս հայերի շրջանում հարցումներ կատարելիս նման տարբերակի չհանդիպեցինք:

զ) *Ծառ բաղադրիչի ծխուլի և զարդ բանի զ սուլականի դիմաց ոչ համակարգային զ ձայնեղ պայթական. ջօրջարթօր (Մարաշ): Ջօրջարթօրը իծոմէն զկյունա դոլդաք (=ձյուղ) գօ բիրին (Մարաշ):*

է) Զարդար բանի զ սուլականի դիմաց ծ // ձ ոչ համակարգային բաղաձայնական անցում. ծառծարթար (Ախալքալաքի Ալաստան), ձօռձառթօր (Մարաշ):

<sup>6</sup> Քիւրակն, 1900, էջ 454:

Կարինցիներով բնակեցված Ախալցիսայի ծառծաթար, Ախալքալաքի Բուղաշենի, Աբովի և Բեթանյի, Նինոծմինդայի Գանձայի ծառծաթար, Մամղարայի ծառծաթար, Բալխոյի, Ծալկայի ծառծաթար հնչունական գուգարանություններում վերը նշված փոփոխությունն ուղեկցվում է զարդար բաղադրիչի բացանորդի անկումով:

ը) Զարդ գոյական վերջնաբաղադրիչ կամ միայն բայական հիմք զարդար է գրանցված մի քանի վայրերում. ծառողարթ (Ուրմիայից, Բարանդուղից, Սալմաստից Եկածներով բնակեցված Արտաշատ), զարդար (Ղարաբաղ), զարդար (Հադրութի Քարավուխ): Պարսկահայերով բնակեցված Եղեգնաձորի Ենգիջայում արտասանվում է առանձին շեշտադրությամբ՝ ծառ զարդար:

Լոռու խոսվածքի Ստեփանավանի Կուրթան զյուղի Ենթախոսվածքում հանդիպում է իր բնույթով եզակի տրզառթար հնչագուգարանությունը: Ենթադրում ենք, որ կազմությունն առաջացել է տրզրնդեղ բարի հետ խաչասերումից:

թ) Բառավերջում ն ձայնորդ, որը, կարծում ենք, ընդգծում է տոնի ընթացքում ծառ զարդարելու գործողությունը, ձառողարտան (Սասունի Գոմք), ծառծատան (Ախալցիսայի Ջուլրա և Ծղալթիլա):

ժ) Բառակապակցություն. Չարմահայի Մինազանում ընդգծում է օր (ծառզարթի օր), Խուրի Թաղփուտմ կիրազի (Ծառզարթ ըրի կիրազին ուսի ծառ զարտարէն, տրբին կարմիր, կանանճ, տէղին հավզբով, մօմէրով), Բաղեջում և Մոտկանի Կոռում զիշեր բաղադրիչները (Չառթարի կիշեր կիրթան Էղգեցի, գաղոթին): Համշէնից, Սամսոնից Եկածներով բնակեցված Արխազիայի Ալախաձեռում գործառվում է զայ-զայսար կրկնավոր բարդությունը:

Նորնախիջևանցիները Քրիստոսի Երուսաղեմ փառավոր մուտքի տոնն անվանում են ծառկոտորունք: Ակնհայտ է, որ բարի հիմքում ընկած է զործողությամբ պայմանավորված իմաստափոխությունը, քանի որ տոնակատարության նպատակով պոկոսվում են ծառերի բազմաթիվ ձյուղեր:

3) Հոմանիշներ: Բավականին հարուստ է ծաղկազարդի տոնն անվանող հոմանշային շարքը, որը կարելի է դասակարգել իմաստային մի քանի խմբերով:

ա) *Ուրենի բաղադրիչով կազմություններ:* Չնայած հայ ժողովրդի համար սրբազնությամբ ծառեր են համարվում սոսին և բարդին, սակայն Ծաղկազարդի տոնին, իրեական սովորույթի համաձայն, ուժենու կամ արմավենու ոստեր են օրինվում և բաժանվում: Ծիսական այդ արարողության հիման վրա մի շարք տարածքներում իմաստափոխության է ենթարկվել ոլորհներ (ուռ+ենի+օրին+եք) բարդություններ՝ արտահայտելով տոնի իմաստը: Նման զուգարանություններ են զործառվում Նախիջևանի Մեծոփում (ուռօնինօց), Ազուլիսում (ուռօխնիք), Կաքավաբերդում (հրաօխնիք), Կարձևանում (հրաօխնիք), Մեղրիում (հրոօխնիք): Ինչպես նկատում ենք, նշված վայ-

բերք ներկայացնում են Հայաստանի հարավում տեղակայված Նախիջևան-Մեղրի բարբառային կողմակը:

Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքի իրադարձությունը օրինված ունենու հետ առնչելը կարող է պայմանավորված լինել Արևիքում (Նախիջևան, Մեղրի) ուռենի ծառատեսակի տարածված լինելով կամ հատկապես դրա ոստերից հյուսված պասակը կարևորելով: Բնչպես հայտնի է, այդ օրը եկեղեցի գնացողներից յուրաքանչյուրի նպատակն է անպայման օրինված պասակ ձեռք բերելը և տան պատից մինչև հաջորդ տարի՝ Ծաղկազարդի օրը կախելը:

բ) **Տոնանունների շփոթություն:** Տոնանունների շփոթությունը տարածված իրողություն է բարբառախոս միջավայրում: Ծաղկազարդը Վարդավառի հետ շփոթելը, կարծում ենք, առաջացել է ծաղիկ և ժողովրդական ընկալմամբ վարդ ընդհանուր և տեսակային միավորների համարման հետևանքով: Բնշինչ, բայց որ ամեն մի հայ Վարդավառը ընկալում է որպես ջուր ցնցիկու օր, դա անհերքելի է:

ԼՂՀ Մարտակերտի Հասանդայա-Մարալյան Սարովում Ծաղկազարդն անվանում են վրրթէվոր, Ճարտարում վրթէվոր, արևմտյան բարբառատարածքից Սասունի Քոփում վարտէվար: Եթե նշված վայրերի շփոթությունը պայմանականորեն անվանենք մասնակի, ապա Լոռու Շամուտ գյուղում տեղի է ունեցել ամրողական շփոթություն: Տեղեկատու բարբառախոսը վարթէվոր տոնանունը նշելուց հետո որպես ճշգրտում ավելացրել է տոնակատարության օրը, որ է հուլիսի վերջին կիրակին: Ծանուցումը միանշանակ հավաստում է, որ գործ ունենք ոչ թե Երուսաղեմ մուտքի, այլ Քրիստոսի այլակերպությանը նվիրված տոնի հետ: Կարելի է ենթադրել, որ այս տարածքում ավագ շաբաթակա միաշաբթին որպես տոնական օր չի հիշատակվում, որի հետևանքով էլ վարդավառ ու ծաղկազարդ հասկացությունները նույնականացվել են:

Գեղարքունիքի մարզի Վերին Ճամբարակում Ծաղկազարդի տոնն անվանում են վիճակ: Տվյալ դեպքում ևս ունենք ակնհայտ շփոթություն համբարձման տոնի հետ, քանի որ վիճակ հանելու, «Զանգյուլում» երգելու ծեսերը միանշանակ տեղի են ունենում Քրիստոսի համբարձման տոնին: Վան - Վասպուրականի տարածքում ևս եղել է նման շփոթություն, և դա հաստատվում է Խինգշըպար ծառզնքրաբ ի (Վանի Լէսլ) և Խինշապարի ծառզնքրաբ ի (Վանի Կյուսնենց) օրինակներով, քանի որ ծաղկազարդի տոնը տեղի է ունենում ոչ թե իննօշաբթի, այլ ավագ միաշաբթի, իսկ համբարձման տոնը՝ անպայման իինօշաբթի:

Այդ երկու տոնների շփոթություն կա նաև դիաղինցիների մոտ: Նշենք նաև, որ ընդհանրապես տաղավար տոններին եկեղեցին զարդարում են ծաղիկներով: Ծաղիկ քաղելու և ծաղիկ գովելու արարողությունը բնորոշ է համբարձմանը:

Նախիջևանի Ազա բնակավայրում տոնը շփոթված է անզամ Քրիստոսի հարության տոնի հետ: Հայտնի է, որ ձու ներկեն ու ձվախաղը բնորոշ են Քրիստոսի հարության տոնին: Նման երևույթի հանդիպում ենք նաև Շատա-

իի Գյարմավ բնակավայրում: Չի բացառվում նաև, որ այս բնակավայրերում ձու ներկելու սովորությունը է մեկ շաբաթ առաջ, այսինքն՝ ծաղկազարդին: Չու ներկելը խորհրդանշում է Քրիստոսի՝ մարդկության փրկության համար թափած արյունը, որը տեղի է ունենում ավագ ուրբաթ երեկոյան:

Համբարձման տոնին հաջորդող առաջին կիրակին կոչում է Երկրորդ ծաղկազարդ և խորհրդանշում է հրեշտակների ուղեկցությամբ Քրիստոսի մուտքը Վերին Երուսաղեմ: Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսն այս տոնը սահմանել է Գրիգոր Լուսավորչի՝ Խոր վիրապում գտնվելու հետ կապված ավանդագրույցի հիման վրա: Տոնը ժողովրդի մեջ հայտնի է կանաչ - կարմիր կիրակիր անունով, իսկ եկեղեցական գրականության մեջ՝ բուն ծաղկազարդից տարբերակելու համար կոչում են Երկրորդ ծաղկազարդ: Խարբերդի տարածքի բարբառախոսները այդ տոնը շփոթում են բուն ծաղկազարդի հետ՝ միավորելով այն ընդհանուր՝ զանանչ զիրազի բառակապակցությամբ: Զեյթունները դարձյալ շփոթության հետևանքով անվանում են գէնայշ-զայմույ զիրազի, չնայած ունեն նաև տուորն պացը զիրազի նկարագրական հոմանիշը, որի հիմքում ընկած է նախատոնակին կատարվող դրնբացերի ծեսը:

Ընդհանրապես ողջույն տալու և ողջույն առնելու եկեղեցական ծեսը կատարվում է բոլոր պատարագների ընթացքում: Հայաստանյայց եկեղեցու պատարազի տեքստում կարողում ենք. «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, և որք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելք եւ աղօթեցէք»<sup>7</sup>: Կոտայքի մարզի Կապուտան զյուղի մուշ-բուլանուլցի բարբառախոսների մոտ ծաղկազարդին է տապալորվել հատկապես այդ սրբազն արարողությունը: Կարելի է ենթադրել, որ բարբառախոսները պարբերաբար ներկա չեն գտնվում պատարագների, այդ իսկ պատճառով կարծում են, թե ողջույն առնելու կարգը բնորոշ է միայն ծաղկազարդի տոնին: Չի բացառվում նաև բարբառախոսների կողմից ողջույն առնելու ծեսն առանձնակի կարևորելը:

գ) **Այլ կազմություններ, օտարարանություններ:** Դարսկահայերով բնակեցված Եղեգնաձարի Վերնաշենի ենթախոսվածքի իւլոյինից փոփխակի առաջին բաղադրիչում տեսնում ենք հայր բառը, այսինքն՝ տիրոջ՝ հորն ուղղված օրինության տոն:

Կեսարացիները տոնն անվանում են զննաց-զննաց, որը, կարծում ենք, թուրքերն ու ցեղական գելեն գետ «եկող- անցնող» արտահայտությունն է, որի հիմքում ընկած է Քրիստոսի այս աշխարհ գալու և զնալու աստվածաշնչական պատումը:

Արտաշատի Բուրաստանում գործառվում է զյաշր (Հայերեն՝ «պտույտ, շրջագայություն») պարսկաբանությունը, որով նշվում է աստվածորդու՝ մարդկանց շրջանում շրջագայելը:

Խարբերդի Հարուսի բնակավայրի խոսվածքին բնորոշ է զազգանազ. Անտիռ-Բեյլանի խոսվածքին՝ շանախթոր կամ շանախտօրին զիրազին:

<sup>7</sup> <http://www.stnersess.edu/media/DivineLiturgy.ArmUnicode.pdf>.

Հնարավոր է, որ սրանք ծառանուն կամ ծաղկանուն նշող օտարաբանություններ են:

*Զնապիտօր*-ը կարելի է մեկնաբանել՝ 1) թուրքերեն *can + aktarım* («նախիջևանել, անցնել»), այսինքն՝ տվյալ դեպքում բարի հիմքում ընկած է Քրիստոսի Երուսաղեմով անցնելը; 2) Հնարավոր է նաև *ջան + յաղթ + օր* կազմությունը, այսինքն՝ Քրիստոսի հայթական մուտքի օրը ովասննաներով ու *ջան* ն բացականչականով դիմավորելը:

Ինչպես տոնական բոլոր օրերը, այնպես էլ Ծաղկազարդն առանձնանում է տոնին համապատասխան զանազան ավանդույթներով, կերակրատեսակներով՝ հիմք դառնալով թեմատիկ բառերի ու հասկացությունների, որոնք առանձին քննություն են պահանջում:

Այսպիսով, ուստիմնասիրությունը ցոյց է տալիս, որ որքան համաժողովրդական և տարածված է տոնակատարությունը, այդքան բազմազան ու հետաքրքի են դրանց խորային արտահայտչամիջոցները:

*Ծաղկազարդ* և *ծառզարդար* կազմությունների համեմատությունից պարզվում է, որ *ծառզարդար* կցական բարդությունն օժտված է առավել լայն տարածագործառականությամբ: Դա էլ իր հերթին խոսում է տոնի համակարգում *ծառ* հասկացության կարևորության և առաջնային դերի մասին:

Mesropyan Haykanush - The Dialect Equivalents of Tsakkazard.- The article is about the dialect words referring to the glorious entrance of Jesus to Jerusalem. The name Tsakkazard is composed with the main components of “tsakhik” (Arm. flower) or “tsar” (Arm. Tree) added with the second component “zard” or “zardar” (Arm. decoration). The existence of the synonyms of the word “tsakhik” explains the heathern influence of the celebration of the start of spring. As a result of the tree worship the new celebration of “tsarzardar”(decorating tree) was created which is rather common. The comparison of the words Tsakkazard and “tsarzardar”(decorating tree) shows that the word “tsarzardar”(decorating tree) is more common. This fact make us conclude that in the idea of the celebration the concept of “tsar” (Arm. Tree) has more significant role

Месропян Айкануш - Диалектные эквиваленты Вербного воскресенья.- В статье говорится о диалектных эквивалентах, которые описывают торжественное вступление Иисуса в Иерусалим. Название этого праздника в основном состоит из двух исходных компонентов - цветок или дерево, к которым прибавляются существительное *զարդ* или глагольная основная часть *զարդար*. Синонимы со словом *ծաղիկ* (цветок) символизируют языческие контенты праздника. Название *ծառզարդար* отличается наиболее широким распространением. Сравнение названий *ծաղկազարդ* и *ծառզարդար* показывает, что *ծառզարդար* имеет широкое распространение. Это утверждает, что в концепции системы празднования дерево имеет главную роль.

**ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Հայերենի արևելյան խմբակցության բարբառային միավորներում բայի երկրորդական վերլուծական ժամանակների՝ մեր կատարած ուսումնասիրություններից հետո, կարծում ենք, հարկ կա նման հետազոտության ենթարկել նաև արևմտյան տարածքի բարբառների բայական համակարգերը։ Դրանով ավելի ամբողջական պատկերացում կարող ենք կազմել խոր առարկա հարցի վերաբերյալ։ Ի դեպ, մենք ավելի վաղ արդեն քննության ենք ենթարկել Պոլսահայ բարբառում քերականական այս իրողության առկայությունը։

Եթե արևելյան բարբառներում հիշյալ ժամանակաձևերը բավականին կենսունակ են գործառում (շատ դեպքերում՝ մինչ այսօր), ապա դրանք արևմտյանում դրսնորման այլ նկարագիր ունեն։

«Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ, խոսելով Վանի խոսվածքի բաղադրյալ ժամանակների մասին ընդհանրապես, Հ. Աճայյանը նշում է, որ դրանցով բարբառային այս միավորը այնքան էլ հարուստ չէ, ինչպես ասենք՝ պոլսահայ բարբառն է։ Եվ, իբրոք, մենք ուսումնասիրում էինք երկրորդական ժամանակների առկայության փաստը հատկապես Հ. Պարոնյանի գրական ստեղծագործություններում, եկանք այն համոզման, որ Պոլսի խոսվածքը ընդհանրապես հարուստ է վերլուծական ժամանակաձևերով, որոնց մեջ քիչ չեն երկրորդականները։

Վանի խոսվածքի վերաբերյալ Հ. Աճայյանը գրում է. «Վանի բարբառը ... չիսիտե ոչ միայն շարունակական ձևը (կոր), ոչ միայն պայմանական եղանակը (եղեր), այլև նույնիսկ հարակատարի և գերակատարի սիրած եմ, սիրած էի ձևերը, այլ միայն սիրեր եմ, սիրեր էի»։ Այնուհետև հեղինակը շարունակում է իր միտքը ասելով, որ -ած դերբայական ձևով, այնուամենայնիվ, այդպիսի խոնարհում կա. տիսած կամ, տիսած կամ, տիսած կա, տիսած կանք, տիսած կայք, տիսած կան, տիսած կի, տիսած կիր, տիսած կինք, տիսած կիք, տիսած կիք, տիսած կինք։ Տողատակում բացատրություն տալով՝ Հ. Աճայյանը նշում է, որ այս ժամանակաձևերը համապատասխանում են Երևանի բարբառի տէսած կամ, տէսած կայի, Պոլսի բարբառի՝ տէսած ունիմ, տէսած ունիի բայական կազմություններին<sup>1</sup>։

Ի դեպ, Վանի խոսվածքից բերված օրինակները տվյալ դեպքում հենց երկրորդական բաղադրյալ ժամանակներ են, որոնցում որպես օժանդակ բայ է ծառայում կամ-ը՝ իր խոնարհված ձևերով։ Հիշեցնենք, երկրորդական են կոչ-

<sup>1</sup> Հ. ԱՃԱՅՅԱՆ, Վանի բարբառը, Ե., 1953, էջ 178.

վում վերլուծական այն ժամանակները, որոնք կազմվում են ՀՄԴից բացի որևէ այլ օժանդակ բայով և հիմնական բայի հարակատար, ապառնի, ընթացակցական, երբեմն նաև անկատար դերբայներով (վերջինս առկա է ՌԻՄ ճյուղի բարբառներում): Վանի բարբառային միավորում Հ. Աձառյանը առանձնացնում է «տեսնել» բայի հարակատար և ապառնի դերբայներով խոնարհված այլ բաղադրյալ ժամանակներ ևս: Դրանցից առանձնացրել ենք միայն երկրորդական ժամանակաձևերը՝ եզակի առաջին դեմքով: Այսպես. տիսած էլնիէմ, տիսած էլնի, տիսած կէլնի, տիսած կէլնիէմ, տիսած կէլնի, տիսած պիտի էլնիէմ, տիսած պիտի էլնի, տիսած պիտի էլնի, տիսած էլնի, տիսած էլնիու էլնի, տիսած էլնիու էլնիէմ, տիսած էլնիու էլնի: Խոնարհման այս հարացույցում հիմնական բայը տէսնիէլ, խոնարհված է սահմանական, հարկադրական, պայմանական, ըղձական եղանակներով:

Բայական վերլուծական կառույցներում ոչ հաճախ հանդիպող երամայական եղանակը, ինչպես մեծ լեզվաբանն է անվանում այնուհետև իր հիշատակած բաղադրյալ բայաձևերի խոնարհված տեսակները, նույնպես տեղ է գտել նրա բերած օրինակների շարքում: Այսպես. տիսած էլի՛, տիսած թօ՛ն էլնիէմ, տիսած թօ՛ն էլնի, տիսած էլի՛: Կարծում ենք՝ սրանք ևս երկրորդական կարելի է համարել:

Վերբերյալ վերլուծական այս եղանակաժամանակային բոլոր տիպերը կազմվել են հարակատար, ապառնի դերբայների, ինչպես նաև որպես օժանդակ բայ ծառայող ըլնիէլի օգնությամբ, որը խնդրու առարկա կառույցներում մշտապես խոնարհված է հանդես գալիս, և որով էլ պայմանավորվում են հիմնական բայի խոնարհման եղանակն ու ժամանակը: Վանի խոսվածքին նվիրված հիշյալ աշխատության «Նմուշներ» բաժնում, ցավոք, խնդրու առարկա հարցին վերաբերող ոչ մի օրինակ չկար:

Վանի բարբառի մյուս Շատախի, Ոզմի, Սոկսի խոսվածքների համապատասխան աշխատություններում եղինակները որևէ ակնարկ կամ օրինակ իսկ չեն բերել վերլուծական երկրորդական ժամանակների գոյության կամ բացակայության փաստին առնչվող: Այդ բնակավայրերի բանահյուսական նյութերում էլ դրանք չեն հանդիպում:

«Ալաշկերտի խոսվածքը» գրքի հեղինակ Ք. Սադարյանը գրում է, որ երկրորդական բաղադրյալ ժամանակները հասուն չեն տվյալ բարբառային միավորին: Ի դեպ, Ալաշկերտի լեզուն, ըստ Գ. Զահոռյանի բարբառների բազմահատկանիշ դասակագման սկզբունքի, մտնում է Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի  $U_2n^3$  բարբառի մեջ: Այն պատկանում է Կճյուղին:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Աձառյան, նշվ. աշխ., էջ 179:

<sup>3</sup> Գ. Զահոռյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

Ալաշկերտի խոսվածքում հազվադեպ հանդիպող «...գնալու կեղնի, էրտըլու կեղնի, սօվլուց կեղնի, ըսէլու յա յէրհէ և այլ բայական ձևերը գրական հայերենի ազդեցությամբ են գործածվում և օրինաչափ բնույթ չեն կրում»<sup>4</sup>: Գրական հայերեն ասելով՝ հեղինակը, անշուշտ, նկատի ունի ժամանակակից արևելահայերենը, որի և գրական, և բարբառային տարրերակներում, ինչպես և մեր՝ ավելի վաղ կատարած ուսումնասիրություններն են վկայում, բավականին ակտիվ են գործառում բայական երկրորդական վերլուծական ժամանակները:

«Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 9-րդ հատորում Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքից մեզ հետաքրքրող եզակի մեկ օրինակ գտանք. *Ճօպան կտրէլու վախտ էտ տղի խէլք սրհաթ մի՛ էրկուս զիլից էրթած կեղնի*<sup>5</sup> (Ենթադր. եղ.-ի անցյալ ժամանակ):

Տիգրանակերտի բարբառը միայն մեկ՝ Կ ճյուղին պատկանող Տիգրանակերտի խոսվածքով, ուսումնասիրել է Ա. Հանեյանը: Աշխատության համապատասխան բաժնում հեղինակը գրում է, որ, ընդհանրապես, բայի հարադրական կազմություններով սույն բարբառը հարուստ է: «Իբրև հարադրության բայական մաս գործառում են Էնիլ, Էղնալ, առնիլ, իդալ և այլ բայեր»<sup>6</sup>: Քննվող նյութին առնչվող, մեզ հետաքրքրող այլ նկատառումներ գլուխ չկային: Սակայն բարբառային նմուշների մեջ այսպիսի երկու օրինակ գտանք. *Նըսղուց գէղնան* («Նստած է լինում»), էրիգէ զիլին, քի հօնախէ օրքզզրդաց: Այսպիսի ձարպած գէղնան («ձարպած է լինում»)<sup>7</sup>: Այս բարբառում հարակատար դերբայն ունի ուզ և ած ածանցներ: Բերված օրինակներում հարակատար դերբայների կողքին խոնարիկել է լինել >էղնալ օժանդակ բայը ներկա ժամանակով: Այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ վերլուծական երկրորդական ժամանակները գործառության մեջ ընդգրկում չեն ունեցել նաև Տիգրանակերտի բարբառում:

Առղեալի բարբառը՝ Կ ճյուղին պատկանող, Կուտիի և Սուչավայի խոսվածքներով (Լեհաստանի, Հունգարիայի, Սուչավայի և Ռումինիայի հայերի խոսակցական լեզուները), ուսումնասիրել է Հ. Աճառյանը: Բաղադրյալ ժամանակներին վերաբերող բաժնում հեղինակը գրում է, որ բայը շարունականի ձևեր չունի: Իսկ Սուչավայի խոսվածքի մասին ասում է. «...այստեղ գրտնում եմ գուղէի ձէձիս< կուղէի ծէծէմ «պիտի ծէծէի» ձևը, որ կարող է ընդհա-

<sup>4</sup> Ք.Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 144:

<sup>5</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ, Ե., 1968, հ.9, էջ 18:

<sup>6</sup> Ա.Հանեյան, Տիգրանակերտի բարբառ, Ե., 1978, էջ 106:

<sup>7</sup> Նույնը, էջ 167, 168:

նուր եղած լինել նույն բարբառին»: Եվ բերում է ձեձել –ի խոնարհումը նշված ժամանակածնի բոլոր դեմքերով ու թվերով. գուգէի ձեձիմ, գուգէիս ձեձիս, գուգէր ձեձել, գուգէինք ձեձինք, գուգէիք ձեձիք, գուգէին ձեձին : Այսուհետև ավելացնում է. «Այս բոլորը՝ ենթադրաբար»<sup>8</sup>: Դատելով խոնարհված բայի՝ հեղինակի կատարած գրական թարգմանությունից՝ «պիտի ծեծեի», ենթադրում ենք՝ գործառում է հարկադրական եղանակի երկրորդական անցյալ ժամանակը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հիշյալ կառույցներում օժանդակ բայից բացի խոնարհվել է նաև հիմնական բայը, տվյալ դեպքում՝ ըդական եղանակի ներկա ժամանակով:

Հ. Աճառյանի նշած այդ բայաձեւերը իրենց կազմությամբ մեզ հուշում են, որ դրանք կարելի է անվանել երկրորդական վերլուծական ժամանակաձևեր և որ արևելյան խմբակցության բարբառներում, ինչպես նաև մեր առօրյա հավանաբար բարբառներից թափանցած խոսակցական լեզվում, կենսունակ են եղանակաժամանակային նման կառույցները: Այսպես օրինակ՝ ուզում եմ խօսամ, ուզում ես խօսաս (Արարատ. բրո., խոսակցական), օզում եմ խօսամ, օզում ես խօսաս (Ղբբ. բրո.) և այլն: Թերևս կարող ենք ասել, որ ուզէլը այստեղ հանդէս է զայիս որպէս, այսպէս կոչված, կիսաօժանդակ բայ (նման տերմին կա, օրինակ, ֆրանսերենում. այն անվանում են demi-ogiliaire), որովհետև նրան զուգահեռ խոնարհվել է նաև հիմնական բայը:

Մեր ուսումնասիրած հաջորդ Մալաթիայի բարբառն ունի միայն մեկ բարբառային միավոր՝ Մալաթիայի խոսվածքը<sup>9</sup>: Այն պատկանում է *հաշացյուղին*: Այս մասնիկը խոնարհման համակարգում միշտ հետադաս գործառություն ունի: Իսկ եթե բայը սկսվում է ձայնավորով, սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներում բառասկզբում ավելանում է նաև *կաղամաթիայի* մասնիկը: Այսպես. **զաղամաթիայի** և **զաղամաթիայիս**՝ «աղում եմ», **զաղամաթիայի յանձնական**՝ «աղում եմ»:

Թ. Դանիելյանի «Մալաթիայի բարբառը» աշխատությունում կա «Երկրորդական բաղադրյալ ժամանակներ» վերտառությամբ ոչ ծավալուն մի բաժին: Հեղինակը գրում է, որ դրանք «...կազմվում են ապառնի և հարակատար դերբայների և ըլիլ բայի հարադրությամբ: Ծննդանունը կազմվում է կատարում»: Այսուհետև մեկական օրինակ է բերված գրել >քըրէլ բայի երկրորդական վերլուծական ժամանակաձևերից: Այսպես. քըրաձ ըլիմ, քըրաձ ըլէյի, քըրաձ քըրիմ, քըրաձ գրէյի, քըրաձ բիդ ըլիմ, քըրաձ բիդ ըլէյի, քըրաձ էղա, քըրէլու ըլիմ, քըրէլու ըլէյի, քըրէլու գրիմ, քըրէլու գրէյի, քըրէլու բիդ ըլիմ, քըրէլու բիդ ըլէյի, քըրէլու էղա: Թ. Դանիելյանի վկայությամբ՝ եղանա-

<sup>8</sup> Հ. Աճառյան, Քննություն Առողջական բարբառի, Ե., 1953, էջ165:

<sup>9</sup> Տե՛ս Գ. Զահոռլյան, նշվ., աշխ., էջ 133:

կաժամանակային այս բայալները գործածվում են նաև պայմանականություն արտահայտող նէ թեական մասնիկի հարադրությամբ. քըրէլու ըլիմ նէ, քըր-րաձ ըլիմ նէ, քըրաձ էղա նէ, քըրէլու ըլէյի նէ և այլն<sup>10</sup>: Հիշյալ զրքի բարբառային նմուշների բաժնից երկու օրինակ կարող ենք բերել. «**Կաղը անի քայիք ըլին նէ**» («Եթե զալու լինեն»), ինչ էրէս բիդ ունենաս. ...**բաի չեղաձ ըլիիր**» («Հեղած չի լինի»), **քիդցաձ էղի՛ր** («իմացած եղի՛ր» հրմ.)ու դանըդ համը, հողը գր փախչի<sup>11</sup>:

Սովորաբար երկրորդական վերլուծական ժամանակաձևերի ժխտականը, խոնարհվող բայի գիտավոր ժամանակների նման, կազմվում է չ- մասնիկի օգնությամբ, որը դրվում է օժանդակ բայից առաջ: Սակայն վերը բերված վերջին նախադասության մեջ չ- ժխտական է ստացել նաև հիմնական ըլիի բայի հարակատար դերբայը:

Կեսարիայի բարբառն ունի երեք խոսվածք՝ Թումարզայի, Դարենդեի, Էվերեկի<sup>12</sup>: Բարբառին նվիրված աշխատության հեղինակ U. Անթույանը, խոսելով բայի հարակատար դերբայի գործառության մասին, գրում է, որ դըրանք խոնարհման համակարգում փոխարինում են վաղակատարի ձևերին: Իսկ «...մի քանի բայերի վաղակատարի եզակի 3-րդ դեմքը (հաստատական խոնարհմամբ միայն) օգտագործվում է այսպես կոչված պատմողական եղանակի գաղափար արտահայտելու համար. Ինչպես՝ էղէր այ, ունցէր այ: Այնուհետև հեղինակը, վկայակոչելով պոլսահայ բարբառում Հ. Աճառյանի կարծիքը էղէր վաղակատար դերբայի գործառության մասին, որը Հ. Աճառյանը համարում է թուրքերեն իմիշ բայաձևի թարգմանությունը, և որը (Պոլսում՝ յէղէր-ը) պատմողական եղանակի կազմության ժամանակ է գործածվում, այն հակադրում է Կեսարիայի հայերենում էղէր այ, ունցէր այ բայաձևերին: Դրանք U. Անթույանը պարզապես եղանակավորող բառեր է համարում, քանի որ գործածական չեն դրանց եզակի 1-ին, 2-րդ դեմքերը և հոգնակի թիվն ամրող-ջությամբ<sup>13</sup>: Աշխատության բարբառային նմուշների բաժնում կան այսպիսի օրինակներ. Գէղացր մը յէզ իրան էշ մը ունի էղէր այ: Մայդար աղան հայվաճերու լէզուէն զա հասզընա էղէր այ: Գընգանը հէղը նըսդաձ էղէր այ... Հայվաճերու լէզուէն զիդանալլը մարքու լսէ նայ, գր մառնը էղէր այ: անարա բազր քըսան-անոսուն հար հավ, մէ բաձից գօնող ունի էղէր այ: Դասնրիինզին ֆաննասանին

<sup>10</sup> Թ. Դանիելյան, Մալաթիայի բարբառ, Ե., 1967, էջ150:

<sup>11</sup> Նշվ. աշխ., էջ 244:

<sup>12</sup> Տէ՛ս Գ. Զահոռլյան, նշվ. աշխ., էջ 133:

<sup>13</sup> Ս. Անթույան, Կեսարիայի բարբառ, Ե., 1961, էջ 89-90:

մէջը Ամէրիկայէն էզօղ հայ զրլա մը բօմբա գու շինէ եղէր ա՛:Բերված նախադասություններում հեղինակի բնորոշմամբ՝ եղանակավորող եղէր ա՛-ն գործառում է միայն եզակի երրորդ դեմքով խոնարիված բայաձեւերի հետ, և տվյալ դեպքում դժվար է ասել՝ այն իսկապէ՞ս եղանակավորող է, թե մի այլ դերակատարում ունի համակարգում: **Ունցէր ա՛** բառակապակցությամբ, սակայն, որևէ օրինակ չգտանք:

Հարկ է նշել, որ ազգագրական և բանահյուսական նյութերում, հատկապես արևմտյան բարբառներում, ինչ-ինչ պատճառներով շատ սակավ են հանդիպում մեզ հետաքրքրող բայական երկրորդական ձևերը:

Ամփոփելով վերոշարադրյալը եզրակացնում ենք, որ արևմտյան խմբ-բակցության մեր ուսումնասիրած բարբառային միավորներում՝ Վանի, Մշո, Տիգրանակերտի, Առղեալի, Մալաթիայի, Կեսարիայի բարբառներում, բայի երկրորդական վերլուծական եղանակամանակային ձևերը, ի հակառություն արևելյան բարբառների, ինչպես նաև Դոլսի բարբառի, գործառության մեջ ընդգրկում չունեն: Պատճառները կարող են զանազան լինել: Օրինակ՝ գուցե այդ կառույցները խնդրու առարկա տարածքներում ձևավորվել են բավական ուշ և, ի տարրերություն արևելյան խմբակցության միավորների, չնայած լայն տարածում ստանալ: Հիշենք, սակայն, որ երկրորդական բաղադրյալ ժամանակներ գրաբարը նույնպես ունեցել է:

Mikayelyan Zhanna - The Secondary Compound Verb Tenses in Several Armenian Dialects of the Western Group. - From the Van accent of the Van dialect professor H. Acharyan brings several examples of verbal structures as *տիսած կամ*, *տիսած կաս*, *տիսած կս*, which are in reality secondary tenses where *կամ* is used as an auxiliary verb. But in the works devoted to the accents of the same dialect as Moks, Vozmi, Shamakhi as well as in the literary works connected with the dialect of Moush we haven't been able to find any examples which will interest us.

An exceptional example of the Tigranakert dialect is *Նըսորոց գեղնա՛* (was sitting), which we took from the section "Examples" of the consequent work. The forms used in the Malatya dialect as *բըրած ըլիմ բըրած բլէիի*, *բըրած զրիմ*, *բըրած զրլէիի*, *բըրած բիհու* and others are also the examples of secondary compound verb tenses. S. Antosyan considers **Եղէր ա՛**, **Ունցէր ա՛** verb forms to be modal words in the dialect of Kesaria. With the help of those modal words compound tenses are formed. In our opinion this is a very controversial issue.

Thus, in the dialects of Van, Moush, Tigranakert, Ardeal, Malatya, Kesaria from the western group, the secondary compound tenses have less frequency than in the dialect of eastern group. The reasons for this may differ: for instance, these structures might have been penetrated into the dialects later and didn't have further development.

<sup>14</sup> Նշ. աշխ., էջ 314 -315, 338:

Микаелян Жанна - Дескриптивные второстепенные времена глагола в армянских диалектах западной группы.- Р. Ачарян в своей книге “Ванский диалект” в глагольной системе ванского говора приводит такие примеры, как *տիշիծ կիշ*, *տիշիծ կիշ*, *տիշիծ կիշ*, которые на самом деле являются *второстепенными составными формами* глагола. Слово *կիշ* здесь функционирует в роли вспомогательного глагола. В других говорах данного диалекта – Мокс, Возм, Шатах, такие глагольные формы нам не встречались.

В книге тигранакертского диалекта в текстах мы нашли одну единственную фразу с глагольной второстепенной формой- *Նրանուզ գեղնաւ*. А в говоре Малатии более активно функционируют дескриптивные времена, как *բրրած թիմ*, *բրրած թիմի*, *բրրած գրիմ*, *բրրած գրիմի*, *բրրած թիմ* и т.д.

Второстепенные составные формы глагола вообще функционируют почти во всех наклонениях, даже в повелительном, которое очень редко встречается в данных конструкциях. Но в западных диалектах в целом дескриптивные второстепенные времена, в сравнении с восточными диалектами, более редко встречаются. Эти времена формировались в более поздний период времени, и вероятно далее не развивались в данной группе.

## ՑՑՈՑ ԵՎ ՊԱՐՈՒՑ ԵՐԳԵՐԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԵԶ

Նախաքրիստոնեական երաժշտական մշակույթի առանձնահատկությունների բացահայտումը, հայկական ինքնուրույն հոգևոր երգի սկզբնավորումն ու պատմական օրգանացումը, ժողովրդական երաժշտարվեստին առնչվող բազմաթիվ հարցեր ուղղակի կամ անուղղակի արծարծվում են հայոց պատմություններում:

Բանահյուսական աղբյուրներն իրենց տեսակային անվանումներով՝ **երգք առասպելաց, երգք վիպասանաց, երգք թռելեաց, երգք ցցոց և պարուց**, ավանդվել են Ս. Խորենացու «Հայոց պատմության» միջոցով: Այդ անվանումների առաջին վկայողը Խորենացին է, իսկ նախորդ և հետագա աղբյուրներում այդ բառերը շատ չեն: Հետազոտողները բազմիցս անդրադառել են դրանց մեկնություններին, այդուհանդերձ դժվար է եզրակացնել՝ արդյոք դրանք ոճական տարբերակներ են Խորենացու բառապաշարում, թե որոշակի հասկացություններ ու տերմինային անվանումներ:

Մեզ հետաքրքրող հարցի առումով առանձնահատուկ է **երգք ցցոց և պարուց** անվանումը, որի մեկնաբանությանը շատերն են անդրադառել (Ս. Էմին<sup>1</sup>, Ս. Պալասանյան<sup>2</sup>, Խորեն Ստեփանել վարդապետ<sup>3</sup>, Ս. Աբեղյան<sup>4</sup>, Հ. Հովհաննիսյան<sup>5</sup>): Ազգերի և տեղանունների առաջացման մասին Ոլիմպիոդրոս Փիլիսոփայի հաղորդած անգիր զրուցների և իր լսած ժողովրդական ավանդությունների առիթով պատմիչը գրում է. «Բայց առաւել յաճախազդյն հինքն Արամազնեայց ի նուազ փանդրան և յերգս ցցոց ու պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ»<sup>6</sup>:

Ս. Էմինը ընդհանուր եզրեր է նշում ցցոց և պարուց երգերի և գուսանքարի միջն՝ մերժելով Նոր հայկազյան բարօքքում ցուց բարի դիմաց արձանագրված «ցունքք, այսինքն ցնծութիւն». կամ ցոյցը ուրախութեան. հանչես. երգ ուրախութեան. ձայն նուազց կամ նուազ ձայնից. շաշիւն. շառաշիւն» իմաստները<sup>7</sup>: «Գուսան առ մեզ, գրում է Էմինը, ...զկատակերգուն յայտ առնել յոյր սակա առաւել յարմար թուի մեզ ընդ առուամբն զերգիչս խաղացողս իմա-

<sup>1</sup> Ս. Էմին, «Հայոց հնոյն Հայաստանի», Սոսկվա, 1850:

<sup>2</sup> Ս. Պալասանյան, «Պատմություն հայոց գրականության», հ. 1, Թիֆլիս, 1865:

<sup>3</sup> Ս. Խորենացու «Հայկական պատմություն», աշխարհաբար թարգմանեց և լրացրանեց **Խ. Ստեփանե**, Ս. Պետերբուրգ, 1889:

<sup>4</sup> Ս. Աբեղյան, «Հայ ժողովրդական առասպելները Ս. Խորենացու «Հայոց պատմության» մեջ», Վաղարշապատ, 1899:

<sup>5</sup> Հ. Հովհաննիսյան, «Թատրոնի միջնադարյան Հայաստանում», Ե., 1978:

<sup>6</sup> Սովորսի Խորենացու «Պատմութիւն Հայոց», աշխ. Ս. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տիգեր, 1913, էջ 27:

<sup>7</sup> Գ. Աւետիքեան, Խ. Սիմելեան, Ս. Աւելեան, «Նոր բառզիրք հայկական լեզուի», հ. 2, Վենետիկի, 1836, էջ 917:

նալ, որք առաջի ժողովրդեան ի հրապարակս ձևացուցանկին զպարունակեալն յերգս վիշպասանաց որպէս և առ զանազան ազինս»<sup>8</sup>: Այսուհետև շարունակում է. «Երգը ցցոց և պարուց ոչ այլ ինչ յայտ առնե, բայց եթէ երգը գուսանաց և երգչաց վէպս ասողաց ժողովրդեան, զնորդը պար առելոց»<sup>9</sup>: Ստեփան Պալասանյանը նշում է, որ «Երգը պարուց նշանակում են այն երգերը, որ երգիչները ասելիս միևնույն ժամանակ պար էին զալիս»<sup>10</sup>: Խորեն Ստեփանն Քարդապետը երգ պարուց-ը մեկնում է այնպիսի երգ, որ «պարելով էր երգվում», այսուհետև հավելում է. «Պարել բարի բուն սկզբնական նշանակությունն է բոլորել շուրջ առնել, պրտըտվել, որ և ցուց է տալիս հին սկզբնական պարի խորհրդավորությունը»<sup>11</sup>:

Նախնական համարելով պար բարի «Չրջան» և «Չուրջ» նշանակությունները՝ Հ. Աճառյանը նշում է նաև դրանց համարժեքները հին հունարենում (περί) և սանսկրիտում (para, pari)<sup>12</sup>: Ուշագրավ է Աճառյանի այն նկատառումը, որ բարի սկզբնական ձևը եղել է պարը, ք-ն սխալմամբ ընկալվել է որպէս հոգնակի վերջավորություն և ընկելի: Հնարավոր է, որ Խորենացու բնագրում պարուց-ը անեղական իմաստ ունենար, մանավանդ, եթէ բառը գործածվել է ժողովրդախոսակցական լեզվում: Աճառյանի նշած «խումբ», «հավաքույթ», «շարք» իմաստները պարուց-ին տալիս են հավաքական նշանակություն: Վաղմիջնադարյան հեղինակների երկերում պար բարին զուգահեռ գործածվում են նաև խաղ, կայթ, կաքաւ անվանումները: Նոր հայկացյան բառարանում պար-ը բացատրվում է որպէս «բոլորումն» և իրքի բառիմաստի համարժեք՝ բառարանի հեղինակները նշում են հին հունարեն չօրօս (խորս) բառը: Բացատրությունն էլ հետևյալն է. «Բազմութիւն բոլորեալ ի կաքաւել երգովը»<sup>13</sup>:

Քննելով հայ-իրանական լեզվական զուգահիպումները՝ Գ. Զահուկյանն անդրադարձում է գարշապար բարի ստուգաբանությանը: Անբացատրելի համարելով գարշ-ը նշում է, որ պար-ը ծագում է պարթևական թագ (ρ'δ') «ոտք» բառից, որ հանգում է իրան. \*թագ-ին, հմմտ. ավ. թագ'-, հ. պարսկ. թադա՝ «ոտք»: Բառի ուժնահետք իմաստի համար հմմտ. ավ. թադա՝ բայլ, հետք, ուժնահետք<sup>14</sup>: Այսինքն՝ պար արմատի ծագումը հնարավոր է բնեցնել հենց «քայլ», «հետք», «ոտքահետք» նշանակություններից: Ինչ վերաբերում է պար(ա)- ածանցին, ապա Գ. Զահուկյանը հնարավոր է համարում, որ այդ ածանցի համար հիմք ծառայած հայերեն պար բառը հունարան հեղինակների

<sup>8</sup> Մ. Էմին, նշվ.աշխ., 1850, էջ 96:

<sup>9</sup> Մ. Էմին, նշվ. աշխ., էջ 97L:

<sup>10</sup> Մ. Պալասանյան, նշվ. աշխ., էջ 175:

<sup>11</sup> Մ. Խորենացու Հայկական պատություն, աշխարհաբար թարգմանեց և լրտարանեց Խ.

Ստեփանն, Ս. Պետրովուգ, 1889, էջ 27:

<sup>12</sup> Հ. Աճառյան, Հայերէն արմասանյան բառարան, հ. 4. Էջ 54-55:

<sup>13</sup> Գ. Աւետիքան, Խ. Միկմելեան, Մ. Աւգերեան, Նոր բառզիրք հայկագեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1836, էջ 625:

<sup>14</sup> Գ. Զահուկյան. Հայ-իրանական լեզվական զուգահիպումներ, Պատմաբանասիրական հանդես, N 2, Ե., 1995, էջ 183:

կողմից կապված լինի իրանական ծագում ունեցող պարփառ տիպի կազմություններին և հուն. ուստի՝ շրջա-, պարա- նախածանցին<sup>15</sup>:

**Պար և ցուց** անվանումները գործածվել են Ազարանգեղոսի Պատմության մեջ **կայթիք** բառաձևի և **զկաքաւսն** բառերի հետ. «...իբրեւ եկն եմուտ նա /Տրդատ առ Հորիսիմ/ ...առ հասարակ մարդիկն...երգս առեալ բարբառեցան կայթիք վազելով, ցուց բարձեալ մարդկանն, կեսրն ի բերդամիջին, եւ կեսր զքաղաքամէց լցրին իմանցիք, առ հասարակ համարէին հարասնեացն զպարսն պարել եւ կաքաւսն յորդորել»<sup>16</sup>: Բուզանդի Պատմության մեջ հիշատակվում է. «...պարուցն կաքաւելով, ... զմեռեալսն յուղարկեին»<sup>17</sup>: Հովհան Մամիկոնյանը գործածում է **պարաւորքն** անվանումը. «Եւ իբրեւ մտին ի զիւղն, ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն եւ երգս առեալ բազում ինչ իրաց գովեին»<sup>18</sup>: Ուշագրավ է Ուլիստանես եպիսկոպոսի հիշատակությունն այն մասին, որ Վահագնի առասպելը ևս «երգէին երգիչը ի պարս խաղուց»<sup>19</sup>:

**Պար** բառի նույնիսկ ուշ վկայություններն ունեն այն նույն իմաստային դրսորումները, որոնք արձանագրված են Ազարանգեղոսի, Բուզանդի, Խորենացու Պատմություններում: Օրինակ՝ Նարեկացու մատենագրության մեջ կարդում ենք.«...դասիմ ի պարս հեզոց եւ ընդ այս կաքաւեմ»<sup>20</sup>: Օրինակներ կան նաև Գր. Մագիստրոսի Թղթերում.«...զքաղցրունսն գործել պար մեղուացն անդրստ անաշխատաբար ի բժիշն...», «...իբրեւ զերկին յարդարեալ լուսաւորացն պարու...»<sup>21</sup>: Ավելացն է, որ **պար** բառը միջնադարյան բնագրերում գործածվում է հիմք ունենալով Աստվածաշնչում և դավանաբանական զքականության մեջ ընդունված և կիրառվող նշանակությունը, ինչպես՝ «պար մարզարէից», «պար հրեշտակաց», «պար աստեղաց» և այլն:

Առանձնացնելով **պարուց և ցցոց երգերը** Մ. Արելյանը նշում է, որ **պարուց երգերը** կարծ քնարական երգեր են եղել նման մեր երկտողերին ու քառատողերին, որոնք և բոլոր ազգերի ժողովրդական պարերգերի ամենահին տեսակն են: Իսկ **ցցոց երգերը** պարի մի տեսակի կամ հարսանյաց պարի իմաստ ունեն<sup>22</sup>: Հնարավոր է, որ լինեին **ցցոց երգ** և **պարուց երգ** առանձին անվանումներ, բայց պատմիչները դրանք չեն վկայել: Ըստ որում, կապակցության մեջ **երգ**-ը ոչ թե տարանջատող, այլ միավորող բաղադրիչ է:

<sup>15</sup> Գ. Զահորեյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 566:

<sup>16</sup> Ազարանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 99:

<sup>17</sup> Փաւստոսի Բիզանտացւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 193:

<sup>18</sup> Յովհաննու Մամիկոնենի եպիսկոպոսի պատմութիւն Տայրոնյ, Վենետիկ, 1889, էջ 45:

<sup>19</sup> Ուլիստանես եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Էջմիածին, 1871, էջ 99:

<sup>20</sup> Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնը, Վենետիկ, 1840, ՀԱ, էջ 183:

<sup>21</sup> Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ի լուս ընծայեց Գ. Կոստանյան, Աղեքանդրապոլ, 1910, ԻՇ, էջ 72, ՀԵ, էջ 223:

<sup>22</sup> Ս. Արելյան, Հայ ժողովրդական առասպեկները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1899, էջ 256-257:

**Յուց** բառը Արմատականը մեկնում է «ուրախության խաղ», «երգ», «պար», «կայթին»<sup>23</sup>: Պատմիչների երկերում բառը գործածվել է «պար» նշանակությամբ: Գ. Լևոնյանը **ցուց և պարուց երգերը** համարում է գուսանական երգի տեսակներից՝ նշելով, որ դրանք կատարվում էին հարսանիքներում, հասարակական տոննախմբությունների, ինչույքների ու զինարբությունների ժամանակ<sup>24</sup>: **Յուց**-ի աշխարհիկ բովանդակությունն ակնհայտ է նաև Նարեկացու Մատյանում. «Կարաս կայթից եւ ցուց վազից խաղալկացն դիւց գարշելեաց ձարտար խարողաց ծովութեամբ իմով շնորհեցի»<sup>25</sup>:

Վ. Առաքելյանը, անդրադառնալով Նարեկացու այս հատվածին, գրում է, որ վեճի առարկա **ցուց** բառը առաջին անգամ գործածել է Ազգաթանգեղոսը: Այն նշանակում է «վազք», իսկ **ցուց բարձեալ**՝ «վազելով»: Որպես ապացոյց բերում է գրաբարի սեռական հոլովով հավելադրության օրինակներ՝ «տեսիլ երազոյ», «դէմք երեսաց», «վախճան կատարածի» և նշում, որ Նարեկացին գործածել է նման զոյլ հավելադրություն՝ **կարաս կայթից և ցուց վազից**: Ցուց երգերը տարբերելով պարերգերից՝ Առաքելյանը գրում է, որ իին հայոց մեջ դրանք կատարվում էին Նավասարդյան և այլ տոննախանդեսների ժամանակ, երբ հրապարակներում վազքի մրցություններ էին կազմակերպվում<sup>26</sup>:

**Ցուց** բառը նշանակում է նաև աշխարհիկ բանաստեղծության տեսակ, քանի որ հետագա շրջանի մատենագրությունն առանձնացնում է **ցցասաց** անվանումը: «Ոչ ունկն լսէ զլկտի և ցցասաց բանն», - գրում է Գրիգոր Մարաշեցին (12-րդ դար) իր «Վայր ոռքոց» կոչվող աղոթագրերից մեկում<sup>27</sup>: Բառը կարելի է ընկալել երկու իմաստով՝ կամ ցուցքի ձևով, ցուցքի մեջ ասված, կամ ցուց ասող, պատմող, հորինող: Ե. Մեղրեցու Բառզբում **ցցասաց** բարի դիմաց գրված է «խաղասաց կամ երգիչ լիտության»<sup>28</sup>: Հովհ. Սարկավագը իր նշանավոր «Սարեկ»-ում առանձնացնում է «ոտանավոր ու ցուցական ըստ քերդողացն տեսակի», որտեղ դեռևս հոնարան ժամանակներում ստեղծված **ցուցական** անվանումն ընկալվում է թերևս որպես բանաստեղծության մի տեսակ կամ արձակ ստեղծագործություն<sup>29</sup>: Բոլոր դեպքերում Հովհ. Սարկավագի վկայությունը վերաբերում է խոսքարվեստի այնպիսի մի տեսակի, որի բանահյուսական ծագումը կամ բանավոր արվեստի հատկանիշներն ակնհայտ են եղել 10-11-րդ դարերում:

Հետաքրքիր է, որ Հ. Գաբրիելյանը, անդրադառնալով Բուզանդի Պատմության բանավոր աղյուրներին, առանձնացնում է «առակը, առասպելը, ցուցը», իսկ հայ իին բանահյուսական տեսակների մեջ նշում է «ցուցը, գե-

<sup>23</sup> Հ. Աճառեան, Հայերէն արմասական բառարան, Ե., 1926, հ. 4, էջ 464:

<sup>24</sup> Գ. Լևոնյան, Թատրոնը իին Հայաստանում, Ե., 1941, էջ 27:

<sup>25</sup> Գ. Նարեկացի, նշվ. Աշխ., ԲԱ, էջ 49:

<sup>26</sup> Վ. Առաքելյան, Բառաքննական դիտարկումներ, Պատմա-բանասիրական հանդէս, N 4, 1979, էջ 36:

<sup>27</sup> Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէեան, Ս. Աւգերեան, Նոր բառզիրք հայկագեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1836, էջ 920:

<sup>28</sup> Ե. Մեղրեցի, Բառզբու հայոց, Ե., 1975, էջ 320:

<sup>29</sup> Ա. Արքահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Ե., 1956, էջ 323:

դոնք, մըրմունջք»<sup>30</sup>: Դրանք վաղմիջնադարյան հրապարակային գվարձությունների և նախարարական խնջույքների անբաժան մասն են: «Հնարավոր է, որ այլևայլ հրապարակական ուրախության նշաններուն մեջ ցուց կամ ցցոց երգեր ըլլան, -գրում է նա, -և կամ ընշավետ ինչպես թագավորներ, ասանկ այլ ընշավետ նախարարներ իրենց որսին երեներէն շինված կերակուրներով զարդարված ու ծաղկալից սեղաններուն վարձակներ ու երգեցիկներ պակաս չէին ըներ»<sup>31</sup>: Կարելի է նշել, որ **ցուցը**-ը ենթադրում է ոչ միայն պարային, այլև երգային արտահայտություն և ամենայն հավանականությամբ ունեցել է աշխարհիկ-կատակերգական բովանդակություն: Պատահական չէ, որ թատերագետ Հ. Հովհաննիսյանը **ցուցը** է անվանում ազգային թատերախաղը կամ միջնադարյան թատրոնի բուն հայկական տեսակը<sup>32</sup>:

Հայու Աճառյանի՝ **ցուցը**-ը բարբառներում նշանակել է «հրեշային պատկեր, անկարգ տեսարան, այլանդակ դեմք», և դրանից կ առաջացել են **ցուցանք** (հրեշ, հրեշային երևոյթ, հրաշք), **ցուցանք** (տգեղ, տձե, նաև ապիկար մարդ), **ցուցուլունք** (ցուցադրություն) բառերը<sup>33</sup>: Բարբառներում գործածվում են նաև **ցուսկ** (Բայազետ), **ցուցկի** (Լոռի), **ցիցոն**, **ցիցարկա** (Ախալցխա ), **ցուցը**, **ցուցանք** (Արմավիր): Այսինքն՝ գրականության մեջ քիչ գործածվող **ցուցը** բառն այսօր էլ կիրառվում է տարբեր բարբառներում:

Այսպիսով, **ցցոց** և **պարոց** երգերը պարերգական արվեստի տեսակ են, որ ունեն աշխարհիկ բովանդակություն և ընդգծված կատակային, ծաղրական բնույթ: Դրանք ժողովրդական ավանդությունները հիշելու, պահպանելու էական ձևերից են և որոշակի պատկերացում են տալիս հնագույն հայերենի ուշ նախազրային փուլի որոշ առանձնահատկությունների մասին:

Mkhitarian Gayane - Songs of Tstsots and Paruts among Old Armenians.- Songs that have reached us through the history of Armenia by M.Khorenatsi have various renditions of different researchers. Nevertheless, it's difficult to conclude whether these are stylistic variants in Khorenatsi's lexicon or definite notions or terms. We can assume that Songs of tstsots and paruts are types of dance-song art and have secular content and underlined quizzical, sarcastic nature. Those songs are essential form of keeping national traditions which give a notion about a later stage of Armenian language features.

Мхитарян Гаяне- Песни цзоц и паруц среди древних армян.- Эти песни достигли нас через "Историю Армении" М. Хоренаци. В научной литературе было много примечаний об этом термине. Тем не менее трудно сделать вывод – имеет ли термин стилистическую вариантность в лексике Хоренаци, или это определенное название. В заключении - термин имеет светское содержание и выраженный юмористическо-ироничный характер и дает очевидное представление о нескольких особенностях о древнейшем армянском языке.

<sup>30</sup> Հ. Գարբրետան, Պատմութիւն մատենագրութեան հայոց, Վիէննա, 1851, էջ 26:

<sup>31</sup> Նոյն տեղում:

<sup>32</sup> Հ. Հովհաննիսյան, Եջվ. աշխ., էջ 134:

<sup>33</sup> Հ. Աճառյան, Հայերէն զաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1058:

ՄԻԶԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ  
ՀՈԳԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ<sup>1</sup>  
(ընդհանրություններն ու տարբերությունները)

Միջին հայերենը և Մշո բարբառը կցական կառուցատիպով լեզվավիճակներ են: Կցականությունն արտահայտվում է նաև գոյականների թվակազմության մեջ՝ պահպանելով թվի քերականական կարգի՝ եզակի/հոգնակի իմաստային հակադրությունը: Միջին հայերենը 12-16-րդ դդ. «գրախոսակցական» լեզուն է, իսկ Մշո բարբառը Կենտրոնական Հայաստանում ձևավորված ու կազմավորված, ապա ՀՀ տարածքում և այլուր գործածվող, լայն ընդգրկում ունեցող բարբառ է՝ իր ենթաբարբառներով, տասնյակ խոսվածքներով: Այն լեզվական մի շարք հատկանիշներով աղերսվում է հայերենի տարրեր լեզվավիճակներին, ի մասնավորի՝ միջին հայերենի: Երկու լեզվավիճակները հոգնակիակազմության հարցում հայտաբերում են հոգնակերտների նորատիպ՝ գուգամիտվող և տարամիտվող համակարգեր<sup>2</sup>:

Միջին հայերենում ձևավորված հոգնակիակազմության նոր տիպն իր մասնակի արտացոլումն ունի նաև Մշո բարբառում: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում տարբերակվում են միավանկ, երկվանկ, բազմավանկ հիմքատեսակներ: Բնշպես Հ. Պետրոսյանն է գրում, հիմքատեսակների և հիմքատարբերակների համակարգումը հիմնվում է վանկարարության սկզբունքի և հնչյունաբանական այլ գործոնների վրա<sup>2</sup>: Նշված հիմքատեսակների գործառումը երկու լեզվավիճակները միավորող հատկանիշ է: Եթե Մշո բարբառում դրանք գործող համակարգեր են և ներկայանում են հնչյունական տարաբնույթ փաստերով, ապա միջին հայերենում դրանք ի հայտ են գալիս այդ լեզվավիճակի կազմավորմանը գուղքնթաց՝ բազմաթիվ հարցերում մնալով անբացատրելի: Հիմքատեսակների տարբերակումը նախտրու լեզվափուլերում չի կարևորվել, քանի որ **թ. ս. ց** հոգնակերտները տարբեր հիմքատեսակներով գոյականներին կցվել են առանց խտրության:

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳԽ-ի կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

\* Միջին հայերենի հոգնակերտ մասնիկների թնությունը կատարվում է ըստ 12-16-րդ դդ. գրավիր աղբյուրների, ուստի հասապատասխան եզրահանգումները տրվում են այդ դարերից ավանդված լեզվական փաստերի դիտարկումներով, և դրանց գիտական ուսումնասիրությունը «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմություն» աշխատության երկրորդ հատորն է /Ե., 1975 թ./, իսկ Մշո բարբառի տվյալները բերվում են ըստ առկա ուսումնասիրությունների, ՀՀԱ ծրագրով լրացված տետրերի՝ 354 /Մուշ, Մուշի գավառ, Վարդիսաց գյուղ/, 401 /Մուշ, Մուշի գավառ, Վարդենիսի գյուղ/, 447 /Մուշ, Խարթ գավառ, Ծըղակ գյուղ/, 353 /Մուշ, Աղաջկերսի գավառ, Խաստոր գյուղ/, և ՀՀ Ապարանի, Մարտունու տարածաշրջաններում ապառող մշեցիների կենդանի խոսքի:

<sup>2</sup> Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1972, էջ 149:

Ըստ մատենագրական տվյալների՝ միջին հայերենի հոգնակերտները 44-ն են, որոնցից 23-ը ներկայացվում են որպես կազմությամբ պարզ, թեև վիճարկելի է նրանցից շատերի պարզ հոգնակերտ լինելը, 21-ը՝ բաղադրյալ<sup>3</sup>, իսկ Մշու բարբառում, ըստ առկա տվյալների, գործում են 32 հոգնակերտներ, որոնցից 28-ը բաղադրյալ են, իսկ 4-ը՝ պարզ:

Հետազոտությունները ցույց են տալիս՝

ա) Դիտարկվող երկու տարածքներում ընդհանուր են հետևյալ պարզ հոգնակերտները՝ **-ք**, **-եր/-եր**, **-վի**, **-ան** /իշան, ջորեան/, **-իկ/ի** /մարդիկ/:

բ) Միայն միջին հայերենին հասուլ պարզ հոգնակերտներ են՝ **-նի** /ախտոնի/, **-անի** /անձրևանի/, **-ունք** /ազգունք/, **-այր** /իշխանայր/, **-որայր** /գեղորայր/, **-իք** /այծիք/, **-տի** /այրկտի/, **-աք** /տեղաք/, **-ենի** /բախչենի/, **-արեք** /գեղարեք/, **-եան** /իշեան/, **-իք** /այծիք/, **-ոք** /շատոք/, **-ոնք** /շատոնք/, **-ոնար** /ծաղկունար/: Բերվածները վկայում են, որ հոգնակերտ **ք-ի** և նախորդող հիմքակամ ձայնավորների կապակցությունները գիտակցվում են որպես առանձին հոգնակերտ մասնիկներ՝ տարածվելով մաքուր հիմքերի վրա, սակայն ակնբախ է դրանց ոչ պարզ հոգնակերտ լինելը: Դրանք միջին հայերենին նախորդած լեզվափուլից մնացած հետքերն են, որոնք կան նաև Մուշի տարածքում՝ **շատօք/շատօկ**, **օրթոնք/օրթունկ**, **սերմանք/կ**, **ծաղգունկ**:

գ) Սուսկ Մշու բարբառում գործառող պարզ հոգնակերտներ չկան, եղածները, ինչպես տեսանք, կան նաև միջին հայերենում:

դ) Վիճակագրական հաշվարկները ցույց են տալիս, որ միջին հայերենում և Մշու բարբառում ընդհանուր են բաղադրյալ հետևյալ հոգնակերտները՝ **-ներ**, **-ստան**, **-երք** /գետեր/, **-վներ/-վրներ**, /ձբդվներ/, **-անիք** /կնանիք/, **-անք** /փշրանք/, **-եք** /փեսեք/, **-վանք** /իշվանք/, **-տիք/դիք/կ** /ծակտիք/, **-վան** /տիրվան/, **-բանք** /դեղանք/, **-վտանք/-վրանք** /ձիժվրդանք/:

ե) Միայն միջին հայերենին հասուլ բաղադրյալ հոգնակերտներ են՝ **-նիք** /կնկնիք/, **-վիք** /իրվիք/, **-եանք** /գրեանք/, **-իկք** /մարդիկք/, **-երայք** /դեղերայք/, **-երնիք** /սրտերնիք/, **-վնիք** /աշվնիք/, **-վանիք** /իշվանիք/, **-վեր** /ականչվեր/, **-վտիք** /քորուածերվիք/, **-տիկք** /մանկտիկք/, **-ստներ** /լեռնստներ/:

զ) Մշու բարբառին հասուլ բաղադրյալ հոգնակերտներ են՝ **-վրդիք/կ**, **-դ/տան**, **-տ/դանք/կ**, **-վանք/կ**, **-վրտ/դանք/կ**, **-վրդրան**, **-ունք/կ**, **-ենք/կ**, **-րունք/կ**, **-անիք/կներ**, **-եք/կներ**, **-աներ**, **-բան**, **-բաներ**, **-իդեք** /խնամիդեք/, **-ուշկ**, **-նք**, **-երներ**:

Միջին հայերենում և Մշու բարբառում գործառող բաղադրյալ հոգնակերտների առանձին բաղադրիչների քննությունը հանգում է հետևյալին՝ **-նիք** /նի+ք/, **-վիք** /վի+ք/, **-եանք** /եան+ք/, **-իկք** /իկ+ք/, **-երայք** /եր+այ+ք/, **-երնիք** /եր+նիք/, **-վերնիք** /վե+նիք/, **-վանիք** /վի+անիք/, **-վեր** /վի+եր/, **-վնե/եք** /վի+նի+եր/, **-վտիք** /վի+տիք/, **-վանք** /վի+անք/, **-երվիք** /եր+վիք/, **-տիկք** /տի+իկք/, **-ստներ** /ս+տի+ան+եր/, **-ենք** /են+ք/, **-եք** /այ+ք/, **-ներ** /նի+եր/, **-դիք** /տի+ք/, **-վրդիք**

<sup>3</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ., Ե., 1975, էջ 38:

/վի+տի+ թ/, -դանք /տի+ան+թ/, -վրդանք /վի+տի+ան+թ/, -անք /ան+թ/, -վան /վի+ան/, -վանք /վի+ան+թ/, -բան /եր+ան/, -վանք /վի+ան+թ/, -բանք /եր+ան+թ/, -ունք /ու+ան+թ/, -ռունք /եր+ու+ ան+ թ/, -ստան /ս+տի+ան/, -երք /եր+թ/, -եկներ /այ+ թ+նի+եր/, -իդեր /տի+այ+թ/, -ուշկ /ուշ+կ/, -նք /ան-թ/, -վըրդան /վի+ եր+տի+ան/, -երներ /եր+նի+եր/, -անիքներ /ան+իք+նի+եր/:

Փաստերը ցուց էն տալիս, որ բաղադրյալ հոգնակերտների երկու ձայնավորներից առաջինը շեշտափոխության օրենքներով ընկնում է: Այս օրինաշափությամբ հնչյունափոխվում էն -վի, -նի, -տի, -ստան, -եր, -անք /վերջին երկուսը միայն մեկական օրինակով/ մասնիկների ձայնավորները՝ կա'մ սղվում էն, կա'մ վերածվում էն զաղտնավանկ թ-ի: Մյուս հոգնակերտները հնչյունափոխության չեն ենթարկվում: Մշտ բարբառին հատուկ -եր հոգնակերտի է ձայնավորը բաղաձայն թ-ից առաջ այ երկբարբառի մենաբարբառացման հետևանք է:

Մշտ բարբառում մեծ տարածում ունեցող բաղադրյալ հոգնակերտները հիմնականում ներկայանում են -թ մասնիկի հավելումով, սակայն այդ մասնիկները առանց թ-ի ել են գործածվում՝ -դան/-դանք, -վան/-վանք, -ռուն/-ռունք, -ան/-անք, վըրդան/-վըրդանք՝ Ծնգերդան- Ծնգերդանք, իշվան-իշվանք, գ՛եղրան-գ՛եղրանք, դ՛եղրուն-դ՛եղրունք, իձկան-իձկանք, քուրդան-քուրդանք: Առանց թ-ի տարբերակները գրանցվում են հատկապես Մուշի տարածքի Ալաշկերտի խոսվածքում<sup>4</sup>: Բացառություն են միայն -դիք և -վըրդիք մասնիկները, որոնք առանց թ-ի չեն կիրառվում՝ քուրվըրդիք, ախազըրդիք:

Հիմքերը, որոնց վերջից կցվում են թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ հոգնակերտները, միջին հայերենում և Մշտ բարբառում երկու կերպ են դրսւորվում. անփոփոխ «մաքուր» հիմքեր, այսինքն՝ չհնչյունափոխված, և քերականական ծանրաբեռնվածություն չունեցող, բայց հնչյունափոխված հիմքեր, որոնք լինում են շեշտով պայմանավորված և շեշտից անկախ:

Միջին հայերենում և Մշտ բարբառում հոգնակի թվի ընդհանրական ցուցիչ չկա: Գործածության հաճախականությամբ միջին հայերենում առաջատար են -եր, -ներ, -նի, -թ, իսկ Մշտ բարբառում՝ -եր, -ներ, -թ հոգնակերտները: Նախորդ լեզվափողի երբեմնի սակավաղեալ կիրառություն ունեցող հոգնակերտները, որոնք հավաքալանության իմաստ արտահայտող ձևովիներ են եղել<sup>5</sup>, միջին հայերենում ստացել են սովորական ու լայն կիրառություն, տարածվել այնպիսի գոյականների վրա, որոնք հավաքականություն չեն կարող արտահայտել, և այդ ամենի արտացոլումը կա նաև Մշտ բարբառում: Միջին հայերենում կիրառման հաճախականությամբ գործառական որոշակի ծանրաբեռնվածություն ունեն -ունք, -լիք, -անիք, -ստան, -այք, -ռունք հոգնակերտները, որոնց գործառումը վերաբերում է տասից մինչև մի քանի տասնյակ գոյականների: Մյուս՝ -իք, -տիք, -աք, -ան, -ենիք, -արեք, -իկ, -եան, -ոք, -ոնք, -

<sup>4</sup> Ք. Սաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Ե., 1985, էջ 71:

<sup>5</sup> Ա. Արքահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 20:

**ունար, -եր** հոգնակերտներից ամեն մեկով հոգնակի են կազմում մեկ տասնյակից կ ավելի թիշ բառեր, երբեմն միայն՝ մեկ բառ: Իսկ Մուշում գործառական լայն ընդգրկում չունեցող մյուս հոգնակերտներն ընդգրկում են երկու տասնյակը չգերազանցող բառախմբեր, երբեմն մեկ բառ կամ մի բանի բառ: Հատկապես մեծ թիվ են կազմում **-ան/ք** հոգնակերտով կազմությունները: Պետք է կարևորել, որ Մշոն բարբառում ընդհանրացումները ավելի մեծ են, քան միջին հայերենում: Բոլոր այն բառերը, որոնք բարբառում հոգնակի իմաստ են արտահայտում այլ մասնիկներով, կարող են հոգնակի թիվ կազմել նաև **-եր-ով** և **-ներ-ով** ևս, մինչդեռ այն բառերը, որոնց հոգնակին կազմված է այս մասնիկներով, սակավադեպ են այլ հոգնակերտներ ստանում՝ **սերմեր/սերմանք/կ, ճշվեր/ճշվան, լրներ/լրներ:**

Այդ անմիատարբությունը միջին հայերենում պայմանավորված է պատմահասարակական իրադրությամբ և գրական լեզու չինելով, իսկ Մշոն բարբառում պատմահասարակական իրադրությանը հավելվում է ոչ միայն անմշակ և խոսակցական լեզու լինելը, բարբառախոսների անընդմեջ տեղահանությունները, այլև լեզվական փաստերի կենսունակությունը: Ընդ որում, թե՝ միջին հայերենում, թե՝ Մշոն բարբառում ընդհանուր է միավանկ բառերի **-եր**, բազմավանկների **-ներ** մասնիկներ ստանալը: Միջին հայերենում երկվանկ բառերն ու մեկուկես վանկանի հիմքերը ստանում են **-նի՝ գրլուխ-գրլինի, մըզկիթ-մըզկիթնի** և այլն, բազմավանկ բառերը կարող են ստանալ նաև **-նի** և **-եր** մասնիկներ: Միջին հայերենի հոգնակերտների այսօրինակ բաշխվածության վկայությունն են նաև միջինհայերենյան հիշատակարանների լեզուն և դրանց լեզվական փաստերը<sup>6</sup>: Մշոն բարբառում մեկուկես, երկվանկ բառերը համաշխափորեն ստանում են **-եր, -ներ** մասնիկները՝ **արգրեր, սանդրբներ, մանդրըներ** և այլն: Փաստերը ցոյց են տալիս, որ Ալաշկերտի խոսվածքում **-ներ** մասնիկը կարող է տարածվել նաև միավանկ բառերի վրա՝ **գինդ- գրնդըներ, լուձ-լլաներ<sup>7</sup>, թուշ-թուշներ** /Ալաշկերտ, Խաստուր գյուղ/, **ծառ-ծառներ, դօշ-դօշներ, թէլ-թէլներ<sup>8</sup>** և այլն: Մշոն տարածքին բնորոշ են նաև **ն** բաղադայնով վերջացող բազմաթիվ բառերի ոչ թե **-ներ**, այլ **-եր** մասնիկ ստանալու վկայությունները, որոնցում փոխազդեցական հնչյունափոխության օրենքներով ընկնում է երկու նույնանման հնչյուններից մեկը՝ **մաձներ, բօստըներ, չօրներ, առավներ, ամեներ, յեղներ** և այլն: Մշոն բարբառում բազմավանկ հիմքերի հոգնակերտ ստանալու համակարգայնությունն ավարտված իրողություն է, քանի որ համատարած գործածվում է **-ներ** մասնիկը, իսկ միջին հայերենում բազմավանկ հիմքերը չունեն այդ համակարգվածությունը:

<sup>6</sup> Լ. Հովհենիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Ե., 1997, էջ 18:

<sup>7</sup> Ք. Մարտիրյան, նոյն տեղը, էջ 70:

<sup>8</sup> Գ. Մկրտչյան, Սպարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների թնդություն [ատենախոսություն, ԳԱԱ Հ. Աճայշանի անվան լեզվի ինստիտուտ], Ե., 2011, էջ 66:

Ինչպես տեսանք, սրանք միավանկ հիմքերին հակադրվում են երեմն -եր, երբեմն -ներ, նոյնիսկ -նի մասնիկ ընդունելով՝ **այգեսներ**, **աղախներ**, **հերիաքնի**, **սպիտակուցնի** և այլն: Միջին հայերենում հատկապես դիտարկելի են բազմավանկ հոգնակիակազմ հիմք+**-եր** կաղապարի սահմանափակ վկայությունները՝ **կերակրեր**, **սենեսկալեր**: Սրանք էլ, չի բացառվում, արհեստական կառույցներ են՝ սպրդած լեզվական հուշարձաններում:

Միջին գրական հայերենում հոգնակի ուղղականի թվակազմության մեջ գործում են երեր կարգի կաղապարներ՝ **ա/չեզոք** վերջնահանգով հիմք+ք, **ք/ոչ չեզոք**, ընդ որում բաղաձայն+(ը)ն վերջնահանգով հիմք+ք, **գ/այս երկու կաղապարների նորակազմ ձևեր**: Առաջին և երկրորդ կաղապարները «ժառանգորդային» են՝ ավանդված նախորդ լեզվափուլերից: Ի հակադրություն միջին հայերենի՝ Մշոն բարբառում թվակազմության կաղապարների սահմանափակություն կա. այստեղ հիմնականում գործում են բուն միջինհայերենյան կաղապարները: Բարբառը բնութագրվում է նաև յուրահատուկ ձևերով, իսկ չեզոք վերջնահանգով հիմք+ք կաղապարը որոշակի օրինաշափ սահմանափակումներով է ներկայանում՝ **ւորիք**, **այգիք**, **կաղնիք**, **օսկիք**, **քամիք** և այլն: Միջին հայերենի և Մշոն բարբառի համար բնորոշիչ է այն, որ եզակի ուղղականի ձևը հոգնակիակազմ հիմք է, որը թեև միջին գրական հայերենում ավարտուն տեսք չի ունենում, սակայն այս տիպը, ինչպես ուտումնասիրություններն են ցույց տալիս, այսօր գործում է Մշոն բարբառում և, առհասարակ, արդի հայերենում: Միջին հայերենում և Մշոն բարբառում նորակազմ ձևերի հոգնակի ուղղականում վերականգնվում է ն հիմքակազմ տարրը՝ **ձեռներ**, **վուդներ**, **մըկներ** և այլն:

Դիտարկված ձևախմբերը ցույց են տալիս, որ միջին հայերենում և Մշոն բարբառում գոյականների թվակազմությունն արտահայտվում է գործառական ծանրաբեռնվածության խիստ արտահայտված անհամաշափությամբ: Եթե միջին հայերենում գոյականների մեծամասնությունը հոգնակի է կազմում չորս հիմնական ձևույթներից որևէ մեկով՝ **-ք**, **-եր**, **-ներ**, **-նի**, ապա Մշոն բարբառը հիմնականում կենսունակ է՝ **-եր**, **-ներ** ձևույթներով: Մյուս հոգնակերտուներն ունեն սահմանափակ գործածություն: Մշոն բարբառում **-ք** հոգնակերտի գործառությունը սահմանափակվում է ի ձայնափորով վերջացող երկվանկ և բազմավանկ բառերի կցվելով՝ **հօրիկ**, **ւորիքիկ**, **տըռնէծիկ** և այլն, մի շարք բաղադրյալ հոգնակերտների կազմությանը մասնակցելիս, որով **-ք** մասնիկի գործառական ծանրաբեռնվածությունը կտրուկ աճում է, եթե կարևորվում է բառավերջի դիրքը, ինչպես նաև այն կա **քեռակին** բառի հոգնակին կազմելիս՝ **քեռնազիք**՝ բառավերջան ն-ի անկմանմբ: Բարբառում այն ունի նաև **քեռնզըդիք** /Մուշ, Ծղակ գյուղ/, **քեռէսզիներ** տարբերակները:

Խնդրու հարցում միջին հայերենն ու Մշոն բարբառը բնորոշվում են մեկ այլ յուրահատկությամբ ևս. բառը կարող է միաժամանակ ստանալ մեկից ավելի հոգնակերտներ: Սակայն այս հարցում ևս կան սահմանափակումներ. ոչ բոլոր հոգնակերտներն են համակցվում: Միջին հայերենում և Մշոն բարբառում համակցմամբ գուգորդվում են գործածության լայն շրջանակներ ունեցող,

հիմնականում բաղադրյալ ձևույթները: Միջին հայերենում **-ունք**, **-որպար**, **-իք**, **-աք**, **-ենի**, **-արեք**, **-ոք**, **-ունաք**, **-եք** հոգնակերտները մնում են անկախ և չեն զուգորդվում: Պետք է կարևորել, որ բաղադրյալ մասնիկները զուգորդվելով են ձուլվել և ժամանակի ընթացքում գիտակցվել որպես մեկ հոգնակերտ, սակայն նորատիպ ձևերում այդ տարրերակների գոյությունը հիմնափորփում է հոգնակերտներից մեկի՝ առաջինի հմաստի մթագնմամբ և պասիվությամբ<sup>9</sup>: Միջին հայերենում այս երևույթն այնքան է խորացել, որ **-եր**, **-նի**, **-ներ** հոգնակերտների հշխող դիրք ձեռքեր և ընդհանրացման միտումը պայմանավորփում են զուգորդումների առատությամբ, որոնք տարածվում են անզամ երկակի և անեղական թվերի վրա: Մշտ բարբառում բառին կցվում է առավելագույնը երկու հոգնակերտ, միջին հայերենում կան դեպքեր, երբ երեք հոգնակերտ է կցվում բառին: Այսպիսի զուգորդումները՝ որպես բաղադրյալականության դրսորում, սահմանափակ են, հաճախ, վկայված ընդհամենը մեկ բառով: Մշտ բարբառում կրկնակ հոգնակներ ձևավորփում են ի հաշիվ **-ք** և **-ներ** հոգնակերտների՝ **տիրվլրան/ տիրվլրաներ/ տիրվլրաններ, հօրէստան-հօրէստանք/ հօրէստաններ, տողէկ/տողէկ-ներ, դէվէկ/ դէվէկներ, ալչոկներ/ ախչոկներ, լընդէր/լընդէրք**: Հոգնակերտների այս դրսորումները ցույց են տալիս, որ բառահիմքի և վերջին հոգնակերտի միջև ընկած ձևույթն աստիճանաբար մթագնում է և միտում ունի վերջին մասնիկի հետ ձևավորել բաղադրյալ հոգնակերտ: Ինչպես նկատելի է, սրանը հատկապես այն բառերն են, որոնք վերջանում են **ա**, **ի** ձայնավորներով և հոգնակիանում են **-պ/-կ** մասնիկով: Վերոբերյալ վկայությունների բառավերջան **ք-ն** ունի հոգնակիության իմաստ, իսկ այն բառերում, երբ **ք-ին** հաջորդում է մեկ այլ հոգնակերտ, չի պահպանում հոգնակերտի իմաստը: **Ք/կ**-ի իմաստը սկսում է մթագնվել գրաբարյան **ք-ի** համարանությամբ, որը միջին հայերենից սկսած ձեռք է բերել նաև ածանցի արժեքը: հատկապես մեկ, մեկուկես, երկվանկ, նաև անեղական բառերում **ք-ն** այլևս չի գիտակցվել որպես հոգնակերտ՝ **աչք- աչքէր, ձեռք-ձեռքէր, միտք-մլտքէր, խելք-խելքէր, պարտք-պարտքէր, բալնիք-բալնիքներ** և այլն: Այս պատճառներով է, որ բառին այլ մասնիկ հավելելու անհրաժեշտություն է առաջացել, ու այն համակարգայնացել է: **-ք** ձևույթը հոգնակիի իմաստով գործառում է միայն բառավերջում, իսկ հիմքարտեսակի և հոգնակերտի միջև այն կամ բառակազմական ձևույթ է, ինչպես **աչքեր, ունքեր, հայքեր, քնքեր** և այլն, կամ բաղադրյալ հոգնակերտի աստիճանաբար մթագնող տարր: Մշտ բարբառում գրանցվում է անզամ **-եր** հոգնակերտի մթագնման փաստ **տեղ** բառում՝ **տեղէր-տեղէրներ**՝ ձևավորելով բաղադրյալ **-երներ** հոգնակերտը:

Անդրադառնանք ոչ եզակիության մեկ այլ խնդրի ևս: Միջին հայերենն ու Մշտ բարբառն ունեն նաև նախնական երևույթ համարվող երկակի թվի որոշակի արտահայտվածություն, որն իրացվում է **-ու/-վի** ձևույթով: Սակայն միջին հայերենում և Մշտ բարբառում երկակի թվի իմաստը հստակ ձևավոր-

<sup>9</sup> Ս. Հ. Բարդարյան-Թափալյան, նշվ. աշխ., էջ 79:

ված արտահայտություն չունի, իմաստաբանորեն չի արդարացվում. այդ մասնիկն են ընդունում նաև մի շարք այնպիսի գոյականներ, որոնք մարմնի կըրկնակ անդամների անվանումներ չեն. այդ մասնիկը պարզապես հոգնակերտ է՝ համարանությամբ պայմանավորված: Միջին հայերենում ու Մշոն բարբառում գործ ունենք երկակի թվի մասնակի արտահայտության հետ: Ինչպես տեսանք, -վի մասնիկը հանդես է զայխու և՝ պարզ տեսքով, և՝ բաղադրյալ մասնիկների կազմում՝ **ականջվի, խօսվի, դովմի, աշւեր /Միջին հայերեն/, ձ/ձեռվի, ոտվի/օդվի, ՞աչվի, ունքվներ, իշուանը /Մշոն բարբառ/:**

Միջին հայերենում ու Մշոն բարբառում թվակազմությունը ձևավորել է որոշակի համակարգային օրինաչափություններ, թեն կան նաև բազմաձևություններ ու անմիջինակություններ: Գործում է նաև թվային իմաստների հակադրություններից ամենակարևորը՝ եզակի-հոգնակի հակադրությունը՝ համապատասխան բազմաձև մասնիկներով՝ պարզ ու բաղադրյալ, իսկ մյուս հակադրությունները պահպանվում են լեզվական մնացուկների տեսքով: Հատկանշական է, որ միջին հայերենում ու Մշոն բարբառում անհօգնական գոյականներ գրեթե չկան: Իսկ անեզականները թե՝ միջին հայերենում, թե՝ Մուշի տարածքում մեծ թիվ են կազմում՝ որպէս նախորդ լեզվափուլերի մնացուկներ: Եթե միջին հայերենում դրանք նախորդ լեզվափուլից փոխանցումներ են, ապա Մշոն բարբառում դրանք ունեն որոշակի օրինաչափություններ: Այս տարածքում հավաքականության համար գործում են **-ներ** և **-անք** մասնիկները՝ **Սուկօներ, Տէր Մըզքրդիճներ, աներանք, կիսրանք, հերանք, սէրմանք** և այլն:

Mkrtyan Garik - Plural Forming Particles in Middle Armenian and the Dialect of Moush (similarities and differences).-The article touches upon the author's observation of the plural forms of the nouns in Middle Armenian and the dialect of Moush, reveals the existence of new converging and diverging systems. Research shows that the new typology of forming the plural established in Middle Armenian is partially reflected in the dialect of Moush, as well. According to the statistical data, the plural forming endings in Middle Armenian are 44 in number 23 of which are presented as simple and 21 as compound. Whereas, in the dialect of Moush there are 32 plural forming endings 28 of which are compound and 4 are simple.

In Middle Armenian the most productive endings are: -եր [er], -ներ [ner], -նի[ni], -պ[k] and in the dialect of Moush they are: -եր [er], -ներ[ner], -պ [k]. In the observed areas the plural forming endings are freely interchangeable.

Мкртчян Гарик - Употребляющиеся в мушском диалекте и среднеармянском языке частицы, образующие множественное число (сходства и различия). -Исследования показывают, что сформировавшаяся в среднеармянском языке новая типология образования множественного числа имеет свое частичное отражение в мушском диалекте. По статистике в среднеармянском языке слов, образующих множественное число - 44, из них 23 слова - простые, 21 - составное. А в мушском диалекте, слов, образующих множественное число - 32, из которых составные - 28, а 4 слова - простые.

В среднеармянском языке главными частицами являются **-եր**, **-ներ**, **-նի**, **-ը**, а в мушском диалекте- **-եր**, **-ներ**, **-ը**. В исследуемых территориях частицы, которые образуют множественное число, имеют функцию свободной взаимозаменяемости.

Սոհամմադ Մալեք Սոհամմադի  
(Իրանի Իսլամական Հանրապետություն,  
Սպահանի համալսարան)

## ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՇԵՐԺԻ ՄԱՍԻՆ

Գիտաժողովը նվիրված է վաստակաշատ լեզվաբան ակադեմիկոս Գևորգ Զահոռիկյանին, ուստի կարեոր եմ համարում մեջբերելու նրա՝ ուշադրության արժանի հետևյալ եզրահանգումը հայ-իրանական փոխարքնչությունների պատմության մասին։ Ըստ նրա «Կարելի է ասել, որ իրանական ժողովուրդների վերաբերյալ առաջին տեղեկությունների ժամանակներից կ սկսվում է<sup>1</sup> հայ-իրանական շիման պատմությունը, եթե մանավանդ հայերը կազմել են ուրարտական պետության հիմնական ժողովուրդներից մեկը»<sup>2</sup>:

Հայերենի և իրանական լեզուների հնամյա հարաբերությունները շարունակվում են մինչև 7-րդ դ., ապա նոր ընթացք են ստանում նոր պարսկերենի շրջանում՝ 9-10-րդ դդ., որը համընկնում է միջին հայերենյան շրջանի ուրվագծման դարերին։ «Իրանական լեզուների՝ իրանագետների կողմից տարբերվող հին, միջին, նոր շրջանները չեն համընկնում հայերենի զարգացման համապատասխան շրջաններին։ Այս տարբերությունները կապված են ինչպես երկու կողմերի զարգացման առանձնահատկությունների, այնպես էլ դրանց շրջանաբաժանման տարբեր սկզբունքների հետ։ ... Իրանական լեզուների գրավոր հուշարձանները սկսվում են հայերենի գրավոր հուշարձաններից ավելի քան մեկ հազարամյակ առաջ»<sup>3</sup>։

10-րդ դարը աշխարհահոչակ Ֆիրդուսու դարաշրջան է, երբ ստեղծվում է նրա գլուխզործոց «Շահնամե»-ն, որն զգալի ազդեցություն է ունեցել նոր պարսկերենի ձևավորման ասպարեզում։ Իրականում «Շահնամե»-ն իրանական ազգային ինքնության փաստն է։ 10-րդ դ. սկսվող նոր պարսկերենը, անցնելով մի ամրող հազարամյակ, լիովին հասկանալի է այսօրվա հասարակության կողմից։ սա նոր պարսկերենի կարևոր առանձնահատկություններից է։ «Շահնամե»-ի բանաստեղծությունների քազմաբովանդակ և բազմերանգ պատմականն ու առասպեկտականը, իրականն ու երևակայականը, քնարական հոսուն մրմունքներ, խոր և քախծոտ խորհրդածություններ ամեն արիթով, ոյուցազնական ուրույն դրվագներ, և վերջապես մայրենի հարազատ բարբառը»<sup>4</sup> իր բոլոր առանձնահատկություններով և երանզավորումներով կարդացվում, հասկացվում և հաճույք է պարզեցված այսօրվա ընթերցողին։

<sup>1</sup> Ըստ Է. Ա. Գրանտովսկու, որ հենվում է հատկապես հատուկ անունների ուսումնասիրությունների վրա, իրանական ցեղերն Իրանում երևացել են դեռև մ.թ.ա. 11-րդ դ.։

<sup>2</sup> Յ. Ա. Գրանտովսկի, *Ранняя история иранских племен Передней Азии*, М. 1970.

<sup>3</sup> Գ. Զահոռիկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախազրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 492։

<sup>4</sup> Գ. Զահոռիկյան, նշվ. աշխ., էջ 492։

<sup>4</sup> Ն. Արքնից, «Շահնամե»-ի բաղադրական այսանդր, Իրան-նամե, հ. 8, 1994, էջ 4։

Ինչ վերաբերում է հայ-իրանական լեզվական առնչությունների հին շրջանին, ապա հին հայերենի իրանական փոխարյալ բառապաշտի վերաբերյալ կատարվել են բազմաթիվ ստուգաբանական և վերլուծական հետազոտություններ: Այդ ուսումնասիրությունները լրացումներով և ճշգրտումներով հիմնականում ամփոփվել են Հ. Հյուրշմանի, Հ. Աճառյանի, Լ. Հովհաննիսյանի և ուրիշ լեզվաբանների աշխատանքներում<sup>5</sup>: Միջին հայերենի շրջանում լայնածավալ հայ-իրանական և հայ-արաբական գիտական, մշակութային և գրական առևուժուններով հիմք են հանդիսացել հայերենում բազմաթիվ իրանական և արաբական փոխառությունների համար: Միջին հայերենի (12-16-րդ դդ.) բազմուրության բարգմանական և հեղինակային մատենագրությունը գիտական կարևորություն է ներակայացնում: Սակայն միջին հայերենի բառապաշտիք զգալի մասն առ այսօր անտիպ մատենագրության և միջին հայերենի չիրատարակված բառարանների պատճառով դուրս է մնացել բանասիրական և ստուգաբանական ուսումնասիրությունների տեսադաշտից:

Ինչպես հայտնի է, միջին հայերենը, որի հիմնական առանձնահատկություններն ուրվագծվել են 10-րդ դ., տարբերվել է գրաբարից իր հնյունական քերականական համակարգով և բառապաշտիք հիմնական դրսերումներով: Միջին հայերենի լեզվական նոր երևոյթներին գրուգահեռ դրսերվել են փոխառված բազմաթիվ բառերի կիրառությունները<sup>6</sup>:

Ի դեպք գրաբարի իրանական փոխառությունների մի ստվար մասն անցել է միջին հայերենին: «Միջին հայերենի բառապաշտաբը հին փոխառություններին գրուգահեռ շարունակաբար համալրվել է փոխառյա նոր բառերով ու տերմիններով, որոնց հիմնական աղբյուրն են արաբերենը, պարսկերենը, հունարենը, թուրքերենը, ֆրանսերենը, լատիներենը, վրացերենը և ասորերենը»<sup>7</sup>

Ըստ պրոֆ. Ռ. Ղազարյանի «Միջինհայերենան փոխառությունների մեջ քանակական առումով նախ և առաջ աչքի են ընկնում արաբերեն բառերը, որոնցով պարզապես ողողված են գեղարվեստական և գիտական մի շարք ինքնուրույն և թարգմանական գործեր: Այնուհետև բավականին մեծ թիվ են կազմում պարսկերեն, հունարեն և թուրքերեն լեզուներից կատարված փոխա-

<sup>5</sup> Հայոց լեզվի հին շրջանի փոխառությունների մասին տե՛ս և Նոր Բառզիրք Հայկագեան լեզուի, հին. Ա, Բ, Գևետիկի, 1836-1837: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1926-1935:

<sup>6</sup> Գ. Զահոռյան, Հայերեն ստողաբանական բառարան, Ե., 2010: Գ. Զահոռյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987: Լ. Հովհաննիսյան, Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 1990: Լ. Հովհաննիսյան, Հայ-իրանական նոր ստուգաբանություններ, Ե., 2005: Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան: Նոր Հայկացան բառարանում չվկայված բառեր, Ե., 2010: Մ. Մատիք Մոհամեմադի. Եզնիկ կորպացու «Եղծ Աղամդոց» երկուս վկայված փոխառյա բառապաշտի խնդրի շուրջ, Բազմավեպ, 2004, էջ 206-237:

<sup>7</sup> Միջին հայերենի առանձնահատկությունների մասին մասին տե՛ս և.

- Ա. Այսունեան, Քիննական քերականութիւն արդի հայերեն լեզուի, 1866, էջ 142-146:

- Ա. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Ե., 1960:

- Ակենարկներ միջին հայերենի պատմության, հին. Ա, Բ, Ե., 1972-1975:

- Ո. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009:

- J. Karst, *Historische Grammatik des kilikisch-Armenischen*, Strassburg, 1901.

<sup>7</sup> Ո. Ղազարյան, Միջին Հայերենի բառապաշտիք, Ե., 1993, էջ 13:

ոռւթյունները, որոնց հաջորդում են լատիներեն, վրացերեն, ասորերեն բառերը<sup>8</sup>: Սակայն, ինչպես նշվեց, պետք է նկատել, որ առ այսօր միջին հայերենի ժամանակահատվածին վերաբերող բազմաթիվ ձեռագրեր են հրատարակվել, որոնք նախկինում չեն ընդգրկվել միջին հայերենի փոխառությունների ուսումնասիրությունների ոլորտում: Քանի որ վերջին տասնամյակ-ներում միջինհայերենյան ժամանակաշրջանին վերաբերող բազմաթիվ ձեռագրեր են հրատակվել, կազմվել են բառարաններ, առավել կարևորվում և մատչել է դառնում միջին հայերենի իրանական բառաշերտի ուսումնասիրությունը: Պետք է նկատել, որ այդ աղբյուրներում մի շարք փոխառություններ սակավադեպ են օգտագործվել և անհանականալի են: Այդ իսկ պատճառով դրանք տարբեր մեկնարանություններ են ստացել, իսկ որոշ փոխառություններ էլ հատուկ են միջին հայերենին և օգտագործվում են նաև ժամանակակից հայերենում: Տվյալ ժամանակաշրջանի փոխառյալ բառապաշտի ուսումնասիրությունը օգտակար կլինի միջին հայերենի բառապաշտին նվիրված ստուգարաննական և բացատրական բառարաններ կազմելիս նաև բնագրագիտական և մատենագրական հետազոտություններ կատարելու համար:

Պետք է նշել, որ միջին հայերենում հանդիպում են օտար բառերի ու բառակապակցությունների պատճենումներ, որոնք հիմնականում գործածվել են գիտական գրականության մեջ և զգալի դեր են խաղացել գիտության տարբեր բնագավառներին առնչվող նոր տերմինների ստեղծման գործում:<sup>9</sup>

Ինչ վերաբերում է միջին հայերենի փոխառությունների անցման հարցին, ապա հայտնի է, որ փոխառությունները կատարվում են բանավոր (ժողովրդական փոխառություններ) կամ գրավոր ուղիներով (գրական փոխառություններ): Ըստ պրոֆ. Ռ. Ղազարյանի «միջնադարում փոխառված բառերի մեծագույն մասը ժողովրդական փոխառություններ են: Այդ կարգի փոխառությունները միջին գրական հայերենի բառապաշտի մեջ մուտք են գործել ժամանակի ժողովրդականական լեզվից և տարբեր բարբառներից»<sup>10</sup>: Հաճախ ժողովրդական փոխառությունները դժվար է սահմանազատել գրականից և որոշել, թե դրանցից որոնք են ժողովրդական և որոնք գրական, այլ կերպ ասած՝ փոխառությունների անցումը ինչպես է կատարվել՝ խոսակցական ձանապարհով, թե՝ գրավոր»<sup>11</sup>:

Միջինհայերենյան շրջանում հատկապես արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառյալ բազմաթիվ բառեր ոչ միայն պահպանվել են ժամանակակից բարբառներում<sup>12</sup>, այլև դրանց մի որոշ մասը մուտք է գործել գրական լեզվի մեջ:

<sup>8</sup> Նոյն տեղում:

<sup>9</sup> Նոյն տեղում:

<sup>10</sup> **Ռ. Ղազարյան.** նշվ. աշխ., էջ 14:

<sup>11</sup> Նոյն տեղում:

<sup>12</sup> Այս կապակցությամբ մակրամասն տե՛ս Հ. **Մեսրոպյան.** Խալամարանությունները հայերենի բարբառներում, Հայագիտական և իրանազիտական երկրորդ գիտաժողովի դրույթներ «Մա-

Միջին գրական հայերենի բառապաշտիք մեջ զգալի տեղ էն գրավում իրանական բազմաթիվ փոխառություններ, որոնց աղբյուրը նոր պարսկերենն է: Ինչպես նշվեց նոր պարսկերենի ժամանակաշրջանը սկսվում է 10-րդ դ., հետևաբար բուն միջին հայերենում կատարված պարսկական փոխառությունները կատարվել են նոր պարսկերենից: Պրոֆ. Ռ. Ղազարյանը միջին հայերենի փոխառությունների քանակի մասին արտահայտվելիս պարսկերենից փոխառված բառերի թիվը դասում է արաբական փոխառություններից հետո և նշում է, որ «պարսկերենից փոխառված բառերի թիվը հասնում է հարյուրների»<sup>13</sup>: Սակայն պետք է նկատել, որ միջին հայերենում արաբական փոխառությունների մի զգալի մասը մինչ այդ օգտագործվել են պարսկերենում, և շատ հավանական է, որ պարսկերենի միջոցով են անցել հայերենին:

Միջին հայերենում կատարված պարսկական փոխառությունների մի ստվար մասը մինչև այժմ օգտագործվում է հայերենի թե՝ արևելյան, թե՝ արևմտյան բարբառներում: Օրինակ աշքարայ, արամածին, արապայ, արմաղան, աւարայ, բազար, բազրկան, բաղ, բաղչայ, դասուկ, դրւշման, դրուստ, դօստ, եար, եօնձայ, զահիլ, զահր, զնձիլ բաժայ, թիմար, թուռչի, լակլակ, լուլայ, խալի, խան, խիար, խոնչայ, մաւթուկ, մուռտառ, նալբանդ, շաֆթալու, շիրայ, շիրին, շիտան, շորվայ, ուստայ/ ուստայ, չանկալ, չարխ, չոպան, չուխայ, բոստան, սուրմայ, փակալաւան, փանչարայ, փարտայ, փէշայ, փէշրէշ, քալամ, քիշմիշ: Միջին դարերում փոխառված մի շարք բառեր գործածվում են նաև ժամանակակից գրական հայերենում, ինչպես աստառ, բահրա, զիժ, դարդ, դիոլ, թարիսուն, լաշակ, լուար, խուրմա, նամազ, նարզիզ, նարինչ, նշտար, շալ, շարչի, ջան, սումախ, սպանախ, սպանդ, տօշակ, փալան, փարչ, փլավ, քարան, քաշալ:

Հյուրշմանը իրանական փոխառությունները ըստ ժամանակաշրջանների չի դասակարգում, «Քանի որ, - ինչպես գրում է նա-, շատ դեպքերում տարրերակումն անհնար է»<sup>14</sup>: Հատկանշական է, որ ըստ ակադ. Գ. Զահուլյանի «Հ.Աճառյանը փոխառությունների դասակարգման հարցում «իին շրջանի» ըմբռնումը զգալիորեն տարրերվում է արդի ըմբռնումից և չունի տարրերակման որոշակի շափանիշներ. Ըստ Զահուլյանի կարծիքի Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 1-ին հասորում հանդիպում են մեծ թվով այնպիսի բառեր, որոնք արդի շրջանաբաժնամբ փաստորեն պատկանում են միջին հայերենի շրջանին /12-16-րդ դդ./ կամ չունեն ժամանակագրական ձշտորոշում»<sup>15</sup>:

Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության անհրաժեշտության մասին պետք է նշել, որ Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ի նախաբանում հիշատակում է, որ ոսկեդարյան և հետոսկեդարյան հայերենի շրջանի

<sup>13</sup> Ա. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 29:

<sup>14</sup> Ռ. Ղազարյան, Հայերենի քրականանություն, Առաջին մաս, Ե., 2003, էջ 14:

<sup>15</sup> Գ. Զահուլյան, նշվ. աշխ., 1987, էջ 508:

բառերն են միայն հավաքված Արմատական բառարանում, իսկ ստորին կամ միջին հայերենի շրջանի բառերը չեն հավաքված<sup>16</sup>:

**Միջին հայերենի արաբական փոխառությունների հարցը:** Միջին հայերենի արաբական փոխառությունների մի զգալի մասը կատարվել է պարսկերենի միջոցով. սա հաստատվում է հնյունական օրինաչափություններով: Ուշագրավ է Հ. Աճառյանի վերլուծությունը այս կապակցությամբ. «Հատկապես ԺԱ դարում, երբ հայոց Բագրատունի թագավորությունն արդեն վաղուց հաստատված էր, արաբները Հայաստանից հեռացած և նույնիսկ անկման շրջանն էին մտած: Այս պատճառով ազդեցությունը պիտի վերագրենք ոչ թե ուղղակի արաբերենին, այլ մեր հարեւան պարսկեներին»<sup>17</sup>: Ըստ այդմ պարսկերեն և արաբերեն բառերը կարելի է իրարից չտարանջատել, մանավանդ որ իհմնական մասը հավասարապես գործածված է եղել և պարսկերենում, և արաբերենում, և թուրքերենում:

Ինչպես նշվեց, հայերենում մի շարք արաբական փոխառություններ կրել են իրանական հնչյունական համակարգի ազդեցությունը. սա ապացուցում է, որ այդ փոխառությունները անցել են պարսկերենի միջոցով: Հ. Աճառյանն իրավամբ դրանք իրանական փոխառությունների շարքում է դասում:

Հ. Հյուրշմանը և Հ. Աճառյանը ընդհանրապես ժխտում են հայերենում արաբական ծագման բառերի արկայությունը մինչև 7-րդ դարը (Hübschmann, 1892, 126-268. 1895, 1, 259-280, Հյուրշման, 1894. Աճառյան, ՀԼՊ, 2, 169-217)<sup>18</sup>: Սակայն ըստ ակադ. Գ. Բ. Զահոռիլյանի՝ «5-րդ դ. մատենազրության մեջ կան մի շարք բառեր, որոնք սեմական լեզուների համապատասխան բառերի մեջ ամենից ավելի մոտ են արաբականներին: Այսպիսի դեպքերում Հ. Հյուրշմանը և Հ. Աճառյանը կամ ընդհանրապես ժխտում են հայերեն բառերի սեմական ծագումը, կամ ենթադրում փոխառություն ասորական բարբառներից»<sup>19</sup>: Ակադեմիկոսն իր այդ համոզմունքը ապացուցում է արաբական ցեղերի առկայությամբ Իրանի և Բյուզանդիայի սահմանամերձ վայրերում 7-րդ դարից ավելի վաղ, Հայաստանի հարավային շրջաններին մերձավոր վայրերում «յուրաստեսակ ասորա-արաբական կոյնեի» առկայությամբ<sup>20</sup>:

Mohammad Malek Mohammadi- On the Iranian Word Stock Level of the Medieval Armenian Language.- This article discusses the comparison of the Persian and Armenian languages development cycles, both the medieval Armenian and New Persian languages linguistic ties the issue of the Arabic loan words of Armenian language.

<sup>16</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.1, Ե., 1971, էջ 7:

<sup>17</sup> Տր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Բ, Ե., 1951, էջ 183:

<sup>18</sup> H. Hübschmann, *Die Semitischen Lehnwörter in Armenischen*, ZDMG 1892. H. Hübschmann, *Persische studien*, Strassburg, 1895. Հ. Հյուրշման, Սեմական փոխառյալ բառեր հայերենի մեջ, Վիեննա, 1894:

<sup>19</sup> Գ. Զահոռիլյան, էջ 485:

<sup>20</sup> Նույն տեղում:

Моаммад Малек Моаммади- Иранская лексика среднеармянского языка,- В статье приводится сравнение циклов развития персидского и армянского языков, В обоих языках, и в среднеармянском и в новоперсидском, лингвистические связи исходят из арабских заимствований армянского языка.

**ԿԱՊԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ + ԳՈՅԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՎ  
ԲԱՌԱԿԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔԱՅԻ  
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԱՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Ժամանակակից գրական հայերենում **կապային կառույց + գոյական լրացյալ** բառակապակցական կաղապարները որպես շարահյուսական յուրահատուկ կառուցվածքներ, խիստ տարածված են և հաղորդման մեջ երբեմն լրացական իմաստների ձևափորման անփոխարինելի միջոցներ են: Նըման կաղապարներն ինքնատիպ են և՝ իրենց կառուցվածքով, և՝ արտահայտած իմաստով, և՝ գործառությամբ: Դրանցում ուշագրավ են ինչպես լրացյալ գոյականի, այնպես էլ լրացումը ձևավորող կապերի իմաստային, ծագումնաբանական և բառակազմական հատկանիշները:

Զնայած այս կաղապարները միշտ էլ գոյություն են ունեցել մեր լեզվում և այսօր էլ գործուն են, սակայն դիտարկվել ու արժենորվել են մեր օրերում միայն: Դրանց անդրադարձել են մի դեպքում կապերի խոսքիմասային առանձնահատկությունները բացահայտելու, մյուս դեպքում՝ նախադասությունների մեջ որոշիչ - որոշյալ կապակցությունները քննելու առընչությամբ<sup>1</sup>:

Հատկանշական է, որ կապային կառույցներով գոյականական բառակապակցությունները ըստ եռթյան դրւս են մնացել լեզվաբանների տեսադաշտից, քանի որ կապն ու խնդիրը դիտվել են որպես սոսկ բայի լրացում կազմող միավոր, մինչդեռ մի շարք կապեր (**պես, նման, չափ**) լրացում են ձևավորում նաև առարկայանիշ գոյականներով:

Խնդրո առարկա կառույցները՝ որպես գոյականի լրացում, արդի գրական հայերենի երկու տարրերակում ել ազատորեն գործածվում են և այն դեպքում, եթե լրացյալի անհրաժեշտ իմաստային ծավալումն ունի միայն կապային լրացումնով արտահայտություն, և՝ այն դեպքում, եթե կապային կառույցով լրացումն ունի հոլովական տարրերակ:

<sup>1</sup> Տե՛ս **Ս. Արենյան**, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965: **Ա. Մարգարյան**, Արդի հայերենի կապերը, Ե., 1955: **Ս. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ.Ա., Ե., 1970: **Վ. Առաքելյան**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., 1965: **Ա. Աբրահամյան**, Չքերվլող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերություններ ժամանակակից հայերենում, Ե., 1965: **Հ. Արտուրյանյան**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983:

Այժմ ներկայացնենք գոյականի՝ կապային կառուցներով լրացումների հիմնական առանձնահատկությունները կազմավորման և գործառության մանրամասներով:

Գոյականի կապային կառուցներով լրացումներն իրենց հաճախականությամբ, իմաստային բազմազանությամբ արևելահայերենում արևմտահայերենի համեմատությամբ ավելի գործուն են և ունեն զարգացման միտում: Լինելով արդի գրական հայերենի մի տարրերակը՝ արևմտահայերեն զարգացել է սոցիալ - քաղաքական տարրեր պայմաններում, որի հետևանքով էլ նրանում քերականական իրողությունները հանդես են քերում տարրերություններ: Արևմտահայերենի քերականության թերևս ամենաբնորոշ հատկանիշն այն է, որ սերտորեն կապված է հայերենի նախորդ շրջաններին (գրաբար, միջին հայերեն), ու նրանում կողք կողքի հանդես են զայլս և կապերով, և նախորդներով ու նախադրություններով լրացումներ: Դա հետևանք է այն բանի, որ նախ արևմտահայ հեղինակները հակված են պահպանելու գրաբարյան կապակցությունները և դրանց արդեն խաթարված ձեերը, ապա՝ նախորդավոր և նախադրությամբ կառուցները տեղի են տալիս նոր ձևերի՝ կապային կաղապարների:

Օրինակ Տակա ի կուժ, ի կարաս փոփոխումի ձամրուն վրայ Դուք սափորներ էք լեցուն զինիներով քայցը ու զով (ՎԹԵ, 379): Դեմ մոռցած դեռ արցունքներդ յանուն պատառ մը հացի (ՎՈԿ, 126):

Ուշագրավ է, որ ժամանակակից գրական արևելահայերենում գրաբարյան նախորդավոր կառուցների և գյականին կապակցությունները սահմանափակ են. դրանք գործածվում են միայն ոճական նկատառումներով: Օրինակ՝ Նկատերվ որդու շերմեռանդ սերը և բարեպաշտ նվիրվածությունն առաստված՝ ծնողները նրան նվիրում են հոգիոր ծառայության (ԶԴՍՆ, 1, 69):

Ակսած Մ. Աբեղյանից՝ թեև նախորդի և նախադրության փոխարեն արևելահայերենում գործածվում է կապ անվանումը, բայց բոլոր դեպքերում խոսքը վերաբերում է քերականական միևնույն երևույթին և «էական տարբերություն չկա նախորդ +իմնիք և կապ + իմնիք կառուցների միջև», քանի որ դրանք արտահայտում են շարահյուսական նույն բնույթի հարաբերություններ:

Ժամանակակից հայերենի շուրջ 100 կապերից, որպես գոյականի իմաստային ամենատարբեր ծավալումների իրացման միջոցներ, արևելահայերենում առավել հաճախադեպ են՝ առթիվ, դեպի, կից, համար, համաձայն, հետ, միասին, մեջ, միջև, մոտ, նկատմամբ, չափ, նման, պես, վերաբերյալ, վրա<sup>2</sup> կապերը, իսկ արևմտահայերենում՝ առ, ընդ, ըստ, ի գրաբարյան նախորդները, առանց, դեմ, դեպի, յանդիման, յետոյ, շուրջ, պէս նախորդությունները, ընդմեջ, ի պատի, ի վար, ի վեր նախորդավոր կառուցները,

<sup>2</sup> Վ. Քոյսա. Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Ե., 1990, էջ 309:

<sup>3</sup> Հայերենի կապերի մի մասը ծագմամբ հնդկարպական է և իր զուգահեռներուն ունի ազգակից մյուս լեզուներում: Այս բառերի սոսուզաբանություննը տրված է Շ. Աճայանի «Հայերեն արմատական բառարան»-ում (հհ. 1-4, Ե., 1971-1979):

նախադրությունների հնչյունափոխությունից և նախդրի անկումից՝ **առօս**, **մեջ**, **վերայ**, նախդրի միացմամբ՝ **դեպի** (դեպի+ի), հոլովաձեի քարացմամբ՝ **առդիւ**, **դուրս**, **մասին**, **ներս**, **միջոցաւ**, **նկատմամբ**, **շնորհիւ**, արևմտահայերեն հոլովաձեւերից՝ **երեսեն**, **կողմէ**, **կողմից**, **կապակցությամբ**, **հասցեին** և այլն:

Արդի հայերենի երկու հատվածների՝ **կապային կառուց + գոյական կապակցությունների** կազմավորման հիմքերը հիմնականում նույնն են՝ լրացյալի խոսքիմասային, բառային, բառակազմական հատկանիշները, սերումբ, փոխանվանական գործածություննը, ինչպես նաև՝ կապերի առաջացման գործոնը, բայի գեղչումը: Այսօրինակ կաղապարների դիտարումներից կարելի է անել այսպիսի հետևություններ:

ա) Բոլոր բառերի մեջ խիստ ընդգծված են բայի ու որակական ածականի հատկանիշները: Այստեղ կապն (նախդիրը և նախադրությունը) ու իր խնդիրն ավելի հաճախ լրացնում են բայանուն և ածականական, երբեմն նաև մակրայական ծագմամբ գոյականներին: Սրանք հիմնականում արտահայտում են լրացական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք առկա են կապային կառուցների և լրացյալ գոյականներին հարաբե բակից բայերի, ածականների ու մակրայանների կապակցություններում: Այսպես՝ հանգման խմաստ արտահայտող ազդեցություն, արշավանք, հարձակում, պայքար և մի շարք այլ բայանուններով ու դեմ, դեպի, ընդդեմ, հանդեպ, նկատմամբ, վերաբերմամբ, վրա և նման կապերով ձևավորված կառուցներով լրացում ստանում են նաև նույնարմատ բայերը:

Օրինակներ՝ արևելահայերենից՝ Ամեն անզամ, երբ երիտասարդ բըժիշկը նայում էր այլայլվող երեսին, նրա խոշոր աչքերի մեջ կարդում էր յուր թովիչ ազդեցությունը կրտսական անարատ հոգու վրա (ԱՇԵ, 2, 374), արևմտահայերենից՝ Ինչ իմաստ ունի անվերջ կրիւը ճակատագրի դեմ (ԼՇԸԵ, 375):

Անկեղծություն, անտարբերություն, կատաղություն, անհավատարմություն, վատահություն, արագություն, հեռավիրություն և այլ ածականական ու մակրայական ծագմամբ գոյական լրացյաների կապով ձևավորված լրացումներն ել դրվում են վերջինների իմաստի պահանջով, օրինակներ՝ արևելահայերենից՝ Նա հավատում էր Լուսի անկեղծությանը իր նկատմամբ (ԱԶ, 3, 352): Հայր - Մարդպետը, տարիքին համապատասխան արագությամբ ձիուց իշնելով, կանգնեց ճանապարհի մեջտեղը (ԱԶՊԹ, 67), արևմտահայերենից՝ Էյուպի մեջ երկու սուրբ կա, որ կես ժամու չափ հեռաւորութիւն ունին: Չէ՞ որ արդէն ինքնին բացառիկ բան մըն էր այդ մտերմութիւնը, մտերմութիւնը դեռատի առջկան մը հետ (ԼՇԸԵ, 179):

բ) Առանձին կապակցություններում լրացումը գոյականի մոտ դրվում է լրացյալի բառային իմաստի պահանջով, այսպես՝ հայերենի երկու տարբերակում ել մի շարք գոյականներ (աշխատություն, զիքը, իդեալ, հողված, պատմվածք, վեպ, օրենք և այլն) ունեն վերաբերության իմաստ. մասին, վերաբերյալ և այլ կապերով կառուցները դրանց լրացումն են դառնում հենց

այդ նշանակությամբ, օրինակներ՝ Իմ կարծիքով առաջ պետք է իմանալ հայ երիտասարդի իդեալը կնոց մասին (ԱՇԵ, 2,474): Նրանում կարդացի մի մանրամասն յօրուած Գրիգորեան կոչուած մեծահարուստի դրամական գործերի մասին (ՍՓ., 73):

Արևելահայերենում **զայրույթ, բողոք** բայանուն գոյականները կարող են պահանջել և հանգման խնդրային, և պատճառի պարագայական իմաստով լրացումներ, ինչպես՝ Երեկույթից հետո մի քանի օր շարունակ նրա ականջին հնչում էին օրիորդի վիրավորական խոսքերը՝ իբրև սուրբ բողոք յուր անարժան վարմունքի դեմ (ԱՇԵ, 2,435), իսկ կրիվ, մենամարտ, պատերազմ և մի քանի այլ նման գոյականներ՝ ընդդիմության իմաստով, օրինակ՝ Բայց և այդտեղ նա մտաբերեց Նիգ զավարի պատերազմը՝ դավաճան Գագիկ Արծրունու դեմ (ՄԳՄ, 330): Արևմտահայերենում ավելի հաճախադիպ են տեղի ուղղության իմաստ դրսեւող բառակապակցությունները: Դրանցում լրացյալ են դառնում խոյանք, պացք, զաղթ, թիավարում, ճամփորդություն և նման այլ բայանուն գոյականներ, որոնց իմաստի պահանջով էլ դրվում են համապատասխան կապային կառույցով լրացումները: Օր՝ Ոյժ տուր իմ հոգիիս, որպէսզի կարենայ ան գլուխ հանել այս հոսանքն ի վեր թիավարումը (ՄԳԵ, 226):

զ) Երեւմն կապն իր խորի հետ լրացյալին կապվում է որևէ դերբայի զեղչմամբ: Նման բառակապակցությունները արևելահայերենում տարածված են, օր՝ Հասկացված նրա կսկիծը ընկերոջ կորուստի առթիվ (ՄՇԶ, 393):

Արևմտահայերենում դրանք հաճախադիպ են հատկապես տեղի իմաստ արտահայտելիս, ինչպես՝ Փախչի՝ լ-յետոյ ինչպէս նայիլ հայելին, ինչպէս շարհամարհել իր պատկերը հայելին մեջ (ԳԱՍԿ, 90):

Չնույն նման են այն կապակցությունները, որոնցում կապային կառույցով լրացման առկայությունը պայմանավորվում է ոչ թե լրացյալի հատկանիշներով, այլ նախադասության կառուցվածքով: Այս կադապարներն ավելի շատ կշռույթային են շափած խոսքում, ուր դրան նպաս տում են բանաստեղծական խոսքի ոիթմն ու հանգավորումը: Օրինակներ՝ արևելահայերենից՝ Եղինջի մոտ մի թուփ խոնարի, թվի վրա՝ մի վար զատիկ՝ Մանկությունս է թուել, ցնդել հնչպէս ցողի մի ջինչ կաթիլ Տարիներ արեկի դեմ (ՊԱ, 1,120), արևմտահայերենից՝ Աչերուս մեջ հիմա արցունք միմիայն ՈՒ տառապանք անսահման (ՄԳ, 403): Երեկուեան վերադարձաւ աշխատանքն, խորհրդաւոր ժպիտմը շրթերուն վրայ (ԳԱՍԿ, 25):

զ) Կապային կառույցը լրացում է դառնում նաև գոյականաբար գործածված ածականին, թվականին, դերբային, որը պայմանավորվում է հրապարակախոսության, զեղարվեստական և զիտական լեզվի օրավոր զագացմամբ: Օրինակներ՝ արևելահայերենից՝ Շեն կենա հաստատ պահողիդ տունը, Որ ունի իր մոտ թեզ պէս իմաստուն (ՀԹ, 5, 78), արևմտահայերենից՝ Ինձի պէս հազարներ կան, պատերազմը զնաց, մենք մնացինք (ԳԱՍԿ, 57):

Քննության առարկա կապակցությունները ժամանակակից հայերենի երկու տարբերակում էլ ունեն նաև կառուցվածքային առանձնահատկություններ: Ավելի հաճախադեպ են հետևյաները.

ա) Որոշ բայանուններ և ածականական ծագմամբ գոյականներ ստանում են կապային կառուցվածքային լրացում, իսկ հարաբերակից բայց կամ ածականը նման խնդրառություն չունի: Այդպիսի բայանուն գոյական ներից են՝ արևելահայերենում՝ **արհամարհանք**, **անտարբերություն**, **ատելություն**, **զայրույթ**, **կարոտ**, **համակրանք**, **հարզանք**, **հալածանք**, **հավատ**, **սեր**, և այլն, արևմտահայերենում նաև՝ **ակնարկ**, **զզկանք**, **նախատինք**, **նուաստութինք**, **ծանօթութինք**, **նվիրում**, **վստահութիւն** և այլն: Օրինակներ՝ արևելահայերենից՝ ...մահմեդական մի ոստիկանի տված ունայն թագը մերցել էր նրա սրտում զգացմունքներից ազնվագույնը՝ **սերը** (սիրել)՝ դեպի հայրենիքը (ՄԳՍ, 305), արևմտահայերենից՝ Իր ունեցած միակ **ծանօթութինք** (ծանօթանալ) մեր ժողովուրդի **մասին**՝ կուգայ շարդերուն ու սրբերուն շուրջ լածներից (ՎԱՀԲ, 18):

բ) Նկատելի է, որ արևմտահայերենում գործածական են այնպիսի կաղապարներ, որոնք խորթ են արևելահայերենի համար, ինչպես՝ **ակնարկ դեպի բան մը**, **բարեացակամութիւն մէկուն մասին**, **յարզաք կամ պատկառանք մէկուն մը նկատմամբ**, **համակրութիւն մէկուն մասին**, **պատմուծք մէկուն վրայ և այլն**: Օր՝ Սօֆի կը շրջէր իր սենեակին մէջ, զգուական **ակնարկներով դեպի բոլոր առարկաները** (ԱՉԵ, 321):

գ) Ե՛վ արևելահայերենում, և արևմտահայերենում տվյալաբար կապային կառուցվածքային ունեցող լրացյալ գոյականները նախադասության մեջ գործածվում են ուղղական կամ հայցական հոլովներով: Սակայն դրանք հանդիպում են նաև թեք հոլովածերով, ինչպես՝ արևելահայերենում՝ ‘Օ՞ն, ուրեմն մի վշտացնիր իմ սիրտը որ լի է սիրով դեպ քեզ և ցանկությամբ տեսնել իմ թագավորը նորեն յուր փառաց բարձրության վրա (ՄԳՍ, 333), արևմտահայերենում՝ ‘Կրատրական կեանք մը կապրէր կարծես, ուր զիսաւր դէքը տիկինն Նուարոին կինար կերառով մը, մեծ քրոջ մը խանդավառ գուրզուրանքովը իր նկատմամբ (ՄՊ, 2, 522):

դ) Առանձին կապակցություններում լրացյալ կարող է իր հերթին լինել մեկ այլ կապային կառուցվածքի խնդիր, օր. արևելահայերենից՝ Հայտնի է, որ հայ դասական պատմավեպում գլխավոր կոնֆիլկտը օստար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական **պայքարի** վրա է կառուցված (ԱՍՍՎ, 2), արևմտահայերենից՝ Երկու շաբաթէ ի վեր անընդհատ շիմաան մեջ եմ զիտի բոլոր բնակիչներու հետ (ԵՕԾՓ, 33):

ե) Կապային կառուցվածքային լրացումը կարող է վերաբերել մեկից ավելի լրացյալների, որոնք համադասական հարաբերության մեջ են միմյանց նկատմամբ: Օր. արևելահայերենից՝ ...մտածեց զնալ Պապի մոտ՝ հարցնել նրա առողջությունը, իմանալ նրա ցանկություններն ու կարգադրությունները պալատի մասին (ՄԶՊ, 3), արևմտահայերենից՝ Յարզանքն ու պատ-

կառանքը միւսի ժակի նկատմամբ գրեթէ երկիւղածութեան կը հասնէր ամենուն քով (ԵՕԸՓ, 1, 416):

զ) Ե՛վ արևելահայերենում, և՝ արևմտահայերենում գործուն են այն կապակցությունները, որոնցում համադաս կապային կառուցով լրացումները ձևավորված են լինում տարբեր կապերով, ինչպես Լինում են գերազանց մենագործություններ այս կամ այն խնդրի շուրջ, այս կամ այն անհատի մասին (ՊԱ, 5, 364): Երկուքը, մայր եւ որդի, խօսեցան մինչեւ ուշ գիշեր, գրոյց չկը, մենախօսութիւն՝ ամեն մեկը ինքն իրեն համար, ինքն իր հետ (ԳԱՍԿ, 52):

է) Բայց առավել տարածված են այն կառուցները, որտեղ մինույն կապով կամ համադաս լրացումներն են լրացյալին կապվում, կամ էլ համադաս լրացյալները՝ լրացմանը, օրինակներ՝ արևելահայերենից՝ Մթնաձորում սկսվեց անհավասար կրիվ մարդու և զազանի միջև (Բակ, 1, 6): ...անդառնալիորեն անցածի, կրցրածի համար ցավն ու մորմոքը տակնուվրա էր անում նրա միտրն ու հոգին (ՇԹՆՃ, 1, 27), արևմտահայերենից՝ Շեթանոս տաճարի մը կամարներու ներքեւ պէտք էր գրի քեզ այս տողերը, այս խոստովանութիւնը, որը մեղանչումն է քո հոգիիդ եւ վեղարիդ դիմ (ՍՊ, 2, 437): Քիչ ժամանակուա մեջ դպրոց հաճախողներու թիւր բազմացաւ, միաժամանակ դեպի մայրենի լեզուն անոնց հետաքրքրութիւնը, սէրը աճեցաւ (ն.տ., 2, 152):

ը) Մյուս դեպքում կապը կրկնվում է՝ խնդիրներին առանձին- առանձին շեշտելու նպատակով, ինչպես՝ արևելահայերենից՝ Տեսել ես իմ մեջ մի ամենափոքր չարություն դեպի իմ ազգակիցը, դեպի ամեն մի մարդ, որ հայ անունն էր կրում (ՍԳԱ, 142), արևմտահայերենից՝ Նա գրել էր, թէ ես ունեմ ատելութիւն դեպի տաճիկը եւ դեպի մեծահարուստները (ՍՓ., 80): Արևմտահայերենում երբեմն հանդիպում են նաև այլ դրսնորումներ՝

- կապային կառուցի համադաս լրացյալները նովյանտիպ լրացում են ստանում, թէն դրանցից մեկն այդպիսի խնդիր չի պահանջում, օրինակ՝ Արդուրահման աղային մտերմութիւնն ու համակրանքը այդ «առիծներուն» հանդեպ նոր չէր (ՍՊ, 2, 70),
- կապային կառուցը համարավում է հոլովական լրացումը: Օր՝ Կուզեմ որ մտածես զիս մտածես քեզ զիս քու մեջող – քեզմով մտածեմ յարաբերութիւնդ ինձի հետ ու կեանքին (ՍԳ, 225):
- կապային կառուցը կարող է վերաբերել նաև ստորոգյալին: Օրինակ՝ Դպրոցին համեմատ հազուստ - կապուստ պէտք է (ՍՊ, 2, 79):
- կապային կառուցը կարող է վերաբրկել կամ ածականին, կամ գոյականին, եթք կապային կառուցով լրացման և լրացյալի միջև կա ածական. ստեղծվում է երկակի մեկնարանություն, օր. Սարտեանի նման լուրջ գրողներ բազմիցս ստորագրած են անոր եջերուն մեջ (ՍԳ, 271):
  - կառուցը երբեմն էլ կարող է հավասարապէս վերագրվել թէ՝ բայանվանը, թէ՝ ածականին և թէ՝ բային, օր՝ Թունավոր նետերու նման ցասկոտ բացազանչութիւններ արձակեցին, որոնք ուղղակի միւնեցան տղուն սիրտը (ՍԳ, 238):

• հանդիպում են բառակապակցություններ, որոնց լրացյալը կրկնվում է որպես կապի խնդիր, ինչպես Պահածոյի խոշոր տուփի պիս տուփ մըն առղջաւ շան զգեստներուն քով (Մ, 42):

• կրկնությունից խուսափելու համար նման դեպքերում կապի խնդիրն ավելի հաճախ փոխանվանական սեռականով է հանդես գալիս, ինչպես՝ Պատահեցաւ, ինչ որ պիտի պատահեր ձերինին նման քաղաքի մը մէջ (Ա. տ., 15):

• փոխադարձ կապի իմաստ արտահայտող գոյականական բառակապակցություններում լրացում են դաշնում կապային ու նախդրավոր կառույցները՝ ընդ նախդիրով կամ դրա և մէջ կապի գուգորդումով (ընդմէջ, ինչպես՝ Քառասունին վերջ, ով տէր, կապակնինք փոխնիվոյն... ընդ մէջ հոգոյն և մարմնոյն բախումներուն ահարկու (ՎԹԵ, 209):

Արևելահայեննեում քուն գոյականի լրացման դերում կապային կառույցները կարող են՝

• լինել ոչ համադաս հարաբերությամբ: Դրանք, սակայն, խիստ հազվադեպ են, օրինակ՝ Բայց ձախորդություններից խուսափելու հարցում նշանառության չափ վարպետ չեն (ԳԹ, 19/10, 2):

• հանդես գալ որպես բաղադրյալ անվանումներ: Սրանք կայունացել են կապային կառույցով լրացման և գոյական լրացյալի ազատ բառակապակցություններից, ինչպես՝ գիտահետազոտական աշխատանքների գծով պրոբեկտոր, կարեռքազոյն գործերի գծով քննիչ և այլն:

• դրսորել իմաստային տարբեր նրբերանգներ, ինչպես՝ Թող որ առաջնելին՝ Քեզ պիս ու քեզ նման մի աղջկա տան (ՊՍ, 3, 120):

Դեռք է նշել, որ արդի գրական հայերենի երկու տարբերակում էլ բայանուն գոյականները երբեմն կարող են ստանալ կապային կառույցներով արտահայտված մեկից ավելի տարբեր լրացումներ: Դրանցից մեկը սովորաբար դրվում է լրացյալի բառային իմաստի պահանջով, մյուսը պարապայական բնույթի լրացում է: Այդպիսի կազմությունները բայանվան՝ բայի հասկանիների շնորհիկ բազմաթույրայնության դրսորում են. այն հասուկ է հայերենի երկու տարբերակներին, բայց առավել ակտիվությամբ հանդես է գալիս ժամանակակից արևելահայերենում, օրինակ՝ Վերաբերություն - ներգործող խնդիր Շեմ հիշում Մայանի հասցեին տրտունջներ ուսանողների կողմից (ԱԱԵ, 202):

Արևմտահայերենում ավելի ակտիվ են տեղի իմաստով կապային կառույցները՝ տարբեր իմաստներով այլ կապային կառույցների հետ: Օրինակ՝ Տեղի և նպատակի ...սափոր մը ջուրի համար փամփուշուներուն տակ ինչահեղ վագքը (ԳԱՍԿ, 40):

Աննշան տարբերություններով նույնանում են նաև այդ կարգի կապակցությունների գործառության առանձնահատկությունները: Դրանք հանդես են զայիս և նախադասություններում, և անվանողական-վերնագրային կառույցներում: Օր՝ արևելահայերենում՝ Երգ ժողովրդի մասին (ԵԶ): Թրի դեմ գրիչ (ՊՍ): արևմտահայերենում՝ Գեղօն ի պատիր հայ լեզու ի (ԱՉԵ):

Կապակցության անդամների շարադասության հարցում նկատելի է այսպիսի օրինաչափություն. իրանիշ գոյականի լրացումները դրվում են նրանից առաջ, բայց անուն կամ ածականական սերումով գոյականի լրացումները՝ նրանից հետո: Բայց նախադասության մեջ շարադասությունը հաճախ չի պահպանվում:

Այսիսով, համեմատելով խնդրո առարկա կապակցությունների կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունները հայերենի երկու տարրերակներում՝ կարելի է անել այսպիսի եզրահանգում՝ այս կապակցությունները որպես շարահյուսական յուրահատուկ կառուցվածք ներ, պահպանել են իրենց հիմնական հատկանիշները՝ կազմության և իմաստային արտահայտությունների առումով: Փոփոխությունները պայմանավորվում են լեզվի զարգացման ընթացքով: Նման կառուցվները ոչ միայն հարստացնում են լեզուն, այլև առավել աշխույժ և կենդանի են դարձնում շարադրանքը: Պատահական չեն, որ ակադ. Գ.Բ. Զահոռյանը կատարյալ է համարում այն լեզուն, որտեղ կենսունակ են կապային կառուցվները<sup>4</sup>

Muradyan Anahit - Structures with Conjunctions + Form of Noun Functional and Structural Peculiarities of Word Combinations in Eastern and Western Armenian. - Thus, comparing semantic, structural and functional features of prepositional (postpositional) structures+ substantive combinations in two variants of the Armenian language, you can come to the following conclusion: these combinations as peculiar syntax retained their basic qualities in the value of the structure and semantic expressions. Changes are caused by the process of language development. Such structures not only enrich the language, but also make the presentation more agile and alive. No coincidence that Academician G. B. Jahukyan considers perfect such a language in which prepositional constructions are viable.

Мурадян Аннаит - Функциональные и структурные особенности предложных субстантивных словосочетаний в восточном и западном вариантах современного армянского языка.- Сравнивая смысловые, структурные и функциональные особенности предложных (последожных) конструкций + субстантивных сочетаний в двух вариантах армянского языка, можно прийти к следующему заключению: эти сочетания как своеобразные синтаксические конструкции сохранили свои основные качества в значении строения и смысловых выражений. Изменения обусловливаются процессом развития языка. Подобные конструкции не только обогащают язык, но также делают изложение более подвижным и живым. Не случайно академик Г.Б. Джакун считает совершенным такой язык, в котором жизнеспособны предложные конструкции.

<sup>4</sup> Գ. Զահոռյան ժամանակակից հայոց լեզվի իմաստարանություն և բառակազմություն, Ե., 1989 էջ 105:

**ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒՄ**

Գեղարվեստական ոճի յուրաքանչյուր դրսևորում ամենից առաջ առանձնանում է պատկերավորման և արտահայտչական միջոցների լայն գործածությամբ: Ծողովրդական բանահյուսությունն այդ առումով բացառություն չէ և ունի արտահայտչամիջոցների հարուստ համակարգ:

Հանելուկը ծողովրդական ստեղծագործության տեսակներից մեկն է, որը «առարկան, երևույթը պատկերում է այլաբանորեն, նրա հատկանիշները նկարագրում զաղոնագրված ձևով»<sup>1</sup>: Ինչպես նշում են Էդ. Զրբաշյանը և Հ. Մահչանյանը, հանելուկների գեղարվեստական առանձնահատկություններից են պատկերման այլաբանական ձևը, սուր դիտողականությունը, պատկերավոր արտահայտիչ մտածողությունը<sup>2</sup>:

Հանելուկը բառն ունի շատ պարզ կազմություն՝ հանել բայ + -ուկ ածանց, և նշանակում է «մի բան՝ ի ներքուստ վեր հանելիք, այսինքն՝ ներքին իմաստի բացահայտում»<sup>3</sup>: Եզրույթն «առաջին անգամ հանդիպում է Անանիա Շիրակացու մոտ, որին վերագրվում է 19 հանելուկ՝ «Հանելուկ դիմակը» վերնագրով»<sup>4</sup>:

Ինչպես նշում է Ս. Հարությունյանը, «հանելուկները վաղ անցյալում ունեցել են գործնական տարբեր կիրառություններ և հնուց անտի կենցաղավարել են իրքի մտավոր ունակությունները զարգացնող, բանականությունը մարզող մտախաղ»<sup>5</sup>: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ տարբեր ծողովուրդների կյանքում հանելուկները հնում կիրառվել են տարբեր կերպ և տարբեր նպատակներով՝ թե՝ հարցահանելուկների ձևով (հարցուապատասխան), թե՝ կրոնական-ծիսական արարողություններում (երբեմն հանելուկների միջոցով լրից փորձությունների են ենթարկվել մարդիկ), թե՝ իրքի մտախաղ երկու մասնակիցների միջև, և այլն:

Անշուշտ, քաղաքակրթության զարգացմանը զուգահեռ՝ հանելուկները ժամանակի ընթացքում կորցրել են իրենց հասարակական գործառությներից շատերը և վերածվել ծողովրդական զվարճակի ժամանցի միջոցների: Մեր օրերում հանելուկները դարձել են մանկական բանաստեղծության ամենասիրված և տարածված տեսակներից մեկը:

Գաղտնիք չէ, որ պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է, որը բնորոշ է գործառական տարբեր ոճերի՝ այս

<sup>1</sup> Էդ. Զրբաշյան, Հ. Մահչանյան, Գրականագիտական բառարան, Ե., 1980, էջ 177:

<sup>2</sup>Տե՛ս նշվ. աշխ., էջ 178:

<sup>3</sup> Ս. Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, Ե., 2010, էջ 250:

<sup>4</sup> Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ (ուսումնասիրություն), Ե., 1960, էջ 7:

<sup>5</sup> Բանագիտական ակնարկներ, 253:

կամ այն չափով: Պատկերավորությունը բնորոշ է հատկապես գեղարվեստական ոճին, նրա զանազան դրսորումներին, ինչպես նաև ժողովրդախոսակցական լեզվին, որն էլ յուրահատուկ դրսորում է ստացել հայկական ժողովրդական հանելուկներում:

Հանելուկը, լինելով գորշակման ենթակա խոսք, կառուցվում է փոխաբերությունների և համեմատությունների հիմքի վրա՝ ստեղծելով համապատասխան իրի կամ երևույթի պատկերը: Չե՞ որ հանելուկի հիմք է կազմում հանելուկային առարկան, որի այլարանական պատկերը սովորաբար ձևավորվում է հանելուկային առարկայից սեռով ու տեսակով բոլորովին տարբեր այլ առարկաների կամ երևույթների հատկանիշների հիման վրա՝ հատկանիշների, որոնք մերձավոր կամ հեռավոր որևէ նմանություն ունեն. հանելուկների մեծամասնությունը հորինված է ոչ թե հանելուկային առարկայի ձևական, այլ երկրորդական, երրորդական հատկանիշների նմանության վրա, ինչով խիստ դժվարանում է հանելուկների գորշակումը<sup>6</sup>:

Այս առումով շատ հետաքրքրական արանձնահաստկություններ են դրսորում հայ ժողովրդական հանելուկները, որոնց լավագույն գիտակը, անշուշտ, Սարգիս Հարությունյանն է. նա ոչ միայն բարեխղճորեն հավաքել և կազմել է ժողովրդական հանելուկների համահավաք քնազիրը, այլև գրադիւն է դրանց ուսումնասիրությամբ: Պատահական չե, որ նա Վիյամ Սարոյանի կողմից ստացել է «Հանելուկ Սարգիս» բնորոշումը<sup>7</sup>:

Ժողովրդական հանելուկներում գործածված պատկերավորման միջոցներին Ս. Հարությունյանն անդրադարձէ է իր ուսումնասիրության «Հանելուկների արվեստը» գլխում, մասնավորապես՝ համեմատություններին, անձնավորմանը, խորհրդանիշին, չափազանցությանը: Բանագետն այստեղ բացահայտել է այն պատճառահետևանքային կապերն ու հարաբերությունները, որոնք հիմք են դարձել այդ միջոցների կիրառման համար: Եթե նպատակը, սակայն, հանելուկների գործ լեզվական կողմի քննությունն է, որի արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Այսպես հանելուկներում բարը սովորաբար գործածվում է ուղիղ իմաստով, և միայն պատասխանը գորշակելուց հետո այն վերածվում է փոխաբերական գործածության:

Փոխաբերության տեսակներից ակնհայտ դրսորում ունեն թե՝ անձնավորումը, թե՝ չափազանցությունը և թե՝ նվազարանությունը: Երկխոսությամբ արտահայտված հետևյալ հանելուկում, օրինակ, անձնավորված է արևը՝

Էն ի՞ նշն ա, ի՞ նշը.

-Ալամա (աշխարհից) գեղան (գնացող), որդիա ՞ն էս գալի:

-Ծովիցն եմ զալի:

-Քա իի՞ չէս թաց:

<sup>6</sup>Տե՛ս նշվաշխ., էջ 252:

<sup>7</sup>Տե՛ս Վ. Դավթյան, Բարի հոկան (Հանդիպումներ Վիյամ Սարոյանի հետ), Ե., 1979, էջ 112:

- Կիսիցն եմ զալի (արև, 5):

Այլ տարբերակում անձնավորված է լուսինը՝  
Էն ի՞շ (ինչ) տղա եղավ մորուց դրեցին թագավոր,  
Տասը խինգ տարի թագավորութեն արեց,  
Տասնվեց տարուց խիվնդցավ,  
Եռտան տարին թմեց (լրացավ)՝ մեռավ (լուսին, 5):

Անձնավորված ներկայացված են ոչ միայն բնության երևույթներն ու լուսատուները, այլև սովորական կենցաղային առարկաները, պտուղներն ու բանջարեններ, բնության երևույթները, ինչպես՝

Անշունչը շնչավորին բռնում ա (թակարդ, 203):

Էն ի՞նչն ա, ի՞նչը.

Գեղնի տակից դուս ա զալի,  
Շորերով մտնըմ ա տաք-տաք բաղնիս,  
Որ դուս ա զալիս բաղնըսից  
Տկլորվում ա (կարտոֆիլ, 45):

Աղբյուր իմ, չորս դիս կամարները մազ է,

Ալ (հենց որ) սուրսում (տխուր, տրտում) եկա, ջուրըս կը վազէ (աչք և արտասուր, 93):

Դապիկի էկավ վազնեվազ,

Խոնջան (գոտի) իթալ (զցել) քյառուն զազ (ծիածան, 15):

Երկան տերտեր, Կարդալեն կերթա (ջուր, գետ, 19):

Մե տախ (տարեց) ախչիկ կա, Խովլ չունի (ջուր, գետ, 19):

Հանելուկներում վառ կերպով դրսնորվել են նաև չափազանցությունը և նվազաբանությունը:

Օրինակ Բյուլլուր (շուրջը) ծմակ (անտառ),

Էծերը մեշը լիկը (զլուխ, մազեր, 83):

Այստեղ նախ գուխը չափազանցությամբ ներկայացված է որպես անտառ, ապա՝ ոչիլը այժ: Հաջորդ օրինակում չափազանցությամբ աչքերը ներկայացված են որպես գումեշներ

Մեզի մի ջուխս գոմեշ ունինք,

Արար աշխարհին վարում է,

Մեր տան հետևն չի վարում (աչքեր, 90):

Ներկայացնենք նվազաբանության օրինակներ՝

Մի հավանց ունեմ, Մեջը երկու քուխս կա իրանց ձուտերովը (երկինք, արեգակ, լուսին և աստղեր, 10): Կապուտ քաֆիկ (սփոռց), Զմեն նիշուունիկ (երկինք, 3): Մեկ բակ օխչար ունիմ, Քնա էկա մեկ հաստ չկեր (երկինք և աստղեր, 8):

<sup>8</sup>Ս. Հարույտյան. Համ ժողովրդական հանելուկներ (համահավաք բնագիր), Ե., 1965, էջ 15 (այսուհետու էջը կնշվի բնագրին լից): Հանելուկները գրի են ատմակած տարբեր տարածքներում և տարբեր բարբառներով, որոնք նշված են համահավաք բնագրում, և մենք նպատակահարմար չենք համարել նշել դրանց գրառման վայրերը:

Երեմն հանելուկներում չափազանցությունն այնքան մեծ է լինում, որ այն կարելի է պարզապես սուտ համարել: Օրինակ՝ Հն ի՞նչն ա, ի՞նչ. Անգերան շինած ա, Անսին կաղնած ա (Երկինք, 3): Եզ ծնավ՝ բերեց կող (Աղամ-Եվա, 197):

Որոշակի թիվ են կազմում նաև համեմատությունները: Օրինակ՝ Սարեն կուզա սարի պես,

Թենքը բուրաղի պես, Կզում է (կռանալ) թե ջուր իսե,

Բդավում է երեխի պես (ամպ և որոտ, 10):

Միավուակ ա կաթի նման,

Ու ա, սարի նման,

Իշիկ ա, իշիկ նման,

Դույիկ (կավե փոքր աման)՝ պուղի նման (կաշաղակ, 76):

Անշուշտ, թաքնված համեմատություն առկա է զրեք բոլոր հանելուկներում, որոնցում կա փոխաբերություն: Չե՛ որ «փոխաբերությունը այլաբերության տարատեսակ է, խոսքի պատկերավորման, ոճավորման այնպիսի միջոց, որի հիմքում ընկած է երկու առարկաների կամ երևույթների նմանությունը»<sup>9</sup>: Մինչդեռ բուն համեմատությունները հանելուկներում քիչ են հանդիպում:

Հազվադեպ են նաև մակրիիք գործածությունները, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, պատասխանը գուշակելուց հետո է միայն բառը փոխաբերական գործածություն ստանում: Այնուամենայնիվ, կարելի է նշել մի քանի օրինակ, ինչպես՝

Մի երեղեն ձի ունեմ, Ամեն տեղից կը թռչի.

Մի պճիր (փոքր) կլուխը կհանի,

Համա (բայց) չի կարա տուրս զա (լեզու և ատամներ, 98):

**Ուկորե** չափար (ցանկապատ),

**Մուե** պահակ (լեզու և ատամներ, 98):

Փետե օրոցք, **փետու** տղա,

Քանի օրեմ՝ վլրովրդա (քամանչա, 183):

Լեզվի արտահայտչամիջոցներից կամ բանադարձումներից գործածական են կրկնությունը, աստիճանավորումը, հակադրությունը: Խիստ գործուն է հատկապես հակադրությունը՝ որն արտահայտվում է լեզվական տարաբնույթ միջոցներով: Օրինակներ

Քրյոր ու եղբայր են.

Մինն առավոտն է ծնում, երեկոյան մեռնում,

Մյուսը՝ երեկոյան ծնում, առավոտյան մեռնում (արև և լուսին, 7): Ծնունդու երկինք,

Թաղումն զետին (անձրև, 13):

Կը կապիմ՝ կը քալե,

Կը արձկիմ՝ քուն կըլա (տրեխ, 120):

<sup>9</sup>Լ. Եզելյան, Հայոց լեզվի ոճավիտություն, Ե., 2003, էջ 345:

*Մամաս սավան ունի՝ ծալել չի կրնա,*

*Պապաս ստակ (դրամ) ունի՝ համրել չի կրնա (Երկինք և աստղեր, 8): Տանեմ դուսը՝ ծրծղա,*

*Բերեմ ներսը՝ լա (ասուլյց, 20):*

*Աչքեր ունի, ոտքեր չունի,*

*Չու է ածում՝ փետուր չունի (օձ, 64):*

*Աշխարք է՝ սուն չկա,*

*Ծով է՝ ջուր չկա (քարտեզ, 181):*

*Ուկորէ չափար (ցանկապատ),*

*Մսէ պահակ (լեզու և ատամներ, 98):*

Ներկայացված օրինակներում հակադրությունն արտահայտված է ինչպես հականիշային զոյգերով (գոյականական՝ քոյր-եղբայր, երկինք - զետին, ծնունդ-թադում, բայական՝ կը կապիմ- կը արձկիմ, ծնում-մեռնում, տանեմ-բերեմ, դերանվանական՝ մինը- մյուսը), ոչ հականիշային, սակայն հակադիր իմաստներ արտահայտող զոյգերով (մսէ չափար-ուկորէ պահակ), այնպես էլ հակադրական հարաբերություն արտահայտող համադաս նախադասություններով (Ծով է՝ ջուր չկա, Չու է ածում՝ փետուր չունի):

Կրկնությունը հաճախ հանդես է զայխ հակադրության հետ միասին, ինչպես

*Հատի պուպուզ, ընդի պուպուզ,*

*Մըն էլ տեհար,*

*Կրտրովը դրւս (արեգակ, 5):*

*Բերան ունի՝ լեզու չունի,*

*Կաշի ունի՝ մազ չունի (տիզ, 83):*

*Կրակն ընկնի՝ էրվիլ չի,*

*Զորլն ընկնի՝ խեղդվիլ չի (դոր, 202):*

*Շատ գործածական է նաև այլաբանությունը, ինչպես՝*

*Սարի վրա ածը (այծը) կը մըկրկա (քահանա և բեմ, 88):*

Պղաս (պղչաս) գրդէլ (գրալ), Գեղի գրնուեր (տանուտեր) (զգիր, 88): *Մին ծառ եմ ջղում (պատվաստել),*

*Բարբ (պսուղը) օրիշը օսոում (աղջիկ, 87):*

*Էն ի նչ պտուղ է,*

*Քանի խակ է՝ քաղցր է,*

*Իվոր (երբ որ) հասնում է՝ դառը (որդի, 87):*

Աստիճանավորումը հիմնականում վերաբերում է այն առարկաներին ու երևոյթներին, որոնք իրենց բաղադրիչներով են ներկայացվում, ինչպես օրինակ, մարմնի մասերը: Ի դեպ, այն արտահայտվում է և բուն բնագրում, և պատասխանական մասում: Օրինակներ

*Մեկ սուն,*

*Կելնի վերև՝ մեկ սուն, մեջը լիքք ուրագ,*

*Կելնի վերև՝ մեկ սուն, էրկու սուն,*

*Կելնի վերև՝ էրկու լուսնակ,*

*Հնտից վերև՝ բաղ ու բոստան,  
Խողեր մեջը կարածան (վիզ, քիթ, աչքեր, զլուխ, միջատ, 101):  
Երկու իլիկ՝ վրան տիկ,  
Տիկին վրա խաչ,  
Խաչին վրա զունտ,  
Գնտին վրա մերի (անտառ),  
Մերին մեջը հարեսի (ավազակ) (ոտներ, փոր, իրան և թևեր, զլուխ, մագեր, միջատ, 101):*

*Մի բաղաք ունեմ՝ տասերկու բազար ունի.*

*Ամեն բազարին՝ եռեսուն մարթ,*

*Ամեն մարթին՝ բասնչորս բեխա (տարի, 16):*

*Մէտ տունըմ կա տուն ի,*

*Տան մեջ խսիր ի,*

*Խսիր տկից նաշչեն (փոքր պայտ) գնաց (երկինք, ամպ լուսին, 7):*

*Մեկ հոգու շատ է,*

*Երկու հոգու հերիք է,*

*Երեքին եիչ է (զաղտնիք, 202):*

*Էկան լցվան,*

*Բռնին կցվան,*

*Էկան ցուցվան.*

*Տրոտողեցին (օրորվել), տրոտողեցին,*

*Քան չը իսակցան, էան զացին (հարսանիք և պարողներ, 88):*

Իբրև ամփոփում՝ նշենք, որ ժողովրդական հանելուկները հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն իրենց գործածությամբ առհասարակ, այլև պատկերավորման և արտահայտչական միջոցների հարուստ համակարգով, որը ցայտուն կերպով ներկայացնում է մեր ժողովրդի լեզվամտածողության տարբեր կողմերը:

Nersisyan Varsik -The Descriptive and Expressive Means in Armenian National Riddles. -The descriptive and expressive means in Armenian national riddles are presented in this research displaying different sides of Armenian national linguistic thinking. From the descriptive means exaggerations, personalization, diminution, gradations are widely used in the riddles. The comparison and epithet are rarely used.

From the expressive means, repetition, gradation, opposition, allegory are widely used.

Нерсисян Варсик - Описательные и выразительные средства в армянских народных загадках - В исследовании представлены описательные и выразительные средства в армянских народных загадках, представляющие разные стороны армянского народного языкового мышления.

Широко применяются олицетворение, гипербола, литота, менее употребительны сравнение и эпитет.

Из выразительных средств используются повтор, градация, аллегория, антитеза.

ՀՈԳԵՆԱՑ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԲԱՌԱՅԻՆ  
ԴՐԵՎՈՂՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հոգի բառը ծագում է հ.-ե.՝ \*ρούιο- ձևից՝ \*ρευ- «փչել, շնչել» արմատից (ՀԱԲ<sup>1</sup>, 3, 107-108): Ըստ Զահուկյանի՝ հ.-ե.՝ \*ρουιο- \*ρέս- \*ραս- «փչել, ուրչել արմատից» (ՀԱԲ<sup>2</sup>, 464): Ակդրնական նշանակությամբ՝ «ողի, շունչ, քամի, օդ», նաև՝ «անձ, մարդ, շունչ, սիրտ» (ՆՀԲ<sup>3</sup>, 2, 113): Կրոնական պատկերացումներով՝ մարդուն կենդանիներից տարբերող և Աստծու հետ կապող ոչ նյութական անմահ էություն մարդու մեջ: Քրիստոնեական կրոնում՝ Սուրբ Երրորդության անձերից մեկը՝ Սուրբ Հոգի: Հետազայում բառը ձեռք է բերել նոր իմաստներ՝ «մարդու հոգեկան աշխարհ, բնավորություն, խիղճ, ոգևորություն»: Փոխաբերաբար նշանակում է «որևէ բանի հիմնական էությունը», «հակում, խառնվածք»: Թվականների հետ գործածվելիս նշանակում է անձ, մարդ՝ երեք հոգի: Գործածվում է որպես կոչական բառ (հատկապես և հոդով)՝ «սիրելիս, հարազատ» նշանակությամբ (ՀԲԲ<sup>4</sup>, 3, 123): «Բառարան Սուրբ գրողում»<sup>5</sup> բառը բացատրվում է. «Նախնիք կը կարծէին թէ մարդուս հոգին կը բնակէր մարդուս շունչին մեջ, և շունչին հետ կը մեկնէր մարմնէն: Ուստի երբայեցերէն և յունարէն բառերը, երբ խոսքը մարդու վրայ է, կը բարզմանուին մեր Աստուածաշունչին մեջ «հոգի», կը բարգմանուին «կենդանութիւն» կամ «շունչ», երբ անասնոց վրա է խոսքը: ....մարդուս մեջ կայ հոգենոր, բանաւոր և անմահ հոգի մը, որ է նիստ մեր մտածութեան, զգացմանց և իմաստափրութեան, որ և կը զատէ զեեզ անբան արարածներէ, և յորում կը կայանայ զիմաւրապես մեր նմանութիւնն ընդ Աստուծոյ»:

Հոգի բառը Աստվածաշունչ մատյանում գործածված է 460 անգամ<sup>6</sup>: Օրինակներ Ս. Գրիգի. «Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. եւ փչեաց երեսս նորա շունչ կենդանի, եւ երեւ մարդն յոցի կենդանի» (Ծնն. Բ.7), ոուսերենուվ՝ “И создал Господь Бог человека из праха земного, и вдунул в лице его дыхание жизни, и стал человек душою живою” (Быт. 2. 7), «Նորա եւ ամենայն զազանք ըստ ազգի իւրեանց, եւ ամենայն սուրուն շարժուն ի վերայ երկրի ըստ ազգի իւրեանց, եւ ամենայն հաւ թռչուն ըստ ազգի իւրում, մտին առ Նոյ

<sup>1</sup> ՀԱՃԱՐՅԱՆ, Հայերեն արմատական բառարան, (այսուհետև՝ ՀԱԲ) հհ. 1-4, Ե., 1971-1979 թթ.:

<sup>2</sup> Գ.Զահուկյան, Հայերեն սովորաբանական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 2010

<sup>3</sup> Նոր բարդիր հայկակեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հհ.1-2, Վենետիկ, 1836-1837.:

<sup>4</sup> Ս.Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հհ. 1-4., Ե., 1944-1945:

<sup>5</sup> Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս (այսուհետև՝ ԲԿԳ), 1881 (վերատպ. 1992), Ե., 1992, էջ 305:

<sup>6</sup> Տէ՛ս «Համարարրատ գրաբար Աստվածաշնչի», Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, Ս.Էջմիածին, 2012, էջ 1121:

ի տապան անդր երկու յամենայն մարմնոյ յորում է շունչ կենդանի» (Ծնն. Է.15), „...и вошли к Нюю в ковчег по паре от всякой плоти, в которой есть дух жизни” ( Быт. 7. 15):

Օրինակներ մեր մատենագրությունից.

«Քանզի ոչ որպէս զարուեստ ուսուցաներ, այլ իբրև զեղողի առաքելաբար աշակերտացն տայր»<sup>7</sup>: «Հոգի երեսաց եւ օգութիւն դեղոյ, Տէր Քրիստոս, օրինեալ ի բարձունս»<sup>8</sup>: «Այսպէս հոգին էութիւն է և ընդունակ բարւոյ և չարի»<sup>9</sup>:

Հոգի բառը բաղադրության մեջ է մտնում հոգե- (հոգի+ա) և հոգի - ձևերով՝ հոգերուիս, հոգեզալուստ, հոգեզեշ (զիշերները գերեզմանից դրւու եկող և թափառող մեռել), հոգեզրզիո, հոգեղարձ, հոգեզավակ, հոգեզմայլ, հոգեզուրկ, հեղեթաս, հոգեթափանց, հոգեթուլ, հոգեխոռվ, հոգեմաշ, հոգեշարձ, հոգեպար, հոգեպահուստ, հոգեվարք և այլն, հոգի՝ հոգիանալ, հոգիունակ, հոգիախաղ, որպէս բարդ բառի երկրորդ բաղադրիչ՝ հեղահոգի, դառնահոգի, երկայնահոգի, կարձահոգի և այլն:

Հոգի արմատով միշինհայերենայն բառեր՝ հոգեվարել (հոգեվարքի վիճակով լինել), հոգեպահ, հոգեփրկանք, հոգոյզալուստ (հոգեզալուստ) և այլն (ՄՀԲ<sup>10</sup>, 2, 43-44):

Հոգի բառը ԱՀԲԲ-ում բառն ունի 18 իմաստ (ԱՀԲԲ էջ 885):

Անդրադարձանք հոգի արմատից բաղադրված հոգեհաց բառին:

Հոգեհաց բառը վկայված չէ գրաբարի մեզ հայտնի բառարաններում, ՄՀԲ-ում. վկայված է ՀԲԲ-ում՝ «հոգու հաց, որ ննջեցեալի տէրերը թաղումից հետո տալիս են յուրաքալաւրներին և աղքատներին»<sup>11</sup> իմաստով (Մալխասյանցը ունի նաև հոգեձաշ բառը՝ նույն նշանակությամբ): Աճայշանը համարում է նոր բառ: Դժվար է ասել, թե հոգեհացի ծեսը եղել է հնում, թե՞ ոչ: Հին հայերի թաղման ծեսի նկարագրության մեջ Վ. Բդրյանը<sup>12</sup> նույնպէս չի արձանագրում այդ բառը: Հավանաբար, այդ արարողությունն անվանվել է այլ բառով:

Հոգեհացի արարողության համար թէրենս կարելի է ենթադրելի համարել զինեձանութիւնը-ը՝ «....եթէ անմահ է հոգին, վասն զի իւրովի ամենայն մարդ զինեձանութիւնն առնէ գնացելոցն և երդնուն նորաւը»<sup>13</sup>:

<sup>7</sup> Սովորի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տիֆլիս, 1913, էջ 340:

<sup>8</sup> Գ.Նարեկացի, Մատեան ողբերգության, Պուէտո Այրէս, էջ 340:

<sup>9</sup> Գ.Տարիացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 23:

<sup>10</sup> Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հհ. 1-2, Ե., 1987-1992:

<sup>11</sup> Հոգեհացը ուսւերեն թարգմանվում է тризна - “У древних славян пиршество в память умершего” կամ поминки - “пережиток религиозной старины- угашение после похорон в память умершего” (С.Ожегов, Словарь русского языка, М., 1970, стр. 550):“Славянс. Тризна может объясняено как производное от trizъ, откуда первоначальное знач. Тризна – “жертвственное заклинание трехгодовалого животного” (М.Фасмер, Этимологический словарь русского языка, т. 4, с. 102).

<sup>12</sup> Տէ. և Վ. Բդրյան, Հայ ազգագրություն, Ե., 1974, էջ 171-179:

<sup>13</sup> Դավիթ Անյանը, Երկասիրութիւնը փիլիխտփայականը, «Սելինութիւն Ստորոգութեանցն Արխաստութիւն», Ե., 1980, էջ 204 (համահավաք թիմական բնագրերը և առաջարկները Ո. Արևշատյանի) (ցանկը, Դավիթ Անյանի այս երկի աշխարհաբար և ուսւերեն բարգմանություն-

Գինեձօնութիւն բառը արձանագրված է Լ.Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում»՝ «Որեէ բանի հիշատակին զինի նվիրելը» բացատրությամբ<sup>14</sup>: Գինեձօնության համապատասխան զուգահեռներ գտնում ենք այլ ժողովուրդների թաղման ծիսակարգում: Հին հնդեվրոպական ցեղերի թաղման արարողությունների մասին Թ.Գամկրելին և Վ.Իվանովը գրում են, որ դիակիզման հաջորդ օրը՝ լրացր բացելուն պէս, կանայք գալիս են «հավերժական կրակի մոտ», հավաքում են մահացածի ոսկորները՝ կրակի վրա լցնելով գարեջուր, զինի և մեղրազինի<sup>15</sup>: Հին հովսները դիակիզմում հետո կրակի վրա կարմիր զինի էին լցնում: Այսպես, Հոմերոսի «Իլիականում» Պատրոկլեսի դիակիզմում հետո Աքիլեսը զինի է հեղում կրակի վրա, ապա ոսկորները հավաքելով ոսկե սափորի մեջ՝ նոյն տեղում թաղում. «....Փշում էին զիշերն ի բուն, արծարծելով կրակը բորբ. Եվ Աքիլեսն ամբողջ զիշեր կրկնատաշտակ իր բաժակով Ուսկյա կժից կարմիր զինին առնում ու հեղում էր զետնի վրա. Թրջում էր հողն ու ձայն տալիս Պատրոկլեսի թշվար հոգուն»<sup>16</sup>: Տեկտորի դիակը Աքիլեսից վերցնելիս Պրիամոսը՝ Տեկտորի հայրը, ինորում է. «Շնորհի՛ ր ուրեմն մեզ ինը օր, որ սուզ անենք նրա վրա, Ու տասներորդ օրը թաղենք, որ հոգու հաց ուտեն մարդիկ» (ն.տ., էջ 461):

Հին պալավոնները թաղման հաջորդ օրը գերեզման այցելելը անվանում էին «արքնացնել ննջեցյալին» կամ նախաճաշ (завтрак) տանել: Ուշակովի բառարանում «հոգեհաց»- “тризна” բառը բացատրվում է. “У древних славян поминки умершем, сопровождавшиеся пиршеством” - Ковши круговые запеняясь шипят на тризне плачевной Олега (Пушкин)<sup>17</sup>, ըստ wikipedia համացանցային հանրագիտարանի՝ “часть языческого погребального обряда у восточных славян, состояла из песен, плясок, пиршества и военных сосязаний в честь покойного/ru.wikipedia.org /wiki/ (тризна). Մեկ այլ բացատրությամբ՝ 1. Заключительная часть похоронного обряда у древних славян, состоявшая из жертвоприношений, военных игр, состязаний, борьбы, а позднее из поминального пиршества. 2. Церковный обряд похорон или поминовения усопшего. Обрядовое угождение с вином в память умершего после похорон или в день годовщины его смерти: “При возвращении в кладбища начинался тризна в честь покойника, и родственники и друзья бывали пьяны два, три дня или целую неделю” (Пушкин, История села Горюхина)<sup>18</sup>:

Խ. Սամուելեանը՝ ‘Հայ ընտանեկան պաշտամունքը’ հոդվածում<sup>19</sup>, անդրադառնալով հայերի՝ մեռյալների հոգիներին կերակրելու և խմեցնելու հա-

ները չկան. այն մեզ է հասել միակ ձեռագրով և թերի վիճակում (Մատենադարանի թիվ 1930 ձեռագրը). պակասում է աշխատության մեկ երրորդը:

<sup>14</sup> Լ.Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. ՆՀԲ-ում չվկայված բառէր, Ե., 2010, էջ 85:

<sup>15</sup> Տ. Գամկրելիձ, Վ. Իվանով, Ինդոեվրոպեական լեզու և անդամականություններ, Ե., 1984, ս. 826.

<sup>16</sup> Հոմերոս, Իլիական, Ե., 1987, էջ 424 (թարգմ.՝ Ս. Խերանյանի):

<sup>17</sup> Толковый словарь русского языка, Госиздат. иностранных и национальных словарей, т. 4, М., 1940, с. 802:

<sup>18</sup> Словарь русского языка АН СССР, Институт Русского языка, т 4, изд. “Русский язык”, М., 1984, с. 413.

<sup>19</sup> Ազգագրական հանդէս, 1904, 12-րդ գիրը, էջ 203-234:

վատալիքներին, կարծում է, որ դա, անշուշտ, պատմական ժամանակներից է հասել մինչև մեր օրերը: «Գերեզմանի վրայ խմելու սովորութեան մասին մեզ տեղեկութիւն է տալիս Վաղարշապատի 4-րդ ժողովում յօրինած (426թ.) կանոնների ԻԱ յօդուածը. «Մի թոյլ տացեն քահանայր զիներբուս առնել ի սուզ մեռելոց և կամ կոծ դնել և աշխար առնել»<sup>20</sup>: ՆՀԲ-ում զիներբուք բառի բացատրությունը հղվում է զինարքուոք բարին՝ «ուտելն և ըմպելն. խնջոյք, խրախունք, կոչունք» (ՆՀԲ, 1, 552): Հայաստանի տարրեր շրջաններում պահպանվել է գերեզմանի վրա խմիչք լցնելու սովորությունը: Ննջեցյալի ազգականները ողորմաթաս են խմում՝ նախապես մի քիչ օդի կամ գինի լցնելով գերեզմանի վրա, ապա նստում են գերեզմանի կողքին և ուտում տնից բերած ուտելիքները: «Ի վերջոյ ձաշի մնացորդները թողնելով գերեզմանի վրայ և աւելացած խմիջներն ածելով գերեզմանի վրայ՝ վերադանում են» (Ա.Խ., Էջ 232):

*Հոգեհաց* բառը շատ հոմանիշներ ունի՝ *հոգեձաշ*, *հոգու հաց*, *մեռելահաց*, *ողորմածաշ*, *այգալաց*, *զիշերժամ*, *սպահաց* ևն: Հոմանիշային շարքում *այգալաց* բառի առկայությունը հուչում է, որ հասկացությունը գոյություն է ունեցել քրիստոնեությունից առաջ: *Այգալաց* բառը ՀԲԲ-ում հետևյալ բացատրությունն ունի. «1.Կրօնական արարողութիւն, որ կատարվում է ննջեցեալի գերեզմանի վրայ բաղման յաջորդ օրը: 2. Այդ նոյն օրը և նոյն տեղում կատարված սուզը՝ լացը: 3. Էզլաց, հացլերույթ, որ ննջեցեալի տէրը տալիս էր թաղման բառասունքին, կամ բառասունքի բոլոր կիրակնամուտներին» (ՀԲԲ, 1, 74):

*Այգալաց*-ը որոշ առնչություններ ունի *այգողբք* բառի հետ, որ ժողովուրդն անվանում է *այգողք*, *էզնահող*, *ինքնահող*. Տեղի է ունեցել *այշէ*, ապա *էշի* հնյունափոխություն: *Այզը՝* «առավոտյան պահը արևածագից առաջ, վաղ առավոտ» իմաստով (ԱՀԲԲ, 38) որպես արմատ բարբարներում չի պահպանվել, բայց կան դրանից բաղադրված բառեր<sup>21</sup>՝ *այգուց*՝ *էզուց*՝ առաջացած *այշէ* հնյունափոխությամբ, *էրլաց* (Հմշ.՝)՝ «քելեխ» իմաստով, *էրպարէվ* (Վն.՝)՝ «այգարել»՝ ամուսնության հաջորդ առավոտյան նորապսակ գոյզի կտուր բարձրանալը և նվազածուների ուղեկցությամբ արևին ողջունելը» (ՀԱԲ, 1, 166):

*Այգառողբք* (այգողբք) բառը թյուրմբունման հետևանքով դարձել է *ինքնահող*՝ իբր «իր հողին այցելելը»: Բարբարներում անվանում են նաև *էզաֆողէք*, *ըքնաֆողէք* (Ար, Լ.Աշտ. Դրբ.), *էզողք* (Մշ.՝)` «Թաղման հաջորդ օրը ննջեցյալի գերեզմանը այցելելը, գերեզմանի վրա կատարվող սուզը և դրա հետ կապված արարողությունները, այգլաց»:

Թեև *հոգեհաց* բառը վկայված չէ գրաբարի մեզ հայունի բառարաններում, բայց կա բարբարներում (Ար., Ակն., Կր., Խրբ., Նւ.)՝ *հոգեհաց* կամ *հոգուհաց*, Սեբաստիայի բարբառում՝ *հոգիք*. Հայերենի մի շարք բարբարնե-

<sup>20</sup> Արել արքեա. Միկրարեան, Պատմութիւն ժողովոց Հայաստան. Եկեղ.՝, Էջ 52 (հղումը՝ ըստ Խ.Սամուկեան, նշվ. աշխ., Էջ 2):

<sup>21</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), Բ, Ե., 2002, Էջ :

բում (Ար., Թք., Ուրմ., Ամս., Կր., Խտջ.) *հոգեհացի* համար գործածվում է *Ժամանակ* բառը՝ «հոգեհաց», որ տրվում է ննջեցյալի հիշատակին պատարագից հետո» (ՀԼԲԲ, Բ, 154): Ի դեպ, Ղարաբաղի բարբառում *հոգեհացի* արարողությունը անվանում են *բաղարարի* (*պատարարի*), որ ննջեցյալի հարազատների կողմից հիշատակի ծիսային ձաշկերույթ է: Բայազետի բարբառի Սարուխանի խոսկածքում *հոգեհացին* ասում են «պաղարաք». «պաղարաք լցնել» արտահայտությունը նշանակում է *հոգեհացին* տրված ուտելիքը լցնել, բաժանել:

Արարատյան բարբառում *պատարազատուն* նշանակում է «մեռելատուն»:

Բարբառներում *ժամ* բառն էլ, «եկեղեցի» խմաստից բացի, ունի «ննջեցյալի հիշատակին պատարագ և *հոգեհաց*», *ժամատուն* բառը՝ նաև «մեռելատուն, որտեղ հոգեհաց է տրվում», *ժամ անել* կապակցությունը՝ «ննջեցյալի հիշատակին հոգեհաց տալ» խմաստները (ՀԼԲԲ, Բ, 152-153):

Շատ դեպքերում *ժամ* և *պատարազ* բառերը հանդես են զայլիս որպես շաղկապական բարդություն՝ *ժամ ու պատարազ* (Են մենավոր ծառի տակ փոս փորեցին մի խորին, Առանց ժամ ու պատարազ, Մեջը դրին Մարոյին (Հ. Թումանյան, Մարոն):

*Դաշտումահաց* բառը Արարատյան և Ղարաբաղի բարբառներում ունի «հոգեհաց, հուղարկավորությունից հետո ննջեցյալի հոգու համար տրվող հացլերույթ» խմաստը՝ «Իրիկուայ ժամը որ դուս Էկաւ....Էկան ննջեցելատիրոց տունը, պաշտումահաց կերան».

*Հոգեհացի* համար կարելի է աղերսներ որոնել հունարենից փոխառյալ *ազապ/ե/բառի հետ: Ազապ (է)*՝ հունարեն άγάπη, ՆՀԲ -ն բացատրում է.՝ «Սկզ. սիրելու. որպէս հացլերույթ. կերակուր արաբեալ ի սիրոյ և միաբան սիրով՝ մանաւանդ ի պէտս ողորմութիւնէ աղքատաց, և յօժանդակութիւն հոգլոց ննջեցելոց» (ՆՀԲ, 1, 3): ՀԲԲ-ում բառը բացատրվում է՝ ‘1.Քրիստոնեության սկզբնական շրջանում հավատացյալների համայնական ընթրիք ի հիշատակ խորհրդավոր ընթրիքի, որի ժամանակ մասնակցողները համբուրում էին միմյանց ի նշան հաշտության: 2. Մատաղ’ (ՀԲԲ, 1, 3):

Հին հունարենում *ազապ/ե/ (սեր)* բառից բաղադրված բայը՝ այցովա, իր հիմնական՝ «սիրել» խմաստից բացի՝ ունի «ննջեցյալին պատիվներով հուղարկավորել, մասնակցել հուղարկավորությանը» խմաստները<sup>22</sup>:

*Ազապ/ե/* բառը բազմից գործածված է «Հայոց կանոնազրքերում»: «Կանոնազրքից հայոց»-ում կա այսպիսի օրինակ՝ «Ի յիշատակ վախճանելոցն յլնտանեաց նոցա, որ ինչ ըստ կարգի աւրինաց քրիստոնեութեան, զոր հրամանաւ սուրբ հարցն կատարեն զմխիթարութիւն նոցա կամ զքառասունս եւ զազապս ի հանգիստ նոցա...»<sup>23</sup>:

<sup>22</sup> Дворецкий И.Х., Древнегреческо-русский словарь, М. 1958:

<sup>23</sup> Կանոնազրքից հայոց, հ. Բ., Ե., 1964, էջ 15 (աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի):

*Ազատ* բառը ժողովուրդը չի գործածում, բայց հասկացության հետքերը պահպանվել են, ինչպես Զատկի և Սուրբ խաչի մերելոցներին հասարակաց ճաշեր կազմակերպելը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշարադրյալը *հոգեհաց* հասկացության և նրա բառային դրսերումների մասին, կարելի է ենթադրել, որ հեթանոսական զաղափարախոսության հետ առնչվող թաղման այս ծիսական արարողությունը անվանվել է այլ բառերով, սակայն հասկացությունը (հնարավոր է նաև բառը) պահպանվել է բարբառներում և, հավանաբար, բարբառներից էլ անցել է գրական հայերենին:

Papikyan Silva-From the History of the Concept «*hnqēhwag*» *hogehac*, (repast) and Its Display.- The word «*hnqēhwag*» “*hogehac*”, formed by the root word «*hnqē*» “*hogi*” (soul), is not certified in Ancient Armenian dictionaries. For this word in Ancient Armenian, it is supposed to be the word «*զինեձօնութիւն*» “*ginedzonutyun*”. The word was used by Davit Anhagt. We can find similarities of the «*զինեձօնութիւն*» “*ginedzonutyun*” ritual in other nations’ burial rites. The word «*hnqēhwag*» “*hogehac*” has many synonyms: *hogēčaš*, *hogu hač*, *meřelahač*, *aygalac*, *gišeražam*, *sgahač* etc. The presence of the word “*aygalac*” among synonyms proves that the concept has existed before Christianity.

Папикян Сильва - Понятие слова “*hogehac*” и его лексическое значение.- Слово “*hnqēhwag*” (*hogehac*) образованное от слова “*hogi*” не встречается в словарях древнеармянского языка. Для обозначения этого понятия в древнеармянском языке употреблено слово *զինեձօնութիւն* (*ginejonut*<sup>c</sup>*yun*). В похоронных ритуалах других народов мы можем найти параллели “*ginejonut*<sup>c</sup>*yun*”. Слово “*hogehac*” имеет много синонимов - *hogēčaš*, *hogu hač*, *meřelahač*, *aygalac*, *gišeražam*, *sgahač* и т.д. Присутствие “*aygalac*” в синонимическом ряду подсказывает, что это понятие существовало еще до христианства.

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Համանունությունը լեզվական միավորների (բառերի, բառաձևերի, մասնիկների, քերականական կառուցների) ձևախմաստային այնպիսի փոխհարաբերություն է, երբ դրանք արտասանությամբ, հնչյունական կազմով նույնն են կամ նման, իսկ իմաստով և ծագմամբ՝ տարրեր:

Հայերենազիտությունը համանունության հարցերը բավականաշափ ուսումնասիրել է, առավել հանգամանալից քննություններ են կատարել Ն. Պատնասյանը, Էդ. Աղայանը, Ա. Աբրահամյանը<sup>1</sup>: Հարցին առավել մանրամասն անդրադարձել է Ն. Պատնասյանը, որն իր «Քերականական համանունները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ մանրամասն շարադրում է տեսական բյուր հարցադրումները:

Տարբեր հեղինակներ համանունները դասակարգում են տարբեր սկզբ-բունքներով: Նախ առանձնացվում են բառային և քերականական համանունները: Բառային համանունները ձևով նույնական, իմաստով տարբեր բառերն են: Քերականական համանունների դրսուրման դաշտուն առավել լայն է: «Քերականական համանունություն ասելով հասկանում ենք այն քերականական ձևույթները, բառաձևերը և շարահյուսական կառուցները, որոնք լինելով նույնական արտահայտության պլանում, տարբերվում են բովանրակային պլանում, այսինքն՝ տարբեր են իրենց իմաստով և ունեն գործառության և գուգորդելիության տարբեր ոլորտներ»<sup>2</sup>: Այդպիսի միավոր է, օրինակ՝ ումասնիկը, որ կարող է լինել սեռական հոլովի վերջավորություն՝ ամուսնու, պատճառական բայերի հրամայականի ձևեր՝ մոտեցրու, ապառնի դերքայ գրելու, ածանց՝ հասու, ու շաղկապ և այլն:

Բառային և քերականական հիմնական տարատեսակներից զատ մատնաշվում են համանունության մասնակի այլ խմբեր:

ա) Ըստ համանուն միավորների ձևային նմանության առանձնացվում են բացարձակ համանուններ, որի դեպքում միավորները ձևային առումով համընկնում են լիապես, օրինակ՝ մարտ «ամսանուն» և մարտ «պատերազմ»: Հաճախ նշվածներն անվանում են համահունչ (անօդ-անոր), համագիր կամ նույնազիր (բազմականություն «շատ աշքեր ունենալը» և բազմակը(ը)նություն «մի քանի կին ունենալը») և այլն:

<sup>1</sup> Նկատի ունենք հատկապես հետևյալ աշխատությունները. Ն. Պատնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970: Ա. Աբրահամյան, Հայերենի քերականական համանունության շրջը.- Պատմա-բանասիրկան հանդես, 1, 1974: Ռ. Շալոմից, Համանուն բառերը ժամանակակից հայերենում.-Լեզվի և ոճի հարցեր, 4, Ե., 1977: Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառավիճություն, Ե., 1984: Ե. Գևորգյան, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Ե., 1978:

<sup>2</sup> Ն. Պատնասյան, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Ե., 1979, էջ 21:

բ) Ըստ առաջացման ուղիների տարբերակում են. համանունություն հնչունափոխությամբ. *հարկ* (*յարկ*)–*հարկ*, համանունություն փոխառությամբ՝ *շինել* (կառուցել) – *շինել* (վերարկով տեսակ), համանունություն քերականական ձևերի նմանությամբ *արի* (քաջ)–*արի* (քայաձև), համանունություն բազմմաստ բառերի իմաստների հեռացումով՝ *ճակատ* (ռազմաձական) –*ճակատ* (մարմնի մաս): Թեև վերջին այս դեպքում դժվար է հստակ սահման դնել բազմիմասսության և համանունության միջև:

Լեզվաբանական գրականության մեջ խոսվել է նաև համանուն դարձվածքների մասին. *Ճեռք տալ* (դիպչել) – *Ճեռք տալ* (Ճեռքը սեղմելով ողջունել) – *Ճեռք տալ* (բավարարել):

Դժվար չէ նկատել, որ նշված բոլոր տարատեսակներն ի վերջո հանգում են երկու իմանական խմբի՝ բառային և քերականական համանունների:

Հայերենագիտության մեջ քննարկման նյութ է դարձել նաև համանունության և բազմիմաստության փոխհարաբերության հարցը: «Եթե տվյալ միավորը կարելի է դիտել որպես տարրեր հարացուցների անդամ, ապա մենք գործ ունենք համանունության հետ: Եթե տվյալ միավորի իմաստային տարրերությունները կախված են տարրեր կոնտերստներից, ապա մենք գործ ունենք բազմիմաստության հետ», -սահմանում է Ա.Արքահամյանը<sup>3</sup>:

Համանունության դրսորման և դրա վերլուծության մասին վերը շարադրած համառոտ ակնարկի նպատակն է՝ ցոյց տալ, թե ինչ դիրք են գրավում մեր մատնանշած պատմական համանունների օրինակները համանունության շարքում:

Հայերենի հին և ուշ միջնադարի աղբյուրները թերթելիս աշքի էին ընկնում մի շարք բառեր, որոնք ունեն նույն կազմությունը, բայց իմաստով ու նաև ծագմամբ տարբեր են, այսինքն՝ լիովին բավարարում են համանունության հատկանիշները: Խոսքը վերաբերում է մի կողմից գրաբարի կամ միջին հայերենի, մյուս կողմից՝ աշխարհաբարի աղբյուրներին: Հայերենի տարբեր փուլերում ծագած լինելով՝ բառային այդ միավորները (շարքերը) նույն ձևու ու կազմությունն են ստացել իրարից անվանի և տարբեր են նաև իմաստներով, ինչպես օրինակ՝ *յոտնաշայի* - մեր բաղադրամ ունեցել է «ոտանավոր, չափածո» իմաստը, իսկ գրաբարի բառարաններում<sup>4</sup> հանդիպում է «ոտքի բնական չափ» իմաստով, դարակել հանդիպում է «դասակարգել» իմաստով, ՀԲԲ-ում՝ «դարանակել՝ գաղտնիքը դուրս հանել», *յոդակապ*՝ «թագակապ՝ զմբեթավոր», ԱԲ-

<sup>3</sup>Ա.Արքահամյան, Հայերենի քերականական համանունության շուրջը. - *Պատմա-բանասիրական հանդես*, 1974, 1, էջ 26:

<sup>4</sup> Բառարանային տվյալները համեմատելիս օգտվել ենք՝ **Գ. Աւեսիքեան, Խ. Սիրմիկեան, Մկ. Աւգերեան, Նոր բառցիքը հայկական լեզուի** (այսուհետև՝՝ ՆՀԲ), հհ. Ա.-Բ, Ե., 1936-37: **Գ. Ճելլասիեան, Առձեռն բառարան հայկագնեան լեզուի** (այսուհետև՝՝ ԱԲ), Անթիլիս, 1865: **Ստ. Սալիմսանց**, Հայերեն բացարարական բառարան (այսուհետև՝՝ ՀԲԲ), հհ. I-IV, Ե., 1944-45: **Նորայր Բիոզանդացի, Բառզիքը ստորին հայոց, ի մատենագրութեանց ԺԱ- ԺԷ դարբուց** (այսուհետև՝՝ Ն. Բիոզ), Ժնեվ, 2000 (Պ-Ֆ տառերը անմշակ): **Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան** (այսուհետև՝՝ ՄՀԲ), Ե., 2009: **Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառան** (ՆՀԲ-ում չկլայփած բառեր), (այսուհետև՝՝ ՀԳԲ), Ե., 2010:

ում՝ «հոյակապ» և այլն: Նույնահունչ համանուն բառեր են ներկայացրած միավորները, որոնք իրարից անկախ գոյացել են մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում:

Լեզվի տարբեր փուլերում իրարից անկախ առաջ եկած պատմական համանուններն առաջացման ուղիները տարբեր են: Առանձնանում են հետևյալ մի քանի հիմնական խմբերը:

Ա) Պատմական համանունություն հնյունափոխման հիմունքով, այս դեպքում համանուններն առաջանում են հայերենի տարբեր փուլերում ի հայտ եկած հնյունափոխական իրողությունների պատճառով, օրինակ՝ *այգենալ - ԱԲ* և *ՀԲԲ այգենալ* բառն ունի «այգը բացուել, լուսանալ» իմաստը, իսկ մեր քաղաք բնագրում գործածվել է «հագենալ» իմաստով, որն առաջացել է *յագ>այց հնյունափոխությամբ*:

Բ) Պատմական համանունություն խոսակցական տարբերակի առաջացմամբ, որի դեպքում համանուն շարքի անդամներից մեկն ունի խոսակցական, բարբառային ծագում, ինչպես՝ լիս - ՀԲԲ ունի լիս «լոյս» (ոյ>ի), իսկ մեր դիտարկած աղյուրներում հանդիպում է լիս «լիքը, լեցուն» իմաստով. «Զմեծամեծ համբարանցու լիս ցորենովք եւ ամենայն բարութեամբք իբրեւ միջաբեր զաւակի թռղի ի ժառանգութիւն սմա» (Յիշ. Ուլն., 294): Տրոպ (գրք. տրուպ) - բոլոր բառարաններում «նուաստ, խոնարի» իմաստով գործածվող տրուպ՝ տրոպ բառի դիմաց ՀԲԲ-ն ունի *տրոպ* «փոխակերպութիւն»:

Գ) Պատմական համանունություն բառակազմական նոր տարբերակի առաջացմամբ: Այս դեպքում համանուններ են դատնում բաղադրյալ (ածանցավոր կամ բարդ) բառերը, որոնցից մեկը ծագել է ուշ՝ հետգրաբարյան շրջանում և իմաստով որևէ կերպ չի առնչվում գրաբարյան նոյնակազմ բառին, օրինակ՝ *բիւրեղէն - հանդիպում* է «բիւրեղեայ» իմաստով, մինչդեռ ՍՀԲ ունի *բիւրեղէն «շատ»* իմաստով: *Ճաշակ* - «զեղեցիկը ըմբռնելու ունակություն» իմաստից զատ մեր աղյուրներում հանդիպում է «Ճաշակելիքի զգայարան» իմաստով:

Դ) Պատմական համանունություն բազմիմաստության հիմունքով: Շատ հաճախ միևնույն բառն այնպիսի իմաստային կերպարանափոխություն է ապրում, որ նման եղանակով ի հայտ եկած բառը պետք է համարել ոչ թե բազմիմաստության, այլ համանունության դրսնորում, օինակ՝ *անփորձ - գործածվում* է ոչ թե «փորձ չունեցող», այլ՝ «անփորձանք, փորձանքից գերծ» իմաստով: *Ստորոտ* - վաղաշխարհաբարյան աղյուրներում կազմվել և գործածվել է ոչ թե «ստորին կողմ», այլ՝ «ցած, անարգ» իմաստով: *Ստորոտ* բառը նշված իմաստով հանդիպում է գրաբարի ստորոտաբարշ «նշանակ ցոփութեան» բառում (ըստ ՆՀԲ-ի), և *ստորոտ* բառի հատկապես այդ իմաստը անկախարար գործածված հանդիպում ենք վաղաշխարհաբարյան բնագրերում: *Տերունի* - ունի «անմիջապես էջմիածնին ենթակա, նրան պատկանող» (ըստ Լեոյի), նաև՝ «անմիջականորեն արքունիքին ենթակա ժողովուրդ, բնակավայր» իմաստները, մինչդեռ ՀԲԲ և ՍՀԲ *տէրունի* ունեն «կիրակի» իմաստով:

Նշված դեպքերում գործ ունենք լեզվի պատմական զարգացման արդյունքում ի հայտ եկած համանուն շարբերի, այլ կերպ ասած՝ պատմական

համանուների հետ: Այստեղ անպայմանորեն առաջին պլան է մղվում տվյալ բառը լեզվի երկու տարբեր փուլերում իրարից անկախ ծագած լինելու հանգամանքը: Այսպիսով՝ պատմական համանուն ենք համարում լեզվական այն միավորները, որոնք ձևով նման կամ նույն լինելով՝ ծագել են լեզվի զարգացման տարբեր փուլերում իրարից անկախ (ստորոտ «լեռան ստորոտ» և ստորոտ «ցած, անարգ»):

Ստորև ներկայացնում ենք պատմական համանուների օրինակներ բնագրային վկայակրուսմներով, որոնք քաղված են ուշ միջնադարի հայերեն ձեռագիր և տպագիր աղբյուրներից, որոնց ցանկը տրվում է հրապարակման վերջում:

Անպար - ամբար, շտեմարան: ԱԲ և ՀԲԲ անպար «պարելու անվարժ»: Այլ ի վայր անպարն զարտոյ, որ է մինն նատեալ արքունեան (Քեօմ., 26, 28):

Գեղջուկ - զյուղ, զյուղակ: ՀԲԲ և ԱԲ և այլուր՝ գեղջուկ «զյուղացի, ռամկական»: Երկուշարթին յայն կոյս անցեալ մտար ի գեղջուկ մի Միջին անուն (Սիմ. Լիհ., 6):

Դաշտիկ - փորքիկ դաշու: ՄՀԲ դաշտիկ «խոց»: Դաշտիկ ծաղկալի, որոյ սկիզբն է նախազգուշացումն խոստովանահարց եւ կոչնակիկն զարթուցողական (Գալ. Կենս., 291):

Դարակել - դասակարգել, ճանաչել: ՀԲԲ ունի դարակել՝ «տե՛ս դարանակալել» հղումով: Դարակելմ - ճանաչեմ այնքան նրագունի խուզմամբ և հետազօտմամբ, մինչ մնայ և ո՞չ ինչ յենթակայումն ճանաչելոց, զաղեցեալ յիմոյն ճանաչմանէ (Վ. Ցոնն., 23): Դարակել - ճանաչել (ՍՍ 2019, 185թ):

Խոյակապ - թագակապ՝ զմբեթավոր: ԱԲ և ՀԲԲ խոյակապ «հոյակապ»: Խոյակապ - թագակապ և թագէ կաթուղիկէն (ՍՍ 1528, 2ա):

Կտուած - թեփահան արված: Ն.Բիւզ. կտուեմ «կեղեւել, ի կտու բառէն, որ է կեղեւ», ՄՀԲ կտուած «արծն, արծնապակի»: Առ յունապ Ի հատ... զարի կտուած Ժ տրամ (Բունիաթ, 70):

Հազազ - թանկարժեք քարերի հղիկիչ, ողորկիչ: ԱԲ-ն ունի հազազ «ձայն հանող շոնչ» իմաստով: Այս լրսած ալմաստովն զմեծագին ալմաստն թրաշ կու անեն հազարներն (Դաւթիթ., 444):

Հայալթաղ - թաղուած հայկական ավանդությամբ: ՀԲԲ հայալթաղ «հայալթաղ»: Շատ ապրեցաւ, հայութին արար, հայալթաղ արարին (Զ. Ազուլ., 89):

Ճոխել - ճոխացնել, զարգացնել: ՄՀԲ-ն նույն բառն ունի «փետել» իմաստով: Զանայր զուսումն ճոխել ազգիս նախնի սրբոց յար հանգէտ (Թորք. Տապան., 176):

Մարգամէջ - մարգերի մէջ (առու): ՀԲԲ-ում կա մարգամիջի «խնձորի մի տեսակ, մանըք ու քաղցր» համանունը: Է ձորակն, յորում է առու մարգամէջ (Կամենից, 158):

Մսածաղ - մսի վաճառանոց, խանութ: ՀԲԲ-ում մսածաղ բառը բերված է «մսով պատրաստած ծաղ, մսով կարկանդակ» իմաստով: Ոչ զուանէին

կերակուր ամեներեան մարդիք եւ անասունք, զի փակեալ եղեն ամենայն դրունք եւ ամենայն մրբածաղք, մսածաղք եւ հացածաղք (ՄԺ I, 212):

Յարակ - միշտ, հարատև, հմմտ. գրաբարի *յարակունութիւն* «տևողություն» բառի հետ: ԱԲ և ՀԲԲ *յարակ* բառը բերում են «ա. գ. կպած, կցուած» իմաստներով: Յարակ - մակրայ ժամանակական, ընդ երկարաձգութիւն ամանակի, լատ. *տի՛՛ն* (Վ. Յուն., 55):

Որդրել - հորդորել: ՄՀԲ-ում առկա է *որդորել* «առատացնել, շատացնել» բառը: Խիստ ատապով տաշէր չոր միս, Քաջալերէր եւ յորդորէր զիս (ՈՒՄՀԲ I, 180):

Ուսկայ - որտեղից: Նույն բառը *հուսկայ, օսկայ* տարբերակներով ՀԲԲ և ՄՀԲ-ն բերում են «այժմ, հիմա» իմաստով: Անրուն որդունք են ի աշուն / Թէ ո՞ւսկայ կու զայ անուշ լողման (ՈՒՄՀԲ I, 343):

Սիրամայրը - սիրամարգ: ԱԲ և ՀԲԲ ունեն *սիրամայր՝* «մօրը սիրելի կամ մայրասէր, կամ սիրող մայր»: Զետ զիրամայրը կամկարագնաց ես, Գունգգուն գեղով պայծառացեալ ես (ՈՒՄՀԲ I, 103):

Վահ - Մաշտոցյան Մատենադարանի թ. 1528 ձեռագիր բառարանում բառի բացատրությունն է՝ «հին», իսկ ԱԲ և մյուս բառարանները բերում են «վախ»:

Վայրենիք - հարազատ վայր, *հայրենիք* բառի համարանությամբ: ԱԲ-ն ունի *վայրենիք* «վայրի, կատաղի»: Միշտ որոնեմ վայրենիք ինձ երթալոյ/Զի չկայ երբեք զիս հոգացող, ափսոս ս ինձ (ՈՒՄՀԲ I, 180):

Վարիս - ժառանգ, թուրք. varis բառից: ԱԲ-ն ունի *վարիս* «համարում, կարծիք»: Ես՝ Աղա Խաչիկս... իմ յօժարութեամբն և այլ վարիսներովն այս հինգ զիրս ընծայ և վախմ արարաք (Յ. Քիւրտ., 10):

Տեսակ - տեսողություն, տեսողության զգայարան՝ ի տարբերություն բոլոր բառարաններում առկա «հասկություն, որով մի առարկա տարբերվում է մյուսից» հանրահայտ իմաստի: Ծանօթութիւնս այս յառաջազգի ի հնկից զգայութեանց գլխաւորաց մարմնոյ, այսինքն ի տեսակէ, որ է յաշս, ի լսակէ, որ է յականչս, ի հոսոտակէ, որ է ի քիմս, ի ճաշակէ, որ է ի բերանն և ի շօշափակէ, որ է ի ձեռու (Նոր. ծաղ., 4):

Տրամագոյգ - ոչ գոյզ, ընդդեմ զրկության: ՀԲԲ-ն նույն բառն ունի «զուգահեռական» իմաստով: Տրամագոյգ - անգոյզ, հակագոյզ, անհանգետ, այսինքն՝ ընդդեմ զրկութեան և հաւասարութեան (Վ. Յուն., 74):

Լուսոյմօս - գրքածվել է ոչ թե «պատուիհան, լուսամուտ», այլ՝ «լուսադեմ, լուսանալուն մոտ, առավոտ» իմաստով: «Թվին ՈՃԶԱ ապրիլի Ա օր, որ օրն է շաբաթ լուսոյմօսն Ովսէկին մօրէն ընծայեցաւ, աշխարհ Եկաւ» (ՄԺ I, 294):

Ուղղական - Եփրեմ Ղափանցու (17-րդ դ.) «Ընդդեմ երկարնակաց» ուսանավորում բառն ունի «ուղիղ ուղղադապան» իմաստը, և սոսկ համանուն է հանդէս զախս ուղղական (հոլով) բառին. «Սոյն այս կերպիւս օրինաց բան / Միշտ պարսաւեն յազգս թորգոմեան / Թէ՝ ձեր օրէնքն չէ ուղղական/Այլ է խոտան և անպիտան» (ՈՒՄՀԲ I, 569):

Վեհերեւել -ԱԲ-ում բառն ունի «վախենալ, ծուլանալ» իմաստները՝ բաղադրված զեհեր արմատից, մեր քարտազրած բնագրում գործածվում է «վեհ տեսքով երևալ՝ ներկայանալ» (վեհ+երևալ) իմաստով: Յօժանդակութեամբ սրբազն և վեհերեւեցեալ հայրապետիս ... մեր ամեներեան կնիք ունողը կնքեցաք (Դիան Նոր Զուղ.81):

Տարբերանալ - ուշ միջնադարի աղբյուրներում գործածվել է ոչ թե «տարբերակել, տարբերել», այլ «տարութերվել, թարթել» իմաստով, նույն իմաստով ՆՀԲ-ն ունի տարբերիլ բառը: Բուրաստանեացն շուշանք և ի ջուրս, որ վայելչանայ / Գին չեն մազ մի թարթիշիդ վեր ի վայր, որ տարբերանայ (ՈՒՍՀԲ I, 445):

Պատմական համանունների ներկայացված շարքը կարելի է շարունակել: Կարծում ենք՝ պետք է պատասխանել այն հարցին, թե թվայցալ լեզվական իրողություն չէ՝ արդյոք պատմական համանունությունը, արդյոք պ այն ներքնապես կապված է լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափությունների հետ, թե՝ պատահական նմանությունների արյունք է: Մանավանդ որ պատմական համանունությունը մեր ընկալմամբ վերաբերում է «ոչ թե բուն լեզվական նշանների նույնությանը և տարբերությանը (որոնց հետ գործ ունի լեզվաբանը), այլ միայն երկու կամ ավելի միավորների նույնությանը»<sup>5</sup>:

Այս հարցադրմանն ի պատասխան նշենք, որ, այս, պատմական համանունները լեզվի ոչ պարտադիր միավորներ են: Սակայն և կտրված չեն լեզվի պատմական զարգացման ընթացքից այնքանով, որքանով համանունություն կարող է ի հայտ գալ լեզվի մեջից ավելի փուլերի դիտարկման դեպքում, համանուն շարքի միավորները պարտադիր պետք է ծագած լինեն լեզվի տարբեր փուլերում: Այդպիսով՝ պատմական համանունությունը լեզվի պատմական զարգացման ու փոփոխման եթե ոչ անհրաժեշտ, ապա նույն լեզվի փոփոխություններից բխող ուղեկից լեզվական երևույթ է:

Եվ, անկախ ամեն ինչից, համանունները հայերնի բոլոր շրջաններում ոճավորման հիմանալի հնարավորություն են ստեղծել: Մի բանի օրինակ ենք ներկայացնում Պետրոս Ղափանցու լեզվառձական առումով անգնահատելի և դեռևս ոչ լիովին բացահայտված երկերից<sup>6</sup>:

Հոգիք յոգունք հոգօք հոգնին,

Վասն բանից նոր ոգելոյ,

Եւ ոչ հոգան յիոգիս իրեանց՝

Ի հոնութենէ նորոգելոյ:

\* \* \*

Յերկուց ականց մինչ արտասուր ի վայր իջեալ յորդանան,

Լինին հոգուց նոր աւազան, իսկ երկորդ Յորդանան:

\* \* \*

Բանըն բանիւ ըզբանաւրս ահացրւանէ,

Մըստաւրաց բանայ յայսնի, ահա ցուցանէ:

<sup>5</sup> А. В. Исаченко, *О грамматическом значении*, Вопросы языкоznания, N 1, 1961, стр. 29:

<sup>6</sup> Պետրոս Ղափանցի, *Բանաստեղծություններ*, Ե., 1990:

## Համառոտագրություններ

Ակոր. - Հակոբ Փափազյան, Ակոռու Ս. Հակոբ վանքի քյոթուկը, «Բանքեր Մատենադարանի», թ. 12, Ե., 1977:

Բունիած - Բունիած Սերաստացի, Գիրք բժշկութեան (ԺԷ դար), աշխատ. Դ. Ս. Կարապետյանի, Ե., 1987:

Գալ. Կենս. - Գրիգորիս Ծ. Վ. Գալէմքեարեան, Կենսագրութիւն երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու, Վիեննա, 1915:

Դաւթիծ. - Առաքել Դաւթիծեցի, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանջարյանի, Ե., 1990:

Դիան Ն. Զուղ. - Դիան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի, մասն Ս, Էջմիածնի կարողիկոսների կոնդակներ (1652-1705), աշխատասիրեց՝ Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիսս, 2003:

Դիւ. Ա.Յակ. - Դիւան Սուրբ Յակոբայ (Ա-ԺԹ), «Սինն», 1930 նոյեմբեր - 1941 յուլիս-օգոստոս:

Զ. Ազուլ. - Զաքարիա Ազուլեցու Օրագրութիւնը, Ե., 1938:

Թորդ. Տապան. - Կահրամ Յ. Թորգոմեան, Կ. Պոլսոյ հայ պատրիարքներու տապանագիրները, «Բազմավիճ», 1918:

Կամենից - Կամենից, Տարեգիր հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, աշխատ. Ղևոնդ Ալշանի, Վենետիկ, 1896:

ՄԺ I - Մանք Ժամանակագրություններ (XIII-XVIII դ.), հ. I, կազմեց՝ Վ. Ս. Հակոբյան, Ե., 1951:

ՄԺ II - Մանք Ժամանակագրություններ (XVII-XVIII դ.), հ. II, կազմեց՝ Վ. Ս. Հակոբյան, Ե., 1956:

ՍՄ 1528 - Երևանի Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր թ. 1528, 1649-1651, Թարգմանութիւն բառից ի Նահապետ ծաղկողէ, էջ 1ա-2բ:

ՍՄ 2019 - Երևանի Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր թ. 2019, 1600 թ., Հանդէս բանաստեղծաց, էջ 162բ-170ա:

ՍՄ 2281 - Երևանի Մաշտոցյան Մատենադարան, ձեռագիր թ. 2281, ԺԷ դ., Այս բառը գեղուկը, որ կարի պիտոյ է վարժասիրաց. Հանդէս բանաստեղծաց, էջ 122բ-136ա:

Յ. Կարն. - Յակոբ Կարնեցի, Տեղագիր Վերին Հայոց (յիշատակարան ԺԷ դարու), Վաղարշապատ, 1903:

Յ. Քիւրտ. - Յ. Քիւրտեան, Զուղայեցի խօջայ Նազար և իր գերդաստանը (առանց տպ. թվ. և վայրի):

Նոր ծաղ. - Նորագոյն ծաղիկ օգորութեանց, թարգմ. Յ. Կոստանդնուպոլսեցու, Վենետիկ, 1685 (ըստ ՍՄ 786 օրինակի):

ՈՒՄՀԲ I - ՈՒՀ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), աշխ.-մը Հասմիկ Սահակյանի, հ. I, Ե., 1986:

Սիմ. Լէհ. - Սիմեոն Դավիթ Լէհացոյ ՈՒղեգրութիւն, հրատ. Ներսէս Ակինեան, Վիեննա, 1936:

Վ. Յուն. - Վարդան Յունանեան, Բառարան գրքոյս:- Յովիաննէս Պոնայի Ձեռքածութիւն յերկինս, Հոռոմ, 1674:

Քեօմ. - Երեմիա Զելեպի Քեօմիրձեան, Ստամպօլոյ պատմութիւն, հրատ. Վահրամ Թորգոմեան, Վիեննա, 1913:

Poghosyan Norayr - The Display of Historical Homonymy in Armenian.- Homonymy is a kind of interrelation of linguistic units (words, particles, grammatical structures) which are identical or similar in accent and phonetic constructions, but different in meaning and origin. The issues of homonymy have examined sufficiently in Armenian. N. Parnasyan, Ed. Aghayan, A. Abrahamyan classify homonyms in different groups. Unlike lexical homonyms, we point out the historical homonyms, relying on Armenian sources from old and late Middle ages. Historical series of homonyms have originated in different stages of Armenian, which have the same form and structure, but are independent from each other and have different meanings.

For example the word «յուննշչի»- in early ashkharabar had the meaning of “verse”, but in Old Armenian dictionaries has the meaning of “natural foot size”. A number of historical examples of homonyms are brought in the article, and we came to the conclusion, that although those are the units of non-binding language, they are not cut from the process of historical development of the language.

Погосян Норайр - Проявление исторический омонимии в армянском языке.- Омонимия - отношение языковых единиц (слов, форм слов, частиц, грамматических конструкций), схожих фонетическим составом и произношением и отличающихся значением и происхождением. Вопросы омонимии в арменистике подробно рассмотрены и изложены в теоретических исследованиях.

В древнеармянских и средневековых источниках можно найти разнообразные слова, которые имеют тот же состав, но отличаются по смыслу и происхождению. Возникшие в разные периоды развития языка эти лексические единицы имеют одинаковую форму и структуру независимо друг от друга. Мы называем их историческими омонимами. В статье представляются типы и примеры исследуемых единиц.

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔԸ ՈՐԻԵՍ ԶԱՎԵՇՏԻ ԱՌԱՋԱՑՄԱՆԸ  
ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ  
ՄԱՄՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ ԶՎԱՐՃԱԽԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարձախոսություններում զավեշտի հենք են դառնում նաև ժողովրդական պատկերավորության տարատեսակ միջոցները, մասնավորապես կայուն բառակապակցությամբ և առած-ասացվածքներով արտահայտված դարձվածքները: Բավկական մեծ քանակ կազմող նմանատիպ կառուցներով երգիծական ստեղծագործություններում փոխաբերաբար ասված խոսքը կուր ու անտարանջատելի դարձվածքները, զանազան հնարքներով են ներկայանում, շատ հաճախ բացվում՝ արտահայտած ուղիղ իմաստներով խորացնելով զավեշտը: Բերենք ասվածք հավաստող օրինակներ:

Բազմազգ խորհրդային Միության բնակչության շրջանում կիրառվող և մամուլում անվերջ շրջանառվող հայր Ստալին, ժողովուրդների հայր արտահայտությունները սփյուռքահայերի համար խորթ ու անհասկանալի էին: Հայրենադարձությանն առնչվող քաղաքական անելիութաշարում այդ նորաստեղծ ու պարտադրված դարձվածքները յուրովի են մեկնարանվում. դրանց ամբողջությամբ ընկալումը «հիմնավորվում է ավելի վաղ շրջանառվող մայրիկը լացացնել կամ մայրիկը նետել /մեկին խստորեն պատժել/ դարձվածքները ուղիղ իմաստով գործողության մեջ ներկայացնելով».

Մեր հոնուեղոր կրսեին՝ Հայր Ստալին, Հայր Ստալին, մենք չենք հասկնար՝ ի նշու աղանձ կրսեն: Բայց երբ հայրենիք Էկանք և ան մերին մայրիկները մեկի կ-մեկի կ-նետեց, ան ատեն միայն հասկցանք անոր Հայր ըլլալլ...<sup>1</sup>

Տարբերակ՝ Արտասահման եղած ժամանակ կրսեին՝ հայր Սթալին, չէ-ինք հասկնար՝ ի նշու աղանձ կրսեն: Բայց երբ Հայաստան էկանք, և ան մերին մայրիկները մեկիկ-մեկիկ լացացուց, ան ատեն հասկցանք անոր հայր ըլլալլ<sup>2</sup>:

Զվարձախոսություններից մեկում զավեշտի ստեղծման միջոց է դառնում շան տեղ չդնել /հաշվի չառնել, բանի տեղ չդնել/ դարձվածքը, որը կիրարելիս ժմխտական խոնարհմամբ արտահայտված նախադասությանը հակադարձվում է խոսակցի՝ դրական խոնարհմամբ անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը:

Ամուսինը կնոջը.

- Այ կնիկ, երևում ա՝ ինձ հեջ շան տեղ չես դնում, այ:
- Ո՞վ ասեց, շատ էլ լավ դնում եմ<sup>3</sup>:

<sup>1</sup>Վ. Ավազյան, Կիլիկիա, Ե., 1994, էջ 113:

<sup>2</sup>Ա. Ստեփանյան, 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, 2010, էջ 254:

<sup>3</sup>Գ. Բայրախ, Միամիտ մոռքեր: Լոռվա ժպիտներ, Ե., 2002, էջ 3:

Ժողովրդական ծիսակարգի հետ կապված երգիծապատճմներից մեկում էլ զավեշտի մեխր փոխաբերությամբ ասված խոսքն է ու դրանից բխած հակադրածվող պատասխանը:

Աղջիկ ուզելու նպատակով մայրաբարձից Քյավառ զնացածների՝ Մենք եկել ենք ձեր այգուց վարդ քաղելու պատկերավոր խոսքին հետևում է աղջկա հոր՝ Մեր բոստան հըմնեն կորտոլ ա անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը<sup>4</sup>:

Հարսանեկան ծիսակարգի խնամախոսության դրվագին առնչվող մեկ այլ պատումում օգտագործվում է ձեռքը խնդրել դարձվածքը: Այս դեպքում, սակայն, պատասխանը մերժողական չէ: Մաս-մաս տանելուն դեմ լինելով՝ շուկայական մեծածախ առևտրի ժամանակ կիրառվող գործարքային բառապաշարի միջոցով առաջարկվում է ամբողջությամբ՝ բիրիք տանելու տարրերակը:

Երևանից զնում են Արարան՝ աղջիկ ուզելու: Խնամոնց տուն մտնելով՝ պատկերավոր ներկայացնում են զալու նպատակը:

– Մենք եկել ենք ձեր աղջկա ձեռքը խնդրելու:

Աղջկա հերն ասում ա.

– Մեր աղջկան մենք մաս-մաս չենք տալիս, թե տանում եք, բիրիք տարեք...<sup>5</sup>

Մի բան պատմելիս երբ բառ է մոռացվում, ժողովուրդը օգտագործում է լեզվի ծերին դարձվածքը՝ ակնարկելով, թե ուր որ է, կիիշի: Հենց այս պատկերավոր արտահայտությունն էլ կիմք է հանդիսացել վանեցիների Տաճէրեն կիտցող գեղական զվարճապատումի ստեղծման:

Մի քանի ամիս Ստամբուլում եղած վանեցին վերադառնալուց հետո ընկերների մոտ պարծենում է տաճէրենի իր իմացությամբ ու թվարկում սովորած բառերը.

– Իշու անուն աղուր կասեն, // Քուրկէ անուն՝ ասպատուր, // Կոռ էրկրթին չալից կասեն, // Խավու ճիտուն փիլից կասեն...

Սրանք թվարկելուց հետո կարլամած մի պահ կանգ է առնամ ու դարձվածքով արտահայտելով իրավիճակը՝ ասում է. ... Պամ էլ կա՝ վեր լեզվիս ծերին, չեմ կանա իսանե: Խա, բյարին կասեն փոխի:

Խաչ խոսք, դարձվածքին հաջորդած բառն է ունկնդրին պարտադրում, որ ուղիղ իմաստով ընկալվի բառակապակցությունը և զավեշտալի իրավիճակի մեջ զցի արտաքրողին:

Անհաջորդություն և անհանրությունականություն արտահայտող իրար միս ուստեղ դարձվածքը դառնում է երկխոսական զվարճախոսություններից մեկի հենքը: Զուտ հայկական ճաշատեսակները նշելու առաջին հայացքից անմեղ թվացող հարցին հետևում է իր խոկ հարց առաջադրողի անսպասելի ծիծաղ առաջացնող պատասխանը՝ արտահայտված ժողովրդական պատկե-

<sup>4</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>5</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>6</sup> Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Ե., 2006, էջ 157:

բավոր խտացումով: Անտարանջատելի դարձվածքի տարանջատմամբ շեշտվում և սպանիչ ծաղրով քննադատվում է իրար նախանձելու, իրար զնահատելու, իրար տակը փորելու մեր ազգային խոտելի բնավորությունը.

– Զուտ հայկական ի ՞նչ ճաշատեսակ զիտեք:

– .... Տոլմա, խորոված...

– Ոչ, իրար միս ուտել...<sup>7</sup>

Ի դեպ, այս զվարձախտության տարբերակներից մեկին հանդիպում ենք նաև հայագետ Հակոբ Չոլաքյանի անեկդոտների ժողովածուում՝ սակայն տեղայնացված որոշակի միջավայրում. Ուրֆացիները միս շատ կ ուտեն, իսկ երբ միս չըլլայ իրարու միս կ ուտեն...<sup>8</sup>

Զվարձախտություններից մեկում հարադրավոր բայով կազմված է-փող-թափող (ամեն ինչ անող, աշխատասեր) դարձվածքը մասնատվում է և ուղիղ իմաստով ընկալվելով՝ զավեշտ է առաջացնում դրական բնութագրումը հանգեցնելով բացասականի.

Գերմ են Ռուրենի ահշրկան ուգելու: Տղի հերք հարցնըմ ա.

– Ռուրեն դայի, ահշիկը էկել-թափել զիդի:

– Այսուա, ո՞նց չգիդի. էկել էլ զիդի, թափել էլ: /Տարբ.՝ – Տո էկեմ էլ ա, թափմ էլ/<sup>9</sup>:

Հայկական անեկդոտ-զվարձախտությունների համատեքստում քիչ չեն նաև ժարգոնային դարձվածքները: Իրան դոդերի բախչեն զցել, էլ քեզ մի զցի դոդերի բախչեն, իրան էյի զցեց դոդերի բախչեն դարձվածքը նշանակում է «փրեն շիմացողի տեղը դնել, չըմետ ձևանալ»: Ծիծառ առաջացնելու համար այն զվարձախտության մեջ ուղիղ ընկալմամբ տեղայնացվում է՝ ըստ համապատասխան մականվան. Արարանցին իրան զցըմ և դոդի բախչեն, այսրանը /իմա՝ պահակախումբը/ բռնըմ տփիմ ա.<sup>10</sup>

Յար բռնէլ ժարգոնային արտահայտության մեջ յար-ը հարադիր բայկան կառույցում երեխայի կողմից ընկալվում է որպես ձկնատեսակ: Նման եզրակացության հանգեցնողը, անշուշտ, թե գործողության վայրը՝ ծովն է, թե՝ փլխարերաբար արտահայտված խոսքի ուղղակի ընկալումը.

Ընկեր Մարգոն հարցնում ա.

– Երեխանն ը, ի ՞նչ ձկնատեսակներ զիտեք:

Դասարանցիներից մեկը ասում ա՝ իշխան, մյուսը՝ սիգ, մեկն էլ՝ սազան, Վարդանիկն ասում ա՝ յար:

– Վարդանիկ՝ ք, բայ յար-ը ձկան տեսակ է?

– Հըբը ի ՞նչ է, ընկեր Մարգո. մի օր պարայիս ընգերը մեր տանն ըսավ՝ էս ամառ չես զս զնանք ծովափ յար բռնէնք<sup>11</sup>:

<sup>7</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>8</sup> Միջ-զաւառական անեքրթուներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 79:

<sup>9</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>10</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>11</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

*Տանձին չի /անտարբեր, անարձազանք է/ ժարգոնային արտահայտությունը մեր գրառած զվարձապատումային կառուցներից մեկում ինքնատիփ լուծում է ստացել: Այստեղ արդեն ոչ թե դարձվածքի ուղիղ իմաստով ընկալումն է դարձել անսպասելի ծիծառի դրսնորման միջոցը, այլ իրադրության մակրամասն նկարագրությունն ու դրանից բխած դարձվածքային եզրակացություն-ամփոփումը:*

*- Տանձ բառով ո՞վ կարող է նախադասություն ասել, - հարցնում արնելի Մարգոն:*

*Վարդանիկը ձեռք արձրացնում:*

*- Վարդանիկ, ասա:*

*- Մինուս 47 աստիճան ցուրդ է, պիտա չենք կը բնա վառենք. Էդրան լոյսի փողոն ուրդի ց կրնանք տա...*

*- Վարդանիկ, չասացի տանձ բառով, - ընդհատում է ընկեր Մարգոն:*

*- Հիմի կրսեմ, ընգեր Մարգոն: Շոր չունեմ հազնելու, քեռուս շորերն եմ հազնում.*

*- Վարդանիկ, եղ քո պատմածներն ի՞նչ կապ ունեն տանձ բառի հետ, - նորից է ընդհատում Մարգոն:*

*- Ունեն, ընգեր Մարգոն, երբ չունե՞ն, էն ինչ օր ըսի, հեչ հորրս տանձին չի...<sup>12</sup>*

Ժողովրդական դարձվածքի հետաքրքիր կիրառության ենք հանդիպում մեկ այլ զվարձապատումում, որտեղ ուղիղ իմաստով կիրառությունն արտահայտվում է ոչ թե խոսքի, այլ գործողորության միջոցով: Ս. Բարդասարյան-Թափալյանի «Մշո բարբառ» -ում տեղ գտած Գեղացին ու քափրցին<sup>13</sup> նմուշը և Հ. Նազարյանի հրատարակած պատումը<sup>14</sup> անսպասելի ծիծառի ինքնատիփ դրսնորումներ են: Մածունը դեմքին շպրտելու գործողորությամբ արտահայտված զայրույթին հաջորդած հովվի խոսքը արտահայտված ձերմակերես (պարզերս) լինել դարձվածքով, նրան «փրկում է» չպատճառաբանված արդարացումներից՝ ի ավելի խորացնելով ու արտահայտիչ դարձնելով զավեշտալի իրավիճակը:

Զվարձապատումի հենք կարող է հանդիսանալ ժողովրդական դարձվածքի (ինելիք պուտուկ, ինելիք տոպարակ (Երեխա խոմ չի, ինելիք տոպարակ ա, իմա շատ ինելացի է) հեզնախառն օգտագործումը (տո ին լիք պուտուկ), ինչը ևս հանգեցնում է զավեշտի:

*- Աղջի, նրա րո յն ինչ էր, որ բերին դրին դպրոցի ուսմասկար:*

*- Ուսմասկարությունը բոյով չի, ինելիք ա:*

*- Որ ինելրով ըներ, էն ա՝ Կծու Վարոն իիմի դիրեկտոր կլներ: Ամեն անզամ մարդու հետ կրիկ անելիս Եղտն ասում ա՝ ինելիք պուտուկ<sup>15</sup>:*

*Լոռու խովածքում սուն անել դարձվածքը մի քանի նշանակություն*

<sup>12</sup> Արմեն Մարգսյանի անձնական հավաքածու:

<sup>13</sup> Ս.Բարդասարյան-Թափալյան, Մշո բարբառ, Ե., 1958, էջ 208-209:

<sup>14</sup> Անելիքուներ, աշխատասիրեց՝ Ցովի. Նազարեանց, Բարոն, հ. 1, 1876, էջ 56:

<sup>15</sup> Խ. Գյուլնազարյան, Մեր գրողի հանաքները, Ե., 1991թ., էջ 59-60 :

ունի՝ «քանտարկել, կալանել», նաև «ներս տանել» : Զվարձախտություններից մեկում այդ դարձվածքով տրված հարցին հետևող պատասխանը խոսակցի հոգու հետ խաղալու, իբր ուղիղ իմաստով ասված անհերեթ խոսքի ժխտումն ու ճիշտ գործողության հիմնավորումն է:

*Զանգահարում են.*

– *Մերզո՛, ոչխարը հանդիցը էկա՞զ:*

– *Հա՞:*

– *Տուն արի ՞ր:*

– *Չե, գուն արի<sup>16</sup>:*

Էշի տեղ դնել դարձվածքն արտահայտում է հիմարացնել իմաստը, սակայն, ի տարբերություն նախորդ կառույցների, այստեղ ոչ թե ուղիղ իմաստի կիրառությունն է զավեշտի հենքը, այլ վոխաբերաբար ասված խոսքը՝ իբրև ապացույց ներկայացվող փաստով: Գունատեսակի և տեղանվան անհամապատասխանությունն էլ դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը:

*Ապարանցիները Սպիտակի ավտորուսը կանգնեցնում են, մարդկանց իշեցնում ու սկսում ծեծելը:*

*Զարմացած ուղևորները երբ հարցնում են պատճառը, ասում են.*

– *Իսկականից մեզ էշի տեղ է՞ք դրել. կարմիր ավտորուսի վրա գրել եք սպիտակի<sup>17</sup>:*

Երգիծական մանրապատումներից մեկում չխոսկան հարսի կողմից ժողովրդական լեզվում առկա գրեհիկ դարձվածքի ակամա արտաբերումը ոչ միայն խախտում է ավանդապահության նորմերը, այլև ծիծաղելի վիճակի մեջ է գցում բոլորին:

*Հարսը շխոսկան ա ըլլըմ: Մի անգամ կեսրարի հրմա բըլուզ ա կարըմ:*

*Որ պրձնըմ ա, հաքցընըմ ա, յավ ու վատը նայըմ ա, տենըմ՝ յախէնին փշացրել ա, յավ չի նստըմ: Ըլեխին ասըմ ա.*

*Ապնին ասա՝ ամեն ինչ լավ ա էել, մենակ յախիդ միջին ք...լ եմ<sup>18</sup>...իմա օձիքը փշացրել եմ:*

Անհաշտություն արտահայտող Իմ ու քու էծը իրար հետ չեն արածում ժողովրդական դարձվածքի որոշ բառեր խոսքի մեջ ակամա կամ դիտավորյալ շուրջ տարլվ նույնպես կարող է անսպասելի ծիծաղ առաջացնել:

– *Հա, հա, ասա, ասա, ես լավ զիտեմ, որ դուն ու իմ էծը էն զլիսիցը իրար հետ չեք արածըմ<sup>19</sup>:*

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարձախտություններում քիչ չեն նաև բանարվեստի անպիսի նմուշները, որոնցում անսպասելի ծիծաղի առաջացման հենքը դարձվածքի մեկ այլ տեսակ առած-

<sup>16</sup> Ա.Արքայան, Նոյեմբերյան կատակներ, անեկուստներ, սրամնություններ, Վանաձոր, 1999, էջ 38:

<sup>17</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>18</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>19</sup> Ս.Քոչարյան, Զվարձապատումներ և իրապատումներ, Ե., 2008, էջ 54:

ասացվածքներն են :

*Աստված էլ բեթարեն ազատի ասույթը վատի և դրանից վատթարի ժողովրդական փիլիսոփայության հիմնավորումն է: Զվարճապատումներից մեկում ահա թե ինչպես է այն դրսնորվում:*

*Մեկը հարևանին պատմմի ա.*

*- Քա իմացա՞՞ ինչ էլավ:*

*- Ի՞նչ:*

*- Էքեկ մեր հարևան Վաղոն կամանդիրովկից շուտ ա տուն գալի, տենրմ ա հարևանը՝ կնքա ծոցին: Տալիս ա համ կնքանն ա սրպանրմ, համ հարևանին:*

*- Աստված էլ բեթարեն ազատի:*

*- Հա, բայց դրա էլ բեթարը ո՞ն ա, համ կնքանն ա սրպանել, համ հարևանին:*

*- Որ էրեգ չէ առաջի օրը բռնացներ, ինձ էր սրպանելու...<sup>20</sup>*

Բնավորության դրական և բացասական գծերի ժառանգական փոխանցման երևույթը ժողովուրդը խտացրել է «Պոլուղը ծառիցը հեռու չի ընգնի» իմաստախոսության մեջ: Այս առածի հիմքի վրա ստեղծված զվարճապատումում ժողովրդական ասույթի ուղիղ իմաստով ընկալումը զավեշտի առաջացման միջոց է դասնում:

*Արարանցին էշին նստած գնալիս ա ըլում, էշը տոտինգ ա տալի, արարանցուն քցում ցած: Արարանցին զլուխը վերև ա բարձրացնում, նայում էշին ու ինքնիրեն խոսում.*

*- Ժողովուրդն ինչ էլ ճիշտ ա ասում, որ պտուղը ծառիցը հեռու չի ընգնի<sup>21</sup>:*

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին առնչող բազմաթիվ անեկդոտ-զվարճախոսություններ են ստեղծվել վերջը լավ կրլա-վերջը լավ ա լինելու արտահպտության միջոցով՝ կապված կամ հայրենադարձների համար ստեղծված աննպաստ պայմանների, կամ ել ընդհանրապես սոցիալական ծանր վիճակի հետ:

*Միջեն մի ախպարի ասըմ ա.*

*- Վերջըտ վաստ ա ըլելու:*

*- Ինչու նրման բան կրսես:*

*- Հա, քեզ ասըմ եմ՝ վերջըտ վաստ ա ըլելու:*

Էս ախպարը էլ չի համիերմ ու մի հաս մըլիցի բռիսամիշըմը հասցընը ա: Մըլիցեն սըրան տանըմ ա քաղմաս: Դետը հարցընըմ ա.

*- Դու զիսէ ս՝ ինչ հանցանը ես կատարել. դու ի նչ իրավունքով ես հարլածել միլիցիայի աշխատակցին:*

*- Երբ հայրենիք կուգայինք, բոլորը մեզի կրսեին՝ վերջը լավ կրլա: Ան իրենից ի նչ կներկայացնե, որ կրսէ՝ վերջըդ վաստ կրլա: Ի նչ է, լավը ավարտ-*

<sup>20</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

<sup>21</sup> Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

վեց...<sup>22</sup>

Նյութական ծանր վիճակում ապրող ամուսինը կնոջը անընդհատ հույս էր տալիս.

– Այ կնիկ, վերջը լավ ա ըլելու, այ կտեսնես...

Մարդը մեռնում է, կնիկն ամուսնում է մի մեծահարուստի հետ ու սկսում առող-փառք ապրելը: Մի օր էլ հիշում է իր անցկացրած դարը օրերը, մահացած ամուսնու հուսադրող խոսքերն ու ինքնիրեն ասում է. «Ըղորմածրկի սիրու ինչ էլ ճիշտ էր գուշակել էր, որ լավ ա ըլելու...<sup>23</sup>

Այս արտահայտությամբ ապրած ողջ լյանքի խտացված նկարագիրը տրված է հայաստանարնակի՝ «Վերջը լավ է լինելու, դու ասա ընթացքը լավ լինի»<sup>24</sup> և հայրենադարձի գերեզմանաբարային գրություններից մեկում՝ «Լավ կրլա բսելով՝ հոս հասան»<sup>25</sup> ձևակերպումներում:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական լյանքից ունեցած բազմաթիվ դժգոհությունները ժողովուրդը արտահայտել է երգիրը երգիր չկ դարձվածքով, որով ստեղծված երգիծապատումները ևս մեծ քանակ են կազմում: Սակայն տեղին-անտեղի տրանշացողների համար նա ստեղծել է սարկազմի հասնող մի զվարճապատում, որի զավեշտի մեխր մեկ այլ դարձվածք է:

Հարսանիքի հաջորդ օրը հարսին հետ են կուղարկեն: Աղջկա հերք կուզա յնամու մոտ, կրսէ:

– Այ յնամի, ախչկաս ինչի՞ ես հետ ուղարկել:

Կրսէ՝

– Ախչիկը աղչիկ չէր:

– Պահ, պահ, պահ, մըթում թէ երգիրը երգիր է՞, օր ախչիկը էլ ախչիկ

թէրը<sup>26</sup>:

Զավեշտ է ստեղծվում նաև առածի իմաստին հակադրվելու միջոցով: Զվարճապատումներից մեկում էռնեկ -ի պատկերացման յուրօրինակ դրսորումը ներկայացվում է սեփական ընկալման շափանիշի տեսանկյունից.

– Ժողովուրդը իգուր չի ասել.«Երկու էռնեկ մի տեղ չի լինում», – փիլիսոփայում՝ հավաքվածներից մեկը:

– Ո՞նց չի ըլրմ, ըլրմ ա, – միջամտում է արարանցին:

– Ո՞նց, գոնէ մի օրինակ կարա ՞ սքերես, – հարցնում են:

– Հա, ո՞նց չէ. օրինակ՝ կնքանըս ծըծերը, – հիմնավորում է ապարանցին.<sup>27</sup>

Մեկ այլ զվարճապատումում էլ զավեշտը երկխոսությամբ և բառախառով է դրսորվում. սկզբում խոսակիցը առածի միջոցով վորձ է անում հեզնել խոսակցին, սակայն խոսակցի՝ նույն առածից բխող հիմնավոր պատասխանը

<sup>22</sup> Արմեն Մարգսյանի անձնական հավաքածու:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Արմեն Մարգսյանի անձնական հավաքածու:

<sup>27</sup> Արմեն Մարգսյանի անձնական հավաքածու:

բառախաղ սարքած, ջախջախում է հեզնողին:

*Մի օր աները փեսի հոգու հետ խաղալու համար ասում ա.*

– *Փեսա շան, լսել է ս ժողովրդի էն խոսքը, որ ասում ա՝ փեսեն անոր դռան էշն ա:*

– *Ան որ դա ձիշտ համարենք, ուրեմն դռն կը քու անոր դռան էշն ես:*

– *Բայց ես որ ամուսնացել եմ, աներ չեմ ունեցել:*

– *Ուրեմն անդեր էշ ես էլել, – ասում է փեսեն<sup>28</sup>:*

Այսպիսով, եղիծական մանրապատումների և զվարճախոսությունների ժամանակաշինության մեջ ամենահականը նրանց սեղմ կառուցվածքի մեջ անսպասելի ծիծաղի դրսուրումն է, որի ժամանակ էլ, անշուշտ, օգնության են զալիս անտարանշատելի կայուն բառակապակցությունները՝ ժողովրդական դարձվածքներն ու արած-ասացվածքները: Նմանատիպ կառուցներով հարուստ հայկական անելքոտ-զվարճախոսությունները, թեմատիկ լայն ընդգրկում ունենալով հանդերձ, ինչ-որ տեղ անհասանելի են օտարներին, քանզի դրանց բարզմանությունը շատ դեպքերում նմանվում է, պատկերավոր ասած, շուր տված գորգի:

Sargsyan Armen - The Stable-phrases and Proverbs as Base in Fun in Armenian Jokes.- The base of fun in Armenian jokes are also different of folk illustration, particularly the locutions, which are expressed by stable-phrases and proverbs. Among large quantity of such structured humorous works the metaphorically pronounced speech (solid and inseparable phrases) is presented in different tricks. They are often opened by direct meanings making deep fun. They are separated bringing positive character to negative one as well. The Armenian jokes which are based on folk locutions are mostly unreachable for foreigners, because their translation often looks like upturned carpet.

Саркисян Армен- Выраженные фразеологических оборотов в армянских анекдотах.- В армянских анекдотах основой смешного служат также разнообразные восприятия народного представления, в частности, выраженные фразеологические обороты с устойчивым словосочетанием, пословицами, поговорками. Слова в переносном значении, неотделимые фразеологизмы в большинстве юмористических произведениях представляются различными способами. Они очень часто выступают в прямом значении, выделяя смешное или устойчивое словосочетание делится, что приводит положительное описание в отрицательное.

---

<sup>28</sup> Նույն տեկում:

Մարզայան Արտեմ, Տիոյան Սուսաննա  
(Հայաստան, ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

**ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Մի շաբք տերմինահամակարգերի (կիրառական տնտեսագիտություն, իրավաբանություն, համակարգչային տեխնիկա) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հայերենը հավատարիմ է մնում դարեր առաջ իր որդեգրած ազգային սկզբունքին. այն է՝ պատճենել, փոխառել օտար տերմինները՝ ունենալով բառակազմական կաղապարների ձկուն համակարգ և տերմինաշինության լայն հնարավորություններ:

Այդ եղանակով հարստացնելով տերմինաբանության ոլորտների բառապաշարը՝ գրական հայերենն ապահովում է գիտական, տեխնիկական, մշակութային և այլ ոլորտների զարգացումը:

Հաստկապես վերջին երկու-երեք տասնամյակներում, երբ տեղի է ունենում ինֆորմացիոն – տեխնոլոգիական համակարգերի աննախադեպ առաջընթաց, նորաստեղծ ու նորիմաստ տասնյակ հազարավոր բառեր են ներթափանցում գրական հայերեն (թե՝ արևմտահայերեն և թե՝ արևելահայերեն): Այդ նորակազմությունների հարցում արևելահայերենը համեմատաբար ազատ է, իսկ արևմտահայերենն անհամեմատ թծախնդիր, որն ունի իր հիմնավոր պատճառները. վերջինս առ այսօր իր մտավորականության, գրական մշակների, մամուլի և ուսումնական հաստատություններում գործող անխոնջ անհատների ջանքերի շնորհիվ է փորձում պահպանել իր ինքնատիպությունը և ըստ հնարավորին գերծ մնալ օտարամուտ ազդեցություններից: Ուստի ցանկացած փոխառության դիմաց փորձում է գտնել բնիկ հայկական համարժեքը: ԳԱԱ Հ. Աճարյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի արտասահմանյան մասնաճյուղի անդամ Նշան Որբերյանն արտահայտել է այն տեսակետը, թե որքան անընդունելի է ծայրահեղ մաքրամոլությունը, ույնքան դատապարտելի է լեզվական անհիմն օտարամոլությունը, և միջազգային տարածում ունեցող օտար բառերի հայերեն համաժեքները պետք է միասնական լինեն և՝ արևելահայի, և արևմտահայի համար, սակայն առ այսօր կան օտար բառերի՝ արևելահայերենում դեռ չկավերացված համարժեքներ (**կալորիա** - ջերմութ, **վիտամին** - կենսանյութ, **ռեկորդ** - մրցանիշ, **ֆեյխուր** - դիմատետր, **մեսիջ** - ուղերձ կամ պատզամ, **ռոտացիա** - հերթազայում, **պարադրոս** - հարակարծություն նաև հարբմբրնում և այլն), որոնք միայն և առավելապես սփյուռքում են գործածվում: Այսինքն, արևմտահայերենում օտար տերմիններ սկզբունքորեն չեն կիրառվում:

Ն. Որբերյանը կարևորում է, ըստ հնարավորին, տերմինը մեկ բառեգրով արտահայտելը և արդեն վավերացված թարգմանությունների մեջ փոփոխություններ է առաջարկում (շեղագիր թավատառը իրենն է՝ U. S.)՝ Գլաու-

կոմա - ներերակային ձնշում = **ակնածնում**, Տրախոմա - կոպի հատիկաբորք = **կոպաբորք**, Լեյկոմիա - եղջերենու սպիաբիթ = **եղջերաբիթ**.

«Մինչդեռ լեզուն,- գրում է Ռոբեր Տեր Մերկերյանը,- չի կարող խուսափել օտար ազդեցություններից կամ փոխառություններից, այն չի կարող մեկուսանալ, կղզիանալ. ի վերջո, անխառն լեզու գոյություն չունի»<sup>1</sup>:

Ինչպես վկայեց Վերջերս (2014թ. ապրիլին) Վենետիկից Երևան ժամանած հայտնի հայագետ Լևոն Զերբյանը (ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի աշխատակիցների և ԳԱԱ նախազահության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ), իտալերենի նման հզոր լեզուն անգամ ներկայում իր լեզվակիրների խորություն ներկայանում է տասից հինգը օտար բառերով (նույնը՝ ֆրանսերենի դեպքում):

Հայտնի է, որ հասկացություն-տերմին հարացույցի հենց առաջին դիտարկման ժամանակ հիմք է ընդունվում մեկ զիտական հասկացությանը մեկ բառ սկզբունքը: Իրականում, ինչպես վերը նշվեց, գրեթե անհնար է գտնել որևէ տերմինահամակարգ, որ հասած լինի այդ սկզբունքի հարյուր տոկոսանոց արդյունավետ գործադրմանը:

Փիխառությունների և պատճենման միջոցով հասկացությունները մայրենի լեզվում ներկայացնելու եղանակին անդրադառնալիս և, մանավանդ, ծայրահեղություններից խոսափելու նպատակով՝ պետք է նշենք, որ անհրաժեշտ է տարբերել **բուն տերմինային** միավորները (գուտ տերմինները), որոնք որոշակի հասկացությունների լեզվական միավորներ են (**հայց հակընդեմ հայց ներում, համաներում քեռնում, ներքերնում գերքեռնում, շահառու և այլն անվանակարգային** (նույննկանության) բառերից (որևէ տերմինային համակարգում մանր մասերի անվանումները՝ **ֆայլ, կոռ, չիփ, բիթ** և այլն): Նման տարբերակման դեպքում ավելի կյուուրանա հայերենում լեզվի ներքին միջոցներով, լեզվի նախորդ փուլերից վերցրած բառերի վերահամաստավորմամբ տերմինային համակարգ ստեղծելը:

Երկրորդ խնդիրը՝ միտումները հստակեցնելու ձանապարհին տերմինային գուգածնություններից ձերբագասվելու հարցն է: Եթե տերմինները թարգմանաբար են անցնում հայերենին (արևելահայերենի դեպքում՝ անգլերենից ոռուերեն, ոռուերենից հայերեն՝ միջնորդաբար, իսկ արևմտահայերենի դեպքում՝ այսօր արդեն անգլերենից, ֆրանսերենից ու գերմաներենից հայերեն՝ փոխառության անմիջական ձանապարհով), գուգածնության աղյուրը հիմնականում փոխառու լեզուներն են. օրինակ՝ **control** բառը ոռուերենում ունի հետևյալ երեք համարժեքները՝ **управление, регулирование, 2. контроль,** ուստի և հայերենն էլ մեկ բարի դիմաց երեքն է կառուցում՝ 1. կառավարում, կարգավորում, 2. հսկում. control- 1. управлять, регулировать 2. контролировать. 1. կառավարել, կարգավորել 2. Հսկել:

Արևմտահայերենը նման դեպքերում, որպես կանոն, բնիկ բառ է ընտրում, և այս դեպքում հարցն այն է, թե արդյո՞ք հայերեն հոմանիշը «ծածկում

<sup>1</sup> Ողեցոյց Ա. Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարտի, 1993, էջ 4:

է» տվյալ տերմինի ամբողջական ոլորտը (Փիզիոլոգիա տերմինը թարգմանելիս արևելահայերենում գերապատվորյունը տրվել է «Փիզիոլոգիային», իսկ արևմտահայերենում՝ «Բնախոսուրյանը», որից էլ երբեմն օգտվում ենք, մինչդեռ, մեր կարծիքով, ոչ բոլոր դեպքերում է այն համարժեքորեն փոխարինում ֆիզիոլոգիային): Նույն շարքում է հանրահայտ համակարգչ-ը, որը, իր ժամանակին մերժված լինելով անզամ Տերմինաբանական կոմիտեի կողմից և «չճածկելով» կուսայցուտեր-ի հասկացական ոլորտը, լայնորեն կիրառվում է երկու գրականներում էլ. ընդ որում, մեզանում լայնորեն գործածվող թարգմանական բառարաններից մեկում<sup>2</sup> այդ բառի բառակազմական բնում բոլոր կազմությունները համակարգչ-ով են՝ **թվային համակարգիչ խոշոր համակարգիչ անհատական համակարգիչ միահարթակ համակարգիչ միաշիփ համակարգիչ** և այլն (ընդամենը 60 բառային միավոր), իսկ մյուս բառարանում<sup>3</sup> միայն կուսայցուտեր -ով՝ **կուսայցուտերային հանցագործություն, կուսայցուտերային գիտություններ** և այլն:

Ներկայում միտում է նկատվում փոխառության՝ արևմտահայերենից արևելահայերեն, բայց որում՝ մանրամասնորեն ճշգրտված տարբերակներով. օրինակ, Ն. Որբերյանը **ռեզլամենտ - աշխատակարգ** եզրի համար առաջարկում է՝ 1. **վարույթակարգ** (ժողովի), 2. **վարկելակարգ** (դիվանագիտական պահանջվող կարգ) տարբերակումը, որը մեր կարծիքով, խիստ անհրաժեշտ է:

Մեր ուսումնասիրած տերմիննահամակարգերում այդ միտումը պարզորեն գծագրվում է, և դա սկսում է փոխադարձ դառնալ:

Այդ գործնյացին մեծապես նպաստեցին Արևմտահայ աշխարհաբարի լեզվաբանական խորհրդի հրատարակած չորս «Ուղեցույցները»<sup>4</sup>, որոնք օրենքի ուժ և պարտադրելու հավակնություններ չունենալով հանդերձ ընդգրկում են՝

ա) լեզվում արդեն գոյություն ունեցող և երկու գրականներում էլ շրջանառվող տերմիններ՝ **արտանել, գերտերություն, զաղոնազերծել, ծածկաբառ, երամանաշար, ստեղնաշար, սակարկել, սեղմագիր, իրազեկիչ, նպաստառու, վիճահարույց, չարաշանում** և այլն,

բ) նշված կոմիտեի կազմած և առաջարկած նորագույն տերմիններ, որոնք արտահայտում են նոր գաղափարներ, և որոնք կարող են ընդունել կամ մերժել լեզուն կիրառողները՝ **նմանակ** (analog), **ստեղնատույիչ, հեռապատճեն, միջերեսակ** (interface), **ցուցանի, թվանշագրիչ** (scanner), **ընտրանք** և այլն:

Արևմտահայերեն այս ցանկերը արևելահայերենի բառապաշարի հարստացման առաջին և հիմնական աղբյուրներ, և քանի որ՝ ա) նույն լեզվանյութից են կերտված, բ) լեզվամտածորդական միևնույն սկզբունքներով են աշխատում, գ) բառակազմության «խնայողական» միևնույն հայեցակետերին են

<sup>2</sup> Խ. Գրիգորյան. Անգլերեն -հայերեն համակարգային եզրերի բառարան, Ե., 2004, էջ 73-75:

<sup>3</sup> Է. Ա. Ղազարյան. Ա. Ա. Ստեփանյան. Բնֆորմատիկա, Բնտերենտ, Անգլերեն -ռուսերեն -հայերեն բացատրական բառարան. Ե., 2000, էջ 34:

<sup>4</sup> Ուղեցույց Ա. Մարտել, 1993, Ուղեցույց Բ. Մարտել, 1995, Ուղեցույց Գ. Մարտել, 1998, Ուղեցույց Դ. Մարտել, 2002:

հարազատ մնում: Եթե որևէ նոր հասկացություն արտահայտելու համար արևելահայերեն բառ է անհրաժեշտ լինում, և դա արդեն կա արևմտահայերենում, այլևս չենք դիմում նորակազմությունների, այլ գործածում ենք արևմտահայերեն բառը<sup>5</sup>: Ասվածը հաստատում են **իտունակ, կարգախոս, սղաճ, սեհարեկիչ փաթեթ (օրինագծի փաթեթ), ավազանի, համայնք, հանրահավաք, մարդասիրական միջանցք, ազատ ձեռներեց, առանձնազրույց, բացախոս, բռնարարը** այլևայլ հազարավոր բառեր: Արդի արևմտահայերենը նույնակա սկսել է անհրաժեշտ եզրերը վերցնել արևելահայերենից: Այս միտքը հաստատում է նաև Անդրանիկ վլրդ. Կոռանյանը. «.....մեր (արևմտահայերենի բառարան՝ U.S.) Բառզիրքին մաս կը կազմեն նաև Հայաստանեն ծնունդ առած կարգ մը դիպուկ բառեր, ինչպէս՝ **բեռնաթափել, արտահերթ (նիստ), հեղլատարմատաք, փոխահավետ, մրցունակ, տարադրամ** եւն»<sup>6</sup>:

Լեզվական այսպիսի փոխներթափանցումները դիտվում են որպէս լեզվական փոխհարստացում, փոխհամալրում և լեզվակիրների փոխբրոնում, ուստի և տերմինարանության զարգացման յուրահատուկ միտում:

Արևմտահայերենի զարգացման և կանոնարկման գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ Հայերենի բարձրագույն խորհրդի կազմում գործի Արևմտահայերենի եզրաբանական խորհուրդը: Այդպիսով, կապահովվի մեր երկու գրական լեզուների մերձեցման գործընթացը բառապաշտի ոլորտում, որն իր հերթին կդառնա տերմինարանության զարգացման ուղղենիշ:

Sargsyan Artem, Tioyan Susanna-Tends in the Development of Terminology in the Modern Armenian Language.-In the update period of development of the language the problems of systemizing the terminology became very urgent. The utmost attitude of both branches of literal Armenian language towards this problems is being discussed in the article. Both branches use wide opportunity of termin building in Armenian language.

The process of the translation of borrowed terms is direct in western branch and indirect in eastern branch. Term translation process is greatly based on eastern branch which makes the process of two branches becoming closer to each other easier.

Саркисян Артем, Тиоян Сусанна- Тенденции развития терминологии современного армянского языка.- Проблема систематизации терминологии весьма актуальна на современном этапе развития языка. Ее решение будет способствовать процессу сближения лексических систем двух вариантов литературного армянского языка, поскольку они оба имеют широкие возможности терминообразования.

Перевод заимствованных терминов в западноармянском носит прямой, а в восточноармянском – опосредственный характер.

Процесс перевода терминов в основном базируется на западноармянском языке, который и обеспечивает сближение двух литературных языков.

<sup>5</sup> Ուղեցոյց գ, էջ 64:

<sup>6</sup> Անդրանիկ վլրդ. Կոռանյան. Բառզիրք հայերեն լեզուի, Պեյրութ, 1998, էջ 8:

## ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Սույն հոդվածի նպատակը գուտ գործնական է: Ուզում եմ առիթն օգտագործել՝ բարձրաձայնելու իմ և շատ շատերի մտահոգությունները ներկայում ՀՀ-ում լրատվամիջոցների, հեռուստաեթերի ու համացանցի լեզվում և մանավանդ պատասխանատու անձանց ելույթներում տեղ գտած բազմաթիվ, մերմ ասած, անկանոնությունների մասին: Ուշադրությունս սևեռլելու է ոչ թե բառերի ու բառաձևերի անկանոն օգտագործման, այլ լեզվական միավորները կապակցելու եղանակների մեջ տեղ գտած մի շարք թերացումների վրա: Եվ քանի որ իմ նկատի առած թերացումների հիմքը խնդրառության կանոնների զանցառությունն է, տեղին է անդրադառնալ խնդրառության մի քանի հարցերի:

Նշեմ, որ «խնդրառություն» եզրույթը բայերի նկատմամբ օգտագործում եմ որոշ վերապահումով, քանի որ այդ եզրույթը միայն մասնակիորեն է արտացոլում քննարկվող լեզվական երևույթի եւրիունը: Որքան էլ որ այսօր «խնդրառություն» բառը շարունակում է պայմանականորեն օգտագործվել որպես «արժութայնության»<sup>1</sup> համանուն, այս հոդվածում այն դիտվելու է որպես բայի արժութայնության դրսերումներից մեկը:

Մինչև անցյալ դարի 70-ական թվականները հայ լեզվագիտական գրականության մեջ կատարվել է մեծ աշխատանք բայերի ամենատարբեր խնդրառությունները՝ հոլովանումները, կապառումներն ու պարագառառումները ուսումնասիրելու ուղղությամբ: Սակայն այդ գրականության մեջ խնդրառությունը, որը կրոշվել է նաև «կառավարում» և «կառավարություն», դիտարկվել է շարույթի և ոչ նախադասության սահմաններում: Լեզվաբանները անտեսել են նախադասության ենթական, որը նույնպես բայի կողմից պահանջվող նախադասության անդամ է և հաճախ բայի միակ լրացումը: Գ. Զահուկյանը հայ լեզվագիտության մեջ առաջինն էր, որ Լ. Տենիերի մշակած արժութայնության տեսության համատեքստում մանրակրկիտ քննարկել է արևելահայերենի բայերի արժութայնությունը և դասակարգում ըստ նրանց արժույթի: Ըստ բայի հետ կապվող միավորների բնույթի՝ Գ. Զահուկյանը տարբերակում է արժույթի հետևյալ դրսերումները. ա/ ենթակառություն, բ/ ստորոգառություն, գ/ խնդրառություն, դ/ պարագառառություն<sup>2</sup>:

Այսօր արդեն բոլորի կողմից ընդունված է արժութայնության տեսության դրսույթը, որ բայ՝ որպես նախադասության միջուկ կամ նրա գլխավոր դերակատար, կանխտրոշում է ոչ միայն որոշակի շարույթի, այլև ամբողջ նախադասության կառուցվածքը: Նախադասության մեջ հանդես գալով՝ բայն իր

<sup>1</sup> L. Tesnières, *Éléments de syntaxe structurale*, Paris, 1959:

<sup>2</sup> Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974 թ., էջ 461-491:

շրջապատում ստեղծում է թափուր տեղեր, որոնք պետք է զբաղեցվեն, որպեսզի նախադասությունը ավարտուն լինի, ըստ որում՝ դա ենթադրում է որոշակի քերականական ձևավորում, որը հատուկ է ամեն մի լեզվի: Հայտնի է, որ ըստ նախադասության մեջ ստեղծված թափուր տեղերի քանակի՝ տարբերվում են զրո արժույթով («անարժույթ»), մենարժույթ, երկարժույթ, եռարժույթ և երբեմն նույնիսկ քառարժույթ բայեր: Դրան համապատասխան՝ լեզվից լեզու փոխվում են բառերի կապակցման եղանակները, և չկա երկու միևնույն արժույթայնություններն ունեցող լեզու:

Տեղիերի արժութայնության տեսության յուրացումով 60-ականներից սկսած՝ աշխարհում փոխվեցին մոտեցումները: Արժութային տեսությունը լայն կիրառում ստացավ ոչ միայն օտար և մայրենի լեզուների դասավանդման, այլև մանավանդ բառարանագրության մեջ: Տարբեր լեզուների համար ստեղծվեցին և մինչ օրս էլ շարունակում են ստեղծվել բայերի արժութային բառարաններ, որոնք մանրակրկիտ տեղեկություն են տալիս բայերի արժույթների և այլ բառերի հետ նրանց կապակցելիության մասին:

Ցավոք, և՝ Գ. Զահուլյանի, և՝ մյուս հայ լեզվաբանների արժեքավոր ուսումնասիրությունները չեն ունեցել իրենց գործնական կիրառումը: Բավական է մի հայաց նետել մեր լեզվում բայերի արժույթների իրացման այսօրվա եղանակներին, և կիամոզվենք, թե որքան ետ է մնացել մեր կիրառական լեզվաբանությունը: Բայերի արժույթների մասին տեսական լեզվաբանության հարուստ տվյալները չեն դրվել արժույթի վերաբերյալ գեթ մեկ տեղեկատվական ձեռնարկի կամ բառարանի հիմքում: Այդ պակասն զգայի և արևելահայերենի, և՝ էլ արևմտահայերենի դեպքում: Դա անշուշտ պատիվ չի քերում հայերի՝ որպես հայտնի բառարանագիրների: Բայերի արժութայնության վերաբերյալ մեր լեզվաբանների հոկյայական աշխատանքը հարկին չի արտացոլվում նաև հայոց լեզվի դպրոցական կամ բուհական մեր դասագրքերում: Իսկ այդ ամենի հետևանքը: Արժութայնության անկիտությունից բխող սխալներն են, որոնցով աղավաղվում է այսօր մեր հանրության կենդանի խոսքն ու մասմուլը: Սառու անդրադառնալու ենք այդ սխալներից երկու տիպի (I և II):<sup>3</sup>

I. Ինչպես հայտնի է, հայերենի անորոշ դերբայր չի մասնակցում բայերի խոնարհման համակարգին և հետևապես շունի դիմավոր ձևեր, սակայն իր ուղիղ կամ անփոփոխ ձևով հանդես է զալիս եղանակավորող բայերի (ուզենալ, կարողանալ, սկսել և ալլն) դիմավոր ձևերի հետ (Ուզում եմ/կարող [անում] եմ/սկսում եմ զզալ/ուեսնել/սկզ և այլն): Այս դեպքում անորոշ դերբայր բաղադրյալ ստորոգյալի մաս է կազմում, և այն չի կարելի դիտել որպես խնդիր:<sup>4</sup> Որպես ստորոգյալի բաղադրիչ՝ անորոշ պատասխանում է «ի՞նչ անել» հարցին:

Հայտնի է նաև, որ ի տարբերություն մեզ ծանոթ լեզուների՝ հայերենի անորոշ դերբայր հոլովվում է: Այն հետևում է -ու հոլովման և ունի եզակի թվի

<sup>3</sup>Տեղի սղության պատճառով սխալներ պարունակող օրինակների աղբյուրները չեն բերվելու:

<sup>4</sup> Ա.Գ. Արքահամյան և այլք, Հայոց լեզու, 2-րդ մաս, Ե., 1975, էջ 221:

երկու հարացույց՝ անորոշ և որոշյալ առումով օգտագործվելու համար: Այս առանձնահատկությունները հայերենի անորոշ դերբային տալիս են նախադասության մեջ իրացվելու մեծ ձկունություն: Հայերենի ոչ բոլոր բայերն ունեն անորոշ դերբայ, և դա կախված է բայերի իմաստային առանձնահատկություններից: Այդ նկատի ունենալով է, որ Գ. Զահոնյանը ինդրառության մի դրսնորումը համարում է անցողականություն-անանցողականությունը, այսինքն՝ ուղիղ ինդիք ստանալը կամ չստանալը, իսկ մի այլ դրսնորում՝ դերբայառությունը, այսինքն՝ անորոշ դերբայ ստանալը կամ չստանալը<sup>5</sup>:

Հայերենում կան երկարժույթ բայեր, որոնց արժութայնության մաս է կազմում դերբայառությունը: Օրինակ՝ հրամայում Ե/ ստիպում Ե/ հորդորում է գնալ: Այստեղ հայցական հոլովով դրված անորոշ դերբայը նախադասության մեջ կատարում է ուղիղ ինդիք դեր: Կան նաև բայեր, որոնք պարտադրում են տարբեր հոլովներով ձևավորված անուղղակի ինդիքներ. օրինակ՝ գործիականով՝ բավարարվում է բարեկոյ, բացառականով՝ հրաժարվում է գնալուց և այլն: Շատ ավելի մեծ է սեռական/տրական պահանջող բայերի քանակը. օրինակ՝ պատրաստվում է հեռանալու, (դերբայի անորոշ առումով), սպասում է նրա զալուն (դերբայի որոշյալ առումով): Տրականի իրենց մշտական ինդրառությամբ աջի են ընկնում որպես ստորովյալ գործող ածական+հանգույց և գոյական+բայ եղանակավորող կապակցությունները. օրինակ՝ ունակ է դիմադրելու, հնարավորություն ունի աշխատելու և այլն:

Իսկ ինչպիսի հոլովաճերով է ներկայանում անորոշ դերբայը մեր այսօրվա մասմուլու: Ցավոք, չկա որևէ հետևողականություն, և տարբեր տեղերում նույն ստորոգայից հետո պատահում են անորոշի և՝ ուղիղ, և թեր ձևերը, բայտ որում նկատելի է որոշակի համահարթեցման միտում՝ անորոշ դերբայի ուղիղ ձևերի օգտին: Եվ այսպես հրաժարվում Ե/ դադարում Ե/ խուսափում Ե/ ի վիճակի Ե/չԵ/ նպատակ ունի/չունի գնալ/զալ/սկսել և այլն: Տեղի է ունենում համատարած համահարթեցում, որի մեջ այլևս չեն տարբերակվում տիպարային ու կերպային նրբություններ: Ահա թե է գորում Գ. Զահոնյանը. «Անորոշի հետ գործածվող բայերը հարաբերակից են եղանակային և կերպային իմաստ ունեցող ածականներին՝ տիպարային և կերպային տարբերությամբ՝ պատրաստ եմ գրելու – պատրաստվում եմ գրելու, պարտավոր եմ գրել – պարտավորվում եմ գրել և այլն»<sup>6</sup>:

Ումանք կարող են առարկել՝ անորոշի շթերված ձևերի այսպիսի լայն տարածման մեջ տեսնելով հայոց լեզվի զարգացման մի նոր փուլ: Անորոշի այդ ոչ կանոնավոր դրսնորումներն անշուշտ ունեն իրենց պատճառները, որ կարելի է վերագրել տարբեր գործոնների, ինչպես արտակարգական (ուսւերենի ազդեցություն) և կամ ներլեզվական (հայերենում անորոշի ուղիղ ձևերի գերակշռություն): Եվ թեև դժվար է ասել, թե ապագան ինչի կհանգեցնի, պարզորդ է, որ այսօր «պատրաստ եմ գնալ» տիպի նախադասությունները

<sup>5</sup> Գ. Զահոնյան, նշ. աշխ., էջ 467:

<sup>6</sup> Գ. Զահոնյան, նշ. աշխ., էջ 473:

հայոց լեզվի տրամաբանության մեջ որևէ հենարան չունեն: Այս միտքը հաստատելու կամ, ավելի ճիշտ, անորոշ դերբայի որպես խնդրի գործածության ամեն դեպքի փակերականությունը ստուգելու համար առաջարկում եմ հետևյալ քառաստիճան քննությունը:

1. անորոշին ուղղված հարցադրում.
2. անորոշի փոխարկում գոյականով.
3. անորոշի փոխարկում դերանվամբ.
4. նախադասության շարադասության շրջում:

Ստուգենք անորոշ դերբայի օրինաչափությունը հետևյալ (ա, թ և զ) նախադասություններում:

ա/ Նա հրաժարվում է ծխել: [սխալ]

Նա հրաժարվում է ծխելուց: [ճիշտ]

1. Ինչի՞ց է նա հրաժարվում:

2. Նա հրաժարվում է ծխախտից:

3. Նա հրաժարվում է դրանից:

4. Նա ծխելուց է հրաժարվում:

թ/ Երեխաները պատրաստ են գնալ: [սխալ]

Երեխաները պատրաստ են գնալու: [ճիշտ]

1. Ինչի՞ն պատրաստ երեխաները:

2. Երեխաները պատրաստ են ձմեռվան:

3. Երեխաները պատրաստ են դրան:

4. Երեխաները գնալու պատրաստ են:

զ/ Ես իրավունք ունեմ աշխատանք ստանալ: [սխալ]

Ես իրավունք ունեմ աշխատանք ստանալու: [ճիշտ]

1. Ես ինչի՞ իրավունք ունեմ:

2. Ես իրավունք ունեմ աշխատանքի:

3. Ես դրա իրավունքը ունեմ:

4. Ես աշխատանք ստանալու իրավունք ունեմ:

Ստորև բերված համարակալված օրինակները մամուլից են:

(1) Ազգային բյուրոն դադարել է գործել. (Ճիշտը՝ դադարել է գործելուց):

Հարց՝ դադարել է ինչի՞ց կամ ի նշ անելուց):

(2) ՄՊՀ-ն հրաժարվում է փոխառուցում տայ: (Ճիշտը՝ հրաժարվում է փոխառուցում տալուց Հարց՝ հրաժարվում է ինչից կամ ի նշ անելուց):

(3) Խուսափում է հարցերից, բայց չի խուսափում ինքը հարցեր տայ: (Առաջին նախադասության խուսափել բայի խնդրառությունը ճիշտ է, երկրորդում՝ սխալ: Ճիշտը՝ խուսափում է հարցեր տալուց):

Անորոշ դերբայի՝ որպես խնդրի սխալ ձևերը մեր մամուլում շատ ավելի տարածված են ածական+հանգույց (պատրաստ/իրավասու/ունակ/ընդունակ/ի գորու/ի վիճակի լինել) և գոյական+բայ (հնարավորություն/իրավունք/ հրա-

ման/առիթ ունենալ/տալ/ստանալ) եղանակավորող կապակցություններից հետո: Օրինակ՝ պատրաստ է գնալ, ի վիճակի չէ խոսել, իրավունք ունի ասել, հրաման ունի աշխատել և այլն: Այսպես, օրինակ՝

(4) Հրաման ունեինք ամեն ինչ անխտիր բռնագրավել: (Ճիշտը՝ ամեն ինչ բռնագրավելու: Հարց՝ ի ՞նչի կամ ի ՞նչ անելու հրաման ունեինք):

(5) Նրանք ընդունակ են զրադշի արվեստներով (Ճիշտը՝ ընդունակ են զրադշի արվեստներով: Հարց՝ ի ՞նչի են ընդունակ կամ ընդունակ են ի ՞նչ անելու):

(6) Չեմ կարծում, որ որևից հասարակական կազմակերպություն ի գորու է սեայ իրել Հայաստանի և Ռուսաստանի միջև: (Ճիշտը՝ ի գորու է սեայ իրելու: Հարց՝ ի գորու է ինչի կամ ի ՞նչ անելու):

(7) Հոնկոնգում դավաճանված կինք իրավունք ունի սպանել իր ամուսնուն (Ճիշտը՝ իրավունք ունի սպանելու: Հարց՝ ինչի՞ կամ ի ՞նչ անելու իրավունք ունի):

(8) Դպրոցական այդ համակարգը հնարավորություն կտա երեխային դրսերվել: (Ճիշտը՝ դրսերվելու: Հարց՝ հնարավորություն կտա ինչի՞ կամ ի ՞նչ անելու):

Մի քանի պարզորշ է. քանի դեռ մեր լեզվում գործում են նախորդ էջի քառասուհան քննության հիմքում ընկած հայերենի քերականական օրենքները, (1)-ից (8)-ի տակ քերված նախադասությունները պետք է սխալ համարել:

II. Մեր օրերի և մասուլում, և առօրյա խոսքում կարծես թե նախասփր-փած բառերից մեկն է դարձել **որպեսզի** գրական հայերենի ստորադասական բնույթի նպատակի շաղկապը: Հայտնի է ասացվածքը, որի մեջ այդ շաղկապն օգտագործվում է երկու անգամ. «Ուտում ենք, որպեսզի ապրենք. չենք ապ-րում, որպեսզի ուտենք»: **Որպեսզի**-ն պատասխանում է «ի ՞նչ նպատակով», «ինչո՞ւ» կամ «ինչի համար» հարցերին: Այսօր այդ շաղկապի հաճախականությունը մեր առօրյայում անհամաշափորեն ավելացել է և մեծ մասամբ աչքի է ընկնում հայերենի համար անհարկի կիրառումով: Կարծես լեզվի մակարույժի դեր ստանձնած այդ շաղկապը հանդես է զայխ հետևյալ տեղերում.

1. Եղանակավորող (գոյական+հանգույց) միարիմի նախադասություններից հետո, որոնք արտահայտում են ցանկություն, նախրնտրություն, նպատակ: *Իմ երազն է, Մեր իդան է* և այլ նման կապակցությունները միարժույթ են և նրանց ենթակայի տեղը կարող իրացվել որ շաղկապով սկսվող ենթակա երկրորդական նախադասություններով: Տարածված ոչ ճիշտ ձևեր են Մեր երազն է, որպեսզի ..., Մեր իդան է, որպեսզի ... և այլն: Այսպես օրինակ՝

(9) Իմ ցանկությունն է, որպեսզի մեր աշխատանքը հաջողվի: (Ճիշտը՝ Իմ ցանկությունն է, որ ... Հարց՝ ի ՞նչը/ո՞ն է իմ ցանկությունը):

(10) Մեր նպատակն է, որպեսզի ՀՀ քաղաքացիները կարողանան Աևանում հանգստանալ: (Ճիշտը՝ Մեր նպատակն է, որ ... Հարց՝ ի ՞նչը/ո՞ն է մեր նպատակը):

(11) Մեր երազանքն է, որպեսզի բոլորը վերադառնան և փոխեն Հայաստանը: (Ճիշտը՝ Մեր երազանքն է, որ ... Հարց՝ ի ՞նչը/ո՞ն է մեր երազանքը):

2. Եղանակավորող՝ ցանկություն, կամք, պահանջ արտահայտող երկարժույթ բայերից (*ուզենալ, երազել, առաջարկել և այլն*) հետո, որոնց թափուր խնդրի տեղը կարող է լրացվել խնդրի երկրորդական նախադասություններով: Մեր օրերում շատ հաճախ այդ երկրորդական նախադասությունների սկզբում որ-ի փոխարեն կարդում կամ լսում ենք **որպեսզի**:

(12) **Մենք ցանկանում ենք, որպեսզի նման հավաքները պարզապես իրենց շարունակությունն ունենան:** (Ճիշտը՝ .... ցանկանում ենք, որ ... Հարց՝ ի՞նչ ենք ցանկանում):

(13) Ուզում եմ, **որպեսզի** դա տեղի ունենա խաղաղ ձանապարհով: (Ճիշտը՝ ուզում եմ, որ ... Հարց՝ ի՞նչ եմ ուզում):

(14) Առաջարկում ենք, **որպեսզի** տվյալ հարցը քննարկվի: (Ճիշտը՝ Առաջարկում ենք, որ ... Հարց՝ ի՞նչ ենք առաջարկում):

3. Միաժիմի (ածական+հանգույց) եղանակավորող կապակցություններից հետո՝ որոնք արտահայտում են անհրաժեշտություն, կարելիություն, պարտավորություն. օրինակ՝ **կարևոր է, անհրաժեշտ է, պարտադիր է, հնարավոր է** և այլն: Այս կապակցությունները միարժույթ են և կարող են ստանալ ենթակա երկրորդական նախադասություններ: Այստեղ ևս տարածված սխալներից է՝ երկրորդական նախադասության սկզբում որ-ի փոխարեն օգտագործել **որպեսզի** շաղկապը: Այսպէս՝

(15) ՀՀ-ի համար կարևոր է, **որպեսզի** ՆԱՏՕ-ն եւ Ռուսաստանը «պահպաննեն երկխոսության խողովակը» (Ճիշտը՝ կարևոր է, որ ... Հարց՝ ի՞նչն է կարևոր):

(16) Պարտադիր է, **որպեսզի** համաժամանակյա թարգմանություն ապահովվի: (Ճիշտը՝ պարտադիր է, որ ... Հարց՝ ի՞նչն է պարտադիր):

(17) Չպետք է թույլ տալ, **որպեսզի** այդ մարդիկ շարունակեն վերահսկել այր հարաբերությունները: (Ճիշտը՝ Չպետք է թույլ տալ, որ ... Հարց՝ ի՞նչը չպետք է թույլ տալ):

(18) Շատ կարեւոր է, **որպեսզի** այդ օրենքը կյանքի կոչվի, բայց պետք է շատ զգույշ լինենք մեր հայտարարություններում, **որպեսզի** չհանգարենք, չնեղացնենք որեւէ կողմի:

Վերևում (18)-ի տակ բերված օրինակում **որպեսզի** շաղկապը հանդես է գալիս երկու անգամ: Առաջին գործածությունը սիալ է (Ճիշտը՝ կարևոր է, որ ... Հարց՝ ի՞նչն է կարևոր), իսկ երկրորդը՝ ճիշտ: (Հարց՝ ի՞նչ նպատակով/կամ ինչո՞ւ պետք է զգույշ լինենք):

Հարց է ծագում՝ ինչո՞ւ կարելի է բացատրել այս՝ մանավանդ վերջին մեկ-երկու տասնամյակներում տարածում գտած **որպեսզի** շաղկապի անհարկի գործածությունը: Դրա պատասխանը միայն մեկն է՝ ոուսաց լեզվի ազդեցությունը: Փորձենք ոուսերեն թարգմանել (9)-(18)-ից 10 նախադասությունների ճիշտ տարբերակները, և ամենուրեք կհայտնվի ոուսերենի համար օրինական պահանջմանը: Օճեգովի «Ռուսաց լեզվի բառարան»-ում նշվում է, որ պահանջմանը ոուսերենում, բացի նպատակի շաղկապ լինելուց, զիսա-

վոր նախադասությանն է կցում երկրորդական նախադասություններ, որոնք արտահայտում են ցանկալին, պարտադիրը, թույլատրելին, հնարավորը<sup>7</sup>:

Եվ այսպէս ոռուերենի քերականական կանոնները թույլ են տալիս երկրորդաբար օգտագործել շուրջ շաղկապը ենթակա և խնդիր երկրորդական նախադասությունների սկզբում և ասել.

(19) Наша цель, чтобы все дети воспитывались в семьях.

(20) Необходимо, чтобы вся система работала.

(21) Он хочет, чтобы операция была оплачена из своих средств.

Ուրեմն և համոզվեցինք, որ հայերենի համար ենթակա և խնդիր երկրորդական նախադասությունների սկզբում **որպեսզի** նպատակի շաղկապի օգտագործումը օտարամուծություն է և հայերենի համար ընդունելի չէ:

Համոզանշական է, որ **շուրջ** շաղկապով Ալվանը (19), (20) և (21) տիպի երկրորդական նախադասությունների համար ոռուերենի հարցադրումը նույնն է, ինչ որ հայերենինք, և դա պատահական չէ, քանի որ երկրորդական նախադասությունների գրիճառույթները նույնն են.

(22) Он хочет, чтобы я совершил чудеса. Что он хочет?

Նա ուզում է, որ ես հրաշքներ գործեմ:Ի՞նչ է նա ուզում:

Մեր լեզվում ներկայումս տարածված արժութային բնույթի սիալների այս երկու տիպերի թեկուց նախնական քննարկումը ցույց է տալիս, որ (1)-(18)-ի կիրառումներն անընդունելի են, քանի որ հակասում են հայոց լեզվի քերականական օրենքներին:

Կա նաև մեկ այլ մտահոգություն: Սիալների այս անսանձ տարածումը ավելի է խորացնում այն անջրպետք, որ առանց այն էլ գոյություն ունի մեր լեզվի երկու ճյուղերի՝ արևելահայերենի ու արևմտահայերենի միջև լեզվական որոշ մակարդակներում: Այս անզամ կարծես հերթը հասել է շարադրությանը և մասնավորաբար բառերի ու նախադասությունների կապակցման այնպիսի տիպերին, որոնց դրսուրումներն այդ երկու ճյուղերում դեռևս ամենամոտիկ անցյալը մեր հետևողականորեն համընկնում էին:

Առհասարակ, այն կարծիքին եմ, որ գրական լեզրւն պատշաճ մակարդակի վրա պահելու համար հարկ է գիտակցել ոչ միայն այն լավ ուսումնասիրելու, այլ նաև արտաքին ազդեցությունների խաթարումներից պաշտպանելու անհրաժեշտությունը: Չմոռանանք, որ ժողովրդի հնքնությունն ապահովող ազգային արժեքներից առաջինը մայրենի լեզուն է: Ուստի մեր լեզուն գիտականորեն զննելու կարողություն ունեցող մարդիկ կամա թե ակամա պէտք է ստանձնեն նաև լեզվի պահապանների պատվարեր դերը: Պետք է ամեն գնով փրկել իրավիճակը՝ օգտագործելով դասական և արդի հայ քերականների՝ հարցի վերաբերյալ կուտակված մշակումները, ինչպես նաև հայ մեծ գրողների գրականությունը: Հարկ է տեսական հարուստ նյութերի հիման վրա զարգացնել կիրառական լեզվաբանությանը՝ ստեղծելով արժութայնության

<sup>7</sup> С.И. Ожегов, Словарь русского языка, М., 1961, № 872:

արդիական բառարաններ և տեղեկատվական ձեռնարկներ՝ նկատի ունենալով թե՝ դպրոցականներին, թե՝ լայն հանրությանը:

Sakayan Dora - On some questions of case government.-This paper is practice-oriented. It focuses on two types of case government errors widely spread in the present-day Armenian press: I. Incorrect use of the Armenian infinitive in subject and object position; II. Incorrect use of the subordinating conjunction *որպէսով* in subject and object clauses.

To verify whether forms discussed under type I are supported by Armenian grammar, the author offers her own tried-and-true method, which is a four-step test:

1. Asking a question to the infinitive
2. Substituting the infinitive by a noun
3. Substituting the infinitive by a pronoun
4. Changing the word order in the sentence

Based on linguistic data, the author proves that the incorrect forms discussed under type II are influenced by extra-linguistic factors.

Сакаян Дора - О некоторых вопросах управления.- Предлагаемая статья имеет практический характер. В ней рассматриваются два типа ошибок в управлении глаголов, широко распространенных в современных средствах массовой информации Армении: I. Неправильное употребление армянского инфинитива в позиции подлежащего и дополнения; II. Неправильное употребление подчинительного союза *որպէսով* в подлежащих и дополнительных придаточных предложениях.

Для проверки грамматической корректности сомнительных случаев типа I, автор предлагает свой опробованный метод, который включает в себе четырехэтапный тест:

1. Постановка вопроса к инфинитиву
2. Замена инфинитива существительным
3. Замена инфинитива местоимением
4. Изменение порядка слов в предложении

Основываясь на языковых фактах, автор доказывает, что ошибки типа II являются влиянием внеязыковых факторов.

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆԵՐՈՎ  
ԿԱԶՄՎԱԾ ՎՐԿԱՎՈՐ ԲԱՑԵՐԸ

Կրկնությունը հին և շատ տարածված բառակազմական եղանակ է:  
Հնդեվրոպական լեզվում կրկնավորների կազմության և գործառույթի, նրանց իմաստային առանձնահատկությունների վերաբերյալ հնդեվրոպաբանների տեսակետները հիմնականում միասնական են:

Կրկնության տեսակների, նրանց բառակազմական և ձևաբանական գործառույթների քննությանը մենք անդրադարձել ենք այլ հրապարակումներում (տե՛ս «Հայերենի բայակազմության մի քանի հարցեր» (ծագումնաբանական քննություն), «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 3, Ե., 1991, էջ 277-312, ինչպես նաև «Հայերենի հնդեվրոպական ծագման կրկնավոր բայերը», «Հայերենագիտական միջազգային 5-րդ գիտաժողովի նյութեր», Նյու Յորք, 1996, էջ 63-75):

Հայերենում կան այնպիսի կրկնավոր բայեր, որոնք կազմված են նույն արմատի տարրերակային ձևերից, ինչպես **աղաւալեմ-այլայեմ, ողողանալուլալ, թաթալեմ-թաթաւեմ, թառամիմ-թաթամիմ-թորշոմիմ** և այլն:

Այս հոդվածում կանդրադարձնանք արմատի տարրերակային ձևերով կազմված այն կրկնավոր բայերին, որոնք կամ և հավաստի ստուգաբանություն չունեն, կամ և դրանց վերաբերյալ հայտնվել են տարրեր կարծիքներ:

Գ. Զահուլյանը իր «Հայոց լեզվի պատմություն: Նախազրային ժամանակաշրջան» աշխատության մեջ գրում է. «Ունենալու, ստանալու և տալու, նվիրելու վերաբերյալ հայերենի ժառանգած բնիկ հնդեվրոպական ընդհանուր նշանակումները բավականաշափ հարուստ են...: Ունիմ, կալում, առնում, ստանամ, տամ, ընծայեմ, ձաւնեմ, **որոնեմ**, գտանեմ բառերը հայերենի բառապաշտի կայուն տարրերից են» (ընդգումը մերն է)<sup>1</sup>: Նույն աշխատության մեջ հնագոյն հայերենի բառային տարրերակների մեջ Գ. Զահուլյանը բերում է **որոնեմ-պոռեմ-փնտռեմ** հոմանիշները:

Որոնեմ բայի վերաբերյալ Հ. Աճառյանը որոշակի կարծիք չի հայտնում. նշում է Բուզզեի՝ բնիկ հայերեն արմատ լինելու, Հյունքարպեկենտյանի՝ փոխառյալ լինելու, կարծիքները՝ շհակվելով ոչ մեկին. այս բառի համար ենթադրում է հնիս. \*re- «հետազոտել, հարցուփորձել, հարցնել» և նշում այդ նախաձևից հայերենի ողոնել անցման հնյունական դժվարությունը<sup>2</sup>:

Գ. Զահուլյանը որոնեմ բառը կապում է հ.-ե. \*ereu-(\*oreu-) \*orou- նախաձևի հետ (ՀԼՊ, էջ 123). նա չի բերում հ.-ե. այլ լեզվուների համապատաս-

<sup>1</sup> Գ. Զահուլյան, Հայոց լեզվի պատմություն: Նախազրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ), Ե., 1987, էջ 266-267:

<sup>2</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1977, հ. 3, էջ 585:

խանությունները: Յ.Պոկոռնու բառարանում \*ereu- արմատի համար նշվում են «որոնել, հետազոտել, տեղեկանալ, հարցուվորձ անել որևէ մեկի կամ որևէ բանի մասին» իմաստները<sup>3</sup> և հնդկարպական լեզուներից բերվում են հունարենի ձևերը \*έρευμι, \*έρυμεν, ἔρε[ʃ]ω, ἔρε[ʃ]ομαι (աօլ. էրեύω), է՛րօմա (է՛րօմոմ) «հարցնել, որոնել, փնտրել», կրետ. (իին հունարենի բարբառ) էրեւուա, էրեւուա «հետազոտել, հարցնել, հետաքրքրվել որևէ մեկով, մի բանով» և իին հյուսիսային րաս «հետազոտություն, փորձ», reyna «ստուգել, հարցուվորձ անել» զուգահեռները:

Ինչ վերաբերում է մյուս երկու՝ փնտռել/փնդրել և պտռել, հոմանիշներին, դրանց մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ:

Հ. Աճաղյանը բերում է **փնտռել** կամ **փնդրել** «պահանջել, որոնել» իմաստով բայերը և գրում. «Ծագում է նախաւոր պտռել ձևից, որի վերայ տես և պտի» (ՀԱԲ, հ.4, էջ 508): **Պտի** բառահոդվածում Աճաղյանը բերում է «որոնում, փնտրուուր» իմաստները նշելով, որ այն առանձին անգործածական է և հանդիս է զայիս ինչպես **աղքապտի** բառում, այնպես էլ **պտռել** «հորդ փորփորելով պրատել» բայի մեջ. նշվում են նաև բարբառային **պտի** (Տփ.), **պրտռել** (Ղբ.), **բըրբդիլ** (Զթ.) ձևերը, և հավելում է, որ Մարաղյի բարբառում կա **պտռուել** ձևը. այս վերջինը Ձեյթունի **բըրբդիլ**-ի հետ այդ բառի կրկնական ձևերն են<sup>4</sup>:

Գ. Զահորկյանը **փն-դ-ռել**, **փն-տ-ռել** արմատների համար «պահանջել, որոնել» իմաստով բերում է զոթ. findan «գտնել, ճանաչել», իին վերին գերմ. fandōn, իին անգլ. fandian «որոնել, հետազոտել», նար վերին գերմ. fahnden «հետաստել, հետազոտել», իին սարս. fundon «ձգնել, զնալ», որոնց համար կանխադրում է հ.-ե. \*rent- «գնալ, ստիպել, գտնել» նախաձևը<sup>5</sup>: Նույն տեղում 41-րդ ծանոթագրության մեջ նա նշում է նաև **պտռել** ձևը, որի համար կանխադրում է հ.-ե. \*reū-t- \*reū-hց «հետազոտել, հայկանալ». Նույն նախաձևից է համարում ոռուերեն ис-պատ-նաւած, պատ-ած բառերը:

Պրպտէլ բառը իրը զիսաբար չկա ՀԱԲ-ում. այն գործածված է *որոնել* բառի բացատրության մեջ (ՀԱԲ, հ.3, էջ 585): Այդ բառը չկա նաև «Նոր բառզիրը հայկազեան լեզուի» բառարանում: Այստեղ բերվում են «պտռել, պրտիր/յորմէ աղքապտիր/բրել և պեղել զերկիր իրը յուգելով և որոնելով. ուստի և ոմկ. փնտռել»<sup>6</sup>:

Պտռել բառի բացատրության մեջ պրպտէլ-ը գործածված է նաև «Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի» բառարանում՝ «պրպտէլ, փնտռել հոդին»<sup>7</sup>:

<sup>3</sup> J.Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, 1-2, Bern-München, 1959-1969, p. 337.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>5</sup> Գ.Ճայակին, *Очерки по истории дописьменного периода армянского языка* (далее Очерки...), Еր., 1967, стр. 104.

<sup>6</sup> Նոր բառզիրը հայկազեան լեզուի (պյունիկ և հայութեան) բառարանում՝ պրպտէլ, փնտռել հոդին:

<sup>7</sup> Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 702:

Հ. Աճաղյանի գավառական բառարանում նշվում է պրպտել «ամէն կողմ փնտոել»:

Պտռել, պտռոսկ, պտռոսկ անել ձևերը «փնտրել, փնտրտուք, փնտրել» իմաստներով կան Ղարաբաղի բարբառում<sup>8</sup>: Պտռել, պտռոտել, պտռոցք, պտռոտել, պտռոտել ձևերը բերվում են նաև «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում<sup>10</sup>:

Ս. Մալխասյանցի բառարանում կան պտռել, պտռոցք, պտռում բառերը, իսկ պտռոտել-ը համարում է պտռել-ի «յաճախական ձևը»: Պրպտել-ը բացատրում է «մանրամասն և ուշադրութեամբ փնտռել, կրկտել, որոնել»<sup>11</sup>:

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, հայերենի բարբառներում պտռել բառը ավելի հաճախական կիրառություն է ունեցել թե՝ իբրև բայ, թե՝ իբրև գոյական:

Կարծում ենք, որ պրպտել-ը պտռոտել/պտռել բայի հնյունափոխության (դրափոխություն՝ պտռել-պտռել-պրպտել). հմմտ.սառ-սարսուր, բառ-բարբառ, տարմ-տարտալ) ենթարկված տարրերակն է (հմմտ. Հ.Աճաղյանի նշան Զեյթունի բարբառի **բըյբդի** ձևը) և նոյնպես ունի հնդեվրոպական ծագում:

Հ. Աճաղյանը կրկնության տեսակների մեջ նշում է կրկնության ժամանակ թու վերջացող արմատի թու փոփոխության հնարավորությունը, ինչպես, օրինակ, կարել-կարկատել<sup>12</sup>: Այս դեպքում ևս հնարավոր է պտռել-պտռել-պրպտել անցումը:

3. Պոկոռուու բառարանում \*pet- նախաձեի տակ բերվում է լատ. petō, petere ձևը՝ «պահանջել խնդրել, սաստիկ ցանկանալ որևէ բան, որոնել, փնտրել» իմաստներով: Լատիշերենում կա թետ-ը՝ «ցանկություն ունենալ, փնտրել, որոնել» իմաստներով<sup>13</sup>: Ալրիս Վալդեի լատիներենի ստուգաբանական բառարանում նոյնպես բերվում է լատիներեն թետ, -ēre, -ivi «հասնել որոնածին, փնտրել» իմաստներով<sup>14</sup>: Այս արմատից են լատիներենի petitor «խնդրող, հայցորդ», petitum «պահանջ, խնդրանք», petitrix, icis «կին հայցորդ»: Այստեղ տեղին է հիշել, որ գրաբարում խնդիր բառը ունեցել է «որոնում, փրն-տրոտուք, հարցուփորձ, պահանջ, աղերս, աղաչած բան» իմաստները (ՀԱԲ, հ. 2, էջ 379), իմաստներ, որոնք համահունչ են հ.-ե. այլ լեզուներում պահպանված իմաստներին:

Հետաքրքրական է, որ Կ. Բաքի՝ հնդեվրոպական լեզուների հոմանիշների բառարանում բերվում են վուլգար (ժող.) լատիներենի circare, իտալերե-

<sup>8</sup> Հ.Աճաղյան, Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Սոսկվա, 1902, էջ 934:

<sup>9</sup> Գ. Բաղդասարյան, Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան, հ. Բ, Ստեփանակերտ, 2010թ. էջ 234:

<sup>10</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ե., Ե., 2008թ., էջ 128:

<sup>11</sup> Ս.Մալխասնեց, Հայերեն բացառական բառարան, Ե., 1945, հ. 4, էջ 131:

<sup>12</sup> Հ.Աճաղյան, Լիակատար բերականություն հայոց լեզվի, Ե., 1957, հ. 3, էջ 95:

<sup>13</sup> Նշվ. աշխ., էջ 826:

<sup>14</sup> A. Walde, *Lateinisches etymologisches Wörterbuch*, Heidelberg, 1910, p.580.

նի շերտաւում «փնտրել, որոնել», cercata «փնտրութ, որոնում» իմաստներով՝ նույնպես կրկնավոր կազմությամբ՝ ր-տ համապատասխանությամբ, ինչպես հայերենում<sup>15</sup>: Այստեղ կարելի է նշել նաև ֆրանսերենի cherche ձևը՝ նույնպես կրկնավոր կազմությամբ:

Մյուս բայը, որին կանդրադառնանք ստորև, փայլելն է:

Փայլել բայը հանգում է հ.-ե. \*(s)p(h)el- նախաձեխն (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 476-477, Օչերկի..., էջ 65): Այս արմատի տարբեր ձայնավորումով տարրերակներն են փողիմ, փողփողիմ, փաղփաղիմ. փողփողեմ ձևի համար Գ. Զահուլյանը նշում է հ.-ե. \*phol-, իսկ փաղփաղիմ ձևի համար՝ \*phyl- նախաձեխ (տե՛ս ՀԼՊ, էջ 152): Նույն նախաձեխց է համարում նաև պաղ, պաղպա(ն)ց կազմված փ/պ տարբերակով: Գ. Զահուլյանը նշում է, որ հայերենում հ.-ե. \*ph-ն սովորաբար արտացոլվում է իբրև հ- և փ-, բայց կան արմատներ, որոնցում հ.-ե. \*ph-ի դիմաց առկա է պ (տե՛ս ՀԼՊ, էջ 253), և բերում է պաղ «փայլ» (պաղպանծ բառում) և պաղպա(ն)ց «փայլ, ցոլ»:

Պաղ արմատը Հ. Աճառյանի արմատական բառարանում վկայված է երեք իմաստով՝ «սառոյց, քար և փայլ, փայլին, ցոլ» (ՀԱԲ, հ. 4, էջ 12-13): Վերջին՝ «փայլ, փայլին, ցոլ» իմաստներով պաղ բարի կրկնավոր ձևն է համարում պաղպաջ, որի ածանցված ձևերից են պաղպաջել (նաև բաղրաջել), պաղպաջոն, պաղպաջուն, պաղպաջունը «զարդարուն» (ՀԱԲ, հ. 4, էջ 14-15): Փայլ «պայծառ վատիլը, շողալը, պայծառութիւն» բառահոդվածում Հ. Աճառյանը նույնպես բերում է փաղփաղիլ, փողել, փողփողել բառերը, որոնք համարում է փայլ արմատի «միւս ձևերը» (ՀԱԲ, հ. 4, էջ 476-477): Տնիկվրոպական նույն \*(s)p(h)el- նախաձեխ հայերենում արտացոլված է և փ-ով, և պ-ով: Փ-ով ձևերը ներկայացված են ձայնաբարձային առ- տարբերակներով, իսկ պ-ով (պաղ) ձևը հանդիսանում է զախսով թե արմատի պարզ կրկնությամբ, այլ վերջին բաղադային փոփոխությամբ ուղեկցվող կրկնությամբ պաղպաջ:

Պաղպաջ բարի ծագման մասին այլ կարծիք է հայտնում Է. Աղյայնը: Նա Մելրու բարբառում «1.կայծ, 2.փայլ, ցոլ» նշանակությամբ գործածվող բուլ բարի հնագույն ձևն է համարում բող-ը, որի գուգահեռն է, ըստ նրա, Ղարաբաղի բարբարի պօղ «կարմիր կրակ կտրած ածուխ» բառը: Նա գրում է. «Այս բառը ծագում է հնի. \*bhel-/ \*bhal-, \*bhəl, \*bhol/ արմատից», և բերում է սանսկրիտի bhāla «1.փայլ, 2.ձակատ» և հունարենի φαλός «փայլուն, շող-շողուն, սպիտակ» գուգահեռները<sup>16</sup>: Նա շարունակում է. «Բարբառային այս բառերը (բուլ, պօղ)... անկասկած գուգահեռ բող ձևն են ներկայացնում հին գրաբարյան պաղ արմատի, որ առանձին չի գործածվել, բայց որից ունենք պաղպանծ, պաղպանծական... և կրկնությամբ՝ պաղպաջ, պաղպաջել: ...Իմաստով պաղ արմատը և կրկնավոր պաղպաջ բառը միանգամայն համընկնում են Մելրու և Ղարաբաղի բարբառների բուլ և պող բառերին»<sup>17</sup>, և

<sup>15</sup> C.D. Buck, *Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages*, Chicago, 1949, p. 764, և Գ.Փ. Յօրեկո, *Новый болышо-италийско-русский словарь*, М., 2006, стр. 187:

<sup>16</sup> Է. Աղյայն, *Բառաբնական և սոլոզարանական հետազոտություններ*, Ե., 1974, էջ 130:

<sup>17</sup> Նշվ. աշխ., էջ 131:

գտնում, որ զրաբարյան պաղ արմատը ծագում է հնիս. \*bhel- արմատի \*bəl ձևից՝ եզրակացնելով՝ այդ բոլոր բառերը (բուք, բող, պող, պաղպաջ, փայլել, փաղփաղիմ, փողփողիմ, փայլ, փուք, փչել) հանգում են հ.-ե. \*bu, \*bhu արմատին, որ ունի «փչել» նշանակությունը<sup>18</sup>: Իհարկե, նա միանգամայն ճիշտ է, որ բուղ-ը, պօղ-ը նշանակում են «կայծ, ցոլք, կրակ կտրած ածուխ», նաև «փայլ», որ կարող են ծագել կրակը փչելով արծարծել, բորբոքել իմաստից (հմմտ. հայ. բորք (հ.-ե. \*bho-bhr-o), բրբ. բերփել, պերփել): Խոկ փողփողել, փաղփաղել, պաղպաջել բառերի համար վերականգնվում է \*sphel, \*phel նախաձեռ «փայլել» իմաստով: Կարծում ենք՝ այս արմատները իմաստային առումով դժվար է աղերսակցել «փչել» իմաստով արմատներին: Բացի այդ հ.-ե. \*sphel-, \*phel-ձևերը հ.-ե. մյուս լեզուներում ևս չունեն «փչել» իմաստին աղերսվող զուգահեռները. հ.-ե. լեզուներում առկա են հետևյալ զուգահեռները հինդկ. sphuliñga «կայծ», vi-sphuliñga- «կայծեր արձակել». ց աձականով \*sp/h/el-g-ձևից են լեթք. spuñguot «փայլել, կայծկլստալ», spuñgans, spiñgans «փայլուն», գերմ. \*flinka- «փայլել, արկայծել», նոր վերին գերմ. flunkern «փայլել, կայծկլստալ»: Հ.-ե. նախաձեռ հանդես է զալիս նաև d- աձականով՝ հուն. σπληδός «մոխիր», լատ. splendeō, Ծե «փայլել, արկայծել», հին լիտ. spéndžiu, spendēti «փայլել, արկայծել, պսպղալ, լուսավորել», հնարավոր է նաև հին իոլ. less «լույս, լուսավորություն», միոլ. lainnech «փայլուն» (տե՛ս J.Pokorny, p. 987):

Simonyan Nektar - Reduplicative Verbs of Armenian Composed by Root Variants. - The article is devoted to the investigation of two reduplicative verbs of Armenian «պրպտել» and «պաղպաջել». An attempt has been made to reveal the etymology of the verb «պրպտել». It is suggested to be considered a word of Indo-European origin composed by reduplication of the verb «պողոկ». Some problems connected with the etymology of the verb «պաղպաջել» are also being defined more accurately.

Симонян Нектар - Редупликативные глаголы армянского языка- Статья посвящена редупликативным глаголам армянского языка, образованными вариантами одного и того же корня. Исследуются глаголы *պրպտել* и *փողփողիմ, փողփողիմ, փաղփաղիմ, փողփողել*. Предлагается новая этимология глагола *պրպտել*, которому приписывается индоевропейское происхождение.

<sup>18</sup> Նույն տեղում:

## ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՒԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԹԱՐՎԱՆԱԾ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ

Լատինաբան գրաբարը նահանջի որոշ դադարներով գործածվել է 14-18-րդ դդ.<sup>1</sup>, բառային և թերականական օտար կաղապարները հաղթահարվում են Մխիթարյանների ջանքերով, իսկ արդեն Ս. Չամչյանի թերականությամբ գրաբարի լատինատիպ նկարագրությունների փուլն ավարտվում է<sup>2</sup>: Գրաբարյան բուն ձևերին անցումն սկսել է Մի. Սեբաստացին, բայց լեզուն գտելու նրա փորձը զգուշավոր էր, նախորդող թերականություններում արդեն կայունացել էին արիեստական ձևեր, և դրանց անտեսումը կարող էր հակառակություն առաջանել<sup>3</sup>, այդ ինքնուրույնությանը դեմ կլիներ նաև կաթոլիկ եկեղեցին, որ հովանավորում էր լատինաբանությունը<sup>4</sup>: Գ. Զահոնյանը նշում է այլ պատճառներ ևս. նախ որ հայտնաբերված հին ձեռագրերի քանակը բավարար չէր հավաստի ճշգրտումների համար, ապա խոչընդուռ էր թերականության ռացիոնալիստական ըմբռումը, որին հարում էր Սեբաստացին: Հետևելով նոր հետինակներին, հատկապես՝ Հովհաննես Հոլովին, Մի. Սեբաստացին իր թերականության մեջ գրեթե չեզոք կրկնությամբ գործածել է լատինաբան ձևեր, զուգահեռ կատարել է մի շարք փոփոխություններ, շտկումներ: Բայց տեսական նկարագրությունը լիովին չի բացահայտում Սեբաստացու նախընտրությունները տեքստում. նա ինքը նշում է, որ հարցուցային ձևը կարող է շարադրանքում տարբերվել<sup>5</sup>: Այդ հակասությունը բնորոշ էր ժամանակի գրաբարին. թերականություններում տեղ գտած լատինատիպ ձևերը միշտ չեն, որ հաստատվում են գրավոր գործածությամբ, երբեմն դրանք սուսկ հարցուցային միավորներ էին, որոնք մուտք չունեին տեքստի թերականությունը<sup>6</sup>:

Բառային, թերականական անցումները որոշելու համար ինքնուրույն աշխատությունները, որ հարաբերված չեն լատիներեն տեքստերին, բավարար տվյալներ չեն պարունակում, լատիներենի անմիջական ազդեցությունը կրում են թարգմանական երկերը, որոնց բնագրերի հղումով կարելի է պարզել անսովոր կազմությունների նախատիպերը:

<sup>1</sup> Տե՛ս Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, Ե., «Նախրի» հրատ., 2010, էջ 103-118:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Զահոնյան. Գրաբարի թերականության պատմություն, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1974, էջ 210:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Չամչյանց. Թերականութիւն Հայկագեան լեզուի, Վենետիկ, 1779, առաջարան, էջ դ. Է:

<sup>4</sup> Տե՛ս Գ. Զահոնյան, ն.ս.:

<sup>5</sup> Տե՛ս Մի. Սեբաստացի, Թերականութիւն գրաբարի լեզուի Հայկացան սեռի, Վենետիկ, 1730, էջ 352:

<sup>6</sup> Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի երկու դրսերում XVII դարում, Պատմա-բանասիրական հանդես, 1980, 4, էջ 176:

Մի. Սերաստացու գրական գործերից երկուսը թարգմանական են<sup>7</sup> «*Բովանդակութիւն* բոլոր Աստուածաբանութեան» առաջին մասի երկրորդ հատորը («*Summa Theologiae*», prima pars, quaestio 50-119), որը 1712-ին հանձնարարել էր թարգմանել Հ. Հովհաննեսին և իրականացել է նրա աշխատասիրությամբ. «Որչափ ինչ թարգմաներ նա, նոյն ինքն Աբրահայրն մեր բազում աշխատասիրութեամբ սրբագրել եւ գրանսն ի մեր բարբառն ըստ պատշաճին կարգեալ ի լոյս ածեր»<sup>8</sup>: Գործը հրատարակված չէ, ձեռագիր օրինակը պահպում է Սատենադարանում<sup>9</sup>: Երկրորդը Ալբերտ Սեղմի «Դրախտ հոգուց» երկն է («*Paradisus animae*»)<sup>10</sup>, թարգմանված նոյն Հովհաննես վարդապետի գրչակցությամբ և հրատարակված 1727-ին:

**1. Նորակազմ բառեր՝ լատիներենի կաղապարով:** Թարգմանական տեքստերի բառապաշարում նկատելի է նախածանց դիրքի ակտիվություն՝ լատիներենի բառակազմության օրինակով, հավանաբար նաև՝ հունարան ավանդությին հետևելով<sup>11</sup>: Սա համգեցրել է բառի կառուցվածքի փոփոխության, աձման, իսկ հասկացական պլանում՝ իմաստի կոնկրետացման, մասնակիացման՝ ձևավորվելով նոր կազմություններ<sup>12</sup>: Լատիներենի նախածանցների և հայերեն համարժեքների ուղղակի և իմաստային համապատասխանությունը տրված է հետևյալ աղյուսակում.

com- / համ-	«compesco» (PA 22)- «համազապեմ» (ԴՀ 198), իմաստային թրգմ. com- / ներ-՝ «compello» (PA 2)- «ներմուծեալ» (ԴՀ 7)
re- / վեր-, բաց-	«recogito» (PA 3)- «վերամտածեմ» (ԴՀ 21), «abstraho» (PA 24)- «բացարարշեմ» (ԴՀ 217)
in- / ներ-	«incarnatio» (STh.q.64.a.1 ad4)- «ներմարմնութիւն» (ԲԲԱ 157).
in- / ան-	«indeterminatus» (STh.q.50.a.2 ad1) - «անբացորշաբար» (ԲԲԱ 9)
ad- / առ-	«admisceo» (STh.q.54.a.1 co.)- «առխառնեմ» (ԲԲԱ 40), իմաստային թրգմ. ad- / վեր-. «aspicio» (PA 29)- «վերահայիմ» (ԴՀ 264), ad- / համ-՝ «approbo» (PA 10)- «համահաստատեմ» (ԴՀ 87)
prae- / նախ-	«praeexigo» (STh.q.62.a.7.ad2)- «նախապահանջեմ» (ԲԲԱ 128)

<sup>7</sup>Տե՛ս Ն. Ալինեան, Միթրար տօնագիրը, Հանդէս ամսօրէս, 1949, էջ 411:

<sup>8</sup>Ն. Ալինեան, ն. տ.: Նաև՝ Պ. Տեր-Պօղոսեան, Միթրար, Հանդէս ամսօրէս, 1976, էջ 30:

<sup>9</sup> Բովանդակութիւն բոլոր Աստուածաբանութեան սրբոյն Թօսայի Ազուինացոյ հրեշտակայնոց վարդապետի, առաջնոյ մասին՝ հատոր Երկրորդ, Վենետիկ, 1713, Մաշտոցի անվ. Սատենադարան, ձեռագիր 118, թերթ 420: Համեմատությունների համար օգտվել ենք Թ. Արևինացու աշխատությունների եկեղեցարքների կորպուսի (Corpus Thomisticum) նյութերից: <http://www.corpusthomisticum.org/iopera.html>:

<sup>10</sup> Գիրք Երանելոյն Ազգերի որ կոչի Դրախտ հոգուց, Վենետիկ, 1729, 300 էջ: Ալբերտ Սեղմի աշխատությունների եկեղեց լիակատար հրատարակություն կա՝ 1651 թ., Լիոն, և 1890-99 թթ., Փարիզ: Համեմատությունների համար օգտվել ենք առաջին հրատարակությունից. Albertus Magnus, Opera omnia, ed. P. Jammy, *Paradisus animae*, vol. 21, p. 1-33, Lyon, 1651:

<sup>11</sup> Տե՛ս Գ. Սուրայան, Հունարանությունները դասական հայերենում, Ե., «Նախիրի» հրատ., 2010, էջ 33, նաև «Հասնամարտ հայերեն և նրա առկնությունը հունարան հայերենի» գլուխը:

<sup>12</sup> Բառերը նորակազմ են համարված Հայկացան բառարանի տվյալների համեմատությամբ, ներայալ նրանք, որ նշված են Վ. Համբարձումյանի «Լատինարան հայերենի պատմություն» աշխատության մեջ, բայց աղյութի ժամանակից դատելով՝ ավելի վաղ կազմություններ են, կամ բաղկած են նոյն աղյութից:

e-, ex- / արտ-, վեր-, անդր-	«existens» (STh,q.119,a.2 ad4)- «արտագոյօղ» (ԲԲԱ 808), «emendatio» (PA 8)- «վերուղղութիւն» (ԴՀ 66), «excedo» (PA 27)- «անդրանցանեմ» (ԴՀ 242)
sub- / ստոր-	«subtrahere» (STh,q.50,a.5 ad3)- «ստորաբառնալ» (ԲԲԱ 17), իմաստային թրզմ. sub- / առ-՝ «suscipio» (PA 29)- «առընկալամ» (ԴՀ 262)
de- / առ-, բաց-, ապ-	«dependens» (STh,q.53,a.3 co.)- «առկախեալ» (ԲԲԱ 38), «derelinquo» (PA 6)- «քացարողում» (ԴՀ 42), «demerita» (STh,q.113,a.8 co.)- «ապարդինատրութիւն» (ԲԲԱ 737), իմաստային թրզմ. de- / յես-՝ «depono» (PA 13)- «յետադրեմ» (ԴՀ 115)
per- / ենթ-, ընդ-	«perpendo» (PA 2)- «ենթադատիմ» (ԴՀ 9), «permuto» (PA 26)- «ընդփոխինեմ» (ԴՀ 238)
a-, abs- / բաց-, վեր-	«abstraho» (PA 24)- «քացաքարշեմ» (ԴՀ 217), «abstacte» (STh,q.86,a.1 ad4)- «վերապելաբար» (ԲԲԱ 440)
inter- / ներ-	«intersum» (PA 26)- «ներայինիմ» (ԴՀ 232)
dis- / տար-	«distractio» (PA 21)- «տարացնդումն» (ԴՀ 186)
trans- / անդր-	«excedo» (PA 27)- «անդրանցանեմ» (ԴՀ 242)
pro- / նախ-	«promereo» (PA 9)- «նախարդինանորիմ» (ԴՀ 78)
super- / վեր-	«superabundantia» (PA 16)- «վերատասութիւն» (ԴՀ 142)

Ըստ այդմ՝ քանակային հարաբերությունը համաչափ չէ (16/28), լատիներեն նախածանցը փոխանցված է ինչպես մեկ համարժեքով, այնպես էլ տարածե, իմաստային տարբեր հատկացումներով պայմանավորված՝ հայերեն միենայն նախածանցը երբեմն գործածված է կրկնակի արժեքով (բաց- / de-, abs-), իմաստային թարգմանությամբ շեղումները սակավ են, ածանցի իմաստն արտահայտված է նաև արմատի միջոցով:

Նշելի են նախածանցավոր նորակազմ բառերի հետևալ հատկանիշները.

ա) Նախածանցումը երբեմն սոսկ հավելադրություն է՝ չեզոք իմաստավորմամբ, եթե հասկացությունն արտահայտելի է առանց ածանցի, օր՝ «վերապահեմ» (փիլ. պահել. «..ե՛ թթ վերապահելի, ե՛ թթ տալի... », ԴՀ 236)- «retineo» (PA 26), «վերամնամ» (փիլ. մնալ. «վերամնայ բաղդատութիւն տեսակի առ գոյն... », ԲԲԱ 7)- «remaneo» (STh,q.50,a.2 ad3) և այլն:

բ) Նախադաս դիրքը ակտիվ է նաև լատիներենի կադապարից անկախ. իմաստային թարգմանությամբ կատարվել է ինքնուրույն նախածանցում՝ բնագրի անածանց բառերի դիմաց. «համահաճեմ» (ԴՀ 20)- «placeo» (PA 2), «ստորապեմ» (ԴՀ 94)- «flecto» (PA 11) և այլն:

գ) Ըստիանուր առմամբ, նախածանցավոր բառերը թարգմանվել են միաձև. սա ընդհանուր հատկանիշ է՝ որոշ շեղումներով: Հունարան հայերենում մեկ բառի զուգածն թարգմանությունը երբեմն բնորոշվում է որպես «դուրլետ»<sup>10</sup>, լատինարան նշված տեքստերում ևս գործածվել են թարգմանական տարբերակներ, արտահայտված՝ |1| այլ բառերով. «առբարեմ» (ԴՀ 212), «անմեղադրեմ» (ԴՀ 103, ՆՀԲ՝ «անմեղադիր»)- «excuso» (PA 12, 24), |2|

<sup>10</sup>Տե՛ս Գ. Մուրացյան, նշվ. աշխ., էջ 15-16, հմմտ. նաև էջ 213-227:

արմատների տարբերությամբ. «ներընկղմեմ» (ԴՀ 3), «ներհեղում» (ԴՀ 4)-«infundo» (PA 1), |3| հավելյալ արմատով՝ «համայաւիտենական» (ԴՀ 135), «համայաւիտենականակից» (ԴՀ 233)-«coaeternus» (PA 16, 26), |4| նախածանցավոր ու վերջածանցավոր տարբերակներով. «համախնդակցեմ» (ԴՀ 7)-«congratulor» (PA 2), «ուրախակցութիւն» (ԴՀ 244, ՆՀԲ՝ «ուրախակից լինել»)-«congratulatio» (PA 27) և այլն:

դ) Բաղադրիչների համարժեքությունը նույնպես պահպանված է, թեև, ինչպես նախորդը, բացարձակ հատկանիշ չէ, երբեմն գործածվել են տարարժեք ածանցներ և արմատներ. |1| *ex-* ածանցը, որ հիմնականում թարգմանված է վեր, փոխանցվել է հականիշ ներ- ածանցով՝ «ներանկանի» (ԲԲԱ 39)` ներդնել նշանակությամբ. «հրեշտակն ի միում վայրկենի կարէ գոլ ի միում տեղուց, և յայլում վայրկենի յայլում տեղուց, ի մէջ որոց ոչինմ ժամանակ ներանկանի», բնագրում՝ «existere»՝ որպես *διαφέρει*, երևան զալ կամ *հետևել*. «angelus in uno instanti potest esse in uno, et in alio instanti in alio loco, nullo tempore intermedio existente» (STh,q.53,a.3 ad3), |2| «emendatio» (PA 8) բառն ըստ բաղադրիչների նշանակում է դուրս, վեր թերությունից (e-mendum), այսինքն՝ շտկում, ուղղում, որ թարգմանվել է «վերուղղութիւն» («...վասն վերուղութիւն ամենից», ԴՀ 66):

ե) Նախածանցավոր բառերը հազվադեպ թարգմանված են դասական ելանակով՝ առանց նախածանցի, այսինքն՝ ձևային կախում չունենալով բնագրից և իմաստը փոխանցելով ինքնուրույնաբար. «վատահամբաւութիւն» (ԴՀ 60)-«infamia» (PA 8), «հնարակերտեմ» (ԴՀ 29)-«excogito» (PA 4), «որամազննում» (ԴՀ 186)-«discussio» (PA 21):

Եթե հայերենի նախածանց դիրքը կենսունակությամբ զիջում է լատիներենին, և բնագրի նախածանցավոր կաղապարը հաճախ արիեստականորեն է պահպանված, ապա վերջածանց դիրքը, կենսունակ լինելով, արտացոլել է լատիներենի համարժեք ձևերը՝ հարազատ մնալով գրաբարի օրինաչափություններին: Իմաստային թարգմանությունները գերակշռում են. «հոգունակութիւն» (ԴՀ 75)-«diligentia» (PA 9), «հոտառողութիւն» (ԴՀ 49)-«odoratus» (PA 6), «հանդիսավեհութիւն» (ԴՀ 135)-«maiestas» (PA 16), «ծանրակացութիւն» (ԴՀ 203)-«maturitas» (PA 22) և այլն: Հազվադեպ են ձևային պատճենումները. «երկարտնողութիւն» (ԴՀ 287)-«diuturnitas» (PA 32), «առանձնախօսութիւն» (ԲԲԱ 389)-«soliloquium» (STh,q.84.a.1, arg.1): Մասնակի տարբերությամբ քառաձև թարգմանության օրինակ են. «յայտյանդիմանակացուցումն» (ԴՀ 110), «յանդիմնակացուցումն» (ԴՀ 105), «յայտյանդիմանութիւն» (ԴՀ 29, ՆՀԲ-ում նշված է), «յայտնի յանդիմանութիւն» (ԴՀ 180)-«argumentum» (PA 4, 12, 20):

Բարդ նոր բառերը սակավ են, այս դեպքում ևս բնօրինակում չկան այնպիսի կազմություններ, որոնք արտահայտելի չլինեն գրաբարի բառակազմությամբ, եեւնաբար արտասովոր կազմությամբ բառեր չեն հանդիպում: Պատճենումները իմինականում լիակազմ են. «մասնակալեմ» (ԲԲԱ 734)-«participio» (STh,q.113,a.6 co.), «երկսիրտ» (ԴՀ 208)-«dissolutum» (PA 23), նաև՝

բաղադրիչների հակառակ դասավորությամբ՝ «զայտառնեմ» (ԲԲԱ 82)-«manifesto» (STh,q.58,a.4 ad3) և այլն:

**2. Քերականական հատկանիշներ:** Միմիթարի քարզմանական երկերում առատորեն գործածվել են ձևաբանական այն հատկանիշները, որոնցով բնորոշվում է լատինարան գրաբարը. գոյականի թվի արհեստական տարրերակում «միտ» (ՂՀ 6)- «mens» (PA 2), *ρ* հոգնակերտի բացարձակացում. «մարդիկը» (ՂՀ 215)- «homines» (PA 24), *h* լծորդության և ցոյական հիմքի հատկացում կրավորական սեռին. «իրազործի» (ՂՀ 93)- «agitur» (PA 11), «նախագուշակեցեալ լինք» (ՂՀ 79)- «preadicetur» (10), *գունեղ* մասնիկով գերադրական աստիճանի կազմում «չարագունեղ» (ՂՀ 73)- «pessimus» (9), նաև պարզեցված մասնիկավորմամբ՝ «մեծեղապէս» (ՂՀ 21)- «maxime» (PA 2), հոլովման տիպի խախտում՝ «ի մարմնոց» (ՂՀ 76)- «in corpore» (PA 9), մակրայակերտ կրկնակի ածանցում՝ «յախտենականաբար» (ՂՀ 62)- «aeternaliter» (PA 8), հունարան «երկարանչիր» (ՂՀ 103) դերանվան գործածում լատիներենի օրինակով՝ «uterque» (PA 12) և այլն: Սրանք ընդհանուր հատկանիշներ են, որ նկարագրված են լատինատիպ քերականություններում և գրաբարի այդ փուլի ուսումնասիրություններում<sup>11</sup>: Որոշ արհեստական ձևեր, որ նշված են Սի. Սերաստացու քերականության մեջ, քարզմանություններում չեն գործածվում կամ հետզինետե հաղթահարվում են:

Հարակատար և գերակատար վերլուծական ժամանակները Սերաստացու քերականության մեջ տրված են կից գրությամբ՝ օժանդակ բայի դիմային վերջավորության արժեքով, և համարուական կազմությամբ նմանեցված են լատիներենի perfectum և plusquamperfectum ժամանակաձևերին<sup>12</sup>: Եզակի ձևերը՝ *ամրացուցեալեմ*, ...ի, երանի թէ, երէ ամրացուցեալիցեմ, ...իցեի, ոչ լրիվ հարացույցով և հետևողականորեն, գործածվել են նաև թարզմանություններում. «զի տէրն զնա ընտրեալէր յաշխարհէ» (ՂՀ 292)- «quod ipsum Dominus de mundo elegerat» (PA 32) և այլն: Հոգնակի ձևերը՝ *ամրացուցեալքէմք*, *ամրացուցեալքէար* և այլն, լատինարան հատկանիշների շարքում առանձին չեն հիշատակվում, թեև կազմությամբ ուշագրավ են. կից գրության հետևանքով պարտադիր համաձայնության կանոնը թափանցել է բարի ներքին կազմ ձևակորեկով կրկնակի թվանիշներ: Այս ձևերը թարզմանության օրինակներով չեն հաստատվում. նշված ժամանակների հոգնակին գործածված է ցոյական հիմքով, որպես կրավորականի սեռանիշ, և կազմությամբ անշատ է, բնագրին համապատասխան. «...գոյացութիւնք անշատեցեալքիցէին» (ԲԲԱ 13)- «...substantiae separatae essent (STh,q.50,a.3 ad3)» և այլն: Կից կազմությունը եզակի օրինակով է, որ, ընդհանուր օրինաշակությունից շեղվելով, հնարավոր է՝ տպագրական վրիպակ լինի. «հատեցեալքէն ի մարմնոյ եկեղեցւոյն» (ՂՀ 249)- «de corpore Ecclesiae praecisi sunt» (PA 28):

<sup>11</sup> Տէ՛ և **Գ. Համբարձումյան**, նշվ. աշխ., էջ 149-160:

<sup>12</sup> Տէ՛ և **Սի. Սերաստացի**, նշվ. աշխ., էջ 61-62:

Ն, թն նախդիրները, ինչպես հայտնի է, հունարան նախադեպով ձևեր են, որոնք ներմուծելու երկրորդ փորձը կատարվում է լատինարան շրջանում: Թարգմանական առաջին երկում («Բովանդակութիւն բոլոր Աստուածաբանութեան») և, ըստ-ն գործածվում են. «Արդ՝ այնմիկ, որ է թն վերջնում եզեր՝ ոչ յարմարի շարժիլ» (ԲԲԱ 132)- «Ei autem quod est in ultimo termino, non convenit moveri» (STh.q.116,a.1 ad1): Հաջորդ երկում՝ «Դրախտ հոգույ»-ի մեջ, Սերատացին հրաժարվում է արհեստական այդ մանիկներից և գործածում միայն ի նախդրիրը: Սակայն այս սրբազրումն էլ վերջնական չէ. իր քերականության մեջ վերստին նշում է այդ նախդիրները, թեև սահմանափակելով կիրառությունը՝ ներկայացնում որպես ի նախդրին օժանդակ միջոց՝ ոճական հոմանիշ. «և այսու լինի զանազանութիւն. որգոն Յամեցայ ըն տունս նոցին. գնացի ի տունս նոցին<sup>13</sup>»:

Լատիներենի շարակայուսական ազդեցության ամենաակնհայտ նշանը շարադասության ընդորինակումն է, որ հաճախ արտահայտվել է բառերի անսովոր կամ ոճական դասավորությամբ: Օր.՝ ա) բաղադրյալ ստորովյալի անվանական մասի և բայական հանգույցի հեռացում՝ լրացման միջադաս գործածությամբ, որը բնագրում կրկնվող կաղապար է. «Յայտյանդիմանութիւն ձշմարտի համբերութեան է...» (ՂՀ 35)- «Argumentum verae patientiae est...» (PA 5) և այլն, բ) ենթակայի, ստորովյալի, ուղիղ խնդրի հեռացում՝ վերջինիս միջադաս դիրբով. «....որ երեմն շրջաբերի ի սրտի, որպես հուրը ի հնոցի, և զմարդն նախապէս ցուրտ և դեղնազոյն՝ ի յաղօթս առնէ ջերմ և կարմազոյն» (ՂՀ 173)- «Qui quandoque cremat in corde, sicut ignis in fornace, et hominem ante frigidum et pallidum, in oratione facit calidum et rufum.», զ) խնդրառու բառ- խնդիր կապակցության շրջում. «առ զանազանս իրողութիւնս տարացնդումն» (փի.՝ տարացնդումն առ...) (ՂՀ 186)- «ad diuersia negotia distractio» (PA 21) և այլն:

Բնագրի շարադասության պահպանումը և բառացի թարգմանությունը, որ ենթադրում է կապակցություն կազմող գլխավոր միջոցի՝ բառաձևի ընդորինակում, շարակայուսական տարրեր պատճենումների հիմքում են և պայմանավորում են դրանք: Լատիներենի նմանությամբ հաճախակի են հատկապես անորոշ դերբայով կառուցները՝ խնդրառության պատճենումով, օր.՝ ա) կայանալ (consistere) բայ + ներգյական հոլովով խնդրի (այս կառույցը ժամանակակից հայերեն է փոխանցվել ուստերենի միջնորդությամբ և համարվում է ուսարանություն, հմմտ.՝ *coстоит в том-* կայանում է նրանում և *consistit in hoc-* կայանայ յասմիկ). «Ձշմարիտ ողորմածութիւն կայանայ ի յերիս. այսինքն՝ ի տալն, ի ներկեն, և ի յառատարաշիլեն» (ՂՀ 100)- «Misericordia vera, consistit in tribus: in dando, in condonando, et in supererogando» (PA 12) և այլն, բ) անորոշ դերբայով դարձված՝ հայցական հոլովի հետ (accusativus cum infinitivo). «կամի զմարդն զոյ ազատ (ՂՀ 184)», «vult hominem esse liberum (PA 21)» և այլն, զ) լատիներենում միադիմի բայի խնդիրներից մեկը դրվում է acc.-

<sup>13</sup> Տե՛ս Սիս. Սերատացի, նշվ. աշխ., էջ 248:

ով, մյուսը՝ նաև infinitivus-ով<sup>14</sup>, այդ կառուցքը թարգմանված է անփոփոխ, թեև գրաբարում միադիմի բայերի հետ սովորական է տրականի գործածությունը. «Ad veram laetitiam inducere nos debet (PA 18).»- «Առ ճշմարիտ խնդրութիւն պարտի ներածել զմեզ» (ԴՀ 155) և այլն:

Ծարահյուսական տեղաշարժեր կատարվել են նաև լատինատիպ բառակազմության հետևանքով: Գրաբարում բայի գործողության ուղղությունը հիմնականում պարզվում է խնդիրների, պարագաների միջոցով, օր.՝ (վեր=) «Բաց է դուռն արքայութեան նորա. Եթէ ոք կամի դիմել, դիմեսցի», (ուղիղ=) «Առ քեզ դիմեն յուսով» (ՆՀԲ՝ դիմեն բառահողված) և այլն: Լատինարան գրաբարում բայի գործողությունը որոշակիանում է նաև կազմությամբ՝ նախածանցի միջոցով, ինչպես լատիներենում, որի նախածանցները ծագմամբ մակրայ են<sup>15</sup>: Նախածանցների միջոցով գործողության ներունակ՝ բայի կազմությամբ արտահայտումը փոխել է շարադրյուսական հարաբերությունը, օր.՝ «Քանզի ամենայն, որ... առելին առելի (փխ.՝ եկեալ առ սեռն)` կացուցան գուեսակ» (ԲԲԱ 6), «Omne enim..., quae, *adveniens generi, constituit speciem»* (STh,q.50,a.2,arg.1) և այլն:

Թարգմանական տեքստում տարբեր կապակցություններ հաճախ գործածվել են կից գրությամբ՝ բնագրի միաբար ձևերին համապատասխան, օր.՝ ա) հարադիր բառերով կառուցյների կցում. «փրաքանչիւրոք» (ԴՀ 9)-«unusquisque» (PA 4), «այլոք» (ԴՀ 213)- «alius» (PA 24), «փրինքոք» (ԴՀ 101)-«seipsum» (PA 12), «որինչ» (ԴՀ 113)- «quod» (PA 16), «ի վերքան գորութիւն» (ԴՀ 105)- «supra vires» (PA 12) և այլն, բ) Ժիտական բառերով և նախրով կառուցյների կցում. «ոչոք» (ԴՀ 76)- «nemo» (PA 9), «ոչիմն» (ԴՀ 86)- «nullo» (PA 10), «ընդիս» (ԴՀ 101)- «mecum» (PA 12), «փվաղնօցոց» (ԴՀ 233)- «olim» (PA 26) և այլն: Կցական այդ ձևերը կազմությամբ նաև ինքնատիպ են, գործածվել են բնագրի անջատ կառուցյների դիմաց. «այխ» (ԴՀ 206)- «ad me» (PA 23), «առայնս համայնս» (ԴՀ 108)- «quo ad omnia» (PA 13), «...Էր առամենեսեան համբաւալորագունեղ» (ԴՀ 110)- «...erat in omnibus famosissima» (PA 13), «առնոյն» (ԴՀ 109)- «ad idem» (PA 13), «ոչերքէր» (ԴՀ 18)- «non nūquām» (PA 3), «այսուկերպիւ» (ԲԲԱ 76)- «hoc modo» (STh,q.98,a.1 co.) և այլն: Այս եղանակը լրացուցիչ միջոց է դարձել ակտիվացնելու նախադաս դիրքը. «առաստուած» (ԴՀ 91)- «ad Deum» (PA 14), «առգովորիւն» (ԴՀ 80)- «ad laudem» (PA 10), «առընկալպումն» (ԴՀ 213)- «ad recipiendam» (PA 24), «առհաստատութիւն» (ԴՀ 115)- «ad constantiam» (PA 13) և այլն:

Այսպիսով, լատիներենի օրինակը թափանցել է թարգմանությունների լեզվի բոլոր մակարդակներ, փոխել է բառերի կազմը, ձևավորումը, հարաբերությունները: Բառային և քերականական հիմնական հատկանիշներն են. նախածանցավոր կադապարի ընդօրինակում, ածանցների հավելադրում, որոնք, ձևային լրացումներ լինելով, իմաստով չեզոք են, բարդ և վերջածան-

<sup>14</sup> Տե՛ս **С. Соболевский**, *Грамматика латинского языка*, Санкт-Петербург, 1998, стр. 132-33.

<sup>15</sup> Տե՛ս **М. Лапина**, *Морфологические словообразования в латинском языке*, Харьков, 1970, стр. 1.

ցավոր բառերի օրինաշափ կազմություն, լատինաստիայ քերականական ձևերի կիրառում, լատիներենի շարադաստիթյան ու բառաձևերի օրինակով շարահյուսական պատճենումներ, անորոշ դերբայով դարձվածների առանացում՝ խնդրառական փոփոխություններով, շարահյուսական տեղաշարժեր լատինաստիայ բառակազմության հետևանքով, համադրականության ձգտում կապակցությունները կցելու միջոցով: Մերաստացու թարգմանությունների լատինարան ձևերը կրկնվում են նրա քերականության հարացույցներում, համընկնումը գրեթե բացարձակ է, նկատված ստրբերությունները՝ ն, ըն-ից հրաժարվելը, հոգնակի համադրական բայաձևեր չգործածելը, մասնակի են, այդուհանդերձ, վկայում են, որ թեև ոչ հիմնավոր, բայց կատարվել են ուղղումներ:

Sirunyan Tigran- The Latinisms in the Theological Treaties Translated by Mkhitar of Sebastia. -The article researches language of the theological treatises translated by Mkhitar of Sebastia (Thomas of Aquin, «Content of sum Theologia», Chapter I, t. II. Albert the Great, «Paradise of the soul»). The transmission peculiarities of verbal and grammatical forms from Latin to Classical Armenian are demonstrated in comparison with the original text, the essential attributes of the verbal formation applying Latin examples are highlighted, and the expression of the Latin morphological and syntactical several forms in the translated texts are clarified.

Сирунян Тигран- Латинизмы в богословских трудах, переведенных Мхитаром Себастаци.- В статье рассматривается язык переводческих трудов Мхитара Себастаци (Сумма Теологии Фомы Аквинского, Ч. 1, т. 2. Рай Души Альберта Великого). В сравнении с оригиналом показаны лексические и грамматические особенности переводов с латинского на грабар, отмечены основные особенности словообразования на примере латинского, показано выражение некоторых латинских морфологических и синтаксических образований.

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

**Բարսեղյան Ամայա (Հայաստան,  
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ)**

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՈՉ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԴՐԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԶԼՄ-ՆԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ

Շարահյուսական կապակցություն է նաև նախադասությունների կապակցությունը, որը, ըստ ակադ. Ս. Արքահամյանի, շարահյուսական կառույց է՝ իր քերականական, բառական, հնչերանզային ներքին օրինաչափություններով<sup>1</sup>: Շարահյուսական կառույցի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն նրա կառուցվածքի ու դերի պարզաբանման, այլև նախադասության և նրա կիրարության ամբողջական պատկերման առումներով:

Խոսքը կազմված է նախադասությունից և նախադասությունների կապակցությունից: Նախադասությունների կապակցումը առավելապես կատարվում է բարդ նախադասության բաղադրիչների կապակցման հիմնական միջոցներով՝ կախված նախադասությունների կապակցման բնույթից: Նախադասությունների կապակցման համար գործածվում են նաև լեզվական այլ միջոցներ, որոնք հատուկ են միայն նրանց: Նախադասությունների կապակցման մեջ իմաստային-քերականական կապերը բազմազան են: Դժվարությունն այն է, որ բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների համեմատությամբ նախադասությունների կապակցման մեջ բաղադրիչ նախադասությունները առավել հնքնուրույն են, որի պատճառով կ նրանց կապը հաճախ շատ սերտ չէ, մեծ մասամբ՝ տարրեր: Հատկապես տարրեր են լինում տվյալ նախադասության՝ նախորդող ու հաջորդող նախադասությունների նկատմամբ իմաստային քերականական կապերը:

ԶԼՄ-ների լեզվում նախադասությունների կապակցման մեջ երբեմն հանդիպում են բաղադրիչների կապի և փոխհարաբերության ոչ կանոնական դրսերումներ:

Հոդվածում ի մի են քերված նախադասությունների կապակցման վերաբերյալ դիտարկված ոչ կանոնական դրսերումները ԶԼՄ-ների լեզվում, և արված են ձգբրտումներ:

1. Ոչ կանոնական դրսերումներ՝ պայմանավորված բառական միջոցներով (շաղկապներ, շաղկապական բառեր, դերանուններ և այլն), որոնք իրենց կապակցական դերը կատարում են՝ որոշակի հարաբերության մեջ մտնելով նախորդ, երբեմն հաջորդ նախադասության (կամ նախադասությունների) հետ:

Ինքնուրույն նախադասությունների կապակցման օրինակներ:

<sup>1</sup> Ս.Արքահամյան, Հայոց լեզու. Շարահյուսություն, Ե., 2004, էջ 221:

«Զեկուցողը նշեց, որ «Հեռուստատեսային և ռադիոյի մասին ՀՀ օրենքը առանձնահատուկ տեղ է հատկացնում Հանրային հեռուստատեսությանը կարևորելով հանրային իրազեկված գործում վերջինիս առանձնակի դերակատարումը: Եղ այդ պատճառով» (փխ. ըստ ներկայացված օրենքների) նախագծերը նպատակ ունեն ավելի բարձրացնելու Հանրային հեռուստատեսության տեղն ու դերը, համբավը հասարակական կյանքում՝ արգելելով առևտրային գովազդը» (ՀՀ, 20.2.2014):

Վերջին նախադասությունը նախորդի գործողության համար հիմունք է հանդիսանում, հետևաբար այդ իմաստային կապը պետք է արտահայտվի հիմունքի հարաբերություն արտահայտող կապային կառուցող՝ ըստ օրենքների:

«Քաղաքագետ Ս.Քորնելը գրում է. «Հարավային Կովկասը կարող է հզոր պատնեշ հանդիսանալ ոուսական իմայերի կազմի ալիքի դեմ, սակայն միայն եթե» (փխ.՝ սակայն եթե) ԱԱՆ-ը դեմքով շրջվի դեպի տարածաշրջանի անվտանգությունը» (Ժամ., 8.4.2014):

«Մինչ դեռևս (փխ.՝ քանի դեռ) հստակեցված չեն զգայուն ապրանքատեսակների նկատմամբ տրվող հնարավոր արտոնությունների չափերը, նախագահի աշխատակազմի դեկավարի տեղակալ Վ. Արամյանի կարծիքով, բարձր մաքսատուրքերի կիրառման հետևանքով Հայաստանը կարող է կորցնել տարեկան 104 մլն դրամ» (Հայ. աշխ., 1.4.2014):

Որոշից ստորադաս նախադասությամբ կապակցությունները նախորդ նախադասությունների հետ կապակցված են ոչ, ովքեր հարաբերական բառերով որ-ի փոխարեն: Այսպես «Խիստ արյունավետ աշխատեցի», (փխ.՝ բութ) վեց օրում ստեղծելով 13 կտակ: Միայն մեկ օրում վեց Էտյուդ կատարեցի, և դա հասկանավի է: Մեր այս հագեցած աշխատանքին իրենց աջակցությունը բերեցին (փխ.՝ աջակցեցին) գրողների ստեղծագործական տան տնօրեն Մովսես Մանուկյանը և մյուս աշխատողները: Ովքեր (փխ.՝ որոնք) մեզ համար հիանալի պայմաններ էին ստեղծել, ինչի համար հայտնում եմ և իմ և իմ ընկերների շնորհակալությունը»՝ ասաց նա: «Երկտարեցի» է նաև Այսեր Մաթեոսյանը: Ոչ (որը) առաջին անգամ է եղել շատ տարիներ առաջ» (ՀՀ, 25.1.2014):

Ժողովրդախոսակցական ոճի դրսնորում պետք է համարել թէ քա, քա վերաբերական բառերի գործածությունը հետևյալ օրինակում. «Վնասելու հարց չկա: Ուղղակի մենք պայմանավորվել ենք կոնսենսուտով կայացած հարցերի մասին միայն խոսել: Որովհետև, երբ ինչ-որ փակագծեր են բացվում, միանգամից լրան հաջորդում են շահարկումներ: Թէ քա ասում էիր կային ընդհանրություններ: Քա ոնց եղավ, որ այս հակասություններն ի հայտ եկան» (Հրապ., 8.3.2014):

Ընդհանրացման և հետևողացման հարաբերության հարաբերությամբ կապված ինքնուրույն նախադասություններով խոսրում կրկնված է այսինքն կապակցող շաղկապը, որը ոճական արժեք չունի: Այսպես «....վերահսկողական ծառայության գործունեություններն այսօր որոշակի փոփոխությունների կարիք

ունեն, որպեսզի ապահովեն ավելի ճիշտ բյուջեի կազմում և ավելի հստակ կատարում: *Այսինքն՝* ծախսերը, որ կազմվում են, և որոնք կատարվում են, ի սկզբանե լինեն վերահսկելի, ոչ թէ ծախսվեն-ավարտվեն ու մի քանի տարի անց պարզվի, որ ինչ-որ խնդիրներ կան: *Այսինքն՝* (փխ.՝ ուրեմն) ստուգման գործընթացում նախնական ստուգման կշիռը ավելի մեծացնելու (փխ.՝ մեծացնել): Սա օրվա պահանջ է և կարևոր փոփոխություն» (Ժամ., 20.6.2014):

Եթե համեմատենք ինքնուրույն նախադասությունների ոչ կանոնական կապակցությունները բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների ոչ կանոնական (և ոչ միայն) կապակցումների հետ, մեկ անգամ ևս կհամոզվենք, որ վերջիններիս իմաստային կապը սերտ է, և առավել սերտ՝ գուգաղրական շաղկապների դեպքում:

Այսպես «Շատ կարևոր է, որպեսզի (փխ.՝ որ) մենք տեմպերը դանդաղեցնենք, ընդհակառակը՝ արագացնենք, որպեսզի (փխ.՝ որ) վերջնականապես կարողանանք ասել, որ արտակարգ իրավիճակների նախարարությունը կայացել է, և որ բարեփոխումների արդյունքում մեզ մոտ ստեղծվել են ծառայություններ, որոնք որակյալ սպասարկում են ոչ սովորական իրավիճակում հայտնված մեր քաղաքացիներին» (ՀՀ, 6.2.2014):

Այստեղ ունենք տարբեր քերականական հարաբերություններով կապված (ենթակա, պատճառահետևանքային) բաղադրիչ նախադասություններ, որոնցում որպեսզի նպատակային շաղկապի գործածությունը ճիշտ չէ:

«Շնորհավորելով ներկաներին վարչապետը ցանկացավ, որպեսզի (փխ.՝ որ) 2011-ը լրագրողների համար լինի հաջողությունների, նոր նվաճումների և մասնագիտական աճի տարի» (ՀՀ, 14.1.2011):

Ուղիղ ինդիք ստորադաս նախադասությամբ կապակցությունը գերադասի հետ պետք է կապվի որ շաղկապով և ոչ թէ որպեսզի նպատակային շաղկապով: «Այսօր էլ անհրաժեշտ է, որպեսզի (փխ.՝ որ) մեր ղեկավարությունը դիմումագիտական դաշտում կարողանա նաև հաջողություններ ունենալ» (ՀՀ, 10.5.2014):

Ենթակա ստորադաս նախադասությամբ կապակցություն է, գերադասի հետ պետք է կապվի որ շաղկապով: Կամ՝ «Այսքանը բավական է, որպեսզի (փխ.՝ որ) մենք կարողանանք հանգել այն եզրակացության, որ այս բանակցային գործընթացում խոշընդուն Առդրեզանն է» (ՀՀ, 10.5.2014): «Ես համոզված եմ, որ զալիք սերունդը մեզանից ավելի լավ է պաշտպանելու մեր հայրենիքը, անձնասոտը է լինելու և ավելի նվիրված է լինելու հայրենիքին ոչ միայն ռազմական դաշտում, այլ (փխ. այլի) ամեն ինչ անելու է, որ ռազմական դաշտին շիամնի, ինչպես անվտանգության համակարգի ստեղծմամբ, տնտեսության զարգացման ուղղությամբ» (ՀՀ, 10.5.2014): «Նա հայտարարում է, որ հանուն ժողովրդի հադրանակի և վատահության պատրաստ է կորցնել ամեն ինչ, սակայն մինչև այսօր նա կարծեք թէ ոչ միայն չի կորցրել, այլ (փխ. այլի) նույնիսկ ձեռք է բերել խաղատնային բիզնեսի արտոնյալ պայմաններ» (Ժամ., 7.5.2014): «Եթե նահանգապետը զանգահարում է, ապա ես վերցնում եմ

նրա խոսափողը» (Գիտութ., հմ. 1, 2009): Այստեղ զուգորդումը սխալ է, և ապա-ի գործածությունը ավելորդ:

**Բ. Ոչ կանոնական դրսերումներ՝ քերականական միջոցներով պայմանավորված:** Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներ են շարահարությունը և շարադասությունը:

Շարահարական կապակցման դեպքում չկան կապակցող շաղկապներ, շաղկապական բառեր, այլ նախադասությունները գործածվում են կողք կողքի և իրար հետ կապվում են իմաստով: Սովորաբար լինում են կապակցական այլ օժանդակ միջոցներ ևս (ստորովյալի ժամանակ, գոյականներ, դերանուններ և այլ խոսքի մասեր): Կապակցման այս եղանակի մեջ դեր են կատարում բաղադրիչ նախադասությունների միջև փոքրիկ դադարը, հնչերանգը, շարադասությունը, իմաստը: Այսպես «Տարիներ առաջ թարգմանչուիի Վերա Զվյագինցևան Մոսկվայի կինոյի տանը մի երեկոյի ժամանակ ինձ ծանոթացրեց մեծանուն կինոռեժիսորի հետ: Այդպէս էլ այդ ծանոթությունը շարունակություն չունեցավ» (ԳԹ, 18.2.2011):

Այս երկու ինքնուրույն նախադասությունները իմաստով են կապված իրար հետ: Սական այդպէս էլ կապակցման օժանդակ միջոցը տեղին չէ, որովհետև հայտնի չէ՝ ինչո՞ւ տեղի չունեցավ այդ ծանոթության շարունակությունը:

Ճիշտ է՝ ...ծանոթացրեց մեծանուն կինոռեժիսորի հետ: Իսկ այդ ծանոթությունը շարունակություն չունեցավ: Կամ՝ .....ծանոթացրեց մեծանուն կինոռեժիսորի հետ, որի հետ ծանոթությունը շարունակություն չունեցավ՝ մեկ բարդ նախադասությամբ:

Հմմտ. «Դարձյալ կապ չկա: Արբանյակի հետ ասում են ինչ-որ բան է պատահել: Իբր վստահելի էր համարվում այս արբանյակային կապը: Ափից տասը մղոն հեռանում ես այլսև չի աշխատում բջջային հեռախոսը, չկա արբանյակային կապ, խոլ փակվում է նաև էլեկտրոնային փոստը: Այդպէս կարող է երկար շարունակվել» (ԳԹ, 8.7.2014): Այս հատվածի չորս նախադասությունների իմաստային կապը այն է, որ չեն գրձում արբանյակային, հեռախոսային, էլեկտրոնային կապերը: Այդ նախադասությունները կապվում են նաև մեկ այլ օժանդակ բառական միջոցով՝ այդպէս-ով, որը ճիշտ է:

Նախադասությունների կապակցման քերականական միջոցներից է նաև շարադասությունը: Մեծ է շարադասության դերը նախադասությունների իմաստի փոխհարաբերության հարցում: Շարադասության փոփխության դեպքում կարող է փոխվել նախադասությունների բաղադրիչ մասերի ներքին իմաստային-քերականական փոխհարաբերությունը կամ արավարյալ այն:

Երեմս թարգմանության (և ոչ միայն) ժամանակ ոչ միայն շարադասությունն է փոխվում, այլև ներքին իմաստային-քերականական փոփխհարաբերությունը, որը կարող է հանգեցնել անկապակցության: Նման անկապակցության օրինակներ են մամուլից քաղված հետևյալ խոսքերը. «Կողմերը քննարկել են նաև կազմակերպության հավաքական անվտանգության կովկայան տարածաշրջանում անվտանգության ապահովման, ինչպէս նաև 2013

թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում՝ ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի և ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորյոյուժայի համատեղ պայմանավորվածությունների քննարկման հարցերով հանդիպման արդյունքներով ստորագրված արձանագրության իրականացման ընթացքին վերաբերող հարցեր» (Հայ. աշխ., 6.2.2014): Կամ՝ «Այն կառուցվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ արտաքին գործերի նախարարության միջև 2013 թ. ապրիլի 30-ին Երևանում կնքված **մտադրությունների մասին հուշագիրը**: Կենտրոնը հանդիսանում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցության մասը և օգուվում է Վիեննայի կրնվենցիայով և դիվանագիտական ներկայացուցությունների կարգավիճակը կարգավորող երկկողմ միջազգային համաձայնագրերով սահմանված արտոնություններից և անձեռնմխելիությունից» (ՀՀ, 12.6.2014):

Անկապակցության օրինակ է նաև Հայաստանի գրողների միության հիմնադրման 80-ամյակի առթիվ Զինաստանի գրողների միության հղած հետևյալ շնորհակլորանքը. «Հայաստանը երկար պատմություն ունեցող հնագույն քաղաքակրթությամբ երկիր է: Ազգային անկախության համար երկար տարիների պայքարի ընթացքում հայ ժողովուրդը **հրաժարվել է զիտելու ու նահանջելուց իր փորձառությունը փոխանակելով նաև չին ժողովրդի հետ՝ նրա ազգային-ազատագրական պայքարի ընթացքում** (ԳԹ, 11.7.2014):

Շարադասության խախտման օրինակներ են. «Բան Կի Մունը կոչ է անում անհապաղ վերսկսել **արագ արդյունքների տանող** (փխ.՝ արդյունավետ) երկխոսությունը. «Հետազու անկայունության և արյունահերության կանխումը առաջնահերթ կարևորություն ունի, և բոլոր կողմերը պետք է ձգտեն հնարավորինս **արագ Ուկրաինան վերադարձնել բարգավաճման և ժողովրդավարության ուղի**» (ՀՀ, 20.2.2014):

«Եվ, անշուշտ, շնորհակալ եմ անցած տարվա վերջին այդպիսի հնարավորություն ընձեռելու համար ինձ և Աղրբեջանի նախագահին՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի **խաղաղ կարգավորման ուղղությամբ** բանակցություններ վարելու ուղղությամբ» (փխ.՝ Եվ, անշուշտ, շնորհակալ եմ անցած տարվա վերջին ինձ և Աղրբեջանի նախագահին այդպիսի հնարավորություն ընձեռելու համար՝ վարելու բանակցություններ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ» (ՀՀ, 12.6.2014): «Բուկ շարար օրը Թուրքիայում տեղի էր ունեցել բողոքի ակցիա՝ **մեծածավալ կաշառակերության վերաբերյալ բացահայտման պատճառով**» (ՀՀ, 21.1.2014):

Կամ՝ «Հասարակության շրջանում կան լուրջ դժգոհություններ: Սակայն ընդիմադիր ուժերը նույնիսկ ի վիճակի չեն մորթիլիզացնել այն ուժերը, այսինքն ընդդիմությունը չի կարող այդ ռեսուրսները օգտագործել քաղաքական դաշտում ավելի տեսանելի լինելու համար», - նշել է Ս.Մինասյանը» (ՀՀ, 9.7.2014):

Քերենք օրինակ, որտեղ շարադասության փոփոխությունը խախտել է Ժիստման ներհակական հարաբերությամբ կապված նախադասությունների ներքին իմաստային-քերականական կապը և աղավաղել այն: Այսպես՝ «Մնում

Է՛ ...ԲՀԿ-ականները կոնկրետ գործողություններով ապացուցեն, որ իրենք հավատարիմ են իրենց սկզբունքներին ու քայլակի գործընկերներին, արագացնեն միասնական հրավիրելու հարցը, այլ ոչ թե նպաստեն իշխանությունների նախաձեռնություններին, իսկ հետո հայտարարեն բոլորովին այլ բան՝ համոզելով, թե իրենք ժողովրդի կողքին են» (Ժող., 7.5.2014):

Դետք է լինի՝ ....ոչ թե նպաստեն իշխանությունների նախաձեռնություններին, այլ արագացնեն միասնական հրավիրելու հարցը:

Այսպիսով՝ ԶԼՄ-ների լեզվին ևս բնորոշ են նախադասությունների կապակցման ոչ կանոնական դրսւորումներ՝ պայմանավորված բառական, քերականական միջոցներով:

Barseghyan Amalya - Connection of the Sentence in the Irregular Expressions in the Language of Mass Media.- The syntactic structure of the sentences, its lexical, grammatical, overtone internal patterns are not always followed in the language of mass media and modern press which are clearly stated in the article.

In comparison with the components of a complex sentence, the components of a compound sentence are more independent, and for this reason they are not often so closely connected.

Барсегян Амалия - Сочетание предложений и их ненормативное использование в языке СМИ.- В статье представлена синтаксическая структура предложений, в которых словесные, грамматические, обертональные внутренние закономерности не всегда соблюдаются в языке средств массовой информации, а также в современной прессе.

По сравнению с составным компонентом сложного предложения, в сочетанных предложениях составные компоненты более самостоятельны и по этой же причине их связь часто не так уж тесна.

## ԳՐԻԳՈՐ ԳՈՒՐԳՅԱՆՅԱՆԻ ԷՍՍԵՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Էսսեն (խոհագրություն) գեղարվեստական վավերագրության ժանրատեսակ է, որը ծնունդ է առել 16-րդ դարում Ֆրանսիայում:

Էսսեն որևէ գեղարվեստական ստեղծագործության, երևույթի, բնապատկերի, հանդիպման տպավորության տակ ծնված մտածումների արձակ շարադրանք է: Այն յուրահասուկ հիշատակարան-օրագիր է՝ բազմապիսի բովանդակությամբ: Էսսեն բնութագրվում է իրբե «պատմվածք՝ ուրույն ոճով», «անսովոր արձակ», ոմանք էլ անվանում են գրական ուրվագիծ, փոքր ծավալի և ազատ կոմպոզիցիայի արձակ ստեղծագործություն, որն արտահայտում է կոնկրետ հարցի մասին հեղինակի անհատական տպավորություններն ու նկատառումները և չի հավակնում քննության առարկայի սպառիչ ու վերջնական մեկնաբանության<sup>1</sup>:

Մասնագետներն էսսեն նմանեցրել են հունական դիցարանության մեջ Պրոտև ծովային աստվածությանը, որ, ցանկացած կերպարանը ստանալով, ունի փոփոխվելու ընդունակություն:

Էսսեն դիպուկ է բնութագրել հայտնի փիլիսոփա, էսսեիստ Միխայիլ Էպշտեյնը. «Էսսեն մասամբ խոստովանություն է, ինչպես օրագիրը, մասամբ դատողություններ, ինչպես հոդվածը, մասամբ էլ հյուսվում է, ինչպես պատմվածքը: Սա ժանրի մի տեսակ է, որ կանգուն է մնում իր սկզբունքային անժանրության շնորհիվ: Եթե ընկնի լրիվ անկեղծության գեղումների մեջ, վերածվում է օրագրի, հենց շատացվեն տրամաբանական դատողությունները, մտքերի արտադրության գործընթացը, մեր առջև հայտնվում է տրակտատ և բավական է ընկնի պատմողականության մեջ, զարգանա սյուժեի օրենքներով, կամքից անկախ առաջանում է նովել, պատմվածք, վիպակ»<sup>2</sup>:

20-րդ դարում էսսեի ժանրը մեծ սահմաններ նվաճեց: Էսսեներ գրեցին հայտնի փիլիսոփաներ և արձակագիրներ:

Արևելահայ էսսեն բուռն զարգացում ունեցավ 20-րդ դարում: Հայ գրողներից էսսեի վարպետներ դարձան Կոստան Զարյանը, Վարդգես Պետրոսյանը, Գևորգ Էմինը, Կարպիս Սուրենյանը, Գրիգոր Գուրգայյանը և ուրիշներ: Ստեղծվեցին էսսեի տարբեր տեսակներ՝ պատմողական, դատողական-վերլուծական, նամակ-էսսե, կենսագրական էսսե, վիպակ-էսսե, որոնք գեղարվեստի հետ միաժամանակ հայ և համաշխարհային արվեստի, գրականության, պատմության, փիլիսոփայության և այլ հարցեր էին շոշափում:

Փիլիսոփայական ինքնատիպ խորհրդածություններ են Գր. Գուրգայյանի էսսեները, որոնք ոճական ուրույնություն են՝ նվիրված գիտու-

<sup>1</sup> **Ա.Գալստյան.** Գեղարվեստական էսսեի լեզվական հիմքերը. - Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ, 2013, էջ 165-170:

<sup>2</sup>Տե՛ս ս <http://www.tert.am/blog/?p=2633>

թյան և արվեստի այլեայլ բնագավառներին: Հեղինակը որդուն հասցեագրած նամակ-կասեներում վերապրում ու վերիիշում է մարդկության աստեղային պահեքը, գեղեցկության ու կատարելության մնայուն արժեքները՝ դրանք ներկայացնելով լեզվանձական հարուստ դրսորումներով: Նամակներով պատմելու այս ձևը եվրոպական գրականության մեջ ընդունված ու տարածված հնարք է առավել արտահայտչականության հասնելու նպատակով: Գր. Գուրգայինի կասեները միաժամանակ աշխարհաճանաչողության վառ օրինակ են:

Գործառական ո՞ր ոճերի հատկանիշներն են առկա Գր. Գուրգայինի կասեների պատումներում, բառապաշարային ի՞նչ փնջեր են գործածվում այս տեղ:

Ինչպես նշում է պրոֆ. Լ. Եզեկյանը, գործառական ոճերը միմյանցից խիստ սահմանազատված կամ անշրաբետված չեն, և նրանց յուրահատուկ լեզվանձական առանձին տարրեր կարող են հանդիպել կամ գործածվել մյուս ոճերում<sup>3</sup>:

Մեր ուսումնասիրությունը ցոյց է տալիս, որ կասեների որոշ տեսակներում համադրվում են գեղարվեստական և գիտական ոճերի տարրեր՝ չնայած հաճախ դրանց հակադրվելուն:

Առաջադիր կասեները կոչվում են գեղարվեստական կասեներ, որտեղ գեղարվեստական ոճի տարրերն ըստ էության ակնհայտ են: Բայց որոշ տեսակներում տեղ-տեղ իշխում են նաև գիտական ոճի հատկանիշներ: Բերվում են կոնկրետ թվեր, գիտական մեկնաբանություններ, քննվում են դրույթներ, որոնք գիտական ոճի ցուցիչներ են:

Այսպես «Կաքավաբերդի առեղծվածը» կասեից երկու մեջբերում<sup>4</sup>:

«Կաքավաբերդը նոյն ինքը Գեղի բերդը, գտնվում է Գեղամա լեռների կենտրոնական մասում, Ազատ կամ Գառնի գետի վերին մասում՝ ծովի մակերևույթից մոտ 2300 մետր բարձրության վրա» [1, 89]:

«Բերդը երևում է հանկարծակի ու շատ մոտիկ, երևում է ինչպես տեսիլը, միրած, ինչպես մի կանքել՝ երկնքից կախված» [1, 90]:

Կարծում ենք՝ Գր. Գուրգայինի որոշ կասեների՝ որպես գեղարվեստական վավերագրության ժանրատեսակի առանձնահատկությունն ու ինքնատիպությունը դրսուրվում են նաև այս երկու ոճերի փոխընդգրկմամբ:

Յուրահատուկ լեզվով է պատմում հեղինակը: Կասեներում նա հանդես է գալիս նաև իր համոզմունքներով, ապրումներով, խոհերով ու հոգեվիճակով:

Հեղինակի գրուցակիցը որդին է, որին և հասցեագրված են նամակ-կասեները. «...Ակամա հենվեցի մոտիկ այսնը... Դու զգացիր իմ հուզմունքը և զիսահակ անցար կամարի տակ... Շնորհակալություն քեզ, զավակս, որ դու

<sup>3</sup> Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, էջ 29:

<sup>4</sup> Սոյն հոդվածի օրինակները բաղել ենք հեղինակի «Կաքավաբերդի առեղծվածը» (1998) [1], «Խոհեր... խոհեր...» (2007) [2], «Մի սիր պատմություն» (2004) [3] կասեների ժողովածուներից: Այսուհետ հոդվածները կլատարվեն տերսուի մեջ համապատասխան հերթականությամբ:

ստեղծեցիր, դու տվի՛ք ինձ այդ պահը՝ աստվածային վեհության, այդ ակնթարքը՝ հավիտենականությանն այդքան մոտ»[1,22]:

Գիտատեխնիկական առաջընթացը և դրա նվաճումները Գր. Գուրզադյանը հաճախ տարփողում է քերականական կառուցվածքի այնպիսի ինքնատիպ բանաձևումներով, ոչ ստանդարտ լուծումներով, որոնք լեզվական առումով յուրահատուկ են և հետաքրքրություն են ներկայացնում: Վերջիններս, կարծում ենք, կապված են ոչ միայն գրողի ոճի, այլ նաև գեղարվեստական վավերագրության այս ժանրատեսակին բնորոշ քերականական բազմազան երևույթների հետ:

Էսեններում այս կամ այն չափով գերակշռում են անձնանուններն ու տեղանունները:

Արվեստին նվիրված «Մարիամ Ավլամայան» էսեում հեղինակը չի շրջանցում հատուկ անունները. «Արվեստի ասպարեզում իմ ողջ գիտակցված կյանքը եղել է և է Սարյան, Մինաս, Կալենց, ուշացած ըմբռնումով Արշիլ Գորկի նույնականությամբ» [2,148]:

Թերևս նկարիչների ու ճարտարապետների անուններն ամենաշատն են գործածված էսեններում՝ Լեռնարդո դա Վինչի, Ռաֆայել, Էնգր (Ռաֆայելի նշանավոր հետևորդներից և երկրպագուներից է), Միքելանջելո, Ջորջոնե, Սոնսովինոն, Պալլաջիո, Թորոս Թորամանյան և այլն:

Արկա են նաև այլ հատկանուններ, որոնց շուրջ և հյուսվում են էսենների պատումները՝ Մոնա Լիզա (Չոկոնդա), Տիրամայր, Փարիզ, Վենետիկ, Ֆլորենցիա, Լուվր, Ֆլարենցիայի Ուֆֆիջի պատկերասրահ, Միլանի Սանտա Մարիա տաճար, Ս. Պետրոսի տաճար, Սան Ջիովանիի եկեղեցի, Ռիալտոյի կամուրջ, Դոմեքի պալատ, Մարկոյի գրադարան, Կաքավաբերդ, Զվարթնոց, Գեղամա լեռներ և այլն:

Ուշագրավ է, որ առաջադիր էսեններում ածականի համեմատության աստիճանի կազմության նորմավորված բառաձևներին գրուզակու հանդիպում ենք այդ երևույթի յուրահատուկ դրսուրման ևս՝ ամենա- նախածանցի կըրկնությամբ. «Բաշինջաղյանի «Արարատը» իմ ամենա-ամենասարտամուռ նկարներից է, միշտ կարոտով ու թախիծով եմ մտաբերում այդ հուզիչ կտավը» [2, 6]:

«Ուրիշի մը գրչին տակ այդքան ածական տեսնելը կրնայ հաձելի չըթուիլ, բայց երբ այդ ածականները գործածողը Գուրզայանն է, ընթերցողը կզգայ թէ այդ բառերը կուգան ոչ միայն հասկացող հոգիի մը, այլ կուգան անկեղծութեան խորագոյն աղբիւրներէն<sup>5</sup>», -ընդգծել է սիրիահայ Թորոս Թորոնյանը:

Գույնների և գունանունների յուրահատուկ կիրառության ենք հանդիպում էսեններում. «Ստվերները այս նկարի շատ են խոսուն կապուտների, մանուշակագույնի, կարմիրների անթիվ, անհաշիվ երանգներով, շեշտակի

<sup>5</sup> **Թ. Թորոնյան.** Տասը օր «Կաքավաբերդի առեղծուած»-ին դիմաց. Ե., 2004, էջ 354:

անցումներով լանջերի դեղնանարնջագույն լուսավորվածությունից դեպի ստվերների կապտամանուշակագույն թանձրություննք...»[2, 8]:

Նկատելի է նաև ածականի փոխանվանական կիրառություն դրսնում. «Նրա կարմիրների առաջ պապանձվել կարելի է» [2,335]:

Հեղինակը խոսքն ամբողջացնելու, առավել համոզիչ դարձնելու համար հաճախ է կիրառում **առում են** բայաձեր. «Ասում են՝ նա Մոնա Լիզային՝ Զոկոնդային նկարելիս հրավիրել է երաժիշտներ, երգիչներ, անգամ ծաղրածու, որպեսզի Լիզան միշտ ծպտա» [1,11]:

Գր. Գուրզայշանը նկարագրող հեղինակ է: Նրա պատումներում գերիշխում է նկարագրական խոսքը, որն ավելի աշխույժ և դինամիկ դարձնելու համար երբեմն ընդմիջվում է ինքնահարցադրումով, որին և տրվում է պատասխան. «Եվ ահա դիմացս է Դոմերի պալատը, մի ճակատը և Մարկո հրապարակին նայող, մյուսը՝ ծովին: **Առաջին տպակորորդը ներ**. Ժպի՞տն է, այն՝ ժպիտը. պարզապես անհնար է չժպտալ՝ հանդիպելով այդ... պաճուծանքին» [1, 23]:

Գր. Գուրզայշանը երբեմն կառուցում է երկիխոսության յուրահատուկ կաղապար. առաջադրում է հարցը ու տալիս պատասխանը. «Ապրե՞լ են այստեղ՝ Կաքավածորում, ձմռանը: Անշուշտ»: Կամ՝ «Բայց կա՞ր լուծում, կա՞ր այլ հնարավորություն: Այն՝ կար, այն էլ Հոռմի ճիշտ կենտրոնում. ես նկատի ունեմ Պանթեոնը» [1,110]:

«Զոկոնդա» հստեղ սկզբնամասում գերիշխում են հարցական հնչերագի նախադասություններ. «Առաջին հարցը, որ տալիս են Փարիզից վերաբարձողին, դա է տեսա՞ր Զոկոնդան» [1, 7]: «Ի՞նչ է նա զգում այդ պահին, ո՞րն է տպավորությունը ակնթարթի: Զարմա՞նք, ապշա՞նք, պարզվում է, որ ոչ» [1, 7]: Հեղինակը, նկարագրելով Լեռնարդը դա Վինչիին, գործածում է բայ-բնութագրիչներ. «Նրա հետաքրքրությունները խիստ էին բազմազան. նա նկարում էր, նվազում տարբեր երաժշտական գործիքներ, գրում հոյակապ բանաստեղծություններ, ստեղծում մեքենաներ, գործիքներ, տեսակ-տեսակ սարքեր ու հարմարանքներ» [1, 10]:

Նկատելի է, որ հստեների նկարագրություններում հեղինակը հաճախ է կիրառում անկատար անցյալի բայաձեւեր, որոնցով նա ընդգծում և արժևում է արվեստագետի՝ անցյալ ժամանակում կատարած, բայց և շարունակվող հարաձիգ գործողությունը:

Ուական հարուստ կադապարով են հյուսվում միևնույն բառաձեւի փոխհաջորդումով կառուցները. «**Գույնը գոյենի կողքին** դնելու նրա կարողությունը կախարդիչ ուժ ուներ» [2,327]: «**Գիծը զծի վրա** անթիվ, անհամար անզամ, ասելիքը դարձնելով ուրվական հազիվ նշմարելի, փոթորկալից, տագնապալի անցյալ... ու ոչ պակաս տագնապալի ապագա...» [2,336]: «Մարիամը հանգիստ թերթում է **նկարի հետեւց**...լուր, անխոս...» [2,140]:

Պատմող հեղինակից զատ Գր. Գուրզայշանը նաև ուսուցանող հեղինակ է: Էստեղ լեզվական կաղապարների շերտերում դաստղական խոսքը կառուցվում է հեղինակի անհատականության դրսնորման ու ընթերցողի հան-

դեպ որոշակի վերաբերմունքի արդյունքում: Պատումներում առավել գործածական է բայց ներհակական շաղկապը, որը ստվրաբար արտահայտում է կապակցվող բաղադրիչների միջև եղած իմաստային այլայլ հակադրություններ: Բերված օրինակում եղելությունը, երևույթը ներկայացվում են հակադրության հիմունքով. «Եղնիկը գեղեցիկ է, բայց ինքը նկարել չի կարող: Տիեզերքը նույնպես գեղեցիկ է, բայց նա ել նկարել չի կարող և ոչ ել ստեղծել երաժշտություն և կամ գրել բանաստեղծություն: Բայց տիեզերքը ստեղծել է ավելի մեծ բան՝ մարդուն, և օժտել նրան հատկություններով, որ ինքը չունի. նա նկարում է, երաժշտություն է ստեղծում ու պրեզիա և դրանով էլ հարստացնում տիեզերքը: Այլ կերպ ասած՝ այն, ինչ տիեզերքը ուղղակիորեն չի կարողանում անել ինքը, անում է մարդու միջոցով և այդ կերպ հարստացնում իրեն» [2, 16]:

Գր. Գուրզայշյանը էսսեներում քննաբանում է դրույթներ և հաճախ հետևություններ անում. «Ո՞վ է ստեղծել Զվարթնոցը՝ հայտնի է, ո՞վ է ստեղծել Անիի Գագկաշենը՝ հայտնի է, ո՞վ է ստեղծել Բանաքը՝ հայտնի չլ» [3,88]: «Ես գրեթե համոզված եմ. Բանաքը եղել է առաջինը, Ներսես կաթողիկոսը եղել է Բանաբում, տեսել է նրա շինարարությունը, տեսել է մակետը ու ոգևորված վերադարձել է Էջմիածին հաստատ որոշմամբ. ստեղծել Զվարթնոցը ճիշտ և ճիշտ Բանաքի տիպի» [3,89]:

Գուրզայշյանը իր ասելիքն ընդգծելու համար հաճախ է կիրառում կըրկնում եմ բայց, որն արտահայտում է հեղինակի հաստատական վերաբերմունքը. «Բայց հատակագիծը, կրկնում եմ, հրաշալի է. դրա մեջ դասական շունչ կա, մոնումենտալություն. Զվարթնոցի հատակագիծից ես չեմ հագենում»[3,86]: «Բայց, կրկնում եմ, Բանաքի գաղտնիքը մինչև հիմա մնում է չբացահայտված»[3,88]:

Համեմատությունը էսսեների ամենատարածված արտահայտչամիջոցներից է: Դրանք հյուսվում են խոսքի գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով: «Ամբողջովին բնածին, ինչպես աղամանի մի խոշոր, անմշակ բեկոր, բայց աղամանը ի վերջո» [2,326]: «Սա խենքի պէս նետվում էր ավերակից ավերակ» [2,34]: «Չյունը հետ է քաշվում, հողն է սկսում ուրչել փիսրուն բլորուիք նման» [2,97]: «Նրա հզոր շունչը լողում էր դեռ այսբերգի նման վիթխարի օվլիխանոսում արվեստ» [2,6]:

Էսսեների պատումը ամբողջանում է նաև դարձվածային միավորներով, որոնք խոսքը դարձնում են ուժեղ և համոզիչ, գունագեղ և պատկերավոր: «Աշխարի խելքը քոցրել է Զոկոնդայի համար»: «Այս նկարը նստել է սրտի, ուզում եմ տեսնել ամեն օր ու ամեն օր ընկնել նոյն մտքերի մեջ» [1,3]:

Էսսեների խոսքաշարում նկատվում են շրջասական կապակցություններ, որոնք ներկայացվում են առարկայի կամ երևույթի ավելի ծավալուն բնութագրական հատկանիշով, այսպես՝ **Լեռնարդը դա Վինչի-** նուրը և խորը մտածող երևույթ [1, 13 ], **Միքանձելո-Վերածննի հսկա,** **Զորցոն-Վերածննի** վենետիկյան առաջնեկը, [1,15], **Արքիմեդ-խելագար** հանճար[2,158], **Մարտիրոս Սարյան, Հարություն Կալենց, Մինաս-Աստվածներ** գույների

[1,331], **Սարտիրոս Սարյան**-վրձնի մեր հանձարը [1,335], **Նիլս Բոր**-ատոմային դարաշրջանի գիգանտ, ատոմային հսկա նվազախմբի դիրիմոր [1,189]: Հանդիպում են նաև լեզվական բնութագրիչների՝ **հայ ժողովուրդ**-անշափ արևապաշտ, անշափ ռոմանտիկ, բայց և անշափ տառապած...[1,331], **Մինաս-ժողովուրդի դրդալից**, շառաչուն արձագանքը [2,335], **Միլվա Կապուտիլյան**-բարձրագույն չափը հայ բանաստեղծուհու [1,224], **Զվարթնոց**-հայկական ճարտարապետության խոշորագույն իրադարձություն[2,85], **Կարմրավորվագի միջնադարի տաճարային ճարտարապետության զմրուխտյա ակն** [3, 157], **Անի-Բագրատունիների էպոխայի ճարտարապետական հրաշք** [3,86], հազար ու մի եկեղեցիների քաղաք[3,48]:

Գր.Գուրզայյան աստղաֆիզիկոսը ընթերցողին գրավում է նաև հեղինակային իմաստալից մտքերով, թևավոր խոսքերով. «Կալենցը տարերը եր, բայց տարերայնություն նաև» [1,328]: «Արվեստը հարստություն է. նրանով կարելի է ապրել ու լինել երջանիկ...» [1,335]: «Հանձարները չեն մեռնում իրենց մահով» [1,336]: «Տիեզերքը չգիտի՝ ինչ է կարոտը. կարոտը մարդու հետ է միայն» [3,226]: «Երեք բան կա, որով կարող ենք գուրս զալ աշխարհի առաջ: Առաջինը մեր լեզուն է՝ հայոց լեզուն, մյուսը վաս միջնադարյան հայկական ճարտարապետությունը, երրորդը Նարեկացին: Չիննեին այս երեքը, աշխարհից ինչ-որ բան կապակասեր» [3,101]:

Ինչպես գեղարվեստական վավերագրության մյուս տեսակներում, էստեներում ևս խոսքն առավել ընդգրկուն և ամբողջական ներկայացնելու համար հաճախ քաղաքերվում են մեծերի մտքերը. «Մտաբերեցի Չայկովսկու խոսքերը. «Չիններ Հայդնը, չեր լինի Մոցարտը, չեր լինի Բեթհովենը...»: Ուժեղ է ասված» [2,17]: Կամ «Տվեր ինձ հենարան՝ երկրագունդը շուր տամ» (Արիստոտել) [2,158]:

Հեղինակը, դիտարկելով տարաբնույթ թեմաներ, գրքածում է տվյալ ոլորտը և այդտեղ գործող անհատներին ներկայացնող համապատասխան բառամիավորներ: Օրինակ՝ «Խրախճանք գույների» էսեում գործածված են կերպարվեստին բնորոշ բառեր ու բառակապակցություններ՝ նկար, գրին, կտավ, ստվեր, վրձին, էտյուդ, մատիտ, էսքիզ, գրաֆիկա, խզմզել, գունաշխարհ, բազմագույն, գույնի գքացողություն, գույների ծով, գունային կոմպոզիցիա, գունային սիմֆոնիա, գունային կերպարանք, գունային հարստություն, գունային զամամա և այլն: Այստեղ առատ են **նկար** բաղադրիչնով բառերը ինքնանկար, ինքնադիմանկար, զրշանկար, գծանկար, մատիտանկար, ձեպանկար, բնանկար, դիմանկար և այլն: Ֆժշկագիտության հարցեր են քննվում «Մի վնասիր» էսեում, որտեղ գործածված են տվյալ ոլորտի բառամիավորներ օրգանիզմ, վարակ, ապաքինում, ինքնաբրուժում և այլն:

Աշխարհագրական գիտաբարերի ենք հանդիպում «Ժրտան» էսեում՝ կոռորդինատ, աշխարհագրական լայնություն և երկարություն, Արեգակ, հասարակած, հորիզոնն, երկնային մեխանիկա, երկնային մարմին և այլն:

Էսաեների լեզուն հարուստ է նաև օտար բառամիավորներով՝ ինտուիցիա, դեֆորմացիա, էպիգրանություն, ավտոնոմ, վիրտուոզ, տրիումվիատ, էպոխա, դիլեմա, մողել, սենսացիա և այլն:

Էսաեների որոշ հատվածներ գեղարվեստական գյուտեր են, որոնք այնպահ հոգեհարազատ են ու գրավիչ: Ի նշ չքնաղ են Հայաստան աշխարհը, կրաքնությունը, բնաշխարհի պարզ ու հասարակ մարդիկ: Գրիգոր Գուրզադյանի գրքի տակ դրանք կենդանանում, ողի են առնում. «...Երևում են առաջին ծիլերը, առաջին ձնադիմիկը, հետո մասնուշակը՝ թաքնված տերենների տակ. կանաչն է բռնում սար ու ձոր...Աղջիկներն ու ջահել հարսները հանդերն են նետվում՝ բանջար հավաքելու՝ ծներեկ ու մանրակ, հայիկորիկ ու սիրեխ, շուշան ու փիփերթ: Բարկ թոնից նոր հանված լավաշի զգիսից բուրմունքն է լցվել շուրջբոլոր... Խոկ վերևում բարձր լաջվարդ կապուտակի վրա արծիվն է սահում թևատարած, հանդարտ...» [3,98]: Էսաեն իր լեզվաոճական հատկանիշներով կարող է մոտենալ գեղարվեստական վավերագրության մյուս տեսակներին՝ հուշագրությանը, ուղեգրությանը, օրագրությանը, բայց զգալիորեն հեռանալ նրանցից՝ աշքի ընկնելով յուրահատուկ և ինքնատիպ լեզվակառուցվածքային լուծումներով:

Կարելի է անվարան ասել Գրիգոր Գուրզադյանի էսաեներն աշքի են ընկնում լեզվաոճական հարստությամբ: Կարծում ենք արվեստի և գիտության շատ հիմնահարցեր լեզվական այսպիսի ձևով ու բովանդակությամբ մինչ Գուրզադյանը, արծածկած չեն եղել: Նա վերջին շրջանի մեր գեղարվեստական խոհագրության անկրկնելի վարպետն է: Միլիա Կապուտիկյանի բնորշմամբ «Գրիգոր Գուրզադյանի էսաեները բավականաշափ հաջող են. նա հազվագյուտ լեզու ունի»:

Galstyan Ashot - The Language in Grigor Gourzadyan's Essays.-The article discusses the language in the 20<sup>th</sup> century astrophysicist Grigor Gourzadyan's essays. It focuses on the phenomenon of interaction between different speech styles, unique resolutions of different grammar structures, non-standard solutions of linguistic chains. The question itself concerning the usage of descriptive language makes the deeply-thought prose more dynamic and lively.

Prior to G. Gourzadyan, no one has ever discussed so many cultural and scientific issues in such a linguistic form and content.

Галстян Ашот - Язык эссе Григора Гурзадяна .- В статье исследуется язык эссе армянского астрофизика 20-ого века Григора Гурзадяна. Здесь рассматривается явление взаимодействия различных стилей речи, самобытные формулировки грамматических строений, нестандартные решения языковых цепочек. Сама постановка вопроса описательной речи делают мыслительную прозу более бодрой и динамичной.

Многие основные вопросы культуры и науки таким языком и содержанием до Гурзадяна не были представлены.

**ԾԻՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆ» - ՈՒՄ**

Ծիսակարգի ոլորտում հայոց եկեղեցին երկար դարերի ընթացքում դրսերել է դրանք անփոփոխ պահելու հստակ սկզբունք, որից նահանջը պարունակել է դավադրություն, ազգուրացություն, լատին կամ մեկ այլ եկեղեցու քաղաքականության հետևողը դառնալու վտանգ: Հատկապես ծեսեր կատարելու խիստ կանոնական համակարգով է, որ հայոց եկեղեցին կարողացել է պահպանել իր ավանդապահ համբավը և ինքնուրուցնությունը:

Աստվածաշնչի մեկնությունն սկսելով Հնամատյանից՝ Գրիգոր Տաթեվացին Սուրբ Գրքի մեկնությունն «Գիրք հարցմանց»-ում ավարտում է կտակարանյան վերջին գլխով՝ Հովհաննու հայտնությամ՝ այսպիսով իր հարցումների գրքում ընդգրկելով հին և նոր կտակարաններն ամբողջությամբ: Հարցադրումները կատարվում են արարշագործությունից սկսած մինչև մարդու ներաշխարհի քննություն, դաշտանական վեճերից մինչև ճշմարտության վերհանման փիլիստիվայական վերլուծություններ, կենցաղից և ազգային սովորույթներից մինչև համամարդկային արժեքների դիտարկում:

Քննական մեկնության այս եղանակը, երբ հարցին հետևում են տասնյակ պատասխաններ և պարզաբանումներ, նույթը դարձնում է խիստ ընդգրկուն՝ հնարավորություն ընձեռնելով նույնիսկ իմաստային դաշտերով քննելու այս կամ այն ոլորտը: Մասնավորապես, եկեղեցուն և հավատին վերաբերող հարցերը հաճախ քննվում են առանձին գլուխներով, այսպես ասած թեմատիկ դաշտերով, որտեղ և հանդիպում են բազմաքանակ ծիսական հասկացություններ:

Հայագիտության մեջ հայտնի է Մարտիրոս Օրմանյանի «Ծիսական բառարան»<sup>1</sup>, որտեղ ըստ պատշաճի հավաքված և բացատրված են ծիսական, եկեղեցական, հոգևոր երաժշտության տերմինները: Հեղինակն աշխատության երրորդ մասում, կանխելով հնարավոր շահարկումները, նշել է, որ՝ «հանձն չենք առել կատարելու ոչ հնագիտական և ոչ էլ քննադատական աշխատություն, այլ լոկ առձեռն տեղեկություններ տալ և բավարարել բարեպաշտ ժողովրդին»<sup>2</sup>: Այնուամենայնիվ, «Գրիգոր Տաթեացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն»<sup>3</sup> աշխատության մեջ արդեն իսկ նշել ենք, որ «Գիրք հարցմանց»-ում կան հետաքրքիր տեղեկություններ այս կամ այն ծիսակարգի վերաբերյալ, որոնց անդրադարձ այս աշխատության մեջ չի եղել, չնայած հեղինակի մեկ-երկու դիտողությունից ակնհայտորեն երևում է,

<sup>1</sup> **Մ. Արք. Օրմանյան.** Ծիսական բառարան, Ե., 1992:

<sup>2</sup> Նոյնին, էջ 128:

<sup>3</sup> **Ա. Գրիգորյան.** Գրիգոր Տաթեացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե., 2014:

որ նշանավոր եկեղեցագետը և ազգագրագետը հրաշալի ծանոթ է Եղել Տաթևացու գրական ժառանգությանը: Մինչդեռ ի դեմս Գրիգոր Տաթևացու, ունենք հայոց եկեղեցու հենապուներից մեկին, որ ամենայն ջանք գործադրել է պահպանելու, ուսուցանելու, մեկնելու հայոց եկեղեցու առաքելացիր սկզբունքները, ուստի և ուսումնասիրողները Գրիգոր Տաթևացու գրական ժառանգությամբ առայսօր լուրջ համալրում են կատարում հայագիտության, աստվածաբանության, փիլիսոփայության և գիտական այլ ոլորտներում:

«Գիրք հարցմանց»-ում պատկառելի թիվ են կազմում նաև խնդրությունները:

Ներկա ուսումնասիրությամբ փորձել ենք ներկայացնել «Գիրք հարցմանց»-ում տեղ գտած ծիսական, եկեղեցական հարցադրումները և հասկացությունները՝ հարկ եղած դեպքում անդրադառնալով Մադաֆիա Օրմանյանի «Ծիսական բառարան» - ին:

Իմաստային դաշտերը քննելիս կարող ենք առանձնացնել բուն արարողակարգային կամ ծիսակարգին վերաբերող հասկացություններ և եկեղեցական տոններ, դրանք իրականացնող անձինք և առարկաներ, ժամակարգեր:

Այս բաժանումից զատ՝ կարելի է դրանք դիտարկել նաև երկու մեծ խմբերի հաշվառումով՝ հինկտակարանյան և նորկտակարանյան: Երկրորդ բաժանումը հետաքրքրական է այնքանով, որ հեղինակը չի խուսափել քննել նաև հեթանոսական և ազգային երևույթները, եկեղեցական տոնների հիմքերը և վերախմաստավորումները: Այս առումով, օրինակ կարող ենք բերել «Գիրք հարցմանց»-ի «Վասն Տօնից Հարցումն» վերնագրով 51-րդ Պրակը, որտեղ ծիսական հասկացությունները վերլուծվում են նորը հնի համադրությամբ՝ վերախմաստավորումների պարզաբանումներով. Երբեմն տրվում են պատմական բացատրություններ: Պրակում (անվանումը հեղինակինն է, որը գիրքը բաժանել է հասորների, գլուխների, պրակների) առկա են երկու տասնյակից ավելի ծիսական հասկացությունները, որոնց մի մասի բացատրությունը Մադաֆիա Օրմանյանի «Ծիսական բառարան»-ում բացակայում է: Այսպես, վերլուծելով հինկտակարանյան տոնները, Տաթևացին առաջինը նշում է **Շարարը** (գլխատառով բերում ենք՝ տոնը ընդգծելու համար-Ս.Գ.): «Ծիսական բառարան»-ում սրա բացատրությունն իբրև տոն չի բերվում, մինչդեռ այն հնում հրամայված տոնների շարքում առաջինն էր, որը քրիստոնեությամբ վերախմաստավորվեց Ս. Հարությունը խորհրդանշող Նոր Կիրակիով, ապա և՝ շաբաթվա բղոք կիրակիներով: «Նոր բարգիրք հայկացեան լեզուի» (այսուհետ՝ «Հայկացյան բառարան») բառարանը այն հիշատակում է իբրև «**տօն առ երրայլեցիս, իսկ յետ Քրիստոսի վոնեցա ի կիրակէ օր յարութեան Տեսոն**»<sup>4</sup>.

Հինկտակարանյան բաղադրակերքի, օրենքների տվյալներ, բավության և տաղավարահարաց տոնների բացատրությունը Տաթևացին բերում է քրիստոնեությամբ վերախմաստավորված տոնների զուգահեռներով. «**ևան՝ շաբաթն հանապազորդ, և ի նորս կիրակին:** Երկրորդ՝ **բաղադրակերքն** ազատութեան. և ի նորս

<sup>4</sup> Հ.Աւետիքեան, Հ.Միրմէլեան, Հ.Աւգերեան, Նոր բարգիրք հայկացեան լեզուի, Վենետիկ, 1836, հ.Ա, էջ 457:

**զատիկ** մեր զենաւ քրիստոս: Երրորդ՝ **յիսներեկին** տրչութեան օրինացն. որ է՝ **հոգոյ գալուստն**: Չորրորդ՝ **քառութեանն**. որ է **տօն խաչին**: Հինգերրորդ՝ **տաղավարահարքն**. որ է՝ **եկեղեցու տօն**: վասն այն զիաշին և **զեկեղեցուն ի միասին տօնեմք**: Այլ և բոլոր ամենայն տօնը հնոյն՝ **ը տօն էր**. զոր այժմ մեր ունիմք փոխեալ ի նորս<sup>5</sup>:

Փոքրիկ այս պարբերության մեջ մի կողմից ունենք «**բաղարջակերքի**, «**օրենքների տվյալթյան**», «**քավության**» և «**տաղավարահարաց**» տոնների, մյուս կողմից՝ «**նոր զատիկ**», «**հոգոյ զալուստ**», «**խաչի տօն**», «**եկեղեցու տօն**» ծիսական հասկացությունները: Հաջորդ պարբերության մեջ նոյն այս տոնների բացատրության շրջանակներում ավելանում են «**պասրայ**», «**շարաթապահը**», «**պիտուակոսի**» անվանումները. «Հինգերրորդ՝ **պասրայն**» որ է՝ բաղարջակերք: Եթ ի մեզ տօն զատիկն: Այլ և **շարաթապահը**: Վեցերրորդ՝ **յիսներեկան**: Եթ ի մեզ հոգոյն զալուստն ի պիտուակոսին: Եթ տես, զի տքա երերեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասրայն, և յիսներեկան, հաւասար ունին զմատուցմոնքն տօնից<sup>6</sup>:

Հայոց և ընդհանրապես քրիստոնեական եկեղեցու տաղավար տոններից մեծագույնը Տիրոջ ծնունդն է, որի վերաբերյալ Տարևացին բերում է ոչ միայն ամբողջական, այլև պատմական վերլուծություն. ինչո՞ւ և հայոց եկեղեցին **Ծընընյան և Հայտնության** տոնները նոյն կերպ են վարվել, ապա հարկադրաբար անցել այլ օրերի. «Կասն է՞ր ք ազգ հայոց զուս ծննդեանն քրիստոսի և մկրտութեան ի միում ատոր կատարեամք: Պատասխանի: Յառաջազգոյն ամենայն ազգը քրիստոնէից սկսեալ յատարելցոն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի գծունդն, և ի նմին ատոր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: Եթ որպէս կարգեաց տեառնեղայրն Յակոբոս զընթեցուածն. և ի նմին ատոր գերկու տօնս: Այլ և աստուածաբարն ի քրիստոս ծնեալ ճառին ասէ, այսօ՞ ասսուծոյ յայտնութեանս տօնն: Եթ քարեն ի Քրիստոսի ծնունդն յիսրական ճառին ասէ, անուն դիցուք տօնին **աստուածայայստնութիւնն**: Եթ այն է յայտնութիւնն որ հայր վկայեաց ի վերայ ոդոյն, և հոգին սուրբ աղանձնակերպ իշմամք: Եթ յս յամանէ: յայն է, զի սուրբքն գծունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և **յեսոս բաժանեցին ուսանք վասն բերիէիմի և յրդանանու:** Քանզի ո՞չ կարէն ի միում ատոր յերկուսեան ուստամ կատարել զնօնն եերի գործվ ի միւեանց. երսաւէմացիքն այս աղազար փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և այլ եկեղեցիք զնյն: Խոկ հայաստանայ քրիստոս որպէս ուսան ի սրբյն գրիգորէ անփիփոն կացին ի նմին: Եթ այլ վասն արտեմոնն. զի նա փոխեաց զնունդն ի դեկտեմբերի **իեկէ**: Եթ ասաց թէ առաքեարն քարոցին ի մէջն զնունդ փոլչին: Եթ էր արտեմոնն այս զինի առաքելցոն **թէ** ամառ սուր ինչ պակաս: Զոր այլը ասեն թէ յտն լ ամաց: Զի զմանէ՝ ասեն ասէ աւետարանին յիհաննէն (ի մէջն եին զի ո՞չ էին ի մէջն) և կարի յոյժ ստեն նորս: Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զոյն տօն ի իեկէ դեկտեմբերի. պատճառէլով թէ՝ **ի հոօմ դարձի արեգական տօն կատարեին**: և փոխեաց զան պետուս տօնել արեգականն արդարութեան: Եթ զինչ և իցէ պատճառաւ զկարգեալն առաքելցոն փոխեցին զնունդն և գուեառնընդառաջին տօնն: Ա՛րդ ցուցից տումարաւ զուսն մեր և զնցայն. զի տօնախմբութիւնն նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: Առնեն ի սեպտեմբերի **իեկէ** զայապանձումն զարպիային. և ի նմին ատոր զյուրիխն եղիսաբերի: Եթ անդի մինչ ի մարտի **իեկէ համարեն զ** ամիս, և անդ ասեն զաւետին: Եթ ի մարտի **իեկէ մինչ** ի դեկտեմբերի **իեկէ համարեն թ** ամիս և **ե** օր, և **ա՞նդ** ասեն զծունդն: Եթ ի փետրվարի երկուրն տեսանընդառաջ կատարեն: Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տեսան կոչւսից սասցաւ. որ է՝ սեպտեմբերի **ծր**: Եթ թշրինի **ծ միշտ** առաջին օր քառութեան. յորում մտաներ քահանայապետն ի սուրբն սրբոց: Ուստի եղի պապանձեալ զարպիա ի նմին ատոր: Եթ լինի սեպտեմբերի **իեկէ**, և թշրինի **ծ**: Եթ

<sup>5</sup> Գ.Տարեւացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 372:

<sup>6</sup> Նոյնին:

թշրինի ժե՛ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՝ հոկտեմբերի թ. և անտի մինչև ի իրն թշրին՝ և ի հոկտեմբերի թ կատարում տօնին: Եւ յդութիւնն եղասքերի յաւոր շարաբու ՚ի լուսանալ ժերորդ ամսոյն որ է թշրինի իգ: Ա րդ՝ աստի մինչ ի նիսանի ժե՛, և յապրիի է կատարի է ամիս: յորում առաքեցաւ զարդիկ և կոյսն մարիամ յաւոր չորեքշարաթու: Եւ անտի մինչև ի տրեթի խա՞ և յունվարի զ կատարի թ ամիս և ե օր: Եւ ասս ծննայ լինի բանն ասսուած յաւոր և շարաթու: Որ կատարի տեսանընդառաջն վեստրվարի ժդ: Ա րդ՝ կարգեցին բազմազան վկայութիւնն զոր հաստատապէս տօններ գծնունք քիչունդն ըրիստոսի ի վեցն յունվարի: Այսպէս և կիրեղ եկմի համախոն նմին: Այսպէս ընկայեալ ՚ի նոցանէ և նիփիսականն ժողովը՝ հաստատեցին առ մեզ: **Չոր ունի զայս տանի այժմ սորք և ուղիդ տանդապահ եկեղեցին հայստաննայց ըստ վկայութեան որ ենու:**<sup>7</sup>

Վերլուծությունից պարզ է դառնում, որ ծիսակարգն իր բացատրության մեջ ոչ միայն պատմական տարրեր է պարունակում, այլ եկեղեցու պարագայում՝ հաճախ նաև քաղաքական:

«Գիրք հարցմանց»-ում ըստ վերոբերյալ բաժանման առաջին խմբում (արարողակարգային կամ ծիսակարգին վերաբերող հասկացություններ և եկեղեցական տոններ) տեղ են գտել «ազապս մատաղաց», «աղօք», «բաղար-ջակերք», «եկեղեցոյ տօն», «Կիրակի», «հոգոյ զարուսո», «մկրտութիւն», «յիշաշէմ», «Նոր զատիկ», «ոգիշանզիսո», «պատարագ», «պասքայ», «պենտակոստ», «տաղաւարահարաց տօն», «տօն խաչի» հասկացությունները:

Երկրորդ խմբում են (ծիսակարգ և եկեղեցական տոններ իրականացնող անձինք, առարկաներ) «արոռոք», «աշշուանակ», «ապարօշն», «առաքեալ», «արտաքին զաիթին», «արտաքին սրահ», «բազպան», «քեմն», «զօտի», «եմիֆիորոն», «ժամատուն», «խարիսխ», «խորան», «խոյակ», «խոյրն», «կամար», «կոնքեն», «կուսանք», «հայրապետ», «ձգնաւոր», «ձրագ», «մարզարե», «մարտիրոսք», «միրրն», «նափորտն», «նիզք», «պատկերք սրբոցն», «սազաշէն եկեղեցի», «սրբութիւն սրբոցն», «սարկաւագունք», «սպասաւորք», «սփոխի», «սին», «վակաս», «վահան», «վարագոյր», «վարդապետք», «վարշամակն», «տէրութինք», «ուրար», «ուխտաւոր», «քահանայք», «քահանայապետք», «քերօքեր» հասկացությունները:

Երկրորդ խմբում են (ժամակարգերը, երգասացությունները, շարական-ները) «առաւօսութ երգն», «նաչեցարին», «կարդացմունք», «մեսեղի», «մեսեղի ձաշոյն», «ներբողեանք», «Ողոգումեան», «Ուղղիցին», «քարոզք» հասկացությունները:

Բերենք այս հասկացությունների քննությունը, որոնք առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

**Մկրտութիւն** - Եկեղեցու կարևորագույն այս խորիդի մասին հեղինակը խոսում է շատ հանգամանորեն. ինչու կինք չի կարող մկրտել, ինչու կրկնակի չեն կարող մկրտվել. քննարկում է անզամ մկրտության պահին հնչող նախադասությունը՝ նախապատվությունը տալով գրաբարյան «մկրտեմ» ձևին, իր օրերում տարածում ստացած միջնինհայերենյան «կու մկրտեմ» ձևի փոխարեն, որովհետև նրա կարծիքով՝ «Այս անուն ծառայ ասսուծոյ զնեալ արեամբն ըրիստոսի. եկեալ կամաւ յերախայութենէ ի մկրտութիւն: Մկրտի այժմ ի ձեռու

<sup>7</sup> Նոյնը, էջ 482-483:

իմ յանուն Նօր և Որդոյ և Հոգուն սրբոյ: Զոր և ազգն Ֆոանկաց այլայելով ասեն, ես կու մկրտեմ զքեզ յանուն Նօր և Որդոյ և Հոգուն սրբոյ: Զոր և անյարմաք շարաբանութեամբ զկո՛ն ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես կու մկրտեմ. երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ՚ի մկրտութիւն, այլ բռնութեամբ և ՚ի հարկ՝ կու մկրտեմ: Որ և ըստ այս կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն ՚ի մկրտողին առ մկրտեալն. զի պարզեր հոգուն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւասով խնդրողացն. ըստ որում թէ (ամենայն որ խնդրէ առնու) և այլն: Ապա ուրեմն ո՛չ վայելէ ասել թէ ե՞ս կու մկրտեմ<sup>8</sup>: Այսպիսով հեղինակը նկատել է երկու հանգամանք. «կու» մասնիկի արդեն իսկ հարկադրական բնույթ ձեռք բերելը, ապա նախադասության կառուցվածքի առումով «կու» -ն ուղիղ խնդիր դիտարկելը:

Մկրտության վերաբերյալ Տարևացին տայիս է չափազանց հետաքրքիր մի մեկնություն ևս, որով հատկապես ընդգում է ծիսակարգի կարևորագույն նշանակությունը քրիստոնյայի համար. մկրտությամբ մարդը դառնում է աստծո որդի և եղբայրը Քրիստոս՝ գերազանցելով այլայավաններին և անզամ՝ հրեշտակներին. «**մկրտութեամբն** լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք **զ** ազգաց. այսինքն հասարակ մարդկան, և իսրայելացոցն, և հրեշտակաց երկնից: ...Ա րդ՝ դաւանութեամբն գերազանց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրեից. և ծննդեամբն ՚ի հոգուն հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ՚ի հոգուն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: ...Նոյնպէս և ծնունդը սուրբ աւազանին ոքք են անդրանիկը և անդամբ քրիստոսի եղեալը, ազահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհն երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղան որպէս եսաւ: Եւ թէ լան և զղան բոլոր սրտի ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհն անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց<sup>9</sup>:

**Թղամութիւն – Հինկուտակարանյան այս ծիսակարգի մասին խոսելիս Տարևացին հրաշալիորեն երևան է հանում մեկնողական եղանակով քրիստոնեության բուն էությունը բացատրելու հմտությունը. Հին օրենքի կարևորագույն ծիսակարգերից մեկը՝ թղփատությունը, որն ուղղակիորեն պարտադիր կատարման ծես էր, Քրիստոսի պարագայում բացատրության կարիք ուներ. Անբերին ու Անսկիզը, Աննութը կարիք չուներ ծիսակարգով մաքրվելու, այլ միայն դրանով մեկնելու խորհուրդը և ազատելու հին օրենքի ծառայությունից. «Քրիստոս վասն է ք թղփատեցաւ: Ա րդ՝ զիինն զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՝ նորոյս սկիզբն էարկ մկրտութեան և շնորհաց: Զի իցէ ինքն սկիզ-**

<sup>8</sup> Նույնը, էջ 588:

<sup>9</sup> Նույնը, էջ 309:

բըն և կատարումն ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն<sup>10</sup>:

**Պատկեր** – Ազգագրական տարրեր է պարունակում **Պատկեր** ծեսի բացատրությունը «...պսակն է զուգաւորութիւն արուի և իզի. ունելով **անբաժանելի կենցաղավարութիւն**: Եւ այս ամման սկիզբն պսակն է. որ միանայ հարսն ընդ փեսային. և լինի ըստ **սահմանադրութեանն աստուծոյ** ծննդագրծութիւն: ...Որով լինի պսակս այս դաշն և կապ ի մեջ առն և կնոցն. որով լինի անքակ միութիւն: ...Եւ զիտելի է, զի պսակն սկսանի ՚ի նշանադրութիւնն, հաստատի **հաւանութեամբ սրտիցն** յորժամ յայտնեն բանի. զի երկուց կամաց **հաւանումն** հաստատէ զպակն: Իսկ կատարի պսակն օրինութեամբ քահանային. և մարմնական զուգաւորութեամբն: Իսկ թէ վասն է՝ թէ դնի նշան: Ասեմք թէ՝ որպէս ծառն որ նախ ծաղկի և ապա՝ պտղաբերի: Նոյնպէս և նշանն պսակին ծաղիկն է: Զի յայնմ հետու հարսն փեսային լինի նշանեալ, և փեսայն հարսինն է՝ յատկացեալ: ...Նոյնպէս և նախ նշան դնի հարսին: Իսկ հաւանումն երկուց կամացն՝ հաստատութիւն է պսակին: **Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն:** ...Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպակն տեսանեն զմիմեանն. և հաւանին սրտիք և կամօր և ապա՝ պսակին: Իսկ ի կատարումն պսակին՝ նախ է՝ օրինութիւն քահանային, և ապա՝ մարմնական զուգաւորութիւն<sup>11</sup>: Ինչպէս տեսնում ենք, եկեղեցու կարևորագույն ծեսը Տաթևացու մեկնությամբ նախ՝

- աստծո սահմանադիր կանոնն է
- անբաժանելի կենցաղավարությունն է
- համաձայնությունն է տղամարդու և կնոջ միջն
- երկու սրտի հավանությունն է
- երկու կողմից կամքի և համաձայնության դրսորում, և որ ամենակարևորն է՝ բռնությամբ կամ առանց համաձայնության Վարդապետը բացառել է պսակադրությունը:

**Զիհարեւություն** – Ըստ Տաթևացու մինչքրիստոնեական զրիաքերությունները նախապատրաստել են պատարազի խորհուրդը: «Կրկին եր ողջակեզն. մին որ արտաքոյ այրէին: Եւ միւսն ի սեղանն ի հոտ անուշից: Նշանակ՝ զպատարազիլն քրիստոսի ի սեղան խաչին ի հոտ անուշից հօր և հոգոյն: Այլ և արտաքոյ քաղաքին ի կողմն հիւսիսոյ: Իսկ միւս խոյն կատարմանն, քահանայիցն կերակուր և նուերքն մովսէսի: Այն է որ ի վերնատունն զմարմինն և զարինն իւր քաշխեաց յառաքեալսն: Դարձեալ կրկին է ողջակեզն. մին վասն մեղաց որ է կամատր. և միւսն յանցանաց որ է ակամայն: Եւ մի է քաւութեան պատարազն քրիստոսի. մեղաւորին և յանցաւորին: Դարձեալ կրկին ողջակեզն. մին վասն մեղաց. և միւսն վասն սրբութեան: Վասն մեղաց ո որ խոստովանութեամբ արտաքոյ եւեալ ի մեղաց և ապաշխարութեամբ

<sup>10</sup> Նոյնը, էջ 485:

<sup>11</sup> Նոյնը, էջ 609- 610:

քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: Եւ ողջակեզ սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զքարիս գործել, և զքովանդակ զիոջի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: Եւ զմորթ մեղաց մերկացեալ ի մէնջ որ է՝ հաճոյ աստուծոյ ի հոտ անուշից<sup>12</sup>:

Քրիստոսի զոհաբերությունից հետո ողջակեզը ամբողջությամբ ձեռք է բերել հոգևոր խորհուրդ և Պատարագը ամբողջությամբ փոխարինել է ողջակեզին. «Դարձեալ՝ կրկին ողջակեզն, մին այն է որ մատուցանեմք զատարագն քրիստոսի մարմնոյ և արեան: Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարի ունելով<sup>13</sup>»:

**Կիրակի** – Քրիստոնեական եկեղեցու հրամայված տոններից մեկն է Կիրակին է: Իսկ ինչո՞ւ հատկապես Կիրակին կամ Միաշաբաթը: «Զի՞նչ է յատկութիւն միաշաբաթ աւուրս որ է կիրակէն: Պատասխանի: Նախ զի սկզբն և առաջին է ամենայն աւուրց. զի նա կրկնելով առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր, հրեշտակը և լոյսն և այլ տարերք. որ են է գործք արարչութեան: Երրորդ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեան. և տուշութիւն օրինացն ի կիրակէ եղեւ: Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբն քրիստոսի. և իշմամբ հոգույն սրբոյ ի դասս առաքելոցն: Հինգերրորդ՝ օ ր է հասարակ յարութեան մարդկան. և զալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց<sup>14</sup>»:

**Ուխտաւոր** – Այս բացատրության պարագայում էլ Տաթևացու մեկնությունը համատեղում է մարմնավորը և հոգևորը. «Ուխտաւոր է որ ապաշխարէ վասն մեղաց: Նախ զերծու զիերն. և զոր ուխտիւն աձէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն ուխտին: Եւ այս է զերծուլն, զառաջին գործեալ մեղքն սրբել խստովանութեամբ. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: Ի զինոյ և ի ցրոյ պահել, զի մոռացելու և քնու և ծոյլ և ապուշ առնէ զինին: Եւ քացախ ո՞չ ուտել, զի ապականութիւնն է: Եւ ո՞չ զկորիզն, զի ի բաց ընկենի է: Եւ ո՞չ զխաղող, զի գրօսանք է: Եւ ո՞չ զշամիչն, զի արևակէ զ է և պակաս ի զօրութեն: Եւ այսպիսիք ամէն ո՞չ են յարմար ուխտականի: Եւ ի յանապատն միս ուտելոյ հրաման ո՞չ ունեին. որպէս և ո՞չ ի դրախտին: Ապա յայտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է կրօնաւոր, ի զինոյ ի մրգոյ և ի մսոյ պահեցէ<sup>15</sup>»:

Այսպիսով, անգամ խիստ սեղմ վերլուծությամբ ակնիայտ է, որ ծիսական համակարգում էլ համադրելով իին ու նորը՝ Տաթևացին կարողացել է ուրույն խոսք ասել:

<sup>12</sup> Նոյնը, էջ 362:

<sup>13</sup> Նոյնը:

<sup>14</sup> Նոյնը, էջ 193:

<sup>15</sup> Նոյնը, էջ 389:

Grigoryan Susanna- Fundamental Ritual Concepts in the "Book of Questions" of Grigor Tatevatsi.- The Armenian studies in theology, philosophy and other fields of science have considerably been enriched by the literary legacy of Grigor Tatevatsi. His "Book of Questions" also includes a great number of ritual concepts and their interpretations, which are not referred in Maghaqia Ormanyan's "Dictionary of Rituals" famous in the Armenian studies.

We have tried to fill in that gap with the help of this study.

Григорян Сусанна-Основные обрядовые понятия в "Книге вопросов" Григора Татеваци.-Исследования армянского богословия, философии и других областей науки в значительной мере обогатились творческим наследием Григора Татеваци. Его "Книга вопросов" содержит большое количество обрядовых понятий, а также их толкований, не упомянутых в "Словаре обрядов" знаменитого исследователя Магакии Ормания.

При кратком анализе становится очевидным, что и в системе обрядов, сопоставляя старое с новым, Татеваци смог сказать свое слово.

## ՏԵՔՍՏԻ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հումանիտար և բնական գիտությունների աննախընթաց զարգացման պայմաններում ի հայտ են գալիս լեզվական համակարգի ուսումնասիրության նորանոր բնագավառներ, որոնց քննության առարկայի և գործադրած մեթոդների ամբողջությունը կազմում է լեզվաբանական նոր ուղղությունների բովանդակությունը։ Խոսքը վերաբերում է լեզվաբանական այն ուղղություններին, որոնք լեզուն ուսումնասիրում են բոլորովին նոր տեսանկյունից այն դիտելով որպես բազմապլան և բարդ կառուցվածք։

Այսպես, այդ ուղղություններից յուրաքանչյուրը լեզուն ուսումնասիրում է որպես հաղորդակցման կարևորագույն և հիմնական միջոց (հաղորդակցական լեզվաբանություն), որպես ձանաշղղական հիմնական գործառույթ կատարող (ձանաշղղական (կողնիտիվ) լեզվաբանություն), որպես հոգևոր նյութական մշակույթի բաղադրիչ և մշակութային գործիք (լեզվամշակութաբանություն), որպես համացանցի դարաշրջանի աշխատանքային գործիք և հեռավար ուսուցման միջոց (համակարգչային լեզվաբանություն), որպես տեքստային հաղորդակցության գործիք և միջամտածային հարաբերությունների բացահայտման միջոց (տեքստի լեզվաբանություն), որպես քաղաքական խոսույթի կազմակերպման միջոց (քաղաքական լեզվաբանություն) և այլն։

Լեզվաբանական «երիտասարդ» ուղղություններից է տեքստի լեզվաբանությունը, որ անմիջական կապերի մեջ է գտնվում և մի շարք գիտաճյուղերի հետ, ինչպիսին են ոճագիտությունը, խոսքի մշակույթը, ձարտասանությունը։ Նրա ուսումնասիրության առարկան են համարվում տեքստը, վերջինիս կառուցվածքը, ինչպես նաև նրա կառուցվածքային բաղադրիչները, լեզվական միջոցներն ու վերջինների կապակցման օրինաչափությունները։

Տեքստի լեզվաբանությունը ձևավորվել է XX դ. 60-ական թվականներին, մինչև 80-ական թվականները այն փաստացի եղել է սոսկ լեզվական միավորների վարքագիծն ուսումնասիրելու միջոց։ Այդ գիտաճյուղի զարգացման վերջին շրջանում տեքստի լեզվաբանության հետազոտության առարկան համեմատաբար ընդլայնվել է, իսկ տեքստի ուսումնասիրման հարցերով գրադիմում է միայն լեզվաբանության որոշակի բնագավառ։

Ձևավորման սկզբնական շրջանում տեքստի լեզվաբանությունը սահմանափակվում էր կապակցված տեքստի կառուցման կանոնների ու նրա իմաստային կարգերի ուսումնասիրությամբ։ հետազոյում տեքստը ուսումնասիրվում է որպես հասարակության խոսքային արտադրանք, որ ներառում է լեզվի տեսական ու գործառական որոշակի բնագավառներ, ինչպես իմաստաբանությունը, խոսքային գործունեության տեսությունը, գործառական ոճարանությունը։ Մյուս կողմից նրա առարկան առնչվում է մի շարք գիտա-

ձյուղերի կամ գիտակարգերի՝ հոգելեզվաբանություն, նշանագիտություն, գրականագիտություն, ինֆորմատիկա, տրամաբանություն և այլն:

Այս ամենով հանդերձ, տեքստի լեզվաբանության սահմանները դառնում են առածական, և բնական հարց է առաջանում՝ արդյո՞ք այն ներառում է լեզվի տեսական ու գործնական բաժինները, կամ ինչպես է այդ գիտակարգը հարաբերակցում լեզվաբանական միուս գիտաճյուղերի հետ:

XX դ. 60-ական թվականներին լեզվաբանության մեջ ի հայտ եկավ՝ նոր՝ այսպես կոչված իմաստակառուցվածքային ուղղությունը, որի հետագոտության առարկան էին կազմում տեքստի ձևավորման խնդիրները, նրա ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային մեխանիզմները, ոճական հնարների կապակցման օրինաչափություններն ու տեքստի գործառնական որոշակի հատկանիշները:

Այդ նույն ժամանակ ի հայտ եկան մի շարք ուղղություններ, ինչպես՝

ա) տեքստի ընդհանուր լեզվաբանություն, որն արտացոլում է տեքստի գոյարանական բնութագիրը, նրա կարգավիճակը (Ա. Ա. Ալիշինա, Ի. Վ. Արնոլդ, Դ. Լ. Գալապերին, Տ. Ս. Նիկոլաևա),

բ) տեքստի պրազմատիկ լեզվաբանություն, որտեղ վերլուծվում է հեղինակի և ընթերցողի վրա տեքստի բռնած ազդեցության բնույթը (Թ. Ա. վան Դելի, Է. Խ. Ազնաուրովա, Գ. Վ. Կոլշանսկի, Յու. Ս. Լոտման, Գ. Վ. Ստեպանով),

գ) իմացարանական ուղղությունը, որ տեքստում արտացոլում է իրական աշխարհի բնութագիրը, հոգեբանական մոտեցումը, որ վերաբերում է տեքստի ընկալմանը և վերաբերման յուրահատկություններին (Ե. Ն. Տարասով, Յու. Ս. Սորոկին) և այլն:

Այս ուղղությունները տեքստի ուսումնասիրության բնագավառում որդեգրեցին նորովի մոտեցումներ, ինչպես՝

ա) տեքստաբանական մոտեցում, երբ ուսումնասիրվում է նրա ըմբռնումը (Գ. Ի. Բոզին, Ռ. Վ. Սկոտարենկո),

բ) տեքստի մեխանրանություն (Վ. Զ. Դեմյանկով, Վ. Ա. Դոլինին, Վ. Ա. Կուխարենկո, Գ. Գ. Մոլչանովա),

գ) **հանրահոգելեզվաբանական և նշանահոգելեզվաբանական մոտեցումներ** (Ա. Ի. Բարայլով, Տ. Ս. Դրիդե, Օ. Դ. Նասումով),

դ) լեզվամշակութաբանական մոտեցում (Վ. Ա. Շակեինը և նրա դպրոցը),

ե) լեզվահուսորական մոտեցում (Ա. Ա. Վորոժբիտով, Ա. Վ. Միխալսկայա), ճանաչողական մոտեցումը (Զ. Յա. Տուրաև, Ե. Ս. Կուբրյակովա, Ն. Ն. Բոլդիրի):<sup>1</sup>

Ժամանակակից մոտեցումներում առաջնային է դիտվում տեքստի ուսումնասիրության խոսութային մոտեցումը (дискурсивный подход), թեև յո-

<sup>1</sup> В. А. Маслова, Современные направления в лингвистике, М., 2008, кг 21-22:

սույթի իրողությունն ավելի լայն բռվանդակություն ունի, քան «լեզու» հասկացությունը:

Տեքստի լեզվաբանական տեսությունը ձևավորվեց վերոնշյալ ուղղությունների և լեզվաբանական մոտեցումների հիման վրա, որ միաժամանակ դարձավ տեքստի նկատմամբ եղած բոլոր մոտեցումների յուրահատուկ հանրագումար:

Տեքստի հետազոտության ժամանակակից բոլոր ուղղություններում առանձնացնում և ընդունում են տեքստի հետևյալ հիմնական բնութագրական հատկանիշները՝

- ա) հաղորդակցական ուղղվածությունը,
  - բ) իմաստակառուցվածքային ամբողջականությունը,
  - գ) նպատակայնությունը,
  - դ) հաղորդման ամբողջականությունը,
  - ե) փոխակերպական բնույթը,
  - զ) երկիրուսության կառուցվածքը,
  - է) իմաստային ձեղքվածքի առկայությունը,
  - ը) հեղինակի մտադրությունը,
  - թ) բազմաչափությունը,
  - ժ) ենթատեքստի առկայությունը,
- Ժամանակակից բառությունը որոշակի ընթերցողների նկատմամբ,
- ԺԲ) իրավիճակի համապատասխանությունը և այլն<sup>2</sup>:

Ինչպէս է բնութագրվում տեքստը տեքստաբանական ժամանակակից ուղղություններում:

Տեքստը համակարգված կառուցվածքային բարձրագույն ձև է, որ բովանդակում է որոշակի հաղորդում աշխարհի մի հատվածի վերաբերյալ, կազմված է հեղինակի մտահեղացումով, ունի կոմպոզիցիոն, իմաստաբանական և պրազմատիկ ամբողջականություն, վերամշակված է ըստ լեզվի գործառական ու ոճական նորմերի:

Տեքստի բնութագրական հատկանիշներից է բովանդակության կարգը, որ իրեն է ենթարկում կարգային անդամներին, որոնք մտնում են տեքստի հաղորդակցական բովանդակության մեջ՝ ապահովելով լեզվական ձևի ու բովանդակության համապատասխանություն:

Որպէս բարդ երևույթ, տեքստը բազմաֆունկցիոնալ իրողություն է. նա միաժամանակ թե՝ հաղորդում և թե՝ պահպանում է տեղեկությունը՝ հանդես գալով թե՝ որպէս մշակույթի առկայության ձև և թե՝ ընդհանուրի ու մասնավորի կննսակերպի հոգեբանական արտացոլանք, թե՝ որոշակի պատմական դարաշրջանի և թե՝ տարրեր դարաշրջանների արտադրանք և այլն:

Իր ձևակորման նախնական փուլում տեքստի լեզվաբանությունը ավանդաբար հետազոտում էր տեղեկության ներտեքստային միավորների կապերն ու նրանց համակարգային հարաբերությունները, մինչդեռ նորագույն

<sup>2</sup> В. А. Маслова, նշվ. աշխ., էջ 26:

ժամանակներում ի հայտ են գալիս փորձեր, որոնք հետազոտության առարկան դիտարկում են տեքստից դրւու, որոնում են լեզվաբանական ավելի մեծ միավոր, ինչպիսին, ասենք, մշակույթի միավորումն է, որի բաղադրիչներից մեկն է համարվում տվյալ տեքստը:

Լեզվաբանական այդ մեծ միավորը հիպերտեքստն է, որ դիտվում է տեքստային տեղեկության պահպանման և ներկայացման յուրահատուկ ձև։ Հիպերտեքստը մեկ ամբողջության մեջ է միավորում բազմաթիվ այլ տեքստեր, որի հետևանքով ձևավորվում է այսպես կոչված *ոչ գծային* տեքստը։

Ինչպես նշեցինք, նորագոյն ուսումնամիավորություններում տեքստի նկատմամբ ցուցաբերվում է նաև *խոսութային մոտեցում*։

**Խոսույթը** լեզվաբանական հասկացություն է։ Այն կապակցված տեքստն է՝ վերցրած իր գործընթացային ասպեկտով։ Խոսույթը դիտարկվում է իր արտայկազման հանրամշակութային, հոգեբանական, պրազմատիկական, բառա-ինտոնացիոն և այլ գործոնների ամբողջության մեջ։ Այն ներկայանում է որպես հանրության անդամների ինտերակտիվ գործունեություն, որ ապահովում է նրանց համագործակցությունը՝ ունենալով որոշակի ազդեցություն նրանց վրա (զգայական, տեղեկատվական, բառական և ոչ բառական մակարդակներով)։ Խոսույթի բովանդակության մեջ արտացոլվում են որոշակի դարաշրջանի ներկայացուցիչների գաղափարաբանությունը, մտածողությունը, հաղորդակցական ուղղվածությունը և այլն։

Խոսույթը բաղկացած է նախադասություններից կամ նրանց հատվածներից, իսկ խոսույթի բովանդակությունը հաճախ կենսարձնանում է ինչ-ինչ հենակետային կոնցեպտի շուրջ, որ կոչվում է խոսույթի *հիմնական թեմա* կամ *խոսութային թեմա*։

Խոսույթի կառուցվածքում գլխավորը այն մտքերն են, որոնցով արտահայտությունները ընդարձակվում են հաղորդակցության ընթացքում։

Ո՞րն է խոսույթի և տեքստի տարբերությունը։

Խոսույթը արտաքերվող տեքստն է, իսկ տեքստը արտասանվածքի քերականորեն վերացարկված կաղապարն է։

Խոսույթ հասկացությունն ունի որոշակի մեկնություններ։

- 1) խոսույթը որպես որոշակի խոսակցություն,
- 2) խոսույթը որպես խոսակցության ձև,
- 3) խոսույթը որպես ժանր (նորությունների՝ բաղաքական՝ գիտական խոսույթ),
- 4) խոսույթը որպես հասարակական կացութածել (այն վերաբերում է առանձնահատուկ պատմական շրջանի, հասարակության խմբի կամ ամբողջ մշակույթի)<sup>3</sup>։

Ժամանակակից ըմբռնումով՝ տեքստ հասկացությունը նշանակում է լեզվական ձևական-վերացարկված կառուցվածք, իսկ խոսույթը ներկայացնում է նրա հրատապության տարբեր դրսնորումները, որոնք, արտալեզվա-

<sup>3</sup> **Բ. Ա. Մասլօվ**, նշվ. աշխ., էջ 41։

բանական գործոններով պայմանավորված, դիտարկվում են մտավոր գործունեության տարրեր տեսանկյունից<sup>4</sup>:

- Ի մի թերելով խոսույթի և տեքստի ընդհանրություններն ու տարբերակիչ զծերը՝ մասնագիտական գրականության մեջ նկատում են՝
1. տեքստի կառուցվածքային կաղապարը, իր եռթյամբ լինելով վիճակագրական, չի արտացոլում տեքստի եռթյունը,
  2. տեքստը համարվում է հաղորդակցության արդյունք, որ պետք է դիտարկվի մշակութային համատեքստում,
  3. տեքստը և խոսույթը տարբեր, սակայն իրական երևույթներ են,
  4. խոսույթի շրջանակներում կարևոր դերը պատկանում է լեզվական անհատին (խոսույթին // հեղինակին և լսողին // կարդացողին),
  5. խոսույթը տեքստն է, որ կապված է պրագմատիկ մշակութային, հոգեբանական և այլ գործոններով,
  6. խոսույթը ներառում է նաև խոսքի հարալեզվարանական ուղեկցող միջոցների ամրողությունը (դիմախսադ, ժեստեր և այլն),
  7. խոսույթն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները, որոնք թելադրվում են նրա կառուցվածքով՝ ոիթմական, հաղորդական (որ բառը կապում է տվյալ առարկայի հետ), իմաստարանական (ինչպես՝ դիմախսադն ու ժեստերը, որոնք ուղեկցվում են որոշակի նշանակություններով), զգայական-գնահատողական (զրուցակից վրա ազդելու գործառույթով) և այլն<sup>5</sup>.

Խոսույթի կառուցվածքային բաղադրիչներ են համարվում նախադասությունները կամ նրանց հատվածները, իսկ նրա բովանդակությունը ձևափորում է հենակետային որևէ կոնցեպտ, որ կոչվում է խոսութային թեմա: Խոսույթի կառուցվածքում գլխավոր են համարվում այն մտքերն ու դատողությունները, որոնցով արտահայտությունները ընդարձակվում և լրացնիչ իմաստավորումներ են ներկայացնում հաղորդակցության ընթացքում:

Լեզվական և արտարկեզմական իրողությունները խաչաձևվում են խոսույթի իմաստարանական կտրվածքում, մյուս կողմից խոսույթի իմաստների ձևավորման հարցում վճռական նշանակություն ունեն երկու հիմնական գործոններ՝ լեզվական նշանակություններն ու հանրամշակութային իմաստները, որոնց շրջանակներում էլ ծագում և ձևավորվում է տվյալ տեքստը: Խոսույթի իմաստարանական հիմքը կազմող վերնշյալ իմաստները արտահայտության պլանում բացահայտուն չեն արտահայտվում:

Խոսույթի վերաբերյալ նորագույն ուսումնասիրություններում խոսույթի տեսությունը բուրն քննարկման է ենթարկվել բանասիրական և լեզվարանական ասպեկտներով: Հատ այդմ, խոսույթն ուսումնասիրվում է որպես տար-

<sup>4</sup> Խոսույթի բնրժնան այլ տեսակների մասին տե՛ս՝ Ա. մասնավորաբ, **Бисмалиева М. К.**, *О понятиях “текст” и “дискурс” // Филологические науки*, М., 1992, N 2: **Дымарский М. Я.**, *Проблемы текстообразования и художественный текст*, СПб. 1998. **Конецкая В. П.**, *Социология коммуникации*, М., 1997.

<sup>5</sup> Տե՛ս **Маслова В. А.**, նշվ. աշխ., էջ 45-46:

թեր բաղադրիչների միասնական գործընթաց, որ կարող է դիտվել հաղորդակցական գործընթացի միջուկ:

Խոսույթի հասկացությունը ծագել է նախադասությունից դուրս գալու լեզվաբանության հետաքրքրությամբ. եթե դեպքի վերֆրազային շարահյուսություն. խոսույթի տեսաբառները օգնում են նորովի մեկնարաներու շարահյուսական մի շարք իրադրություններ:

Այդ առումով վերանայման կարիք են զգում արտահայտության և խոսույթի հիմնական հատկանիշները:

Արտահայտությունը կազմված է ֆրազի հաջորդական հատվածներից, խոսույթը, առանձին վերցրած, արտահայտություն է, որ դիտարկվում է ճանաչողական համակարգերի տեսանկյունից: Այնուամենայնիվ, արտահայտության և խոսույթի փոխհարաբերության հարցադրումը դեռևս վերջնականորեն չի լուծվել: Մի կողմից՝ մասնագետները վկայում են, որ խոսույթի կառուցվածքից դուրս արտահայտությունը գոյություն ունենալ չի կարող որպես տեքստի առանձին միավոր, մյուս կողմից պնդում են, որ արտահայտությունը, որը ծագում է խոսույթից և դիտվում է նրա կառուցվածքային բաղադրիչը, ոչ միայն խոսույթից դուրս դիտվում է իմաստաբանորեն ինքնուրույն միավոր, այլև ընդունակ է արտացոլելու խոսույթի կառուցվածքն ու բովանդակությունը, պահպանելու իմաստաբանական հիշողությունը նախատեսատի և հետաքրստի մասին և այլն:

Խոսույթը գործնական դաշտում ճանաչված երևույթ է, առարկա, որի ուսումնասիրության ընթացքում պահանջվում է գտնել մեկնաբանության այնպիսի մեթոդ, որի միջոցով հնարավոր լինի բացահայտել նոր մոքեր (իմաստներ), որոնք մինչ այդ «թաքնված էին» խոսույթի բովանդակային տարածքում:

Մենք նշեցինք, որ խոսույթը բազմաֆունկցիոնալ գործառույթ ունի. ըստ այդմ, այն լայն կիրառություն ունի միջմշակութային հաղորդակցության ուսումնասիրություններում: Գործառական խոսույթի բովանդակային կտրվածքներում որոշակի թեր ունեն մշակութային գործուները: Միևնույն թեման արտացոլող խոսույթները կախում ունեն տարբեր խմբերի մշակութային մակարդակից, որոնք ստեղծում են այդ խոսույթները:

Ժամանակակից ուսումնասիրություններում խոսույթի բնագավառ է ներմուծվում նաև գեղարվեստական տեքստը. այլ կերպ ասած գեղարվեստական տեքստը մեկնաբանվում է խոսույթի դիրքերից, նրա նկատմամբ կիրառում են խոսութային տարբեր մոտեցումներ (տեքստաբանական, տեքստի մեկնաբանության, ընդհանուր լեզվաբանական, իմացաբանական, հանրահոգելեզվաբանական, լեզվամշակութաբանական և այլն):

Այդպիսի մոտեցումների դեպքում հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են ոչ թե ավարտված տեքստի և նրա կառուցվածքի մեկնաբանությանը, այլ նրա գործառական դերի բացահայտմանը մշակույթի բնագավառում: Հայտնի է, խոսույթն առնչվում է թե՛ լեզվին և թե՛ գեղարվեստական հաղորդակցության կողմերի մտային գործընթացներին: Դրա համար նկա-

տում են, որ գեղարվեստական տեքստը թե՝ լեզվի կառուցվածքային մակարդակների և մակարդակային միավորների իրացման դաշտ է և թե՝ խորամտածողական գործունեություն, որ սահմանափակվում է խորացյին գործունեության կառուցվածքի առանձնահատուկ միջոցներով՝ պայմանավորված գեղարվեստական խոսքի տարածական սահմաններով:

Ինչպես նշվեց, խոսութային մոտեցումը հիմնական ուշադրությունը դարձնում է որոշակի մեխանիզմների, որոնք բացահայտում և մեկնաբանում են լեզվի և մշակույթի փոխարաբերություններն ու նրանց միջև առկա էական կապերը. լեզուն և մշակույթը դիտվում են որպես մարդու գիտակցված հոգևոր և նյութական ստեղծագործության արյունը: Ընդունված է ասել, որ այդ կապերի համատեքստում լեզուն դառնում է խոսութային գործնրացների բազա և իմաստների վերաբարդրման անհրաժեշտ պայման: Իմաստի լեզվաբանական տեսությունը ավանդաբար իմաստը կապում է բառի կամ արտահայտության բովանդակային կառուցվածքի հետ, որ դրսորվում է հնյունական որոշակի բաղանթով, մինչդեռ այդ տեսությունն այժմ իմաստը համարում է խոսութային կացութաձևներում պատմականորեն ձևավորված զադափար, որ ընդհանուր է տվյալ հանրության բոլոր անդամների համար՝ անկախ տարածական և ժամանակային (դարաշրջանային) գործոններից:

Վերոբերյալ հարցադրումները ցույց են տալիս, որ լեզվաբանական բընույթի հետազոտությունները նվաճել են նոր ասպարեզներ ու նոր բնագավառներ, և հարցադրումների այդ շրջանակներում տեքստի լեզվաբանության խնդիրները պատկանում են այդ բնագավառի առաջնահերթությունների թվին:

**Khachatrian Lalik -Text Linguistics Issues.** - Text Linguistics is considered to be one of the most important areas of modern linguistics, which is closely linked to the rhetoric, psychological issues and doctrines of functional styles and with different directions of speech. As an independent discipline, it examines the text and its structure, as well as the regularities of the connections of the structural elements of the text.

It singles out the discursive approach to the analysis of the text. The text is a product of communication, and the discourse is a text associated with pragmatic, cultural and psychological factors.

The discourse refers to the speech, and the text refers to the structure of the language and is considered to be a formal linguistic knowledge.

**Хачатрян Лалик - Вопросы лингвистики текста.** - Лингвистика текста – это одно из важнейших направлений современной лингвистики, которое тесно связано с риторикой, с психологическими вопросами и учениями о функциональных стилях, а также с разными направлениями разговорной речи. Как самостоятельная дисциплина, она изучает текст и его структуру, а также закономерности связей структурных элементов текста.

Выделяется дискурсивный подход к анализу текста. Текст является продуктом коммуникации, а дискурс, это текст связанный с pragmatическими, культурными и психологическими факторами.

Дискурс относится к речи, а текст – к структуре языка и считается лингвистически формальным знанием.

ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉԻ ԱՆՁԻ ԵՎ ՆՐԱ  
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՑ»-Ի ՄԱՍԻՆ

Վարդան պատմիչի՝ 1870թ. Երուսաղեմում լույս տեսած «Պատմութիւն թաթարաց» աշխատության և հեղինակի ով լինելու մասին կան տարակարձություններ: Ոմանք գտնում են, որ Վարդան պատմիչը Վարդան Արևելցին է, և սույն աշխատությունը պատկանում է Վերջինիս գրչին, ոմանք էլ կարծում են, որ այդ երկը և Հերում պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը նույնն են, այսինքն՝ կասկածում են, որ Վարդան պատմիչ անունով անձնավորություն գրություն է ունեցել:

Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի տիտղոսաթերթի վրա գրված է. «Նշխարք հայ մատենագրութեան, Պատմութիւն թաթարաց, յԵրուսաղեմի ի տպարանի սրբոց Յակովիեանց» 1870<sup>1</sup>: Հաջորդ էջում<sup>2</sup>, «Պատմութիւն թաթարաց Վարդանայ պատմիչի հանեալ ի ձեռագիր օրինակաց թանգարանի սրբոց Յակովիեանց»: Նույն գրքի առաջարանում կարդում ենք. «Առաջին հատոր նշխարաց հայ մատենագրութեան փութամք ի լոյս ընծայել, որ պատմէ գծագրմանէն և զրարոյից և զպատերագրմաց Թաթարաց: Եւ գրեալ է Վարդանայ պատմիչի յաշակերտացն Կանականայ Վարդապետի ի ժգ դարու. ի 1247 և ընդորինակեալ է 1272. և օրինակն զոր ունիմք ի ձեռս, ձեռագիր է նորին Գրիգորի երեցու Ականց անապատի ի Կիլիկիա: Օրինակս չունի առանձին յիշատակարան զգրողէն. սակայն ի լուսանց օրինակին ուրեք ուրեք տեսանի գրեալ նովին ձեռագրով «Ողորմեա՛ տէր, Վարդանայ ծառայի քո»: Նա եւս կից է օրինակս Միջնայելի Ասորուց կայողիկոսի Ժամանակագրութեանն, որ յայտնի թարգմանութիւն է նորին Վարդանայ ի յիշատակարանին ծանուցեալ: Եւ լեզու, և ընթացք պատմութեանն իսկ վկայեն զան նորին լինել եելինակութիւն: Յորում ի պատմութեանս Թաթարաց պատմի և զշայոց թագաւորութենէ, որով և մասն համարի պատմութեան Հայոց: Զոր ի զլուխս զլուխս բաժանեալ ըստ զանազանութեան պարագայիցն ի սմա պատմելոց, տամք ի տպագրութիւն<sup>3</sup>: Մինչդեռ Փայլակ Փանոսի Անթապյանի՝ Վարդան Արևելցուն նվիրված երկհատորյա մենագրության մեջ ասվում է, որ Վարդան Արևելցին 1248թ. Ասորի Իշխող քահանայապետի աշխատակցությամբ է թարգմանել Միջնայել Ասորու «Ժամանակագրութիւնը»: Այստեղ նկատելի է խանճաշփոթ: Վարդան պատմիչի մասին ուրիշ որևէ տեղեկություն չկա, իսկ Վարդան Արևելցու մասին մեծարանքի խոսքեր են

<sup>1</sup> Նշխարք հայ մատենագրության, Պատմութիւն թաթարաց, յԵրուսաղեմի ի տպարան սրբոց Յակովիեանց, 1870:

<sup>2</sup> Նշվ. աշխ., էջ 2:

<sup>3</sup> Նշվ. աշխ., էջ 3:

գրել իր ժամանակակիցները՝ Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակնեցին և այլք<sup>4</sup>:

18-րդ դարի 70-ական թթ. Վ. Արևելցու վերաբերյալ քննական-վերլուծական առաջին խոսքը պատկանում է Մ. Չամչյանին, որը, սակայն, սխալ-մամբ նրա ծննդավայրը համարում է Կիլիկիայի Բարձրերդը և շփոթում Վ. Արևելցուն Վ. Բարձրերդեցու հետ, նաև նրան է վերագրում Վ. Այգեկցու առակները, իսկ Դիմանցին հեղինակ է ճանաչում այլ ուժն Վարդանի, Վահրամի կամ Վարիսամի, որոնք անհիմն են<sup>5</sup>:

Մեր կարծիքով անհիմն չեն այդ կասկածները: Մ. Չամչյանին են հետևել Մադաքա Թեոփիլյանցը, Քերովք Պատկանյանը, Գրիգոր Զարքհանայանը, Է. Դյուլորիեն, Ժան Մեն Մարտենը և ուրիշներ: Վարդան Բարձրաբերդեցու անունով էլ լուս են տեսել Վարդան Արևելցու «Մեկնոթիւն սաղմոսաց» և «Հաւաքումն պատմութեան» երկերը (վերջինը տպագրված «Պատմութիւն տիեզերական» վերնագրով): Հետազա հետազոտողներ Դ. Ալիշանի, Ն. Մատի, Ս. Ամատունու, Ն. Ալինյանի, Զ. Օսլյանի, Գ. Ծովսեփիանի, Զ. Անասյանի ջանքերով ստեղծվում է որոշ հստակություն, սակայն դեռ պարզաբանման խնդիրներ կան:

Պատմագիր-աշխարհագրագետ Վարդան Արևելցին իր «Հավաքումն պատմության» նյութերը քաղել է հատկապես 13-րդ դարի կեսերի ձեռագիր ընդօրինակողներից... որոնց քաղաքություն լինելը բացահայտ է<sup>6</sup>: Քանի որ երկու Վարդաններն էլ նույն դարաշրջանի հեղինակներ են, ուստի՝

1. Երկուսի նյութն էլ վերաբերում է մինդր-թաթարների պատմությանը:
2. Ապրել են նույն ժամանակաշրջանում:
3. Երկուսի գործածած հատուկ անուններում էլ կան նույն կամ հնյունական որոշ տարբերություններով բառեր, սակայն կան և զգալի քանակով անձնանուններ ու տեղանուններ, և դրանցից ոչ մեկը չի կրկնվում մյուսի երկում:
4. Վարդան պատմիչի երկը կազմված է տիտղոսաթերթերից, առաջաբանից և 17 գլուխներից՝ համապատասխան վերնագրերով, իսկ Արևելցունը՝<sup>7</sup> 89 անվերնագիր գլուխներից:

5. Վ. Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկն սկսվում է Բարելոնյան աշտարկաշինությունից, Հայկի ու Բեկի կովից և հասնում մինչև հայոց կաթողիկոս Ս. Բարձրերդեցու մահը (1267թ.), իսկ Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը՝ թաթարների ծագման, բարոյականության և պատերազմների մասին է, գրի է արևովել 1247թ.:

Ինչպես վերևում նշված է, 1248թ. Միխայել Ասորու «Ժամանակագրութիւնը» Ասորի Իշխող քահանայապետի աշխատակցությամբ թարգմանել է Վ. Արևելցին, մինչդեռ «Պատմութիւն թաթարաց»-ում սակաւում է, որ 1247թ. վանական վարդապետի աշակերտներից Վարդան պատմիչի ձեռքով գրված «Պատմութիւն թաթարացին» կից է Միխայել Ասորի կաթողիկոսի Ժամանա-

<sup>4</sup> Փ.Փ. Անքայան, Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը, գիրք Ս. Ե., 1987, էջ 5:

<sup>5</sup> Նշվ. աշխ., էջ 11:

<sup>6</sup> Նշվ. աշխ., էջ 39:

**կազմությունը**, որ հիշատակարանում արձանագրված նույն Վարդանի հայտնի թարգմանությունն է<sup>7</sup>: Այստեղ կա և՝ տարեթվերի, և՝ **հեղինակակցությամբ** կամ **առանձին** թարգմանելու տարրերություն:

7. **Փ.Ք.Անթապյանի՝ Վ. Արևելցուն նվիրված երկիատորյա մենագրության մեջ** արձանագրված բազմաթիվոյ ու բազմապիսի վերնագրերի կողքին մեզ չի հանդիպում «Պատմություն թաթարաց» խորագրով աշխատանք:

8. Համեմատելով նրանց հատուկ անունների ցանկերը՝ պարզէ ենք, որ 54 անձնանուն և 31 տեղանուն Վ. Արևելցու ցանկում չկան: Անձնանուններն են՝ Աղամ, Ամիր Քուրի, Աթարակ, Այթանա, Այլթանա խաթուն և այլն: Տեղանունները՝ Աբլաստ (ի մէջ Աբլատին), Արլ(գէտ), Ալտաղ, Ախշարք, Արի ծով, Անուանք, Արեւելք, Բենալ և այլն: Ընդհանրություններն են՝ Նետողաց ազգ, Յեսաւ, Յիսուս Քրիստոս, Հազար, Կենդրուա, Իմրան, Եղոմայեցիք, Տաթար, Գովզ և այլն<sup>8</sup>:

9. Վարդան պատմիչից և Վարդան Արևելցուց որոշակի հատվածներ ենք ընտրել ու համադրել՝ ճշտելու համար շարադրանքի նմանությունն ու տարբերությունը: Առանձնացրել ենք նույն ժամանակահատվածի և պատմական անձանց պատմությունները և պարզել, որ հանդիպել ենք միանգամայն այլ անձանց այլ գործերի: Օրինակ՝ **Փետուխտար** անձնանվան դիմաց Վ. Արևելցու երկում կարդում ենք նրա շարագրօրծությունների<sup>9</sup>, իսկ «Պատմութիւն թաթարացում» նրա բարության մասին<sup>10</sup>: **Մերաս սպարապետի** Վարդան Արևելցու և Վարդան պատմիչի 663թ. պատմական դեպքերը նույնապես, և այսպէս շարունակ համադրելով երկուսի շարադրանքները՝ համոզվում, որ նրանք տարբեր անձինք են:

Այժմ Հեթում պատմիչի մասին. «1294-1305թթ. եղել է հայոց սպարապետ, վարել մի շարք հաղթական ճակատամարտեր հարևան մահմեդական իշխանությունների դեմ (հատկապես Եգիպտական իշխանության), 1305-ին մեկնել է Կիպրոս, ընդունել լատինադասվանություն: 1307-ին Վոկենոս 5-րդ պապի հանձնարարությամբ գրել է թաթար-մոնղոլների պատմությունը: 1842թ. վարդապետ Հ. Մկրտիչ Ավգերյանը Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիններենից թարգմանել է գրաբար՝ նրան կցելով նաև Հեթումի անունը հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու Եվրոպական մի շարք պետությունների 1096-1307թթ. շրջանի պատմությունից<sup>11</sup>: Թեև նրա երկը նույն խորագիրն ունի, բայց գրել է բոլորովին այլ հազարմանքներում:

Այժմ Վարդան Արևելցու և Վարդան պատմիչի գործերում նկատվող թերականական երևույթների մասին.

<sup>7</sup> Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, 1870, էջ 8

<sup>8</sup> Վարդան պատմիչ, Համարարատ, Ե., 1979, էջ 553-579

<sup>9</sup> Վ. Արևելցի, նշվ. աշխ., գլուխ 99, էջ 162:

<sup>10</sup> Վարդան պատմիչ, նշվ. աշխ., էջ 62: Վ. Արևելցի, նշվ. աշխ., էջ 162:

<sup>11</sup> Հայկական տպետական հանրագիտարան, հ.6, Ե., էջ 1980:

1. Երկու գործերում էլ հոգնակի թվի ք հոլովակազմիչով ձևերը շատ են (այր, եսայր, իր, ինք, ոյր, ունք), բայց ան, անի, եսն, եար, եր, իկ, ական, նեար, որայ, որեայ, տի, ուտի, ուի, արան հավաքական հոգնակերտներով օրինակներ գործել չկան, իսկ կրկնակի **որեայ + թ, եան + թ** հոգնակերտով մեկ-երկու օրինակ համդիպում է երկուսի երկերում էլ: Վարդան պատմիչը գործածել է հետզրաբարյան շրջանին բնորոշ -եր հոգնակերտով ձևեր, իսկ Վարդան Արևելցին՝ ոչ օրինակ՝ Իսկ եթէ զի՞ն նմանութիւն ունէր առաջին Տաթարն, ասասցոր և զայն ես: Զի ոչ էին իբրև զմարդ առաջինքն, որ եկին ի վերին երկիրն. այլ էին ահազինք տեսողաց և անպատմելիք. զի զլուխն մեծ էր իբրև զգուշիչու, **աչքերն** նեղ՝ **իբրեւ** զձագու. թիրն կարճ՝ **իբրեւ** զկատուի. դունչն՝ մոռնջ իբրեւ զշան, մեշքն՝ բարակ **զինչ** մրջման. **ուսներն**՝ կարճ **զերք** խոզի. մորուս բնաւ իսկ չլունէին. տալար ունէին զարիւծու. ձայնն ձչող **զերդ** արծուի. ուր չպատմէր, անդ զտաներ<sup>12</sup>: Բերված հատվածը հետաքրքրական է նաև նրանով, որ բացի -եր հոգնակերտ մասնիկից՝ հեղինակը գործածել է **իբրեւ** նախադրությանը զուգահեռ և դրան համարժեք **զերդ, զերթ և զինչ** նախադրությունները, ի դեպ զինչը զալիս է միջին հայերենից: Պետք է ասել՝ վերը բերված օրինակում նույն բառում առկա են հետզրաբարյան շրջանին բնորոշ հոգնակերտ **եր** մասնիկը և գրաբարյան **աց** հոլովակազմիչը<sup>13</sup>, ինչպէս՝ և եղեալ ի վերայ **բերդերացն** հիսար (պաշարող) անհամար հեծելովը. և արին զառաջինն զՇամքաւը հուապ առ Գանձակ. որ յառաջ առեալ էին<sup>14</sup>: Իսկ **Ղան** հատուկ անվան էր-ով կիրառությանը զուգահեռ առկա է **աց-ով** տարբերակը, օրինակ՝ «...մինչ զի վասն կարի քաջութեանն Ղաներն ուկի սիւն անուանեցին զնա յետ բառում յաղթութեանց և պատերազմացն»<sup>15</sup>: իսկ մի այլ տեղում՝ նույն բարի **աց-ով** տարբերակը՝ «Եւթն որդիք եւթն **Ղանաց**»<sup>16</sup>:

Թեև նշված հեղինակները հանդես են եկել 13-րդ դարում, բայց վերոբերյալ օրինակներից երևում է, որ Վարդան պատմիչը գործում դրսւորվում են նախորդ երկու ենթաշրջանների համեմատ թվի բերականական կարգի բացահայտ տարբերություններ, սակայն նույն երևույթը չի նկատվում Վարդան Արևելցու գործում: Բերված հատվածում նկատելի է նաև ոճական կիրառության դրսւորում (պեսպիսություն). այստեղ **իբրեւ, զինչ, զերդ, զերթ** բառերն ունեն և՛ ձևաբանական, և՛ իմաստային միևնույն արժեքը:

2. «...և տեղի բանակին այլ ոչինչ գտին. բայց միայն **զվրաննին** բազում ոռմակօր լցեալ»: Այս նախադասության նշված գոյականը գրաբարի համեմատությամբ տարբեր է, ունի միջինհայերենյան բարբառային կիրառություն<sup>17</sup>:

<sup>12</sup> Վարդան պատմիչ, Պատմութիւն թարարաց, էջ 15, 16:

<sup>13</sup> Նշվ. աշխ., էջ 16:

<sup>14</sup> Նշվ-ում այս բառը չկա, բայց կա **հիսարել** «որ և խսարել. Բառ ոմկ. որպէս Պաշարել պատնշաւ: Ուկիփոր, հ. 2, էջ 100»:

<sup>15</sup> Նշվ. աշխ., էջ 31, 34:

<sup>16</sup> Նշվ. աշխ. զլուխ Ժ., էջ 34:

<sup>17</sup> Նշվ. աշխ., զլուխ Զ., էջ 25:

3. **Դղեակ** գոյականը միևնույն տեքստում նույն հոլովով գործածվում է և՝ **դղեակ**, և՝ **դղեկ**<sup>18</sup> ձևով, այսինքն՝ տեղի է ունենում **եա** երկրարքառի հընչունափոխություն, օրինակ՝ «...առին զՍազամ, զՔարիերձ, զՏերեւեն. զմեծ **դղեկն** թագաւորանիստ... Առին և գործով զամուր գործակն զՏաւոշ, որ էր աթոռ Սուլտանի»<sup>19</sup>:

4. Վարդան պատմիչի երկում հանդիպում է **բանիազնաց** բայաձեր, որ ՆՀԲ-ում չկա, բայց կա **բանազնաց լինել**<sup>20</sup>. «Եւ ապա եկալ Չարմանն վկայի և **բանիազնաց** առ մեծ զիսատրն իրեանց Չանկը Ղանն. և պատմեաց զամենայն խորիեալսն զիւրն և զերկուց զլաւորացն...»<sup>21</sup> Այդպիսի բառերի մի մեծ խումբ (մոտ 100 բառ), որ ՆՀԲ-ում վկայված չէ, հավանաբար հեղինակի անհատական բառակերտումներից է, արձանագրված է «Պատմութիւն թաթարաց» երկում<sup>22</sup>: Այստեղ նկատելի են հնչունական մի շարք փոփոխություններ, որոնք, ըստ երևոյթին, բարբառային-խոսակցական ծագում ունեն, օրինակ՝ ձայնեղների խլացում. **բախտաւոր - պախտախտաւոր**(28), Բաղդադ-Պաղտաս(39), Մբատ-**Սմպաս**(27), Մահմեդ-**Սահմետ**(40), շնչել խուլերի խլացում. Թաթար-**Տարաք**(26), Սուլթան-**Սոլլահ**(25), խուլերի ձայնեղացում՝ խորամանկ-**խորամանց**(26), երկրաբառի պարզեցում՝ աներկիւղաբար-**աներկեղաբար**(21), **դղեակ-դղեկ**(16), վերջինը բարբառային կիրառություն է<sup>23</sup>, **իշէ** փոփոխություն՝ պիդ-**պէղօչ**: Նշյալ աշխատության մեջ կ հնչունը արտահայտված ու, և, կ գրանչաններով՝ **պատուական - պատուական** (22), **քուով - քուվ** (38), մի այլ օրինակում ու երկրաբառի հնչունափոխություն չի կատարվել՝ օրինակ՝ **Ճեթմաւ-Ճեթումաւ**(31), իսկ մի այլում ի ձայնավորը ոչ թե հնչունափոխվել, այլ տղվել է, ինչպես **Ասորոց** բայց **Ասորոց**(44): **Կոստանդին** հասուկ անվան դիմաց հանդիպում ենք **ա-ը** ձայնավորների փոխարկման, օրինակ՝ Կոստանդին-**Կոստընդին** (31) և **ու-ա փոխարկման**՝ **Հուլաւու Ղան - Հալաւու Ղան** (18) **անվան դիմաց**:

5. Հեղինակը բերում է մի հատված, որում ներկայացնում է Վրաստանի թագավորի որդուն՝ Դավթին: Ուժական առումով այն ունի զեղարվեստական արժեք. «Եւ էր Դավիթ որդի թագաւորին Վրաց երկայն հասակաւ և կրովի, զեղեցիկ պատկերաւ և թուխ մօրուօք. Լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն Աստուծոյ: Եւ ապա հանեալ ի բանտէն, ազուցին նմա հանդերձս պատուականս... և ատին հրաման ի մեծ Ղանէն, բերին նսոսուցին զԴափիթ յաթոռ հօրն իւրոյ ի Տփիխս: Եւ իշխանքն Վրաց յոյժ ուրախացեալ անուա-

<sup>18</sup> **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ., էջ 16:

<sup>19</sup> Տէ ս ՆՀԲ՝ «Բանագնաց լինել. Պատգամատրօր, կամ միջնորդը խօսել». ՆՀԲ, հ. 1, էջ 433:

<sup>20</sup> **Վարդան պատմիչ**, նշվ. աշխ., էջ 19:

<sup>21</sup> Նշվ. աշխ., էջ 19:

<sup>22</sup> Տէ ս **Ա. Սուրայան, Օ. Խաչատրյան**, Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի նորարաններում՝ **Միջազգային զիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 70-ամյակին**, Ե., 2014: Տպագրության ընթացքի մեջ է:

<sup>23</sup> Տէ ս ՆՀԲ՝ «Դղեակ, դեկի, կաց, գ, ... զրի և իբր ոմկ. Դղեկ. բերդ. ամրոց, ամուր...». ՆՀԲ, հ. 1, էջ 636:

նեցին զնա **Վարհամուց** թագաւոր. այսինքն **ՎարհամԵղիք** թագաւոր»: Ինչպես երևում է բնագրից, հեղինակը տալիս է նաև բատիմաստի բացատրություն (նշված անունները Վարդան Արևելցու հատուկ անունների ցանկում չկան): «Եւ երթեալ ըստ յաջողելոյն Աստուծոյն ետևս զՄային Ղանն այն յոյժ քրիստոնէակը և բարեսէր: Կասն այնորիկ ազն իրեանց անուանեցին զնա Սային Ղան. որ է ըստ լեզուին իրեանց աղէկ և լաւ Ղան»: Նմանատիպ շարադրանք է հայ ժողովրդի ողբերգական վիճակը արտահայտող մի հատված ևս. «Եւ արդ՝ զո՞ր աղէս և զպատահումն ժամանակիս գրեցից. զբաժնու մն հարց և մարց ի յորդոցն, թէ զսիրելեաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն. զիրեանց սեպհական ընչիցն առնու՞մն, թէ զգեղեցիկ ապարանացն ի հրոյ ծախումն. զմանկտոյն ի զիրկս մարցն զենու՞մն, թէ զգեղեցիկ և զփափկաննունդ երիտասարդաց և զկուսից բոկ և մերկ գերումն»: Այստեղ առկա է ձարտասանական հարց:

6.Վարդան Արևելցու երկում հաճախ են հանդիպում անյալ դերքայի կողքին սեռականով ենթակայի դեպքեր, որ հատուկ է զրարարին, իսկ Վարդան պատմիչի երկում՝ ոչ: Օրինակ՝ «Յորում աւուրս **Խշկահեալ** (մերժել, անարգել, արհամարհել) **Արշակայ** զՎաղենտիանոս կայսր, և **նորա բարկացեալ** սպան զՏրդատ զելքայր Արշակայ, որ կայր ի պատանդի: Եւ **զնացեալ** մեծին **Ներսիսի**, պատուի ի կայսէրէ»<sup>24</sup>: «Իսկ **Արշակայ սպանեալ** զԳնէլ ելքորորդի իւր, վասն Փառանձեմայ կնոց նորա ի քսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսիս, և ինքն զնայ ի Յոյնս»<sup>25</sup>:

Այսպիսով, կարծում ենք՝ Վարդան պատմիչն ու Վարդան Արևելցին տարբեր անձինք են և ունեն միանգամայն տարբեր գործեր՝ պայմանավորված հրատարակման տարեթվերի, երկերի բովանդակության, նրանցում կիրառված նորակազմությունների, անձնանունների ու տեղանունների, ձևարանական, շարահյուսական և ոճական կիրառությունների անհամատելիխությամբ:

Xachatryan Ofelya- About Vardan Patmich's Personality and His "Patmutyun Tatarats" work. - In the sphere of science are circulating two different mutually exclusive opinions:

1. Vardan Patmich is the same Vardan Areveltsi.

2. The "Patmutyun Tatarats" of Vardan Patmich and the "Havaqumn Patmutyan" of Vardan Areveltsi is the same work.

The comparative study clarifies that it is wrong to identify Vardan Areveltsi and Vardan Patmich or the "Patmutyun Tatarats" of Hetum Patmich with Vardan's same work.

Хачатрян Офелия - О личности Вардана-патмича и его «Патмутюн татарац». Сравнительное исследование выявляет, что «Патмутюн татарац» написал Вардан-патмич. Вардан-патмич и Вардан Аревелци - разные авторы с различными языковыми особенностями. «Патмутюн татарац» Гетума-патмича и «Патмутюн татарац» Вардана- патмича однозначно написаны в различных обстоятельствах, и отождествление как авторов, так и их произведений, ошибочно.

<sup>24</sup> Վարդան Արևելցի, Հաւարումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 47:

<sup>25</sup> Նշ. աշխ. էջ 48:

## ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԱԽԵՒ ԳԻՏԱԿԱՐԳ

Ի՞նչ է թարգմանաբանությունը, և որո՞նք են դրա խնդիրները : Այս հարցերը շարունակում են մնալ արդիական, չնայած գոյություն ունեցող բազմաթիվ տեսալիքների, որոնցից շատերը հանգել են թարգմանաբանության «լրիվ բնականոն» բնույթին և այն մտքին, որ այս գիտակարգը ինքն է իրեն ստեղծում:

Այն, որ թարգմանությունը պետք է դառնար և՝ գիտություն, և՝ արվեստ, ինչպես ժամանակին կարծում էին ոռմանտիկ քննադատները, իրականացել է. սա է նրա արդի ճակատագիրը<sup>1</sup>: Բայց որքան էլ արտասովոր հնչի, թարգմանաբանություն եզրույթը նորաբանություն էր մինչև 1972 թվականը, այնուհետև այն շրջանառության մեջ դրվեց և ծավալվեց : Թարգմանաբանություն եզրույթն առաջին անգամ գործածել է ֆրանսիացի թարգմանաբան Ժան-Ռենե Լամիրալը 1972թ. և միաժամանակ կանադացի թարգմանաբան, Մոնրեալի համալսարանի դասախոս Բրիան Հարիսը: Ըստ նրա՝ թարգմանաբանությունը, լինելով առանձին գիտակարգ, ուսումնասիրում է ճանաչողության գործնարարը, ինչպես նաև լեզվաբանական բոլոր գործնարարները ներհատուկ թարգմանության բոլոր տեսակներին (բանավոր, գրավոր կամ ժեստային)<sup>2</sup>:

Իսկ Հայաստանում այս գործի մեջ երախտավոր Արման Նազարյանը ոչ միայն հայ իրականություն մտցրեց թարգմանաբանություն եզրույթը՝ մանրամասնելով իր աշխատություններում, այլև ծավալեց իր գործունեությունը մանկավարժության բնագավառում՝ գրելով և տպագրելով ուսումնական ձեռնարկներ, բազմաթիվ բարձրարժեք թարգմանական բառարաններ, մենագրություններ և այլն :

XX դարը, որն իրավամբ համարվեց թարգմանության ժամանակաշրջան, հրամայական դարձրեց թարգմանաբանության տեսության առկայացումը: Ինչպես վկայում են Մշակույթի պահպանված հուշարձանները, թարգմանության պատմական արմատները ձգվում են շատ հեռու՝ մինչև քաղաքակրթության վաղնջական ժամանակները: Թարգմանությունը, որը մարդկային համընդիանուր գործունեություն է, անհրաժեշտություն է եղել բոլոր ժամանակներում, երկրագնդի բոլոր մասերում, տարբեր լեզուներով խստող ժողովուրդների, համայնքների համար: Կարելի է առանց չափազանցության ասել, որ թարգմանչի մասնագիտությունը հնագույններից է և ծագել է մարդկային հասարակության ծագման հետ մեկտեղ: Ակսած Բարեկոնյան աշտարակից համայնքների միջև առնչությունները, շփումներն իրականացել և իրականում են միմիայն թարգմանության միջոցով. լինեն այդ համայնքները

<sup>1</sup> Jean-René l'admiral, traduire: théorèmes pour la traduction, Gallimard, Paris, 1994, էջ.5

<sup>2</sup> Brian Haris, Problèmes de sémantique , dirigé par J. McA'Nulty et al., Montréal, Presses de l'Université du Québec, էջ. 133–146 :

անհատական կամ կոլեկտիվ, պատահական կամ մշտական, կապված լինեն տնտեսական փոխանակություններով կամ լինեն որպես նորմա դարձած կողավորումների առարկա (ինչպես, օրինակ՝ պետությունների միջև կնքված պայմանագրերը): Այսօր գրեթե չկա որևէ ժողովուրդ, որ գոյություն ունենա առանց թարգմանության: Թարգմանական գիտության պատմության մեջ առանձնահատող տեղ է զրադեցնում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը իին հրեերենից և արամեերենից (Հին Կոտակարան), ինչպես նաև իին հունարենից (Նոր Կոտակարան): Աստվածաշնչի լավագույն թարգմանություններից մեկն իրավամբ համարվում է հայերենը, որի հիմնաքարը որեց Մեարոպ Մաշտոցը թարգմանելով §Սողոմոնի առակները, որին հետևեց Սահակ Պարթևի ասորերեն Փեշիտսա բնագրից կատարված թարգմանությունը, ապա հունարեն բնագրի հետ համեմատությունից (հեղինակներ՝ Սահակ Պարթև. Մեարոպ Մաշտոց, Եզնիկ Կողբացի, Հովսեփ Դաղնեցի) ստեղծված երկրորդ թարգմանությունն այսօր Եվրոպայում հայտնի է *թարգմանչաց թագուհի* անվանումով:

Հայ ազգային գրականության և մշակույթի կազմավորման գործում թարգմանությունների դերն ու նշանակությունն այնքան մեծ է եղել, որ վաղնջական ժամանակներից Հայաստանում սահմանվել է *Թարգմանչաց տոն*, որի ավանդական նշումը շարունակվում է ցայսօր, ինչպես եկեղեցու, այնպես էլ ժողովրդի կողմից: Այս տոնը բացառիկ է ամբողջ աշխարհում:

Եվ այսօր արձանագրվում է, որ թարգմանության վերաբերյալ հրատարակվում են մեծաքանակ ուսումնասիրություններ բազմաթիվ լեզուներով: Պատճառները տարբեր են: Նախևառաջ մենք ականատես ենք թարգմանությունների աննախադեպ աճին: Բացի պատմությունից և մշակույթից եկած թարգմանությունների կրուտակումից, հատկապես արդիականացումը և համաշխարհայնացումը մեծ ազդեցություն ունեցան, որ բազմապատկենն ու բազմազան դառնան այս ոլորտի պահանջարկն ու արտադրանքը: Ի վերջո, պրոֆեսիոնալ թարգմանությունը (տեխնիկական, առևտրական, վարչական և այլն) այսօր առյօնի բաժինն ունի թարգմանության ասպարեզում և քանակապես գերազանցում է ավանդական գրական և մշակութային թարգմանություններին, բնականաբար և գիտական, և՝ ինտելեկտուալ մակարդակներում: Այս բնագավառի կարևորագույն ուսումնասիրությունների հեղինակ-հետազոտողների մեջ անհնար է չնշել ֆրանսիացի թարգմանարան Անտուան Բերմանի անունը: Լինելով թարգմանիչ՝ գերմաններենից և իսպաներենից, նա թարգմանարանությունը օժտեց իսկական քննադատական մտքով՝ շարունակելով գերմանացի տեսաբաններ Ֆրիդրիխ Շլայենմախերի և Վալտեր Բենյամինի ավանդույթները: «Օտարի փորձությունը» աշխատության մեջ Անտուան Բերմանը իր խնդիրներն է առաջարկում՝ ուսումնասիրելով ժամանակաշրջանը և մշակույթը, եթե որպանք առաջարկվում էին կրքուտ ուժգնությամբ և վիճարանություններ առաջանանաւ՝ ստանալով տարբեր պատասխաններ ոռմանսիկ Գերմանիայում: Հերդերից, Հյոլդերլինից մինչև Նավակես, Գյորե և Հումբոլդտ թարգմանությունը կենտրոնական դիրք է գրավում գերմանական մշակու-

թային և գրական դաշտում: «Արևմուտքի պատմության մեջ երբեք թարգմանությունը այլշափ կէնդանի և հարուստ մտորումների առիթ չի տվէլ»<sup>3</sup>:

Բերմանն առաջիններից էր, որ Ֆրանսիայում խոսեց թարգմանարանության մասին՝ օգտագործելով այդ եզրույթը: Պահանջելով թարգմանարանության ինքնուրույնությունը իբրև առանձին գիտակարգ և հաստատեց տարբերությունը թարգմանարանության և մյուս գիտությունների միջև:

Թարգմանարանությունն ասես հաշտեցնում է լեզվաբանական և գրականագիտական մտքերը: Այն փաստը, գրական թարգմանության տեսությունն ընդգրկում է լեզվաբանական և գրականագիտական ուսումնամիտության ինդիքներ, գրական ստեղծագործության թարգմանչին պարտավորեցնում է տեսականորեն հետազոտել դրանք գործնականում կիրառելու նրանակով: Հատկապես կարևոր է գրական երկի թե՛ լեզվական, թե՛ ոճական առանձնահատկությունների քննությունը, որը լեզվի և լեզվաբանության ինդիք է, ինչպես նաև տվյալ հեղինակի աշխարհայացքի, նրա ապրած դարաշրջանի, որդեգրած գրական թարգմանական սկզբունքների, ստեղծած գրական ժանրերի, գրողի գրական այս կամ այն ուղղությանը հարելու, նաև գրական հոսանք ստեղծելու փաստի ուսումնամիտությունը, որն, իհարկե, անվիճելիորեն գրականագիտական քննության ինդիք է:

Թարգմանությունը իրականանում է առերևույթ անօգուտ հասկացություններից ելակետային կամ աղբյուր լեզվից և ժամանման կամ թիրախ լեզվից, որոնց ուղեկցում են ավանդական եզրույթները՝ համարժեքություն, հավատարմություն կամ դասականություն, թարգմանական ազատություն և ստեղծագործական հնարագիտություն կամ պարզապես ստեղծարարություն:

Թարգմանության պատմության մեջ տեսությունը սկզբունքորեն հակառակվում էր գործնականին: 20-րդ դ. լեզվաբանությունը կարողացավ տեսությունն առանձնացնել գործնականից՝ հավաստի դարձնելով տեսության ինքնափար գոյությունը: Ժամանակակից աշխարհում մենք դարձել ենք թարգմանությունների մեծ սպառողներ. ամենուրեք, անշուշտ, նախ դասավանդման քնազակառում՝ մասնագիտապես, նաև գիտության և տեխնիկայի քնազակառությում: Ինչ վերաբերում է փիլիսոփայությանը, հումանիտար գիտություններին և քաղաքականությանը, այստեղ թարգմանություններն արտացոլում են մշակութային, ինչպես նաև ազգային ավանդույթները, որոնք պահանջում են թարգմանական և տեքստի մեկնության մեծ հմտություններ: Թարգմանությունը դարձել է միջազգային մեծ կազմակերպությունների գործունեության կարևոր մասը, որոնք հրավիրում են բարձր մակարդակի գրավոր և բանավոր թարգմանիչների: Սակայն մեր օրերի չափազանց արագացված «բարելուսաշինության» ճանապարհին մենք հաճախ մոռանում ենք, որ թարգմանությունը քնազիքը չէ, այլ՝ թարգմանչի ստեղծագործությունը:

Թարգմանությունը, ինքնին լինելով երկիվերկիված, ստիպում է թարգմանչին աշխատել առնվազն երկու լեզուների, երկու մշակույթների, հաճախ

<sup>3</sup> A. Berman, *Pour une critique des traductions*, John Donne, “Gallimard”, Paris, 1995, էջ 15:

երկու ժամանակաշրջանների միջև: Այստեղ առաջին հերթին պետք է հիշել Յու. Նայդային: Նա առաջարկում է դինամիկ կամ գործառական համարժեքության սկզբունքը, որը ջանում է փոխանցել աղբյուր լեզվի տեքստի իմաստը, մինչդեռ ձևական համարժեքությունը ձգուում է թարգմանել բառ առ բառ, նախադասություն առ նախադասություն: Ըստ դինամիկ համարժեքության սկզբունքի՝ թարգմանված տեքստը պետք է նույն ազդեցությունը բռնդիր թիրախ լեզվում, ինչը կա բնագրում: Բազմիցս սահմանվել է թարգմանությունը՝ դիտարկվելով որպես թարգմանարանության հիմնաքար. այն նպատակավաց գործունեություն է, որը համապատասխանում է որոշակի պահանջների և շափանիշների: Այսօր անհրաժեշտաբար անընդմեջ փորձում են ի մի քերել թարգմանության տեսության վերաբերյալ եղած սահմանումները, որոնք ձևավորում են հասկացությունը. այն ամրագրված է հասարակական գիտակցության մեջ պատկերացումների ինչ-որ քանակի գումարային ձևով առ այն, թե ինչպիսին պես է լինի թարգմանությունը:

Բազում սահմանումներից վերիիշնք մի քանի հիմնականները. ա/ Ըստ Ֆեղորովի՝ թարգմանել նշանակում է մեկ լեզվի միջոցներով ճշգրիտ և ամբողջովին արտահայտել այն, ինչ ավելի փառ արդեն արտահայտվել է մեկ այլ լեզվի միջոցներով:

թ/Թարգմանությունը ուղղորդված և երկփուլանի գործընթաց է՝ լեզուների և մշակույթների միջև, որի ընթացքում վերլուծության ենթարկվող առաջնային (աղբյուր) տեքստի հիման վրա ստեղծվում է երկրորդային (թիրախ) տեքստը, որը փոխարինում է առաջնայինին մեկ ուրիշ լեզվական և մշակութային միջավայրում:

զ/ Ըստ Յու. Նայդայի՝ թարգմանությունը հենվում է լեզվաբանության, մեկնողականության և ոճաբանության վրա, նրա նպատակն է բնական և ճշգրիտ համարժեքության միջոցով բնագիր փոխանցումը վերարտադրել թարգմանության լեզվով՝ նախ իմաստային, այնուհետև նաև ոճական առումով:

դ/Հայտնի է նաև Լ.Բարիսովարովի սահմանումը՝ «Թարգմանությունը մի լեզվի տեքստի միջնական փոխակերպումն է մեկ այլ լեզվի տեքստի»:

ե/ Ըստ Փրանսիացի լեզվաբան Ժորժ Սունենի՝ թարգմանությունը լեզուների շփման միջոց է, երկի լեզվության ապացույց:

զ/ Ըստ Ումբերտ Էկոյի՝ թարգմանել նշանակում է ասել նոյն բանը, ինչ ասվել է այլ լեզվով: Ճշմարիտ է, որ մենք կդժվարանանք բացատրել, թե ինչ ասել է «նոյն բանը»:

Ե/Ինչպես նշում է մեր ժամանակների տեսական և գործնական թարգմանաբանության հայտնի դեմքերից մեկը՝ Դանիելա Մելեշլովիչը, թարգմանել, անշուշտ, առաջին հերթին նշանակում է հասկանալ տեքստը, այն վերարտադրել մեկ այլ լեզվով, բնագիրը դիտարկել ոչ միայն լեզվաբանական տեսանյունից, հաշվի առնելով նրա ոճական առանձնահատկությունները, մի բան, որ երկար ժամանակ իշխում էր թարգմանարանական բոլոր ուսումնասիրություններում, այլև հենվել հոգեբանական և իմացարանական գիտությունների վրա: Ի թիվս այլոց նա հիմնել է «Թարգմանության մեկնաբանիչ տեսությունը»:

ը/Նորից պիտի վկայակոչեմ Անտուան Բերմանին, որը հիմնավորելով թարգմանության տեսությունը, գրում է. «Ընդիրն այստեղ տեսությունը չէ, այլ խորհրդածությունը: Ուզում եմ լրիվ դուրս գալ տեսություն՝ պրակտիկա երկու հասկացությունների ըմբռնումից և փոխարինել այդ զույգը փորձ-խորհրդածություն զույգով: Փորձի և խորհրդածության փոխարաբերությունը նույնը չէ, ինչ որ պրակտիկայի և տեսության փոխարաբերությունը: Թարգմանությունը փորձ է, որը կարող է բացահայտվել և բռնվել խորհրդածության մեջ, ի հակադրություն զգայական հայեցողության, որն ուղղված է դեպի արտաքին առարկաները: Այդ խորհրդածությունը թարգմանական գործիք սուբյեկտիվ գործընթացների տպավորական նկարագրությունն է, այն մեթոդաբանություն է»<sup>4</sup>: Անտուան Բերմանը թարգմանությունը միտումնավոր կերպով անվանում է թարգմանական զիտափորձ, որպեսի ցույց տա այն առարկայական տարածությունը, որ կա լեզվաբանության, գրականագիտության և թարգմանաբանության միջև: Հստ նրա թարգմանաբանությունը թարգմանության զիտափորձն է ինքնի իր նկատմամբ:

թ/Արդի թարգմանաբան, փիլիսոփա՝ հերմենուստիկայի մասնագետ, Պոլ Ռիկյոնը, հենվելով Բերմանի տեսությանը, ավելի հեռուն է գնում, նշելով, որ թարգմանաբանության հիմքում ընկած է թարգմանելու ցանկությունը: Այստեղ կա հարկադրանք. Եթե ուզում ես, օրինակ, ճանապարհորդել, բանակցել, անգամ լրտեսել, պետք է գտնես լրատարներ, որոնք խոսում են ուրիշների լեզուներով: Եվ կա ակնհայտ օգտակարություն, այլապես այսօր մեզ հասանելի չեն լինի Պլատոնը, Շեքսպիրը, Սերվանտեսը, Ֆանթեն, Գյոթեն, Տոլստոյը, Բալզակը և այլք: Բայց կա հարկադրանքից և օգտակարությունից ավելի համար, ավելի խոր, ավելի թաքնած մի բան թարգմանելու ցանկությունը:

Ժ/ Հստ ֆրանսիացի լեզվաբան և թարգմանչ Ժան-Ռենե Լամիրայի թարգմանաբանությունը փաստորեն պահանջում է տեսության բացահայտում, որը գոյություն ունի առանձին, լեզվաբանությունից անդին և ներառում է գրեթե ողջ հումանիտար զիտություններն ու գրականությունը: Հենց այստեղ կարող է սահմանվել թարգմանաբանությունը՝ որպես ինքնուրույն զիտություն:

Եվ այս շարքը կարելի է շարունակել գրեթե անվերջ, քանի անհատական թարգմանաբաններից գատ, որոնք շարունակում են գրել իրենց տեսական դաստիարակությունները, գյություն ունեն նաև տարբեր թարգմանաբանական դպրոցներ, որոնք հենվում են թարգմանության միջմշակութային հայեցակերպի վրա, կամ թարգմանությունը դիտարկում են որպես միջտեքստային գործողություն, կամ որպես գործառույթ կամ որպես գործընթաց, կամ նաև թարգմանության միջզիտակարգային ինստերնացիան տեսություններ և այլք: Մյուս կողմից յուրաքանչյուր թարգմանություն ինքնին մեկնաբանություն է: Այն իր երթյան մեջ կրում է իր ակունքում գտնվող մեկնաբանության

<sup>4</sup> Berman A., *La traduction et la lettre ou l'auberge du lointain*, «Seuil», 1999, էջ 24:

<sup>5</sup> Ricoeur Paul, *Sur la traduction*, Bayard, 2006, էջ 38 :

<sup>6</sup> Lamiral J.-R., *Traduire: théorèmes pour la traduction*, «Gallimard», 1994, էջ 14:

բոլոր հիմքերը, բացահայտումները և մակարդակները: Եվ մեկնաբանությունն էլ իր հերթին ընդամենը թարգմանության իրագործումն է: Համապատասխանաբար, բայց իրենց էության, մեկնաբանությունն ու թարգմանությունը միևնույն բանն են:

Իհարկե, միշտ էլ կարող ես թարգմանել որևէ գրողի՝ անզիացի, ֆրանսիացի, գերմանացի կամ ճապոնացի, բայց առ բայց, առանց որևէ բան ավելացնելու, պահպանելով անզամ կարգը, չափը, կշռույթը, նույնիսկ հանգը (պոեզիայում), սակայն համբերատար աշխատելով, երկար ժամանակ վատնելով, ի վերջո, հանգում ես բարբարոսական իմանկարի՝ մասերն անկապ են, ցեմենտը միավորում, սակայն յի համաձուլում դրանք, տերսուն ավելի ուժգին է հնչում հայերեն, բայց ֆրանսերեն: Սա նշանակում է թարգմանության էությունը շատ ավելի խորն է՝ միաժամանակ և՝ էթիկական, և բանաստեղծական, և մտածող:

Հայ Անտուան Բերմանի՝ թարգմանաբանությունը «կոպեռնիկոսյան» հեղափոխություն է զիտության բնագավառում, «քանզի մտածողության գործողությունը դարձել է թարգմանական գործողություն»: Լինելով հաղորդակցության միջոց թարգմանությունը խոսքի ձևերից մեկն է, որը լեզուն ենթարկում է ձևափոխությունների: Թարգմանաքննադատության և թարգմանության վերլուծության միջոցով թարգմանաբանությունը երկխոսական կապ է հաստատում սեփական լեզվի և օտար լեզվի միջև: Այստեղ է, որ Բերմանը ձգտում է էթիկայի ներքին անհրաժեշտությունը հաստատել որպես կառեզրիկ իմպերատիկ:

Թարգմանաբանությունը նաև համալսարանական առարկա է, որը մտցված է ուսումնական ծրագրերում, ինչպես, օրինակ՝ Ֆրանսիայում, երրորդ կուրսից սկսած հումանիտար ֆակուլտետներում, իսկ բազմաթիվ այլ երկրներում՝ դրվագական թեզով գրադլող ուսումնախրության առարկա: Շատ համալսարաններ ունեն թարգմանաբանական ամբիոններ, ինչպես, օրինակ՝ Թրիլիսիի պետական համալսարանի թարգմանական բանախրության ամբիոնը, որը գործում է 1966 թ. ի վեց: Երևանի պետական համալսարանում նույնպես բացվեց թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն, որի 5-ամյակը տոնվում է այս օրերին:

Anna Hakobian- Translation Studies as Independent Discipline.-The article attempts to put in order some of the theories outlining the translation studies. These definitions prove the translation studies to be an accomplished and independent discipline. However, it has not an unequivocal definition as it continues to be identified and redefined. The article indicates that, although the translation studies is a neologism, it is based on the translation proper, thus it has deep roots as in case of Armenian translation school which was established just after the creation of the alphabet by Mesrop Mashtots.

Акопян Анна – Переводоведение как самостоятельная дисциплина.-В статье делается попытка упорядочить некоторые термины переводоведения. Эти определения доказывают, что переводоведение – цельная и самостоятельная дисципи-

лина. Тем не менее, не существует однозначного определения, так как оно продолжает развиваться и отождествляться. В статье упоминается, что преводоведение – это неологический термин, однако оно основано на самом процессе перевода, и следовательно имеет глубокие корни, как в случае армянской школы перевода, которая была основана после создания алфавита Месропом Маштоцом.

## ՈՉ ԳՐԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԽՈՍՍԿՅԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

/Ժարգոնային բառեր, գոեհկարանություններ/

Խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման հիմնական միջոցն է: Անշուշտ, պետք է տարբերակել գրական լեզվի բանավոր ձևը առօրյա խոսակցական լեզվից: Այս երկու ըմբռնումների միջև էական տարբերություն կա: Եթե գրական բանավոր լեզուն ունի որոշակի համակարգ և էապէս չի տարբերվում գրավոր գրականից, ապա առօրյա-խոսակցական լեզուն մեր լեզվի զարգացման այժմյան փուլում ներկայանում է որպէս մի շափազանց բարդ, հեղիեղուկ սահմաններ ունեցող և տարատեսակ իրողություններով հանդես եկող մի համակարգ:

Վերջին ժամանակներու հաճախակի է խոսվում հայոց լեզվի գործառության ոչ բավարար վիճակի մասին: Ամեն օր հայերենում արձանագրվում են բազում շեղումներ, խախտումներ, տարբեր լեզվական իրողություններ:

Սույն հոդվածում մեր ուսումնասիրության նյութն ենք դարձել Երևանի խոսակցական լեզվում հաճախակի գործածվող ոչ գրական բառերը:

Ունենալով բառակազմական հրաշալի հնարավորություններ՝ ժամանակակից հայերենը կարծես չի բավարարում լիարժեք հաղորդակցության պահանջները: Դրա փոխարեն այսօր առաջ է ենել համապատասխան լեզվական մի շերտ՝ որոշակի բառապաշտով, առողանությամբ: Մեր հասարակությունը (հատկապես երիտասարդությունը) սկսել է գրեթե բոլոր իրադրություններում խոսել առօրյա-խոսակցական հայերեն, հատկապես հասարակաբանություններով (բառորոշոց, թերնից, կայնել, հավաքութել, մոռնալ, հավանել, հասկրնալ, վախցնել, նստքցնել, խոսցրնել, պատկերցնել, չորքցնել, իրորից, թերիկ մեջ, արագի մեջ, շոտիք մեջ, ծշոտիք, լրջութ և այլն): Հաճախակի են հնչում նման դիմելածներ՝ ախչի, արա, բրատ, զիգար, կյանք/կյանքութ, ազիզ, մոռութ, արա, ապէ, իմ անուշ ախսպէր, մերնեմ կյանքիդ, ցալդ տանեմ և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ գրական լեզու է մուտք գործում, այսպէս կոչված, ժարգոնային հայերենը: *Ժարգոնային, անհարկի բառերը*<sup>2</sup> գրական լեզվից դուրս են և ցածր ոչի արտահայտություններ են, դիտվելով իբրև բացասական երևույթի դրսնորում՝ մերժելի են, ունեն ժամանակավոր խոսակցական բնույթ (հները մոռացվում են, երևան են զալիս նորերը), հաճախ օգտագործվում են ուրիշներին անհասկանալի լինելու նպատակով: Նման բառեր են հաճախ

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B0006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> *Ժարգոնն* ֆրանսերեն բառ է և նշանակում է տվյալ հասարակական խմբի կամ որում խմբականական բնույթին վեցում, որը տարբերվում է ընդհանուր լեզվից իր յուրահատուկ բառերով ու արտահայտություններով:

գործածում դեռահասները՝ գողական զնալ, զազան կինո, դզոր (լավ), ջոգել, հարոցել (լիտիանալ), տուփտել (անկապ խոսել), բոց ա (արտասովոր, տարօրինակ, ինքնօրինակ, յուրահատուկ), այդպես նաև՝ թույն ա (թույն բառի «շատ լավ» իմաստով տարբեր կիրառությունները այսօր փոքրից մեծ օգտագործում են՝ թույն կինո, թույն աղջիկ, թույն մաշնա, թույն շոր և այլն): Դպրոցականների, ուսանողների բառապաշտում ժարգոնային բնույթ ունեն, օրինակ, հաճախակի գործածվող բառերի կրծատ ձևերը՝ անզլ (անզլերեն), աշխարի (աշխարհագրություն), բնաց (բնագիտություն), թվար (թվարանություն), պատմ (պատմություն), մազ (մազնիտոֆոն), ժամ (ժամադրություն), շպո (ծածկաթերթիկ) և այլ բառեր: Երիտասարդները հաճախ են գործածում նման բառեր, ինչպես՝ ֆրցնել (խարել), ցրել (գողանալ), բքել (շատ ծխել), դուիտով (համարձակ), գեղազակ (շափազանց տգեղ), լորշ ա (պարապություն), ֆազոտ (անկայուն մարդ) և այլն:

Թեև մեր հասարակությունը մերժում է ժարգոնը այն պարզ զիտակցմամբ, որ մեր օրերում այն կրողների մեծ մասը կրթական ցածր մակարդակ ունի: Յուրաքանչյուր մարդ, ով գիտելիքների զգալի պաշար է ստանում՝ հասնելով ինքնազիտակցության մի որոշակի աստիճանի, փորձում է խուսափել ժարգոնից, սակայն այսօր շատերն են խոսում խոսակցական ժարգոնախառը լեզվով, և ամենից ցավալին այն է, որ ժարգոնային արտահայտությունները խորը չեն նաև իզական սերի ներկայացուցիչներին:

Ժարգոնին բնորոշ են՝ ա) բառային նոր իմաստ, ինչպես՝ իսու (հիմար), ծախել (մատնել), ծախսել (մատնվել), կոշզվել (վատ դրության մեջ ընկնել, դժվարության հանդիպական լուսակագրել), կոտրել (հեղինակագրել), չորել (կոպտել), քաշել (վնասել), արյուն վերցնել (զգվացնել), գծերից բնենել (նախկին հեղինակությունը կորցնել), կուտ տալ (խարել, համոզել), ձև բռնել (իրեն ներկայացնել ավելին, քան իրականում, ձևանալ), յուղ վառել (անխմաստ խոսել), բ) օտար բառերի առկայություն, ինչպես՝ կառոչի (մի խոսրով, կարծ ասած), օտիդո (ամբողջությամբ), չերեկ (միջոցով), վաժմի (կարևոր), վրոճի (կարծես թե), ուժե (արդեն), տուտժե (իսկովն), այդպես նաև՝ դավայ, վեշնի, պառսոր, կանկուտնի, մաշնա, ժաղետշիկ և այլն, զ) յուրահատուկ կապակցություններ՝ անկախ մայլա, զազ տված, քաղի գող, հակայի բազար, յանք տարած, քյալեն թափած և այլն:

Անժխտելի է այն փաստը, որ ցանկացած լեզվում կ գոյություն ունեն գոեկարանաւթյուններ ու ժարգոնային տարրեր, որոնք ձևավորվում են տարիների ընթացքում: Սակայն Հայաստանում այսօր, շատ ցավալի է, մի հոծ խումբ ժարգոնը դարձրել է «հարազատ լեզու». Դա խրախուսելի չէ և դաստիարակչական, և առավել և գեղազիտական առումներով: Սա լուրջ խնդիր է բարեկիրդ հասարակություն ձևավորելու ճանապարհին:

Ժարգոնային բառերի մեջ կան բազմաթիվ բայական հարադրություններ, որոնց ոչ բայական բաղադրիչը հիմնականում օտար բառ է, ինչպես՝ արտոտկա իլել (պատասխանել), ադամենի անել (զիշել), աշոտ տալ (հաշիկ տալ), ատկազ զալ (իրաժարվել), գրուզիտ անել (հոգեբանական, բարյական

կամ ֆիզիկական ձնշում գործադրելով՝ մեկին դրդել ինչ-որ քայլի), դավադիտ անել (ձանձրացնել), դուխից ընկնել (վհաստվել), զաստավիտ անել (ստիպել), ժաղետ անել (ափսոսալ), լումկա անել (շփոթեցնել), կայֆավատ ըլնել (ծաղրել), կուռսի ըլնել (տեղյակ լինել), նակազատ անել (պատժել), մանքը մնալ (շփոթվել), մատոց անել (ուշադրություն գրավել), մուտքիտ անել (ստել, խարել), նառոշնի անել (դիտմամբ անել), պայիտ ըլնել (բռնվել), պոիգնատ զալ (խոստովանել), վալնավատ ըլնել (անհանգստանալ), վանյատ անել (վատ հոտ արձակել), վիռուչատ անել (փրկել, օգնել), տոշկա բռնել (ծաղրել), ցեպիտ անել (շրջապատել), ուզավարիտ անել (համոզել), ֆազերը զցել (հունից դուրս զալ) և այլն:

Ժարգոնի տարածմանը լայնորեն նպաստում է նաև հեռուստատեսությունը, որը թեն կոչված է բարձրացնելու հասարակության գեղագիտական մակարդակը, սակայն երբեմն ցածրորակ, երբեմն գրեհիկ հեռուստահաղորդումների և հեռուստասերիալների միջոցով ներկայացվող «գողական» աշխարհի քրեական տարրերին փորձում են ընդորինակել պատանիները. օգտագործելով նրանց հատուկ բառապաշարը՝ կարծում են դրանով ինքնատիպ են դառնում, ինչպես՝ ատեցնյակ, ախպերնյակ, ընգերնյակ, պտա ուտաս, պտա խոսսա, հյա բռնա դրան և այլն:

Երևանի խոսկացական լեզվում գործածվող ոչ գրական տարրերից են նաև գրեհկարանությունները: Դրանք բացասական երանգ ունեցող, հանրության կողմից կոպիտ, գրեհիկ ձանաշխած բառերն ու արտահայտություններն են, հիմնականում արհամարհական, անարգական, հայիոյական բառերը, ինչպես՝ քյալ, իսքը, տուփտա, քնձիս, չմո (արժանապատվությունից զուրկ): Այս բառերը ևս գրական լեզվի նորմից դուրս են և բնորոշվում են հասարակացման, պարզեցման, կոպտության երանգներով: Դրանք հատուկ են առօրյա բարբառախանության խոսակցական լեզվին, օրինակ՝ զիստկվիր, ուշիտ փակիր, դանդաղոց, շնթռել, լակել, խժոել, ռնդել, զարհումար ու չոռս և այլն:

Որքան ել ցավալի է խոստովանել, մեր օրինակներն աննկատ ձայնագրությունների միջոցով գրանդ էնք մեզ շրջապատող պատանիների և երիտասարդների խոսքից, որ զգիտես՝ դրանք հասարակարանություն են, ժարգոն՝ թե գրեհկարանություն. թերևս բոլորի անհաջող միասնությունն են, որոնք չափազանց տղեղ են դարձնում խոսքը: Այսպէս եզրու (ուժեղ, սպորտային կազմվածք ունեցող), տրաքս (հարքած), ցլցկալ, տժժալ (հաձելի ժամանակ անցկացնել), ղժժալ (շատ ուժեղ ծիծաղել), մզզցնել (ապուշացնել), խզարել (փայլուն ձևով ի կատար ածել), չըրով դնել, մեքենան ցրինել, (շատ ուժեղ կոստրել), վերջն ա, երբեմն ի՝ վեռշն ա (շատ արտասմվոր), ճարել էինք, բացում ա, ջոզած ա, մորթած ես պահել, հելար ստուց, «Ապե՛, ի՞նչ կարանք թափովի մեջ խփենք», «Գազ տու քոնք», «Կողս լրվի», «Մեռնեմ սրդիդ կլապանների զնզգնզցին», «Մի հատ զրի քեզ», «Քո սանրվածքը ինձ մորթում ա», «Ինձի էսի քեսամբ զգում ա», «Էս ի՞նչ բազար ա», «Քեզի տոշնի պահի», «Լավի վրով ա զրել, ոչ թե վասի վրով» և այլն: Այդպէս նաև մի շարք բառեր ու արտահայտություններ, որոնք դարձյալ ունեն հասարակական երանգավորում

(այսինքն՝ փողոցային-երիտասարդական), հիմնականում օգտագործվում են կրտսեր սերնդի ներկայացուցիչների, ինչպես նաև՝ կրթական միջին և ցածր մակարդակ ունեցողների կողմից՝ խոսքը զիտակցված ոճավորելու, միևնույն ժամանակ հասարակական մյուս խմբերի խոսքին հակադրվելու նպատակով, ինչպես՝ սոուզիկ (ոչ հեղինակավոր), մասմայի բաղա, պայթած դեմք, հավեսով սոուպոյ, շիգարով գեղո, գոազով գեշ, քյալի բազարներ, դեմքին թռնել (անպատճել, ասել), սոուս հանել (շատ բարկանալ), ատեց (հայրիկ), հորս արե, մորս արե, «էս ո՞ւ ես, արա», «երդում եմ կերե», «վրովդ կանցնեմ (սպառնալիք)», «վաստ է ս», «զավ չէ ս, արա», «այ հոգնած», «ձիգ պահի քեզ (իրեն խելոք չպահողին՝ հորդոր)», «սոուպոյ մեռնում ա», «զյաջ թնեմ, թէ տենց սիրուն աղջիկ տեսել ես», «ազի զ, վրետ սիզարետ կա, ախազորդ ծիսնես», «վրետ փող կա», «կափարիչս թռնում ա», «սոումուգ ա մոտդ», «նայի քեզ դեպուտ չանեմ ձեր սոուն», «արդեն յուղ ես վառում», «դուի տվինք, դառար դուխտվկա», «թեփ ուսում, դեսպէ մեծանում ա», «դեպուտ եղի սոուց» և այլն:

Նշված բոլոր բառերն ու արտահայտությունները, անշուշտ, որոշակիորեն տարբերվում են խոսակցական բառապաշարից իրենց ոճական-արտահայտչական գորնավորմամբ:

Երբեմն նմանատիպ բառերն ու արտահայտություններն ունեն՝ *ա*) *հոմանիշներ*, ինչպես՝ *սորտ-կոտոր-կայդր-տիպ* (ինչոք մեկի բնորոշում), *սոուֆտել* (անկապ խոսել) և *բրիթըցնել* (դուրս տալ), *շոպլիկություն* անել և սապոնվել՝ «քծնել», դժալ և կայֆավատ լինել՝ «ծաղրել ինչ-ոք մեկին», վզին դնել և գրուզիտ անել՝ «ճնշում գրոծարել», վիզ դնել և տասովկա տենալ՝ «մի բանի ճարը տեսնելը», լիել-բգել-տփել-սպանել՝ «ծեծել», ժմոտ և ժակետչիկ՝ «Ժատ», լումկա և մանրօն «շափազանց հիմարթափված», սպանում ա և մորթում ա «անչափ գրավում է», չամովել -կպոշկել-ունքերից կախվել-կախվել դեմքին-ծակած պահել՝ «զզլացնել միևնույն հարցող հոգնեցնել» և այլն, *բ*) *համանուններ*, ինչպես՝ *կպցնել* (մի տեղից մի բան ճարել)-կպցնել (ինչ-ոք մեկին գրավել)-կպցնել (հարված հասցնել), հագնել (կրվել օրինակ՝ «Էլի հագել են իրար էն երկուսը»)-հագնել (երկար ժամանակ ինչ-ոք նոյն բանով գրաղվել, օրինակ՝ «Աչքերս քոռացավ, ի՞նչ եմ հագել սրան»), *գ*) *հականիշներ*՝ բիթի (հասկացող)-քյալ (բութ) և այլն:

Կարծում ենք՝ այստեղ տեղին է հիշել Բոսիք Բրոդսկու մաղթանքը՝ ուղղված Միջիգանի համալսարանի շրջանավարտներին. «Այժմ էլ, հետազայտմ էլ, կարծում եմ, իմաստ ունի կենտրոնանալ սեփական լեզվի ճշգրտության վրա: Աշխատեք ը ընլայնել ձեր բառապաշարը և դրա հետ վարվեք պայնական, ինչպես վարվում եք ձեր բանկային հաշվի հետ: Ավելի շատ ուշադրություն հատկացրեք և աշխատեք ավելացնել ձեր շահաբաժնը... Նպատակը ձեր ինքնարտահայտումը հնարավորինս լիարժեք ու ճշգրիտ դարձնելն է...»<sup>3</sup>:

<sup>3</sup> Գրական թերթ, 3 սեպտեմբերի, 2010:

Այսպիսով՝ յուրաքանչյուրիս սրբազն առաքելությունն է մեր մայրենին անաղարտ պահելը:

«Երեմն լեզուն համեմատում են ծովի հետ...առաջին հայացքից՝ ոչ մի ընդհանուր բան։ Սակայն ծովում, ինչպես և լեզում, հաճախ հանդիպում են անհարազատ տարրեր, այսինքն աղք, որը ծովին ինքը նպաստավոր պայմաններում անպայման դրւում է նետում։ Հուսանք, որ մեր լեզվի ինքնամաքրման շնորհը կիարատնի»<sup>4</sup>։

Ghamoyan Lusine - Non-Literary Elements in the Colloquial Language of Yerevan (slang words, vulgarisms).- Every day In the colloquial language of Yerevan, numerous deviations, violations, various facts are registered in consequence of which a corresponding language layer with its certain vocabulary, accent, unique expressive styles comes out.

Our society (especially the youth), almost in all situations, started speaking such colloquial language, which is full of slang words and vulgarism. It is a serious problem in the way of formation of polite society, and one of the biggest values of each person is to keep the mother tongue pure.

Гамоян Лусине- Нелитературные элементы в разговорном языке Еревана (жаргонные слова, вульгаризмы).- В разговорном языке Еревана часто регистрируются многочисленные отклонения, нарушения, различные факты, вследствие чего возник соответствующий языковой слой с определенным словарем, акцентом, своеобразными выразительными стилями. Наше общество (особенно молодежь) почти во всех ситуациях начало говорить на таком разговорном языке, который полон жаргонных слов и вульгаризмы. Это проблема в формировании нравственных основ, и нашей задачей должно быть сохранение родного языка чистым.

---

<sup>4</sup> Համացանց, www. armedia. am:

**ԱՍՏՎԱԾԱՇՆԹԻ «ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ» ԳՐՁԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ  
ԵՎ ԳՐԱԲԱՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ  
ՏՐՊԵՐԸ**

Երեմիայի գիրքը բաղկացած է 52 գլուխներից, որում կան զգայի թվով հարցական նախադասություններ: Այսպես, աշխարհաբար տարբերակում կա 146 հարցում, իսկ գրաբարյանում՝ 145, սակայն այնպես չէ, որ աշխարհաբարյան հարցման դիմաց՝ գրաբարյանում միշտ ունենք նույնպես հարցում: Լինում են նաև շեղումներ. մի շարք դեպքերում աշխարհաբար հարցական նախադասության դիմաց գրաբարյանում հանդէս են գալիս պատմողական նախադասություններ, հանդիպում են նաև բացականչական նախադասություններ: Այս փոխհարաբերությունը դրսնորում է այսպիսի բաշխվածություն. աշխարհաբարում պատմողական, գրաբարում հարցական; աշխարհաբարում հարցական, գրաբարում պատմողական; աշխարհաբարում հարցական, գրաբարում բացականչական և վերջապես աշխարհաբարում բացականչական և պատմողական, իսկ գրաբարում հարցական և բացականչական:

Սույն ուսումնասիրությունը կասուրվել է ըստ արևելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն գուգահեռաբար տախիս ենք նաև գրաբար տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թէ ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արևելահայերենի մեջբերումները բաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994թ. Աստվածաշնչից, իսկ գրաբարյանը՝ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության՝ 1997թ. հրատարակածից:

Այժմ ըստ համապատասխան հերթականությունների բերենք այդ դրսնորումները.

**Ա. Աշխարհաբարը՝ պատմողական, գրաբարը՝ հարցական.**

1. «Բարձրացրո՞ւ աչքերդ, ուղիղ դեպի առաջ նայիր եւ տեսն, թէ քո ճանապարհներին ո՞ւր ասես որ պետք է ամրապնդեցիր» - Ամբարձ զաշս քո յուղութիւն՝ եւ տես. ո՞ւր ոչ թաթաւեցար. ի ճանապարհս քո նստար... (Երեմ., 3, 2):
2. «.... Խայտառակ եղան, որովհետեւ ձախողուեցին, բայց ամօթի զգացում ունեցողների պէս շպատկառեցին եւ իրենց կրած անարգանքի մասին շմտածեցին...» - ասում է Տէրը» - ... Յամօթ եղե՞ն զի պակասեցան. եւ ոչ որպէս ամաչեցեալը ամաչեցին, եւ զանարգանս իրեանց ոչ առին ի միտ...., ասէ Տէր: (Երեմ. 6, 15):
3. «.... Ակա՞նց դրէք եւ լսեցէք. այդ բանը չեն ուզում խոստովանել, մարդ չկայ, որ զղայ իր չարութիւնների համար եւ ասի, թէ ի՞նչ գործեցի» - .... Ունկն դիք

եւ լուարուք, ոչ այդպէս խօսին՝ եւ ոչ զոյ մարդ որ զօջանայ ի շարեաց իւրոց, եւ ասէ թէ Զի՞նչ գործեցի.... (Երեմ. 8, 6):

4. «.... Ով իմաստուն այր է, թող հասկանայ այս բանը, եւ ում տրուած է Տիրոց բերանի խօսքը, թող նա մեզ պատմի, թէ ինչի՞ համար կորստեան դատապարտուեց երկիրը...» - ... Ո՞վ այր իմաստուն եւ ի միտ առցէ զայս, եւ առ ո՞ւմ բան բերանոյ Տեառն, պատմեսցէ մեզ թէ վասն էր կորեաւ երկիր.... (9, 12):

5. «Դու մահ պիտի զոնես, որովհետեւ Տիրոց անունից մարգարեացար եւ ասացիր, թէ այս Տունը պիտի դառնայ Սելոմի նման... - .... Զի՞ մարգարեացար յանուն Տեառն եւ ասացեք՝ թէ Իբրեւ զՄԵԼՎԱՄ եղիցի տունս այս... (26, 9):

6. «...Իսկ դու քեզ համար մեծ-մեծ բաներ եւ ինդրում. մի՛ ինդրիր, որովհետեւ,- ասում է Տէրը,- ահա իւրաքանչիւր մարմնի ես շարիք եմ բերելու, իսկ քո անձը ամենուրեք... քեզ եմ պարզեւելու իբրեւ փրկութիւն» .... Եւ դու ինդրես քեզ մեծամե՞ծս. մի՛ ինդրեր. զի ահա ես ածից շարիս ի վերայ ամենայն մարմնոյ, ասէ Տէր, եւ տաց քեզ զանձն քո ի զիւսո յամենայն տեղուց ուր եւ երթայցն անդը: (Երեմ., 45, 5):

7. «....Այսպէս է ասում Զօրութիւնների Տէրը. «Այլեւս իմաստութիւն չկայ թեմանում, հանձարեղները խելակորոյս եղան. զնաց նրա իմաստութիւնը, ծաղրի առարկայ դարձաւ նրա երկիրը:...» - Ի վերայ Եղովմայ այսպէս ասէ Տէր զօրութեանց. Ո՞չ եւս զոյ իմաստութիւն ի թեման. կորեա՞ւ ի խորհուրդ ի հանձարեղաց. զնա՞ց իմաստութիւն նոցա: Խարեցաւ տեղի նորա. ... (Երեմ., 49, 7):

Բ. Աշխարհաբարը՝ հարցական, զրաբարը՝ պատմողական.

1. «...Զէ՞ որ այն օրը, երբ եւ նրանց հանեցի Եզփատացիների երկրից, ու մինչեւ այսօր, ամէն առաւօտ կանուիս ձեր հայրերին խստագրյս խրատեցի ...» - ....Զի վկայութեամբ եղի վկայութիւն հարցն ձերոց՝ յառւրն հանելոյ իմոյ զնոսա յերկրէն Եզփատացոց մինչեւ ցայսօր. կանիսէլ ընդ առաւօտս եւ դնել վկայութիւն ... (Երեմ., 11, 7):

2. Ով Զօրութիւնների Տէր, որ արդար ես կշռում... այնպէս արա, որ տեսնեմ քո վրեժիննդրութիւնը նրանցից. չէ՞ որ իմ աղերսանքը ես քեզ յայտնեցի: - Եւ Տէր զօրութեանց, որ կշռես զիրաւունս...., տեսից առ ի քէն զվրեժիննդրութիւն ի վերայ նոցա. զի առ քեզ յայտնեցի զաղերս իմ (Երեմ., 20, 12):

3. «Այսպէս է ասում Տէրը «Եթէ ցերեկուայ ու զիշերուայ, երկնքի ու երկրի մասին իմ ուխտը չեմ հաստատել, ապա Յակորի եւ իմ ծառայ Դաւթի սերունդը կ'անարգէ՞մ, Արքահամի, Խասհակի եւ Յակորի սերնդի վրայ նրա սերնդից իշխան չե՞մ դնի...» - .... Այսպէս ասէ Տէր. Եթէ զուխտ իմ զսուրչեան եւ զգիշերոյ եւ երկնից եւ երկրի հաստատութեամբ ոչ կարգեցի,՝ Ապա եւ զզաւակն Յակորյ գԴաւթի ծառայի իմոյ անարգեցից, չառնու ի զաւակէ նորա իշխան ի վերայ զաւակին Արքահամա եւ Խասհակայ եւ-Յակորյա... (Երեմ., 33, 25-26):

4. «....Եւ Յուդայի երկրի բոլոր մնացորդները, որ բնակում են Եզփատացիների երկրում, պիտի իմանան, թէ ում խօսքն է հաստատուելու՝ ի՞մը, թէ իրենցը: ...» - .... Եւ ապրեալքն ի որոյ դարձին յերկրէս Եզփատացոց յերկին Յուդայ՝ առք սակաւք բռուով. եւ ծանիցեն ամենայն մնացորդն Յուդայ որ բնակեալ են յերկրիդ Եզփատացոց, թէ ոյր բան կայ, ի՞մ թէ նոցա (Երեմ., 44, 28):

5. Լսեցէք, ուրեմն Տիրոջ խորհուրդը, որ նա խորհել է եղումայեցիների մասին.... . «Միթէ չեն խփում հօտի վերջին ռշխարներին, որ գնան, կանգնած չմնան, եւ հօտը չըրուի: ... » - Վասն այդորիկ լուարուր զիտրհուրդ Տեառն զոր խորհեցաւ ի վերայ Եղովմայեցոց. ... եթէ ոչ հարցին յետինք ռշխարացն, բայց եթէ հաւիտեան կայցն, քակտումն նոցա (Երեմ. 49 20)

6. «Այն օրերին եւ այն ժամանակ-, ասում է Տէրը, - պիտի զան Խարայելի որդիները, նրանք եւ Յուղայի երկրի որդիները՝ միասին, պիտի շրջեն ու լալով զան դէայի իրենց Տէր Աստուածը.... . չէ՞ որ ուխտը յափտենական է, եւ դրանք չպիտի մոռացնեն:.... » - .... Յաւուրսն յայնոսիկ եւ ի ժամանակին յայնմիկ, ասէ Տէր, եկեսցեն որդիքն Խարայելի, ինքեանք եւ որդիքն Յուղայ ի միասին, շրջեսցին եւ լալով զայցեն առ Տէր՝ Աստուած.... զի ուխտ յափտենից է, եւ ոչ մոռացնին» (Երեմ. 50, 4-5):

7. «... Չէ՞ որ Աստուած հատուցող է, Տէրն ինքը պիտի հատուցի նրա պատիժը եւ սաստիկ հարբեցնի նրա զօրավարներին ու նրա իմաստուններին, նրա իշխաններին, նրա զօրավոլուխներին ու նրա զօրաւոր մարդկանց.... » .... զի Աստուած հատուծիչ է, ինքն Տէր հատուցանէ նմա զիատուցումն: Եւ արքերուցէ արքեցութեամբ զօրավարս նորա եւ զիմաստունս նորա, զիշխանս նորա եւ զօրավոլուխս նորա եւ զօրաւորս նորա... (Երեմ., 51, 56-57):

Գ. Աշխարհաբարը՝ հարցական, զրաբարը նույնպէս հարցական.

1. Տէրը, խօսքն ինձ ուղղելով, ասաց. «Ի՞նչ ես տեսնում, Երեմիա» - Եւ եղեւ բան Տեառն առ իս եւ ասէ, Զի՞նչ տեսանես, Երեմիա (Երեմ., 1, 11):

2. Չասացին էլ «Ո՞ւր է Տէրը, որ մեզ հանեց Եզիփտացիների երկրից եւ առաջնորդեց մեզ անապատում, անծայր ու անուղի, անջուր ու անպտուդ երկրում, որտեղով մարդ չէր անցել եւ ուր չէր բնակուել մարդու որդին:... » .... Եւ ոչ ասացին՝ ո՞ւր է Տէր որ ենան զմեզ յերկրէն Եզիփտացոց, եւ առաջնորդեաց մեզ յանապատին, յանքաւ եւ անկախ եւ անջուր եւ անպտուդ երկրին եւ ի ստուերս մահու, յերկիք՝ ընդ որ ոչ անց մարդ, եւ ոչ բնակեաց ի նմա որդի մարդոյ. ... (Երեմ., 2, 6):

3. «.....Արդ, անցէք քետիմացիների կրզիներն ու նայեցէք, մարդ ուրարկեցէք նաեւ Կենար ու լաւ տեղեկացէք, տեսէք՝ եղէ՞լ է այդպիսի բան. ազգերն իրենց աստուածներին փոխէ՞լ են, թէեւ նրանք աստուածներ էլ չեն, բայց իմ ժողովուրդն իր փառքը փոխանակեց նրանց հետ, որոնցից օգուտ չի ունենալու: ... » .... Արդ անցէք ընդ կղզիս Քետիմացոց եւ տեսէք, եւ ի Կենար առաքեցէք եւ խելամուտ եղերուր յոյժ, եւ տեսէք եթէ եղէ՞ւ այսպիսի ինչ. եթէ փոխէցի՞ն ազգին զաստուածս յիրեանց, եւ նորա ոչ են Աստուածը. եւ ժողովուրդ իմ փոխեաց զիառու իր, ուստի ոչ ոզուիցին (Երեմ., 2, 10-11):

4. Լսեցէք Տիրոջ պատգամը, այսպէս է ասում Տէրը. «Միթէ ես Խարայելի համար անապա՞տ եղայ կամ աւեր ու խոպանացեալ երկի՞ր, որ իմ ժողովուրդն ասաց «Անտերունչ կը շրջենք, բայց քեզ մօս չենք զայ... » - Լուարուր զապատգամ Տեառն. այսպէս ասէ Տէր՝ միթէ անապա՞տ եղէ տանդ Խարայելի, կամ աւեր երկիր խոպանացեալ. զի՝ ասաց ժողովուրդ իմ, Անտերունչը շրջեսցուր եւ առ քեզ ոչ եկեսցուր (Երեմ., 2, 31):

5. «.... Բայց այն օրն էլ,- ասում է քը Տէր Աստուածը, ձեզ ձեր վախճանին չեմ հասցնելու. եւ երբ ասելու լինեն՝ «Մէր Տէր Աստուածն այս ամենն ինչո՞ւ արեց մեզ», կ'ասես նրանց «Քանի որ ինձ լրեցիք եւ ձեր երկրում ծառայեցիք օտար աստուածներին. այդպէս էլ օտարներին էք ծառայելու մի երկրում, որը ձերը չի լինելու» - Եւ եղիցի յաւոր յայնմիկ ասէ Տէր Աստուած քո՞ւ ոչ արարից զաեզ ի վախճան: Եւ եղիցի յորժամ ասիցե՞ւ վասն է՞ր արար Տէր Աստուած մեր մեզ զայս ամենայն. ասիցէս ցնոսս, փոխանակ զի թողէր զիս եւ ծառայեցէք աստուածոց օտարաց յերկի ձերում, նոյնպէս ծառայեսցիք օտարաց յերկրի՝ որ ոչ ձերիցէ (Երեմ., 5, 18-19):

Դ. Աշխարհաբարը՝ հարցական, գրաբարը՝ բացականչական.

1. «Ո՞վ կը տար իմ զիսին ջուր եւ իմ աշքերին՝ արտասուրի աղբիրներ, որ ես զօր ու զիշեր ողբայի այս ժողովրդին եւ իմ ժողովրդի դասեր վիրատրներին: ... » - Ո՞ւ տայր զգուխ իմ ջուր, եւ զաշս իմ աղքերս արտասուաց, եւ լայի զժողովուրդս զայս՝ զոխ եւ զգիշեր եւ զվիրատրեալս դասեր ժողովրդեան իմոյ (Երեմ.- 9, 1):

2. «Ո՞վ կը տար ինձ անապատում մի խղճուկ օթեւան....» - Ո՞ւ տայր ինձ յանապատի դոյզն օթեւանս... (Երեմ., 9, 2):

Ե. Աշխարհաբարը՝ բացականչական և պատմողական, գրաբարը՝ հարցական և բացականչական. «...Ինչպէս կործանուեց, ողբացէք, ինչպէս դարձեց նա իր թիկունքը. ամաչեց, ծաղրելի դարձաւ...» - .... Զիա՞րդ փոփոխեցաւ. ողբս առէք. զիս՝ րդ դարձոյց զրիկունս իւր, ամաչեաց եւ եղեւ ի ծառը... (Երեմ., 48, 39):

Ghukasyan Sevak - Types of communication of "The Book of the Prophet Jeremiah" in Ashkarabar and Grabar Variants. - These types in the indicated variants are discussed only on the basis of interrogative sentences. Communication types are distributed as follows: a) Ashkarabar - declarative, Grabar - interrogative. b) Ashkarabar – interrogative, Grabar - declarative. c) Ashkarabar - interrogative, Grabar - also interrogative d) Ashkarabar - interrogative, Grabar - exclamatory. e) Ashkarabar - exclamatory and declarative, Grabar - interrogative and exclamatory.

The greatest number of interrogative sentences are of type b), then - a), and other types are represented by one or two examples. Note the number of interrogative sentences - 141 in Ashkarabar and 148 in Grabar.

Гукасян Севак. Коммуникативные типы "Книги Иеремии" библии на ашхарабаре и грабаре.- В статье исследуются типы коммуникации в вариантах "Книги Иеремии" библии на ашхарабаре и грабаре. Эти типы в указанных вариантах рассмотрены только на основе вопросительных предложений. Коммуникационные типы распределены следующим образом: а) ашхарабар – повествовательный, грабар – вопросительный. б) ашхарабар - вопросительный, грабар - повествовательный. в) ашхарабар - вопросительный, грабар - также вопросительный. г) ашхарабар - вопросительный, грабар – восклицательный. д) ашхарабар – восклицательный и повествовательный, грабар – вопросительный и восклицательный.

Из перечисленных наибольшее количество случаев по типу б), затем – а), а остальные типы представлены двумя и одним примерами. Заметим, что в ашхарабаре 141 вопросительное предложение, а в грабаре – 148.

ՆՈՐՍԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ե. ՀԱՍԱՆ-ԶԱԼԱՅՅԱՆԻ  
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՍ ՄԴՐԱՆԻՑ ԵՐԿՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Աղվանից կաթողիկոս S. Եսայի Հասան-Զալայյանցի երկի<sup>1</sup> լեզուն բնորշվում է բառապաշարի հարստությամբ, հասարակական-քաղաքական կյանքը արտացոլող բարբառային ու փոխառյալ բառերով, ժամանակի մտածելակերպին հատուկ ոճական արտահայտություններով, ինչպես նաև բառիմաստային նոր կիրառություններով ու նորակազմություններով:

Սույն հոդվածի շրջանակներում երկուս հանդիպող հեղինակային նորակազմությունները ներկայացնում ենք բառակազմական կաղապարների ու ենթակաղապարների միջոցով<sup>2</sup>:

Հեղինակի բառապաշարում գործածված նորակազմությունները սովորաբար առանձնացվում են հարաբերական իմաստով: Ուստի, չոնքնալով Եսայի Հասան-Զալայյանցի երկի բառապաշարի որևէ ուսումնասիրություն կամ համարաբառ, նորակազմությունների առանձնացման հարցում առաջնորդվել ենք համեմատական ժամանակագրությամբ՝ իմանվելով գրաբարյան հայտնի բառարանների<sup>3</sup> և այդ շրջանի գրաբարագիր պատմագրության որոշ տվյալների վրա<sup>4</sup>:

Ե. Հասան-Զալայյանցի երկի բառապաշարում գործածված հեղինակային նորակազմություն համարվող բառային միավորները, որոնք բառարաններում վկայված չեն, համեմատել ենք ՆՀԲ-ի, ԱԲ-ի և այլ բառարանների<sup>5</sup> տվյալների հետ :

<sup>1</sup> **S. Եսայի Հասան-Զալայյանց**, Պատմութիւն համարօս Աղուանից երկրի, Յերուսաղեմ, 1868:

**S. Եսայի Հասան-Զալայյանց**, Պատմութիւն համարօս Աղուանից երկրի, Ստեփանակերտ, 2007 (թարգմանություն):

<sup>2</sup> Տե՛ս **Գ. Զահորյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974: **Գ. Զահորյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989:

**Է. Աղայան**, Ընդհանուր և հայկական բառավանդություն, Ե., 1984: **Լ. Հովհաննիս**, Գրաբար բառակազմությունը, Ե., 1987: **Լ. Խաչատրյան**, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011:

<sup>3</sup> **Գ. Աւետիքեան**, **Խ. Սիրմէկեան**, **Մ. Աւետիքեան**, Նոր բառզիրք հայկագեն լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հհ.1-2, Վենետիկ, 1836-1837: Առձեռն բառարան հայկագենն լեզուի (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, Ս. Ղազար, 1846:

<sup>4</sup> Հմեմու. **Ստ. Շահումյան**. Ընտիր պատմութիւն, Վաղարշապատ, 1871: **Աբրահամ Կրետացի**, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870: **Խաչատրուր Զուլայեկի**, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905: **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմաց, Վենետիկ, 1977:

<sup>5</sup> **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, հ.Ա-Բ, Ե., 2000: **Ռ. Ղազարյան**, Հ. Ավետիքյան, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ԱՀԲ), հհ.Ա-Բ, Ե., 1987-1992: **Ստ. Սալիխանեանցի**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ԱԲԲ), հ.1-4, Ե., 1944-1945: **Հ.Աճարյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս I, մաս II, Ե., 1940-1951: **Հ. Աճարյան**, Հայերեն արմատական բառար, (այսուհետև՝ ՀԱԲ), հ.1-4, Ե., 1971-1979: **Երեմիս Սեղրեցի**, Բառզիրք հայոց, Ե., 1975 (քնն.

Պատմության մեջ առանձնացրել ենք 11 նորակազմություն, որոնք բաղդրյալ են՝ կազմված հայերենի բարակազմական ներքին օրինաշափություններով: Դրանցում հավասարապես կան և՝ բարդություններ, և՝ ածանցավոր կազմություններ: Բարդություններից առավել կենսունակ են հոդակապով կադապարները:

Այդ նորակազմություններն են՝ *Ճիւնաբնակ, լեռնաբնակիչ, զինակազմ, իշարարոյ, համարաթիւ, անհարկադիմք, ազգաշարութիւն, կրկնաշարագոյն, քաղցրահոտ, ստորանկանի, նորարուսիկ*:

Մեծավաստակ լեզվաբան Գ.Զահոնյանի բնութագրմամբ՝ «Լեզվական կադապարները բաղադրիչ տարրերի հետևողական շարքեր են՝ դրանց կանոնավորված փոխկապակցությամբ (փոխհարաբերությամբ), որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ»<sup>6</sup>:

Լեզվական կադապարների ուսմունքի մեջ են մտնում բառակազմական կադապարները: Դրանք բառակազմական տարրերի զուգորդման եղանակներ են, որոնց օգնությամբ կազմվում են բարդ և ածանցավոր բառերը: Հետևաբար բառակազմական կադապարի հասկացությունը երկու կարգի միավոր է ներառում՝ բարդ բառեր և ածանցավոր բառեր<sup>7</sup>:

Նորակազմ բառերի իմաստակիր հատվածը համարվում է բառակազմական հիմք, որը կարող է լինել պարզ (արմատական) և բաղադրյալ: Բաղադրյալ հիմքերն ել իրենց հերթին լինում են սերող և բաղադրող<sup>8</sup>:

Կադապարի բաղադրիչները նշանակել ենք լեզվաբանության մեջ ընդունված համապատասխան տառանիշներով (լատինատառ): N (գոյական). Pr (դերանուն), V(բայ), M(մակրայ), A(ածական), P(կայ), Nm(թվական):

Բարդության կադապարը ստանալու համար նրա բաղադրիչները՝ սերող և բաղադրող հիմքերը, հիմնային ածանցները և հոդակապը նույնականացնելու համապատասխան տառանիշներով (լատինատառ): S (սկզբնահիմք), Ը (հնչյունափոխված հիմք), a (ածանց), j (հոդակապ), p (նախորդ), f (քերականական մասնիկ):\*

Բաղադրյալ բառի կադապարի մեջ տարբերվում են միջուկային և առմիջուկային բաղադրիչներ: Միջուկային բաղադրիչը կամ միջուկը բաղադրության արմատն է, որը ձևավորում է բառակազմական հիմք, իսկ առմիջուկային բաղադրիչը համատիպ որևէ միավորն է կամ կախյալ ձևությը<sup>10</sup>:

բնագ, առաջ. և ծանոթ.՝ Հ. Արմայանի: **Լ. Հովհաննիսյան.** Գրաբարի բառարան. ՆՀՐ-ում չլիցաված բառեր, Ե., 2010: **Լ. Խաչատրյան.** Գրաբարի ուսումնական բառարան, Ե., 2013:

<sup>6</sup> **Գ. Զահոնյան.** նշվ. աշխ., էջ 11:

<sup>7</sup> **Լ. Հովհաննիսյան.** նշվ. աշխ., էջ 51, 56: **Լ. Խաչատրյան.** նշվ. աշխ., էջ 12-13:

<sup>8</sup> **Գ. Զահոնյան.** Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 159: **Է. Արայան.** նշվ. աշխ., էջ 247:

<sup>9</sup> **Գ. Զահոնյան.** նշվ. աշխ., էջ 11-13: **Լ. Հովհաննիսյան.** նշվ. աշխ., էջ 56: **Լ. Խաչատրյան.** նշվ. աշխ., էջ 13-14:

<sup>\*</sup>Տես նոյն տեղերում:

<sup>10</sup> **Գ. Զահոնյան.** Ժամանակակից հայոց լեզվի..., էջ 158:

Նոր շրջանի գրաբարագիր պատմություններում տարածված են հոդակապով իսկական բարդությունները<sup>11</sup>:

Այդպիսիք հանդիպում են նաև Հասան-Զալալյանցի երկում: Ներկայացնենք այդ բառերի բառակազմական կաղապարներ:

**Բարդության կաղապարներ:** Ըստ բառակազմական հիմքերի՝ երկիիմք հոդակապով բարդություններն ունեն SjS հիմնակաղապարը, որի մասնակաղապարները հատկանշվում են բաղադրիչների խոսքիմասային արժեքով<sup>12</sup>: Բարդությունների կազմությանը մասնակցում են միայն նյութական իմաստ ունեցող խոսքի մասերը: Այսպէս՝ SjS հիմնակաղապարը, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, ունի հետևյալ մասնակաղապարները:

NjN (գոյ.+հոդ.+գոյ.). **Համարաթի** – համար պիլ. արմատ է «թիվ, հաշիվ, չափ» (ՀԱԲ, 3, 21-22): Բնագրում բառը գործածված է «մարդահամար» իմաստով: «Զամենեսեան ի **Համարաթին** զրելով՝ տարեալ ցուցին ատենի արքային»(14):

AjN (ած.+հոդ.+գոյ.). **Քաղցրահոս-** «քաղցր հոտ ունեցող». «...մերձենալ գարնանային **քաղցրահոս** շնչմանն որ մեզ դառն երեւեցաւ» (36):

NjV(գոյ.+հոդ.+բայ). **Ճիւնարնակ** - «ձյան մեջ ապրող, բնակվող». «Այլ և լեռնականքն Կաւկասու, **Ճիւնարնակ** ազգքն Լեռաց, որ և Լազկիք՝ և ըստ գրոց Հոնք կոչեցեալը, և բնական թշնամիք ի սկզբանէ երկրիս Ասրպատականի, ազգիս Հայոց և օրինաց մերոց» (21):

SjS կաղապարի երկրորդ (սերող) հիմքը առաջին հնյունափոխված (բաղադրող) հիմքին միացել է հոդակապով: Երկում հանդիպում է այս կաղապարի մեկ մասնակաղապար՝

NjN (գոյ. +հոդ.+գոյ.). **Ջինակազմ** - «զենքի կազմությամբ, պատրաստությամբ». «Քաջամարտիկ մանկունք մերոցս դիմաց յառաջ խաղացեալ ճախըր առեալ քաջընթաց երիվարօք, և **ջինակազմ** զրահիւր պարէին յանդիման ճակատուն» (48-49):

**Ածանցման իիմնակաղապարը** ենթարրում է նվազագույնը մեկ միջուկային և մեկ առմիջուկային անդամ<sup>13</sup>, այսինքն՝ մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևույթ: Դրանք լինում են նախածաննցավոր և վերջածաննցավոր և, ըստ կաղապարման բանաձևումի, կունենանք Sa և aS ածանցման կաղապարները: Հաճախադեպ են վերջածաննցավոր կաղապարները:

Sj(Sa)- առաջին մաքուր հիմքով ձևակորված բարդությունը հոդակապով միանում է երկրորդ գոյականակերտ ածանց ունեցող հիմքին:

**Ազգաշարութիւն-** «ազգերի շարք». «Արդ որպէս ի գլուխ ճառիս խորշելով խոյս ետու ըստ կարգի և ըստ **ազգաշարութեան** ողջոյն գիտել և գրել զկարգ թագաւորութեանն Պարսից» (7):

<sup>11</sup> Հմմոն. Երկանավեպ (Խ. Զուղայեցի, Պատմութիւն... 265), բարձրակարկառ (Խ. Զուղայեցի, 305), մերձասահման (Աբրահամ Կրետացոյն Պատմութիւն անցիցն, 63) և այլն:

<sup>12</sup> Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 16:

<sup>13</sup> Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 44:

**Sj(Sa)-** հնչյունափոխված հիմքով ձևավորված բարդությանը հողակապով միացել է գոյականական ածանցով բաղադրված երկրորդ հիմքը. **Լեռնարիսկին**- «լեռներում ապրող, բնակվող». «Քանզի գնացեալ իսկոյն ընդ իւր միարանեցոյ զազգն Լազկեաց և զամենայն կովկասային լեռնարիսկիշսն» (54): ՆՀԲ-ում (1,883) և ՍԲԲ-ում (2,194) կա լեռնարինակ ածականը, որ նշանակում է «լեռներում բնակող՝ ապրող»: Այդ ածականից -իշ ածանցով հեղինակը կազմել է գոյական:

(SjS)- հողակապով բարդ հիմքին, որի սերող բաղադրիչը հնչյունափոխված է, միացել է վերջածան: **Նորարուսիկ**- գրաբարի նորարոյս՝ «նորաբորոշ, նորատունկ» (ՆՀԲ, 2, 442) ածականից իկ փաղաքշական ածանցով կազմվել է **նորարուսիկ** նորակազմ բառը, որը, կարծում ենք, երկում «նորելուկ, նորաթուիս» իմաստով է: Օրինակ՝ «Բակ նորարուսիկ անխոհեմն այն գրեաց հրովարտակ» (52):

**Sj(Sa)-** երկրորդ անհնչյունափոխ վերջածանցավոր բաղադրիչը (սերող հիմքը) առաջին հնչյունափոխված բաղադրիչին (բաղադրող հիմքին) միացել է հողակապով: **Խշարարոյ** - «կոպիտ, գռեհիկ բնավորություն տեր, համառ»: «Վասն որոյ ազահ և անազորոյն ազգն այն, մանաւանդ թէ **խշարարոյին** կողոպտեալ առ հասարակ մերկացուցին» (33):

(SjS)a - հողակապավոր բարդ հիմքին, որի բաղադրող բաղադրիչը հերնչյունափոխված է, միացել է վերջածանց. **Կրկնաշարագոյն** - Այս ածականը կրկնաշար ձևով վկայված է ՆՀԲ-ում (1,1136) և ՍԲԲ-ում (418) բացատրված է «կրկին և կրկին չար, կարի չար, ամենաչար, չարության պատճառ»:

Ուսումնասիրվող բնագրում հեղինակը կազմել է այս ածականի համեմատական աստիճանը՝ «ավելի չար» նշանակությամբ: Օրինակ՝ «Ձկնի որոյ ի պի թուին Շահոռուի ումն կրկնաշարագոյն» բան զնա երեւեալ»(6):

a(S+e+c)<sup>14</sup> նախածանցավոր կազմություն է, որտեղ սերող հիմքը եռաձևույթ է (անկ-ան-իլ). **Սոսորանկանիկ**- ՆՀԲ-ն (2,749), ՍԲ-ն(689) և ՍԲԲ-ն (4,268) բերում են սոսորանկել չեզոք սեռի բայաձևը՝ մի քանի իմաստներով՝ 1. «ներքն ընկնել ցած գորովկել» 2. «ենքարկվել», 3.փոխ.՝ «հպատակել, հնազանդել»: Բնագրում հեղինակը նկատի ունի պարսից թագավորության անկումը, կործանելելը: **Սոսորանկանիկ** ձևը, կարծում ենք, լատինատիպ կազմություն է: Այսպէս «Քանզի ի նուազիլ միանգամայն և **ի սոսորանկանիկ** թագաւորութեանն Պարսից» (14):

(SS'jS)a - բարդ ածանցավոր բառի քերականական ձևավորում ունեցող բաղադրիչին հողակապով միացել է անհնչյունափոխ վերջածանցավոր բաղադրիչը: **Մեարկադէմք** - «սարսափագրու». «Երբու թէ ընդելք որսորդք, քաջը, և կիրքը ի չարիս իւրեւանց, և **մեարկադէմք**, որ զանուն և զձայն նոցա միայն լսելով սարսէին և դոդային մերձակայք նոցին» (35):

<sup>14</sup> Պայմանականորեն -ան հիմքակազմից ածանցը նշանակվում է ե-ով և, իսկ անորոշի դերայական վերջավորությունը՝ շ-ով (տե՛ս Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 218-219):

Հստ խոսքիմասային պատկանելության՝ Ե. Հասան-Զալալյանցի Պատմության նորակազմությունները դասակարգել ենք հետևյալ կերպ.

Գոյական՝ **լեռնաքնակիչ, համարաթիւ, ազգաշարութիւն:**

Ածական՝ **ձիւնաքնակ, զինակազմ, իշարարոյ, ահարկադէմք, կրկնաշարագոյն, քաղցրահոտ, նորաբուսիկ:**

Բայ ստորանեկանի:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի գրաբարի բառապաշարում, հադրդակցական պահանջներով պայմանավորված, գրաբարյան որոշ բառեր ձեռք են բերում նոր իմաստային կիրառություններ: Ինչպես նկատում է Վ. Համբարձումյանը՝ «Դրանք շաղկապվում են տվյալ շրջանի լեզվամտածողությանը, արտահայտվում են բառի իմաստային ընդհանրական դրսնորման մեջ՝ հանդես գալով իբրև բառի իմաստային ընդհանրական դրսնորմ»<sup>15</sup>:

Ուսումնասիրվող երկում ևս թիվ թվով բառեր գործածված են ոչ առաջնային, նոր իմաստներով: Փորձ է արվել պարզելու, թե լեզվի զարգացման այս փուլում բառերի իմաստային ինչպիսի փոփոխություններ են տեղի ունեցել: Այդ բառերն իրենց համապատասխան իմաստներով ստուգել ենք գրաբարի վերոնշյալ ծավալուն բառարաններով և համեմատել տվյալ ժամանակաշրջանում գրված մի քանի պատմական երկերի հետ: Օրինակ՝

1. **Հրացան** - ՆՀԲ-ն (2,139) և ԱԲ-ն (473) նշում են այս բառի «հուր՝ կրակ ցանող, շանթառաք, կայծակ» իմաստները: «Բառզիրք հայկագեան լեզուի»<sup>16</sup> աշխատության մեջ ուշ շրջանի նորակազմությունների բաժնում ավելացվել է բառի «քօփ, դումպարա, թիֆենկ» իմաստը, այրպես է բացատրված նաև ՄԲԲ-ում՝ «Ճեռքի հրազէն՝ երկայն մետաղեայ փողով ու փայտէ կորով» (3,149): Գրաբարյան բառը բառիմաստի ներացման հետևանքով վերածվել է ռազմական տերմինի, զենքի մի տեսակի: Հետևաբար, ուսումնասիրվող բնագրում նույնպես հրացանն ըլքրոնվում է այս վերջին իմաստով, որը «մինչ այդ հայտնի բառի նոր իմաստային կիրառություն է»<sup>17</sup>: Այսպես՝ «Եւ ի ձայնէ հրացանացն սրասայր վայրն այն» (49):

2. **Գծագրեւ-** ՆՀԲ-ն (1,562) և ԱԲ-ն (195) այս բառի համար արձանագրում են «ծրագրել, ստուերագրել, դրոշմել, նկարել, ձևացնել» իմաստները, մինչդեռ ուսումնասիրվող երկում այն «նկարագրել, շարադրել» նշանակությամբ է: Այսպես՝ «Յետ այսորիկ պարտիմք ի ներկայ ժամանակս այս՝ յորում կամք, գծագրել աստ» (12, 19):

3. **Առնեւ-** անկանոն բայը, որ դասական հայերենում հայտնի է «գործել, անել, կատարել, ստեղծել, կերտել» (ՆՀԲ, 1,308. ԱԲ, 103) և այլ իմաստներով, երկում անցյալ կատարյալ ժամանակով (արային) գործածված է «հասցնել, տանել» նշանակությամբ: Օրինակ՝ «Ապա զոռւնն, զկանայս և զորդիս և զամենայն ինչն իբրեւ ի գերութիւն վարեալ ածին ի Շամախի. զկնի որոյ

<sup>15</sup> Վ. Համբարձումյան, 18-19-րդ դդ.գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը. - Պատմաբանասիրական հանդես, 1(96), Ե., 1982, էջ 77:

<sup>16</sup> Սխ. Սերաստացի. Բառզիրք հայկագեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1749, էջ 557-558:

<sup>17</sup> Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 75:

զննեալ և որոնեալ զամենայն զոր ինչ և ուներ, զայն եւս առին և **արարին** արքունիս» (29):

4. **Կասիմ (կասեցայ)**- բայր ՆՀԲ-ում (1,1059) և ԱԲ-ում (388) վկայված է «Ետս ընկրկիլ նահանջիլ, քաշուիլ, դադրիլպակսիլ» իմաստներով: Քննվող բնագրում այն գործածված է ժմատական խոնարհմամբ **ոչ կասեցաւ** «չհրաժարվել» իմաստով: Այսպես «...Գնաց յերկիր իր ի Կախեթ. բայց **ոչ կասեցաւ** և ոչ դադարեաց ի չարութենէ» (54. -Գնաց իր երկիրը՝ Կախեթ, բայց **չհրաժարվելց** չդադարեց չարությունից)<sup>18</sup>:

Այսպիսով՝ Հասան-Զալայանցի երկում նորակազմությունները սակավ են, ընդամենը 11, որոնք ստեղծվել են բառաբարդմամբ և ածանցմամբ:

1. Բառաբարդման եղանակով ստեղծված նորակազմություններն ունեն SjS հիմնակաղապարը, որի մասնակաղապարները, ըստ խոսքիմասային պատկանելության, արտահայտվում են՝ NjN, NjN, AjN, NjV ձևով:

2. Նորակազմություններում առավել հաճախադեպ են ածանցման կաղապարները, որոնք դրսուրվում են՝ Sj(Ss), SjSa, Sj(Ss), Sj(Sa), (SjS)a, (SS'jS)a մասնակաղապարներով:

3. Երկի նորակազմություններում թվով գերազանցում են ածականները (7), ապա՝ գոյականները (3) և բայր (1):

4. Պատմագիրը գրաբարյան մի քանի բառեր գործածել է նոր իմաստներով՝ համարելով լեզվի բառիմաստների շարքը: Դրանց կիրառությունը պայմանավորված է հեղինակի լեզվամտածողության և բառակերտման յուրահատկություններով:

Sahakyan Ruzanna - New Formulations in «The Brief History of Aghvan Country» Written by Esayi Hasan-Jalalyants.- In Esayi Hasan-Jalalyants compositions, we have outlined 11 new formulations. These are: *Ճիւնարնակ, լեռնարնալիշ, զինակազմ, իշաքարոյ, համարաթիւ, ահարկաղէմք, ազգաշարութիւն, կրկնաշարագոյն, քաղցրահոտ, սոսորանկանի, նորարուսիի*:

They are compounds, made of formative internal patterns of Armenian.

1. New formulations, made of word compounding, have SjS main pattern, which part patterns, due to speech part, are expressed by NjN, NjN, AjN, NjV.
2. In new formulations, affix patterns are most common, which are displayed in Sj (SS), SjSa, Sj(SS), Sj(Sa), (SjS)a, (SS'jS)a part patterns.
3. In the composition, adjectives make greater number (7), then nouns (3) and verb (1).
4. The historian has used some Old Armenian words with new meanings, replenishing word meanings of the language. Their usage is due to the author's linguistic thinking and word creation peculiarities.

<sup>18</sup> Եսայի Հասան-Զալայեանց, Պատմութիւն համառօս... (թարգմանություն), էջ 110:

Саакян Рузанна - Новообразования в работе “Краткая история Албании” Есаи Гасан- Джалалянца.- В произведении Есаи Гасан-Джалалянца мы выделили 11 новообразований. Такими являются: *ձինարնակ*, *լեռնարնակիչ*, *զինակազմ*, *իշարորդ*, *համարաթիւ*, *ահարկադէմք*, *ազգաշարութիւն*, *կրկնաշարագոյն*, *բաղդրահոլու*, *սոլորանկանիկ*, *նորարուսիկ*: Они составные и отражают внутренние закономерности формирования слов в армянском языке.

1. Новообразования из сложных частиц имеют основную SjS форму, по смысловой идентичности выражаются NjN, NjN, AjN, NjV формой.
2. В новообразованиях наиболее распространены аффиксы, что отображаются в Sj (Ss), SjSa, Sj (Ss), Sj (Sa), (SJS), (SSfjS) формах.
3. В новообразованиях произведения больше прилагательных (7), затем, существительных (3) и глаголов (1).
4. Летописец некоторые из слов грабара использовал в новых значениях, дополняя таким образом смысл слов в языке. Их использование связано с особенностями языкового мышления и формирования слов автора.

## Գ. ԶԱՀՈՒԿՑԱՆԻ «ՀԱՅԵՐԵՆ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՄԱՐԴԱՐԱՆԻ» ՄԱՍԻՆ

Հայերենի համեմատական ուսումնասիրության գործնական աշխատանքի մի բնագավառն է ստուգաբանական բառարամի ստեղծումը: Այս բնագավառում առաջին փորձը պատկանում է Պ. դր Լազարյան, որ ժամանակին քննում է երկուսուկես հազարից ավելի հայերեն (բառ)արմատ՝ ի համեմատություն հին հնդկերենի (սանսկրիտի), Ավեստայի լեզվի, հին պարսկերենի, այլև հունարենի, լատիներենի և Եվրոպական մի քանի նոր լեզուների<sup>1</sup>: Երկրորդ փորձը Հ. Հյուրշմանինն է, որ տալիս է ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ շորջ երկու հազար հայերեն (բառ)արմատի ստուգաբանությունը<sup>2</sup>:

Նշենք նաև, որ մինչև 1920-ական թթ. մեզանում չի եղել հայերենի (բառ)արմատների տևական հավաքչական-ստուգաբանական այնպիսի փորձ, ինչպիսին եղավ Հ. Աճառյանի աշխատանքը, որը լույս է տեսնում «Հայերեն արմատական բառարան» վերնագրով (հհ. 1-7, Ե., 1926-1935)<sup>3</sup>:

Գ. Զահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանը» (Ե., 2010) այս բնագավառում վերջինն է<sup>4</sup>: Բառահոդվածի կառուցվածքի, ինչպես նաև ծավալի առումով այն, ինչ խոսք, զիջում է նախկինում լույս տեսած բառարաններին, մանավանդ Աճառյանի «Արմատականին»: Նոյնիսկ ստացվում է այն տպավորությունը, որ այն հիմնականում կազմված է հեղինակի «Հայոց լեզվի պատմության», մասամբ այլ կարգի աշխատանքների նյութի՝ բնիկ և փոխառյալ բառերի ցանկերի հիման վրա, ընդ որում ակնհայտ լրացումներով և շտկումներով, որոշ դեպքերում նոր մեկնաբանումներով:

Բառարանը լույս է տեսել հեղինակի ոչ անմիջական հսկողության պայմաններում, ուստի նրանում, բնականաբար, տեղ են գտնել որոշակի թերացումներ, որոնք վերաբերում են բառահորվածների կառուցմանը, մասնավորապես (բառ)արմատների հավաքմանը և տեղակայմանը, վերականգնված նախաձեռնակաման հավաստիությանը, օտար լեզվով համարժեք ձևերի լատինագիր տառադարձմանը, շարվածքի միակերպ խմբագրմանը, տարաբնույթ սրբագրումներին և այլն:

Ամենից առաջ նկատելի է, որ բառարանն ամբողջությամբ չի ընդգրկում այն նյութերը, որոնք հեղինակի բառագիտական-ստուգաբանական ողջ աշխատանքն են ներկայացնում: Նկատի ունենք ոչ միայն առանձին հոդվածներով, այս կամ այն հոդվածում և նման նյութերում հաճախ կատար-

<sup>1</sup> P. de Lagard, *Armenische Studien*, Göttingen, 1877:

<sup>2</sup> H. Hüschmann, *Armenische Grammatik*, Bd. 1-2, Leipzig, 1895-1897:

<sup>3</sup> Բառարանն ունեցել է երկրորդ հրատարակություն (հհ. 1-4, Ե., ԵՊՀ հրատ., 1971-1979):

<sup>4</sup> Տե՛ս նաև H. Martirosyan, *Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon*, Leiden-Boston, 2010:

ված ստուգաբանությունները, այլև, «Հայոց լեզվի պատմություն» գրքի ցանկերից և այլ կարգի նյութերից բացի, օրինակ, ռուսերեն, այլև անգլերեն լրայս տեսած աշխատությունների նյութերը<sup>5</sup>: Սա բավականին լուրջ նույնիսկ ափսարի բացթողում է, որը հավանաբար հետազայում պիտի լրացվի կամ հաղթահարվի, եթե հնարավոր լինի վերաբատարակել այդ աննախադեպ, ավելորդ է ասել՝ հմուտ ուսումնասիրության արդյունք հանդիսացող աշխատանքը:

Ստորև ներկայացնում ենք որոշ նկատառումներ, մնացածին հետագայում անդրադառնալու մտադրությամբ:

1. Հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» գրքի ցանկերում կան բառեր, որոնք տեղ չեն գտել սույն բառարանի մեջ: Օրինակ՝ *անձող* (բրբ. \*անձող) (Էջ 141), *լուկի/լափ* (բրբ.) «ափ, բուռ» (Էջ 71), *լոք* «մեծ քայլ, ոտքի լայն բացվածք քայլելիս» (Էջ 71), *ծեղ*, (բրբ. *ծիւղ/ծիղ* (?)) «շյուղ, ծղուռ» (Էջ 494), *ձմել* (ըստ իս բրբ. *ձմուռ*), «մի տեսակ ոտեկիք» հալած տաք յուղի մեջ բրդած բարմ հաց» (Էջ 72), *մալեմ* «ձմուել, ոլորել, կրտել» (Էջ 72) և այլն:

2. Կան նաև բառեր տարբեր ամսազրերում տպազրված հոդվածներում, որոնք նույնպես դուրս են մնացել այս բառարանից: Օրինակ՝ *լուջ* («Լրաբեր», 1976, 12, Էջ 42), *ոյազիոս* («Լրաբեր», 1976, 12, Էջ 42) և այլն<sup>6</sup>:

3. Գ. Զահոնլյանը տարբեր տարբիների գիտական հանդիսներում լրայս է ընծայել «Ստուգաբանություններ» վերնագրով շուրջ մեկ տասնյակ հոդվածներ, որոնց նյութերի մի մասն է միայն այս կամ այն կերպ տեղ գտել բառարանում:

3.1. Դրանցից մեկում ստուգաբանվում է (բառ)արմատ, որոնց ներմուծումը բառարանի մեջ ունի հետևյալ պատկերը<sup>7</sup>. ա) կան բառարանում. *աղարել, անգոն (անգոն կրոնաւոր)*, *ասպի, պիթոն* (տե՛ս *պիթ(ի)ոն* հորմոնվ), բ) չկան բառարանում. *արքաս, հազիր, հայթ, սոռկիփս*, գ) բերվում են միայն Ածառյանին կամ միայն նախորդներին (Պոկոռնի և այլն) հելորվ. *ազդար (մող, աղանդ), աղաս(ս)ունք, ալի, դ*) տրվում են հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» գրքի հերուսով. *աղամող, աղճատ (և լիկ), երէ (լրէ), ե*) կան առանց որևէ հղումի. *աղիջ (աղջիկ), անդեայ (անդի), առեղ, եղծ, ետր «աղջիկ, անտակ»*,

<sup>5</sup> **G.B. Djahukian**, On the position of Armenian in the Indo-European Languages (on the areal characteristics of the Armenian Language). - First International Conference on Armenian Linguistics. Proceedings, New York, 1980. **Г.Б.Джаукиан**, Опыт семантической классификации и аре-ального распределения индоевропейской лексики армянского языка.- В кн.: Г. Б. Джаукиан, Л. А. Сараджева, Ц. П. Арутюнян, Очерк по сравнительной лексикологии армянского языка, Е., 1983, сс. 5-116. Հատկապես ռուսերեն լրայս տեսած աշխատանքը, որը մերենագիր է, տպագրվել է հեղինակի հսկողության պայմաններում՝ իր ձեռքով խմբագրված և սրբագրված, ուստի միանգամայն սոսոյց և անվետա, ուստի այս անպայման պիտի նվասի առնվեր բառարանի համակարգային շարվածքի դեպքում:

<sup>6</sup> Տե՛ս՝ նաև ստորև իրենց տեղում:

<sup>7</sup> Տե՛ս և **Գ.Զահոնլյան**, Ստուգաբանություններ. Պատմա-բանասիրական հանդես, 1963, 4, Էջ 85-98:

ետրոնին «ընկեր, պատվակից»<sup>8</sup>, կեղերօ, կիր (կուր, կրել), հարար, հեմ (հեմ, հիմայ) «այժմ», հիր, ներալ, ներացիկ (ներցիկ «ներքին», սապապէլ, զ) նշվում է միայն Զահ. (իմա՝ Զահուկյան). բղեղ «փաթեթ»(?) և այլն:

3.2. Նույնպիսի մեկ այլ հոդվածում քննված է 34 (բառ)արմատ, որոնք ևս բառարանում տարբեր կերպ են օգտագործված<sup>10</sup>. ա) բերվում են առանց որևէ հղման. արատ, թակարդ/թակարժ, թաւալել, ծնկասէր, կիսքիր/կմբէր, իրել, յորդ (յորձ, հորձ), սեպ, ստէծ (ստէծ), ստնզալ, սողոր և այլն, բ) նշվում է հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» գիրքը. բղետ/բղէտ, բղօախտե/բողջ, բոյթ, բրոր, գոհ, թաթախել, թաւալ/թասպ, կամն/կամ, կէտ «իշամեղու», ձղմէլ, մարել (մայր, մառն, մառ), սպրոռոր (սպոռոր) և այլն, գ) տրվում են ըստ Աճառյանի բառարանի. բորենի, եղինձ, բնկոյզ, կինձ, սպառան, փաղեծ, դ) նշվում է միայն Զահ. (իմա՝ Զահուկյան). օրինակ՝ գաք, կամ «ծագումն անհայտ է» (օր.՝ խէլ, սպար, փիս, սալարիլ «թաքնվել», սիլրանալ), ե) ունի ճիշտ հղում, օրինակ՝ սպարիլ «թաքնվել», զ) չկան բառարանում. կուտ (սեռ. հոլ. -ոց) (կրիս, կոճ, կոտայ) և այլն:

Ըստ որում բառարանում թաւալել բայր բերվում է թաւալ արմատի ձևով, ծնկասէր բառի դեպքում տրվում է հղում՝ տե՛ս ծունկ, նշելով՝ «հավանաբար ծունկ բարի փոխաբերական իմաստը», ընդ որում՝ առանց որևէ վկայության<sup>11</sup>, թաթախել բայր բերվում է թաթախն արմատի ձևով, սիլրանալ «հիանալ» բայի դեպքում նախ նշվում է «ծագումն անհայտ է», այնուհետև՝ «ենթադրվում է սեմական (հմմտ. արաբ. sahara «կախարդել») կամ, թերևս, իրանական աղբյուր (հմմտ. ավ. suxra «բոցավառ, կարմիր»)<sup>12</sup>, սպար-ը բերվում է սպարիլ «թաքնվել» բայական ձևով<sup>13</sup> և այլն:

3.3. Մեկ այլ հոդվածում քննվում է 28 (բառ)արմատ, բառարանում դրանց մի մասն է օգտագործվում, մի մասն էլ այլ կերպ է օգտագործված<sup>14</sup>. ա) բառարանում չկան. ազեկայ, բազեկայ «արեգակն» բառի սիսալագրություն(?), առոր «մինչև երեկո», արսս «պանկած», բանջար «երածշտական մի գործիք», իրիդէռու «շենքոր», լակոնիա «մի տեսակ ծածկոց», լաս «հնձածի շերտ», լուշ «կանաչ», ոյազիռու «սուլք», պաժա «կապ», պարակդէռուս «միիթարիչ», պօռիիտի-փօնու «քնարերգ», ջալամուկ «ջալամու հավ», սիկիրա «արբեցություն», սիկեղաւոր «չար, մեղանչական», սիկինքա «ապարանչան», բ) բառարանում կան. երիկամն «երիկամ», ընջուղ «երինջ», զ) նրշվում է, որ

<sup>8</sup> Ավելի մանրամասն տե՛ս Վ.Գ.Համբարձումյան, Հայերենի բառաքննական և սոուզարանական ուսումնասպիրություններ, Ե., 2012, էջ 122- 122, 154-155:

<sup>9</sup> Բառարանում չի բերվում կիր-ը:

<sup>10</sup> Տե՛ս Գ.Զահուկյան, Ստուգաբանություններ. Պատմա-բանասպիրական հանդես, 1965, 1, էջ 251-261:

<sup>11</sup> Ծնկասէր բառը կա նաև մեկ այլ հոդվածում. Գ.Զահուկյան, Ստուգաբանություններ, Բանբեր Երևանի համալսարանի, 1993, 2, էջ 24:

<sup>12</sup> Գ.Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 683:

<sup>13</sup> Բառարանում (ամսագրի տարեթիվը նշվում է 1963, փիս՝ 1965):

<sup>14</sup> Գ.Զահուկյան, Ստուգաբանություններ. Լրաբեր հասարակական գիտությունների, 1976, 12, էջ 41-51:

«ծագումն անհայտ է». պուել «սպրել, խուս տալ», սալար «ամբողջ», պիծառ «մի քիչ», ռումք «նետելու միջոց», դ) կան Աճաւյանի բառարանի հղումով. *ա(η)խալդան*<sup>15</sup>, պեղազոս «մեծամեծներ», մոլ «ծովի», փառ «նուրբ թաղանթ, փառ», ե) կան առանց այս աղբյուրը հղելու. կտաւ «վուշից գործվածք», մոռուց (մոռութ, մոռուս) և այլն: Սրանցից պուելը նշվում է «թաքուն» իմաստով, սալարն առանձին է սալարի բայից<sup>16</sup>, մոռութը չկա բառարանում, իսկ մոռութի դեպքում նշվում է այս աղբյուրը:

3.4. Մեկ այլ հոդվածում կա 15 բառարմատ, որոնք բառարանում ներկայանում են հետևյալ կերպ<sup>17</sup>. ա) կա բառարանում՝ նույնությամբ. գորով «սեր. խանդադատնք», բ) նշվում են ըստ հեղինակի «Հայոց լեզվի պատմություն» գրքի. ազդր, խաղող, խաչ, կեղու, նուռն, բ) բերվում են առանց հղման. այս «չար ոգ, քամի», անթ (անութ) «թևատակ», անթեղ «կրակախառն մոխմիր», եղար «(ամուսնացած) կին», կողղովոց «վեգ, կոճ», քութ, զ) տրվում է այլ արմատի տակ՝ առանց հղման. արգանդ, արգահատել (արգ «ընդերք»), դ) նշվում է միայն Զահ. (իմա՞ Զահուկան), ատայան «հարկ, տուրք», զամրու (զամպու) «մի տեսակ բույս»:

3.5. Մեկ այլ հոդվածում ստուգաբանված է 20 (բառ)արմատ, նկատելի է գրեթե նույն պատկերը<sup>18</sup>. ա) կան բառարանում՝ այս հոդվածի հղումով. բաւիդ<sup>19</sup>, բուկ<sup>20</sup>, ձուլք, բ) կան առանց որևէ հղումի. ասագ, դանդաղ, բակի, լրկ, խալարիկ, կախ, միսիքար, յազդիլ, յորսայս, տարմ/տորմ «(թոշնա)խումբ, երամ», զ) չկան բառարանում. բղկել, գեղ, ծղուկ(թ), դ) նշվում է աղբյուրը ոչ ճիշտ հղումով. զատիկի<sup>21</sup>, ե) նշվում է «անսարույգ բառ. ծագումն անհայտ է». փիհն, նաև՝ փիհն), բարտակատել, քուրօ, զ) կախ բառի համար նշվում է նախ՝ «ծագումն անհայտ է», այլև՝ «հազիկ թէ ծագի հնդեվրոպական սենտու տիպի լեզվից՝ \*k' ենք «երերալ, տատանվել» արմատից եկող ոչ ոնզային և \*kh-ով ձևից» և այլն:

3.6. Մեկ այլ հոդվածում ունենք 20 (բառ)արմատ, որոնք բառարանում ներկայացնում են հետևյալ պատկերը<sup>22</sup>. ա) չկան բառարանում. աշան, հակ, պոք, տախ «չկրոտած խոզ», փողիլ «հնչեցնել»(?), բ) բերվում են այլ զիմարանի տակ. ակրկել (նաև առակրուկ) (ակրուկ «կառչում, կրիվ»), ծնկասէր (ծունկ «ընտանիք, սերունդ»), մղար (նաև մղոր) (մղու «խարեւություն, մղորություն»), զ) առանց հղման. եղուստը «փշխանական մի աստիճան», թուխ «խթելը, թխելը», իրաքանչիւր «ամեն մեկը», հիւս «հյուսվածք»//հիւս «ձյան հյուս, ձյունազանգված», մեզարել (մեզարեալ) «չափազանց համարել»(?), յառգդել

<sup>15</sup> Բառարանում՝ *ա(η)խ* (Եջ 38):

<sup>16</sup> Հմմտ. Հ. Աճայան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Ե., 1979, էջ 156: Տե՛ս նաև վերը՝ Գ. Զահուկան, Ստուգաբանություններ. Պատմա-բանասիրական հանդես, 1963, 1, էջ 260:

<sup>17</sup> Գ. Զահուկան, Ստուգաբանություններ. Բակեր Երևանի համալսարանի, 1983, 2, էջ 86-94:

<sup>18</sup> Գ. Զահուկան, Ստուգաբանություններ. Պատմաբանասիրական հանդես, 1991, 2, էջ 36-44:

<sup>19</sup> Հոդվածի համարը ճիշտ չի նշվում (ՊԲՀ 1991, 1, փխ.՝ 2):

<sup>20</sup> Հոդվածի համարը չի նշվում:

<sup>21</sup> Հոդվածի համարը և թիվը, ճիշտ չի նշվում, առանց էջի (ՊԲՀ 1, 1992, փխ.՝ ՊԲՀ 2, 1991, 38):

<sup>22</sup> Գ. Զահուկան, Ստուգաբանություններ. Բակեր Երևանի համալսարանի, 1993, 2, էջ 22-30:

«արգելել, սանձել», *յարակ* «երկար ժամանակ», *նեպակ* «մի տեսակ հարկ», *պէղիս* «Մի հեղուկաչափ», *սիլրուզ* «զորահավաք անող», դ) այլ հղումով. կղեր «կրոնավոր, հոգևորական», *միլ* «ճադ»//*միլ* «երկանաքար» և այլն<sup>23</sup>:

4. Մեր մյուս նկատառումները վերաբերում են բառահոդվածների կառուցմանը, որոնցից նշենք մեկ-երկուը:

ա) Բառարանում բավականին շատ են վրիպակները, մանավանդ գրաբար բնագրային վկայությունների, աղբյուրների հղումների, նախաճաների վերականգնման, այլ լեզուներով նշվող բառերի ուղղագրության և այլն դեպքերում:

բ) Բավականին սեղմ բառահոդվածներով կազմված սույն բառարանում հազիվ թե մշտապես գործածվեին հնդելրոպական (փխ. հ.-ե), *փոխառություն* (փխ. *փոխ*), *բաղադրություն* կամ *բաղադրություններ* (փխ. *բաղադր.*, *բաղդր.* և այլն), որոնք բառահոդվածի ստուգաբանական մասի մեկնաբանությանն են վերաբերում:

գ) Բառարանում տեղ են գտել ոչ միայն նախորդ ուսումնասիրողների, այլև հեղինակի կողմից կատարվող ստուգաբանությունները: Ընդ որում եթե առաջին դեպքում հաճախ արվում են համոզիչ ձգքտումներ և լրացումներ, ապա երկրորդ դեպքում գործ ունենք միանգամայն նորի հետ: Այսուհետև, այդ նորը «Հայոց լեզվի պատմություն» և մյուս աշխատություններում բառահոդվածի զիշաբարի սկզբում կա հասուկ նշում՝ վերևից պյուս (+), որը չկա բառարանում:

դ) Շատ քիչ դեպքերում են պահպանվում հարակից նշանակրումները (այս կամ այն աղբյուրի նշում, հարցական նշանի, չակերտների նշանակում և այլն): Այսպես, հայ. *արքեկ* «խիստ, քաջ, առավել» (ըստ «Բառզիրք հայոցի» տրվում է հարցականով), այլև *արրուն(p)* «առույգություն, կարողություն և այլն» բառերի ստուգաբանությունը Զահուկյանին է «թերևս բնիկ հնդելրոպական \*abkh-ro- [\*abkh-] «ուժեղ, սաստիկ» արմատից» մեկնաբանությամբ<sup>24</sup>: Այնինչ, իիշյալ արմատը բառարանում տրվում է \*abhor- սխալ ձևով, ընդ որում առանց մյուս՝ բուն կամ ընդիմանուր \*abkh- արմատի: Վերջինիս նշանակումը հեղինակի ստուգաբանական համակարգում ունի առանցքային նշանակություն: Զահուկյանը, ի տարբերություն իր նախորդների (Հյուրշման, Աճառյան և այլը), մշտապես բերում է նախ հայերենի, այնուհետև ցեղակից մյուս լեզուների համար վերականգնվող արմատ (երկրորդը ուղիղ փակագծում)<sup>25</sup>: Նման մոտեցումը Զահուկյանի ստուգաբանական աշխատանքի մերողիկայի կարևոր գծերից մեկն է: Ցանկերում նշվում է, որ հայ. *արքեկ* և *արրուն(p)* բառերն իրենց զուգահեռներն ունեն թրակերենում, կելտական և

<sup>23</sup> Մյուս հոդվածների նյութին այսուեղ չենք անդրադառնում. տե՛ս **Գ.Զահուկյան**, Ստուգաբանություններ. Լրաբեր հասարակական զիտուրյունների, 1979, 3, էջ 23-34: Նոյնին, Ստուգաբանություններ. Պատմաբանասիրական հանդես, 1991, 2, էջ 36-44, 1996, 1-2, էջ 39-46 և այլն:

<sup>24</sup> Հ.Ե.Ջայռյան, նշվ. աշխ., էջ 47: **Գ.Բ.Զահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, էջ 111:

<sup>25</sup> **Գ.Բ.Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 86-87:

գերմանական լեզուներում, այնինչ բառարանում նշվում են միայն վերջին երկուսի տվյալները:

Hambardzumyan Vazgen- About G. Jahukyan's "Etymological Dictionary of Armenian Language"- In this article problems connected with the publication of the dictionary of famous armeniologist G. Jahukyan are investigated. Particularly the inaccuracies which need correction are discussed. For instance data from a number of articles of the author of the dictionary having the same title "Etymologies" are not included in that dictionary.

Амбарцумян Вазген - Об «Этимологическом словаре армянского языка» Г.Б.Джаукияна.- В статье исследуются вопросы, связанные с изданием словаря известного армениста Г.Джаукияна. В частности, рассматриваются допущенные неточности, которые требуют уточнений. Например, материалы ряда статей автора словаря, изданные в разные годы в научных журналах под одним и тем же заглавием «Этимологии», не вошли в этот словарь.

ՀՀ ԳԱԱ Ր. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

---

**ԶԱՐՈՒԿՅԱՆԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Միջազգային գիտաժողովի գեկուցումներ  
(Երևան, 2014 թ., հունիսի 11-12)

**DJAHUKIAN READINGS**

International symposium reports  
(Yerevan, 2014, June 11-12)

**ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ**

Доклады международного симпозиума  
(Ереван, 2014 г., 11-12 июня)



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» իրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մայան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)

